ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

110 տարի առաջ՝ 1907թ. ապրիլի 25-ին, ծնվեց
Աշոտ Հայրապետի Դադայանը

ՇԱԲԱԹ
10 ՀՈՒՆԻՍԻ
2017թ.
№ 22 (440)

Հայոց մեծ գուսանը

էջ 9

ISSN 1829-3468

Ո՞վ ժողովուրդ, իմ ծնողը



Ծննդավայր

Մով երկնքից ես մի պապառիկ պոկվել դու,
Բնության նուրբ վրձիններով ներկվել դու,
Հազար ու մի հողմերի մեջ կոփվել դու,
Աղբյուրներդ պաղ կիյուսեն ծաղկանց մեջ:

Քո բարձունքից ով մի անգամ քեզ նայեց,
Քո հինավուրց բնաշխարհով կախարդվեց,
Ապրվածային քո պատկերով հմայվեց,
Դար ու դարեր թող քեզ տեսնեն ծաղկանց մեջ:

Քո յոթնաղբյուր հուշարձանից ջուր կառնեն,
Խոր կարոտի համբույր կառնեն, հուշ կառնեն,
Անմահական դյուցազներից ուժ կառնեն,
Փառքով կօծվեն, կպսակվեն ծաղկանց մեջ:

դո՛ւ ես, դո՛ւ...

Քո Աշոտն եմ, գովքդ երկինք հասցրի,
Բույրդ առա, հազար ու մի սիրտ լցրի:
Քո զավակին մեծ պաղասան դարձրիր,
Սիրտս հանեմ, աղբյուր դարձնեմ ծաղկանց մեջ:

Երգիս ակունք ծնողավայր՝ լույս աղբյուր,
Անուշ բուրմունք ծնողավայր՝ ջերմ համբույր:
Փերի նազենազ,
Իմ ոսկե երազ:

Իմ ժողովուրդ

Ո՛վ ժողովո՛ւրդ, իմ ծնողը դո՛ւ ես, դո՛ւ,
Ինձ կյանք տվող, ինձ սնողը դո՛ւ ես, դո՛ւ:
Քո շեն այգում ես մի տերև՝ անցողիկ,
Ինձ փայփայողն, ինձ պահողը դո՛ւ ես, դո՛ւ:
Ինչ ինձ տվիր, հազար էդքան թե քեզ տամ,
Քիչ է դարձյալ, իմ սուրբ մայրը դո՛ւ ես, դո՛ւ:

Ես առանց քեզ ուրախություն, սեր չունեմ,
Քեզնից բացի ուրիշ հալալ տեր չունեմ:
Աշխարհի գիրքի, որ ես հեր ու մեր չունեմ,
Իմ հերն ու մերն, իմ ծնողը դո՛ւ ես, դո՛ւ:
Ինչ ինձ տվիր, հազար էդքան թե քեզ տամ,
Քիչ է դարձյալ, իմ սուրբ մայրը դո՛ւ ես, դո՛ւ:

Հե՛յ ժողովո՛ւրդ, կուզեմ լինել հովի պես,
Դադար չառնեմ, անվերջ ծփամ ծովի պես,
Սիրտդ հուզեմ՝ անմահ Սայաթ-Նովի պես,
Իմ քնարին շունչ տվողը դո՛ւ ես, դո՛ւ:
Ինչ ինձ տվիր, հազար էդքան թե քեզ տամ,
Քիչ է դարձյալ, իմ սուրբ մայրը դո՛ւ ես, դո՛ւ:

Երգ հյուսելով թող ճերմակեմ ձյունի պես,
Սեզ սարերիդ լանջին փարվեմ ձյունի պես,
Քո դաշտերի վրա հալվեմ ձյունի պես,
Քո Աշոտին կյանք տվողը դո՛ւ ես, դո՛ւ:
Ինչ ինձ տվիր, հազար էդքան թե քեզ տամ,
Քիչ է դարձյալ, իմ սուրբ մայրը դո՛ւ ես, դո՛ւ:

Նրա Աստուածարհի ակունքներում

ՆԱՐԵԿԱՑԻ

Նարեկն եկավ, վանք մտավ, միտքը տիեզերքն առավ,
Կարկաչն առած ջրերի,
Ապրումները հուզաթով, կրակ դարձավ չմարող,
Շառաչն առած ջրվեժի,
Աղաղակեց ողբաձայն, պատապանքներն անսահման
Տենչանքն առած աշխարհի:
Նա քանքարեց տաճարեց,
Արեւի պես ճառագեց,
Չցանածը նա ցանեց.

Հազար մտքից թել առավ, արեւներից ուժ առավ,
Խոսքի բռնվեց ասպծո հետ
Նարեկ ասպվածն առաջին, ասես հաղթեց արարչին,
Զուլվեց կյանքին առհավետ,
Միտքը վառեց մոմի պես, լույսեր սփռեց ծովի պես,
Ողբաղողանք երգ երկնեց
Մի կայծ դառավ կրակի,
Մասունք դարձավ նա կյանքի,
Աշխարհ թողեց դարերին:

Հազար սրտի սիրով նա, գրիչ առավ եղեգնյա.
Լույս մտքերով ծովացավ,
Քնից ելնող մի ծիլը, ցողի արծաթ կաթիլը,
Հազար ոսկե բառ դարձավ,
Հոգին հեծած վշտերին Վանա ծովի ծափերին,
Վանա ծիծաղն ո՞ր անցավ:
Հայ աշխարհում սրբացավ,
Հոգին արշալույս դարձավ,
Հուրն իր տվեց սրտերին:

ԿՈՄԻՏԱՍ

Քո ոսկեհուր քնարն առած աշխարհ եկար, մեծ Կոմիտա՛ս,
Հավերժական գանձ հանեցիր հայոց երկրից, մեծ Կոմիտա՛ս,
Հայոց երկինք դու ճառագած՝ իմաստության բյուր աստղերով,
Աստվածային քո փառքը շատ, դու երգահան, մեծ Կոմիտա՛ս:

Դու մարգարտյա երգի աղբյուր, հավերժական խոսուն քնար,
Հայոց վշտի ու խնդության երգով լցրիր աշխարհն արար,
Դու լեռներից մեծն ամենա, լեռների սուրբ, սուրբ վեհափառ
Ինչքան տվիր, դեռ ավելին հետդ տարար, մեծ Կոմիտա՛ս:

Հովի նման երգդ թռավ-գնաց հասավ աշխարհներին,
Մի երգիդ մեջ քանի աշխարհ՝ նրանք բուրմունք ծաղիկների,
Հոյզի արցունք կիջնի հոգուդ ով հանդիպի պանդուխտներիդ,
Հավքի լեզվով, ծաղկի շնչով դու երգեցիր, մեծ Կոմիտա՛ս:

Աշոտն ասա՛ց, արար աշխարհ հիացրիր երգերով մեր,
Քանի անգամ հողագնդում արեւ դարձրիր երգերը մեր,
Աշխարհ առած երգի օվկիան փայլեցրիր անունը մեր,
Թոնրի կրակ, օջախի լույս, հոգի անմար, մեծ Կոմիտա՛ս:

Նրա Ներաշխարհի ակունքները

Թբիլիսի, 1963թ., Գուսան Աշոտը ելույթ է ունենում Սայաթ Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված համակովկասյան փառատոնում («Заря Востока», 12 հոկտեմբերի 1963թ.)

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻՆ

Բլբուլների երգն եմ լսում, էն քո ձայնն է, Սայաթ-Նովա,
Գյոզալների իալն եմ տեսնում, յարիդ իալն է, Սայաթ-Նովա,
Երբ նստում եմ մեջլիսներում, գինի խմում անմահական,
Զեռքիս թասը ավանդական քո հին թասն է, Սայաթ-Նովա:

Անմահական երգեր հյուսող քեզ նման հանճար չտեսա,
Յարի հազար նազը տանող քեզ պես սիրահար չտեսա,
Մեջնուն ի՞նչ է, դու ես վառվել, քեզ պես սիրահար չտեսա,
Սիրո երգի արքան ես դու, մեր մուսան ես, Սայաթ-Նովա:

Քո յարը քեզ յարա տվեց, էլի սերդ նրան տվիր,
Սրտից քամած արնով գրած, քո երգերդ նրան տվիր,
Նա քեզ միայն տարտասկ տվեց, դու վարդերդ նրան տվիր,
Մեր երգերի քաղցր գինու դալար վազն ես, Սայաթ-Նովա:

Յարից էրված դու էլ սիրո երգիչ դառար, գուսան Աշոտ,
Մեծ աշուղի իաղ ու տաղի շունչը առար, գուսան Աշոտ,
Սրտիդ պահիր մեծ վարպետի անունն անմար, գուսան Աշոտ,
Հայոց երգի ծովը մտած մայր Արազն է Սայաթ-Նովան:

Նրա Ներաշխարհի ակունքները

Նահապետ Քուչակ

Հայ գուսան

Եվ, հուր գինով սիրտդ բաց, օրն անցնում է, հայ գուսան,
Տաղիկներդ ձայն առած զրնգում են, հայ գուսան,
Մեր շարական իաղերին հաստատ մնա, վեհ մնա,
Չէ՞ որ թռիչքն արծիվի, բարձունքում է, հայ գուսան:
Սիրտդ պահիր ծաղկունքում,
Երկնի գոհար արցունքում,
Թեևավոր քո սուրբ սերը
Տաղ է հյուսում բարձունքում:

Քուչակ, Սայաթ, Ջիվանի քո ճամփեքին լույս կտրան,
Թեևավոր է քնարդ, զառ հավքերին ձայն կտրան,
Նուրբ կանչերով վարպետաց աշխարհի եկար սազ առած,
Դե եվ, ինքդդ բաց արա, օրն անցնում է հայ գուսան:
Նռան գինով սեղան բաց,
Գիշերն արա լուսաբաց,
Բարի մարդիկ երգով գան,
Օջախիդ հյուրն անպակաս:

Տես, էս գարնան ինչքան վառ ծիլ ու ծաղիկ են բուսել,
Օրոր կասի հովն այգուդ, սիրո երգեր են հյուսվել,
Թեև սիրող սրտիդ հետ աղբյուրներն էլ սեր խոսեն,
Սիրտդ սարի ծաղկունքում, օրն անցնում է, հայ գուսան:
Բախտիդ ասպղը շողում է,
Ծաղկանց ծովում լողում է,
Երկնային հուր հրեղեն,
Շողերի մեջ ցոլում է:

Նաղաշ Հովնաթան (1661, գ. Շոռոթ (այժմ՝ Նախիջեւան) - 1722, գ. Շոռոթ) , հայ առաջին աշուղը՝ ըստ որոշ գիտնականների

Ջիվանի

Իր կոչման խորհրդին ունկնդիր

ԳՈՒՍԱՆՆ ԷՆ Է

Գուսանն էն է՝ սառ ջրի պես հովացնի սիրտը մարդու,
Գարնան քնքուշ ծաղիկների բույրով լցնի սիրտը մարդու,
Երգով, կյանքով ծառա լինի իր հայրենի հողին, ջրին,
Առատ տարվա հացի նման լիացնի սիրտը մարդու:

Գուսանն էն է, որ իր խոսքով կրակի պես մեղմի ցուրտը,
Ուրիշների կսկիծը լա, իրեն համար սեղմի շուրթը,
Վհատ սրտին հույս ներշնչի, փարատելով մուժն ու մութը,
Բլբուլի պես անուշ երգով քնքշացնի սիրտը մարդու:

Գուսանն էն է՝ երգը լինի ծաղիկ բացող աղբյուրի պես,
Սիրո կարոտ ջահել սիրտը հովացնի համբույրի պես,
Հովտից-հովիտ անցնի գարունն արթնացնող զեփյուռի պես,
Գարնան շաղոտ ծաղկանց բույրով թարմացնի սիրտը մարդու:

Գուսանն էն է, որի երգը հազար փորձանքի դիմանա,
Լեզվից-լեզու անցնի գնա, ամեն ազգի մարդ իմանա,
Հասնի ամեն սեղան-սուփրի, կարոտ սրտի թարգման դառնա,
Ամպից ելած արեւի պես ուրախացնի սիրտը մարդու:

Գուսանն էն է, Աշո՛ւր ախպեր, թեւ տա հոգուն, բարձրացնի,
Ուր որ գնա՝ կյանքն ու սերը երկրի վրա քաղցրացնի,
Որի երգը փոթորկի դեմ, կրակի դեմ կարծրացնի,
Հարազատ հոր խրատի պես ամրացնի սիրտը մարդու:

Գուսանի ասպղը

Գուսանի ասպղը կշողա հավերժ,
Ցոլքը չի պակսի, կցոլա անվերջ,
Տաղերգում է նա սիրով բյուրեղյա,
Ամեն մի պաղը խաչ քար է ասես:
Կրկներգ -
Գուսանը վառվող,
Սիրո ճամփորդ է,
Գարուն շափաղող,
Պարզ առավոտ է:
Նա կրակոտ է,
Նա սրտամոտ է,
Թեւավոր պաղը
Իղձ ու կարոտ է:

Գուսանը խոսում է ասպղերի լեզվով,
Աշխարհին գերում իր սեր ու սազով,
Ծով սերն է երգում, սրտեր մորմոքում,
Գերված նազելու կախարդող նազով:
Կրկներգ -
Գուսանը...

Աշոտի ասպղը կարոտի հուր է,
Որը չի մարում, այլ թեժանում է,
Իր կարոտ ճամփին, իր քարոտ ճամփին,
Բորբոքվում սիրուց ու հրդեհվում է:
Կրկներգ -
Գուսանը...

ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
Հրաչյա Ռուխկյան

Մատենագրություն

ԿԵՆԴԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

1. Գուսանական երգեր, 1942թ., Երեւան:
2. Գուսանի սերը, 1955թ., Երեւան, «Հայպետհրատ»:
3. Գուսանի սերը (նոտագրված), 1958թ., Երեւան, «Հայպետհրատ», տպաքանակը՝ 3000, ծավալը՝ 12,5 հրատարակչ. մամուլ:
4. Սիրո կրակներ, 1974թ., Երեւան, «Հայաստան», տպաքանակը՝ 10000, ծավալը՝ 17.1 հրատարակչական մամուլ:
5. Սիրո կրակներ (նոտագրված), 1974թ., Երեւան, «Հայաստան»:
6. Սրտի նվագներ, 1979թ., Երեւան, 2,9 հրատարակչ. մամուլ, տպաքանակ՝ 5000:
7. Ծովաստղիկս (նոտագրված), 1982թ., Երեւան, «Սովետական գրող», տպաքանակը՝ 3000, ծավալը՝ 12,95 հրատարակչ. մամուլ:
8. Լեռները կանչում են, 1988թ., Երեւան, «Սովետական գրող», 5,4 հրատարակչ. մամուլ, տպաքանակը՝ 10 000:
9. Սիրո կրակներ, 1971թ., Երեւան, «Հայաստան» հրատարակչություն, 3,3 հրատարակչ. մամուլ, տպաքանակ՝ 3000:

ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐ, ԹԵՐԹԵՐ



Խմբագրական

Հայոց մեծ գուսանը

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գուսան Աշոտը դեռեւս 5-րդ դարում Մովսես Խորենացու հիշատակած Գողթան գավառի գուսանների նորօրյա շառավիղն էր:

Նա հայոց միջնադարյան տաղասացների ու քնարերգուների տաղերով, խաղերով, հայրեններով, մեր հոգեւոր շարականներով սնված ու ոգեշնչված անհատականություն էր: Իսկ «երգի օվկիան» Կոմիտասն ամբողջ կյանքում նրա համար եղավ «մարգարտյա երգի աղբյուր»:

Նա հայոց աշուղների ժառանգորդ մեր վերջին ամենաբարձր գագաթն էր:

Սայաթ-Նովայի սիրերգության անօրինակ շարունակողն էր: Ինքն այլ կերպ էր դա ասում՝ «Ձեռքիս թասը ավանդական քո հին թասն է, Սայաթ-Նովա»:

Այն բացառիկն էր, ում ժամանակակիցներն անվանեցին «20-րդ դարի Սայաթ-Նովա»:

Հայոց աշխարհին Ջիվանի եւ Շերամ տված գուսանական զարմի արժանավոր ներկայացուցիչն էր 20-րդ դարի երկրորդ կեսում:

Ինքն էր, ում Հովհաննես Բադալյան մեծանուն երաժիշտ-կատարողն անվանեց «Ամենայն հայոց գուսան»:

Շարունակությունը՝ էջ 95



1. Սյունյաց սարեր (Երգերի ընտրանի), Երեւան, 2004, 32 էջ, կազմեցին եւ առաջաբանը հեղինակեցին Էդուարդ Զոհրաբյանը, Մարտին Ջիլֆուղարյանը:
2. Հավերժություն (Ժողովածու), Երեւան, «Գրաբեր», 2010, 192 էջ, կազմող՝ Արշալույս Դադալյան, տպաքանակը՝ 300, ծավալը՝ 12 տպագրական մամուլ:
3. Զանգեզուրի բարի ծնունդ (Գուսան Աշոտ-100), Գորիս, 2007թ., հրատարակվել է Գորիսի պետական համալսարանի եւ ՀՀ գրողների միության Սյունիքի միավորման կողմից, «Գրիգոր Տաթեւացի» հրատարակչություն, 96 էջ:
4. «Սյունյաց երկիր», 17 հունվարի 2007թ., N1 (113), ծավալը՝ 4 տպագրական մամուլ, տպաքանակը՝ 2400 օրինակ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. gusanashot.com

Համարի հովանավորները

ԷԴԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՇՈՏ ԱՐՍԵՆՅԱՆ
ՀՀ ԱԺ պատգամավոր

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
«Գոր մետալ» ՍՊԸ տնօրեն

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ
Գորիս համայնքի ղեկավար

Ամեն անգամ, երբ առիթ է ընձեռվում խոսելու մեր փոքրիկ բնաշխարհն արվեստի, մշակույթի ուժով հայտնի դարձրած մարդկանց մասին, անթաքույց ուրախությամբ ու հպարտությամբ է լցվում հոգիս, որ նորից պետք է հաղորդակից լինեմ Ակսել Բակունցի, Սերո Խանզադյանի, Սուրեն Այվազյանի, Տաթեւիկ Սազանդարյանի, Գուսան Աշոտի եւ այլոց հետ:

110 տարի է անցել այն երանելի օրից, երբ ծնվեց Գուսան Աշոտը: Նա այն սակավ արվեստագետներից է, ով, երգելով իր հայրենի եզերքի մարդու սերերի, հաղթանակների, ցավերի մասին, բարձրացել է ազգայինի մակարդակից՝ դառնալով ընդհանրապես մարդու սրտի ու հոգու երգիչը: Աշոտի գրեթե բոլոր երգերում խորը խոհափիլիսոփայությանը միահյուսված է նուրբ քնարականությունը, դրանք առանձնանում են պատկերավորման միջոցների խիստ բազմազանությամբ ու նրբությամբ, զգացմունքների ու երեւույթների ամենատարբեր դրսեւորումներով, գերող երաժշտությամբ: Կարդացե՛ք կամ ունկնդրե՛ք նրա «Օջախում», «Սերս վանքում Տաթեւի», «Ծովաստղիկս», «Հայրիկ», «Էն գարնան» եւ մյուս գողտրիկ ստեղծագործությունները եւ կզգաք, թե ինչպես են բանաստեղծն ու երգահանը «մրցում» իրար հետ՝ հանուն բարձր ու բյուրեղ արվեստի:

Գուսան Աշոտի ստեղծագործական աշխարհի յուրաքանչյուր քար ու թուփ ծանոթ է գորիսեցուն: Գրեթե ամեն օր Գուսանը ներկա է բոլորիս կյանքում. թե՛ ուրախության, թե՛ տխության պահերին նա է մեզ հետ իր երգերով, իսկ ավագ գորիսեցիները մեծ սիրով ու հպարտությամբ են հիշում ու պատմում նրա հետ հանդիպումները, զրույցները:

Գուսան Աշոտն իրավամբ գրավել է իր ուրույն տեղը թե՛ հայ երգարվեստի հուռթի անդաստանում, թե՛ բոլորիս սրտերում: Նրա ստեղծագործությունները դեռ շատ սերունդների են հայրենասիրության, սիրո, նվիրումի դասեր տալու:

Երիցս փա՛ռք Գուսան Աշոտ ծնած ժողովրդին:

Երիցս փա՛ռք իր անմահ երգերով ժողովրդին ամեն վայրկյան սեր ու ոգի տվող Գուսան Աշոտին:

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սյունիքի մարզպետ
2004-16թթ.
(մեկ տարի ընդմիջումով)

Գուսան Աշոտի 110-ամյակը եւս մեկ առիթ է խոնարհվելու հավերժության ճանապարհ ելած նրա հիշատակի առջեւ:

Հայ բազմադարյան գուսանական արվեստի շառավիղներից է Գուսան Աշոտը, հայ գուսանական երգի ամենաբարձր գագաթներից մեկը: Նրա երգարվեստում խտացել են մեր ժողովրդի գուսանական մշակույթի լավագույն ավանդույթները: Ժամանակի հետ էլ ստեղծել է իր ինքնատիպ քանքարը՝ ուրույն ոճով, մեղեդիական ու բանաստեղծական յուրահատուկ նկարագրով:

Գուսանի երգերն այսօր էլ արդիական են ու սպասված, քանզի կենսուրախ են եւ լեցուն լավատեսական ոգով, յուրաքանչյուրիս հոգեհարազատ խոհականությամբ:

Հայ ժողովրդի ներաշխարհում Գուսան Աշոտի հանդեպ այնքա՜ն ամբարված սեր եւ զգացմունքներ կան, որ տարիներ ու դարեր շարունակ նա ուղեկիցն է լինելու մեր ժողովրդի ընթացքին:

Ժամանակին հասցրել ենք Գուսան Աշոտի հիշատակը հավերժացնել ծննդավայր Գորիսում. մշակույթի կենտրոնի բակում կանգնեցրինք կիսանդրին (2005թ., քանդակագործ՝ Գետիկ Բաղդասարյան), քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը, մշակույթի կենտրոնը, ժողգործիքների համույթը կոչեցինք նրա անունով, քաղաքի մի քանի շենքի պատին՝ Գուսանին առավել հոգեհարազատ, հիշատակի վահանակներ փակցրինք՝ նշելով նրա առնչությունն այդ վայրերին:

Գրեթե պարտադիր արարողակարգի կամ ավանդույթի ուժ ստացավ մի երեւույթ, երբ բոլոր հանդիսությունները, գրական-գեղարվեստական միջոցառումները մեզանում սկսում էինք Գուսանի երգերից մեկի կատարմամբ:

Նրա ծննդյան օրը՝ ապրիլի 25-ը, ամբողջ Սյունիքում, եւ ոչ միայն Գորիսում, դարձավ հիշարժան օր՝ համապատասխան միջոցառումներով:

Հոբելյաններն էլ կարողացանք նշել մայրաքաղաքի ամենահարգի դահլիճներում՝ հանրապետության երեւելի մտավորականների, ճանաչված համույթների ու կատարողների մասնակցությամբ:

Եվ, այդ բոլորով հանդերձ, Գուսան Աշոտի հիշատակը վառ պահելու, նրա բանաստեղծական ու երաժշտական ժառանգությունն աճող սերնդին հաղորդակից դարձնելու ուղղությամբ անելիք ունենք դեռ:

Ծննդյան 110-ամյակը դրա համար լավագույն առիթներից է. տարին նոր-նոր է կիսվում, եւ ուզում եմ հավատալ, որ Գորիսում ու մարզկենտրոնում, նաեւ մայրաքաղաքում պատշաճ ձեւով կնշվի հայոց մեծ գուսանի, ամենահայոց գուսանի հոբելյանը:

Կյանքի ուղին

Աշուղ Աշոտ



ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

1921 թվականի ամառն էր:

Մեծ տատն իմ ձեռքը բռնած ինչ-որ գործով գյուղից բերեց քաղաք: Կամուրջն անցանք, մտանք թեք մի փողոց: Ընդառաջ եկավ մի բարձրահասակ տղամարդ:

- Մեծ տատ, էդ ո՞ւր:

- Ա՛խ, Բագրա՜տ, էդ դո՞ւ ես: Բաքվում ես, չէ՞: Ինչի՞ ես եկել:

- Եկել եմ ախպորս՝ Աշոտին տանեմ Բաքու: Մերս մեռել է, հերս անզոր է: Աշոտը տասնչորս տարեկան որբ է, տանեմ, ինձ մոտ պահեմ, թե չէ էստեղ սովից կմեռնի:

Խոսքը ապագա Աշուղ Աշոտի մասին էր: Մի օր Աշոտն ինձ ասաց.

- Մորս մահից հետո ես մնացի որբ ու անտեր: Սով էր: Մեր քարատամ տանը ո՛չ շորի պատառ կար, ո՛չ հացի փշրանք: Ես կմեռնեի, ինչպես շատերը, եթե եղբայրս, որ ինձնից տասնյոթ տարով մեծ էր, Բաքվում նավթագործ բանվոր, չգար ու ինձ չտաներ:

Բագրատ եղբայրը, երբ Աշոտին տանում է Բաքու, անսահման հոգատարությամբ է շրջապատում: Նախ տալիս է Շուշի քաղաքում ծնված մի նշանավոր հայ երաժշտի մոտ քամանչա նվագել սովորելու, ապա նաեւ՝ բանեռիտ դպրոցը, որտեղ էլ Աշոտը գրաճանաչ է դառնում:

Աշոտը Բաքվից Գորիս վերադարձավ 1928 թվականին: Բարձրահասակ, բարալիկ երիտասարդ էր, լավ հագնված: Եկավ արդեն կատարյալ սազանդար-երաժիշտ՝ քամանչայով:

Այդ ժամանակ Գորիսում հռչակված թառ

Կյանքի ուղին

նվագող էր Յոլունց Ղազար քեռին: Նա Աշոտից քսան տարով մեծ էր: Ղազար քեռին մանկուց կույր էր: Նա Աշոտին վերցրեց իր սազանդարական խմբի մեջ իբրեւ քամանչա նվագող:

Տակավին մանկության տարիներին Աշոտը սովորել էր հովվական սրինգ նվագել: Ղազար քեռին ամեն տեղ ասում էր, թե Աշոտը շատ շնորհքով նվագող է: Ես գրեթե ամեն շաբաթ տեսնում էի այս սազանդարական եռյակին (երգող էլ ունեին՝ Սուլթան Ամիրյանը) հարսանիքներում, խնջույքներում:

1929-ին Ղազար քեռին ու Աշոտը քաղաքի յոթնամյա դպրոցում ստեղծեցին երաժշտական խումբ: Ես չկարողացա այդ խմբի մեջ մտնել: Մի քանի պատանիների նրանք նվագել էին սովորեցնում: Իսկ 1931-ին, երբ մանկավարժական տեխնիկումի ուսանող էի, այդ եռյակը մեր տեխնիկումում նույնպես երաժշտական-սազանդարական դասընթացներ կազմակերպեց: Ես, իհարկե, չէի մասնակցում նրա դասերին:

Ղազար քեռին ու սազանդար Աշոտը նաեւ նվագում էին կինոսրահում: Այդ ժամանակ կինոն համր էր: Երկուսով նստում էին բեմի առաջ ու զանազան մեղեդիներ նվագում, որ կինոյի համրությունը մի քիչ կենդանացնեն:

Հանդարտ, համեստ, անսահման բարի մարդ էր մեր Աշուղ Աշոտը: Ես նրան երբեք ջղայնացած չեմ տեսել: Եթե մեկը նրան վատություն էր անում, նույնիսկ թշնամություն, ապա նա աշխատում էր հաշտվել նրա հետ, ձեռքից եկած լավությունն անել նրան:

Մինչեւ պատերազմը Աշոտը երեք զավակ ունեցավ՝ Ռուբիկ, Արշալույս (աղջիկ է) եւ Համլետ:

Հրաշալի երեխաներ էին: Ռուբիկը անուշ ձայն ուներ եւ դեռ փոքր հասակում ոտանավորներ էր գրում ու երգում:

Աշոտի տունը մեր տնից մի քիչ ներքեւ էր, նույն փողոցի վրա: Հիսունական թվականներին Աշոտը իր գնած տան կից երկհարկանի մի տուն էլ կառուցեց:

- Երկու տղա ունեմ, - ասաց: - Ամեն մեկին մի տուն պետք է:

* * *

1938-ին Աշուղ Աշոտն առաջին անգամ եկավ Երեւան: Առավոտյան նրան տարա կոմպոզիտոր Արամ Քոչարյանի մոտ: Այնտեղ էր նաեւ կոմպոզիտոր, մանկավարժ ու խմբավար Ազատ Մանուկյանը: Երբ նրանց ներկայացրի Աշուղ Աշոտին, երկուսն էլ հետաքրքրվեցին նրանով: Խնդրեցին մի բան նվագել: Աշոտը նվագեց ու կամաց երգեց իր մի ստեղծածը՝ «Զանգեզուրի չոր չոլերը ծաղկալ են»: Դա մեծ տպավորություն թողեց երկու երաժշտագետների վրա:

Մեկ-երկու տարի հետո Աշոտի «Զանգեզուրի բարի ծնունդ», «էն սարերը» ու էլի տաղեր, դարձան բոլորին հոգեհարազատ:

* * *

1945 թվի օգոստոսի վերջին օրերն են: Պատերազմը վերջացել է, ես երեսուն օրով տուն եմ եկել՝ Գորիս: Աշոտը եկավ մեր տուն՝ ինձ տեսնելու, մորս ու կնոջս շնորհավորելու, որ ահա, ողջ եմ:

Տխուր էր: Հարցրի պատճառը, ասաց՝ կինը պատերազմի ժամանակ վախճանվել է՝ երեք երեխեքին որբ թողնելով: Մեռել էր նաեւ ծերունի հայրը՝ Հայրապետ-Հաբուդ ամին:

Աշոտը նորից ամուսնացավ: Նոր կնոջ անունն Աշխեն էր: Ես նրան չէի տեսել: Ծնվել, ապրել էր Բաքվում, մասնակցել Հայրենական պատերազմին: Ծնողների հետ մի քանի ամիս առաջ էր տեղափոխվել Գորիս: Աշխատում էր շրջանի գյուղբաժնում, գյուղատնտես էր: Ես հավանեցի Աշխենին:

Քառասունվեցի հունվարին ես Գորիսից տեղափոխվեցի Երեւան: Աշխատում էի Արվեստի վարչության ժողստեղծագործության տանը: Բանահավաքի գործս հետաքրքիր էր՝ շրջապատված հայ աշուղներով: Շուտով Աշուղ Աշոտը եւս տեղափոխվեց Երեւան: Ասաց՝ որտեղ դու, այնտեղ էլ ես: Մի խրճիթ վարձեց մեր տնից ոչ հեռու, Տերյան փողոցում ու սկսեց ապրել այնտեղ: Կինը հաջողությամբ սովորեց քանոն նվագելը: Աշոտը սկսեց համերգներ տալ հանրապետությունում եւ նրանից դուրս: Ամեն անգամ, երբ վերադառնում էր շրջաններից, գալիս էր մոտս:

- Նոր երգ եմ գրել, եղբայրս: Կատարեմ՝ լսիր:

Եվ ամեն անգամ նա ինձ համար նոր հայտնություն էր անում: Նրա հորինած մեղեդին ռիթմ ուներ սովորաբար ու հայ ժողովրդական պարեղանակների երանգներով էր զուգված: Տեքստերը շեշտված մեղեդիական էին, հեշտ ընկալելի:

Այդ օրերին լույս տեսավ նրա երգերի տեքստերի առաջին ժողովածուն, որ մի երկու տարի առաջ էր կազմել Ազատ Վշտունին, խմբագրել ու տպագրության ուղարկել: Գիրքը կոչվում էր «Աշուղական երգեր»:

* * *

Գնալով Աշուղ Աշոտի համբավը դառնում է աշխարհընկալ: Ես նրան իր խմբով գործուղում էի Միջին Ասիա, Վրաստան, հատկապես՝ Ղարաբաղ: Գնում էր, ամիսներով համերգներ տալիս ԼՂԻՄ-ի գյուղերում: Երբ ետ էր գալիս, հարցնում էի՝ ո՞նց է Ղարաբաղի հայության վիճակը:

- Աղետալի, - ասում էր նա: - Ղարաբաղի հայի տան, զավակի հողի տերը թուրքն է՝ ադրբեջանցին: Բաղիրովը Ղարաբաղը պահում է իբրեւ իր կալվածքը, իր ստրուկը: Ղարաբաղը հայաթափվում է...

Աշուղ Աշոտի երգերի հմայքը ժողովրդական, այո, հատկապես ժողովրդական մեղեդիների ակունքներից է գալիս: Տակավին երեսնական թվականների սկզբից ես նրան մղեցի այդ ակունքներին:

Խնձոր կծեմ, թոլ անեմ,
Յարիս կոլվա - կոլ անեմ:

Երբ Աշոտն ինձ համար երգեց հենց նոր ստեղծած իր «Այունյաց սարեր» տաղը, շատ հավանեցի: Միայն ասացի՝ փոխիր «Ասես մեծ նկարչի ձեռքն է հասել» տողը, դարձրու «Ասես մեծ Նաղաշի»: Ես նրան ներկայացրի Նաղաշ Հովնաթանի արվեստը, թե՛ բնանկարային եւ թե՛ բանաստեղծական, ապա ուղարկեցի Հովնաթանի ծննդավայր Շոռոթ: Երբ վերադարձավ, հարցրի՝ ի՞նչ տեսար:

- Շոռոթում, - ասաց Աշոտը, - միայն ավերակներ տեսա: Տասը-տասներկու տուն հայ է մնացել հայոց այդ հռչակավոր գյուղաքաղաքում: Թուրքերը հայերին քշում են եւ իրենք զավթում նրանց տունն ու հողը: Սոսկալի է Նախիջեւանի հայերի վիճակը: Մի տասը-տասնհինգ տարի անցնի, Նախիջեւա-

Կյանքի ուղին

Մահ չես տեսնի, թեկուզ մի երգդ մնա...

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Գուսան Աշոտը (Աշոտ Հայրապետի Դադալյան) սերում է Գորիսի հնագույն մի տոհմից: Գուսանն իրենց տոհմի ու ծնողների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում անտիպ ինքնակենսագրականում, որ պետք է հրատարակեր «Կյանքիս հեքիաթը» խորագրով: Դադալյան տոհմի այրերը զբաղվել են հողագործությամբ ու այգեգործությամբ: Նրանց հարկի տակ խիստ հարգի են եղել ժողովրդական երգն ու ասքը: Պապը՝ Արզումանը, եղել է լավ երգող, առակասաց, հեքիաթասաց, իր խոսքով մշտապես հմայել է քարանձավաբնակներին: Նմանապես շնորհալի է եղել նաեւ Աշոտի հայրը՝ Հայրապետը, որը հողագործ լինելուց բացի, նաեւ ճանաչված որմնադիր էր: Հին Գորիսի կամարակապ շատ տներ եւ այլ կառույցներ նրա ձեռքի դրոշմն են կրում: Ահա թե ինչու ժողովուրդը նրան կնքել է բարերար Հայրապետ: Հայրապետը նաեւ երգող էր: Երգել է լուսավոր թախիծով ու ժողովրդական կենսափիլիսոփայությամբ հագեցած երգեր: Գարնանն ու աշնանը նա իր զավակներով յոթ լծկան եզներով վար ու ցանք էր անում: Նրա բազմաշունչ ընտանիքը (ուներ երեք տղա ու չորս աղջիկ) ապրում էր գեղջկական ուրախ կյանքով: Ահա այս պարզ հարկի տակ 1907թ. ապրիլի 25-ի գիշերը ծնվում է չորրորդ արու զավակը, եւ գիշերվա անդորրը խախտում են նորածնի ճիչն ու Դադալյան տոհմի ավագների գինու թասերի զրնգոցը...

Ծնողները նորածնին Տաթեւի վանքում մկրտում են՝ անվանակոչելով Աշոտ: Աշոտի մայրը՝ Դիցուհին, հարուստ տոհմի դուստր էր, առակասաց Արզումանի աղջիկը: Դիցուհին հորից սովորել էր ժողովրդական առակներ,

նում էլ հայ չի մնա:

Աշոտը մի շաբաթվա մեջ անգիր արեց Նաղաշ Հովնաթանի տաղերը:

Մի նոր երգ ստեղծեց Շոռոթից գալուց: Մի որոշ ժամանակ հետո ինձ ասաց, թե այս նոր երգը ռեպերտկոմը չմտցրեց երգացանկի մեջ: Հետը գնացի ռեպերտկոմ: Դրա պետն ասաց.

- Երգը լավն է, բայց մեջը, ահա, այսպիսի տող կա. «Երազումս թեւեր առած Արազն անցա էն կողմը»: Չի կարելի նման բան ասել:

- Ինչո՞ւ:

- Արազը մեր պետության սահմանն է: Չի կարելի թեկուզ երազում խախտել պետական սահմանն ու անցնել արտասահման: Սա քաղաքական սխալ է: Խորհրդային մարդը ինչպե՞ս կարող է անցնել արտասահման:

Ոչ մի կերպ չկարողացա նրան հասկացնել, որ նախ Արազի այն կողմը Հայաստան է, մեզնից խլած հայրենիք, ապա՝ դա երազում է, երազանք: Երգն արգելվեց: Մի քանի տարի հետո ես ու երիտասարդ գրականագետ Հրանտ Թամրազյանը այդ երգը մտցրինք մեր կազմած Աշուղ Աշոտի երգերի ժողովածուի մեջ: Սակայն, երբ գիրքը լույս ընծայվեց, տեսանք, որ այն հանել են:

Մի անգամ առանձին ինձ ասաց.

- Ես որ մեռնեմ... Հանկարծ եթե Երեւանում մեռնեմ, ինձ կտանես Գորիսում թաղելու, հա՜... Սա իմ խնդրանքն է:

Մեր սիրելի Վարպետը մեռավ 82 տարեկան հասակում, 1989 թվականի հունվարի 28-ին: Մեռնելուց առաջ ասել է. «Ինձ գերեզման է տանում Ղարաբաղի աղետը, Ղարաբաղի ցավը: Երբ Ղարաբաղն ազատագրվի Ադրբեջանի ճանկերից, կգաք իմ գերեզմանին կասեք, որ հոգիս հանգիստ լինի»:

* * *

Վաթսուն տարի առաջ ես լսեցի Աշոտի առաջին երգը, ապա երկրորդը, երրորդը, ապա նոր տասնյակ երգեր: Նրա տաղերը, որոնք մեր լեռների օդի թարմությունն ունեն ու մեր աղբյուրների զնգոցը, արծվային թռիչքով դուրս եկան աշուղի հայրենի ձորերից եւ ծովեր ու ցամաքներ անցնելով, հասան հեռավոր հորիզոններ:

Հայոց հինավուրց ու շքեղ լեզվով, քաղցրաշունչ մեղեդիներով համեմված նրա երգերը սիրում ու երգում ենք ոչ միայն մենք՝ հայերս, այլեւ վրացիները, քրդերը, թուրքմենները, ուզբեկները, դաղստանցիները: Նրա երգերը սիրում են ռուսը, ուկրաինացին, սիրում են շատերը:

Եթե պատերազմի տարիներին նրա երգերը խրամատներ էին հասնում ու շոյում, հուսադրում տքնության զինվորին, հաղթանակի հույս ներշնչում նրան, ապա խաղաղ տարիներին թեթեւացնում են մարդու տառապանքը, դառնում հարսնահանդեսի ուրախություն, հեռու երկրների պանդուխտ հայերին ձգում դեպի իր պապերի հինավուրց օջախը:

Անարատ սիրո, խաղաղ գոյության, մարդկային մտերմության, բարության, համբերատարության ելեւէջներ են մեր առջեւ սփռվում Աշոտի ողջ ստեղծագործության միջոցով: Թախիծ էլ կա, վիշտ էլ կա Աշոտի մոտ: Սակայն դա հուսահատի թախիծ չէ, վիշտն էլ ազգայինն է, վեհացնող, հուսադրող: Նրա երգերի մեջ զգում ենք վերջերս հանգած հայ շինականի հորովելի քաղցրությունը, մեր շարականների ողողանջները, մեր բնաշխարհի վիրավոր վեհությունը, մեր կապույտ երեկոների մեղմությունը:

Կյանքի ուղին

իսկ մորից՝ օրորոցային երգեր: Աշոտի մանկական հիշողության մեջ դաջվել են մորից լսած օրորոցայինները: Մայրը որդու սնարի մոտ մեղմ երգել է, իսկ տղան մոր հետ դնդնացել է, մինչեւ որ վրա է հասել անուշ քունը: Արդեն հինգ տարեկան հասակում Աշոտը բնության գրկում էր, օրնիբուն ունկնդրում էր թռչունների դայլայլը, գառների մայունը, հորթերի բառաչը, հմայվում էր հովիվների սրնգի ձայնով ու երգերով: Հայրապետ Դադալյանի տան քառասուն տարվա ուրախությունն ընդհատվում է կնոջ՝ Դիցուհու անսպասելի մահով: Այդ կորուստը գեղջկական շեն տանը բերում է ամայություն, իսկ փոքրիկ Աշոտին՝ տառապալից որբություն: Մոր կորուստը հետագայում թախծային մի նուրբ երանգ է հաղորդում որդու քնարին: Պատանի Աշոտը օգնում է խաշնարած հորը՝ կատարելով հովվություն Զանգեզուրի սարերում: Հայրենի բնության գրկում էլ ստանում է երաժշտական առաջին կրթությունը, յուրացնում է սրնգի վրա նվագելու արվեստը: Լեռների գրկում անցկացրած մանկության անհոգ օրերի պատմությունը հետագայում վերածվում է քնարական վերհուշի: Հոգում ամբարած Զանգեզուրի գուսանների երգերը՝ Աշոտը 1921-ին փոխադրվում է ավագ եղբոր մոտ՝ Բաքու, որտեղ եւ հովվական պարզ սրինգը փոխարինվում է սազով ու քամանչայով: Այստեղ էլ նա ավարտում է բաներիտ դպրոցը: Հետեւելով իր հոգու ներքին ձայնին՝ Աշոտը բռնում է գուսանական արվեստի ճանապարհը: Ստեղծագործելը դառնում է նրա ապրելու կերպը, իսկ երգն ու քամանչան՝ նրա ուղեկիցները: 1928թ. վերադառնում է ծննդավայր եւ լիովին նվիրվում իր սիրած արվեստին: Աշոտի անունը լայն ճանաչում է գտնում 1930-ական թվականներին: Նրա քնարին որոշակի լիցք է հաղորդում ժողովրդական ստեղծագործողների օլիմպիադայում 1-ին կարգի մրցանակ ստանալը: 1958թ. անդամագրվում է Հայաստանի գրողների միությանը:

Ապրելով ստեղծագործական լիարյուն կյանքով՝ Աշոտը բացվում է միանգամից: Առանց երկարատեւ ընդմիջումների ծնվում են նրա երգերը, մտնում ամեն հարկի տակ, թափանցում ամեն անկյուն, հուզում մարդկանց սրտերը՝ հեղինակին բերելով համընդհանուր ճանաչում: Իրար են հաջորդում գուսանի երգերի ժողովածուները. 1942-ին՝ «Գուսանական երգեր», 1955-ին՝ «Գուսանի սերը» (նոտագրված՝ 1958-ին), 1974-ին՝ «Սիրո կրակներ», 1979-ին՝ «Սրտի նվագներ», 1982-ին՝ «Ծովաստղիկս», 1988-ին՝ «Լեռները կանչում են»: Գուսան Աշոտը 1967 թվականից հանրապետության ժողովրդական արտիստ էր: Աշոտը ապրեց մինչեւ խոր ծերություն եւ, իբրեւ ճշմարիտ արվեստագետ, մինչեւ իր կյանքի վերջը մնաց իր արվեստից անբաժան: Ստեղծագործելը, իբրեւ ապրելու կերպ ու կենսաձեւ, ուղեկցեց նրան մինչեւ կյանքի վերջին օրը... Ամեն օր նրան կարելի էր հանդիպել Երեւանի կամ Գորիսի փողոցներում՝ երգը շուրթերին, բարի ու արդար ժպիտը դեմքին... Կյանքի վերջին տարիներին գուսանը հիմնականում Գորիսում էր գտնվում, հարազատ ժողովրդի հետ ամենօրյա շփումների մեջ: Իր աստեղային պահերը մեծ մասամբ ապրել է ծննդավայրում, եւ նրա երգերից շատերը ծնվել են Գորիսյան գիշերների խորհրդավոր լռության մեջ: Իսկ ցերեկները գուսանին ամեն օր կարելի էր հանդիպել Մխիթար Սպարապետի անվան հրապարակում, ուսուցչի տան պատուհանի գոգին հենված՝ մարդկանցով շրջապատված, իր նոր ծնվելիք երգի տողերը կամ երաժշտությունը դնդնալիս...

Հիրավի, գուսան Աշոտը կենսական կապի մեջ էր իր ծննդավայրի հետ, զանգեզուրյան բնաշխարհի հետ, որտեղից եւ քաղում էր իր երգերի նյութը՝ նեկտարը:

Տեղին ենք համարում մեջբերել մի անգամ մեր զրույցի ընթացքում նրա հետեւյալ խոսքը.

- Մեր էս ծորերը (ձեռքը պարզում է դեպի հին Գորիսը), կիրճերը լիքն են երաժշտությամբ: Ես ոչ միայն լսում եմ այդ երաժշտությունը, այլեւ տեսնում եմ: Ես չեմ ստեղծում, ես ընդամենը քաղում եմ, գրի եմ առնում:

Աշոտն ուներ ստեղծագործական աշխատանքի իր եղանակը: Նա երգի տեքստն ու մեղեդին մշակում էր միաժամանակ: Իր ամեն մի նոր երգ ընթերցում կամ կատարում էր գրասերների շրջանում, անգամ գրի ու գրականության հետ կապ չունեցող մարդկանց մոտ, հաշվի էր առնում բոլոր օգտակար դիտողություններն ու խորհուրդները: Այս ձեւով նա իր երգերը, նախքան տպագիր խոսքի վերածվելն ու բեմահարթակներից հնչելը, ենթարկում էր ժողովրդի փորձաքննությանը՝ դրանց հավիտենական կյանքի ուղեգիր տալու համար: Մոտ երկու տասնամյակ հանրապետության գուսանական խորհրդի պատվավոր նախագահն էր:

...1988-ի դեկտեմբերյան մահաբեր երկրաշարժը շանթահարել էր հայոց աշխարհը: Դեկտեմբերի 9-ին գուսանին հանդիպեցի Սպարապետի անվան հրապարակում՝ «գուսանի պատին» հենված: Անսովոր հուզված վիճակում էր: Երբ ձեռքը սեղմեցի, զգացի, որ այն բռանս մեջ դողում է, իսկ աչքերը լցված էին արցունքով: Նա դիմեց ինձ.

- Այս ի՞նչ եկավ մեր գլխին: Ո՞նց կարելի է դիմանալ այս վշտին... Ո՞նց պիտի տանենք այսքան երեխաների մահը...

Ես չկարողացա մխիթարական խոսք ասել նրան, բայց նաեւ զգացի, որ ժողովրդի գուսանը ժողովրդին պատուհասած աղետը շատ ծանր է տանում: Մեզ պաշարած տխրությունն այնքան խորն էր, որ խոսակցություն ծավալելը անհնարին էր: Բայց ահա գուսանը ծոցագրպանից հանում է նախորդ գիշերը ծնված երգը եւ կարդում: Դրանից հետո գուսանն ավելի էր տկարացել. գանգատվում էր սրտից, շնչարգելությունից: Տեսնելով վիճակի վատթարացումը՝ նրան փոխադրում են Երեւան՝ բուժումն այնտեղ շարունակելու նպատակով, բայց ապարդյուն... 1989-ի հունվարի 28-ին տապալվում է հայոց գուսանական արվեստի մեծ կաղնին:

Գուսանի ընտանեկան արխիվից

Լուսանկարները՝
Սմբատ
Տոռոզյանի

Գուսան Աշոտի 80-ամյակին նվիրված հանդիսությունը Գորիսում

ԿԱՐԾԻՔ ՈՒ ԳՆԱՀԱՏԱՆՔ

ԱՇՈՏ ՍԱԹՅԱՆ

Լեռնային արծիվ, Զանգեզուրի բարի ծնունդ...

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

1938-ին էր, երբ լսեցի երիտասարդ Աշուղ Աշոտի երգը... Լսեցի, հուզվեցի եւ ասացի. փառք Աստծուն... Սյունյաց Գողթանի ոգին կենդանացել է...

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Աշոտը ե՛ւ մեծ բանաստեղծ է, ե՛ւ մեծ երգահան: Նրա ստեղծագործությունը պարզ է, մաքուր, ձգող ու կանչող, ապրող ու հավերժող՝ ինչպես մեր Որոտնա լեռները ծյունագանգուր:

ԼԵՎՈՆ ԳԱԹՐՃՅԱՆ

ֆրանսահայ երգիչ

Իմ կուռքը Սայաթ-Նովան է՝ մեծ բոլոր ժամանակների մեջ... Բայց հոգեզմայլ եւ ժողովրդական են նաեւ մեծ սիրահար Գուսան Աշոտի երգերը, որոնք ես սիրով կերգեմ Սփյուռքի շատ երկրներու մեջ...

ԳՈՒՐԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

բանաստեղծ, երգահան, Արցախ

Գուսան Աշոտին ժողովուրդն իրապես կոչել է 20-րդ դարի Սայաթ-Նովա:
Կարող են լինել լավ գուսաններ, երգահաններ, բայց Գուսան Աշոտն այն միակ ժողովրդական երգահաններից է, ովքեր լեռնային ջրի պես զուլալ երգերի հետ միաժամանակ ստեղծել են հրաշալի պոեզիա:
Գուսան Աշոտը որքան տաղանդավոր երգահան էր, նույնքան էլ տաղանդավոր բանաստեղծ էր:
Չգիտեմ, ո՞ր երկինքն է նրան ավելի շատ շուք արել, բայց համոզված եմ, որ նա իրեն հավասարաչափ նաեւ Արցախի զավակ էր համարում: Նա որքան Զանգեզուրինն է, այնքան էլ Արցախինն է:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՕՐԲԵԼՅԱՆ

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

Երկար ժամանակ երազում էի հանդիպել ժամանակակից գուսանական արվեստի մեծ երախտավորին:
1967 թվականն էր: Երեւանում նշվում էր մեծ երգահանի 60-ամյակը: Հանդիսության ժամանակ մեր խումբը կատարեց նրա «Ով, դու գուսան», «Ծառերը ծաղկում են» երգերը, որոնք սիրով ընդունվեցին: Երգերը կատարում էր երգչուհի Բելա Դարբինյանը: Հանդիսության ավարտից հետո Գուսանը եկավ կուլիսների հետեւ եւ կամեցավ հանդիպել մեզ: Հանդիպումը ջերմ էր, անմոռանալի: Դրանից հետո սկիզբ առավ մեր քնքուշ, անխախտ բարեկամությունը:

ԳՈՒՍԱՆ ՇԱՀԵՆ

Առանց Աշոտի բավական աղքատ կլիներ մեր գուսանական արվեստը: Նա եկավ, առավել սեր ու ջերմություն ավելացրեց գուսանական երգերին: Մենք նրանից շատ բան ունենք սովորելու...

ԱՐԱՄ ՔՈՉԱՐՅԱՆ

Կոմպոզիտոր

Երբ առաջին անգամ հենց Աշոտի կատարմամբ լսեցի նրա «Զանգեզուրի չոր չոլերը ծաղկել են» դեռեւս անդրանիկ երգը, հիացած բացականչեցի. «Մենք մի նոր հիանալի աշուղ էլ ունեցանք... Նրա համբավն աշխարհընկալ է դառնալու...»:

ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ

կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր

Մեր ժողովրդի գուսանական արվեստի մնայուն դեմքերից է Աշոտը: Նրա լավագույն երգերն ապրում են ժողովրդի մեջ: Միանգամայն գովելի է Կապանում լույս տեսնող «Սյունյաց երկիր» թերթի նախաձեռնությունը, որ մտահղացել է Սյունյաց աշխարհի զավակի հիշատակը հարգել: Չեմ կասկածում, որ Գորիսն էլ կմիանա այս ձեռնարկին, ողջ Սյունիքն էլ: Եվ վարպետի 100-ամյա հոբելյանի տոնումն էլ կդառնա համահայկական երեւույթ:

ԿԱՐԾԻՔ ՈՒ ԳՆԱՀԱՏԱՆՔ

Երբեմն պատահում է, մի արժանավոր մտավորականի, ազգի երեւելի զավակի 100 տարին լրանում է, նոր միայն հիշում են, հապճեպ հոբելյանական հանձնաժողով ստեղծում եւ փորձում ինչ-որ ձեւով հոբելյանը նշել: Եվ ողջունելի է, որ դուք վաղօրոք եք նախապատրաստվում այդ հոբելյանը նշելու: Չգիտեմ՝ այսօր այդ մասին ինչ է մտածում մշակույթի նախարարությունը:

Պիտի ասեմ, որ իմ սուբյեկտիվ վերաբերմունքն ունեմ Գորիսի եւ գորիսեցիների հանդեպ: Մտերիմ եմ եղել Աշոտ Սաթյանի հետ, մեզ իրար հետ կապել է ստեղծագործական համագործակցությունը: Ջերմ հարաբերություններ ունեի Գուսանի հետ: Նա զտարյուն գորիսեցի էր, գորիսեցու բնավորությունն արտահայտող: Բոլորիս մտապատկերում կա իբրեւ ժողովրդի ուրախություններից եւ տխրություններից անբաժան, նրա հույզերը խորապես զգացող մարդ: Աշուղներից երեքի հետ եմ շփվել՝ Աշոտ, Հավասի, Շահեն: Չեմ հանդիպել Շերամին: Աշոտի արվեստը ժողովրդականին ավելի մոտ է, ուստի բարձր եմ գնահատում նրա վաստակը: Տարիներ առաջ ներկա եմ եղել նրա 80-ամյա հոբելյանի տոնակատարությանը: Ջանգեզուրի ժողովուրդն այդ օրն արժանին մատուցեց իր տաղանդավոր զավակին: Այնպես որ ուրախ եմ, որ կրկին պատեհ առիթ է ընձեռվել եւս մեկ անգամ մեծարելու 20-րդ դարի գուսանական արվեստի ազնվական ասպետին, ով իր ժանրով միշտ էլ ժողովրդի հետ էր, հոգեթով, սովորական մարդուն (եւ ոչ միայն նրան) սրտամոտ երգերով հարստացրեց հայ արվեստի գանձարանը: Նրա երգերն ընդմիշտ կհնչեցնի ժողովուրդը: Ժողովուրդ, որն իր անսպառ սիրով հավերժի այցետոմս տվեց սիրված գուսանին ու կնքեց նրան իբրեւ մեծ երգիչ ու երգահան: Աշոտն այն աշուղներից է, ով իր արվեստով կապրի: Խոնարհվում եմ նրա հիշատակի առջեւ եւ վերջում մաղթում սյունեցուն լինել այնպես ավանդապահ, ինչպես միշտ եղել է:

* * *

Տասնամյակների ընթացքում սովորել էինք անընդհատ լսել գուսանի երգերը, զգալ նրա աստվածային, առինքնող ներկայությունը եւ դիտել նրան իբրեւ ժողովրդի ուրախություններից ու տխրություններից անբաժան, նրա հույզերը խորապես զգացող մարդու:

Գուսան Աշոտը մեր ժամանակի գուսանական արվեստի ազնվական ասպետն էր, նա իր ոգեզմայլ քնարով մշտապես ժողովրդի հետ էր, ժողովրդական մարգարտե երգերով հարստացնում էր հայ երգարվեստի գանձարանը:

Նրա երգերն ընդմիշտ կհնչեցնի ժողովուրդը, ժողովուրդ, որն իր անսպառ սիրով հավերժի այցետոմս տվեց սիրված գուսանին եւ կնքեց նրան իբրեւ մեծն երգիչ ու երգահան:

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՋԱՆԴԱՐՅԱՆ
ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր

Դժվար է այսօր հայ գուսանական արվեստը պատկերացնել առանց այնպիսի սիրված ու հանրաճանաչ անվան, ինչպիսին Գուսան Աշոտն է, առանց նրա սրտահույզ ու հոգեմոտ երգերի, որոնք ուղեկցում են արդեն ունկնդիրների մի քանի սերնդի:

Ստեղծագործական ծանրակշիռ վաստակով իր ութսունամյակը բոլորեց Գուսան Աշոտը, բայց այդ վաստակը, անշուշտ, դեռ վերջնական չէ նրա համար. դեռ նոր երգեր են ծնվում, նրա արվեստի բազմահազար երկրպագուներ դեռ նոր սպասելիքներ ունեն սիրելի Գուսանից:

Ստեղծագործական ողջ կյանքիս ընթացքում միշտ կապված մնացի մեր երաժշտության հմայիչ հատվածներից մեկի՝ գուսանների երգարվեստի հետ: Զգացմունքների գեղեցիկ աշխարհ էր բացում իմ առջեւ Սայաթ-Նովան, Շերամը...

Մեր օրերում այդ աշխարհի հետ շարունակում էի ակտիվ հաղորդակցվել իմ սիրելի Գուսան Աշոտի միջնորդությամբ: Սրտիս ու հոգուս մոտ շատ նրբերանգներ եմ գտել նրա երգերում. ապրումների արտահայտման բնականություն, անկեղծություն: Ես կիսում եմ բոլոր նրանց կարծիքները, ովքեր Գուսան Աշոտին համարում են մեր այսօրվա հուզական երգահաններից մեկը:

Իսկ երգերում ընդգրկված աշխարհը...

Չէ՞ որ դա իմ ու Գուսանի սիրելի հողն է՝ հարազատ Ջանգեզուրը: Նրա երկնաքեր լեռներն ու մարդկային

տոկուն խառնվածքներն առանձին կենսափիլիսոփայություն կարող են բերել արվեստ: Մեր Գուսանի երգերում կա նաեւ այդ կենսափիլիսոփայությունը:

Ես միշտ սպասում էի այն օրերին, երբ Գուսանը պետք է զանգահարեր եւ ասեր.

– Տաթեւիկ ջան, քեզ համար նոր երգ եմ գրել...

Նույն պատասխանատվությամբ, ինչպես վերաբերվում էի նոր դերերգի կամ նորաստեղծ ռոմանսի կատարմանը, ես մշակում էի Գուսանի երգերը: Ես երգեցի «Իմ ժողովուրդ», «Հով գիշեր», «Յար առանց քեզ», «Մեծ Կոմիտաս»: Հատկապես ինձ ոգեւորում էր «Իմ ժողովուրդ» երգի տեքստը: Վերջերս Գորիսում, իմ 70-ամյակին նվիրված երեկոյին, հուզված իմ հայրենակիցների ընդունելությամբ, ես կրկնեցի մեր Գուսանի իմաստուն այդ խոսքերը.

Ո՛վ ժողովո՛ւրդ, իմ ծնողը դո՛ւ ես, դո՛ւ,
Ինձ կյանք տվող, ինձ սնողը դո՛ւ ես, դո՛ւ:
Քո շեն այգում ես մի տերեւ՝ անցողիկ,
Ինձ փայփայողն, ինձ պահողը դո՛ւ ես, դո՛ւ:

Երգի ծնունդը, անշուշտ, ունի իր որոշակի օրինաչափությունները: Երգը սիրում է մարդկային զուլալ հատկություններ: Գուսան Աշոտի երգերի հմայիչ գծերից է դա: Նրա երգերում լսվում է իր հոգու մաքրությունը, մտքի պարզությունն ու պայծառությունն ու էլի մարդկային շատ ու շատ գեղեցիկ հատկություններ:

Գուսան Աշոտն իրավամբ է դարձել ժողովրդի կողմից սիրված երգահան: Թող, ուրեմն, էլի երկար տարիներ իր ժողովրդի համար հնչի նրա քնարը, նրա ջերմ ու տաք քնարը:

Խոսք՝ հնչած տասը տարի առաջ

Ժողովրդական, գուսանական երգը հոգու երգ է

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՀԻ ՕՖԵԼՅԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՀԵՏ

–Տիկին Համբարձումյան, ինչպե՞ս եք հիշում Գուսան Աշոտին, մի հիշարժան դեպք պատմեք ձեր հանդիպումներից:

– Պետական ռադիոյի մենեղգչուհի էի, մի անգամ հեռաձայնեց, խնդրեց, որ հանդիպենք եւ զանգեզուրյան, ինձ համար հաճելի առոգանությամբ, ավելացրեց. «մի լավ երգ ըմ կիրալ»: Ասացի. «Գուսա՛ն, շատ եմ սիրում ձեր երգերը, համեցեք՝ կհանդիպենք»: Եկավ եւ ներկայացրեց «Օջախում» երգը: Ձայնագրելու հնարավորություն ունեինք, ձայնագրեցինք, որ հետագայում նոտագրվի: Այդ երգը մեծ ճանաչում գտավ, սիրվեց ոչ միայն մեր երկրում, այլեւ նրա սահմաններից դուրս: Գուսանի երգերից տասը-տասնհինգը կատարել եմ, մեկը մյուսից լավն են: Ընդհանրապես նրա երգերի նաեւ առաջին կատարողն եմ եղել, այն էլ ինչպիսի երգերի. «Ախպեր», «Վարդ աղբյուր», «Մանկություն», «Հով սարեր», «Ըղձաքար», «Սուրբ մայրեր»: Շատ-շատ երգեր են ստեղծվում թե գուսանների, թե ժամանակակից ստեղծագործողների կողմից: Կան երգեր, որ վաղ են իջնում բեմից եւ հեռանում ժողովրդի սրտից: Կարծում եմ՝ գուսանի երգերը կմնան ժողովրդի հիշողության մեջ եւ կերգվեն, ինչպես այսօր երգում են Սայաթ-Նովա, Շերամ, Կոմիտաս, մեր ժողովրդական երգերը:

– Իսկ ինչ-որ բանով նրա երգերը տարբերվո՞ւմ են մյուս գուսանների երգերից:

– Իհարկե տարբերվում են. նրա երգերը քնարական են, նաեւ լայնաշունչ

Խոսք՝ հնչած տասը տարի առաջ

երգեր ունի, ռիթմիկ երգեր էլ է ստեղծել: Աշոտի երգերը հոգու երգեր են: Մասնավորապես մի երգ ունի՝ «Պախրա» վերնագրով. «Պախրան իրեն տեսել էր ջրի հայելում, Սարերի անուշ բույրն էր վայելում, Արդյոք խմո՞ւմ էր, թե՞ համբուրում, Իր տեսքով տարված գուցե հարբում էր»: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ համեմատություն է: Երգելուց առաջ ինձ միշտ հրապուրել են նրա երգերի տեքստերը, հրաշալի բանաստեղծ էր Գուսան Աշոտը: Ինձ խոստովանել է, որ սկզբից տեքստն է ստեղծում, եւ նոր միայն բանաստեղծական խոսքից ծնվում են հնչյունները՝ նույնքան զարմանահրաշ պատկերներով ու գույներով:

– Վարպետին գուսան անվանե՞լն է ճիշտ, թե աշուղ:

– Ոչ գուսանը, ոչ աշուղը, ստեղծագործող էր Աշոտը: Գուսանը կամ աշուղը տերմին է, ստեղծագործող էր նա, բանաստեղծ: Ինձ համար, ժողովրդի համար գուսան Աշոտը ստեղծագործող մեկն էր, որ մի անգամ թերթերից մեկում նրա մասին գրեցին. «մեր այսօրվա Սայաթ-Նովան»: Դա երգչուհուս կարծիքն էր:

– Իսկ այսօրվա երիտասարդ կատարողները կարողանո՞ւմ են հնչեցնել Գուսան Աշոտ, ինչպես հարկն է, դուք աշակերտներ ունե՞ք:

– Ես հնչեցրել եմ տասնյակ տարիներ, եւ երբ ինձ հարց են տալիս՝ ինչո՞ւ աշակերտներ չունեք կամ բուհում չեք դասավանդում, պատասխանում եմ՝ դասավանդել եմ ոչ մի տարի, այլ հիսուն տարի. հեռուստատեսությունը, ռադիոն այն դպրոցն են, որ համալսարան են, որը ոչնչով չես փոխարինի:

> *Թող մեծամտություն չհամարվի, եւ հեռուստատեսությամբ, եւ ռադիոյով հնչում են երգեր, որ իմ երգած երգերն են, դրանց անդրանիկ կատարողը ես եմ եղել: Դա դասավանդելուց մի բան էլ ավելին է:*

Ժամանակին լսում էի ինչպես իմ գործընկերների, այնպես էլ ավագ սերնդի երգիչների կատարումները, որն ինձ դուր էր գալիս, կատարում էի: Ընդօրինակում էի, իհարկե, ստեղծագործաբար: Պատկերացրեք, լսելով նույնիսկ սովորում էի:

> *Մինչ երաժշտական կրթություն ստանալը ես լսում էի գուսանի երգը, եւ իմ ականջին շատ հարազատ էր հնչում: Ես կարող էի էստրադային երգ երգել, նույնիսկ ինձ դասավանդողներն առաջարկեցին օպերային երգ երգել, բայց նախընտրեցի ժողովրդականը, գուսանականը, որովհետեւ, ժողովրդական, գուսանական երգը հոգու երգ է:*

– Եթե անհամեստ հարց չէ, ինչո՞վ է այսօր զբաղված Օֆելյա Համբարձումյան երգչուհին:

– Արդեն նշեցի, որ աշակերտներ չունեմ, աշակերտները նրանք են, որ միջնորդավորված կապ ունեմ հետները, երբեմն համերգների եմ մասնակցում: Գիտեք՝ ժամանակն այնպիսին է, որ ժողովրդական,գուսանական երգարվեստին շատ քիչ տեղ է հատկացվում, ինչի համար անկեղծորեն ցավում եմ: Էստրադային եւ ժամանակակից երգի խառը-խուռը չխչխկոցը, աղմուկը չափից դուրս շատ են: Եթե ռադիոյով համերգ է լինում, երկու երգ լինում է գուսանական, քսաներկուսը՝ էստրադային, ուզես-չուզես ձանձրանում ես: Սա ոչ միայն իմ, այլ ժողովրդի կարծիքն է: Ինձ դրսում հաճախ նման հարց են տալիս, թե ինչն է պատճառը, որ մենք չենք լսում մեր ժողովրդի երգն այնքան, որքան կցանկանայինք:

– Նախկինում հեռուստատեսությամբ, ռադիոյով հաճախակի էին հնչում հայ երգարվեստի երախտավորների՝ Արամ Մերանգուլյանի, Թաթուլ Ալթունյանի ղեկավարած վաստակավոր անսամբլների կատարումները, ճանաչված երգիչներ Վաղարշակ Սահակյանի, Նորայր Մնացականյանի, Օֆելյա Համբարձումյանի, Հովհաննես Բաղալյանի, Ռուբեն Մաթեւոսյանի կատարումները: Այժմ այդ բոլորը քաղցր հուշ են դարձել, մանավանդ հեռուստատեսությունը մի տեսակ երես է թեքել ժողովրդական-գուսանական արվեստից:

– Այդ մի հարցին մասամբ պատասխանել եմ: Դա նաեւ այն պատճառով է, որ հեռուստառադիոյում կազմակերպիչները մեծամասամբ երիտասարդներ են, նրանք շատ քիչ են լսել կամ լսում իսկական ազգային երգը: Երբեմն լսում եմ՝ համերգի ժամանակ գուսանի երգ են հայտարարում, ասում են՝ ժողովրդական, կամ այլ ստեղծագործողի անուն են տալիս: Այս բոլորը գալիս է չիմացությունից: Դա նշանակում է, որ այդ մարդիկ երաժշտություն քիչ են լսել եւ չեն ջոկում մեկը մյուսից: Սա ցավալի է, չարչրկված հարց է, բայց որին նաեւ լուծում պիտի տրվի: Ինչո՞ւ չպաշտպանենք մեր իսկական ազգայինը, անարատը, առանց աղճատելու:

> *Գուսան Աշոտի երգերը շատ անարատ են, լսում ես երգերը եւ քեզ ակամայից զգում ես Հայաստանում՝ ձորերում, սարերում, բնության գրկում, եղնիկի հետ ես խոսում, աղբյուրից պաղ ջուր խմում:*

Թող աղավաղված երաժշտության կողքին գոնե դա էլ լինի: Արամ Մերանգուլյանի անվան անսամբլը, ինչպես դուք նշեցիք, ժողովրդական երգեր էր պրոպագանդում, այդ ամենի վրա խաչ է քաշվել: Բացի դրանից, ինչ ժամանակին ձայնագրվել է, դրա վրա էլ է խաչ քաշվել: Հանրային ռադիոյի պատասխանատուներից մեկը մի անգամ հայտարարեց, թե իրենք պարտավոր չեն ամեն օր դիմել արխիվին: Նկատի ուներ երաժշտական ֆոնդում պահպանվող ձայնագրությունները, որոնք ժամանակին մարդիկ լսել են, ոգեշնչվել դրանցով, մի՞թե դա արխիվ պիտի համարել բացասական իմաստով: Կոմիտասը մեր օրերում չի ստեղծագործել, համարենք արխի՞վ, Սայաթ-Նովային մոռանա՞նք, Ջիվանուն, Շիրինին, Աշոտին համարենք արխի՞վ, ինչ է թե էն ժամանակ են ստեղծագործել: Այն, ինչ պահպանվում է հեռուստատեսությունում, այսօր չի հնչում: Իզուր չի ասված՝ նորը լավ մոռացված հինն է: Այլ բան է, որ նախկինում ձայնագրման տեխնիկան կատարյալ չէր, բայց չէ՞ որ ժամանակակից տեխնիկան թույլ է տալիս այդ ձայնագրություններ-

Խոսք՝ հնչած տասը տարի առաջ

Ամենայն հայոց գուսանը

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱԴԱԼՅԱՆ

Գուսան Աշոտի անունն ու երգերը լսելիս անմիջապես պատկերացնում ենք ինքնատիպ, մեծատաղանդ մի վարպետի, ով ահա ավելի քան 50 տարի ջերմեռանդ սիրով ու բարձր արվեստով ստեղծում է սիրո, աշխատանքի, խրատական, հայրենասիրական, հայրենի բնությանը, բարեկամությանն ու խաղաղությանը նվիրված գողտրիկ երգեր: Ես նպատակ չունեմ շարադրելու մեր սիրելի գուսանի կենսագրությունը կամ մեկնաբանելու նրա բանաստեղծությունների ու երաժշտության մեծ արժանիքները, այլ ուզում եմ սրտի ջերմությամբ ասել, սիրելի՛ գուսան, որպես քո շատ երգերի առաջին կատարող, քո հարյուրավոր երգերի նոտագիր ու անկեղծ բարեկամ, միշտ էլ հիացել եմ՝ տեսնելով, թե ինչպես են քո երգերը գարնան զեփյուռի նման թափանցել մարդկանց սրտերը, ջերմացրել նրանց հույզերն ու հույսերը: Այսօր հազիվ թե գտնվի հայ մի ընտանիք՝ հայրենիքում թե սփյուռքում, ուր չիմանան, չերգեն քո հոգեթով երգերը, հազիվ թե լինի ժողովրդա-գուսանական, էստրադային կամ երաժշտական մի խումբ, որի ծրագրում չլինեն քո մեղեդիները:

> *Լավ երգը երբեք չի մոռացվում, բերնեբերան փոխանցվում է սերունդներին, իր հետ հավերժացնելով նաեւ ստեղծողի անունը: Ինչպես ինքդ ես ասել քո «Ոչ մի խորշակ» երգում՝*

Միտքս ծով է, երբեք լճակ
չի դառնա,
Հազար աղբյուր, հազար
ակունք ունի նա,
Մահ չեմ տեսնի, թեկուզ
մի երգս մնա
Իմ հայրենի աղբյուրների ափերին,
Իմ աշխարհի աղջիկների
շուրթերին:

Ես հավատում եմ քո անմահությանը, սիրելի, ամենայն հայոց գուսան, եւ հպարտ եմ, որ քո ժամանակակիցն եմ եւ իմ երգիչ ընկերների հետ կատարում եմ քո երգերը:

«Այունյաց երկիր» թերթ
17 հունվարի 2007թ., N113(02)

որը մաքրել, հստակեցնել եւ մատուցել ժողովրդին:

– Պատրաստվում ենք նշելու Գուսան Աշոտի 100-ամյա հոբելյանը, բայց այունեցիները չեն մոռացել Գորիսում կազմակերպված նրա 80-ամյակին նվիրված հանդիսությունը:

– Այո, հրաշալի անցավ այդ երեկոն, որի տեսագրությունն ունեմ, պահպանվում է մոտս: Այդ հիշարժան օրը ես երգեցի նրա լավագույն երգերից մեկը՝ «Օջախումը»: Կուզենայի նման երեկոները հաճախադեպ լինեին: Մտածում եմ, թե ինչու «Արամ Խաչատրյան» մեծ դահլիճում գուսանի երգի երկրպագուների համար մի համերգ չեն կազմակերպում՝ դրանում ընդգրկելով նրա լավագույն երգերը: Դա նորից շունչ կտա նրա երգարվեստին: Կուզեի Աշոտի երգերի կողքին հնչեին Սայաթ-Նովայի, Շերամի, Շահենի ստեղծագործությունները: Այս ստեղծագործողների երգերին անդրադարձել եմ եւ ունեմ բավականին ձայնագրություններ: Տարիներ շարունակ հնչել են ռադիոյով եւ հեռուստատեսությամբ:

– Ինչպե՞ս եք ընդունում այն փաստը, որ «Այունյաց երկիր» թերթը նախաձեռնել է նշելու վարպետի 100-ամյա հոբելյանը՝ թերթի մի ամբողջ համար նվիրելով այդ իրադարձությանը:

– Գուսան Աշոտը ծանրակշիռ ժառանգություն է թողել մեզ, նա հարգված է եղել թե գրողների, թե կոմպոզիտորների կողմից: Անպայման պիտի նշվի այդ հոբելյանը, չէ՞ որ այն սերունդը, որ լսել եւ ընդունել է գուսանին, արդեն իր կյանքի մայրամուտն է ապրում, ավելի ստույգ՝ վաղուց հրաժեշտ է տվել երիտասարդական տարիներին: Նրա երգն աստիճանաբար կմարի, եթե անընդհատ չկատարվի: Եթե հոբելյանական տարի է, նա էլ արժանի ստեղծագործող է եղել, անպայման պիտի նշվի նրա հոբելյանը: Սա ես ասում եմ որպես նրա երգերի երկարամյա կատարող: Նրա երգերը պիտի հնչեն, որպեսզի տարբեր սերունդների միջեւ կապը չխզվի:

«Այունյաց երկիր» թերթ
01.17.2007թ.
N113 (02)

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով



ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ.

«...Իր երգերից շատերը հաճախ են դասվում ժողովրդական գանձերի շարքին»

Զանգեզուրի այս բարի ծնունդի երգերը հարազատ հայելին են երկնասլա ու հպարտ Սյունյաց աշխարհի: Իր ստեղծագործությունները մշտապես ներշնչված ու լեցուն եղան այս անարատ հողի գեղեցկությամբ, հայոց բառ ու բանի հոգեհմա վառվռունությամբ, մարդ ու տուն, սեր ու երկիր գովերգելու ճարտարությամբ:

Հոգի գերող կշռույթների ու սիրտ գրավող ելեւէջների նրա երգաշարն այս էլ քանի տարի մեր տան սրբություններին ապավինելու, գեղեցիկի մեջ ապրելու վայելք է դառնում:

Աշուղ Աշոտին հավասարապես սիրեցին ու իրենցը համարեցին թե՛ վաստակաշատ բանաստեղծը - սիրով եմ հիշում Համո Սահյանի համակ հիացմունքը նրա արվեստով, - թե՛ դասական երաժշտության վարպետ երաժիշտը - սիրով եմ հիշում Թաթուլ Ալթունյանի ուշադրությունը նրա երգերի հանդեպ, - եւ թե՛, մանավանդ, երաժշտասեր լայն հանրությունը: Աշուղ Աշոտի վաստակի թերեւս ամենամեծ գնահատականն է այն, որ այսօր իր երգերից շատերը հաճախ են դասվում ժողովրդական գանձերի շարքին:

Եվ երկար են ապրելու նրա երգերը մեզ հետ, մեր մեջ:

ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆ.

«Աշուղ Աշոտի երգերի մեջ մեղեդի հյուսելու ձեւը, բնույթը, ճաշակը Սյունիքինն է, Սյունյաց աշխարհինն է»

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ, ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՊՐՈՖԵՍՈՐ ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՀԵՏ

–Պարոն Պողոսյան, վերջին անգամ մենք հանդիպել էինք աշուղ Աշոտի

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

Ծննդյան 100-ամյակի առիթով, այժմ լրանում է վարպետի 110-ամյակը, եւ վերստին որոշել ենք անդրադառնալ նրա ժառանգությանը: Որպես մեր զրույցի նախաբան՝ նախ վերհիշենք հայ աշուղական արվեստի պատմության ակունքներն ու փուլերը:

– Աշուղական արվեստը համաարեւելյան երեւույթ է, Հայաստան է ներթափանցել 15-րդ դարի ընթացքում, մինչեւ հիմա մեզ հայտնի առաջին հայ աշուղի անունը Ղուլ օղլի Երզնկացի է:

– Բայց անունն ինչ-որ թուրքական արմատներով է կազմված:

– Դա կարեւոր չէ, Այվազովսկին, օրինակ, ռուսական է, լեհական է ազգանվան կառուցվածքը, դա կարեւոր չէ, թուրքերի տիրապետության տակ ենք եղել, դա նորմալ պիտի ընդունվի, վեց հարյուր տարի թուրքական իշխանություն է եղել Արեւմտյան Հայաստանում: Ղուլօղլի Երզնկացի՝ Ղուլը պարսկերեն ծառա է նշանակում, օղլին թուրքերեն՝ որդի, ծառայի որդի: Ապրել է 15-րդ դարի երկրորդ կեսին: Մատենադարանում պահպանվել է նրա ձեռագիր մատյանը, որ հայտնաբերեց Մատենադարանի գիտաշխատող Խաչիկ Ամիրյանը: Այդ դավթարում զետեղված երգերից մեկը, որքան էլ կարող է զարմանալի թվալ, «Կռունկ, ուստի՞ կուգաս» հանրահայտ երգի թուրքալեզու տարբերակն է: Հիմա շատ դժվար է ասել՝ արդյո՞ք ինքն է հեղինակը, թե՞ ինքն է հետո փոխադրել հայերենի կամ ինքն է փոխադրել թուրքերենի, – սրանք հարցեր են, որ կարիք ունեն լուրջ գիտական ուսումնասիրության:

Մենք ունեցանք երեք նշանավոր աշուղական դպրոց՝ վիրահայ, տաճկահայ եւ պարսկահայ: Իսկ 19-րդ դարի երկրորդ կեսերին ձեւավորվեց, ի դեմ մեծ աշուղ Ջիվանու, եւ կայացավ հայոց ազգային աշուղական դպրոցը: Մեկընդմիշտ աշուղական արվեստը հայացվեց: Եվ պետք չէ դրանից խրտնել, որովհետեւ չունեինք սիմֆոնիկ նվագախումբ, չունեինք օպերա, այսօր ունենք ազգային օպերա, ազգային սիմֆոնիկ երաժշտություն: Երեւույթն այն աստիճանի կատարյալ դարձավ, որ աշուղական երգը դարձավ մեր ժողովրդական երգի պրոֆեսիոնալ թեւը: Մեր ազգային

ժողովրդական երգը հայ երգարվեստի ակունքն է, աշուղական երգը դարձավ այդ ակունքի պրոֆեսիոնալ թեւը: Ինչո՞վ էր ժողովրդական երգը ոչ պրոֆեսիոնալ, աշուղականը՝ պրոֆեսիոնալ: Ժողովրդական երգը (ֆոլկլորը) փոխանցվում էր բերնեբերան, ականջից ականջ, իսկ աշուղական երգն ուսուցանվում էր վարպետի կողմից աշակերտին:

– Եկեք վերջնականապես ճշտենք գուսան-աշուղ տերմինների սահմանները, ո՞ր դեպքում գուսան եւ ո՞ր դեպքում աշուղ:

– Թե աշուղը եւ թե գուսանը փոխառություններ են, գուսանը՝ պահլավերենից, աշուղը՝ արաբերենից: Մինչդեռ Հրաչյա Աճառյանը մեզ փոխանցում է, որ հայոց մեջ եղել է գուսան բառը գովասան ձեւով, փոխառնվել է պահլավերենին, վերջինս փոխ է առել հայերենից, գուասանը դարձել է գով (ւ) սան, որ հայերենի մեջ է մտել գուսան ձեւով:

Գուսանական արվեստը հայոց հնագույն մշակութային շերտն է: Մեր պատմիչներն են վկայում այդ երգերի գոյության մասին՝ Երկնէր երկիր, երկնէր երկիր, երկնէր եւ ծովն ծիրանի եւ այլն: Եվ այսպես բազում պատառիկներ է բերում Խորենացին:

Սա մեր հնագույն մշակութային շերտն է, որից մեզ պատառիկներ են հասել, եւ աշխարհում շատ քիչ ժողովուրդներ կարող են նման արժեքներ ունենալ: Աշուղական արվեստը, ինչպես արդեն նշեցի, համաարեւելյան է, եւ Հայաստան մուտք գործեց 15-րդ դարում: Աշուղն արաբերեն բառ է՝ աշք արմատով, որ նշանակում է սեր, սիրահար, հայոց մեջ մտել եւ մեր լեզվական օրենքներին համահունչ դառնալով ձեւակերպվել է աշուղ, թուրքերի մոտ այն աշիկ է, պարսիկների մոտ էշխ է, Միջին Ասիայում՝ աշկիյա է: Եվ ոչ ոք այսօր չի կարող հաստատապես ասել, հայերենի՞ միջոցով է աշուղ բառն անցել թուրքերենին, թե՞ թուրքերենի միջոցով անցել է հայերենին: Եվ գուսանական արվեստը, եւ աշուղական արվեստը երկուսն էլ երգին են առնչվում, հեղինակային երգ է, բայց գուսանական երգերն ազատ ոճի երգեր են, աշուղական երգերը՝ կանոնիկ, թրծված, տաղաչափական օրենքներին ենթարկվող: Նման են իրար միայն նրանով, որ երկուսն էլ վերաբերում են երգարվեստին: Սակայն դարեր շարունակ բոլոր ստեղծագործողները կոչվել են աշուղներ, բերեմ մի օրինակ եւս, ինչպես կվերաբերվեք, եթե այսօր ասեն երգահան Բեթհովենի ստեղծագործությունները: Չէ՞ որ նա միայն երգ չի գրել: Ճիշտ այդպես էլ Սայաթ-Նովային չենք կարող կոչել գուսան Սայաթ-Նովա, գուսան Ջիվանի: Երբ այդ մարդիկ այդ բառը չեն օգտագործել իրենց երգերում երբեւէ:

– Անցնենք մեր զրույցի բուն թեմային՝ աշուղ Աշոտին:

– Աշուղ Աշոտն իր հին երգերում գրել է աշուղ Աշոտ, որոնք հրատարակված հասել է մեզ: Նախ՝ ուզում եմ պարզաբանել, թե ինչպես աշուղը

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

դարձավ գուսան: 1939 թվականին հայ մշակույթի տասնօրյակն էր Մոսկվայում: Հայաստանի այն օրերի վարչապետը՝ Սահակ Խորենովիչը հրահանգում է, որ մեր աշուղներին Մոսկվայում հայտարարեն գուսան, որովհետեւ թուրք աշուղները ողջունելու են, որպեսզի թուրք աշուղների հետ մերոնց չխառնեն: Ստալինյան բռնատիրության ժամանակներ էին, վարչապետի հրահանգը հրահանգ չէր, այլ հրաման: Աշուղագետ Շավիղ Գրիգորյանը վկայում է, թե ինչպես այն ժամանակվա թերթերը գրել էին, որ մեր աշուղները գնացին Մոսկվա աշուղ, վերադարձան գուսան: Եվ ամբողջ երկրով մեկ այդ օրենքը դարձավ պարտադիր: Եվ թյուրիմացաբար բոլորը դարձան գուսան՝ գուսան Աշոտ, գուսան Հավասի, գուսան Շահեն, գուսան Ռազմիկ: Սա իբր քիչ էր, անցյալի աշուղներին եւս կոչեցին գուսան՝ գուսան Շիրին, գուսան Շերամ եւ այլն:

– Երկար տարիներ ի վեր դասավանդում եք Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որքանո՞վ են Աշոտի ստեղծագործություններն ընդգրկված ուսումնական ծրագրում:

– 29 տարի է՝ դասավանդում եմ կոնսերվատորիայում, որից 17 տարին՝ հայ աշուղական արվեստ, ժամաքանակը, եթե անկեղծ լինենք, սակավ է, շաբաթական մեկ դաս, բայց այդ սակավության մեջ աշուղ Աշոտն այնքան կարեւոր տեղ ունի հայ աշուղական արվեստի պատմության մեջ, որ առանձին մեկ դաս հատկացվում է նրա ստեղծագործական ժառանգությանը, կյանքին եւ գործունեությանը: Սա, ըստ իս, շատ կարեւոր փաստ է, որ վկայում է հայ աշուղական արվեստում, պատմության մեջ նրա տեղի եւ դերի մասին:

– Դուք նաեւ երաժիշտ-կատարող եք, աշուղ Աշոտի երգերից ո՞րն է ձեզ ավելի սրտամոտ, եւ ընդհանրապես ի՞նչ դեր ունի աշուղ Աշոտը ձեր կատարողական արվեստում:

– Ընտրություն կատարելը շատ բարդ է, որովհետեւ Աշոտի երգարվեստը շատ հարուստ է, բայց ես երգել եմ նրա «Սյունյաց սարեր»-ը, «Հով սարեր, մով սարերը»-ը, «Լուսնի շողը պատուհանից ներս ընկավ», «Հով գիշեր» երգը, «Ո՞ւր է»: Եվ երբեմն, երբ մենակ եմ լինում, ինքնամփոփ հոգեվիճակում հայտնվում, քթիս տակ երգում եմ, դնդնում եմ «Ո՞ւր է» երգը, որ աշուղ Աշոտը ձոնել է վաղամեռիկ առաջին կնոջը:

– Որքանո՞վ էր նման եւ որքանով տարբեր Աշոտն իր ժամանակակից աշուղներից:

– 20-րդ դարն աշուղական արվեստում երեք մեծություն տվեց՝ Հավասի, Աշոտ եւ Շահեն: Հետաքրքիր զուգադիպություն ասեմ. երեք մեծություններն էլ ապրեցին 82 տարի: Արդյո՞ք նախախնամության մատը խառը չէ այստեղ: Եվ երեքն էլ աշուղ լինելով՝ իրարից շատ տարբեր են: Աշուղ Աշոտն իր հայրենի հող ու ջրի, զուլալ աղբյուրի ծնունդ է, Սյունյաց երգիչ է, նրա երգերի մեջ ակնհայտորեն մեղեդի հյուսելու ձեւը, բնույթը, ճաշակը Սյունիքինն է, Սյունյաց աշխարհինն է: Նրա անմահական, քչքչան աղբյուրների, նրա խոր ձորերի եւ ամպերի մեջ մխրճված սարերի կատարների, քերթերի երգիչն է աշուղ Աշոտը:

– Դուք բանասիրական բարձրագույն կրթություն ունեք, նաեւ սովորել եք էջմիածնի հոգեւոր ճեմարանում, որպես բանասեր, կուզեինք ներկայացնել աշուղ Աշոտի երգերի տաղաչափությունը, այն համընկնո՞ւմ է աշուղական երգերի տաղաչափությանը: Ասում են, որ նրա երգերի տեքստերը ավանդական տաղաչափության ձեւեր են:

– Միանշանակ: Աշուղությունը նրա ստեղծագործելու ժամանակաշրջանում այնքան բարձր համարում ուներ, որ մեր մեծ դասականներն էլ էին փորձում գրել նման տաղաչափությամբ: Լավագույն օրինակը Եղիշե Չարենցն է, ով իր «Տաղարանը» գրեց աշուղական տաղաչափությամբ: Այնպես որ առաջին փորձն աշուղական արվեստում արել է Շերամը, ով հեռացել է աշուղական տաղաչափությունից, բայց դա բոլորովին չի խանգարել, որ նա մնա մեր երեւելի աշուղը, եւ ինքն էլ իր երգի մեջ գրել է՝ ճամփա ընկիր, աշուղ Շերամ:

– Նախորդ մեր զրույցի ժամանակ ասացիք, որ աշուղ Աշոտն է ձեզ հորդորել մասնակցելու ժողովրդական արտիստ Վաղարշակ Սահակյանի ղեկավարած «Սայաթ-Նովա» աշուղական վաստակավոր անսամբլի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին եւ անձամբ ինքը ձեզ տարավ այդ մրցույթին մասնակցելու:

– Ճիշտ այդպես, դպրոցն ավարտելուց հետո, երբ Թիֆլիսից եկա Երեւան, առաջին երեւելի մարդը, ում հետ ծանոթացա, աշուղ Աշոտն է եղել: Երբ երգեցի իր համար, զարմացավ, թե իր երգերը որտեղ եմ սովորել:

Երբ Վաղարշակ Սահակյանը հայտարարություն էր տարածել, թե «Սայաթ-Նովա» անսամբլի համար հավաքագրում է երիտասարդական կազմ, աշուղ Աշոտն ինձ հորդորեց մասնակցել մրցույթին: Չէի ուզում, ասացի՝ չէ, վարպետ, ուզում եմ մնալ ձեզ մոտ: Ասում էր, բալաս, ջահել ես, չես հասկանում, էն ուրիշ բան ա, բարձր տեղ ա: Եվ ի պատիվ իրեն, դիմում գրեցի:

Մրցույթի օրն ինձ հետ եկավ, տարավ մի սենյակ, ճանաչված երաժիշտներից մեկի մոտ երգել տվեց: Նա լսեց եւ հավանեց: Հետո երգեցի մրցույթում եւ ընդունվեցի Սայաթ-Նովայի անվան աշուղական անսամբլ՝ Վաղարշակ Սահակյանի ղեկավարությամբ:

Տարիներ անց, երբ արդեն երգում էի Թաթուլ Ալթունյանի անվան երգիպարի վաստակավոր անսամբլում, Էմմա Ծատուրյանը՝ անսամբլի ղեկավարը, ինձ ուղարկեց աշուղ Աշոտի տուն, Ծատուրյանը պայմանավորվել էր վարպետի հետ, որ իր չերգված մի գեղեցիկ երգ սովորեցնի ինձ՝ անսամբլում երգելու համար: Հիշում եմ այդ երգը՝ «Երազումս, թեւեր առած Արազն անցա էն կողմը»... (երգում է), շատ գեղեցիկ երգ է, շատ մեղեդային են նրա երգերը: Վարպետի ձայնը շատ կոշտ էր: Մեծ էր արդեն տարիքով, խնդրեցի իրեն ձայնագրել, ասաց. «Չէ, բալաս, իմ ձենը կիրելու ձեն չի»:

– Այս համատեքստում ինչի՞ մասին կուզեիք խոսել աշուղի հետ կապված:

– Աշուղական երգը սիրո երգն է, սերը հավերժ է, քանի մարդ կա այս արեւի տակ, եւ եթե տեր լինի, մարդու հետ հավասար պիտի քայլի նաեւ աշուղական երգը:

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

– Մամուլից տեղյակ ենք եւ Ձեր սեղանին տեսնում ենք աշուղական երգերի ընտրանու՝ «Գանձարանի» մի հատորյակ: «Գանձարանում» ի՞նչ տեղ է հատկացվելու աշուղ Աշոտին:

– Մենք հրատարակում ենք «Գանձարան հայ աշուղական երգերի»՝ 20 հատորով: Դրանք պիտի ներկայացնեն հայ աշուղական արվեստի գանձերը, որոնք հասել են մեր օրերը՝ սկսած 15-րդ դարից: Նպատակ ունենք պահպանել մեզ հասած ժառանգությունը եւ փոխանցել սերունդներին: Առաջին հատորը ներկայացնում է Սայաթ-Նովային՝ 31 երգով: Արդեն հրատարակվել է չորս հատոր: «Գանձարանում» մի առանձին հատորով ժողովրդին ներկայացնելու ենք անմահ երգիչ աշուղ Աշոտին:

– Մի քանի խոսք էլ Ձեր ղեկավարած աշուղական դպրոցի մասին:

– Եկող տարի լրանում է Ջիվանու անվան աշուղական դպրոցի ստեղծման 20-ամյակը: Մեր դպրոցն ավարտել են մոտ երկու հազար պատանի ու աղջիկ, որոնցից ոմանք այսօր դարձել են հանրահայտ երգիչներ, եւ շատերն էլ ընդհանրապես թողել են երգարվեստը: Եվ շատ ավելի կարեւորում եմ ոչ թե այն երգիչներին, ովքեր այսօր հայտնի են, այլ բոլոր նրանց, ովքեր երգարվեստը թողել են՝ խորապես համոզված լինելով, որ նրանք դարձան լավ մարդիկ, Հայաստանի արժանապատիվ քաղաքացիներ, լավ ծնողի զավակ եւ վաղվա օրինակելի ծնող: Նաեւ ասեմ, որ Սայաթ-Նովայի անվան աշուղական դպրոց են գալիս աշխատավորական խավի երեխաները: Ազգային նվագարաններ նվագելու մեջ հմտանալ նախընտրում են հասարակ ժողովրդի երեխաները:

– Եվ ընդհանրապես, ինչպես երեւում է, համընդհանուր է ազգային նվագարանների հանդեպ հետաքրքրության նվազումը:

– Անշուշտ, այդպես է, եւ այդ երեւույթը խոր արմատներ է ձգում մեր իրականության մեջ, բայց 2006 թվականին Հայաստանի կառավարությունը ծրագիր ներկայացրեց Ազգային ժողով, որը հաստատեց այն, ըստ որի ազգային նվագարանների ուսուցումը երաժշտական հաստատություններում իրականացնել պետպատվերի շրջանակում: Եվ ընդամենը տասը օր (հարցազրույցը կայացել է 2016թ. նոյեմբերի 9-ին, խմբ.) առաջ Արամ Խաչատրյանի անվան մեծ համերգասրահում Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության մանկապատանեկան գեղագիտական դաստիարակության կենտրոնն անցկացրեց ազգային նվագարանների նվագախմբերի փառատոն-մրցույթ եւ ի զարմանս մեզ եւ մեր ժողովրդի, փառատոնին մասնակցեց շուրջ 30 նվագախումբ: Կարո՞ղ եք երեւակայել մեր հրճվանքն ու համոզմունքն այդ կարեւոր փաստի առիթով: Եվ նույնքան զարմանալի էր, որ փառատոնին իր ներկայությունը չուներ Սյունիքի մարզը: Զարմանալի եմ ասում, քանզի Սյունիքը շատ երաժշտական մարզ է, մեր հավատքի մեծ կենտրոններ ունեցող մարզ է:

– Տարբեր առիթներով, նաեւ մամուլում մտահոգություն եք հայտնում, որ ցածրաճաշակ երեւույթները՝ երաժշտական անունով, ռեստորանային երգը բարձրացել են բեմ, նվաճել պրոֆեսիոնալ երգարվեստի տեղը: Ընդ որում՝ Ձեր դիտարկմամբ, պատկերը նույնն է՝ եւ դրսում, ե՛ւ հայրենիքում:

– Մտահոգությունը շարունակում է ապրել մինչ մեր օրերը, բայց հույսը վերջինն է մեռնում: Համոզմունք ունեմ, որ ինչ-որ բան փոխվելու է: Թեպետ այդ ռեստորանային երաժշտությունն ապրելու է մեզ հետ, շարունակելու է կյանքը, բայց ցավը նրա կենսագործունեությունը չէ, այլ այն, որ այդ ցածրաճաշակ երեւույթը նվաճել է Կոմիտասի ու Սայաթ-Նովայի տեղը բեմարվեստում, ցածրաճաշակությունը բարձրացել է բեմ եւ հավակնում է կոչվելու բարձր արվեստ:

– Ապրիլին լրացավ աշուղ Աշոտի ծննդյան 110-ամյակը: Որպես աշուղական համույթի ղեկավար եւ աշուղագիտական դպրոցի տնօրեն, ի՞նչ եք նախատեսում ճանաչված աշուղի հոբելյանի առթիվ:

– Անշուշտ, որեւէ բան կձեռնարկենք, ինչպե՞ս կարող ենք լուռ անտարբերությամբ անցնել աշուղ Աշոտի հոբելյանի կողքով:



ԱՐԶԱՍ ՈՍԿԱՆՅԱՆ. «Նա արեւելահայ «կաղնե» մի աշուղ է»

Հարցազրույց կոմպոզիտոր, երգիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայոց ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի (ժողնվագարաններ եւ երգ) վարիչ Արզաս Ոսկանյանի հետ

– Պարոն Ոսկանյան, Դուք կոնսերվատորիայի հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի վարիչն եք, հիմ-

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ՍՅՈՒԶԱՐՏ

Արզաս Ոսկանյան. ծնվել է 1947 թվականին Դիլիջան քաղաքում: Սովորել է տեղի երաժշտական դպրոցի թավջութակի դասարանում: Այնուհետեւ ուսումը շարունակել է Կիրովականի (Վանաձոր) երաժշտական ուսումնարանի թավջութակի եւ վոկալ դասարաններում: Ուսումնարանի երրորդ կուրսից ընդունվել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ բաժինը՝ միաժամանակ շարունակելով կրթությունն ուսումնարանում, որն ավարտելուց հետո ընդունվել է կոնսերվատորիայի կոմպոզիտորական բաժնի՝ ականավոր կոմպոզիտոր եւ համբավավոր մանկավարժ Էդվարդ Միրզոյանի դասարանը: 1976 թվականին կոնսերվատորիան ավարտելուց հետո դարձել է կոմպոզիտորների միության անդամ: 1978 թվականին Կոմիտասի անվան կոնսերվատորիայում Ա.Ոսկանյանը հիմնադրել է հայ երգեցողության դասարանը: Մանկավարժական ակտիվ եւ բեղուն գործունեության համար 1994 թվականին Արզաս Ոսկանյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում: «Պատարագ» ստեղծագործության համար 2003թ. կոմպոզիտորն արժանացել է ՀՀ պետական մրցանակի: 2008-ին նրան շնորհվել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի կոչում:

նադրել եք կոնսերվատորիայի հայոց երգեցողության դասարանը, որի քուրայով աշուղական երգի հրաշալի կատարողներ են անցել, կուզեինք ձեզանից իմանալ աշուղ Աշոտի տեղն ու դերը հայ երգարվեստում:

– Միշտ մնում եմ այն կարծիքին, որ խորհրդային շրջանում մեր երեք աշուղները, խոսքը վերաբերում է Հավասուն, Շահենին եւ Աշոտին, շատ լավ ժամանակաշրջան ապրեցին, ոչ թե սոցիալ-տնտեսական, այլ զուտ արվեստի առումով, քանզի ստեղծվեց կոմպոզիտորների միություն, նրանք դարձան այդ միության լիիրավ անդամներ, շփվեցին շատ անվանի կոմպոզիտորների հետ, հենց սյունեցի Աշոտ Սաթյանի, հետո՝ նրա եղբայր Արամ Սաթունցի, բոլոր-բոլորի հետ: Հայաստանի կոմպոզիտորների երկարամյա նախագահ Էդվարդ Միրզոյանը շատ հոգատար էր նրանց նկատմամբ, խտրություն չէր դնում, թե նրանք աշուղ են, սրանք՝ կոմպոզիտոր: Այնպես որ, կարծում եմ, շատ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին նրանց համար:

Հետո շատ կարեւոր էր հրատարակչական աշխատանքը, որ վերաբերում է այս երեք աշուղին: Նրանք իրենց ստեղծագործությունների բազմաթիվ ձեռնարկներ ունեցան՝ նոտագրված, պատշաճ մակարդակով հրատարակված: Դրանք հրաշալի գանձարաններ են, որոնցից այժմ բոլորս օգտվում ենք: Ե՛վ երեկ, ե՛ւ այսօր երգեր կան, որոնք դեռեւս չեն հնչել: Օրինակ, «Մատենադարան» երգ ունի, շատ հետաքրքիր երգ է: Աշոտի աշուղական արվեստի մի այլ տեսակն են բնութագրում՝ «Օջախում»-ը, «Պախրան», որոնք մյուս երգերից տարբերվում են իրենց թեմատիկայով, դա, իրոք, մտավոր, մտածող մարդու մասին է խոսում: Կուզեի նշել հատկապես ռադիոհեռուստատեսության Արամ Մերանգուլյանի անվան երգի վաստակավոր անսամբլի դերը, այն բազմաթիվ երգեր կամրջեց աշուղի եւ ունկնդրի միջեւ:

Աշուղ Աշոտը, ինչպես նաեւ Հավասին ու Շահենը բախտավոր էին այնքանով, որ ունեցան իրենց երգերի հրաշալի կատարողներ՝ Լուսիկ Քոշյան, Օֆելյա Համբարձումյան, Հովհաննես Բաղալյան, Ռուբեն Մաթեւոսյան, Վալյա Սամվելյան, Ռաֆֆի Հովհաննիսյան, շատ ուրիշներ: Շատ կարեւոր մի հանգամանք. Աշոտը հենց Արեւելյան Հայաստանում ծնված, մեծացած, ստեղծագործած աշուղ է, նրա երգերի ելեւէջները շատ ավելի մոտ են հայ մարդուն: Նա արեւելահայ «կաղնե» մի աշուղ է:

– Կուզեինք իմանալ Ձեր կարծիքը նաեւ գուսան եւ աշուղ տերմինների առնչությամբ: Որոշակի շփոթ կա այս տերմինների առումով:

– Գուսանն ավելի վաղ ժամանակաշրջանի երեւույթ է, աշուղն ավելի ուշ դարից է սկզբնավորվում: Այդ որոշակիացումը մտցրեց Թովմաս Պողոսյանը, ով հրաշալի երգիչ լինելուց զատ, գիտնական է, ում պատիվ եմ ունեցել դասավանդելու հայոց երգեցողություն, նրա պնդումը հաստատում են մյուս անվանի գիտնականները, ասենք, Միեր Նավոյանը, ով նույնպես կարծում է, որ ճիշտ է տեսակետը, թե գուսանները վաղ շրջանում են եղել: Այս հարցին ավելի հանգամանորեն կպատասխանի մեր օրերի լավագույն եւ գուցե եզակի աշուղագետ Թովմաս Պողոսյանը:

– Պարոն Ոսկանյան, աշուղ Աշոտի ժառանգությունը հավուր պատշաճի ներկայացվա՞ծ է հայ հանրությանը, կարծիք կա, որ նրա վերջին տարիների ստեղծագործությունները չեն կատարվում:

– Քիչ առաջ նշեցի, որ նրա ձեռնարկներում, բարեբախտաբար, այդ ստեղծագործությունների գերակշիռ մասը կա, երեւի թե ամեն արժեքավորը, ինչ նա ստեղծել է: Բնականաբար, հնարավոր է, որ որոշ երգեր դուրս մնացած լինեն, բայց եթե այդ երգերը ձայնագրված չեն, դժվար է դրանք վերականգնել: Պիտի երգի ձայնագրությունը լինի, որ որեւէ երաժիշտ նոտագրի: Եթե դուք՝ սյունեցիներդ, գիտեք մի երգ, որ հրատարակված չէ, բայց առկա է դրա ձայնագրությունը՝ գոնե աշուղի կողմից իր հնարավորության սահմաններում կատարված, ապա դա կարելի է վերականգնել:

– Չե՞ք կարծում, որ հեռուստատեսությունն ու ռադիոն երես են թեքել աշուղական արվեստից:

– Ոչ, չեմ կարծում: Նման բան 1990-ականների սկզբին եղավ, այսօր, բարեբախտաբար, արվեստի այդ տեսակը բավարար չափով հնչում է հեռուստաընկերությամբ եւ ռադիոյով: Բարեբախտաբար, նաեւ շրջանառության մեջ են դրվում հին ձայնագրությունները, վերը նշված երգիչների կատարմամբ: Այ, վատ է միջնադարյան մեր երաժշտության վիճակը, որ իսպառ չի հնչում: Ինչպես տեսնում եմ, դուք այն սերնդի ներկայացուցիչն եք, որ լսել եք Լու-

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

սինե Զաքարյանին, Խորեն Պալյանին, երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանին, ովքեր թաթախված էին միջնադարյան երաժշտությամբ, շատ կներեք, այդ թվում նաեւ ձեր խոնարհ ծառան: Այդ երաժշտությունն իսպառ չի հնչում, կարծես դա ազգի խորթ զավակը լինի, մինչդեռ մեր բարձրակետային, հրաշալի երաժշտությունն է: Բարեբախտաբար, աշուղական երաժշտությունն իր չափի մեջ բավականին հնչում է: Մտահոգող է, որ կան հաղորդումներ, օրինակ, «Հայաստանի ձայնը», որտեղ Հայաստան բառից բացի հայկական ուրիշ բան չկա: Անունը դնեն «Մոլորակի ձայնը», ավելի ճիշտ կլինի: Երգերը՝ անգլերեն, կատարումները՝ ոչ հայկական, անգլերենի առոգանությամբ: Մենք դատապարտում ենք արեւելյան, մուսուլմանական երաժշտության տարրերի ներթափանցումը հայ երաժշտության մեջ, բայց ահռելի վտանգված ենք անգլոսաքսոնական տարրերի կողմից: Այնպես որ աշուղական երաժշտությունը, բարեբախտաբար, վերականգնում է հնչողությունը, բարվոք վիճակում է՝ շնորհիվ աշուղագետ Թովմաս Պողոսյանի:

Մի առիթով ասել եմ, որ միջնադարյան երաժշտությունը Թովմասի պես մի նվիրյալի կարիք ունի, որ ոտքից գլուխ նվիրվի դրան, եւ վերստին բացահայտի մեր ժողովրդի համար մաքրամաքուր, բարձր, մեր հնօրյա ճարտարապետությանը, մանրանկարչությանը հարիր այդ երաժշտությունը:

– Մենք ձեզնից ակնկալում ենք նաեւ մի հարցի պատասխան. հեղինակի մահվանից հետո նրա երգի մշակում կարելի՞ է, թե՞ ոչ:

– Դա այնքա՜ն խճճված հարց է: Ինքս, որպես հեղինակ, խարխափում եմ քարանձավում: Աշուղների հետ կապված բանն այլ է, որովհետեւ եթե մեղեդին համարենք թելն է, եւ այդ թելից հյուսում են թեկուզ գուլպա: Աշուղների առումով գուլպան էլ պիտի ունենա ավանդույթ, ճաշակ եւ այլն: Աշոտի արդեն կայացած «Օջախում» երգը... Վերցնել, ձեւափոխել, «արդիականացնել», «արդիաշունչ» դարձնել, դրան չափազանց դեմ եմ եւ կարծում եմ՝ այն, ինչ արդեն դարձել է ազգային արժեք, դրան չի կարելի ձեռք տալ, ինչպես այլասերում են մեծն Կոմիտասի արվեստը՝ բազմաթիվ մշակումներ, ձեւափոխումներ, ո՞վ է իրավունք տվել Կոմիտասի ժանյակը քանդել, թելը հանել, ուրիշ բան գործել: Չկա այդ իրավունքը: Այս երեւույթը՝ այս «պիրատությունը» գոյություն ունի ողջ աշխարհում:

– Սրանից ածանցյալ եւս մի հարց. աշուղ Աշոտի երգարվեստով զբաղվողներից մեկը միտք հայտնեց, թե աշուղից գողանում են: Խոսքը գրագողության, եթե կարելի է այսպես ասել, երաժշտագողության մասին է: Նման բան հնարավո՞ր է:

– Բա «պիրատություն» օտարահունչ բառն ինչո՞ւ օգտագործեցի: Եթե կոնկրետ չեն գողանում, ապա գաղափարը, հնչյունային համակարգը, իր ձեռագիրը կարող են նմանակել: Դա անխուսափելի է: Եթե բարձր բուրգը կա, գագաթը կա, ստորոտում, տակից քուջուջ անողներ էլ կան: Կարծում եմ՝ դրան լուրջ չպիտի վերաբերվել:

– Այժմ երգեր են ծնվում՝ ե՛ւ տեքստի, ե՛ւ երաժշտության հեղինակը նույն անձն է: Դա որքանո՞վ է տրամաբանական:

– Բայց Աշոտն էլ էր, չէ՞, ե՛ւ տեքստի, ե՛ւ երաժշտության հեղինակը: Խոսքը որակին է վերաբերում, ճաշակին, երգի բովանդակությանը: Եթե խոտան է, ուրեմն խոտան է: Տարիներ առաջ մեծ բարերար Վահագն Հովնանյանի սրտացավ հովանավորությամբ կայացավ Սայաթ-Նովային նվիրված մրցույթ՝ մրցանակային լուրջ հիմնադրամով. մի մեծ տաղ էի գրել՝ մեր զորավարներից մեկին նվիրված՝ սիմֆոնիկ նվագախմբի համար, եւ պարզվեց, որ մրցակցում եմ յոթնամյա աղջնակի հետ, անմիջապես հետ վերցրի իմ ստեղծագործությունը, չնայած անցել էի երկրորդ փուլ: Մտածեցի, որ չարժե նման մրցույթին մասնակցելը: Հետո հրավիրեցին աշխատել ժյուրիում, եւ այնքան խոտան երաժշտություն լսեցի, որ ճարահատյալ բարձրաձայնեցի՝ մենք շատ շուտով կունենանք անգրագիտության գիտությունների թեկնածու, անգրագիտության գիտությունների դոկտոր: Անգրագիտությանն է առնչվում ձեր հարցադրումը, երբ մեր խոսքը շուլալվում է դրսից բերված երաժշտությանը:

– Աշուղ Աշոտի ծննդյան 110-ամյակն է լրանում, ձեր ամբիոնն ի՞նչ պիտի նախաձեռնի հոբելյանի առթիվ:

– Գիտե՞ք, խարխափում ենք փառատոների եւ հոբելյանների արանքում: Արամ Խաչատրյանին եւ Կոմիտասին նվիրված մի քանի միջոցառում անցկացվեցին, «Դար-21» փառատոնն է մեկնարկում, «Վերադարձի անուններ» փառատոնն է օրակարգում: Տեղ չկա շնչելու: Կասկած չունեմ, որ հոբելյանին կանդրադառնա Թովմաս Պողոսյանն իր հրաշալի անսամբլով, իր վերաբերմունքով: Բոլոր-բոլորին նա անդրադառնում է պատշաճ մակարդակով:

– Դուք կյանքում հանդիպե՞լ եք աշուղ Աշոտին:

– Ցավոք, նրա հետ անձնապես ծանոթ չեմ եղել: Բայց նրա տեսքը, առնական արտաքինը, բարի ժպիտն իմ մտապատկերում են: Իսկական հայ մարդու տեսակ էր:

– Այս հարցը նաեւ Թովմաս Պողոսյանին եմ տվել, կարծես նվազել է հետաքրքրությունը ժողովրդական, ազգային նվագարանների հանդեպ:

– Ճիշտ չէ ձեր դիտարկումը: Եթե դուք ներկա լինեիք ժողովրդական նվագարանների նվագախմբերի փառատոն-մրցույթին, նման կարծիք չէիք հայտնի: Դրան մասնակցում էր մոտ 30 նվագախումբ, դժվար էր որոշել լավագույնին: Նաեւ նշեմ, որ կառավարության որոշմամբ ազգային նվագարանների ուսուցումն իրականացվում է պետպատվերի շրջանակում, եւ դրա պտուղներն արդեն առկա են:

– Ի՞նչ կավելացնեիք ասվածին որպես լրացում:

– Կուզեի, որ աշուղական արվեստի չափ ուշադրության արժանանար միջնադարյան հոգեւոր եւ աշխարհիկ երաժշտությունը: Կոմիտասի արածը բեկանել ենք, բայց արյան հիշողությունը կա, այդ հիշողությունը մեզ թույլ չի տա անվերջ չարաշահումներ անել:

Զրույցը՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ՌՈՒԲԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ. «Գուսանի երգը թող հովանի լինի բոլորիս, եւ այդ երգով շնչի յուրաքանչյուրը»

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ, ՊՐՈՖԵՍՈՐ ՌՈՒԲԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՀԵՏ

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

– Պարո՛ն Մաթեւոսյան, ներկայացրեք Գուսան Աշոտի երգարվեստի դերը Ձեր գործունեության մեջ:

– Գուսան Աշոտն իմ ամենասիրելի գուսաններից է, իմ երգացանկում տեղ գրաված ամենացանկալի ստեղագործողներից մեկը: Դեռեւս 1962թ. «Յար առանց քեզ» երգը ռադիոյով եւ հեռուստատեսությամբ առաջին անգամ հրապարակային հնչեցնելու իրավունքը տրվեց ինձ: Բայց մինչ այդ հեռուստատեսությամբ մի հրաշալի երեկո հեռարձակվեց՝ նվիրված Գուսան Աշոտի ծննդյան 55-ամյակին, որին մասնակցում էին մեր երգարվեստի բոլոր մեծերը: Նշեմ, որ իմ երգչական գործունեությունը սկսել եմ 1961թ.:

> *Ի պատիվ Գուսան Աշոտի պետք է ասեմ, որ նրա երգերը, բացի մեզանից, կատարել են հռչակավոր օպերային երգիչներ, ովքեր մեր թատրոնի սյուներն են եղել, ինչպես օրինակ Տաթեւիկ Սազանդարյանը:*

Գուսան Աշոտի երգը սիրով է կատարել Շարա Տալյանը, միշտ բարձր մակարդակով հնչեցրել են Օֆելյա Համբարձումյանը, Հովհաննես Բաղալյանը եւ այլք: Ի դեպ, Հովհաննես Բաղալյանի հոգածությամբ նոտագրվել են Գուսանի բազում երգեր: Այդ տարիներին նրա երգերը ժողովրդին հասցնելու, սիրելի դարձնելու գործում անգնահատելի են Թաթուլ Ալթունյանի անվան Հայաստանի երգի-պարի պետական վաստակավոր անսամբլի եւ անձամբ Թաթուլ Ալթունյանի դերակատարությունը, նրա բարձր ճաշակը, որի շնորհիվ հնչում էին հրաշալի երգեր, ինչպես օրինակ՝ Լուսիկ Քոշյանի կատարմամբ «Սարի սիրուն յար», «Քո սերը երգեմ», Վաղարշակ Մամիկոնյանի կատարմամբ՝ «Սյունյաց սարեր», Վարդուհի Խաչատրյանի կատարմամբ՝ «Արի բաղերով» երգերը եւ այլն:

Ինչ վերաբերում է հանրային ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր կոլեկտիվին, ապա Գուսան Աշոտի երգերի առաջին պրոպագանդողը, ժողովրդին հասցնողը, նրա կենցաղ մտցնողն ու երգը սիրելի դարձնողը մեր անսամբլն էր, որ բարձր մակարդակով հնչեցնում էր նրա երգերը: Այստեղ նույնպես պետք է կարեւորեմ անձամբ Արամ Մերանգուլյանի գործունեությունը, ով ոչ միայն նոտագրեց նրա շատ երգեր, այլեւ նախանվագներ ստեղծեց դրանց համար (նրա հետ միասին նաեւ Ալեքսանդր Ալեքսանդրյանը), առանց որոնց կատարողներս չէինք պատկերացնում այդ ստեղծագործությունները:

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ները: Հետագայում, երբ մեր մեծերը չկային, Գուսան Աշոտն ինքն էր նախանվագներ հորինում, որոնք ոչ թե լրացնում, այլ ամբողջացնում էին այդ ստեղծագործությունները:

– Որքանով տեղյակ ենք, Գուսանը բարձր է գնահատել Ձեր արվեստը եւ նրա հետ մտերմիկ հարաբերություններ եք ունեցել:

– Յուրաքանչյուր անգամ բեմ բարձրանալիս գերագույն հաճույք եմ զգացել: Գուսան Աշոտն ինձ առանձնակի համակրանքով ու հարգանքով էր վերաբերվում՝ չնայած տակավին երիտասարդ էի: Հիշում եմ 1962թ. հոբելյանական երեկոն. Հովհաննես Բադալյանի՝ արտասահմանում գտնվելու պատճառով ինձ հանձնարարել էին կատարել «Ով դու գուսան» երգը, որը սիրելի էր դարձել հենց նրա կատարմամբ: Բնականաբար, ինքնուրույն մոտեցում ցուցաբերեցի երգը կատարելիս, այնպես, ինչպես իմ զգացողությունն էր եւ իհարկե Մերանգուլյանի «պարտադրանքը», թե ինչպես պետք է ընկալել ու մատուցել այդ երգը: Ավարտին Գուսան Աշոտը ճակատս համբուրեց. ասեմ, որ բավականին մտերիմ եւ ջերմ հարաբերություններ ունեինք: Երբ երգեցի «Հով գիշեր, զով գիշեր» երգը, որ հիմա խնամքով պահվում է ռադիոյի ոսկե ֆոնդում, Գուսանն այդ կատարումը լսելուց հետո ինձ ասաց. «Սիրելի՛ Ռուբեն, «Չեմ մոռանա, Գուսա՛ն Աշոտ, անունդ, ձմեռ չունի, միշտ դալար է գարունդ» երգի տողը միայն դու իրավունք ունես այսպես երգել՝ «Չես մոռանա, Գուսա՛ն Աշոտ, անունս, ձմեռ չունի, միշտ դալար է գարունս»»: Ի դեպ, նա մի դավթար ուներ, որտեղ գրի էր առնում իր խոսքերը, ասույթները եւ ստորագրում: Դրանից հետո ես փոփոխված տարբերակով հնչեցրի այդ երգը, եւ հիմա ձայնադարանում այդ տարբերակն է պահպանվում:

Տարբեր առիթներով, երբ նվիրում էր գիրքը, բանաստեղծական տողերով էր մակագրում այն: Դրանցից երկուսը ներկայացնեմ ձեր ուշադրությանը.

Հազար ու մի դուն ես մտել
արքայական քո ձայնով,
Հազար սրտում հուր ես վառել
անապական քո ձայնով,
Հավք ու հովեր, ծիլ ու ծաղիկ քո
ձայնի դակ կարթնանան,
Գուսանիս սեր-դաղն է հնչում
հայկական նուրբ քո ձայնով:

(Իմ սիրելի Ռուբիկին՝ Գուսան Աշոտից)

Ինչքան բարիք կմաղթեն,
Ինչքան օրհնանք քեզ կտան,
Միրտ հմայող քո ձայնին աղբյուր
կասեն գլգլան,
Էն դարագիր հավքերն էլ երգիդ
շնչով դուն կգան:

(Գուսան Աշոտ)

Այս տարիների ընթացքում շատ գնահատականներ եմ ստացել, բայց այնպիսին, ինչպիսին Վարպետի խոսքն է, ինձ համար օրհնանք է եւ ոչ միայն գրքին թողած մակագրություն: Հպարտ եմ, որ կատարել եմ նրա երգերը, որոնց հայտնվելն իմ երգացանկում պատահականություն չի եղել. պետք է ընկալեի տվյալ ստեղծագործությունը:

> *Առհասարակ չկա վատ երգ, կա վատ կատարող, այդ առումով չեմ կարող մատնանշել Գուսան Աշոտի որեւէ երգ, որն իր երգչին գտած չլինի: Մեր երգիչներն այդ երգերը մի քիչ ավել, մի քիչ պակաս մատուցել են, բայց երբեք չեն վնասել: Այլ խնդիր է, թե այսօր ինչպես են կատարում նրա երգերը:*

Կարելի է շատ ուշադիր լինել, որովհետեւ այն մեղեդին, որ հյուսվել է, նոտաներով արձանագրված է, եւ բավական են երգչական հնարների ճիշտ օգտագործումը, վարվելակերպը, ընկալումը եւ մեկնաբանումը, որ երգը ճիշտ վերարտադրվի: Ինչ վերաբերում է մեղեդու զարգացմանը, ապա հիմքը կա, մնում է գրագետ վերաբերվել դրան, որովհետեւ չէի ցանկանա, որ Գուսանի երգն իջներ այն մակարդակին, որ ժողովուրդը երգի, ինձ ճիշտ հասկացեք՝ ի նկատի ունեմ, որ, այո՛, ժողովուրդը պետք է կատարի, բայց նա իր ձայնը պետք է ունենա, մեկը, ով ժողովրդի անունից կներկայացնի այդ երգը: Նրա երգերը մեր նվիրյալների շուրթերից են հնչել՝ համեմված անձնական վերաբերմունքով, մտածելակերպով. ո՛չ Տաթեւիկ Սազանդարյանը, ո՛չ Շարա Տալյանը, ո՛չ Հովհաննես Բադալյանը, ո՛չ Օֆելյա Համբարձումյանը, ո՛չ Ռուբեն Մաթեւոսյանը, Վաղարշակ Մամիկոնյանն ու Վարդուհի Խաչատրյանը պատահականություն չեն եղել մեր երգարվեստում: Ներկայիս կատարողները պետք է ականջալուր լինեն նրանց, ոչ թե թութակի նման կրկնեն, այլ հասկանան, թե Գուսանն ինչ է ուզել ասել այդ ստեղծագործության միջոցով: Նշեմ, որ Գուսանի երգերի 90 տոկոսը երգ դարձել, հնչել է հատկապես Մերանգուլյանի փորձասենյակում ու ռադիոյում, որտեղից պրոպագանդվել ամբողջ աշխարհում: Այդ հարցում կարեւոր առաքելություն ուներ նաեւ երգի-պարի պետական անսամբլը: Գուսանական անսամբլը եւս կատարում էր Աշոտի երգերից, բայց ավելի քիչ, որովհետեւ Գուսան Աշոտը միշտ ուզում էր ռադիո բերել երգերը, որովհետեւ դեպի ժողովուրդ գնացող ճիշտ ճանապարհը ռադիոն էր: Չմոռանանք, որ ռադիոյի ժողգործիքների անսամբլում, որ հետագայում կոչվեց Արամ Մերանգուլյանի անունով, լավագույն կատարողներն էին, եւ Գուսանի ընտրությունը պատահական չէր:

– Ինչպիսի՞ն է այսօր հանրային ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլի գործունեությունը:

– Հանրային ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլը շարունակում է նույն տեմպով եւ առաքելությամբ աշխատել, որի գեղարվեստական ղեկավարը ես եմ:

– Ձեր գործը շարունակող ունե՞ք:

– Կարծում եմ՝ կլինեն, չի կարող պատահի, որ չլինեն: Անսամբլի գործը ոչ թե լավն է, այլ պատասխանատու, որ պարտադրում է հայ երգը մշտապես արթուն պահել, բարձր պահել այդ երգարվեստի պատիվը, զգալ նրա կարեւորությունն ու անհրաժեշտությունը մեր կյանքում, հայի կյանքում: Գուսան Աշոտը մեկն է, ով մեզ հարյուրավոր երգեր է նվիրել, որոնց պահպանումը բոլորիս պարտքն է:

– Ո՞ւմ կարող ենք գուսան կամ, ինչպես այսօր ընդունված է ասել, աշուղ անվանել:

– Գուսան Աշոտը հետաքրքիր

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

երեւույթ է, ինչ-որ առումով նա կոմպոզիտորական մտածելակերպ ուներ: Պետք է գիտակցել, որ գուսանական արվեստը, որ այսօր աշուղական են ներկայացնում (չեմ ուզում խորանալ դրանց առանձնահատկությունների մեջ), մեր ժողովրդական երգի դասական շերտն է:

> *Հիմա ում ասես գուսան են ասում, բայց կարգն այդպես չէ: Այսօրվա մեր հասկացողությամբ գուսան նշանակում է կոմպոզիտոր, այսինքն՝ լուրջ մասնագետ, ով գիտե, թե ինչպես պետք է գրի առնել ստեղծագործությունը:*

Երկրորդ առանձնահատկությունը. նա բանաստեղծ է բառիս բուն նշանակությամբ, երրորդ՝ երաժիշտ-կատարող է, այսինքն՝ տիրապետում է որեւէ երաժշտական գործիքի եւ ոչ թե ծնգծնգացնում, եւ չորրորդ՝ երգիչ-կատարող է: Եթե այս չորս հատկանիշին կատարելապես տիրապետում ես, ուրեմն գուսան ես: Դժբախտաբար, Գուսան Աշոտը, Հավասին, Աշուղ Շահենն այդ դարավոր կուլտուրայի վերջին մոհիկաններն էին: Հիմա էլ կան գուսաններ, բայց չեմ ուզում նրանց արվեստին որեւէ գնահատական տալ, միայն կարող եմ ասել, որ իմ կարծիքով այսօրվա գուսաններն այն ժամանակվա ինքնուս ստեղծագործողներն են, որոնցից նշանավորների երգերը սիրով կատարել են մեր լավագույն երգիչները: Ներկայումս ստեղծագործողներ կան, որոնց չեմ ուզում չակերտների մեջ կամ չակերտներից դուրս դնել, միայն պետք է ասեմ, որ մեղեդիներ են հյուսում, որոնք ժամանակին Գուսան Աշոտն է հորինել. բնավ կարիք չկա այդ մեղեդիները հակառակ կամ մեկումեջ կարդալ: Գուսան Աշոտին, Հավասուն, Ջիվանուն լսելիս երբեք չեմ շփոթի նրանց, կամ թե չէ Գուսան Շահենին չեմ համեմատի, օրինակ, Սայաթ-Նովայի կամ Շերամի հետ: Նրանցից յուրաքանչյուրն իր ձեւը, մտածելակերպը, երաժշտական ունակություններն ունի. նրանք անկրկնելի են ու անմրցակից, կայացած անուններ, որոնց բոլորն են ճանաչում: Ներկայումս կան ընկերություններ, որոնք, ասենք, գուսան են ձեռնադրում, սա գոնե ինձ համար տարօրինակ ու անհասկանալի երեւույթ է:

Պատահական չէ նաեւ այն փաստը, որ եւ՛ Գուսան Աշոտը, եւ՛ Հավասին, եւ՛ Աշուղ Շահենը եղել են թե՛ կոմպոզիտորների, թե՛ գրողների միության անդամներ:

– Ձեր հարցազրույցներից մեկում նշել եք, որ երգի երկարակեցությունը կախված է նաեւ կատարողից:

– Դա իսկապես այդպես է, քանի որ երգը դեպի ժողովուրդ տանողը կատարողն է: Եթե նա չի հասկացել այդ երգը, ուրեմն կվնասի այն: Գուսան Աշոտը գիտեր, որ երբ երգ է ծնվում, այն երկու հասցե ուներ՝ կա՛մ Արամ Մերանգուլյանի, կա՛մ Թաթուլ Ալթունյանի փորձասենյակ: Խոստովանեմ, որ նրա երգերի 80 տոկոսը ռադիո էր գալիս, քանի որ այնտեղ երգի ու պարի միջոցով պետք է ներկայացվեր:

– Գուսան Աշոտը հատուկ Ձեզ համար հորինե՞լ է որեւէ երգ:

– Այո՛, «Հայրիկ» երգն է, որ սիրով եմ կատարել, բոլորովին այլ կերպ ընկալել: Թեպետ այդ երգը Գուսանն է գրել, բայց այն իմ զեկույցն է հայրիկիս: Եվ առհասարակ յուրաքանչյուր կատարող պետք է հասկանա, թե ինչ է երգում, դրանով ունի՞ ասելիք, թե՞ ոչ, միայն մեղեդին կրկնելով չէ:

– Եթե չենք սխալվում, Դուք նաեւ նոտագրել եք նրա երգերը:

– Հիմա կոնկրետ չեմ հիշում, թե քանի երգ եմ նոտագրել, բայց այդ նոտագրությունները տվել եմ Գուսանին, թե հետագայում ով է խմբագրել, ինչպես են արել կամ տպագրել, դա ինձ չի հետաքրքրում: Ինձ հետաքրքրել է միայն դրանք ժողովրդին հասցնելը, այսինքն՝ այն, որ այդ երգերն այսօր ժողովուրդը երգի:

– Ինչպե՞ս եք գնահատում երիտասարդ երգիչների՝ գուսանական, ժողովրդական երգերի հանրությանը մատուցումը:

– Մեր խոսակցությունն ի վերջո հանգում է նրան, որ լավ կլիներ, եթե նրանք հետեւեին իմ խոսքին, որ նաեւ այս հարցազրույցի շրջանակներում հնչեցրի:

– Ունկնդիրներիս շրջանում երբեմն այն տպավորությունն է ստեղծվում, որ ճանաչում ձեռք բերելու եւ ժողովրդի սերը վայելելու համար հաճախ նորելուկ երգիչ-երգչուհիները կատարում են գուսանական, ժողովրդական երգեր, բայց հետագայում փոխում են իրենց ոճը՝ տանելով այն բոլորովին այլ ուղղությամբ:

– Նրանք պարզապես ուզում են երեւալ, բայց այդպես էլ չեն վայելում ժողովրդի սերը: Նրանց կատարումից անմիջապես կարելի է զգալ, որ այդ երգարվեստն իրենցը չէ: Դա նույնն է, որ մարդուն հագցնես ոչ իր չափսերին համապատասխան հագուստ:

> *Իհարկե, հնչեղ ձայներ կան, տաղանդավոր, շնորհալի երիտասարդներ, պարզապես նրանց ուղղորդող է հարկավոր: Նրանք էլ պետք է լինեն ուշիմ, ուշադիր եւ ականջալուր նրանց ցանկություններին, ովքեր մի ամբողջ կյանք ու դարաշրջան են ապրել՝ այդ երգերի կատարման վարպետը դառնալու համար:*

– Եվ ի վերջո ո՞վ պետք է լինի ուղղորդողի դերում:

– Իհարկե, նախեւառաջ ուղղորդող մասնագետից պետք է սկսենք, նրանից, ով իսկապես տիրապետում է երգարվեստին: Իսկ նրանք, ովքեր դաշտ են ստեղծում, որ սրա-նրա միջոցով դրամ աշխատեն, բոլորովին արվեստի հետ առնչություն չունեն, այդ երեւույթն ավելի շատ բիզնեսային իմաստ ունի: Հասկանալի է, որ բոլորն են ձգտում բարեկեցիկ կյանքով ապրել, բայց դա չի նշանակում, որ պետք է ծավալեն մի գործունեություն, որ բնավ կապ չունի նրանց էության ու գիտակցության հետ, եւ ծնված չեն այդ մասնագիտության համար: Ինչպես կարող է պատահել, որ մեկն առանց տառերն իմանալու սկսի գիրք կարդալ, կամ ընկալի կարդացածը. կարող է կրկնել, բայց բազում սխալներով:

– Կարո՞ղ ենք մտավախություն ունենալ, որ մի օր գուսանական երգարվեստը կմոռացվի:

– Ոչինչ հավերժություն չէ կյանքում, բայց կյանքը երկրագնդի վրա

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

հավերժ հարատեւող երեւույթ է: Մարդու ապրած կյանքը պահ է, բայց այդ պահը կարող է նշանավոր դառնալ եւ ուղենիշ լինել շատերի համար, եթե այն անցել է ճիշտ ճանապարհ, ունեցել սխալներ, հասկացել դրանց կործանարար ազդեցությունը: Եկողը չպետք է կրկնի այդ սխալները, այլ լավից պետք է շարունակի, որ երեւույթն էվոլյուցիա ապրի: Ինչ վերաբերում է գուսանական երգարվեստի մոռացվելուն, ապա ամեն ինչ էլ կարող է լինել, երբեք չպետք է ոչինչ բացառել, բայց բացառությունն էլ կարող է օրինաչափություն դառնալ: Հնագույն ժամանակներում փանդիռ նվագող երաժիշտներն էին՝ երաժիշտ-բանաստեղծները, գուցե նրանց փոխակերպումից առաջացավ միջնադարյան այն արվեստը, որի շառավիղն է Գուսան Աշոտը: Չգիտեմ՝ հետո ինչ կկոչվի, բայց երեւույթը շարունակելի կլինի, գուցե այլ կերպ, բայց իմաստը՝ նույնը: Ես միայն գիտեմ, որ Հայաստանը միշտ կմնա, կբարգավաճի, եւ վերջապես կհասկանանք, որ ունենք հրաշք երկիր, եւ բոլորիս ուժերը ոչ թե կփորձենք, այլ կկենտրոնացնենք մեր երկրում:

– Որպես ամփոփում ի՞նչ կուզենայիք ավելացնել մեր զրույցին:

– Շատ եմ եղել Սյունյաց աշխարհում, բայց հատկապես մի երեւույթ շատ մեծ ազդեցություն ունեցավ ինձ վրա՝ Գուսանի գերեզմանատեղին: Նրա շիրիմն ամենաբարձր վայրում է գտնվում, ինչը վկայում է, որ նա միշտ հովանի կլինի Սյունյաց աշխարհի հրաշքին՝ Գորիս քաղաքին, որի ծնունդն էր Գուսան Աշոտը: Ինչպես ինքն է այդ բարձունքում, այնպես էլ իր երգը թող հովանի լինի բոլորիս, այդ երգով շնչի յուրաքանչյուրը եւ երբեք չմոռանա այն հրաշք մեղեդիները, որ կերտել է իր հայրենակիցը: Ինչու չէ, Գուսանը նաեւ Գորիսի այցեքարտն է, գորիսեցին իրավունք ունի հպարտանալ, որովհետեւ այդտեղ են ծնվել Գուսան Աշոտը, ինչպես նաեւ Ակսել Բակունցը, Սերո Խանզադյանը, այդ հողից է ձայն առել Տաթեւիկ Սազանդարյանը... Երաժշտության աշխարհում մեզ մեղեդի պարգեւողներից մեկն էլ Գուսան Աշոտն է, ով այսօր հանգչում է վերեւներում...

ԱՐԿԱԴԻ ՇԵԿՈՒՆՑ. «Ավելի շատ դասական երաժշտությունն է գուսանական երաժշտությունից որոշ փարրեր վերցրել»

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՀ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐԿԱԴԻ ՇԵԿՈՒՆՑԻ ՀԵՏ

– Պարո՛ն Շեկունց, համառոտ ներկայացրեք Ձեր առնչությունը Գուսան Աշոտի եւ նրա արվեստի հետ:

– Դպրոցական հասակից լսել եմ Գուսան Աշոտի երգերը, երբ դեռ սովորում էի Գորիսի Ակ.Բակունցի անվան դպրոցում: Ասեմ, որ ծնողներս Լաչինում էին ապրում, քրոջս հետ տեղափոխվել էի Գորիս՝ հայկական ուսումը շարունակելու:

> *Տիկին Արշալույսը՝ տանտիրուհին, ում տանը վարձով էինք բնակվում, շատ կիրթ, զարգացած անձնավորություն էր եւ գիշեր-ցերեկ կարդում էր, երգում Սայաթ-Նովա, Շերամ եւ ամենից շատ՝ Գուսան Աշոտ:*

Նստում էի եւ ժամերով զարմացած լսում նրան, ով Գուսանի համարյա բոլոր երգերը գիտեր, հրաշալի արտասանում էր մեր մեծերի ստեղծագործությունները, մի խոսքով՝ շատ բան եմ նրանից սովորել եւ շնորհակալ եմ իմ ճակատագրին, որ երիտասարդ տարիներին հանդիպել եմ այդ կնոջը, ով մեծ ազդեցություն է թողել իմ հետագա կյանքի ու գործունեության վրա: Հետո մեկնեցի խորհրդային բանակ, այնուհետեւ սովորեցի Կիեւում՝ երաժշտական ուսումնարանում, Երեւանի պետական կոնսերվատորիայում եւ այդ ողջ ժամանակահատվածում գրեթե ժողովրդական երգերին ուշադրություն չէի դարձնում: Դե բնական է, քանի որ այնտեղ, որտեղ ուսում էի ստացել, մթնոլորտը բոլորովին այլ էր: Բայց իմ հիշողության մեջ միշտ հնչում էին Սայաթ-Նովայի, Շերամի եւ հատկապես Գուսան Աշոտի երգերը, ով ավելի սրտամոտ էր, քանի որ իմ հայրենակիցն էր:

Կոնսերվատորիան ավարտելուց հետո համատեղությամբ երկար տարիներ աշխատել եմ Հայաստանի ռադիոյի եւ հեռուստատեսության պետական կոմիտեում՝ երաժշտական հաղորդումների խմբագիր, ավագ խմբագիր, այնուհետեւ՝ գլխավոր խմբագիր: Եվ աշխատանքի բերումով սկսեցի առնչություն ունենալ ոչ միայն դասական, այլեւ որակյալ ժողովրդական, գուսանական երաժշտության հետ: Հետագայում, երբ երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագիրն էի, ունեինք ժողովրդական

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

երաժշտության առանձին խմբագրություն, որտեղ, բնականաբար, ներառվում էր նաեւ գուսանական երգարվեստը: Եվ մեր բոլոր ծրագրերում, հատկապես տոնական հաղորդաշարերում, մշտապես ընդգրկում էի Գուսանի երգերից:

Բացի աշխատանքի բերումով նրա արվեստին առնչվելուց՝ նրա հետ նաեւ մտերմիկ հարաբերություններ ունենալու պատիվ եմ ունեցել:

> *Երբ ծանոթացանք, շատ ուրախացավ, որ Զանգեզուրից եմ՝ իր հարազատ երկրից: Եթե համերգ էր լինում, Մերանգուլյանի անվան ժողգործիքների անսամբլի ծրագիրը նայում էի, եթե հանկարծ Գուսանի երգերից ընդգրկված չէր լինում, խմբագրին հուշում էի անպայման ներառել, քանի որ նա այնպիսի փառահեղ երաժշտություն է գրել, այնպիսի հարստություն թողել հայ ժողովրդի համար, որ հպարտ էի ոչ միայն նրա համար, որ այդպիսի հայրենակից ունեմ, այլեւ նրա համար, որ ընդհանրապես հայ ժողովուրդը ծնել է այդպիսի տաղանդավոր զավակ:*

Հետագայում շատ հաճախակի էին լինում մեր հանդիպումները, այնուհետեւ սկսեցինք նաեւ համերգային համարներ, այսօրվա տերմինաբանությամբ՝ տեսահոլովակներ, նկարահանել, որոնց տարեկան պլանում անպայման ներառում էինք Գուսան Աշոտի երգերից: Նրա երգերը կատարում էին Արաքսյա Գյուլզադյանը, Օֆելյա Համբարձումյանը, Հովհաննես Բաղալյանը, Ռուբեն Մաթեւոսյանը, Վալյա Սամվելյանը, Նորայր Մնացականյանը եւ այլք: Տարիներ անց նրա երգերը սկսեցին էստրադային մշակմամբ ներկայացնել, որոնք հաճախ էին հնչում հեռուստատեսությամբ: Բելա Դարբինյանը եւ շատ ուրիշ էստրադային երգիչներ սիրով էին կատարում նրա երգերը: Այս ամենից բացի՝ ուզում եմ ասել, որ նոր սերունդը նույնպես շարունակում է տարիներով ձեւավորված ավանդույթները՝ համերգային ծրագրերում անպայման ներառելով Գուսան Աշոտի երգերը:

– Ըստ Ձեզ ինչո՞վ է առանձնանում Գուսան Աշոտի երգարվեստը:

– Նախեւառաջ պետք է նշեմ, որ առհասարակ աշուղական արվեստի առավելություններից մեկն այն է, որ թե՛ բանաստեղծական տեքստը, թե՛ երաժշտությունը մեկ հոգի է հորինում, այսինքն՝ նրա հոգու եւ սրտի միջից են դուրս գալիս ե՛ւ խոսքը, ե՛ւ երաժշտությունը՝ ի տարբերություն դասական կոմպոզիտորների, ովքեր վերցնում են մեր դասական գրողների բանաստեղծությունները եւ դրանց հիման վրա գրում երաժշտություն:

Նրա գրեթե բոլոր երգերում ամբողջական եւ ներդաշնակ են խոսքն ու երաժշտությունը, եւ որպես արվեստագետ, երաժշտագետ՝ հավատացնում եմ, որ նա վատ երգեր չունի: Եթե նույնիսկ ինչ-որ երգում կուզենայի, որ երաժշտական մասը մի քիչ այլ կերպ լիներ, բանաստեղծական մասն այնքան համոզիչ է, որ կարծես երաժշտական մասը երկրորդական պլան է մղվում եւ հակառակը: Սա է նրա մեծությունը, որ արտահայտվում է գրեթե բոլոր երգերում՝ «Սերս վանքում Տաթեւի», «Օջախում», «Յար առանց քեզ», «Մոր սերը», «Հայրիկ», «Խռով գնաց», «Ծառերը ծաղկում են», «Գուսանն էն է», «Գարուն է», «Զանգեզուրի բարի ծնունդ», «Սյունյաց սարեր», եւ այս շարքը կարելի է շարունակել:

Ի դեպ, «Սյունյաց սարեր» երգի հետ կապված փոքրիկ հուշ պատմեմ: Աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի հետ մտերմիկ հարաբերություններ ունեինք եւ Մոսկվայում մեր հերթական հանդիպման ժամանակ աշուղական արվեստի մասին զրուցեցինք: Ես ապշեցի, որ նա երգում էր ժողովրդական երգեր, մեկ էլ հանկարծ երգեց «Սյունյաց սարեր» երգը եւ ասաց՝ սա զանգեզուրյան է: Ի դեպ, գիտեր, որ Զանգեզուրից եմ եւ մեծ հետաքրքրությամբ էր խոսում նրա մասին, ժամանակին գրել էր «Զանգեզուր» ֆիլմի երաժշտությունը: Գիտեք, որ Արամ Խաչատրյանը շատ լավ էր ընդունվում թե՛ Եվրոպայում, թե՛ Ամերիկայում եւ թե՛ ողջ աշխարհում, եւ նա դա բացատրում էր հետեւյալ կերպ, որ իր երաժշտությունը ժողովրդական ակունք ունի եւ հենված է նաեւ հայկական ժողովրդական, աշուղական երգարվեստի վրա:

> *Ինձ շատ զարմացրեց Արամ Խաչատրյանի այդ կատարումը, եւ երեւի թե դա Գուսան Աշոտի համար ամենաբարձր գնահատականն էր: Երգն ավարտելուց հետո ասաց, որ միայն սրանով չի սահմանափակվել եւ ուսումնասիրում է գուսանական արվեստը, այդ թվում՝ Գուսան Աշոտի ստեղծագործությունները, որոնց բարձր գնահատական տվեց:*

Առհասարակ երբ կոմպոզիտորները ստեղծագործում են, նրանց, ասենք, 20 գործից 3-4-ը կարող է մնայուն լինել: Երբեմն նույնիսկ կոմպոզիտորը կարող է մեկ ստեղծագործություն ունենալ եւ դրանով նշանավոր դառնալ: Հազվադեպ է լինում, որ կոմպոզիտորի ստեղծածն այդքան շատ ընդունվի ժողովրդի կողմից, իսկ Գուսան Աշոտի երգերն ընդունեցին ժողովրդի լայն շրջանակները եւ մինչեւ օրս էլ հնչեցնում են, ինչի վկայությունն է նաեւ մեր ներկա սերնդի հետաքրքրությունը նրա երգերի նկատմամբ: Հիրավի Գուսան Աշոտը հարուստ ժառանգություն է թողել, որ հավերժ կմնա մեր ժողովրդի երգարվեստի պատմության մեջ:

– Դուք նշեցիք, որ Արամ Խաչատրյանի երաժշտությունը ժողովրդական ակունք ունի: Որքանո՞վ է դասական երաժշտությունն առնչվում գուսանական երգարվեստին կամ հակառակը:

– Պետք է ասեմ, որ ավելի շատ դասական երաժշտությունն է գուսանականից ինչ-ինչ տարրեր վերցնում, քան հակառակը: Իմիջիայլոց, Գուսան Աշոտը թեպետ առանձնակի մասնագիտական կրթություն չուներ, բայց սիրում էր լսել դասական երաժշտություն: Ճիշտ է, իր երգերի նոտագրությունն ինքը չէր անում, բայց ծանոթ էր դասական երաժշտությանը: Իսկ դասական երաժիշտները գուսաններից շատ են

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

օգտվել. չէ՞ որ գուսանական երգերում մելիզմներն են, հայկական ոգին է, իսկ դասական երաժիշտներն ավելի շատ արեւմտաեվրոպական երաժշտության շարունակողներն էին: Հայ դասական կոմպոզիտորները հայկական տարրեր վերցնում էին աշուղական եւ ժողովրդական երգարվեստից: Աշուղական արվեստը կարծես պարարտանյութ լինի դասականի համար, որ օգնում է լավ սնունդ ստանալ եւ լավ մատուցել: Ուշադրություն եմ դարձրել. այն դասական ստեղծագործությունը, որում գուսանականից կամ ժողովրդականից որոշակի տարրեր կան, ավելի մնայուն է եւ առավել հաճելի լսելը:

> *Ոչ միայն Արամ Խաչատրյանը, այլեւ մեր շատ կոմպոզիտորներ, ինչպես Էդգար Հովհաննիսյանը, Աշոտ Սաթյանը, Գրիգոր Հախինյանը, Վարդան Աճեմյանը, իսկ ավելի վաղ նաեւ Մակար Եկմալյանը, Գրիգոր Սյունին, Միքայել Միրզոյանը, Ազատ Մանուկյանը, գուսանական երաժշտության որոշակի տարրեր օգտագործել են իրենց երգարվեստը ստեղծելիս:*

– Ձեր կարծիքով, եթե Գուսան Աշոտը մասնագիտական կրթություն ունենար, նրա արվեստը դրանից ավելի՞ կշահեր:

– Ո՛չ, նրա ստեղծագործելուն բնավ չի խանգարել կրթություն չունենալը, ընդհակառակը, եթե երաժշտական կրթություն ունենար, միգուցեեւ շեղվեր իր երաժշտությունից: Պատկերավոր ասած, մի դեպքում մտնում ես անտառ, որտեղ մարդը ոտք չի դրել, եւ ամեն ինչ բնական վիճակում է, եւ մի այլ դեպքում մտնում ես անտառ, որտեղ ծառերը կտրել են, մշակել...

Այստեղ կուզենամ եւս մեկ նկատառում անել: Երբ տարիներ առաջ «Սայաթ-Նովա» ֆիլմը (ի դեպ, ռեժիսոր Կիմ Արզումանյանը նույնպես մեր հայրենակիցն է) նկարահանում էինք, ես հանձնաժողովի անդամ էի՝ երաժշտության գծով, այդ ժամանակ ավելի շատ զգացի դասական եւ գուսանական երաժշտության թեմաներով ֆիլմեր նկարահանելու տարբերությունը: Ինչքա՜ն հարուստ է այստեղ դաշտը, ինչքա՜ն մեծ է ժողովրդի սրտից, հոգուց բխող արվեստը, հոգեհարազատ ժողովրդին, եւ վերջիվերջո ինչքա՜ն հաճելի՝ հարազատ երկրում նկարահանված տեսարանները... Իսկ դասական ֆիլմեր նկարահանելիս օգտագործում էինք եվրոպական կամ ռուսական կադրեր... Սա էլ է աշուղական արվեստի առանձնահատկություններից մեկը:

– Այսօր դժվար չէ նկատել, որ հատկապես երիտասարդությունն ավելի շատ նախընտրում է արտասահմանյան երաժշտություն լսել, ինչը պայմանավորված է նախեւառաջ ներկայումս հայ երգարվեստում տիրող ոչ հաճելի վիճակով: Երիտասարդության մի փոքր հատվածն է միայն հետաքրքրվում ժողովրդական, գուսանական երգարվեստով՝ հաճախ ժամանակակից երանգներ հաղորդելով կատարումներին: Ի՞նչ կարծիք ունեք սրա վերաբերյալ:

– Պետք է ասեմ, որ գործիքավորմամբ նոր երանգներ են հաղորդում նաեւ դասական կոմպոզիտորների գործերին, ինչը բնական է:

> *Աշուղական երգերը նույնպես ժամանակի ընթացքում փոփոխության են ենթարկվում զանազան կատարումների շնորհիվ, բայց այսօրվա երիտասարդն այնքան տաղանդ պետք է ունենա, որ նույնությամբ, իր զգայարաններով կարողանա վերարտադրել դրանք:*

Չէ՞ որ դասական երաժշտություն նվագելը նոտաներով սովորեցնում ես, բայց աշուղական երգեր կատարելը սովորեցնելն այնքան էլ հեշտ գործ չէ: Կատարողն առանձնահատուկ տաղանդ պետք է ունենա, նախեւառաջ գեներով եկող, որ կարողանա ճշգրիտ կատարել այդ երգերը: Ժամանակին մեր երիտասարդները նախապատվությունը տալիս էին Սայաթ-Նովային, բայց այսօր նկատում եմ, որ այլ գուսանները նույնպես հավասար հետաքրքրություն են առաջացնում, ինչը ոգեւորիչ է: Այդ առումով կարող եմ ասել, որ ինչքան էլ այսօր ամերիկյան, եվրոպական երաժշտությունը նախընտրեն, միեւնույն է, ժամանակ կանցնի, եւ կվերադառնանք մեր ակունքներին:

– Ամբողջացրեք Ձեր խոսքը նրա արվեստի վերաբերյալ:

– Նա հայ ժողովրդի հպարտությունն է, ամենատաղանդավոր գուսաններից մեկը, որ Սայաթ-Նովայի, Ջիվանու արվեստի շարունակողներից է, ով մերվել է նրանց հետ, ներդաշնակ դարձել նրանց արվեստին, ինչն ամեն մեկին չի հաջողվում: Այսօր էլ նոր աշուղներ, նոր երգիչներ են ծնվում, բայց դեռ ոչ ոք չի էլ փորձում մոտենալ նրա արվեստին եւ կամ թեկուզ մրցակցել նրա հետ: Նա իսկապես երեւույթ է մեր հայ իրականության մեջ՝ օժտված բնածին, բնատուր տաղանդով: Բնական է, որ այնպես, ինչպես հայ մարդն է զգում նրա արվեստը, չի կարող ուրիշ ոչ ոք զգալ...

– Ըստ Ձեզ՝ ի՞նչն էր կարեւորում Գուսանը մարդկային հարաբերություններում:

– Ազնվությունը, անմիջականությունը, համեստությունը, եթե նա այդպիսին չլիներ, նրա արվեստն էլ այդպես պարզ, մաքուր ու հասանելի չէր լինի: Շատ բարի, կիրթ, զուսպ, ոչ կոնֆլիկտային անձնավորություն էր եւ երբեք չէր ասում՝ ինձ ներկայացրեք, պրոպագանդեք իմ երգարվեստը, չնայած դրա կարիքը բնավ չուներ:

– Եվ վերջում՝ Գուսան Աշոտի երգերից ո՞րն է Ձեր ամենասիրելին:

– «Սերս վանքում Տաթեւի» երգը, որ լսելիս հիշում եմ Տաթեւի վանքը, մեր բնաշխարհը, ինչպես նաեւ «Օջախում»-ը եւ Ռուբեն Մաթեւոսյանի կատարմամբ «Հայրիկ» երգը: Հավատացնում եմ, որ թե՛ նրա եւ թե՛ մեր մյուս գուսանների երգերը լսելիս բոլորովին այլ զգացողություն եմ ունենում: Ճիշտ է, մասնագիտության բերումով, բնականաբար, դասական երաժշտություն եմ առավել հաճախ լսում, բայց գուսանականի ազդեցությունը բոլորովին այլ է, այն ինձ տանում է դեպի հայրենի երկիր, դեպի ժողովուրդ:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

Հարցազրույց կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության նախագահ Արամ Սաթյանի հետ

– Հարգարժան պարոն Սաթյան, լրանում է հայ գուսանական արվեստի նշանավոր դեմքերից մեկի՝ Գուսան Աշոտի ծննդյան 110-ամյակը: Ինչպես գիտեք, նա եղել է կոմպոզիտորների միության անդամ: Կոմպոզիտորների եւ երաժշտագետների միությունը պատրաստվո՞ւմ է արդյոք ինչ-որ ձեւով նշելու այդ հոբելյանը:

– Սիրված գուսանի հոբելյանը նույնիսկ ամենահամեստ ձեւով նշելու համար նյութական միջոցներ են անհրաժեշտ, որը միությունը դժբախտաբար չունի: Մշակույթի նախարարության համապատասխան բաժնի ղեկավարների հետ առաջիկա օրերին պետք է հանդիպենք, տեսնենք՝ ինչ է հնարավոր անել:

– Որպես միության նախագահ եւ որպես պրոֆեսիոնալ, ըստ Ձեզ, ինչ դեր ու տեղ է զբաղեցրել Գուսանը երգարվեստի, մասնավորապես՝ հայ աշուղական երգի զարգացման մեջ:

– Ստեղծագործող անհատն իր կամքից անկախ օր օրի, տարին-տարուն կերտում է իր դիմանկարը: Եթե պատկերավոր ասենք, Գուսանի ստեղծած յուրաքանչյուր երգ, յուրաքանչյուր մեղեդի այդ կտավի վրա մի վրձնահարված է, իսկ Գուսան Աշոտը շատ է ստեղծել: Այնպես որ, նա կերտել է իր ավարտուն դիմանկարը: Գուսանական երգարվեստում Գուսան Աշոտը դեմք ունի: Եվ այսօր, եւ ապագայում եւս նրանից սովորելու բան ունենք:

– Գուսանն իր ստեղծագործական երկար կյանքի ընթացքում ստեղծել է մի քանի հարյուր երգ, բայց մեզ ծանոթ երգերի թիվը չի անցնում երկու-երեք տասնյակից: Հնարավո՞ր է արդյոք, որ կոմպոզիտորների միության նախաձեռնությամբ հոբելյանի առթիվ նոր կյանք տրվի նրա ստեղծած, բայց ունկնդրին անծանոթ մի քանի երգի եւս:

– Եթե նպատակ դնենք եւ Գուսանի ստեղծած երգերից մեկ-երկուսին, ինչպես Դուք եք ասում, կյանքի ուղեգիր տանք, գուցե եւ հաջողվի, բայց այդ մեղեդիները, երգերը երկար կյանք չեն ունենա: Երգի ընտրությունն ադմինիստրատիվ մեթոդներով չի արվում: Եվ դա լավ է, լավ է, որ դրանց ընտրությունը ոչ կոմպոզիտորների միությունն է կատարում եւ ոչ էլ մշակույթի նախարարությունը: Երգի ընտրությունը ժողովուրդն է կատարում, ունկնդիրը: Այնպես որ՝ Գուսանի լավագույն երգերի ընտրությունը մեր ժողովուրդը վաղուց է կատարել: Դրանք այն երգերն են, որոնք մենք երգում ենք:

– Պարոն Սաթյան, Ձեր թույլտվությամբ մի փոքր շեղվենք թեմայից:

Հասարակական, քաղաքական շատ կազմակերպություններ, որպես խորհրդային իշխանության հարազատ զավակներ, վերացան, հեռացան ասպարեզից այդ իշխանության հետ միասին, իսկ կոմպոզիտորների միությունը կա եւ շարունակում է գործել: Եվ եթե կա, աշխատում է, նշանակում է կա նաեւ դրա անհրաժեշտությունը: Ո՞րն է ֆենոմենը: Երկու խոսք այդ մասին:

– Այո, կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության գոյության անհրաժեշտությունն այսօր առավել քան երբեւէ կա: Այլ հարց է, թե ինչպիսի դժվարությամբ է այն գոյատեւում, ապրում, բայց ապրում է: Խորհրդային տարիներին միությունը պետությունից համակողմանի օգնություն, օժանդակություն էր ստանում: Այսօր այդ մասին խոսելն ավելորդ է: Եթե երաժշտություն ստեղծողը կապված չէ շոու բիզնեսի հետ, իսկ լուրջ երաժշտություն ստեղծողների մեջ այդպիսիք համարյա չկան, նշանակում է նա զորու չէ ոչ իր ստեղծագործությունները տպագրել, ոչ էլ ապահովել դրանց կատարումը: Երկու դեպքում էլ պատճառը նյութական միջոցների բացակայությունն է: Միությունը մասամբ լուծում է այդ հարցերը: Երկրորդ հարկ բարձրանալիս հավանաբար նկատեցիք կոմպոզիտոր Գարեգին Գրիգորյանի 70-ամյակին նվիրված հոբելյանական հեղինակային համերգի վահանակը: Առանց մեր օգնության նման միջոցառման կազմակերպումն ուղղակի անհնար կլիներ: Այլ կերպ ասած, միությունն օգնում է նաեւ, որ կոմպոզիտորը հանիրավի չմոռացվի:

– Շարքային քաղաքացին այն տպավորությունն է ստանում, թե արվեստի բնագավառում, մասնավորապես երգարվեստի բնագավառում, այսպես կոչված շոուբիզնեսի, ռաբիսի ներկայացուցիչներին թույլատրվում է ամեն ինչ: Նրանք ջարդուխուրդով առաջ են շարժվում, հաճախ աղավաղում գուսանական, ժողովրդական երգերի տեքստերը, դրանց մեղեդիները, իսկ մշակույթի նախարարությունը, կոմպոզիտորների միությունն այս երեւույթները

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

կանխելու ուղղությամբ համարյա ոչինչ չեն ձեռնարկում: Դուք համամիտ չե՞ք նման ձեւակերպման հետ:

– Հարցի շարադրանքի առաջին մասի հետ համաձայն եմ: Այո, ռաբիս երաժշտական ուղղությունը զգալի վնաս է հասցնում հասարակության երաժշտական ճաշակի ձեւավորմանը, բայց միությունից, հավանաբար նաեւ մշակույթի նախարարությունից վերջին հաշվով շատ բան կախված չէ: Երկար տարիներ աշխատել եմ հեռուստատեսությունում եւ առնչվել նման հարցերի հետ: Տասնյակ անգամներ խոչընդոտել եմ, որպեսզի նման հաղորդումները եթեր գնան, բայց վերջին հաշվով անհատը շատ քիչ բան է որոշում: Այստեղ էլ ամենակարող փողը ճանապարհ է բացում նման հաղորդումների համար: Դու հրաժարվում ես, առաջարկում են ուրիշին եւ պատճառաբանում, թե դրա պահանջարկը կա: Նման պահանջարկ չկա: Դա ասվում է արվածն արդարացնելու համար:

– Այսօր պատեհ-անպատեհ բոլոր մակարդակներով փնովում ենք խորհրդային կարգերը: Բայց փաստ է, որ մեր փոքր երկրի հեռավոր «ծայրամասերի բնակչությունը», գյուղի բնակչությունն արվեստի, հատկապես երգարվեստի մեծերի հետ անմիջականորեն շփվել է հենց խորհրդային իշխանության տարիներին: Զանգեզուրցիները Գորիսում, Կապանում «Անուշ» օպերա են դիտել եւ լսել, ունկնդրել Հովհաննես Չեքիջյանի ղեկավարած երգչախմբին, Կոնստանտին Օրբելյանի հանրաճանաչ նվագախմբին, լսել մեր կոմպոզիտորներից շատերի հեղինակային համերգները: Այսօր պատկերը միանգամայն այլ է: Մարզերը հանիրավի մոռացության են տրվել: Թերեւս բացառություն է կազմում Արցախը:

– Միանգամայն համաձայն եմ Ձեզ հետ: Ինքս էլ այդ խմբերի կազմում մի քանի անգամ եղել եմ եւ Կապանում, եւ Գորիսում, նաեւ հանրապետության այլ հեռավոր բնակավայրերում: Այն ժամանակ ստեղծագործական կոլեկտիվներին, նաեւ անհատ ստեղծագործողներին նույնիսկ ստիպում էին համերգների մեկնել շրջաններ: Այսօր պատկերը միանգամայն այլ է, բացառություն են կազմում թերեւս Գյումրին, Վանաձորը, Ստեփանակերտն ու Շուշին: Հարցը գալիս, մտնում է փակուղի դարձյալ ֆինանսների պատճառով: Միությունը նման միջոցներ չունի, իսկ մշակույթի նախարարության ունեցած միջոցները մեր գիտությամբ բավարարում են միայն մեկ-երկու խմբերի նման գործուղման ծախսեր հոգալու համար: Նախաձեռնությունը պետք է ներքեւներից գա՝ մարզպետարաններից: Ինչքան ինձ հայտնի է, նրանք որոշ միջոցներ ունեն մշակույթի հետ կապված հարցերի լուծման, մասնավորապես երաժշտական խմբերի, անհատ կատարողների հրավիրելու համար: Հրավեր լինելու դեպքում մենք պատրաստ ենք մեկնել ամենահեռու բնակավայրեր:

– Հայ պատմագրության մեջ Գողթան աշխարհը, որն ի դեպ պատմական Սյունիքի մի մասն է եղել հաճախ, համարվել է երգիչների, գուսանների երկիր: Սյունիք-Զանգեզուրում նման դերակատարում է ունեցել Ձեր տոհմի ծննդավայր Խնձորեսկը, որտեղ մինչեւ նոր պատմության սկիզբը կազմակերպվել են տարբեր ազգերի աշուղ-գուսանների մրցույթներ, որն էլ հավանաբար իր որոշակի կնիքն է թողել մեր ժողովրդի երաժշտական դաստիարակության վրա:

Երբ ե՞ք վերջին անգամ եղել Ձեր նախնիների հայրենի գյուղում:

– Ես երբեք չեմ կտրվել իմ ակունքներից: Ի դեպ, աշխատանքային գործունեությունս, կոնսերվատորիան ավարտելուց հետո, սկսել եմ Գորիսի երաժշտական դպրոցում: Իսկ գյուղում համարյա ամեն տարի էլ լինում եմ: Դերակատարում ունի նաեւ գյուղի երաժշտական դպրոցը, որը, ինչպես գիտեք, կրում է Աշոտ Սաթունցի անունը: Այն մի տեսակ կապող օղակ է դարձել: Պարտավորվածություն ենք զգում մշտական օգնություն ցույց տալ: Դպրոցի բացման առթիվ դաշնամուր ենք նվիրել, անցյալ տարի էլ՝ ռոյալ: Ուրախ եմ, որ գյուղը բարգավաճում է: Եկող գարնանը նորից կլինեմ այնտեղ:

Զրույցը՝ ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ

Ք. Երեւան

Սյունյաց աշխարհի նորօրյա փրուբադուրը

Աշոտը եւ մեծ բանաստեղծ է,
եւ մեծ երգահան:

Համո Սահյան

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ

Քսաներորդ դարի երկրորդ կեսի մեծատաղանդ Գուսան Աշոտի քնարի եւ մեղեդու ամենաճշգրիտ գնահատականը հավանաբար տրված է մեր ժամանակների նշանավոր կինոբեմադրիչ Մարկո Բելլոկիոյի «Մորս ժպիտը» ֆիլմում, որը սկսվում է հայ գուսանի «Օջախում» հրաշալի երգով եւ ավարտվում նույն երգով, իսկ ողջ կինոնկարն ուղեկցվում է նույն երգի երաժշտությամբ՝ այս անգամ, իհարկե, առանց հայերեն խոսքի: Ի դեպ, այս կինոնկարը Բելլոկիոյի նշանավոր ֆիլմերից է եւ ունի խոր փիլիսոփայական բովանդակություն. այն թարգմանվել է աշխարհի բազմաթիվ

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

լեզուներով, նաեւ ռուսերենով եւ սկսած 2002 թվականից բազմիցս ցուցադրվել է տարբեր երկրների հեռուստաալիքներով: Սա նշանակում է՝ Գուսան Աշոտի երգն արժանացել է համաշխարհային հռչակի:

2010 թվականին, երբ ուխտագնացության էի մեկնել Արեւմտահայաստան՝ Մուշ քաղաքի միակ մեծ հանրախանութում եւս հայերենով հնչում էր այդ երգը՝ կարծես թե շեշտելով Մուշի նախկին հայ բնակիչների հոգու առկայությունը Մեծ Հայքի այդ հնագույն բնակավայրում:

Այս փաստերը հաստատում են ճշմարտությունը, թե գուսան Աշոտը երեւույթ է հայ մշակույթի պատմության մեջ: Նա երեւույթ է նաեւ որպես բանաստեղծ. նրա բանաստեղծության եւ մեղեդու միասնությունը բացահայտում է հայ տրուբադուրի ժառանգական օժտվածության հնամյա արմատները: Տեղին է հիշել հանճարեղ Ավետիք Իսահակյանի բնութագիրը՝ տրված Աշուղ Աշոտին. «1938-ին էր, երբ լսեցի երիտասարդ Աշուղ Աշոտի երգը... Լսեցի, հալվեցի եւ ասացի.

«Փառք Ասպծուն...Այունյաց Գողթանի ոգին կենդանացել է... »: [6-34]

Գուսան Աշոտի բանաստեղծական ժողովածուները սկսել են հրատարակվել 1946 թվականից: Կենդանության օրոք լույս է տեսել 7 ժողովածու, իսկ մահվանից հետո՝ երկուսը: Վերջին ժողովածուն հրատարակվել է 2010-ին՝ այն կազմել է Աշուղ Աշոտի դուստրը՝ Արշալույս Դադալյանը, նրանում զետեղելով գուսանի անտիպ երգերի բնագրերը՝ դրանց կցելով երգերի ձայնանիշերը: Ժողովածուին կցված են Ռուբեն Մաթեւոսյանի, Էլինար Շահենի, Թովմաս Պողոսյանի եւ ուրիշների սրտի խոսքը: Ռուբեն Մաթեւոսյանն ունի այսպիսի կարեւոր նկատում. «Կարծում եմ սույն ժողովածուի տպագրությունը նոր խթան կհանդիսանա երիտասարդների ինքնագիտակցության ձեւավորմանն ի նպաստ: Կհարստացնի երգիչ-երգչուհիների երգացանկը եւ կդառնա դասագիրք՝ բոլոր նրանց համար, ովքեր անկեղծ ցանկություն կունենան առնչվել իսկական հայկական աշուղական արվեստին»: [3-6]

Աշուղ Աշոտի երգերի վերջին ժողովածուն նախորդներից առանձնանում է նաեւ նրանում տեղ գտած Գորիսի բարբառով գրված երգերի քանակով. այն յուրօրինակ նվեր է բարբառագետների համար:

Գուսան Աշոտի քնարերգության թեմաներն են՝ մայրական սեր, հայրենի եզերք, հայրենիք եւ իհարկե պոեզիայի շարժիչ ուժը դարձած սիրո մոտիվը: Սա պայմանական բաժանում է. իրականում նրա երգերում շոշափված են մարդկային հուզաշխարհի հետ կապված ավելի մեծ քանակի խնդիրներ:

Ինչպես հայտնի է, Գուսան Աշոտը վաղ է զրկվել մորից, սակայն մոր կերպարը նրան ուղեկցել է կյանքի ողջ ընթացքում: Նրա քերթվածներում երբեմն մայր բնությունը եւ մայրը ձուլվում են իրար. չէ որ նա վաղ է զրկվել մոր գգվանքից, եւ մանկության թանկ հուշերը գալիս են երազներում, ու միշտ նրանցում երեւում է գորովագութ մայրը՝ իր սուրբ խորհուրդներով.

Էս գիշեր իմ երազին ելա սար Իշիանա,
Ինձ դարավ իմ մուրազ ձին, սրբավայրը Իշիանա,
Ուխտավորներ են եկել սուրբ հավատի տենչանքով,
Ասես լեզու էր առել, էն խաչքարը Իշիանա:
Մորս փեշը բռնեցի, խաչքարին մոմ վառեցի,
Ասաց-որդիս, սուրբ է սա,- խունկ վառեց, ես օծվեցի: [5-42]

Հայ ժողովրդի ազգային գիտակցության մեջ քույրը, հատկապես երբ եղբորից տարեց է, կարող է փոխարինել մորը՝ դառնալով երկրորդ մայր: Դրա պերճախոս վկայությունն է «Գառնիկ ախպեր» հեքիաթը, որում քույրը պատրաստ է իր կյանքը զոհել հանուն եղբոր: Այս իրողությունն է շեշտված գուսանի «Քույր իմ, մայր իմ» քերթվածում, ուր կարդում ենք.

Մանկուց քո փեշն եմ բռնել, քեզնից մոր ձայն եմ լսել...
Ցամաքել են արցունքներս, թաքուն ես շատ եմ լացել,
Մոլորվել եմ, մոլորվել: [4-107]

Գուսան Աշոտը հայրենասեր է իր ողջ էությամբ. թեպետ չունի այն կրթությունը, որը հավանաբար երազել էր ստանալ, սակայն ինքնակրթությամբ ու ներքին մեծ օժտվածությամբ զգում է իր ազգային գծերի հնամենի քաղաքակիրթ արմատները: Նրան ոգեշնչում է հայ ազգի էպոնիմ Հայկը, նրա համար սրբության սրբոց է «Սասնա ծռեր» էպոսի գլխավոր դեմքը՝ Դավիթը, նրան ոգեշնչում է լեգենդար Անդրանիկ զորավարը, եւ վերջապես, բանաստեղծը հպարտ է հայրենի սահմանը պաշտպանող որդու կերպարով.

Սասնա Դավթի մեծ ուժը հոգուդ մեջ է, զավակս,
Թուր Կեծակին, Ջալալին, բազկիդ մեջ է զավակս,
Մեծ սահմանն ես դու հսկում, մայրդ հանգիստ
քուն առնի՛,
Հայրենիքիդ սուրբ սերը սրտիդ մեջ է՝ զավակս: [4-30]

Բանաստեղծ Աշոտը Հայաստանն ընկալում է իր պատմական ամբողջության մեջ. նրա երեւակայության ոլորտում հայրենիքը Մեծ Հայքն է՝ Ղարաբաղով, Վանա լճով եւ Աղթամարի վանքով:

Նա ոչ միայն իր բանաստեղծական ներշնչումը ստացել է հեթանոսական Հայաստանի Գողթան երգերից, միջնադարյան հայրեններից ու հոգեւոր շարականներից, Նաղաշ Հովնաթանից ու Սայաթ-Նովայից, այլեւ մեծագույն միստիկ եւ հանճարեղ Գրիգոր Նարեկացու տաղերից ու «Մատյան ողբերգության» երկից: Գիտակցելով Գրիգոր Նարեկացու հսկայական ազդեցությունը հայ պոեզիայի զարգացման ընթացքի վրա, հիանալով նրա մտքի տիեզերական անհունությամբ՝ Գուսան Աշոտը նրան նվիրել է «Նարեկացի» խորիմաստ քերթվածը:

Հատկապես տաղի կրկնակները փաստում են այն շռայլ ու պերճախոս գնահատանքի խոսքերը, որոնք գուսանը հղում է հայ բանաստեղծական մտքի հսկային.

Նարեկն եկավ, վանք մտավ, միտքը տիեզերքն առավ,
կարկաչն առած ջրերի,
Ապրումները հուզաթավ կրակ դարձան չմարող,
շառաչն առած ջրվեժի:
Աղաղակեց ողբաձայն
Տառապանքներն անսահման,
Տենչանքն առած աշխարհի:
Նա քանքարեց, դաճարեց,

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

Արեւի պես ճառագեց,
Չցանածը՝ նա ցանեց: [4-40]

Աշուղ Աշոտը ունի բանաստեղծություններ, որոնք գրված են Սայաթ-Նովայի ու Նաղաշ Հովնաթանի խաղերի ու տաղերի ներշնչանքով: Սա զարմանալի չէ, բավական է հիշել Եղիշե Չարենցի հրաշք «Տաղարանը», որը գրված է անմահ Սայաթ-Նովայի խաղերի ազդեցությամբ, եւ այդ տաղերի շարքում է «Ես իմ անուշ Հայաստանի» գլուխգործոցը: Բերենք մի քանի օրինակ այդ ազդեցության ոլորտներից.

Սայաթ-Նովա

Վենց իմացար սոված էի, լի սեղանի համա՛ էկա,
Քիզիդ խոսիլ էի ուզում՝ մոդրդի դամի համա էկա.
Ասի, քիզիդ լուսացընիմ, ուրախ ժամի համա էկա.
Մոռացիլ իմ...լավ միտս չէ, թե ինչ բանի համա էկա: [9-112]

Աշուղ Աշոտ

Գարնան մի օր բլբուլ դառած սեր փնտրելու համար եկա,
Էս հուրհրան անդաստանը երգ հյուսելու համար եկա,
Բացվել էր մի հրաշք հանդես, հազար ու մի աչքեր վառված,
Ախ, ինձ վառող հուր աչքերին՝ ես գերվելու համար եկա,
Էս կրակոտ սիրո ծովեն դարդ տանելու համար եկա:[4-70]

Նաղաշ Հովնաթան

Տաղ ի վերայ Գուրջստանայ գոզալներին
Գովեմ սրտիս ուրախական
Թիֆլիզ քաղաքն պատուական,
Խիստ գեղեցիկ են սիրական՝
Վրաստանա գոզալներն,
Գուրջստանայ խաթուններն:[7-19]

Աշուղ Աշոտ

Սիրունները Երեւանի
Գարնան անուշ հովերի պես օրորվում են,
Սիրամորմոք սիրունները Երեւանի,
Ծովի նման մարդու հոգին փոթորկում են
Սիրաբորբոք սիրունները Երեւանի,
Հեզանազ են, սեր ու սազ են, սիրո բարի հրեշտակ են,
Հուր կրակ են սիրունները Երեւանի: [4-88]

Աշուղ Աշոտի պաշտելի մեծություններից է եղել Ակսել Բակունցը: Դա երեւում է «Լուսե հանճար» քերթվածում: Եթե Եղիշե Չարենցը գնահատում էր իր գրչեղբորը «բառերի համար մարմարյա», ապա Աշոտը հիացած է Բակունցի «Կյանքից հյուսված ոսկե բառով»: Նա իրեն հոգեհարազատ է զգում բակունցյան մարդաբանական հրաշքներով լի աշխարհում եւ դրա համար էլ գրում է.

Միրհավը սեր դայլայլեց,
Աշո՛ւր, սրտի հուշ բերեց,
Մթնաձորը լույս դարձավ,
Ցոլցլաց ու փայլփլեց: [4-83]

2004-ին է լույս տեսել Գուսան Աշոտի «Սյունյաց սարեր» գողտրիկ ժողովածուն, որը բանաստեղծի երգերի ընտրանին է: Նրանում ընդգրկված են այն երգերը, որոնք երբեք չեն հնանալու, եւ որոնք սիրում են թե երաժշտական բարձր ճաշակ ունեցող մտավորականները եւ թե պարզ մարդիկ: Այդ ժողովածուն բացվում է «Սյունյաց սարեր» քերթվածով, որը գուսանի հայրենի եզերքին ծոնված ներբողների գլուխգործոցն է: Անսահման սեր ու հպարտություն կա այս երգում: Սյունյաց սարերն իրենց վեհությամբ ու գեղեցկությամբ ներշնչում են նրա բնակիչներին լինել լեռների արծիվների պես հեռատես ու հզոր, երբեք չընկճվել թշնամական հողմերից, ունենալ աշխարհահռչակ զավակներ, միաժամանակ լինել ջերմ ու սիրասուն, ինչպես մոր գիրկն է.

Մարդուն քաջի ուժ կտան ձեր օդն ու ջուրը,
Սուրբ մոր նման օրոր կասի զով զեփյուռը,
Աշխարհով մեկ տարածվել է ձեր անունը,
Ձեզ հազարան խաղ են կանչել, Սյունյաց սարեր,
Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր... [6-11]

Ամեն հայրենասեր հայի համար ցավոտ է գիտակցել տիեզերահռչակ Անի քաղաքի ավերվելը, առավել եւս այդ ավերակների գերության մեջ գտնվելը: Գուսան Աշոտի հաճախ երգվող քերթվածներից մեկն իրավամբ օրհնանք է Մասիսների շքեղ զարդարանքի ներքո ծաղկող Երեւան մայրաքաղաքին, որը հիշեցնում է փառապանծ Անին.

Բազմաշնորհ սերունդներիդ ես մատաղ,
Մագաղաթյա լույս գանձերիդ ես մատաղ,
Սրտի փափագ Մասիսներիդ ես մատաղ,
Մի փառապանծ Անի դարձար, Երեւան...
Հազար Աշոտ երգ կկապեն քո քարին,
Հազար պանդուխտ հույս կկապեն քո քարին,
Իմ քնարին՝ քնար դարձած Երեւան,
Դու սրտաբաց Երեւան: [6-14]

Հայկական ավանդական ընտանիքների համար մայրն ու հայրը սրբություններ են: Աշուղ Աշոտը, որ իր ժողովրդի սուրբ ավանդույթների ջատագովն է, ընտիր երգեր է ձոնել հայի համար թանկ էակներին՝ հորն ու մորը: Հորը հայկական ընտանիքում պաշտում են որպես ընտանիքի մեծագույն հեղինակության ու նեցուկի եւ իմաստուն դաստիարակի.

Գուսան Աշոտ, հայրը փառքն է օջախի,
Հոյսը, լույսը, բարի կամքն է օջախի,
Նվիրական վառ կրակն է օջախի,
Լույս ես տալիս սրտիս անքուն, իմ հայրիկ:
Բարի հայրիկ, խրատներդ լսել եմ,
Սրտիս բոլոր մուրազներին հասել եմ: [6-29]

Իսկ մոր սերը հավերժական է. այո՛, եթե աշխարհում կա հավերժական սեր, ապա այն անվերապահորեն մայրականն է, որովհետեւ Աշոտ բանաստեղծը հաստատում է հատկապես հայ մորը բնորոշ մի ճշմարտություն.

Մայրը կուզի կյանքը թողնի իր որդուն,
Աչքի լույսը, սերը թողնի իր որդուն,
Ջերմ համբույրը, սիրտը թողնի իր որդուն,
Մահը վանող պինդ վահան է մոր սերը: [6-16]

Հայ միջնադարյան քնարերգության մեջ, ինչպես նաեւ ժողովրդական երգերում, գարունը բանաստեղծական հատուկ թեմա է. այն կյանքի զարթոնքն է, ծաղկունքը ու կենսահաստատ ուժի լիցքավորումը: Առանց չափազանցության, Աշուղ Աշոտի «Գարուն է» քերթվածը հայ քնարերգության մարգարիտներից է.

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

Արագիլն իմ սիրով եկավ,
Բույնը հյուսեց, գարուն է,
Արտույտն սրտիս սիրով եկավ,
Կկուն կանչեց, գարուն է:
Ծիծառն եկավ, կռունկն եկավ,
Այգին ծաղկեց, գարուն է,
Մեղուն բերեց բույր ու նեկտար,
Սիրտս բացվեց, գարուն է: [6-22-23]

Աշուղ Աշոտը սիրո մեծ երգիչ է. նա սերը երգում է հայ միջնադարյան տրուբադուրների նման, չունի քաղաքաբնակ մարդու ինտելիգենտական բառապաշարը, զգացման արտահայտման նորօրյա ձեւերը, սակայն նրա սիրո երգը վարակիչ է նաեւ մտավորական ու բարձրաճաշակ մարդու համար: Սա իսկական արվեստն է, որն անշուշտ աստվածատուր է: Զգայուն սիրահարի սրտի ամենանրբին մեղեդիներն են հնչում Գուսան Աշոտի սիրերգության մեջ, որոնք հավերժական խոստումներ են իսկական սիրահարների համար: Ահա թե ինչպես է դիմում բանաստեղծն իր սիրելի էակին.

Ասա, ինչո՞ղ դու լուռ ես, սիրուն ջան,
Ղարիբի պես տխուր ես, սիրուն ջան,
Իմ սրտին սիրուն հուր ես, սիրուն ջան,
Մոտ արի: [6-26]

Գուսանի կարոտի երգերն ասես բխում են այն սիրող մարդկանց սրտերից, արտահայտում են կարոտի այն հուսահատ ճիչերը, որոնք բխում են սիրո կարոտի տագնապից.

Ով դու գուսան, չես իմանում, էն քո սիրած յարը ո՞ր է,
Չէ՞ որ քեզ հետ խնդում էր միշտ, հիմա էլ խնդալու օր է,
Հովի նման քնքուշ ու նուրբ նրա համբույր տալը ո՞ր է,
Սիրուց խփված վիրավոր ես, քո առաջվա հալը ո՞ր է: [6-27]

Սիրային քնարերգության գլուխգործոցներ ունի Շառլ Ազնավուրը, որը եւս իր բանաստեղծության համար հորինում է հրաշալի մեղեդիներ: Շառլ Ազնավուրին գիտի ողջ քաղաքակիրթ աշխարհը: Ահա մի հատված նրա սիրո երգերից.

Ես քեզ սիրում էի մի անկեղծ սիրով,
Սակայն չանսալով իմ աղերսներին,
Դու ինձ լքեցիր՝ ոչինչ չասելով,
Եվ ես հարբեցի...[2-19]

Հայտնի է Հովհաննես Թումանյանի այն նկատումը, թե Վալերի Բրյուսովն ավելի հիացել է հայ միջնադարյան քնարերգությամբ՝ հատկապես հանճարեղ աշուղ Սայաթ-Նովայի խաղերով [8-59]: Աշուղ Աշոտն էլ նոր օրերում Սայաթ-Նովայի արվեստի շարունակողն է՝ այն տարբերությամբ, որ իր քերթվածների մեծ մասը գրել է գրական հայերենով:

Բանաստեղծի «Սերս վանքում Տաթեւի» երգը կատարել են հայ երգարվեստի շատ մեծեր՝ հաղորդելով ունկնդրին սիրո զգացման ցնցող խորությունը: Սերն այս երգում սրբագործված է. այն աստվածային հրաշք է, իսկ մարդն ամենից շատ տենչում է հրաշքների: Սիրո երգը վերածվում է հրաշքի, երբ այն ձոնվում է անհասին. վկան՝ Սայաթ-Նովայի ողջ սիրերգությունը:

Սա մի երաժշտական գլուխգործոց է՝ հյուսված իմաստուն խոսքերի շղթայով, այն գերում է ե՛ւ կարդացողին, ե՛ւ ունկնդրին.

Սերս վանքում Տաթեւի՝ մոմեր վառած կաղոթեր,
Մոտեցա, որ համբուրեմ, ասաց՝ փղա, ամոթ է,
Ասի՝ երդվիր, քո սերն եմ, սրբի դուռը անարատ,
Առնեմ նազուկ ծոցիկիդ խնկաբույրը անարատ: [6-20]

Անշուշտ Աշուղ Աշոտը եղել է Կոմիտասի ժողովրդական անմահ երգերի սիրահարը: Ահա թե ինչ է ասում Մանուկ Աբեղյանը կոմիտասյան ժողովրդական երգերի մասին. «Կոմիտասը ոչ թե իրեն «ցույց է տալիս սիրահար», այլ իրոք սիրահար է մեր ժողովրդական խաղերին, եւ ոչ միայն ժողովրդական խաղերին, այլ նույն չափով եւ ավելի եւս մեր եկեղեցական երգերին-շարականներին, տաղերին եւ այլն: Նա մինչեւ անգամ մեր հոգեւոր երգերի հիմնական մասը մեր ժողովրդական երգերի մեջ է գտնում»: [-423]

Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը հայ մարդու հոգեկան աշխարհի դրսեւորումը տեսնում է ոչ միայն հոգեւոր ու միստիկ երգերում, այլեւ աշխարհիկ աշուղական քերթվածներում: Նրա կարծիքով ոչ մեկն այնքան դիպուկ չի բնութագրում, թե ով է տրուբադուրը, որքան Չիվանին իր «Աշուղը» երգում.

Անթեւ թռչնիկ է աշուղը-
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ,
Դարձող ճախրիկ է աշուղը,
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

Աշուղ Աշոտն իր մասնագիտությունը դարձրեց աշուղությունը եւ դրանով հարստացրեց հայ ժողովրդի ե՛ւ երգարվեստը, ե՛ւ բանաստեղծությունը: Նա կրողն է հարատեւող արվեստի, որը հայ ժողովրդի սրտի ու հոգու երգն է:

Օգտագործված գրականություն

1. Աբեղյան Մանուկ, Երկեր, հ.է, Երեւան, 1975
2. Aznavour Charles, Un homme et ses chansons, Paris, 1994
3. Աշուղ Աշոտ, Հավերժություն, Երեւան, 2010
4. Գուսան Աշոտ, Սրտի նվագներ, Երեւան, 1979
5. Գուսան Աշոտ, Լեռները կանչում են, Երեւան, 1988
6. Գուսան Աշոտ, Սյունյաց սարեր, Երգերի ընտրանի, Երեւան, 2004
7. Նաղաշ Հովնաթան, Տաղեր, աշխատասիրությամբ Ա.Մնացականյանի, Երեւան, 1983
8. “Поэзия Армении”, Москва, 1916
9. Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Կազմեց, խմբագրեց եւ ծանոթագրեց Մորուս Հասրաթյան, Երեւան, 1963:

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

Հայ իրականության մեջ գուսանների դերի, աշուղական արվեստի որոշ առանձնահատկությունների եւ գուսան կամ աշուղ Աշոտի երգարվեստի մասին է ներկայացնում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Սամվել Մուրադյանը

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ. «Գուսան կամ աշուղ Աշոտն էլ հայ իրականության այն արվեստագետներից մեկն է, ով իր երգերով անմահացրել է մեր ժողովրդին եւ ինքն էլ անմահացել մեր ժողովրդի հետ»

Գուսա՞ն, թե՞ աշուղ...

Հայ իրականության մեջ անհիշելի հեռավոր ժամանակներից գոյություն են ունեցել գուսանները եւ գուսանական արվեստը: Դեռեւս 5-րդ դարում Մովսես Խորենացին գրել է. *«Մենք մեր աչքով տեսանք եւ մեր ականջով լսեցինք, թե ինչպես գինեվետ Գողթան գավառի գուսանները երգում էին այս երգը Վահագնի մասին եւ նվագում էին փանդիռների վրա»,* այսինքն՝ 5-րդ դարում Պատմահայրը վկայում է գուսանների մասին, բայց չգիտի, թե ինչ է աշուղը:

Հաջորդ գրավոր հիշատակությունը գուսանների մասին հանդիպում է «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսում, որը թեեւ շատ հին պատմություն ունի, բայց իր վերջնական ձեւավորումն է ստացել 8-10-րդ դարերում: Այստեղ նշվում է, որ Խանդութը գուսաններին հանձնարարում է գնալ Սասուն եւ կտրիճ փահլեւան Դավթի մոտ իր գեղեցկության գովքն անել: Գուսանները Վաչոյ-Մարջոյի թագավորությունից գալիս հասնում են Սասուն, որտեղ նախ հանդիպում են Քեռի Թորոսին, ով Սասնա չարաճճի ճժերի հարձակումներից փրկում է նրանց, բայց երբ հասկանում է, թե ինչի համար են եկել, անարգում է նրանց, ծեծում, ջարդում նվագարանները, եւ գուսանները փախչում են: Մինչ այդ, սակայն, Քեռի Թորոսն էր սասունցի երեխաների չարաճճի ոտնձգություններից պաշտպանել գուսաններին՝ ասելով. *«Իմկնի Սասունա ծռեր,/Էդ գուսա՞ն է, սա՛զ է./Չեն կ՚էլնի մոտեն, անո՞ւշ-անո՞ւշ:/Դուք իսկի բան չեք տեսե,/Էդոնք սազ կզարկեն, խաղ կասեն....»:* Երբ ծեծված-ջարդված, նեղացած գուսանները հեռանում էին Սասունից, հանդիպում են Դավթին,

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

սակայն չեն ճանաչում եւ չեն հավատում, որ նա՛ է իրական Դավիթը, քանի որ մեկ անգամ արդեն սխալվել էին, երբ Քեռի Թորոսն ասել էր, թե ինքն է Դավիթը: Եվ երբ սկսել էին Խանդութի գովքն անել, դա դուր չէր եկել նրան, քանի որ Դավթին նշանել էին Չմշկիկ Սուլթանի հետ, եւ գիտեր, որ երբ Դավիթը լսի գուսաններին, կարող է մտքափոխվել: Դավիթը հարցնում է գուսաններին, թե ո՛վ է նրանց այդպես ծեծել-ջարդել, նրանք էլ պատասխանում են, որ այստեղ մի ծուռ Դավիթ կա, նա է արել: Դավիթն ասում է, որ նրանք իր քեռուն են հանդիպել, եւ հանում փող է տալիս, որ գնան նոր հագուստ գնեն, նվագարանները նորոգեն եւ գան իր մոտ: Գալիս են գուսանները եւ սկսում Խանդութի գովքն անել. *«Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին./Էնոր բոյ գյռլու էղեգ նման է:/Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին./Էնոր սրտիկ Քուռկիկ Ջալալու մեյդանն է,/Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին./Էնոր բերան մեղրով բացած է:/Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին./Էնոր ատամներ մարգրիտ շարած է:/Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին./Էնոր աչքեր գինու կթխա է:/Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին....»:* Եվ այդպես շարունակ գուսանները գովում են Խանդութին, որից հետո Դավիթը, ողջունելով գուսաններին, ասում է. *«Գուսաններ՛ր, դուք բարով էկաք./Իմ սիրտ քանց կաքն անարատ էր,/Մերան թալիք, մակարդիք:/Իմ սիրտ քանց Սասնա բերդն ամուր էր,/Քլունգ առաք, իմ հիմ քանդեցիք:/Իմ սիրտ քանց աշունքվա գետ զուլալ էր,/Գարնան հեղեղի նման պղտորիք:/Գուսաններ՛ր, դուք ինձի հալիք, մաշեցիք,/Դեհ ձեր Խանդութ խանում ինձի քաշեցեք»:* Այս ամբողջը վկայում է ժողովրդի վրա արվեստի ներգործուն ուժի ու ազդեցության մասին. ինչո՞ւ ժողովրդի, որովհետեւ մեր էպոսի հերոս Սասունցի Դավիթը մարմնավորում է հայ ժողովրդին:

Փաստորեն դեռեւս 8-10-րդ դարերում հիշատակվում է գուսանների մասին. չնայած մեր էպոսը կարող է վերաբերել եւ ավելի վաղ ժամանակներին, որովհետեւ իրոք այն միայն այդ դարերի ստեղծագործությունը չէ, պարզապես այդ ժամանակաշրջանում է ավարտական տեսք ստացել: Ավետիք Իսահակյանը հետաքրքիր ձեւակերպում ունի դրա վերաբերյալ. *«Մեր իմաստուն ժողովուրդը կարծես թե քանդել, իրար է խառնել քրիստոնեական եւ հեթանոսական տաճարները եւ նրանց խառը քարերից ստեղծել մեր էպոսը»,* իսկ Հովհաննես Թումանյանն ավելի առաջ անցնելով գրել է. «Սասունցի Դավիթը նույն ինքը Հայկ Նահապետն է», այսինքն՝ մեր էպոսը հայ ժողովրդի կազմավորման շրջանի գեղարվեստական պատմությունն է:

Մինչ սելջուկ-թյուրքերի եւ մոնղոլ-թաթարների արշավանքները Հայաստան հայ իրականության մեջ աշուղի մասին խոսակցություն անգամ չկա: Բայց արաբական լծի թոթափումից հետո, երբ Հայաստանն ընկնում է կարա-կոյունլու եւ ակ-կոյունլու թուրքմենական ոչխարապահ ցեղերի ազդեցության տակ, եւ սրանք աստիճանաբար դառնում են տիրապետող, հայությանը պարտադրում են իրենց արվեստը: Փաստորեն մինչեւ 15-րդ դար մեր իրականության մեջ աշուղ արտահայտությունն անգամ չի հանդիպում: Շավիղ Գրիգորյանը հորինելով պնդում է, որ մեր առաջին աշուղը Ղուլ օղլի Երզնկացին է, որ անհիմն ու չփաստարկված վարկած է: Իմ խորին համոզմամբ՝ հայ առաջին աշուղը Նաղաշ Հովնաթանն է (17-րդ դար):

> *Աշուղ բառի բացատրությունը նախեւառաջ տալիս է Հովհաննես Թումանյանը, ըստ որի՝ աշուղը երգիչ է եւ միեւնույն ժամանակ սիրահար (աշղ, էշխ, աշուղ նշանակում է սիրահար): Մի խոսքով՝ այդ ժամանակներից սկսած արեւելյան այս արվեստը գուսանականին զուգահեռ տարածվել է հայ իրականության մեջ, որ ժամանակի ընթացքում ավելի է ընդլայնվել՝ մինչեւ անգամ փոխարինելով գուսանական արվեստին:*

Ավանդական գուսանականն արվեստի մի տեսակ է, որը ստեղծում են առանձին հեղինակներ, ովքեր անհատ կատարողներ են, երբեմն հանդես են գալիս խմբերով եւ սովորաբար երգում են իրենց ստեղծագործությունները՝ իրենց իսկ հորինած մեղեդիներով: Այսինքն՝ գուսանները ե՛ւ մեղեդին են հորինում, ե՛ւ բանաստեղծությունը, իսկ աշուղները ստեղծում են բանաստեղծություն՝ այն հարմարեցնելով, համապատասխանեցնելով արեւելյան բոլոր աշուղների համար պարտադիր այսինչ կամ այնինչ եղանակին: Սա է ամենաէական տարբերությունը գուսանի եւ աշուղի:

Հաջորդ տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ գուսանը բանաստեղծական տեքստում անպայման իր անունը նշելու պարտավորություն չունի, բայց աշուղը պարտավոր է ստեղծագործության վերջին տան մեջ անպայման նշել, ներկայացնել հեղինակի անունը:

Բացի դրանից՝ հատկանշական է նաեւ այն, որ արեւելյան աշուղական արվեստի մի շարք տաղաչափական ձեւեր, որոնք բազմազան են եւ օտարանուն, ինչպես օրինակ, սեմայի, դաստան, մուխամմազ, ղոշմա, դաստա բեդաստա, վուջուբլամա, զնջիլլամա, ուչլամա, ղազալի-գազել, գալենտերի եւ այլն, թափանցել են նաեւ հայ իրականություն: Սրանք ժամանակին օգտագործել է Սայաթ-Նովան, ով իրեն աշուղ է համարել, քանի որ պահպանել է աշուղական արվեստի բոլոր կանոնները, բայց չմոռանանք, որ, աշուղ լինելով հանդերձ, նա նաեւ մեծագույն բանաստեղծ է:

Չկենտրոնանալով Սայաթ-Նովայի ստեղծագործության առանձնահատկությունների վրա՝ նշենք, որ աշուղական մի քանի դպրոցներ ենք ունեցել, որոնք գործել են ոչ միայն Հայաստանում, այլեւ հայկական գաղթավայրերում: Բնական է, որ գաղթավայրերի աշուղական դպրոցների վրա իրենց ազդեցությունն է ունեցել տվյալ երկրի արվեստը, ինչպես օրինակ՝ Նոր Ջուղայում ստեղծված աշուղական դպրոցը բնականաբար պարսկականի ազդեցությունը պետք է ունենար, Կոստանդնուպոլսում ստեղծվածը՝ թուրքականի եւ այլն: Իսկ Թիֆլիսում վրացական աշուղական դպրոց չի եղել, այդտեղ այն ստեղծել են

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

հայերը, որոնց հետագայում վրացիներն են ընդօրինակել: Հայաստանյան աշուղական դպրոցն ավելի շատ պարտական է Ջիվանուն, ով 19-րդ դարի երկրորդ կեսին դարձավ հայ աշուղական երգարվեստի զարգացման նոր փուլի հիմնադիրը: Ինչո՞ւ, որովհետեւ անգամ Սայաթ-Նովան գրել է երեք լեզվով՝ հայերեն, վրացերեն եւ թուրքերեն: Այստեղ ամենալուրջ սայաթնովագետներից Հենրիկ Բախչինյանը ճիշտ դիտողություն է անում՝ ասելով, որ Սայաթ-Նովան՝ որպես հայ մարդ, հայ բանաստեղծ եւ աշուղ, բնականաբար իր գեղարվեստական մտքի առավելագույն ուժը դրսեւորել է հենց հայերենով գրված բանաստեղծություններում, դրա համար էլ լավագույնները հայերեն գրված ստեղծագործություններն են՝ մոտ 68 կամ 70 խաղ: Հաջորդը. Սայաթ-Նովան գրել է 33-34 վրացերեն խաղ՝ վրաց արքունիքի պալատական պահանջները բավարարելու համար, իսկ թուրքերեն՝ 120 խաղ՝ մեջլիսի պահանջների համար: Սրանց միջեւ տարբերությունն իր հիմքերն ունի. Սայաթ-Նովայի հայրը՝ սալմաստեցի Ղուլ Հարություն անունով աշուղը, ամուսնացել է Նաղաշ Հովնաթանի դստեր հետ, եւ ծնվել է Սայաթ-Նովան, որի դաստիարակները եղել են քեռիները՝ Հակոբ եւ Հարություն Հովնաթանյան նկարիչները, քանի որ Ղուլ Հարությունն արվեստի կամ արհեստի բերումով տարվա մեծ մասը բացակայել է տանից: Այսինքն՝ Սայաթ-Նովան հայրական դաստիարակություն գրեթե չի ստացել: Սա աշուղական աշխարհի գաղտնիքներից մեկն է:

Քուչուկ Նովա անունով աշուղ ենք ունեցել, որի կինը նվագարանները ջարդել է, վառել բոլոր ձեռագրերը, որպեսզի տղաները հոր ճանապարհը չընտրեն: Սա նշանակում է, որ աշուղների կյանքը հեշտ չի եղել:

Այստեղ կուզենամ համառոտ խոսել նաեւ Սայաթ-Նովայի՝ երեք լեզվով ստեղծագործելու մասին: Սայաթնովագետ Լյուդվիգ Դուլյանը, ով, ճիշտ է, մահացել է 80 տարեկանում, բայց համարում եմ, որ ժամանակից շուտ է մահացել, բառացի է թարգմանել Սայաթ-Նովայի թուրքերեն խաղերը: Նա այն եզակի անձանցից է, ով գիտեր ոչ միայն ադրբեջաներեն, այլեւ օսմանյան թուրքերեն, վրացերեն, մասամբ պարսկերեն, արաբերեն, իսկ Սայաթ-Նովայի ստեղծագործությունները միայն թուրքերենին տիրապետողը չի կարող ճիշտ թարգմանել, որովհետեւ այնտեղ կան նաեւ պարսկերեն, արաբերեն, ինչպես նաեւ թուրքերեն բառեր, որոնք, բացի բառարանային իմաստներից, ունեն նաեւ բառային միջավայրում արտահայտվող այլ իմաստներ: Իհարկե, ժամանակին շատերն են փորձել թարգմանել նրա թուրքերեն խաղերը, սակայն դա արել են առանց իմանալու կամ նկատելու, որ դրանցում Սայաթ-Նովան թաքցրել է գաղտնագիր-ծածկագրեր: Արդյունքում այդ ծածկագրերը կորել են, մոռացության մատնվել, եւ այդ թարգմանված տաղերը հարմարեցրել, համապատասխանեցրել են նրա՝ Թիֆլիսի բարբառով գրված հայերեն խաղերին: Շատերն են փորձում այդ ծածկագրերը վերծանել, բայց՝ անհաջող:

Մեկ կարեւոր հանգամանք եւս պետք է հաշվի առնել. թուրքերենի եւ ադրբեջաներենի տառային համակարգերը տարբեր են. մեկը 29 տառ ունի, մյուսը՝ 31: Բնական է, որ այդ տառերն ունեն իրենց թվահամարները, եւ դրանք գործածվում են իրենց թվային արժեքով ու նշանակությամբ: Եթե մենք, ասենք, Սայաթ-Նովայի ստեղծագործությունը մեկնաբանում ենք արաբական տառերի թվային արժեքով, սխալներ ենք թույլ տալիս, որովհետեւ նա գործածել է օսմանյան թուրքերենը (1730թ. նրա հայրը Պոլսում հիմնել է հայ-թուրքական աշուղական դպրոց, որտեղ 1732թ.-ից սովորել է Սայաթ-Նովան, այսինքն՝ Սայաթ-Նովան օսմանյան թուրքերեն սովորել է Պոլսում՝ իր հոր աշուղական դպրոցում): Հետեւաբար այդ խաղերը ոչ մի կապ չունեն ադրբեջաներենի հետ, պարզապես խորհրդային ժամանակաշրջանում, իրականացնելով Ստալինի հրամանը, այն է՝ ցույց տալ, որ ադրբեջանցիները նույնպես մշակութային արժեք ունեն, գրել են, թե իբր Սայաթ-Նովան ստեղծագործել է անդրկովկասյան երեք ժողովուրդների լեզուներով (հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն) հավասարապես:

Գուսա՞ն, թե՞ աշուղ Աշոտ

Գուսան Աշոտը 20-րդ դարի երեւույթ է եւ իր ստեղծագործական ամբողջ ճանապարհն անցել է խորհրդային ժամանակաշրջանում: Նա թեեւ երաժշտական պրոֆեսիոնալ կրթություն չուներ, բայց բնատուր շնորհներով օժտված բացառիկ երաժիշտ էր եւ բանաստեղծ միեւնույն ժամանակ, եւ կարելի է ասել, որ այս երկու երեւույթները գոյակցում էին Գուսան Աշոտ անձնավորության մեջ: Չգիտեմ նույնիսկ՝ նա նախ բանաստեղծությո՞ւնն էր ստեղծում, հետո՝ մեղեդին, թե՞ հակառակը: Այս իմաստով, երբ ուսումնասիրում ենք Գուսանի ստեղծագործությունը, տարակուսանքի առաջ ենք կանգնում. ի վերջո, նա գուսա՞ն է, թե՞ աշուղ: Նույնիսկ հեղինակն ինքը չգիտի այդ հարցի պատասխանը: Օրինակ՝ Աշոտը հրատարակել է «Գուսանի սերը» վերնագրով գիրք, որում զետեղված «Աշուղ եմ» վերնագրով երգ-բանաստեղծության մեջ իրեն անվանել է Աշուղ Աշոտ. «Քո մորը մատաղ, որ նա քեզ ծնեց,/Աշխարհիս սիրուն մի փերի հանձնեց,/Աշուղ Աշոտիս նա երգիչ դարձրեց»:

Բայց շատ երգերում հիշվում է որպես գուսան Աշոտ, ինչպես օրինակ՝ «Ո՞ւր է» ստեղծագործության «Ով դու գուսան, չես իմանում էն քո սիրած յարը ո՞ւր է,/Չէ՞ որ քեզ հետ խնդում էր միշտ, հիմա էլ խնդալու օր է» կամ «Գուսան Աշո՛տ, սիրտդ յարիդ միշտ կանչում է օր ու գիշեր,/Նրա ման եկած տեղերը կանաչում են օր ու գիշեր», կամ «Մոր սերը» ստեղծագործության «Գուսա՛ն Աշոտ, որբ մնացիր դու մորից,/Սիրտդ վառվեց, մթագնեց այն օրից,/ Անցավ գնաց, էլ չի դառնա նա նորից,/Անուշ ձայնով երգի՛ր, հարգի՛ր մոր սերը» տողերում:

«Ո՞ւր է» բանաստեղծության մեջ նա կիրառել է աշուղական բանաստեղծական չափեր, բայց միեւնույն ժամանակ նկատում ենք, որ թե՛ բանաստեղծությունն է իրենը, թե՛ մեղեդին: Նա չի ստեղծել ղոշմա, մուխամմազ, դուբեթ եւ այլն, բայց օգտագործել է հայտնի աշուղական եւ իր իսկ ստեղծած տաղաչափական ձեւերը, որոնց էլ հարմարեցրել է իր մեղեդիները: Եթե բնութագրենք նրա ստեղծագործու-

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

թյունը բանաստեղծական տեքստի եւ մեղեդու համապատասխանության սկզբունքներով, ապա այս դեպքում Գուսան Աշոտը կշահի, որովհետեւ այն բացառիկ արվեստագետներից է, որի ստեղծագործություններում իսկապես կա բանաստեղծական տեքստի եւ մեղեդու կատարյալ ներդաշնակություն: Նրա մեղեդին արտահայտում է խոսքի էությունը, խոսքը համապատասխանում է մեղեդու բովանդակությանը. սա է Գուսան Աշոտի եւ մեր գուսաններից մի քանիսի արվեստի կարեւոր առանձնահատկությունը:

Գուսան Աշոտի արվեստի մի քանի առանձնահատկություն

Երկար կարելի է խոսել Գուսանի երգերի բանաստեղծական տեքստերի գեղարվեստական արժեքի մասին, քանի որ մեր առաջ կանգնած է նախեւառաջ բանաստեղծ Աշոտը, ով գեղարվեստական պատկերներ է ստեղծում: Հենց այնպես մեղեդուն համապատասխան բռնազբոսիկ տեքստ չի գրել: Հավանական է՝ մեղեդին եւ բանաստեղծությունը հյուսվել են միաժամանակ: Նրա երգերի տեքստերից յուրաքանչյուրն իրոք մի կատարյալ բանաստեղծություն է: Որպես օրինակ բերեմ «Պախրա» երգը, որն ի դեպ, իմ ամենասիրելի երգերից մեկն է: Սա համարյա թե հայկական օպերային մոտեցող մի շատ հետաքրքիր երաժշտական աշխարհ է, որ ներառում է Սյունյաց աշխարհի, Զանգեզուրի անտառների, գետերի, աղբյուրների ու առվակների ձայնային ելեւէջները, Սյունյաց սարերի, անդնդախոր ձորերի վեհությունը, պատկերում զանգեզուրյան բնության ողջ գեղեցկությունը, եւ մանավանդ մարդ-բնություն, մարդ-կենդանական աշխարհ փոխհարաբերությունները: Պախրան՝ բնության այդ գեղեցիկ կենդանին, ինչպես է դարձել երգի քնարական հերոս, մարդկայնացել, կամ ինչպես գրականագիտության մեջ են ասում՝ անձնավորվել:

Մեր մով սարերում,
ամռան առավոտ
Մի պպիրա տեսա
կաթնաղբյուրի մոտ.
Իջել էր ձորը մթին անտառից
Ու ջուր էր խմում զուլալ աղբյուրից:
Իրեն տեսել էր ջրի հայելում,
Սարերի անուշ բույրն էր վայելում.
Արդյոք խմո՞ւմ էր, թե՞
համբուրում էր,
Իր տեսքով տարված գուցե
հարբում էր:

Ասի՝ ա՛յ պպիրա, մեր այս
լեռներում
Ես յար եմ կորցրել, նա չի երեւում.
Իջել էր ձորը՝ մեղմիկ նազերով,
Գառնուկների հետ ջրին վազելով:
Իրեն տեսել էր ջրի հայելում,
Սարերի անուշ բույրն էր վայելում.
Արդյոք խմո՞ւմ էր, թե՞
համբուրում էր,
Իր տեսքով տարված գուցե
հարբում էր:

Ասի՝ Աշոտն եմ, աղաչում եմ քեզ,
Իմ կորած յարից, թե իսաբար բերես.
Ոչ մի որսկանի գնդակ չի առնի՝
Ո՛չ քո ձագերին, ո՛չ քո սիրածին:
Իրեն տեսել էր ջրի հայելում,
Սարերի անուշ բույրն էր վայելում.
Արդյոք խմո՞ւմ էր, թե՞
համբուրում էր,
Իր տեսքով տարված գուցե
հարբում էր:

Այսպիսի պատկերավոր չափածո խոսք, այն էլ երաժշտական չափերի ու տաղաչափական ձեւերի մեջ դրված, մեր մեծերից շատերը կուզեցային ստեղծել: Նկարագրությունն ավարտվում է, բայց շարունակվում է մարդկային դրամա, ով տագնապում է եւ՛ իր՝ մարդկային ճակատագրի, եւ՛ այդ կենդանու բախտի համար...

Գուսանի արվեստի հաջորդ կարեւոր առանձնահատկություններից մեկն էլ նրա երգերում ժողովրդական առողջ կենսափիլիսոփայության դրսեւորումն է, որ անպայման ավելի բարձր է առօրյա ողջախոհությունից: Մարդկային հարաբերությունները, սիրո դրսեւորումները նա մեզ ներկայացնում է բարձր արվեստով, որ շատ բնորոշ է այդ հող ու ջրում ծնված, այդ բնությանը սիրահարված մեր մյուս արվեստագետներին՝ անկախ նրանից Ակսել Բակունցն է, Համո Սահյանը, թե Գուսան Աշոտը, որոնցից յուրաքանչյուրն անհատականություն է՝ իր կերտած աշխարհով: Չնայած նույն միջավայրն է, բայց Բակունցը բոլորովին ուրիշ գեղարվեստական աշխարհ է ստեղծել՝ իր երանգներով, կենսաճանաչողությամբ, հերոսների ճակատագրով, գեղագիտական խնդիրներով ու նպատակներով, Սահյանը՝ այլ...

Գուսան կամ աշուղ Աշոտի հատկապես սիրո երգերով, որոնք մարդկային զգացմունքի եւ բնության նկատմամբ ազնիվ վերաբերմունքի ներդաշնակություն են, մեր առջեւ այլ աշխարհ է բացվում: Սիրած աղջկան նա դրախտի փերի է անվանում, իսկ այդ դրախտը Սյունյաց աշխարհն է. *«Դու դրախտի փերի, սիրովդ եմ ապրում,/Քեզանից սեր առնել, միշտ եմ փափագում,/Անքուն-անդադար, ես քեզ եմ կանչում,/Ոտքիդ տեղերն են ծաղկում, կանաչում....»:*

Սովորական ընթերցողը կամ ունկնդիրը չի կարող նկատել Գուսանի անմիջական կապը Գրիգոր Նարեկացու արվեստի հետ: Նարեկացին «Մեղեդի ծննդյան» տաղում ներկայացնում է գեղեցկուհու պատկերով քայլող Տիրամորը, որի ծոցը լուսափայլ վարդով է լցված, իսկ քայլելիս ոտքերից շող է կաթում: Հիմա տեսեք, թե ինչ է ասում Գուսան Աշոտը. *«Ոտքիդ տեղերն են ծաղկում, կանաչում».* արդյո՞ք գեղարվեստական կամ պատկերային մտածողության ընդհանրություն, գեղարվեստական պատկերի նմանություն չի՞ նկատվում: Եվ շարունակությունն այդ պատկերի. *«Երկնային հրեշտակ,/Դու իմ երազն ես,/Քեզնով եմ ապրում,/Սրտիս մուրազն ես,/Ծառերը ծաղկում են,/Տարին մեկ անգամ,/Բայց դու գարունն ես,/Հավերժ անթառամ»:*

Գուսանի կամ աշուղ Աշոտի (գիտակցաբար եմ երկու եզրաբառն էլ օգտագործում, որովհետեւ ինձ համար թե՛ Հավասին, թե՛ Շահենը, թե՛ Աշոտը եւ շատ ուրիշներ հավասարապես գուսան են եւ աշուղ) երգերից հայրենասիրություն է ծորում: Նրա երգերում հաճախակի ենք հանդիպում հայրենի բնության պատկերներ: Որպես օրինակ վերցնենք թեկուզ «Սյունյաց սարեր» հրաշալի երգը, որ ժողովուրդը կատարում է մեծ ոգեւորությամբ:

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

Առհասարակ նա այն բացառիկ հեղինակներից է, ում պետք չէ պարտադրել լսել, մարդիկ ինքնաբուխ ուզում են լսել Գուսան Աշոտի երգերը որեւէ երգչի կատարմամբ:

Հեղինակին ճիշտ ներկայացնելու գործում անչափ կարեւոր է նաեւ կատարողի դերը, որի մեկնաբանությունից է կախված երգի հաջողությունը: Օրինակ՝ համեմատենք «Սերս վանքում Տաթեւի» երգը Օֆելյա Համբարձումյանի եւ Նորայր Մնացականյանի կատարմամբ: Երկուսն էլ հրաշալի են մատուցում, բայց յուրաքանչյուրի կատարման մեջ կա մի կարեւոր նրբերանգ, ինչով էլ պայմանավորվում է երգի մեկնաբանությունը, որով էլ միմյանցից տարբերվում են: Այդ առումով պարտական ենք մեր երգիչ-երգչուհիներին, ովքեր ժամանակին բարձր մակարդակով «մեկնաբանել» են նրա երգերը:

Աշոտի արվեստի բովանդակային հետաքրքիր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ իր ժամանակի բոլոր կարեւոր իրադարձությունները կարծես թե արձագանքվել են նրա երգերում: Այս իմաստով իրավունք ունենք Գուսանին դիտել թե՛ իր ժամանակի մեջ, թե՛ իր ժամանակից դուրս: Իր ժամանակի մեջ դիտարկվում են այն երգերը, որոնք ստեղծվել են ժամանակի պահանջով, բայց հենց այդ երգերում էլ կան այնպիսիք, որոնք ճեղքել են ժամանակի սահմանները եւ դուրս հորդել: Անցյալ դարի կեսերին Հայրենական մեծ պատերազմի տարիներին գրված երգերից «Մարտիկի երգը» (խոսք՝ Գեղամ Սարյանի, երաժշտություն՝ Աշոտ Սաթյանի) մինչ օրս էլ պահպանում է իր արդիականությունը, հուզականությունը եւ հաճելի զգացումներ արթնացնում: Գուսանի երգերից «Արի մեկ տեսնեմ» երգը, որ Մուշեղ Հարությունյանն էր հրաշալի կատարում, վերջին ժամանակներս կարծեք էլ չի հնչում՝ չնայած հիշում եմ, որ իմ մանկության տարիներին ամենասիրված երգերից մեկն էր, եւ Հայրենական մեծ պատերազմից վերադարձած սերունդը, այդ թվում՝ նաեւ հայրս, հաճույքով էին լսում այդ երգերը. *«Իմ մայր Հայաստանի, մայր հողից ծնված,/Աննման գեղեցիկ, արի մեկ տեսնեմ,/Հայրենիքիս զով հովերով փայփայված,/Ծաղիկներից ծաղիկ, արի մեկ տեսնեմ./Արի մեկ տեսնեմ, կարոտս առնեմ,/Համբույրս, անուշ յար, համբույրիդ խառնեմ»:* Այս երգում շատ կարեւոր է հաջորդ տունը. *«Քո սիրուդ թեւերով շատ սարեր անցա,/ Շատ մարդ տեսա, սակայն քեզ չմոռացա,/Էլի ջերմ կարոտով քո գիրկը դարձա,/Աշխարհիս անուշիկ, արի մեկ տեսնեմ,/Արի մեկ տեսնեմ, կարոտս առնեմ,/Համբույրս, անուշ յար, համբույրիդ խառնեմ»:*

Աննման է Գուսան Աշոտի մեղեդիական աշխարհը, ինչը նրա արվեստի ամենամեծ առավելությունն է. ոչ մի մեղեդի նախ իր ստեղծագործության մեջ նման չէ մյուսին եւ երկրորդ՝ ընդհանրապես աշուղագուսանական արվեստի մեջ եւ ոչ մեկին նման չէ: Նա մեր ժողովրդի այն ազնիվ զավակներից է, ով ստեղծել է բազում երգեր, այն էլ՝ սրտալի երգեր: Եղիշե Չարենցը, ժամանակին դժգոհելով պրոլետ բանաստեղծներից, ասում էր. *«Հիմի շատ են երգիչները, սրտի ուզած խաղը չկա»,* բայց ահա Գուսանի երգերը հենց սրտի ուզած խաղեր են, երգեր: Մարդը տխուր է, ուրախ է, կարոտում է, ուզում է առանձնանալ կամ բնության գեղեցկությամբ հիանալ, լսում է նրա երգերը...

> *Մոտավորապես եթե այս սկզբունքով մոտենանք Գուսանի արվեստին, կարող ենք ասել, որ նա այն բացառիկ անհատականություններից է, ով Չարենցի ասած երգն է տվել ժողովրդին, որ այդ երգով անմահանա:*

Չարենցի՝ 1937թ. նոյեմբերին բանտից Ավետիք Իսահակյանին գրված վերջին բանաստեղծության մեջ կա հետեւյալ տողերը. *«Միրտդ կարող է վեհանալ,/Որ անսալով նրա սրտին՝/ Երգ ես տվել ժողովրդին,/Որ իր երգով անմահանա»:* Գուսան կամ աշուղ Աշոտն էլ հայ իրականության այն արվեստագետներից մեկն է, ով իր երգերով անմահացրել է մեր ժողովրդին եւ ինքն էլ անմահացել մեր ժողովրդի հետ միասին...

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՔԵԹՋՅԱՆ.

«Աշուղ Աշոտի երգերի մեղեդիներն անսահման սրտամոտ են, տեքստերը՝ բացառիկ գեղեցիկ»

Մխիթար Քեթջյանն աշուղ Աշոտի երգարվեստի նվիրյալներից եւ նրա երգերի կատարողներից է: Երաժիշտ-կատարողի հետ զրույցն աշուղ Աշոտի թողած ժառանգության եւ մասնավորապես նրա երգարվեստի մասին էր: Նախ՝ հետաքրքրվեցինք, թե ինչ տեղ են գրավում Աշոտի ստեղծագործությունները նրա երգացանկում: Իր երգացանկը ներառում է անցյալի եւ ժամանակակից աշուղների շատ ստեղծագործություններ, մասնավորապես, սիրով է կատարում աշուղ Աշոտի երգերը, քանզի դրանց մեղեդիներն անսահման սրտամոտ են, տեքստերը՝ բացառիկ գեղեցիկ:

Մխիթար Քեթջյանը ծնվել է 1972 թվականին Դիլիջանում: Ծնողները ծագումով Ջավախքից են՝ Գան-

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ձա գյուղից: Առաջին երաժշտական կրթությունը ստացել է Դիլիջանի երաժշտական յոթնամյա դպրոցի ջութակի դասարանում, տանը հարգի էր ժողովրդական երգը, հայրն ու մայրը երգում էին, որոշեց ուսումը շարունակել ժողովրդական երգի ասպարեզում, ուստի ավարտել է Վանաձորի Թավրիզյանի անվան երաժշտական ուսումնարանի քամանչայի դասարանը, իսկ 1996 թվականին Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ժողգործիքների բաժինը (քամանչա): 1994-ից ՀՀ հանրային ռադիոյի «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլում է՝ քամանահար եւ մեներգիչ: Աշուղական տաղաչափական կանոնների մեջ հմտացել է Ջիվանու անվան աշուղական դպրոցում: «Շանթ» հեռուստաընկերության «Ժողովրդական երգիչ» նախագծի գեղարվեստական ղեկավարն է եւ երգուսույցը: 2003-ին «Երբ կհոգնեմ, տարեք մեր Գանձան» երգով (խոսք՝ Վահան Տերյանի) մասնակցել է Սայաթ-Նովայի անվան համահայկական մրցանակաբաշխությանը եւ արժանացել առաջին մրցանակի: Նրա հայտնի երգերից են՝ «Իմ մայրիկ», «Խոսի՛ր, անգին»:

Աշուղ Աշոտի երգերից սիրում եւ հաճույքով է կատարում «Պախրա», «Ով դու գուսան», «Ով սուրբ մայրեր», հզոր երգ է համարում «Հուշարձաններ, հուշարձաններ» ստեղծագործությունը: Շատ սիրելի երգեր կան, հաստատում է ու վկայակոչում ստեղծագործողի «Պախրա» երգը.

«Մեր մով սարերում ամռան
առավոտ,
Մի պախրա տեսա կաթնաղբյուրի
մոտ,
Իջել էր ձորը մթին անտառից
Ու ջուր էր խմում զուլալ աղբյուրից»:

«Աշուղի երգերը բնության եւ մարդու հրաշալի ներդաշնակություն են», - ասում է եւ ավելացնում, թե ինչպես է ստեղծագործողն անձնավորել պախրային.

Իրեն տեսել էր ջրի հայելում,
Սարերի անուշ բույրն էր վայելում,
Արդյոք խմո՞ւմ էր, թե՞
համբուրում էր,
Իր տեսքով տարված՝ գուցե
հարբում էր:

«Աշուղ Աշոտի երգերն ինչո՞վ են տարբերվում մյուսներից», - երկրորդ հարցով ենք դիմում:

«Յուրաքանչյուր ռեգիոնի ինչպես բարբառները, երգերն էլ տարբեր են: Աշուղական երգին բնորոշ է կանոնիկ տաղաչափությունը: Աշոտը դուրս եկավ այդ տաղաչափական մտածողությունից, սկսեց ավելի ազատ ստեղծագործել, իր խոսքի մեջ ավելի ազատ եղավ, ինչն իր գեղեցիկ պտուղները տվեց: Նա գնաց դեպի պոեզիա, դեպի բանաստեղծություն: Նրա ստեղծագործությունները Սյունյաց բնաշխարհին բնորոշ բանաստեղծական են ու մեղեդիական են: Ինձ համար Աշոտի երգերն արժեքավոր են այնքանով, որ շատ կոմպոզիտորներ կերազեին այդպիսի մեղեդիներ գրել: Սա ասում եմ առանց վերապահության: Այս կարծիքը պատրաստ եմ ասել ամենալավ կոմպոզիտորների մոտ»:

«Ձեր կարծիքով ի՞նչը կնպաստի աշուղական արվեստի վերազարթոնքին», - սա հարց էր, որ անպատճառ պիտի տրվեր մեր զրույցի ընթացքում: *«Չեմ ուզում աշուղական արվեստը տարանջատել մեր ազգային երգարվեստից: Մեզ զարթոնք է անհրաժեշտ ոչ միայն աշուղական երգի ասպարեզում: Դրան հասնելու համար միանշանակ պիտի հզոր պետականություն ունենանք եւ նույնքան հզոր պետական այրեր՝ Գարեգին Նժդեհի գաղափարախոսությամբ: Նոր միայն զարթոնք կարելի է ակնկալել բոլոր բնագավառներում անխտիր: Հզոր երկիր եւ հզոր պետականություն՝ այլ ելք չունենք»:*

Իսկ, այնուամենայնիվ, աշուղական երգն իր տեղը չի՞ զիջում ցածրաճաշակ երաժշտությանը, որքան էլ չուզենանք, վերջինս արշավ է սկսել աշուղական զուլալ երգի դեմ, - շարունակում եմ մտահոգություն պարունակող հարցեր տալ: «Ասեմ, որ սա միայն մեր խնդիրը չէ, բոլոր ազգային փոքրամասնությունները կանգնած են գլոբալիզացիա (համաշխարհայնացում) կոչվող անտանելի վտանգի առջեւ: Բոլորը, անխտիր բոլորը: Երկիրը, մոլորակը գնում են դեպի միօրինակություն. գլոբալիզացիայի ակունքներից մեկը դա է, որ մարդուն ավելի հեշտ կառավարելու համար ոչնչացնում է ազգային տեսակները: Իսկ երկիրն ինչո՞վ է հետաքրքիր՝ իր բազմազանությամբ: Շատ կուզենայի, որ գլոբալիզացիայի դեմ պայքարում իր կարեւոր դերն ունենային մեր պետությունը, պետական օղակները: Մենք փոքր ժողովուրդ ենք, իրավունք չունենք մեզ շռայլություններ թույլ տալու, այլասիրությանը տուրք տալու, ուրիշ երգերի տակ պար գալու: Որովհետեւ դատապարտված ենք ապրելու մեր ազգային նյութի մեջ, ազգային մտածողության մեջ: Վտանգն անընդհատ կախված է մեր գլխին: Մենք պիտի հզորանանք մեր ազգային երգ-երաժշտությամբ, աշուղ Աշոտով պիտի հզորանանք»:

Տասը տարվա պատմություն ունի «Ժողովրդական երգիչ» նախագիծը, առաջին անգամ եթեր է հեռարձակվել 2007-ին, որ մեծ արձագանք ունեցավ, ընդամենն անցել է չորս եթերաշրջան: Մխիթար Քեթցյանը որպես երգուսույց նախագծի մասնակիցներին, որոնց տարիքը տատանվում է 17-ից 25-ի սահմաններում, հաղորդակից էր դարձնում աշուղական երգի նրբերանգներին եւ այբուբենին: Նրանց թիվն անցնում է վեց տասնյակից: Ոմանք արդեն ճանաչում ունեն: «Ժողովրդական երգիչ» նախագիծն ընդունվեց եւ սիրվեց հանրապետությունում եւ նրա սահմաններից դուրս: Ջրուցակիցս թվարկում է երգիչ-երգչուհիների անուններ, ովքեր հաղորդաժամին հնչեցրել են աշուղ Աշոտի երգերից՝ Եվա Եգանյան, ով ներշնչանքով կատարեց աշուղի «Ով դու գուսան» երգը, Եվա Թաշչյան, Արմեն Դավթյան, Պետրոս Պետրոսյան, Հայկուհի Բաբախանյան, Սեւակ Ամրոյան, ուրիշներ:

Կարծում է, որ «Ժողովրդական երգիչ» նախագծից հետո շատ բան փոխվեց մեր երաժշտամտածողության եւ երաժշտական ճաշակի մեջ:

- Իսկ հիմ երգիչներին փոխարինելո՞ւ է գալիս նոր սերունդ, թե՞ հայ երգարվեստում սերնդափոխության խնդիր է ծառացած: «Տաղանդավոր երիտասարդներ շատ կան: Օֆելյա Համբարձումյանի հետ էլ երկար զրուցում էինք այդ առիթով: Շատ ոգեւորված էր հանրաճանաչ երգչուհին, ասում էր՝ չքնաղ երիտասարդություն

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ունենք, ի՜նչ լավ են երգում մեր երգերը: Կարեւորը՝ ժողովրդական արվեստը պահել է պետք, նաեւ փոխանցել եկող սերնդին: Իսկ արժանավոր երեխաներ շատ կան, ովքեր շարունակելու են աշուղական արվեստը»:

Ի հեճուկս որոշ թերահավատների, թե մեր ժամանակներում երիտասարդներն անտարբեր են, ծույլ, տրված են համացանցին, Մ.Քեթցյանն այն համոզմունքն ունի, որ հիմա ավելի խելացի սերունդ է մեծանում, նաեւ տարեցներից է շատ բան կախված, որ նրանց դաստիարակեն, ճիշտ ուղու վրա դնեն»: Բացառված է ազգային հենքի վրա մեծացած երիտասարդը վատ մարդ դառնա: Ժողովրդական երգ երգող, Ջիվանու, աշուղ Աշոտի երգերը կատարող աղջիկը կամ պատանին չեն կարող վատ մարդ դառնալ:

Աշուղ Աշոտի երգերը բռնել են ժամանակի քննությունը: Բայց կան երգեր, որոնք թիթեռի կյանք ունեն: «Երգն առհասարակ երկու թեւ ունի՝ խոսք եւ մեղեդի: Վատ տեքստի վրա չի կարող լավ երգ ծնվել: Եվ ընդհանրապես եթե մի թեւը թույլ է՝ կամ խոսքը, կամ մեղեդին, երգը կյանք չունի: Խոսքը լուրջ կոմպոզիտորների մասին է՝ Խաչատուր Ավետիսյան, Վլադիլեն Բալյան, Ալեքսեյ Հեքիմյան, որոնց երգերի տեքստերը մեծամասամբ հայ դասական բանաստեղծների ստեծագործություններն են: Եթե լավ տեքստ լինի, դրա հիման վրա կարելի է լավ մեղեդի ստեղծել, իհարկե, դա կախված է կոմպոզիտորի տաղանդից եւ ձիրքից»:

Ապրիլի 25-ին լրացավ աշուղ Աշոտի ծննդյան 110-ամյակը: Ինչ-որ միջոցառում նախապատրաստո՞ւմ են հոբելյանի առիթով. «Երանի այնքան հնարավորություն ունենայի, որ կարողանայի ինչ-որ բան նախաձեռնել, կյանքի կոչել: Անպատճառ կնախաձեռնենք, սա ասում եմ ամենայն պատասխանատվությամբ: Կամ էլ եթե ինչ-որ միջոցառում նվիրվի եւ կազմակերպվի աշուղ Աշոտի 110-րդ տարեդարձին, հրավեր ունենամ, մեծ սիրով կմասնակցեմ, որովհետեւ շատ եմ սիրում աշուղ Աշոտի երգերը, արվեստն առհասարակ»:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԼԵՎՈՆ ԳԱԼՍՏՅԱՆ.
«Աշուղ Աշոտի ստեղծագործությունները լսելով՝ նորից ինձ համար վերագտա այդ լեռնաշխարհը»

Հարցազրույց «Երգ երգոց» հաղորդաշարի խմբագիր եւ սցենարի հեղինակ Լեւոն Գալստյանի հետ

–Պարոն Գալստյան, ի՞նչ ուղղվածություն ունի «Երգ երգոց» հաղորդաշարը:

– Նախ ուզում եմ մեզ բոլորիս հիշեցնել Չարենցի տողը՝ հայացքս հառած անցյալին, ապագայի նժույգը նստած: Անցյալը մեզ պետք է այսօրվա եւ վաղվա համար, ոչ թե պարզապես խնկարկելու եւ որպես թանգարան մուտք գործելու համար: Անցյալը մեզ պետք է, որ այդ ուժն օգտագործենք, վերադարձնենք մեզ, որպեսզի ավելի կենսունակ լինենք, ավելի արդյունավետ գործունեություն ծավալենք: Որպեսզի այդ հարստությունն օգտագործելով՝ կարողանանք ավելի որակյալ մշակույթ կերտել, ոչ թե անգիտության մեջ խարխափել՝ տուրք տալով միայն օտար հովերին, մտածելով, թե միայն օտար հնչյունների, օտար ձեւերի մեջ պիտի փնտրենք մեր հետագա զարգացման ուղին:

Ինչո՞ւ եմ սա ասում: Որովհետեւ հատկապես երիտասարդությունն անտեղյակ ու անհաղորդ է մեր երգային ստեղծագործությանը, այն հսկայական ժառանգությունը, որ յոթ տարի է, ինչ հեռարձակում է «Երգ երգոց» հաղորդաշարը, չի սպառվում: Ինչո՞ւ եմ սա ուրախությամբ նշում, որովհետեւ դեռ ինչքան նյութ կա, որքան երգեր կան, որ դեռ չեն հնչել: Այդ հարստությանը կնախանձի ամեն մի ժողովուրդ: Հիմա մենք դա ունենք: Ինչո՞ւ զրկենք մեզ վերհիշելու այդ ամենը եւ ինչո՞ւ երեխաներին, հատկապես երիտասարդներին, չտեղեկացնենք այդ հարստությանը: Որպեսզի երգիչների երգացանկը փոխվի,

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ԱՅՑԵՔԱՐՏ

Լեւոն Գալստյան, ծնվել է 1963 թվականին Երեւանում: Սովորել է Մ.Գորկու անվան N4 միջնակարգ դպրոցում: 1990 թվականին ավարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության բաժինը: 1983-1985թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1987-1991թթ. աշխատել է ՀԽՍՀ ժողստեղծագործության եւ կուլտմասսայական աշխատանքների հանրապետական գիտամեթոդական կենտրոնում՝ գիտաշխատող, այնուհետեւ՝ կենտրոնի գիտական քարտուղար: 1991-1992թթ. հեռուստառադիոպետկոմի համակարգում էր՝ նախ գիտահանրամատչելի եւ ուսումնական հաղորդումների գլխավոր խմբագիր, այնուհետեւ «Արտավազդ» ստեղծագործական միավորման փոխտնօրեն: 1992-1997թթ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության համակարգող բաժնի վարիչն էր: 1997-1998թթ. եղել է կրթության եւ գիտության փոխնախարար, 1998-2004 թվականներին՝ ՀՀ լեզվի պետական տեսչության պետ: 2004-2012 թվականներին տարբեր պաշտոններ է վարել հեռուստատեսության եւ ռադիոյի բնագավառներում. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահի խորհրդական, Հանրային ռադիոյի գլխավոր պրոդյուսեր, Հանրային հեռուստաընկերության «Երեւան» ստուդիայի ղեկավար, Հանրային հեռուստաընկերության գլխավոր խմբագիր: 2013 թվականից Երեւանի պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչն է: Անկուսակցական է: Ամուսնացած է, ունի երկու դուստր:

երիտասարդ երաժիշտներն իմանան, որ այդպիսի հարստություն կա: Դա կրթություն է, չէ՞, իմացություն է: Իսկ կրթությունը միայն լսարանում չէ:

– Ինչպե՞ս հղացավ նման հաղորդաշար ստեղծելու գաղափարը:

– Այն հարթակը, որ կոչվում է հեռուստատեսություն, մենք շատ խելամիտ պիտի օգտագործենք: Ահա այս նպատակներով էլ 2010 թվականին ծնվեց «Երգ երգոցը»: Այս գործը ձեռնարկել է այն ժամանակ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Ալեքսան Հարությունյանը, սկսել ռեժիսոր Հրաչ Քեշիշյանի հետ՝ ինձ անմիջապես ներգրավելով գործի մեջ: Սիրով մասնակցեցի, ինքս երաժշտագետ չեմ. բանասեր եմ, բայց ի՞նչ, պիտի թեւքերս քշտեի եւ անցնեի գործի, այսինքն՝ նաեւ խորամուխ լինեի երաժշտական գիտելիքների մեջ, իրազեկ լինեի երաժշտագիտության ասպարեզին: Ինչ ասեմ, տնտղեցինք, ուսումնասիրեցինք, զննեցինք, այն, ինչ պակաս էր, թերի էր հրատարակություններում, փորձեցինք մեր կողքին ապրող վարպետներից ճշտել, անհրաժեշտության դեպքում, օրինակ, զանգահարել Մարտին Վարդազարյանին, Ռուբեն Մաթեւոսյանին, այն ժամանակ Օֆելյա Համբարձումյանին եւ այլոց, նաեւ այն մարդկանց, ովքեր կարող էին խորհուրդ տալ, ուղղորդել եւ այլն: Նրանց ես շնորհակալ եմ:

– Երգացանկային ի՞նչ քաղաքականություն է վարում հաղորդաշարը:

– Հաղորդաշարի թեման հայ երգն է՝ սկսած միջնադարյան տաղերից մինչեւ 80-ականների վերջի հեղինակային երգը: Առանձին հաղորդումներ են նվիրվում հայ անվանի կոմպոզիտորներին եւ նրանց երգային ստեղծագործությանը, զանազան հոբելյանական առիթներով հնչում են սիրված երգեր: Հանրապետության շնորհալի երգիչների կատարումներին զուգահեռ հատուկ պատրաստված ժամանակագրական տեսաֆիլմերով ներկայացվում է տվյալ երգի կամ հեղինակի ժամանակաշրջանի սոցիալական-քաղաքական-տնտեսական համատեքստը՝ հաղորդումը օժտելով նաեւ ճանաչողական ոչ պակաս կարեւոր գործառույթով: Հաղորդման բովանդակային նյութին համապատասխան հրավիրվում են հյուրեր, ովքեր իրենց մեկնաբանություններով եւ հուշերով ամբողջացնում են տվյալ թեման:

– «Երգ երգոցը» մի ամբողջական հաղորդում նվիրեց աշուղ Աշոտին, որ լավ ընդունվեց Սյունիքում, կուզեի այդ մասին պատմեիք: Ինչպե՞ս հղացավ այդ հաղորդման գաղափարը:

– Հաղորդաշարը խնդիր էր դրել նաեւ անդրադառնալ բոլոր նշանավոր աշուղներին: Սյունյաց աշխարհի, բնաշխարհի հոգեւոր, մշակութային կերպարը հարստացավ, ամբողջացավ աշուղ Աշոտի փառահեղ ստեղծագործությամբ, որ տասնամյակներ շարունակ հնչում էր բեմերից, հաղորդվում էր ռադիոյով մեր նշանավոր երգիչների կատարմամբ: Բայց, ցավոք, ինչ-որ մի ժամանակահատվածում լռություն էր, չկար, երիտասարդները տեղյակ չէին:

Եվ մենք ահա մեջտեղ ենք բերում մեր մոռացված արժեքները ե՛ւ սփյուռքում ապրող մեր հայրենակիցների, ե՛ւ Հայաստանի բնակչության համար, ուզում ենք նախ հիշեցնել, հետո պարզաբանել: Եվ բնական է՝ սյունեցիների արձագանքը պիտի ջերմ լիներ: Ինձ համար աշուղ Աշոտը հետաքրքիր է իր անսահման սյունեցիությամբ, նրա ամբողջ ստեղծագործությունը շնչում է իր բնաշխարհով: Աշուղի երգերը լսելով՝ կարելի է չլինել Սյունիքում եւ տեսնել այն: Աշոտի ստեղծագործությունը խորն է...

– Կխնդրեինք անդրադառնալ աշուղ Աշոտի լեզվական արվեստին, որ, ցավոք, ուսումնասիրված եւ գնահատված չէ:

– Հատկապես ուզում եմ նշել նրա լեզվի մասին: Աշուղական արվեստում, իհարկե, հայոց լեզվի վարկը բարձրացրեց հայ աշուղական դպրոցի հիմնադիր Ջիվանին: Եվ Աշոտն այդ նոր մշակույթի փայլուն ներկայացուցիչ է: Հրաշալի է նրա լեզուն, որ շատ կարեւոր է, մենք հայերեն մաքուր, գեղեցիկ, կենդանի, շնչող, ապրող հայերեն ենք լսում: Մենք լավ գիտեք, որ աշուղական արվեստում որքան կարեւոր է տեքստը, որքան կարեւոր է ասելիքը: Բացի զուտ աշուղական լադի վրա ստեղծված իր ստեղծագոր-

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ծություններից, նա նաեւ բանաստեղծ-աշուղ էր: Սա ուզում եմ հատկապես ընդգծել: «Հուշարձաններ-հուշարձաններ» երգը, որ ժամանակին Ռաֆֆի Հովհաննիսյանն էր երգում: Ինչ-որ մի շատ նվիրական առիթով՝ Հայրենական մեծ պատերազմում նահատակված ու ռազմի դաշտից չվերադարձած զինվորների հիշատակին է նվիրված այս երգը: Եվ ինչպիսի երգ, զարմանալի բան է, ե՛ւ պաթոս կա երգի մեջ, ե՛ւ խրոխտություն կա, ե՛ւ այդքան նրբություն կա: Ինչ-որ զարմանալի զուգակցում կա: Այդքան նրբագեղ ներքուստ եւ այդքան խրոխտ. դա հազվադեպ բան է, որովհետեւ սովորաբար որեւէ կողմն է միշտ թանձր գույներով լինում եւ ստվերում մյուս կողմը: Իսկ նրա երգերում շատ ներդաշնակ են ե՛ւ միտքը, ե՛ւ հույզը: Ես սյունեցի չեմ, նրա ստեղծագործությունները մեկ անգամ եւս լսելով, խորանալով, նորից ինձ համար վերագտա այդ լեռնաշխարհը:

– Պարոն Գալստյան, աշուղ Աշոտի ստեղծագործությունը որքանո՞վ է ներկայացված հանրությանը, որովհետեւ ասում են՝ նրա վերջին տարիների ստեղծագործություններն այդքան էլ չեն պրոպագանդվում, ի՞նչ կասեք այդ առումով:

– Մենք ոչ միայն մեկ հաղորդմամբ ենք անդրադարձել Աշոտին, հիմա չեմ հիշում, մեկ թե երկու, այս պահին սկսեցի տարակուսել: Ինչեւէ, երեւի տասը-տասնհինգ հաղորդումների ժամանակ առնվազն հնչել են նրա երգերը: Անդրադարձել ենք, երբեմն նաեւ տեքստով ենք անդրադարձել: Էլ չեմ ասում՝ որքան շատ են հնչում նրա երգերը մեր հաղորդումներում եւ պիտի դեռ հնչեն: Առիթը բաց չենք թողնում անդրադառնալու Աշոտին: Նա մշտապես ներկա է մեր հաղորդումներում: Դա հպարտությամբ եմ ասում:

– Որպես մտավորական, բանաստեղծ, նրա երգերից ո՞րը կառանձնացնեիք, որ հոգեհարազատ է ձեզ:

– «Սարի սիրուն յարը»: Ընդհանրապես սիրերգությունն ու փառաբանությունն ամեն մարդու խելքի բան չեն, ունենք միջնադարյան հրաշք պոեզիան, վերջապես Սայաթ-Նովայի սիրերգությունը, Կոնստանդին Երզնկացուց, Թլկուրանցուց, Քուչակից եկող սիրերգության մի փառահեղ ավանդույթ, որ ընդհանրապես իր բարձրակետին հասավ Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ: Այդ շարքում Աշոտի սիրերգությունը կարելի է նշել, որովհետեւ սիրերգությունը կամ պիտի հանճարեղ լինի, կամ ընդհանրապես չլինի: Քանզի դա շատ վտանգավոր ժանր է: Փառաբանել կարող է միայն հոգեւոր շատ մեծ լիցքեր ունեցող, շատ հզոր հեղինակը, ստեղծագործողը:

> *Ցավոք, այսօր գրեթե փառաբանություն չկա, նայեք ժամանակակից երգարվեստին, երգերին, ստեղծագործություններին, շատ քիչ են կամ եթե կան. ինչ-որ «քիմիական» բաներ են, բնական չեն, զգացողությունների հիմքերը բնաշխարհիկ չեն, հողից կտրված են: Իսկ Աշոտը կարծես իր հայրենիքն է երգում, կամ սիրած կնոջ մեջ էլ հայրենիք կա: Այդպիսին է Աշոտի ստեղծագործությունը:*

– Երգարվեստին վերաբերվող մի հարց էլ եմ ուզում տալ: Երգեր կան, որոնց երաժշտությունն ու խոսքերը նույն մարդն է գրել: Որքանո՞վ է դա ընդունելի:

– Եթե լավն է, ընդունելի է: Եթե լավը չէ, ուրեմն լավ չէ: Չեմ կարծում, որ խիստ պահանջներ պիտի դնել: Ինչպես մեր հանճարեղ գուսանները եւ աշուղները: Նրանք ե՛ւ խոսքի, ե՛ւ մեղեդու հեղինակներ են, նաեւ շատերը կատարել են իրենց ստեղծագործությունները: Բայց ինչ ասեմ՝ Աստծունը՝ Աստծուն, Կեսարինը՝ Կեսարին: Պետք է շատ ուշադիր լինել այս դեպքում: Օրինակ, հեղինակային երգի ասպարեզում ոչ բոլորը կարող են Ռուբեն Հախվերդյան լինել կամ Արթուր Մեսչյան: Սա մեծ պատասխանատվություն է: Իսկ եթե մեկը փորձում է եւ կարողանում է, ընդամենը պիտի ողջունենք: Բայց ինչ-որ ես էլ առանձնապես չեմ տեսնում նման ստեղծագործողների, չեմ լսում նման երգեր: Իսկ սկզբունքորեն շատ հանգիստ եմ նայում, երբ երգիչը երգի տեքստեր է գրում: Օրինակ, Դավիթ Ամալյանն ունի փայլուն երգեր, նա երգող բանաստեղծ է: Վերջերս էլ մի հաղորդում ներկայացրեցինք բարդերի մասին, այսինքն՝ հեղինակային երգ կատարողների: Նրանց մասին խոսելիս միշտ ընդգծում եմ՝ երգող բանաստեղծներ: Բանաստեղծները պարզապես խոսքը ներկայացնում են մեղեդիով, որոնցից շատերը հրաշալի մեղեդիներ են, բայց էականը, առաջին պլանում խոսքն է, ասելիքը, նրանք բանաստեղծներ են, որոնք զրուցում են աշխարհի հետ, ժողովրդի հետ, ընդ որում՝ ոչ այնքան արտիստներ են, որքան լավ իմաստով ասած՝ հոգեւոր «սադրիչներ», նրանք ցնցում են մարդկանց հոգեւոր աշխարհը, նրանք չեն ուզում դուր գալ, չեն ուզում տպավորություն թողնել, նրանք ունեն մեկ խնդիր. բան են ասում հասարակությանը, իրենց հոգսը, իրենց քաղաքացիական, մարդկային սոցիալական, երբեմն նաեւ քաղաքական մտահոգությունները պարզապես փոխանցում են մարդկանց: Բարձրաձայն մենախոսում են, որ մյուսներն էլ լսեն:

– Ահագին բան ասվեց, բայց աշուղ Աշոտի երգարվեստի մասին էլ ի՞նչ կավելացնեիք ասվածին:

– Կավելացնեի հետեւյալը, որ ինչպես վստահ եմ՝ հենց այսօր, իհարկե, միջին եւ ավագ սերնդի գերակշռող մասը՝ մի հսկա լսարան սիրում է նրա երգերը եւ սիրելու է: Հիմա ավելի համարձակ բան ասեմ. Աշոտն ապրելու է, քանզի նրա երգերը ապրելու են, սրանում ես վստահ եմ, դա միայն ցանկություն չէ, նա միանշանակ ապրելու է:

– Ձեր խոսքը Աշոտի 110-ամյակի առթիվ:

– Ավելի շատ կուզեի, որ հատկապես սյունեցի երիտասարդությունն ուր էլ լինի, ինչ հաջողության էլ հասնի կյանքում, աշխարհի որ ծագում էլ լինի, հպարտությամբ արտասանի այս անունը, ասի՝ մենք ունենք մի հանճարեղ բանաստեղծ, երգահան, աշուղ, մեր բնաշխարհից, մեր երկրից, Սյունյաց աշխարհից մեկը, ով խտացրել է իր երգերում այն լույսը, այն արեւը, որ կարող ես գտնել միայն Սյունյաց լեռներում:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով



Աշուղ Աշոտին եւ Թաթուլ Ալթունյանին մեծ բարեկամություն էր կապում

Հարցազրույց Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական վաստակավոր համույթի գեղարվեստական ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ժիրայր Ալթունյանի հետ

-Մեր անսամբլում աշուղ Աշոտն ամենաշատ ներկայացված արվեստագետն էր, որովհետեւ նրա երգերի մեղեդայնությունը, որակը շատ համահունչ էին անսամբլի ոճին ու ոգուն, – փաստում է Ժիրայր Ալթունյանը: Ընկերական, բարեկամական մեծ կապ էր կապում աշուղ Աշոտին եւ իր հորը՝ հայտնի խմբավար, մանկավարժ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Թաթուլ Ալթունյանին: Բնականաբար անմոռանալի հուշեր են կապված երկու հայտնի արվեստագետների հետ:

«Ամեն տարվա ձմեռնամուտին, - պատմում է Ժիրայր Ալթունյանը, - աշուղ Աշոտը մի շրջանակ մեղր թեւատակին, մի «շտոֆ» Քարահունջի օղի ձեռքին գալիս էր մեր տուն: Մտնում էր հայրիկի առանձնասենյակը, եւ սկսվում էր հաշվետվություն մի տարվա կատարված աշխատանքի մասին: Աշուղը ձեռքն էր առնում քամանչան, իր նոր երգն էր կատարում: Արանքում էլ մեղրն էին ճաշակում օղիով, մայրս էլ երբեմն միջամտում էր՝ հրավիրելով ճաշի, երկուսն էլ հրաժարվում էին, որովհետեւ ստեղծագործական պահն իրենց համար ավելի կարեւոր էր: Եվ այդպես ընտրվում էր մեկ կամ երկու ստեղծագործություն, որոնք բնորոշ էին երգի-պարի անսամբլի երգացանկին, ծրագրային ուղղվածությանը: Սա հատկապես եմ նշում, քանզի Թաթուլ Ալթունյանը շատ լավ ընտրում էր աշուղական երգի այն տեսակը, որ կարելի էր երգչախմբով հարստացնել, ժողգործիքների միջոցով ավելի արտահայտիչ դարձնել, մանավանդ աշուղի ստեղծագործությունը: Շատ անգամ, երբ Աշոտը լսում էր իր ստեղծած երգը, զարմանում էր. «Թաթուլ ջան, էս ե՞ս եմ գրել»: Հորս պատասխանը չէր ուշանում. «Բա ոնց, դու ես գրել, բայց կողքից որոշ շտկումներ ենք կատարել»:

Ժիրայր Ալթունյանն ասում է, որ անձնական մեծ հպարտություն է ապրում, որ ներկա է եղել հոր եւ աշուղ Աշոտի հանդիպումներին, թեեւ տակավին պատանի էր: Իր մեջ տպավորվել են աշուղի խոշոր մարմինը, բարի ժպիտը, միշտ իրեն եւ եղբայրներին (երեք եղբայր էին) դիմում էր՝ ախպոր տղա: «Հայֆիլհարմոնիայում տեսնում էր, թե՝ ախպոր տղա, ո՞նց ես... Հիշողություններս պիտի ավարտեմ նրանով, որ հորս մահանալուց հետո (1971 թվական, նոյեմբերի 29) մի ծավալուն բանաստեղծություն գրեց Թաթուլ Ալթունյանի հիշատակին: Գուցե դա աշուղի անձնական արխիվում պահպանվում է, եթե հետաքրքրվեք, գտնեք, շատ լավ կլինի: Հիշում եմ՝ եկավ մեր տուն, սփոփանքի խոսքեր ասաց, հետո բոլորիս համար կարդաց բանաստեղծությունը, շատ հուզվեցինք: Դրանով ավարտվեց Թաթուլ Ալթունյանի եւ աշուղ Աշոտի բարեկամությունը: Դա մեծ բարեկամություն էր»:

Այդ բարեկամության շնորհիվ երգի-պարի անսամբլի երգացանկը հարստացավ այնպիսի ստեղծագործություններով, ինչպիսիք են «Սյունյաց սարերը», որ առաջին անգամ անսամբլում հնչեցրեց ՀՀ վաստակավոր արտիստ Վաղարշակ Մամիկոնյանը, «Սարի սիրուն յարը», որ պարերգով ներկայացնում էր Լուսիկ Քոչյանը, այլ երգեր՝ «Սերս վանքում

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

Տաթեւի», «Ջով արեք», էլի շատ ու շատ երգեր: Ընդունված կարգ էր՝ երեք տարին մեկ անսամբլի նոր ծրագիր էր պատրաստվում, եւ միշտ դրանում ներառվում էին աշուղ Աշոտի ստեղծագործություններից: «Երգի-պարի անսամբլի մենակատարները ժամանակին եղել են Հայաստանի լավագույն երգիչ կատարողները: Հովհաննես Բաղալյանն իր գործունեությունն է սկսել անսամբլում, հանդես են եկել այլ հայտնի երգիչներ՝ Անժելա Շահնաբադյանը, Վաղարշակ Մամիկոնյանը, Վարդուհի Խաչատրյանը, Լուսիկ Քոշյանը, Թովմաս Պողոսյանը եւս իր գործունեությունն է սկսել երգի-պարի անսամբլից, Ալբերտ Սարգսյանը: Նոր սերունդ է գալիս», - պատմում է Ժիրայր Ալթունյանը:

Թաքուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական վաստակավոր համույթի հիմնադրման տարեթիվը 1938 թվականի մարտի 5-ն է, այն յուրահատուկ ազգային ժանրով իր նախատիպը չուներ ոչ միայն Հայաստանում, այլեւ Խորհրդային Միության ողջ տարածքում: Նույն թվականին անսամբլը փայլուն ելույթ ունեցավ Մոսկվայում տեղի ունեցած հայ մշակույթի տասնօրյակի ժամանակ: Իր գոյության ընթացքում մոտ 300 ստեղծագործություն է բեմադրել Թաքուլ Ալթունյանը: Իբրեւ հարգանքի տուրք անսամբլը կրում է իր հիմնադրի եւ առաջին ղեկավարի անունը: Վաստակավոր անսամբլը բազմաթիվ արտասահմանյան շրջագայություններ է ունեցել՝ Մերձավոր արեւելքի եւ եվրոպական երկրներում, ինչպես նաեւ Կանադա, Ավստրալիա, Չինաստան, այլուր, ոչ միայն պրոպագանդել է հայ երգարվեստը, այլեւ հայկական գաղթավայրերում նպաստել տեղի ինքնագործ խմբերի կատարողական վարպետության բարձրացմանը: Դե իհարկե, ամենուր հնչել են աշուղ Աշոտի երգերը, որոնք անպակաս էին անսամբլի երգացանկից:

Ստեղծագործական երկար տարիների ընթացքում համույթի ղեկավարումը ստանձնեցին մարդիկ, ովքեր լծվեցին անսամբլի նորացմանը, բարեփոխումներին՝ պահպանելով ալթունյանական մշակույթի ժառանգությունը, անսամբլի ազգային դիմագիծը՝ համերգային ծրագրի մեջ ներգրավելով երաժշտական, թատերականացված, էպիկական շնչով համարներ: Հայաստանի երգի-պարի անսամբլի օրինակով տարբեր հանրապետություններում ստեղծվեցին նմանատիպ անսամբլներ: 1970 թվականից անսամբլի գեղարվեստական ղեկավարի պաշտոնը ստանձնեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Էդգար Հովհաննիսյանը, նրանից հետո՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Խաչատուր Ավետիսյանը, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Էմմա Ծատուրյանը, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Ռուբեն Ալթունյանը, արվեստի վաստակավոր գործիչ Մելիք Մավիսակալյանը եւ դիրիժոր-խմբավար Հանրի Մանգասարյանը՝ մեկը մեկից հնչեղ ու հայտնի անուններ:

2004 թվականից մինչեւ օրս համույթի գեղարվեստական ղեկավարն է Ժիրայր Ալթունյանը: Ծնվել է 1946 թվականին, երաժշտական կրթություն ստացել (Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի ութերորդ դասարան, Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան): Բարձրագույն կրթություն է ստացել Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի խմբավարական բաժնում, որ Թաքուլ Ալթունյանն էր հիմնադրել, հոր ձեռքի տակ էլ բարձրագույն կրթություն է ստացել: Բանակից զորացրվելուց հետո՝ 1974 թվականին, Խաչատուր Ավետիսյանի հրավերով եկել է երգի-պարի անսամբլ, որտեղ անցել է ստեղծագործական բոլոր աստիճաններով մինչեւ անսամբլի գեղարվեստական ղեկավար: Ժիրայր Ալթունյանը պատմում է, որ Հայաստանի անկախությունից հետո հրավերներ է ստացել Սիրիայից, Պարսկաստանից՝ երգչախմբեր ղեկավարելու: Ղեկավարել է Դամասկոսի հայ համայնքի «Քնար», Հալեպի «Սպենդիարով», Թեհրանի «Արարատ» երգչախմբերը: «Գնում էի երկու-երեք ամսով, ծրագիր պատրաստում, վերադառնում, բեմադրել եմ 200-ից ավելի ստեղծագործություն»:

Պատեհ առիթ էր իմանալու, թե սփյուռքահայ ունկնդրի կողմից ինչպես են ընդունվել աշուղ Աշոտի երգերը: «Սփյուռքահայ ունկնդիրը միշտ սիրել է Աշոտի գործերը, որոնք Ալթունյանի ղեկավարման ժամանակաշրջանից ի վեր անսամբլի երգացանկում են եղել: Այդ գործերը լավ եմ հիշում, որովհետեւ անսամբլի երգացանկերում էր, միշտ հնչել են: Օտարազգի ունկնդիրը, ով ոչ տեքստն է հասկանում, ոչ երաժշտությունն էր հարազատ, ջերմությամբ էր արձագանքում աշուղ Աշոտի երգերին, հավանաբար դուր էր գալիս դրանց տոնայնությունը»:

Ժիրայր Ալթունյանը նաեւ նկատեց, որ խորհրդային տարիներին կարեւոր էր, թե ուր էիր տանում եւ ինչ ստեղծագործություն: Հիշում է, որ երգի-պարի անսամբլում առաջին անգամ բեմադրվեց «Սասունցիների պարը», արգելեցին հետագա կատարումը: Հետաքրքվեցինք, թե որն է պատճառը: Հիմնավորումն ավելի քան զավեշտական էր՝ դաշնակցական պար է: Սասունցիների տարազն ու ազգային պարեղանակն ընկալվում էին որպես ազգայնականության դրսեւորում: «Էս ինչ դաշնակցական գործ եք բերել, մտցրել ծրագրի մեջ», - կշտամբեցին: Նայեք, թե ուր էինք հասել: Փառք Աստծո, այդ ամենից հիմա ձերբազատվել ենք, հիմա բեմադրում ենք այն, ինչ հարմար ենք գտնում, ինչ կարելի է ներկայացնել ժողովրդին», - պարզաբանում է զրուցակիցս, նաեւ նկատում, որ այսօր հայ երգարվեստում որոշակի քաոս է տիրում, մանավանդ ջահել սերնդի երգիչները երբեմն չեն տարբերում, թե երգերից որն է ժողովրդականը, որը՝ հեղինակայինը...

Ինչ վերաբերում է աշուղ Աշոտի 110-ամյակին, անսամբլի գեղարվեստական ղեկավարից հետաքրքրվեցինք, թե ինչ ձեւով Թաքուլ Ալթունյանի անվան երգի-պարի վաստակավոր անսամբլը կուզեր անդրադառնալ հոբելյանին: Եթե կազմակերպվեր փառատոն կամ տասնօրյակ՝ նվիրված աշուղի 110-ամյա տարեդարձին, հաճույքով կգային եւ համերգ կտային Գորիսում, եթե, բնականաբար, լուծվեին անսամբլի ճանապարհածախսի եւ գիշերելու հարցերը: Նաեւ հավելում է, որ աշուղ Աշոտի հետ հուշեր կան կապված...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ԳԱԳԻԿ ՄԱՆԱՍՅԱՆ.
«Թուրքերը Հայաստանի, հայ ժողովրդի հոգեւոր, մտավոր աշխարհը 400-500 տարում այնպես չեն փչացրել, ինչպես մեր հեռուստատեսություններն այս 25 տարում»

Հարցազրույց Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գագիկ Մանասյանի հետ

– Պարո՛ն Մանասյան, համառոտ ներկայացրեք Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի հիմնական գործառույթները:

– Հայաստանի պետական ֆիլհարմոնիան, լինելով միակ պետական համերգահյուրախաղային կազմակերպությունը, իր գործունեության գերակայությունը համարում է ազգային, համաշխարհային դասական ու ժամանակակից երաժշտական ստեղծագործությունների եւ կատարողական արվեստի նկատմամբ հանրության պահանջների ձեւավորումը, բավարարումը եւ քարոզչությունը: Բացի համերգային, հյուրախաղային ծրագրերից՝ իրականացնում է նաեւ պետական արարողակարգային միջոցառումներ (անվանի մարդկանց թաղման արարողությունների կազմակերպում) . պատկերավոր ասած՝ մեր մի աչքը ծիծաղում է, մյուսը՝ լացում:

– Քանի որ Գուսան Աշոտի 110-ամյակի շրջանակներում ենք վարում հարցազրույցը, հետաքրքիր է՝ համերգային ծրագրերում որքանո՞վ եք ներառում նրա երգերից, եւ առհասարակ ինչպե՞ս է մշակվում երգացանկը:

– Ֆիլհարմոնիան կազմակերպում է մի քանի տեսակի համերգներ՝ կախված դրանց ժանրերից, ինչպես նաեւ նրանից, թե ում է հասցեագրված: Առհասարակ համերգային ծրագրերի անցկացման մի քանի տարբերակով ենք աշխատում՝ կա՛մ մշակույթի նախարարության, կա՛մ ֆիլհարմոնիայի, որ ավելի հաճախ է լինում, կա՛մ էլ հովանավորների միջոցներով: Ի դեպ, Հայաստանում այդ վերջին ինստիտուտը գրեթե չի գործում: Իսկ ընդհանրապես երգացանկի ընտրության երկու տարբերակ կա՝ պայմանավորված թեմատիկ բովանդակությամբ: Կա՛մ համերգներում ընդգրկում ենք այն մարդկանց, որոնց երգացանկում արդեն իսկ մեզ անհրաժեշտ երգերը կան, կամ էլ՝ մեր առաջարկությամբ կամ պատվերով են կատարում տվյալ երգը: Այնպես որ՝ համերգային ծրագրերը սիրողական մակարդակով չեն կազմակերպվում: Ինչ վերաբերում է Գուսան Աշոտին, ապա նրա երգերը գրեթե միշտ տեղ են գտնում մեր համերգային ծրագրերում:

Արդեն տեւական ժամանակ գործող «Դպրոցականի ֆիլհարմոնիա» ծրագրի շրջանակներում դաս-համերգներ են նվիրվում նաեւ Գուսան Աշոտին: «Դպրոցականի ֆիլհարմոնիայի» նպատակն է ճանաչողական, բացատրական թեմատիկ դաս-համերգների միջոցով նպաստել երեխաների գեղագիտական դաստիարակությանը եւ բարձրաճաշակ ու գրագետ ունկնդրի ձեւավորմանը: 45 րոպե տեւողությամբ դաս-համերգների ընթացքում բանախոսը՝ ուսուցիչը, ներկայացնում, բացատրում, պարզաբանում, վերլուծում է անվանի կոմպոզիտորների, գրողների կյանքն ու ստեղծագործական

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ուղին, ապրած ժամանակաշրջանը: Ներկայացվում են նաեւ երաժշտական գործիքներ, երաժշտական տարբեր ժանրեր, դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, ազգագրական պարեր եւ այլն:

– Ինչպե՞ս եք գնահատում գուսանական երգարվեստի դերը մատաղ սերնդի դաստիարակության գործում, եւ ընդհանրապես ներկա սերունդն ինչպե՞ս է վերաբերվում դրան:

– Մեր համերգային ծրագրերում շատ մեծ տեղ ենք հատկացնում հայկական ժողովրդական, գուսանական երգարվեստին, դասախոսություններ անցկացնում ազգային նվագարանների վերաբերյալ, նույնիսկ դրանց վերաբերյալ ֆիլմաշարեր են նկարահանվել: Ինչ վերաբերում է մատաղ սերնդի ընկալմանը, ապա ուրախությամբ պետք է նշեմ, որ դպրոցականների համար կազմակերպվող դաս-համերգներն անցնում են շատ լավ մթնոլորտում, քանի որ նրանք իրենց բնազդով ու այսպես ասած արյան կանչով ընկալում են ժողովրդական, գուսանական երաժշտությունը: Ցավոք սրտի, հաճախ իրականությունը հաղթում է մարդուն, քանի որ այստեղից դուրս գալուց հետո երեխային բոլորովին այլ բան է մատուցվում: Բացահայտ հայտարարում եմ, որ հայաստանյան հեռուստատեսությունները այսօր տգիտության ու միջակության վրա են հիմնված եւ ավելին՝ ՀՀ-ում հեռուստատեսություն չկա, ինչը մեր երկրի ամենամեծ դժբախտություններից է: Մի առիթով ասել եմ, որ թուրքերը Հայաստանի, հայ ժողովրդի հոգեւոր, մտավոր աշխարհը 400-500 տարում այնպես չեն փչացրել, ինչպես մեր հեռուստատեսություններն այս 25 տարում: Նրանք խաթարել են հայ մարդու ազգային ընկալումները, նկարագիրը, արժեքները... Իհարկե փորձել եմ պայքարել այդ ամենի դեմ, բայց ապարդյուն, քանի որ մարդու ազատության վերաբերյալ ստորագրված այսպես ասած կոնվենցիաները խանգարում են մեզ: Այսօր մեր հեռուստատեսությամբ ամենաանորակ երաժշտությունն է հնչում, պատճառաբանում են, թե ժողովուրդը դա է պահանջում եւ սիրում: Բայց դա բոլորովին այդպես չէ, ժողովրդի ականջին ինչ որ լսելի ես դարձնում, դա դառնում է սովորույթ: Իսկ եթե դրան զուգահեռ մատուցվի նաեւ լավագույն երաժշտություն, ապա, հավատացնում եմ, մարդն իր բնազդով կընտրի այդ լավը: Ավելին ասեմ՝ փորձը ցույց է տալիս, որ Հայաստանի ամենահեռավոր գյուղերի հանդիսատեսն անգամ ընտրում է ճիշտ երաժշտությունը, պարզապես մենք նրան զրկել ենք բարձրաճաշակ երաժշտությունից: Կներեք օրինակիս համար՝ սոված մարդուն ինչ տաս, կուտի:

– Բնութագրեք Գուսան Աշոտի երգարվեստը:

– Նեղ մասնագիտական բնութագրում չեմ կարող տալ, բայց, որպես հանդիսատես, գնահատում եմ նրա մաքուր, հայկական մելիզմը, լադերը: Առհասարակ ամեն ազգ ունի իր երաժշտական հնչերանգները, օրինակ, այսօր ինչո՞ւ են ասում, որ մեր երգերի հնչերանգներին արաբական, թուրքական եւ այլ արեւելյան տարրեր են խառնված, որովհետեւ երաժշտությունն ունի լեզու, որին մեր այսօրվա, թույլ տվեք ասել, տգետ «աստղերը» չեն տիրապետում: Երաժշտության քերականությունը սոլֆեջիոն է, որը մեր երգիչների մեծ մասը չգիտի: Նրանք դասատու չեն ունեցել, բազային կրթություն չեն ստացել, ինչպե՞ս կարող են հաջողություն գրանցել: Կարող է պատահի, որ իր տաղանդի, շնորհքի շնորհիվ որոշ ձեռքբերումներ ունենա, բայց՝ կարճատեւ: Իհարկե բոլորին մեկ արշինով չի կարելի չափել:

Ինչ վերաբերում է Գուսան Աշոտի երգերին, ապա դրանք մաքուր ու ճիշտ են, քանի որ պահպանված են հայկական երաժշտական քերականության կանոնները: Դրանք պարզ են, բայց խոր, հասանելի ու ընկալելի: Ճիշտ է, նա առանձնակի երաժշտական կրթություն չի ստացել, բայց երբ մարդը ճիշտ է կատարում իր գործը, մասնագիտական լուրջ կրթությունն առաջին անհրաժեշտություն չի դառնում:

– Կապանում որոշ ժամանակ գործել է ֆիլհարմոնիայի մասնաճյուղ, ավելի կոնկրետ՝ «Դպրոցական ֆիլհարմոնա»-ի մասնաճյուղ: Ինչո՞ւ այժմ չի գործում:

– Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի գործառույթներից է նաեւ մարզերում անցկացնել համերգներ, տարբեր միջոցառումներ, դասախոսություններ: Ուստի հեռավոր մարզերում, քաղաքներում դժվարություններ չունենալու համար մասնաճյուղեր ունենք Գյումրիում, Վանաձորում, Արցախում, Եղեգնաձորում, ժամանակին ունեինք նաեւ Կապանում (քաղաքապետ էր Արմեն Կարապետյանը): Այդ ժամանակ երաժշտական ուսումնարանի, որ այսօր արվեստի քոլեջ է կոչվում, տնօրենն էր Լիաննա Հակոբյանը, ում նախաձեռնությամբ հիմնականում Կապանում եւ Քաջարանում անցկացվեցին տարբեր դաս-համերգներ՝ թե՛ մայրաքաղաքի, թե՛ տեղի մասնագետների միջոցով: Բավականին հետաքրքիր ու բարձր մակարդակով միջոցառումներ էին կազմակերպվում այստեղ թե՛ երաժշտական, թե՛ հանրակրթական դպրոցների սաների համար: Հաշվի առնելով կապանցիների՝ արվեստի հանդեպ ունեցած առանձնահատուկ վերաբերմունքը, այդտեղ անպայման պետք է վերագործարկվի մասնաճյուղը: Կապանն այն եզակի քաղաքներից է, որ երգեհոն ունի, ինչը հնարավորություն կտա նաեւ երգեհոնային երաժշտության տարբեր միջոցառումներ կազմակերպել: Կարծում եմ՝ քաղաքային եւ մարզային իշխանությունների թեկուզ միայն բարոյական օգնության շնորհիվ հնարավոր է վերաբացել մասնաճյուղը: Ցավոք սրտի, մշակութային միջոցառումները հիմնականում կենտրոնացված են մայրաքաղաքում, ինչը շատ սխալ երեւույթ է, ուստի այդ մասնաճյուղերի առկայությունը նպաստում է ավելի կազմակերպված եւ արդյունավետ լրացնել այդ բացը: Այն ժամանակվա քաղաքապետ Արմեն Կարապետյանի, ինչպես նաեւ կոմբինատների հովանավորության շնորհիվ հնարավոր եղավ մասնաճյուղի գործունեությունը կազմակերպել: Կարծում եմ՝ մասնաճյուղի առկայության դեպքում ավելի բարձր մակարդակով կիրականացնենք ֆիլհարմոնիայի՝ մարզերում մշակութային կյանքն ակտիվացնելու գործառույթը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ՄԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «Գուսան Աշոտը Սյունյաց աշխարհի գանձերից է»

«Գուսան Աշոտի կողքին նստելը, երգելիս նրան ծաղիկ նվիրելը, նրա հետ հյուրասիրության մասնակցելը, նրան մեծարելը, թեկուզ մեկ-երկու նախադասություն փոխանակելը մեծ պատիվ էին թե՛ սկսնակիս, թե՛ նշանավոր երգչի համար», – խոստովանում է նշանավոր երգչուհի Մանիկ Գրիգորյանը եւ հավելում, որ Գուսանի հետ մտերմիկ շփում չի ունեցել, նախեւառաջ այն պատճառով, որ այդ տարիներին ինքը դեռ ուսանող էր եւ նոր-նոր էր սկսում իր երգչական գործունեությունը:

«Իմ առաջին մուտքն արվեստի աշխարհ, ռադիո Գուսան Աշոտի անվան հետ է կապված: Դիրիժորության ժամին Արմեն Մանդակունյանը, ով

այդ ժամանակ Արամ Մերանգուլյանի ժողգործիքների անսամբլի ղեկավարն էր, նկատեց ինձ, եւ, երբ դասը թողեցինք մի կողմ, հարցրեց՝ ժողովրդական երգերից ի՞նչ կերգես: Այդ պահին անմիջապես միտս եկավ Գուսան Աշոտի «Հով սարեր, մով սարեր» եւ էլի մի քանի երգ: Ասաց՝ արի տանեմ փորձնական ձայնագրության: Գնացինք ռադիո, եւ ընդամենը երգեցի «Հով սարեր, մով սարեր»-ի երկու քառատող, երրորդը չերգեցի, քանի որ դեռեւս փորձնական ձայնագրություն էր: Եվ անմիջապես այդ ձայնագրությունը տարան ռադիոյի ոսկե ֆոնդ՝ առանց մնացած մասի: Ի դեպ, այդ երգը մինչ ինձ կատարել էր միայն Օֆելյա Համբարձումյանը: Իմ մասին կարծիք գրելիս ասել են, որ այս երգի ձայնագրությունը միշտ կարելի է ոսկե ֆոնդում պահել: Մի խոսքով՝ ռադիոյի ոսկե ֆոնդի առաջին միավորս եղավ «Հով սարեր, մով սարեր»-ը», – պատմում է Մանիկ Գրիգորյանը:

Երգչուհու երկրորդ հուշը կապված է Գուսան Աշոտի 80-ամյակին նվիրված հոբելյանական երեկոյի հետ, որ մեծ շուքով կազմակերպել էր Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանը: *«Սկսնակիս համար այս համերգին մասնակցելը կարծես փորձություն լիներ, որ, չնայած որոշ խոչընդոտների, այնուամենայնիվ, հաջողությամբ պսակվեց: Հաշվի առնելով, որ ֆոնոգրաման չմիացվեց, երգեցի ակապելլա, քանի որ սովոր էի այդպես երգելուն: Թռուցիկ, բայց Գուսանը հավանում էր իմ կատարումները եւ զարմացել էր, որ հոբելյանական համերգի իմ կատարման ընթացքում չշփոթվեցի ստեղծված իրավիճակից»,* – հիշում է երգչուհին եւ նշում, որ նորելուկ երգչի համար դժվար էր պայքարել այդ ոլորտի «գայլերի» դեմ. պետք է շատ ուժեղ լինեիր քեզ պաշտպանելու համար:

> *Երգչուհին նշում է, որ առհասարակ շատ երգեր չի կատարել Գուսան Աշոտից, քանի որ նրա երգերը մեծ մասամբ մեղմ ձայների համար չեն գրվել:*

«Գուսանի երգի դիապազոնները միանգամից բարձրանում են, իմ փոքր ձայնի համար (ունեմ մի փոքրիկ դիապազոն՝ փոքրիկ կվինտա, առաջին ալտ) գրված մի քանի երգեր ունի, որոնք կատարել եմ մեծ սիրով (օրինակ՝ «Հով սարեր», «Այգուս նայելով», «Սյունյաց սարեր»): Եթե ես այդ կվինտայից դուրս եմ գալիս, այդտեղ ձայնիս որակը, ոճս փոխվում են, այդ դեպքում Մանիկը չի երգում», – նշում է երգչուհին եւ հավելում, որ Գուսան Աշոտի երգերը հիմնականում Օֆելյա Համբարձումյանի նման ձայնային հզոր դիապազոն ունեցող երգիչների համար են:

Մանիկ Գրիգորյանը ցավով է

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

նշում, որ հիմա նման տաղանդավոր աշուղներ չկան. *«Գուսան Աշոտը կարծես խորհրդաստ պոետ լիներ, նրա երգի խոսքերը, մեղեդայնությունն այնքան ներդաշնակ են: Նա իսկապես տարբերվում է մեր մյուս գուսաններից, եւ չենք կարող նրա արվեստը նմանեցնել մեկ ուրիշին»:*

Երգչուհու խոսքերով՝ Գուսանը ե՛ւ սիրո, ե՛ւ բնության, ե՛ւ հայրենիքի երգիչ է: Հատկապես զանգեզուրյան բնությունը, հայրենի հող ու ջրի հանդեպ անսահման սերն ու նվիրվածությունը հրաշալի է պատկերել, իսկ կնոջը մեծարել աստվածային սիրով... *«Գուսանն այնպես է նկարագրում հայրենի բնությունը, որ այդ վայրերին անծանոթ մարդուն թվում է, թե գտնվում է դրախտային վայրում: Ժողովրդի համար են գրված նրա երգերը, որոնք հասանելի են բոլորին: Գրել է այնպես, ինչպես զգացել է եւ արդյունքում ստեղծել գլուխգործոցներ: Նա այն հազվագյուտ գուսաններից է, որի արվեստում ամփոփվում է ամեն ինչ, մի խոսքով՝ դասական գուսան է»,* – նշեց երգչուհին:

Ժողովրդական եւ գուսանական երգարվեստի հանդեպ ներկա սերնդի վերաբերմունքից խոսելիս Մանիկ Գրիգորյանը նշեց, որ չնայած այն աստիճանաբար մարում է, բայց շատ երգիչներ են նախընտրում կատարել Գուսանի երգացանկից. *«Մի կողմ թողնելով ներկա սերնդի՝ արաբական լադերով երգելը՝ համոզված կարող եմ ասել, որ Գուսան Աշոտը հավերժ կմնա մեր երգարվեստում: Նա Սյունյաց աշխարհի գանձերից է»:* Նա նշեց նաեւ, որ Գուսանի հետ մտերմիկ հարաբերություններ ունեին շատ երգիչներ, որոնց համար հատուկ երգեր է գրել: Օրինակ՝ հիշում է, որ «Այգուս նայելով» երգը նվիրել է Սուսաննա անունով մի աղջկա, ով ե՛ւ երգչուհի էր, ե՛ւ պարուհի, ով կարծեմ թե ներկայումս Հայաստանում չի բնակվում:

Ինչպես Մանիկ Գրիգորյանն է նշում, ներկայումս երիտասարդ կատարողների մի խումբ իր երաժշտական կարիերան սկսում է՝ օգտվելով գուսանական, ժողովրդական երգացանկերից, բայց հիմնականում դրանք անհաջող փորձեր են: *«Շատերն այդ երգերը կատարելիս իմպրովիզացիաներ են անում, ինչից երգը տուժում է: Հասկանալի է, որ մոդեռն ձեւով են ուզում մատուցել հանդիսատեսին, բայց մաքուր, ամեն նոտային համապատասխան երգելը տեխնիկական ոչ մի սարքավորում չի կարող ապահովել: Որոշ երգիչներ ժողովրդին սիրելի եւ ընդունելի դառնալու համար սկսեցին ժողովրդական, գուսանական երգեր կատարել, բայց հենց ճանաչում ձեռք բերեցին, կլկլոցներն առաջ եկան»,* – նշեց երգչուհին եւ հավելեց, որ ամեն մեկին չէ տրված այդ երգերը ճիշտ կատարել: Որպես օրինակ նա նշեց, որ Շերամի երգացանկի որոշ երգեր չի կատարում, քանի որ, պատկերավոր ասած, դրանք իր համար չեն կարված: Կամ թեկուզ աշուղ Ջիվանու երգերը գրեթե բոլորն են կատարում, բայց ոսկե ֆոնդում Մանիկ Գրիգորյանը Ջիվանու ընդամենը մեկ երգ ունի. պատճառը նույնն է, կատարում է այն երգերը, որոնք սազում են իր ձայնին:

Երգչուհու համոզմամբ՝ գուսանական, ժողովրդական երգարվեստի պահպանումն ու պրոպագանդումը նախեւառաջ պետք է իրականացվի պետական մակարդակով՝ սկսած երկրի նախագահից: Մեր իրականության մեջ անուրանալի է Թովմաս Պողոսյանի եւ նրա ղեկավարած «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլի, ինչպես նաեւ Ջիվանու անվան աշուղական դպրոցի դերակատարությունը հատկապես հոբելյանական աշուղական միջոցառումների բարձր մակարդակով կազմակերպման ու անցկացման, այդ արվեստի ավանդույթների պահպանման գործում: *«Ինչպես ասում են՝ ծուկը գլխից է հոտում, վերեւից պետք է վերահսկվի ամեն ինչ: Բայց այսօր մեզանում պետական մակարդակով վերահսկողությունը վերացել է: Թուրքերն ինչպես են անում. առավոտից իրիկուն մատուցում են իրենց ազգայինը, իսկ մենք կարծես Արաբական Միացյալ Էմիրաթների մասնաճյուղը լինենք: Մեր գյոգալ երգերը թուրքերն են երգում, մենք էլ էս կլկլոցներով ենք զբաղված: Մեկ-տողանի չգիտես՝ ինչ են երգում, երգչուհի լինելով՝ վեց անգամ երգը լսում եմ, բայց երաժշտության մեկ տողն անգամ չեմ կարողանում հիշել: Սա ինչ-որ ուրիշ երեւույթ է, բայց ոչ մեր ազգային մտածողությանը համապատասխան երգարվեստ: Ասում ես՝ նեղանում են. նոր սերունդը կատեգորիկ չի ընդունում ոչ մի քննադատություն»,* – իր մտահոգությունն է հայտնում Մանիկ Գրիգորյանը:

Երգչուհին նշեց, որ միշտ հետեւում է «Շանթ» հեռուստաընկերության «Ժողովրդական երգիչ» ծրագրին եւ այն կարծիքին է, որ կան տաղանդավոր երիտասարդներ, ովքեր զբաղվում են այդ երգարվեստով, խնդիրը հետագայում այդ նույն ոգով շարունակելն է: Հաճախ փողի հետեւից ընկնելով, ցավոք, նրանք փոխում են իրենց ոճը, որից տուժում է նախեւառաջ իրենց երգչական արվեստը: Նրա համոզմամբ՝ դա մարդու բնավորությամբ է պայմանավորված: Ինքը մինչեւ վերջ էլ փողի հետեւից չընկավ եւ հավատարիմ մնաց իր սկզբունքներին, ինչի համար չի փոշմանում: *«Այժմ չեմ երգում, քանի որ կարծում եմ, որ պետք է ժամանակին կանգ առնես: Ինչո՞ւ պետք է բեմ բարձրանամ, եւ հանկարծ ինչ-որ բան այն չլինի: Ավելի լավ է ժողովրդի հիշողության մեջ մնաս որպես լավագույն կատարողներից մեկը»,* – նշում է Մ.Գրիգորյանը:

Իհարկե երիտասարդների տաղանդը բացահայտող նախագծերը ողջունելի են, բայց դրանց ավարտից հետո նրանք փակուղում են հայտնվում, հեռանկար չեն ունենում: Պետք է նրանց աշխատանքով ապահովեն, պրոպագանդվեն կամ հովանավորներ լինեն, ովքեր կապահովեն նրանց հետագա առաջընթացը: *«Չեմ մեղադրում սկսնակ երգիչներին, ովքեր երբեմն ստիպված իրենց ձայնն օգտագործում են ռեստորաններում երգելու համար, բայց մեղադրում եմ այն երգիչներին, ովքեր ճանաչում են ձեռք բերել, բայց փոխանակ շարունակեն նույն ոգով ստեղծագործել, արեւելյան մոտիվներով զանազան ձայնասկավառակներ են թողարկում եւ հարստանում: Չի կարելի ամեն անգամ փողին տրվել, միշտ չէ, որ փողն ամենաառաջնային տեղը պետք է զբաղեցնի մարդու կյանքում»*, – զրույցն ամփոփեց Մանիկ Գրիգորյանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՖԱՐՅԱՆ.
«Գուսանի սերն ինձ շատ հոգեհարազատ է»

«Այն տարիներին հաճախ էինք Գորիսում մասնակցում տարբեր միջոցառումների: Շրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանը՝ մշակութասեր, երգասեր անձնավորություն, ինձ նույնպես հրավիրում էր այդ համերգներին: Մի անգամ էլ, երբ եկա Գորիս, քաղաքի մշակույթի բաժնի վարիչ Գագիկ Ծատրյանին խնդրեցի, որ ինձ ծանոթացնի Գուսան Աշոտի հետ: Գնացինք նրանց տուն, Գագիկը մտավ ներս, զրուցեց տիկնոջ հետ, հետո կինը մեծ գդալով յուղ եւ մեղր դրեց թախտին նստած Գուսանի բերանում, իսկ ես այդ ընթացքում դռան շեմին կանգնած էի մնացել: Հետո ասացի՝ Գուսան, գիտե՞ք, ես Ձեր երգն եմ երգում, թերահավատորեն ասաց՝ երգի: Ու սկսեցի երգել. «Ինչ ասացի նազելուս, / Որ նա ինձնից խռովեց, / Իր սերն էի վայելում, / Պարզ աղբյուր էր, պղտորվեց»: Այսքանը երգեցի, եւ կանչեց կնոջը՝ Արաքսային, հետո պարտադրեց, որ մի հատ էլ երգեմ», – իր առաջին հանդիպումն է հիշում ՀՀ վաստակավոր արտիստուհի Սուսաննա Սաֆարյանը եւ նշում, որ սիրում էր ասպարեզ մտնելիս կատարել այնպիսի երգեր, որոնք շատ չէին հնչել: Նրա կարծիքով՝ հավանաբար Գուսանի հոգում այդ երգը հաճելի զգացումներ արթնացրեց. տեսնես՝ ում էր նվիրել այն:

Երգչուհին պատմում է, որ հաջորդ օրը Գուսանը, հանդիպելով Ֆրունզիկ Մկրտչյանին եւ Էդիկ Զոհրաբյանին, հարցնում է՝ դուք ճնաչո՞ւմ եք իմ Սուսանին. «Փաստորեն այդ երգով նա ինձ համարեց իր Սուսանը»: Հետո նրանք լուսանկարվեցին նախ՝ լուսանկարչատանը, այնուհետեւ՝ Գորիսի, ինչպես երգչուհին է ասում, սուրսուր քարերի համայնապատկերին: Հիշում է նաեւ, որ Գուսանն այդտեղ մի բանաստեղծություն գրեց եւ նվիրեց մարզահամերգային համալիրի ճարտարապետ Հրաչ Պողոսյանին: *«Մինչ քարերին հասնելը նրան հարցրի, թե ինչպես գուսան դարձավ: Նա պատմեց, որ 16 տարեկան տղա էր եւ հովիվ: Երբ հոտն արածեցնելու էր տանում, շվի էր նվագում: Եվ սիրահարվեց սեւաչյա մի աղջկա, ինչն էլ երգեր հորինելու առիթ եղավ»,* – պատմում է երգչուհին եւ կատարում Գուսանի երգերից մեկը. «Սարի սիրուն յար, սարի մեխակ բեր, / Ա՜խ, չէ, ի՞նչ մեխակ, սիրո կրակ բեր»:

> *Գուսան Աշոտի 80-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառմանը, որին հրավիրվել էին հանրապետության նշանավոր գործիչներ, Սուսաննա Սաֆարյանը կատարել է «Հավքեր, ասեք՝ ո՞ւր անցավ» երգը: Իսկ 1988թ. աշնանը եւս մեկ անգամ լինելով Գորիսում՝ հանդիպեց Գուսանին, ով արդեն վատառողջ էր, համոզեց նրան, որ «Սուրբ մայրեր» երգը կատարի. քամանչան բերեցին, Գուսանը նվագեց:*

Երգչուհին բուռն համերգային գործունեություն է ծավալել ու ծավալում, եւ մշտապես նրա երգացանկում տեղ են գտնում Գուսան Աշոտի երգերը: *«Օրինակ, երբ ուսումնասիրում եմ Շերամի երգերը, որոնք նույնպես մեծ սիրով են կատարում մեր երգիչները, զգում եմ, որ խաղերը հայեցի չեն եւ արեւելյան տարրեր են պարունակում: Ոչ միայն համերգային ծրագրերում եմ պարտադիր ընդգրկում Գուսանի երգերից, այլեւ ուսանողներիս եմ սովորեցնում»,* – նշում է երգչուհին եւ երգում. *«Թող իմանան, որ Սյունիքում լեռնահոլով պար ունեմ ես, / Սեր ունեմ ես, մի հուր կրակ, / Սիրո քնքուշ լար ունեմ ես, / Միշտ սրտաբուխ բառ ունեմ ես, / Մի խենթ եղնիկ յար ունեմ ես, / Դալար այգու բար ունեմ ես, / Անգամ քարին հոգի տվող, քնարի նուրբ լար ունեմ ես....»:*

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

Ս.Սաֆարյանը խոստովանում է, որ ամեն ինչ կպատկերացներ, բայց որ Գուսանի գերեզմանին կերգեր «Արի՛, մի՛ գնա» երգը... Ասում է եւ հիացմունքով հավելում. *«Մեր սիրո երգիչը եղել է Սայաթ-Նովան, բայց, ըստ ինձ, նրանից հետո մեր ամենամեծ սիրո երգիչը Գուսան Աշոտն է, ով խոհափիլիսոփայական բանաստեղծ է, ում երգի խոսքերը, նկարագրությունները, պատկերային զգացողությունները շատ բանաստեղծական են»:*

«Յար, քո անունը սրտիս եմ պահում,/Աչքս չի հոգնում, ճամփիդ եմ նայում,/Գալուդ խաբարը, թե որ ինձ բերեն,/Սիրտս երգիս հետ ճամփիդ կփռեմ:/Մուրազիդ մատաղ,/Արի՛, մի՛ գնա,/Թե չէ մուրազս/Կիսատ կմնա:/Ա՜խ, սիրուդ համար ես հուր կդառնամ,/Քո ճանապարհին աղբյուր կդառնամ,/Թե մրսես՝ սրտիս հրով տաքանաս,/Թե որ ծարավես՝ ինձնով հովանաս», – երգում է եւ նշում, թե ինչքան համահունչ են այդտեղ խոսքը, մեղեդին, միտքը, զգացողությունը:

> *Հարցին, թե այսօր աշուղներ կա՞ն, երգչուհին պատասխանեց՝ ով կիմանար, թե ինքը մի օր երգեր կգրեր (ավելի քան 30 երգի հեղինակ է): Դասավանդելով Առնո Բաբաջանյանի անվան քոլեջում՝ նա հաճախ է հանդիպում ստեղծագործող պատանիների, ովքեր հնարավոր է հետագայում տաղանդավոր աշուղներ, բանաստեղծներ դառնան:*

Սերո Խանզադյանը Գուսանի գրքերից մեկի առաջաբանում նշում է, որ լավ երգն էն է, որ դարեդար փոխանցվում է: Մեր այն դիտարկմանը, թե արդյոք Գուսանի երգը մնայուն կլինի բոլոր ժամանակներում, Սուսաննա Սաֆարյանն այսպես պատասխանեց. *«Նայած թե սերնդեսերունդ ինչ կնախընտրեն երգել: Եթե ինձ նման մարդիկ գան, որ ամեն առավոտ ու մայրամուտին երգեն «Երգով կապրեմ, սիրով կապրեմ աշխարհում,/Երգիս ճամփին հազար աստղեր են վառվում...», ուրեմն Գուսանը հավերժ կապրի»:*

Երգչուհին հիշում է նաեւ, որ Գուսանը սիրում էր նստել քարին, անցնող-դարձողի հետ զրուցել, եւ երբ ինքը գնում էր Գորիս, միշտ հանդիպում էր նրան: Մի անգամ էլ Գորիսին նվիրված միջոցառմանն էր եկել մասնակցելու, եւ այդտեղ էր նաեւ Դարաբաղի հորովելի հեղինակ Գուրգեն Գաբրիելյանը: Գուսանը ներկայացրեց նրան ինձ եւ ասաց՝ Սուսանը քո երգերից կատարում է: Եվ նա երգեց. «Աղե արկանք, մաղե արկանք, քեզանում կա էլա հարգանք....»: Հետագայում այս երգի հետ կապված հիշում է, որ Ավստրալիայում 1995թ. ուղիղ եթերով 40 րոպե հարցազրույց տվեց, եւ երբ հարցրին այդ թեժ օրերի մասին, կրկին երգեց այս երգը, որ խորհրդանշում է լավատեսություն:

> *Սուսաննա Սաֆարյանի անձնական ոսկե ֆոնդում պահվող Գուսան Աշոտի երգերից են, «Չոր չոլերը ծաղկել են», «Սարվորի երգ», «Արի՛, մի՛ գնա», «Լուսնի շողը», «Հով սարեր, մով սարեր», «Օջախում», «Սուրբ մայրեր» եւ մի շարք այլ երգեր: Երգչուհին նշում է նաեւ, որ մինչեւ հիմա էլ շարունակում է երգացանկը թարմացնել նոր երգերով, որոնց կատարումը տարածված չէ:*

Այն նկատառմանը, թե դժվար չէ՞ Գուսանի երգերը կատարել, երգչուհին պատասխանեց. *«Ոչ թե ես եմ հարմարվում երգին, այլ երգն եմ հարմարեցնում ինձ: Ինչքան բարդ երգ կա, այն դարձնում եմ իմը: Ինչ խոսք, շատ եմ սիրում հատկապես սիրուն նվիրված նրա երգերը, որոնցում այնքա՜ն քնքշանք, նրբություն կա: Մեկ Գուսանի սերն է ինձ հոգեհարազատ, մեկ էլ՝ Ավետիք Իսահակյանի»:*

«Մուրդուզա եղնիկ» երգի հետ կապված մանկության մի հիշողություն էլ ունի. *«Ատամս ուժեղ ցավում էր եւ հանկած ռադիոյով հնչեց «Մուրդուզա եղնիկ» երգը՝ Ռաֆֆի Հովհաննիսյանի կատարմամբ, եւ չեք հավատա, բայց անմիջապես ատամիս ցավն անցավ»:*

Գուսանական, ժողովրդական երգի պահպանման գործում պետական հոգածության կարիք, ըստ Սուսաննա Սաֆարյանի, այնքան էլ չկա: Նա նշում է, որ մութ ու ցուրտ տարիներին մոմի լույսի տակ գրի է առել երգեր, գրքեր հրատարակել, «Մոսկվա» կինոթատրոնում համերգներ տվել: 1995-96թթ. երբ Գուրգեն Դաբաղյանն ասպարեզ եկավ, բանալի դարձավ շատ երեխաների համար, որ սիրեն մեր ժողովրդական, գուսանական երգերը: Ի դեպ, նա միշտ մասնակցում էր երգչուհու համերգներին: Այդ ժամանակ հեռուստահաղորդումներ գրեթե չկային, համույթները համարյա թե չէին գործում, բայց այդ շրջանում Սուսաննա Սաֆարյանը շարունակում էր իր բուռն գործունեությունը. *«Պարզվում է՝ այնքան միջավայրը չէ կարեւոր, որքան դու ինքդ»:*

Հեռուստատեսությամբ, ռադիոյով հաճախ հնչող անորակ երաժշտության վերաբերյալ էլ իր ուրույն կարծիքն ունի երգչուհին: Նրա կարծիքով՝ անորակ կամ որակյալ երաժշտություն չի կարելի ասել: Բայց այն, որ հեռուստացույց դիտելը նրա համար այլեւս հաճելի չէ, փաստ է: Փոխարենը դիտում է իր տարբեր տարիների տված հարցազրույցները, հաղորդումները, համացանցով տարածել է նաեւ դեռեւս 1999թ. նկարահանած «Հայի երգը» ֆիլմը, որտեղ նրա կատարմամբ հնչում են մաքուր հայկական երգն ու երաժշտությունը: *«Նպատակը մեկն է, որ ով օտարաշունչ երգեր է երգում, լսի իր կատարմամբ երգերը եւ հասկանա, թե ինչպիսին է հայի երգը: Ոչ ոքի չեմ մեղադրում հաճախ ոչ հայկական երաժշտություն մատուցելու մեջ, չեմ փնովում ոչ մեկին, լսում եմ, բայց իրավունք էլ չունեմ իմը չներկայացնելու: Օֆելյա Համբարձումյանին, Հովհաննես Բաղալյանին, Ռուբեն Մաթեւոսյանին եւ մեր նշանավոր երգիչներին փոխարինելու եկանք մենք, քանի որ նոր խոսք բերեցինք: Եվ ինչպես մի անգամ Օֆելյա Համբարձումյանին եմ ասել՝ ես Ձեր ճանապարհով եկել եմ, բայց հետո շեղվել եմ, ինչի հետեւանքով էլ կայացել եմ, իմ առանձին արվեստը ստեղծել»,* – զրույցն ամփոփեց ՀՀ վաստակավոր արտիստուհի Սուսաննա Սաֆարյանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

ՎԱԼԵՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ.
«Գուսան Աշոտի երգերն ընդմիշտ կմնան որպես հոգեւոր հավերժական զուլալ աղբյուր»

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՄԲԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՅՆԱԳՐՄԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՆԱԽԿԻՆ ԴԱՍԱԽՈՍ, ԵՐԱԺՇՏԱԳԵՏ ՎԱԼԵՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՀԵՏ



–Պարո՛ն Գասպարյան, ժամանակին նոտագրել եք Գուսան Աշոտի երգերը, համառոտ ներկայացրեք այդ աշխատանքի կազմակերպման, ընթացքի եւ առհասարակ նրա հետ ունեցած հարաբերությունների մասին:

– Մինչ Գուսանի հետ անձամբ ծանոթանալը նրան միշտ հանդիպել եմ Գորիսում, ջերմորեն բարեւելով՝ հպարտությամբ անցել նրա կողքով: Այնուհետեւ երբ ուսանող էի, մի օր կանչեց իր մոտ եւ ասաց, որ լսել է՝ լավ երաժիշտ եմ, կուզենար՝ իր երգերը նոտագրեմ: Առհասարակ նոտագրման համար նա հաճախ էր մեկնում Երեւան, բայց դրանից հետո, երբ Գորիսում էի լինում, ինձ էր կանչում նոտագրելու: Իսկ Գուսանի երգերը հորդուն էին, օրական նույնիսկ կարող է մի քանի երգ հորիներ: Սկսեցինք միասին աշխատել, եւ մեր համագործակցությունը բավականին արդյունավետ էր: Թեեւ մասնագիտական կրթություն չուներ, բայց ինձ համար հեշտ էր նրա հետ աշխատելը, քանի որ շատ համեստ անձնավորություն էր, անմիջական ու հասարակ: Երբ քամանչայի վրա նոտաները սովորեց, ամեն անգամ երգը նոտագրել-վերջացնելուց հետո նվագում էր վերջին նոտան եւ ասում՝ դե ասա՝ ինչ նոտայով ես ավարտել երգը: Երբ պատասխանում էի, եւ համոզվում էր, որ ճիշտ եմ նոտագրել, անցնում էինք առաջ: Հիշում եմ՝ մի անգամ խմբագրությունում ասել էր, որ արդեն նոտաներ գիտի, նրան կեսկատակ-կեսլուրջ պատասխանել էին՝ եթե նոտա գիտես, էլ ինչ աշուղ կամ գուսան, եւ նա դադարեցրել էր սովորելը:

Երգը հորինելուց հետո կա՛մ զանգահարում էր, կա՛մ հանդիպում էինք, ասում էր՝ արի գնանք, նոտագրելու երգ կա: Հատկապես գիշերներն էր ստեղծագործում, երբեմն ուշ ժամերին զանգահարում էր, ասում, որ գնամ իրենց տուն, երգ է հորինել, նոտագրենք, որ հանկարծ վաղը չմոռանա: Նույնիսկ պատահել է, որ օրական 12-14 երգ ենք նոտագրել: Հատկապես վերջին շրջանի ստեղծագործությունները շատ բարդ էին, եւ պետք է նոտագրման մեջ հմուտ լինեիր այդ աշխատանքը ճիշտ կատարելու համար: Պատահական չէ, որ նրա երգերի նոտագրությունը կատարել են այնպիսի տաղանդավոր անհատականություններ, ինչպիսիք Հովհաննես Բաղալյանն է, Լեւոն Աստվածատրյանը, Ռուբեն Մաթեւոսյանը...

Հետաքրքիր էր նաեւ այն փաստը, որ Գուսանը երբեմն դրսում մարդկանց հավաքում էր, երգում նոր հորինած երգը, նրանց խորհրդով որոշակի շտկումներ կատարում, վերլուծում եւ վերջնական տեսքի բերում: Այս տեսակետից նրա՝ ժողովրդին ծառայելու գուսանական կուլտուրան շատ բարձր էր: Եվ դա է նաեւ նրա երգերի հորդուն, հոսուն, անմիջական եւ հուզիչ լինելու պատճառներից մեկը:

Մի անգամ, երբ Գուսանն իմ նոտագրածը տարավ խմբագրություն, Լեւոն Աստվածատրյանը՝ հրաշա-

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

լի անձնավորություն, կոմպոզիտոր, նրան ասաց, որ այլեւս նոտագրման համար Երեւան չիասնի, քանի որ Վալերիկ Գասպարյանն էլ շատ լավ է կատարում այդ աշխատանքը: «Ծովաստղիկս» ժողովածուում արդեն իսկ իմ անունը երեւաց, «Սիրո կրակներ» ժողովածուի առաջին հատորում՝ նույնպես, իսկ երկրորդ հատորում իմ անունն ընդհանրապես չի գրվել՝ չնայած իմ նոտագրածներից մի քանի երգ այդտեղ զետեղվել է:

Գուսանը մի այսպիսի սովորություն ուներ, երբ երգը նոտագրում-վերջացնում էի, ստիպում էր տետրի մի անկյունում գրել՝ խոսք եւ երաժշտություն՝ Գուսան Աշոտի, նոտագրեց Վալերիկ Գասպարյանը: Երբ հարցնում էի՝ ինչո՞ւ գրեմ, ասում էր՝ գրի՛ր, ես գիտեմ՝ ինչ եմ ասում:

Իմ ամենամեծ աշխատանքը Գուսանի հետ եղել է «Լեռները կանչում են» ժողովածուի երգերի նոտագրումը, որ սկզբից մինչեւ վերջ ես եմ կատարել (19-21 տետր, յուրաքանչյուրում՝ ամենաքիչը՝ 10-12 երգ): 1989թ. հունվար ամսին պետք է գար Երեւան տպագրության հանձնելու, բայց չի հասցնում եւ մահանում է: Մոտ 20 տարի հետո դուստրը՝ Արշալույս Դադալյանը, ինձ հանդիպում է եւ տեղեկացնում, որ ցանկանում է հրատարակել այդ ժողովածուն, ինչի համար խնդրում է գրախոսական գրել: Բայց Արշալույսը ժողովածուն վերնագրում է ոչ թե «Լեռները կանչում են», այլ՝ «Հավերժություն»: Եվ ինչպես գրախոսականում եմ նշել. «Գուսան Աշոտի երգերն ընդմիշտ կմնան որպես հոգեւոր հավերժական զուլալ աղբյուր, որից սերունդները կսնվեն ու նորից կծնվեն հայերեն: Գուսանը չգրեց կարապի երգ, այլ գրեց հավերժի երգ եւ հավերժացավ իր երգերի հետ»:

– Որքանով տեղյակ ենք, «Հավերժություն» ժողովածուում Ձեր անունը՝ որպես նոտագրողի, չի նշվում: Ինչո՞ւ:

– Երբ Արշալույսը սկսեց գրքի տպագրման նախապատրաստական աշխատանքները, ինձ խնդրեց աջակցել նոտաների համակարգչային շարվածքի գործում, որ կատարում էր Լուսինե Նազարյանը: Վերջացրինք այդ աշխատանքները, երեք տարի անցավ, բայց գիրքն այդպես էլ չէր տպագրվում: Մի օր զանգեցի Արշալույսենց տուն, որ հասկանամ, թե ինչ է կատարվում, հարսն ասաց, որ Արշալույսը մահացել է: Հետո Լուսինե Նազարյանին զանգեցի եւ իմացա, որ գիրքը լույս է տեսել, որտեղ էլ գրվել էր՝ նոտագրող՝ Լուսինե Նազարյան, բայց պետք է գրվեր՝ նոտագրող՝ Վալերիկ Գասպարյան, համակարգչային շարվածքը՝ Լուսինե Նազարյանի: Այստեղ պետք է ասեմ, որ Արշալույսն ասել էր, որ գրքի խմբագիրը նույնպես ես կլինեմ, եւ այդ աշխատանքները նույնպես վերջացրել էինք: Բայց հետո, ինչպես պարզվեց հրատարակությունից, գլխավոր խմբագիրը Թովմաս Պողոսյանն է, խմբագիրը՝ Սեյրանուհի Գեղամյանը: Իհարկե, ինձ վրա այս միջադեպը բավականին լուրջ բացասական ազդեցություն թողեց:

Գուսանը երգի նոտագրված ոչ մի օրինակ ինձ մոտ չէր թողնում, միայն մեկն է որպես հիշատակ մնացել, այն էլ Արշալույսը տվեց՝ «Ծով է, ծով է արհավիրքի»՝ Սպիտակի երկրաշարժից հետո գրված երգի ձեռագիրը: Տեքստը պահպանվել էր, բայց նոտաները չէր գտնում Արշալույսը: Ես նրան ասացի, որ Գուսանը ոչ մի երգ կիսատ չի թողել: Այդ է պատճառը, որ բառերը տվեց ինձ եւ որոշ նոտագրություններ էլ տվեց, որ երգարան չէին մտնելու, խնդրեց, որ համապատասխանեցնեմ տեքստին: Բայց ես նրան ասացի, որ այդպես չի լինի, քանի որ Գուսանն ամեն բառի համար նոտա է հորինել: Երկու օր շարունակ մտովի Գուսանի հետ ստեղծագործեցի, որովհետեւ նրա հոգին ամբողջովին իմ մեջ է, եւ գրեցի այդ երգի նոտաները: Բայց հետագայում ինձ նույնիսկ մեղադրեցին՝ ասելով, որ հիշողությամբ է գրված: Ես դրանից ինձ վատ չեմ զգում, թող այդպես ասեն. կարծում եմ՝ սա Գուսանի լեզվով իմ հորինածն է: Մի խոսքով՝ այս տետրը Գուսանից ինձ մնացած միակ հիշատակն է:

Երբ ես իմ հանդեպ ցուցաբերված անարդարացի վերաբերմունքի մասին համապատասխան մարդկանց ասացի, նրանք ինձ ասացին՝ եթե ուզում ես, վերատպի՛ր ժողովածուն: Հավատացնում եմ նաեւ, որ Գուսանի այդ ժողովածուի մոտ 90-ից ավելի երգ կորել է. այդ ժողովածուի համար նոտագրել էի 200-ից ավելի երգ: Թե ինչպես են անհետացել այդ ձեռագրերը, չեմ կարողացել պարզել, քանի որ ոչ ոք չի խոստովանում եւ մեկը մյուսի վրա է մեղքը բարդում:

– Բնութագրեք նրա արվեստի առանձնահատկությունները: Կարո՞ղ ենք ասել, որ հայ գուսանական կամ աշուղական երգարվեստում նա նորարարություն մտցրեց:

– Հայ աշուղական դպրոցի դարավոր պատմության մեջ Աշոտը յուրահատուկ հանճարով եւ անկրկնելի ուժով ներկայացավ որպես վառ անհատականություն՝ իր հետ բերելով աշուղական մտքի սքանչելի նոր դպրոց: Եթե ասեմ՝ որեւէ աշուղի ընդօրինակել է, սխալ կլինի, ինչ վերաբերում է նրանց արվեստից ազդեցություն կրելուն, ապա դա այսպես կմեկնաբանեմ. մենք լսում ենք շատերին, բայց հետո մեր ձեռագիրն ենք թողնում: Բնական է, որ Գուսանը ծանոթացել է մեր աշուղների ստեղծագործություններին, բայց իր ստեղծած արվեստը բոլորովին այլ է, ինչպես Սայաթ-Նովան, Ջիվանին... Նրանցից յուրաքանչյուրը կատարյալ ինքնատիպ բարձունք է:

Գուսանի ստեղծագործությունների թեմատիկան բազմաբեղուն է, հագեցած, մոնումենտալ, յուրահատուկ հարուստ՝ լադաինտոնացիոն համակարգը: Իմ մասնագիտական կարծիքով՝ նրա ամեն երգը վոկալ սիմֆոնիա է, որովհետեւ սիմֆոնիկ հագեցվածությամբ է թրծել իր աննման երգերը: Նրա արվեստում թեւածում է սերը, որ հայրենի եզերքի, բնության, սիրած աղջկա, ծնողի... հանդեպ է: Աշոտն իր ստեղծագործություններով պայքարում է միայն ու միայն հանուն սիրո: Իր բնավորության անմիջականությունը, համեստությունը, զուլալությունն են արտացոլված նրա երգերում:

Նրան հաճախ էի ասում. «Գուսա՛ն ջան, կգա մի ժամանակ, որ Ձեր ամեն մի ֆրազը կդառնա երաժշտագիտական ուսումնասիրության աղբյուր»: Բայց ցավալիորեն պետք է նշեմ, որ այսօր հաճախ ոչ թե ուսումնասիրում, այլ աղավաղում են: Ներկայումս շատերն են ինքնագործունեությամբ զբաղվում, զանազան

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

տեխնիկական սարքավորումների միջոցով մշակումներ անում՝ հաճախ անհաջող: Երբեմն ապշում եմ՝ լսելով՝ երաժշտությունը Կոմիտասի, մշակումը՝ ենթադրենք թե Պողոս Պողոսյանի: Ինչպե՞ս կարելի է Կոմիտասի երաժշտությունը մշակել. չէ՞ որ Կոմիտասն ինքն է մշակել: Խոսք ունեք ասելու, ինքնուրույն ասեք՝ առանց ուրիշներին աղավաղելու: Կուզենամ անդրադառնալ նաեւ երիտասարդ կատարողներին, որոնց մի փոքր հատվածին կարելի է միայն բարձր գնահատել, մյուսները ո՛չ ճաշակով, ո՛չ մոտեցմամբ, ո՛չ էլ առավել եւս կատարած երգերով բնավ աչքի չեն ընկնում եւ կործանում են մեր երգարվեստի դարավոր ավանդույթները:

– Գուսանը նախ մեղեդի՞ն էր ստեղծում, հետո՝ տեքստը, թե՞ հակառակը:

– Երբեմն տեքստն ու մեղեդին միաժամանակ էին ծնվում, երբեմն՝ առանձին: Ամեն մի տողի, քառյակի համար մտմտում էր, երբեմն երբ նոտագրում վերջացնում էինք, ասում էր՝ երգի՛ր, տեսնեմ՝ հավանո՞ւմ եմ: Եթե ինչ-որ հատված չէր հավանում, սահուն չէր անցնում, ասում էր՝ չէ՛, ախպո՛ր տղա, պռշնին կյամ չի, ու այն շտկում էր: Երբեմն պատահում էր, որ իմ կարծիքն էր հաշվի առնում մեղեդու մեջ փոփոխություններ մտցնելու համար:

– Ի՞նչ կարծիք ունեք այսօր մեր իրականության մեջ աշուղական արվեստի հանդեպ ունեցած վերաբերմունքի մասին:

– Առհասարակ հայ մեղեդիական մտածելակերպն է փոխվել, շատ-շատերն են կոմպոզիտոր կոչվում, որ երգահան էլ չեն: Այս համապատկերի վրա աշուղական դպրոցով հետաքրքրվողներն են նվազել: Իհարկե, մեր օրերում նույնպես կան աշուղներ, ողջունելի է այն փաստը, որ կին աշուղներ էլ կան, բայց, ինչպես ասում են, պատկերն այնքան էլ ոգեւորիչ չէ: Աշուղական արվեստը ժողովրդականի հետ միասին մեր ժողովրդի մեծագույն հարստությունն է, քանի որ այնտեղ կա հոգեւոր շաղախվածություն, հոգեւոր կյանք, պատմություն, ազգային մտածելակերպ: Կուզենայի, որ այդ սակավ հետաքրքրության մեջ գոնե որակը չպակասեր, ժողովրդական մտածելակերպը մնար: Մենք մոնոդիկ ազգ ենք, բայց այդ մոնոդիզմի մեջ հրաշալի հարմոնիա եւ բազմազանություն կա. մեր դուդուկը հերիք է, որպեսզի դրանով բոլոր ելեւէջները կամ ակորդիկաների շարժումներն ունենանք:

Մի նկատառում եւս. հայ երաժշտարվեստում հատկապես մեծություն են դառնում, ժողովրդայնություն վայելում նրանք, ովքեր իրենց մեղեդիները ստեղծելիս օգտագործում են կոմիտասյան գոնե 4-8 տակտ: Եթե հայկական երաժշտության հիմքում, անկախ նրանից ինչ ժանրի է, Կոմիտասն է, ով մեզ մատուցել է զուլալ աղբյուր, ապա պատմության մեջ հրաշալի ազգային արժեք է ստեղծվում: Շատերն են կոմիտասյան ուժով հանճարներ, լեգենդներ դարձել:

– Ըստ Ձեզ՝ նրա հատկապես ո՞ր երգերը հավերժական կյանք կունենան:

– Եթե Գուսան Աշոտի բոլոր երգերն էլ կատարեն, ապա դրանք բոլորն էլ հավերժական կյանք կունենան: Գուսանի երգերից «Ուր է», «Սուրբ մայրեր», «Օջախում», «Հուշարձաններ», «Լուսնի շողը» եւ մի շարք այլ երգեր մոնումենտալ ստեղծագործություններ են, որոնք, կարծում եմ, մշտապես կհնչեն:

– Ինչպե՞ս եք գնահատում մատաղ սերնդին ճիշտ երաժշտություն մատուցելու ներկայիս վիճակը:

– Երաժշտության դերակատարությունը մատաղ սերնդի դաստիարակության գործում անգնահատելի է: Եթե մեր ոխերիմ թշնամին բարձրաճաշակ երաժշտություն ունենար, այդքան բարբարոս չէր լինի: Աշուղական երգարվեստը համախմբում է ժողովրդի լայն զանգվածներին, որոնց միջից էլ ծնվում են տաղանդավոր անհատներ, որոնք էլ տարբեր բնագավառներում հաջողություններ են արձանագրում: Կոմիտասն ասում էր՝ մտեք ցանկացած գյուղ եւ հարցրեք, թե ով է այսինչ երգի հեղինակը, նրանք անմիջապես որեւէ մեկին մատնացույց կանեն, իսկ երբ արդեն այդ անունները մոռացվում են, երգը դառնում է ժողովրդական:

Ցավալի է, բայց այսօրվա դպրոցական երաժշտական դասագրքերն ու ծրագրերն այնքան են աղավաղվել, որ այնտեղ չկա արդեն այն հիմքը, որից կկարողանա սնվել սերունդը: Հայ ժողովուրդն այնքան տաղանդավոր կոմպոզիտորներ, մանկական երաժշտության հեղինակներ ունի, որոնցից կարելի է օգտվել եւ դրանցով կրթել մեր երեխաներին: Ծրագրերից բացի՝ մեր երգիչներն էլ ամենայն ջանասիրությամբ դիմում են անգլերենին, կիսատ-պռատ մեղեդայնությամբ հորինված երգերին՝ հայերենն ու հայկականը մոռացած, ինչը վերջնականապես ապակողմնորոշում է սերնդին. նա խճճվում է՝ չգիտի, թե որն է ճիշտ, որը՝ սխալ: Ներկա թվացյալ կոմպոզիտորական դպրոցի մեղեդիական կերտվածքները չեն ապացուցում հայկականությունը, ուսանելի եւ դաստիարակիչ չեն եւ բացարձակ չեն համապատասխանում բուն ակունքներից եկող մեր շնորհալիների ստեղծածին:

Ինչպես Կոմիտասն էր ասում. «Սխալ դաստիարակությամբ ազգ մը կկործանենք վերջը»:

– Արդյո՞ք ըստ արժանվույն է գնահատվել Գուսանի վաստակը:

– Ինչպես մեր բոլոր մեծերի, այնպես էլ Գուսան Աշոտի վաստակն ինչքան էլ ներկայացնեն, միեւնույն է, թերի կարելի է համարել: Իմ կարծիքով՝ հեռահաղորդակցման ուղիներով առավել հաճախ պետք է հնչեն Գուսան Աշոտի եւ ընդհանրապես մեր հանճարեղ երաժիշտների երգերը: Աճող սերունդը պետք է ամենօրյա դաստիարակություն ստանա նաեւ ճշմարիտ, հոգեհույզ երաժշտության մատուցմամբ: Կուզենամ, որ իսկապես ճանաչեն Գուսան Աշոտին, ըստ արժանվույն նրա ջահը պահեն եւ փոխանցեն սերունդներին:

– Եվ վերջում՝ ըստ Ձեզ՝ Գուսան Աշոտն իրեն բախտավո՞ր մարդ էր համարում:

– Կարծում եմ՝ ո՛չ, բայց երբեք ցույց չէր տալիս իր տխրությունը: Խոր տառապանքի մեջ անգամ կարողանում էր արժանին ստեղծել ժողովրդի համար՝ հաղթահարելով իր ցավերը. տխրությունը, վատատեսությունը տեղ չեն գտել նրա երգարվեստում:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

Մերուժան Տեր-Գուլանյանի գնահատանքի խոսքը

Ինչպես մեծ գրող Սերո Խանզադյանը կասեր, չեմ հիշում էսինչ թիվն էր, էնինչ թիվն էր, ինչ որ է, մի սովի տարի էր... 1987թ., երբ տակավին «Գարուն» ամսագրի խմբագիրն էի, հրավիրվել էի մասնակցելու Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում Գուսան Աշոտի ծննդյան 80-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառմանը: Այդ ժամանակ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղարն էր Ռոբերտ Ալեքսանյանը՝ մի պատվական մարդ, ով ոչ միայն այս միջոցառումը, այլեւ բոլոր հոբելյանական միջոցառումները կազմակերպում էր բարձր մակարդակով:

Դահլիճը լեփ-լեցուն էր, հրավիրվել էին ժամանակի նշանավոր գործիչներ, իսկ հիմնական բանախոսը Սերո Խանզադյանն էր: Բեմում դրված մեծ բազկաթոռին նստել էր Գուսան Աշոտը՝ այդ տաղանդավոր մարդը, ում երգերն այդ շրջանում բոլորս էինք լսում, կատարում:

Սերո Խանզադյանը երկար խոսեց Հայրենական մեծ պատերազմից, հուշեր պատմեց, ներկայացրեց, թե ինչպես աքսորից ազատեց քույրերին, մորը, ինչը ստալինյան ժամանակաշրջանում իսկապես հազվագյուտ երեւույթ էր... Մինչ նա երկար պատմում էր պատերազմից, իր ընկերոջից եւ այլն, Գուսան Աշոտը բազկաթոռին անուշ քուն էր մտել (դե իր մասին չէին խոսում): Ռոբերտ Ալեքսանյանն անընդհատ ժամացույցն էր ցույց տալիս Սերո Խանզադյանին, բայց նա, տարերքի մեջ, ձախ ձեռքը գոտին խրած, շարունակում էր իր ելույթը: Հանկարծ նկատեց Ռոբերտ Ալեքսանյանի ձեռքի շարժումը եւ ասաց. «Հա չմոռանամ ասել, որ Գուսան Աշոտի «Ոչ մի ծաղիկ քո բուրմունքը չունի» երգը որ կա, ավելի լավն է, քան «Ինտերնացիոնալը»»: Բարձր ծափահարություններից դահլիճը դղրդում էր, եւ հետաքրքիրն այն էր, որ բանախոսի այդ մեկ նախադասությունն ավելի մեծ ոգեւորություն առաջացրեց, քան եթե մեկուկես ժամ Գուսանի մասին խոսվեր:

Գուսանի բերած արվեստը, ես կասեի նույնիսկ մշակույթը, սյունեցու մտածելակերպն արտահայտող ստեղծագործություններ են... Նրա «Սյունյաց սարեր», «Սերս վանքում Տաթեւի», «Ոչ մի ծաղիկ քո բուրմունքը չունի» եւ մյուս երգերը խորագույնս հայկական են: Ամենահետաքրքիրն այն է, որ այդ շրջանում էլի գուսաններ կային, բայց նրանց երգերն ավելի շատ ռաբիս էին, ասենք, օրինակ, «Ինժեներ բալա» երգը: Ի դեպ, այդ երգերը նույնպես հնչում էին ռադիոյով, հեռուստատեսությամբ եւ լայն տարածում ունեին: Իսկ Գուսանի երգերը դասականացված էին, նա Սայաթ-Նովայի, Չիվանու հիմնադրած դպրոցների ներկայացուցիչն է, նրանց շառավիղը, խորապես ազգային է նրա երգարվեստը՝ Սյունյաց աշխարհի կնիքը վրան:

Նրա երգը երբեք ոչ մեկի երգի հետ չեմ շփոթի: Գուսան Աշոտը տաղանդավոր մարդ էր, եւ այսօր էլ մնում է արդիական: Ճիշտ է, լինում են պահեր, որ երբեմն մեծ գուսանները երկրորդ պլան են մղվում, եւ առաջին պլանում են հայտնվում այսպես ասած երիտերգիչները, որոնք, պատկերավոր ասած, ինչպես բարձրավանցի Ջուլիետը դասը կպատմեր, խոսքերը երկարացնում են՝ առանց մեղեդու: Նրանց թվում է, թե որոշակի տեխնիկական հնարքներով գրված երգերով կարող են մնայուն արժեքներ ստեղծել: Իսկ Գուսանի երգերը նույնիսկ ակապելլա կատարելիս իրենց հմայքը չեն կորցնում, քանի որ ե՛ւ մեղեդին, ե՛ւ խոսքերը ճիշտ են հյուսված: Այնքան ներդաշնակություն կա այդ երգերում, որ բավական է՝ մեկ անգամ լսես, եւ այն քոնը կդառնա:

Մի համեմատություն եւս բերեմ. օրինակ՝ Շերամի երգերը փայլուն են, հետաքրքիր է, որ դրանցից շատերը թուրքերենով կատարում են, այսինքն՝ նրա մեղեդու մեջ արեւելյան տարրերը գերակշռում են, իսկ ասենք Գուսանի, Չիվանու երգերը թուրքերեն չէին կարող երգել, որովհետեւ լադն արեւելյան չէ, այլ՝ հայկական: Սա մեծագույն նվաճում էր ոչ միայն այն ժամանակ, այլեւ այսօր, խնդիրն այն է, որ Գուսանի երգերը պետք է հաճախ հնչեն թե՛ ռադիոյով, թե՛ հեռուստատեսությամբ, թե՛ համացանցում, որպեսզի մեր երիտասարդները ճանաչեն ու գնահատեն մեր մեծերին: Դրանք անմահ երգեր են, եւ քանի դեռ հայ ժողովուրդը կա, այո՛, «Ոչ մի ծաղիկ քո բուրմունքը չունի» երգը կլինի...

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գրականագիտություն եւ երաժշտագիտություն

Մարդը երգի է փոխում իր սրտի թրթիռները

ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գրող, հրապարակախոս

Անտառային կածանով մի ծիավոր էր գնում: Ուղեկիցները ետ էին ընկել, եւ նա մենակ էր: Մենակ՝ իր հոգում ծնվող հնչյունների եւ բնության լուսավոր գույների հետ: Վերեւում բաց կապույտ երկինքն էր, շուրջը կանաչ, մուգ կանաչ անտառը: Ու հանկարծ, առջեւում թփերը խշշացին եւ ձիավորի երազուն աչքերը հազիվ մի քանի քայլ հեռու նկատեցին... այո՛, եղջերու էր, գեղիրան մի եղջերու, որ թվաց դուրս սահեց նրա մանկության մշուշներից: Մարդը բիբերի վրա, ասես, գարնանային արեւի խտտանք շոշափեց ու ձգեց ձիու սանձը: Բայց եղջերուն երեւի զգաց ձիավորին եւ նորից չքացավ, ասես հալվեց անտառի գույների մեջ: Ուղեկիցները մոտեցան: Նրանցից մեկը ինչ-որ բան հարցրեց, բայց մարդը արդեն ուրիշ ձայն էր լսում:

Օրը իրիկնանում էր, երբ հասան գյուղ: Թանկագին հյուրին սրտաբաց ընդունեցին լեռնալանջին փռված զանգեզուրյան գյուղի մարդիկ: Ջերմ խոսքեր, ժպիտներ, երգեր: Բայց մարդը մտախոհ էր, նրա սրտից ալիք-ալիք ծորում էին հնչյունները, իսկ շուրթերը շշնջում էին պարզ, մարդկային տողեր.

Մեր մով սարերում,
ամռան առավոտ,
Մի պախրա դեւսա
կաթնաղբյուրի մոտ,
Իջել էր ձորը մթին անդառից
Ու ջուր էր խմում զուլալ աղբյուրից:
Իրեն դեսել էր ջրի հայելում,
Սարերի անուշ բույրն էր վայելում,
Արդյոք խմո՞ւմ էր,
թե՞ համբուրում էր...

* * *

Այստեղ, այս լեռնալանջերին էր գլորվել նրա մանկությունը: 7-8 տարեկան գանգրահեր մի պատանյակ էր, իր հասակակից տղաների հետ միասին գառներ էր պահում: Անտառն էր նրա վերմակը եւ աստղազարդ երկինքը առաստաղը նրա տան: Իսկ ամենամտերիմ բարեկամը սրինգն էր, որ այնքան լավ էր թարգմանում մանուկ սրտի թրթիռները...

Անվարժ, քնքուշ մատներով նա նվագում էր, իսկ գառնուկները՝ նրա առաջին ունկնդիրները, մայում էին ծաղիկների ու կանաչի մեջ...

Այստեղ, Զանգեզուրի սարերում հաճախ էին երեւում ժողովրդի երգիչներն ու գուսանները, եւ պատանին, ամաչկոտ ժպիտով չուխայի տակ պահելով սրինգը, կլանված լսում էր նրանց...

Երգով ու ստվերներով լցված այս իրիկունե՞րն արդյոք սերմեր գցեցին նրա հոգում, թե՞ բնությունը հնչյուններով լցրեց պատանեկան սիրտը...

* * *

Այդ պատանին հիմա հայտնի է մի անունով. գուսան Աշոտ: Նոսրացել են գանգուր մազերը, կյանքը կնճիռներ է նկարել դեմքին, բայց աչքերում մնացել են պատանեկան օրերի գույները, բայց սիրտը դեռ պարուրված է լուսավոր հնչյուններով... Գուսան Աշոտի երգերը միշտ էլ հեշտությամբ են ճանապարհ գտնում դեպի լսողի սիրտը: Դրա համար էլ նրա յուրաքանչյուր նոր երգը մի քանի օր հետո երգվում է ամենուր: Աշոտը սերում է անզուգական Սայաթ-Նովայի, Ջիվանու եւ Շերամի գուսանական զարմից եւ իր մեծ նախորդների նման ջուր է խմում ժողովրդական երգի կաթնաղբյուրից:

* * *

Վճիտ ու մարդկային են գուսանի երգերը: Ինչո՞ւ. ամենից առաջ՝ նրա երգերը մարդկային հոգու թրթիռների արձագանքն են: «Էն սարերը», «Մոր սերը», «Պախրա», «Հուշարձան», «Ո՞ւր է», «Ծառերը ծաղկում են», «Սարի սիրուն յար»... յուրաքանչյուր ընթերցող իր մտքում երեւի կշարունակի այս ցուցակը իր սիրած, իր հոգուն մտերիմ երգերով... Ինչպիսի խոր մարդկային հույզեր են փայլփլում այս երգերի մեջ, որքան նրանք գեղեցիկ են: Եվ դա բնական է, գուսանը դրանք չի հորինել գրասեղանի առաջ նստած, դրանք մասամբ կյանքի արձագանքներն են: Բայց ամեն անգամ, երբ խնդրում են պատմել իր սիրած երգերի ծննդյան պատմությունը, գուսանը շփոթվում է, լռում: Նա այնքան մոտիկ է կյանքին, մարդկանց, որ դժվարանում է որոշել՝ երբ հուշեց կյանքը ու երբ ծնվեց երգը: Իսկ երբ փորձում է վերհիշել, ստացվում են պարզ, անպաճույճ զրույցներ՝ մարդկային ուրախության ու թախծի մասին:

- 18-20 տարեկան էի, սիրում էի առաջին անգամ: Սեւ, կրակի պես աչքեր ուներ նա, երկար մազեր: Բայց մեզ բաժանեցին.

Ես հիշում եմ մեր սարերի լանջերը,
Աղբյուրների սառ ջրերի կանչերը,
Հովիվների կրակների պես անմար
Սարի եղնիկ յարիս
սեւ-սեւ աչքերը...

- Պատերազմ էր, վիշտ: Ծեր մայրը ինձ էր տալիս կարդալու որդուց ստացած նամակը, ջահել հարսը աչքը ճամփին թախծում էր.

Էն սարերը ձյուն են հագել,
Մի հարցրեք հալիցս,
Ձյուն են հագել, ճամփեն փակել,
Խաբար չունեմ յարիցս...

Բայց ամենահուզիչն այն էր, ինչ գուսանը պատմեց «Հուշարձան» երգի մասին:

Գրականագիտություն եւ երաժշտագիտություն

- Պատերազմը վերջացել էր: Շատ հերոսներ տուն չէին եկել: Աղբյուրհուշարձան կառուցեցին: Ես հաճախ էի տեսնում, թե ինչպես մայրերն ու քույրերը կռանում էին աղբյուրի վրա ու խմում երկա՜ր-երկա՜ր: Ինձ թվում էր, թե նրանք համբուրում են իրենց կորած հարազատների կարոտ շուրթերը, ինձ թվում էր այդ մաքուր ջուրը նրանց՝ հերոսների հոգուց է աշխարհ ելնում.

Նրանց պայծառ հոգիներից
Բխում է սառ, զուլալ աղբյուր,
Ամեն անգամ ջուր խմելիս
Շրթունքներով կրանք համբույր:

* * *

Այսպիսին է եղել գուսանի ճամփան. նա միշտ ապրել է ժողովրդի հետ, ժողովրդի խոսքերով ու հոգսերով եւ միշտ էլ նրա ներշնչանքի աղբյուրը բնական տպավորություններն են եղել: Բայց դա բոլորը չէ, երջանիկ պատահականությամբ գուսան Աշոտի մեջ զուգադրվել են բանաստեղծն ու երաժիշտը:

Բազմաթիվ սրտահույզ մեղեդիների հեղինակ է գուսանը եւ թեպետ, որքան էլ տարօրինակ թվա, մինչեւ օրս դեռ Կոմպոզիտորների միության անդամ չէ, ոչ ոք չի վիճի մեզ հետ, Աշոտի ստեղծած շատ երգեր հարստացնում են հայ երաժշտությունը: Բնատուր փայլուն շնորհքի հետ միասին նրան օգնել ու օգնում են ժողովրդական երգը, մեծ Սայաթ-Նովան, Կոմիտասը, մեր եկեղեցական երաժշտության գեղեցիկ կտորները:

Մեղեդիների մասին ո՛չ հնարավոր է գրել եւ ո՛չ նկարել թղթի վրա: Բայց ես համոզված եմ. այս տողերը կարդալով երեւի դուք արդեն, գուցե ձեզանից անկախ, շշնջում եք այն, ինչ մոտ է ձեր սրտին... Ուրեմն, պատկերը լրիվ է: Բայց ոչ. չի կարելի չխոսել Աշոտ-բանաստեղծի մասին:

Նրա ման եկած տեղերը կանչում են օր ու գիշեր,
Կանաչներից աղբյուր բխում, կարկաչում են օր ու գիշեր...

Սարի սիրուն յար, սարի
մեխակ բեր,
Ամ, չէ ինչ մեխակ՝ սիրո կրակ բեր:

Ծառերը ծաղկում են գարին
մեկ անգամ,
Իսկ դու գարուն ես՝ հավերժ
անթառամ...

Այս (եւ ուրիշ բազմաթիվ) տողերի տակ սիրով կստորագրեր յուրաքանչյուր բանաստեղծ: Համարձակ կարելի է ասել. Աշոտի գրած բանաստեղծական լավագույն տողերը կարող են քննություն բռնել անկախ նրանց հրաշալի մեղեդիներից: Իսկ այս արժանիքը հաճախ չէ, որ հանդիպում է գուսանների մոտ:

Օրերս լույս է տեսել Գուսան Աշոտի երգերի ժողովածուն: Երաժշտությունից անտեղյակ մարդն անգամ՝ այդ երգերում կգտնի գեղեցիկ բանաստեղծական տողեր, որոնք խոհեր կբերեն, հուշեր կարթնացնեն, զգացմունքներ կշոյեն: Բայց, իհարկե, այդ նետերը ավելի հեռուն են թռչում միայն Աշոտի երաժշտության աղեղից թափ առնելով:

* * *

Մեր սիրելի գուսանը սիրված արվեստագետ է ե՛ւ մեզ մոտ, ե՛ւ Հայաստանից դուրս: Բայց այս պահին ես այդ չէ, որ հիշում եմ: Ես չեմ հիշում անգամ, թե անցած ամառ, Դանուբի վրա զբոսնելիս ինչպիսի սիրով էինք մենք երգում գուսանի երգերը եւ ինչպիսի սիրով էին մեզ ձայնակցում հունգարներ, գերմանացիներ, ռումիններ:

Ես ուրիշ դեպք եմ հիշում: Մի քանի տարի առաջ էր: Փետրվարյան գիշեր: Գուսանին հրավիրել էին Արարատյան դաշտի գյուղերից մեկը, ես նրա հետ էի իբրեւ թղթակից: Բայց ահա, երբ տեղ հասանք, պարզվեց, որ այնքան մարդ է հավաքվել, որ ակումբը չի տեղավորում, շատերը դրսում էին: Ի՞նչ անել: Մինչեւ մենք մտորում էինք, գյուղացիներից մեկը առաջարկեց.

- Գնանք նոր շենքը, ճիշտ է, ցուրտ կլինի, բայց...

Գնացինք: Ակումբի կառուցումը դեռ չէր ավարտված. հատակը հող էր, լուսամուտներ չկային: Բայց մարդիկ սեղմվեցին իրար, իրենց շնչառությամբ ջերմացրին օդը, եւ գուսանը բեմ բարձրացավ: Ցուրտը ազդել էր, նա երգում էր փոքր-ինչ խզված ձայնով, բայց դահլիճը լսում էր հուզմունքից էլեկտրականացած...

Մարդիկ ձեռքերը շփում էին իրար, պատուհաններից ներս էր սուրում փետրվարյան քամին, բայց համերգը գնում էր

Եվ ահա, ամեն անգամ, երբ խոսում են գուսանի ժողովրդականության մասին, ես այս դեպքն եմ հիշում, որ ինքը գուցե վաղուց մոռացել է: Այսօր էլ, թեպետ հոբելյան չէ (ի դեպ նոր է բոլորել գուսանի 50 տարին), ուզում եմ ամբողջ սրտով ասել, թե որքան է նա մտերիմ ժողովրդի սրտին եւ իր իսկ տողերը փոքր-ինչ փոխելով, հավատացնել.

Մահ չեմ տեսնի թեկուզ
մի երգդ մնա
Քո հայրենի աղբյուրների ափերին,
Քո աշխարհի աղջիկների
շուրթերին...

Գրականագիտություն եւ երաժշտագիտություն

Գուսան Աշոտ



ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱԶՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

Գուսան Աշոտի ստեղծագործությունը վաղուց արդեն մտել է ժողովրդի կենցաղի ու աշխատանքի մեջ: Նրան երգում են բանվորն ու գյուղացին, ջահել հնձվորն ու տարեց այգեպանը, հովիվն ու գութանավորը, ուսանողն ու ինտելիգենտը: Նրա երգերը դուրս են եկել ռեսպուբլիկայի սահմաններից:

Գուսան Աշոտի հանրածանոթ երգերը մտել են միության պրոֆեսիոնալ անսամբլների ռեպերտուարը, կատարվում են բազմաթիվ լեզուներով:

Աշոտի ստեղծագործությունն ուրույն տեղ է գրավում հայ գուսանական արվեստի պատմության մեջ: Նրա երգերին հատուկ են մեր գուսանական կլասիկայի բնորոշ գծերը՝ երաժշտության ու խոսքի խոր ներդաշնակությունը, խոսքի բանաստեղծական ուժն ու թովիչ մելոդիան:

Եթե դրան ավելացնենք նաեւ կատարման վարպետությունը, ապա լիովին հասկանալի կդառնա գուսան Աշոտի երգի հմայքի ու ժողովրդայնության գաղտնիքը:

Ուսումնասիրելով հայ կլասիկ գուսանների, հատկապես Սայաթ-Նովայի եւ Ջիվանու խոշոր ժառանգությունը, օգտագործելով խոսքի եւ երաժշտության բնագավառում կուտակված՝ նախորդների փորձը, Գուսան Աշոտը ինքնատիպ ձեւերով երգել է սովետական նոր կյանքը: Անմիջական կապ ունենալով մեր ժողովրդական բազմադարյան երգի ակունքների հետ, նա կարողացել է հմտորեն օգտագործել ժողովրդական երաժշտության պայծառ երանգները՝ պարզությունը, անկեղծությունը եւ մտերիմ ջերմությունը:

Գուսան Աշոտը ծնվել է 1907 թվականին, Գորիսում: Լինելով խաշնարածի որդի, վաղ հասակից նա հովվություն է արել Զանգեզուրի սարերում:

Այստեղ, բնության գրկում, հովիվների շրջանում նա ստանում է իր երաժշտական առաջին կրթությունը, նվագում է սրինգ:

«Ես հիշում եմ մեր սարերի
լանջերը,
Աղբյուրների սառ ջրերի կանչերը,
.....
Ես հիշում եմ մորս ձայնը
սարերում,
Ոչխարների մակաղելը քարերում,
Հովիվների սրինգների
ձայնն անուշ,
Սարին նստած թուխ ամպերի
հովերում...»:

Պատանի տարիներից Աշոտը հրապուրվում է Զանգեզուրի գուսանների երգերով: Նրան առանձնապես հմայել է ժամանակի հայտնի աշուղ Աթան, որից առաջին անգամ լսել է հայ գուսանական հնագույն երգեր, ծանոթացել գուսանական երգի կառուցման առանձնահատկություններին եւ տեխնիկային:

Տասնհինգ տարեկան հասակում նա թողնում է հայրենի եզերքը ու մեկնում Բաքու, որտեղ հայ ու ադրբեջանցի լավագույն կատարողներից սովորում է նվագել սազ եւ քամանչա: Երիտասարդ գուսանը բռնում է կյանքի մեծ ճանապարհը ու իր անբաժան քամանչայի հետ շրջում Անդրկովկասի գրեթե բոլոր քաղաքներն ու գյուղերը:

Մոտիկից տեսնելով ռեւոլյուցիայի ուժով վերածնված ժողովուրդների նոր կյանքը, նա սկսում է հորինել ուրախության ու սիրո, եղբայրության ու խաղաղ աշխատանքի իր երգերը:

Գուսան Աշոտի անունը լայնորեն հայտնի է դառնում երեսնական թվականներից: Մասնակցելով ժողովրդի ստեղծագործական ուժերի օլիմպիադային, նա արժանանում է առաջին մրցանակի եւ գրավում հասարակության ուշադրությունը:

Այնուհետեւ շուրթից շուրթ են անցնում նրա «Զանգեզուրյան շարքի» հմայիչ երգերը:

Հայրենական պատերազմի շրջանում Գուսան Աշոտի երգը ստանում է նոր ուժ: Նրա խոր հայրենասիրական երգերը «զեփյուռի թեւերով» հասնում են ռազմադաշտ, նրան երգում են զինվորները.

«Զեփյուռը փչեց իմ Հայաստանի,
Մոր համբույրի պես դիպավ
երեսիս... »

Այս ու նման երգերի մեջ Գուսան Աշոտը ստեղծագործական ոգեւորությամբ ներբողում է հայրենի երկրի չքնաղ գեղեցկությունը, երգի ուժով ոգեւորում զինվորներին՝ պաշտպանել հայրենի հողն ու տունը, հայրենի բնաշխարհը, հայրենի օջախը:

Այնուհետեւ, ամփոփելով իր պատերազմական շրջանի ստեղծագործությունը՝ նա հորինեց «Աղբյուր հուշարձանը», որը իրավամբ երգի մի սքանչելի կոթող է:

«Նրանց արդար հոգիներից
Բխում է պաղ, զուլալ աղբյուր,
Ամեն անգամ ջուր խմելիս,
Շրթունքներով կդպանք համբույր...»:

Մյուս կողմից Գուսան Աշոտը ստեղծում է սիրո, աշխատանքի նոր երգեր, հասնելով բարձր վարպետության: Այդ երգերում («Ուր է», «Ոչ մի

Գրականագիտություն եւ երաժշտագիտություն

«ՍԻՐՈ ԿՐԱԿՆԵՐ» ԳՐՔԻ ԱՌԱՋԱԲԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ավելի քան հիսուն տարի է, ինչ ստեղծագործում է տաղանդաշատ Գուսան Աշոտը: Եվ այդ տարիների ընթացքում ինչքան բան է արել նա: Այդ ամենի մեջ դրսեւորվում է գուսանի վառ եւ ինքնատիպ քանքարը, որն իր հարուստ անհատականության մեջ ներծուլում է հրաշալի կերպով ժողովրդի բանաստեղծին եւ երգահանին:

Իր ստեղծագործական բեղմնավոր գործունեության ընթացքում Գուսան Աշոտը հասել է այնպիսի բարձր բանաստեղծական-երաժշտական արդյունքների ու նվաճումների, որոնց գեղարվեստական նշանակությունն ու դերը հնարավոր է, որ մինչեւ վերջ չի բացահայտված եւ պետք է գրավի գրադատների եւ երաժշտագետների ուշադրությունը: Գուսան Աշոտը իր ստեղծագործության մեջ դիմում է գուսանական արվեստի ավանդական ձեւերին: Դրա հետ միաժամանակ նրա երգերը այնքան ինքնուրույն են, խորիմաստ ու հարազատ ժողովրդին, որ թվում է, թե նրա ամեն մի պատկերը, ամեն մի երգը բխել է ժողովրդի սրտից:

Գուսան Աշոտի «Սիրո կրակներ» գրքի մեջ կան մի քանի առաջատար, գլխավոր թեմատիկ գծեր, որոնց մեջ գերիշխողը եւ հարատեւողը սիրո փառաբանությունն է: Նրա ամեն մի գործի մեջ ակնհայտորեն զգացվում է բանաստեղծի անկրկնելի գրելաոճը. անկեղծությունը, հոգեբանական ճշմարտացիությունը, ռոմանտիկական հուզումնալիությունը. հարուստ պատկերավորությունը: Ժողովրդայնություն եւ հայրենասիրություն՝ ահա նրա ստեղծագործությունների հիմնաքարը:

«Սիրո կրակներ» երգերի ժողովածուում ընթերցողը նորից է համոզվում գուսանի ստեղծագործության զարմանալի քնարական հարստության, նոր ստեղծագործական գյուտեր անելու ունակության մեջ, հիանում նրա պատկերային շքեղ փայլատակումներով եւ ռիթմական զարգացման բնականությամբ: Բնութագրելով գուսանի նոր գիրքը, նրա գաղափարական-գեղարվեստական արժանիքները, պետք է առաջին հերթին նշել, որ այն խորապես լավատեսական է, լայնաշունչ, կյանքով, հոգեկան ձգտումներով առլեցուն: Այն հագեցած է մարդու եւ բնության գեղեցկության ռոմանտիկական հիացմունքով: Գուսանին խորթ չեն նաեւ դրամատիկ, հուզախռով պահերը, որոնք բանաստեղծորեն կոնկրետացված են, արտահայտում են բազմապիսի մտորումներ ու տրամադրություններ:

Գուսանի նոր գիրք-երգարանը, որ պարունակում է հարյուրից ավելի երգ, աչքի է ընկնում ռեալիստական ճշմարտացիությամբ, հոգեկան խորությամբ եւ բազմակողմանիորեն է ներկայացնում հեղինակի տաղանդի ուժն ու փայլը: Այս ամենը ինքնատիպ է, խիզախ, ներշնչումով լեցուն: Դրանցից առաջնակարգ տեղ են գրավում «Հազար օրհնանք», «Սյունյաց սարեր», «Օջախում». «Սերս վանքում Տաթեւի», «Սիրահարը», «Երազ», «Անցար այգուս նայելով» «Ղարաբաղի գարունը», «Ծառերը ծաղկում են», «Ծննդավայր», «Իմ օրորան», «Մուրղուզա եղնիկ», «Մանուշակի ձորը», «Գարուն է», «Սուրբ մայրեր», «Էն օրեր», եւ այլ երգեր, որոնք բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում: Այդ երգերում առավել պարզորոշ են արտահայտված տաղանդավոր գուսանի պոետական գրելակերպի առանձնահատկությունները, ստեղծագործական ներշնչանքի անմիջականությունը, կենսահագեցվածությունը: Ժողովածուի այս եւ մյուս երգերը վկայում են հեղինակի ստեղծագոր-

խորշակ», «Սայաթ-Նովային» եւ այլն) արտահայտված են սովետական ժողովրդի հոգու ուժն ու ամրությունը, հումանիզմն ու հայրենասիրությունը:

«Ոչ մի խորշակ բուրաստանս
չի մտնի,
Ոչ մի քամի վարդիս թուփը չի պոկի,
Ոչ մի ծաղիկ չի թառամի, չի թոշնի,
Քանի որ այն իմ մայր
հողումն է բացված,
Իմ հայրենի բարդիներով
պարապված»:

Գուսան Աշոտի ստեղծագործության էական գիծը պայծառ լավատեսությունն է կյանքի,մարդու ապագայի, երկրի այսօրվա ու գալիքի նկատմամբ: Նրա երգերի մեջ արտահայտված է անսահման սեր դեպի մարդն ու հայրենիքը, դեպի եղբայրական ժողովուրդներ, քնքշություն՝ դեպի մերձավորն ու հարազատը, անկեղծ սքանչացում բնության ու աշխարհի գեղեցկությունների նկատմամբ: Երբեմն նրա երգերի մեջ զգացվում են նաեւ թախծի շեշտեր, բայց այդ թախծի թեթեւ երանգները ծնվում են իր հայրենի աշխարհի նկատմամբ տածած բացառիկ սիրուց: Գուսանն ուզում է հավերժ ապրել իր գեղեցիկ երկրի ու «ծնող մեծ ժողովրդի հետ»:

Լավ է ասել Գուսան Աշոտը երգի մասին:

«Կյանքի հովտում թե մի ծաղիկ
ցանես դու,
Երգի ծովին թե մի աղբյուր
դանես դու,
Ով իմ գուսան, անունդ անմահ
կանես դու...»:

www.gusanashot .com

Գրականագիտություն եւ երաժշտագիտություն

ծական հետաքրքրությունների բազմազանության եւ բանաստեղծական վառ երեւակայության մասին: «Պիտ երգեմ» երգը անկասկած պատկանում է հայ գուսանական արվեստի լավագույն նվաճումների թվին, եւ նրա կենտրոնական պատկերը առլեցուն է մեծ կենսունակությամբ, պարզ ու որոշակի պոետական մտածողությամբ, լայն երգեցիկ շնչով: Գուսանի յուրահատուկ հստակորեն վառ պատկերները այնպիսի արտահայտչական ուժ ունեն, որ գրավում են անմիջականորեն ընթերցողների եւ լսողների միտքն ու զգացմունքները: Այդ գեղարվեստական առանձնահատկությունները կարելի է տեսնել նաեւ «Օջախում» երգի մեջ, որը ոճական տեսակետից կատարյա՛լ է: Ամբողջը տրված է հույզի եւ խոհի պոետական խորը միասնության մեջ, սեղմ եւ խտացված ձեւով: Ամեն ինչ այստեղ միաձույլ է, եւ անցումները տեղի են ունենում ներդաշնակորեն: Կրքոտ եւ գեղեցիկ է հնչում «Գարուն է» երգը, որը պատիվ է բերում հեղինակին: Այո, այդպիսի ստեղծագործությունները պահանջում են բանաստեղծական վառ տաղանդ եւ գուսանական բարձր տեխնիկա՝

Սիրահարը երկնի հրով թե չվառվի,
ինչ սիրահար,
Գիշերն անքուն ցողերի հետ թե
չարտասվի, ինչ սիրահար,
Հավք ու հովից յարի մասին
հարցմունք չանի, ինչ սիրահար,
Սիրով վառված ձորերն ընկած յար
չկանչի, ինչ սիրահար:
Էն հազարան ասպղերը թե
չշողշողան, երկինքն ինչ է,
Օրերն առանց լուսաբացի,
կրակների զարթոնքն ինչ է,
Սիրողը թե սիրամորմոք
պաղեր չասի, սիրելն ինչ է,
Սերը գաղտնի մոմի նման թե
չվառվի, ինչ սիրահար:

Ինչպես երեւում է հենց վերնագրից, այս ժողովածուի հիմնական առանցքը սերն է՝ հարուստ պատկերային հրաշալի զուգորդումներով, քնարական զեղումներով, անսպառ կենսասիրությամբ:

Իբրեւ դրա օրինակ կարելի է նշել «Դարպաս աղբյուր» գողտրիկ պատկերը, որը գրավում է ընթերցողին տպավորության ամբողջականությամբ, բանաստեղծական պատկերների կենսալիությամբ ու կոնկրետությամբ: Հեղինակն այստեղ իրեն չի կաշկանդում կամերային լիրիկայի նեղ շրջանակներով: Նրա երգը առաջացնում է հուզիչ զգացմունքներ եւ մտորումներ: Գուսանը այս երգում նույնպես դրսեւորում է իրեն իբրեւ հասուն արվեստագետ, խոր եւ ողջախոհ վարպետ:

Օրն անցնում է, մի կում ջուր դուր,
ելնեմ գնամ,
Նա իմ սրտում, որտեղ մթնի՝
էնտեղ մնամ,
Թե որ գտնեմ, ամեն դարի
այցի կգամ,
Ջուրդ մարդուն արծիվ դարձնող,
Դարպաս աղբյուր:
Օիսրը սարի ծալքերից բիսող ջուր
ես,
Հայոց հին-հին հեքիաթներ
պատմող ջուր ես,
Աշոտն ասաց՝ սիրուս հեքիաթն
ասող ջուր ես.
Անտառի հետ հավերժ խոսող,
Դարպաս աղբյուր:

Գուսան Աշուտի երգերը լի են լույսով ու բերկրանքով, անմիջական ընկալման թարմությամբ ու լիրիկական քնքշությամբ: Դա իր արտահայտությունն է գտնում ե՛ւ հյութեղ կոլորիտի, ե՛ւ հոգեբանական հարուստ նրբերանգների ու պարզության մեջ: Ճշմարիտ գեղարվեստական հաճույք են պատճառում նաեւ «Փերիները չքացան», «Անցար այգուս նայելով», «Լուսնի շողով փերիս գա» խորապես սրտառուչ գործերը, որոնք տարբերվում են հոգեբանական խորությամբ, առինքնող անկեղծությամբ եւ ներշնչվածությամբ: Հիմնական եւ ամենից ավելի գնահատելի արժեքը նրա մի շարք երգերի դրամատիկ շունչն ու լարվածությունն է, հակադիր պատկերների եւ մոտիվների վարպետ զուգորդումները, որոնք մեկ անգամ կարդացողի մոտ այլեւս չեն մոռացվում: Այս առումով նշանավոր է «Սյունյաց սարերը», որը լի է վառ քնարականությամբ ու դրամատիկ խոր ապրումներով:

Հազար ու մի երգում գովված
սար եմ տեսել,
Բայց միշտ ձեր կարոտը քաշել,
Սյունյաց սարեր.
Ամեն սիրով մեծ Նաղաշի ձեռքն է
հասել,
Ծաղիկներդ գույն-գույն նախշել.
Սյունյաց սարեր,
Ինձ մոտ սրտով ձեր գիրկն առեք,
Սյունյաց սարեր,
Յայլաներիդ ծուխը սահող երամ
դառած.
Իմ նազելին երամի մեջ երազ դառած:

Նույնչափ պոետիկ ու սրտաբուխ է հնչում «էն գարնան» վերտառությունը կրող երգը, որտեղ պարզությունն ու բնականությունը, հոգեկան պոռթկումներն ու ձգտումները արտահայտված են խորապես ճշմարտացի ու ցայտուն:

Գուսան Աշոտի երգերում այնքան մեծագույն սեր, ջերմություն, մաքրություն եւ այնքան մարդկայնություն կա, որ ընթերցողը չի կարող չզգալ նրա պոեզիայի բարոյական գեղեցկության ուժն ու հոգեւոր հարստությունը: Նա իր՛ արվեստով շատ մոտ է ու հարազատ երգի արքա Սայաթ-Նովային եւ հռչակավոր գուսաններ Ջիվանուն ու Շերամին: Եվ նրա երգերը դասականների հետ հոգեհարազատ դարձնողը գուսանի հոգու բացառիկ վեհությունն է, ճշմարտասիրությունը եւ բազմազան ժանրերի ու ձեւերի օգտագործումը: Եվ իզուր չէ, որ ժողովուրդը նրան անվանում է մեր օրերի Սայաթ-Նովա: Առանձնապես գնահատելի է հուզական արտահայտչականությունը, պատկերային գունագեղությունը, ժողովրդական մտածողության լիարժեքությունն ու վճիտությունը: Նրա պոեզիային հատուկ է ե՛ւ նուրբ, ե՛ւ առնական կրքոտության ակներեւ գծերը, որոնք նոր գրքում ավելի ընդգծված են:

Երկնից իջած ասպղափունք ես
ձորերի մեջ,
Ճոխապատկեր քո երեկոն
ցոլքերի մեջ,
Հայոց բախտի պատմությունն ես
ժայռերի մեջ,
Սեգ ժայռերդ քեզնով հպարտ,
իմ օրորան,
Կուռ լեռներդ քեզնով անպարտ,
իմ օրորան:
Իմ սերը քո ծաղկանց մեջ է,
միշտ կվառվի, իմ օրորան,
Սիրող սրտի հուրն անշեջ է,

Գրականագիտություն եւ երաժշտագիտություն

միշտ կվառվի, իմ օրորան:

Գուսանը առանձնակի ուշադրություն է դարձնում տաղաչափությանը: Նրա երգերում զգացվում է գուսանական տաղաչափական ձեւերի ոչ միայն կատարյալ իմացություն, այլեւ՝ ինքնատիպ վարպետություն, տեմբրային հագեցվածություն եւ ինտոնացիոն հարստություն: Հիանալի ճաշակը եւ երաժշտական նուրբ զգացողությունը գուսանին օգնում են անթերի լուծելու ստեղծագործական բարդ խնդիրները, «Սիրո կրակներ» ժողովածուն մեկ անգամ եւս ապացուցում է, թե որքան բեղմնավոր է եղել գուսանի գրիչը այս տարիների ընթացքում:

Այս ժողովածուի մի շարք երգերը զարդարում են ոչ միայն անհատ կատարողների, այլեւ երաժշտական կոլեկտիվների երգացանկերը: Այդ երգերը մեծ մասսայականություն են վայելում, պատկերավոր են, համեմված ժողովրդական հարուստ բառ ու բանով: Վերընթեռնելով ժողովածուն, նորից համոզվում ես, որ Գուսան Աշոտը տաղանդավոր պոետ-երգահան է, ամբողջապես ժողովրդական է, ինքնատիպ, այս բառի լավագույն եւ պրոֆեսիոնալ իմաստով: Ժամանակը ցույց տվեց, որ Գուսան Աշոտը զգալիորեն հարստացրեց հայ գուսանական արվեստը հիանալի, խորապես արտահայտիչ բանաստեղծականությամբ եւ եղանակներով: Դրա ցայտուն ապացույցն է «Սիրո կրակներ» ժողովածուն, որտեղ ժողովրդի ոգին առմիշտ դրոշմված է բանաստեղծական հոյակերտ համադրություններով, պատկերային կուռ, ամբողջական ձեւերով:

1974թ.

«ԾՈՎԱՍ-ՏՂԻԿՍ» ԳՐՔԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

ՍԵՎԱԿ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գրականագետ-քննադատ

Հայ բազմադարյան գուսանական արվեստի գեղեցիկ շառավիղներից է Գուսան Աշոտը, արդի հայ գուսանական երգի մեծանուն վարպետներից մեկը: Նրա անունը վաղուց դուրս է եկել Հայաստանի սահմաններից, տասնամյակներ շարունակ հնչում է ամենուր՝ սրտահույզ երգեր պարգեւելով աշխարհին, խնդություն ու խաղաղություն բերելով մարդկանց հոգիներին:

Գուսան Աշոտի արվեստում խտացվել են հայ ժողովրդի գուսանական-աշուղական մշակույթի լավագույն ավանդները: Իր խառնվածքով, նախասիրություններով Սայաթ-Նովայի ու Շերամի հետնորդն է: Ժամանակի հետ ստեղծել է իր ինքնատիպ աշխարհը՝ ուրույն ոճով, մեղեդիական ու բանաստեղծական յուրահատուկ նկարագրով:

«Ծովաստղիկս» ժողովածուն հեղինակի ստեղծագործական որոնումների ու այդ որոնումներում հասունության նոր որակ՝ քնքուշ իմաստնություն հաստատելու առհավատչյան է: Գուսան Աշոտի ամեն մի գիրք իր առանձնահատկություններն ունի, երգածայնային ու պոետական խոսքի իր արժանիքներն ու նրբությունները: Ամենից առաջ նշենք, որ սա հեղինակի կյանքում երաժշտական-ոճական նոր էտապ է, Աշոտի երգերը ներառնում են արեւմտահայ երգաոճային ինչ-ինչ տարրեր, մի հանգամանք, որն անպայման ավելի հարուստ, ավելի բազմազան է դարձնում նրա երգարվեստը:

Այնուհետեւ, ամբողջ ժողովածուում տիրապետող է թեմատիկ մի պլան՝ մարդուն թեւեր տվող, հոգին ազնվացնող սերը: Գուսանի նախորդ ժողովածուներում նույնպես սերը քիչ բաժին չէր կազմում: Սակայն այստեղ այդ թեման գրեթե միահեծան իշխանություն ունի եւ իրենով պայմանավորում է ամբողջ գրքի գաղափարական-բովանդակային ուղղվածությունը: Ավելի քան հարյուր քսան երգի գերակշիռ մեծամասնությունը հյուսված է

Սիրամրմունջ իմ խաղերից,
Սիրամորմոք իմ տաղերից...

Հյուսված է մարդկային վսեմ ու առինքնող այն զգացման վրա, առանց որի, գուսանի համոզմամբ, անիմաստ է մարդկային գոյությունը:

Աշոտը եւ բանաստեղծ է, եւ երգահան: Սա ինքնին յուրաքանչյուր գուսանի բնութագրական կողմն է: Իսկ Աշոտը տաղանդաշատ գուսան է: Նրա մեղեդիների եւ բանաստեղծական տեքստերի ներդաշնակությունն այնպիսին է, որ բացառում է ուրիշ մի զուգակցություն: Աշոտի ներաշխարհում մեղեդին ու բանաստեղծական տեքստը ծնվում են միաժամանակ, խմորվում են նույն հույզերից ու ապրումներից, եւ դժվար է պատկերացնել մեկը առանց մյուսի: Զարմանալի ձեւով նրա կրկներգերը միշտ փոփոխվում են, բովանդակային նոր հնչերանգներ ստանում: Սա նույնպես թարմություն է գուսանի արվեստում:

Այս ամենով հանդերձ՝ Աշոտի

Գրականագիտություն եւ երաժշտագիտություն

Գուսան Աշոտի քնարը

ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԳԵՎՈՐԳ ԱԲԱՋՅԱՆ

Հայրենիքում թե սփյուռքում հազիվ կարելի լինի հանդիպել երաժշտասերի, որ չիմանա Գուսան Աշոտին, նրա որեւէ երգի առաջին իսկ ելեւէջներից իսկույն չկռահի հեղինակին, չիմայվի նրա մեղեդիների հուզական հարստությամբ:

Ստեղծագործական երկար ճանապարհ է անցել Գուսան Աշոտը: 20-ական թվականների կեսերից սկսած մինչեւ այսօր նրա հոգում ծնվում են նորանոր մեղեդիներ, որոնք արագորեն տարածվում են, թափանցում մարդկանց սրտերը, ջերմացնում նրանց, պարուրում քնքշանքով, խնդությամբ ու լուսավոր թախիծով, մաքուր ու վսեմ զգացմունքներով: Նրա երգերի հմայքի գաղտնիքը ժողովրդական ոգու առկայությունն է, որ բարձրանում է մեր դարավոր մելոսի խորքերից: Այդ ոգին է, որ թրծվել է տարբեր ժամանակների հայ երաժիշտների ստեղծագործական երգերի լայն մասսայականության, ավելացնենք նաեւ՝ երկարակեցության գաղտնիքը պետք է որոնել դրանց ժողովրդական ակունքների մեջ: Գուսանը շատ բան է քաղել ժողովրդից, սովորում է նրանից ու նրան է վերադարձնում համով ու հոտով այնպիսի երգեր, որոնք դեռ երկար ու երկար պիտի ուղեկցեն ժողովրդին:

Սիրո երգի ճշմարիտ վարպետ է Գուսան Աշոտը: Սիրո կարոտը նրա երգերի ամենից ուժեղ, ամենից կենսական լարն է: Ու այդ կարոտը մաքրության շողերով է օծված, ազնիվ ու տեւական զգացմունքների բխվածք է:

Աշոտի սերը հաճախ անկեղծ մենախոսության է փոխարկվում՝ հոգեբանական ամենատարբեր նրբերանգներով: Ապա՝ մերթ ընդ մերթ ինքնախոստովանությունների գեղարվեստական հնարանքով է արտահայտում սիրո մեծ կարոտը:

Անգամ այդպիսի ներանձնացումի պահերին նրա սերը յուրովի իմաստավորվում է պայծառ խոհ-խրատներով ու իմաստուն խորհուրդներով, եւ գուսանը դառնում է սիրո ազնիվ խրատաբանն ու ճշմարիտ ուղեցույցը:

Էս հյուրընկալ աշխարհում օրհնված
բարի հյուր լինենք,
Բացվող վարդի շուրթերին մի
կաթիլ գով ջուր լինենք,
Տաճարներին սրբացած՝ գոնե մի
մոմ լույս լինենք,
Երկնի ճամփան բացողը սերն
ու սիրտն են, ով ճամփորդ:

Ու սրան հաջորդում է կրկներգը՝ խրատ-խորհուրդի մեղեդիական այլ տոնայնությամբ.

Հոգուն բարձունք պանողը,
Ամուր կամար կապողը,
Չարի ճամփան փակողը,
Սերն ու սիրտն են, ով ճամփորդ:

Այս ոգով են հղացված «Արտերը», «Զավակս», «Եղնիկները», «Սրտի կտակ», «Իմ պապը» եւ ուրիշ շատ երգեր: Իսկ «Կախարդանք», «Վարդ աղբյուր», «Ծովաստղիկս», «Խարույկներ վառեմ» եւ այլն, հոգու եւ սրտի զուլալ երգեր են, մի-մի գլուխգործոցներ: Դրանք՝ գուսանի բառերով՝ «մասունքներ են կյանքի», եւ նրանց հեղինակի՝ սիրո երգի վարպետ Աշոտի անունը իրենց հրեղեն թեւերին կտանեն գալիք սերունդներին:

հնոցում, փոխանցվել սերնդից սերունդ, հասել մեր օրերը: Սակայն այդ փոխանցումը հազիվ թե արվեստի արժեք դառնար, եթե Գուսան Աշոտն անցյալի հարստությունը չհալեր իր սրտի քուրայում, չստեղծեր իրենը՝ իր ապրած օրերի շրջանակներում: Աշոտն ունի ստեղծագործողի իր անշփոթ դեմքը. ինքնատիպ, ինքնաստեղծ արվեստագետ է նա, որ վերցրել է հայ դարավոր երգարվեստի ոգին, բայց ոչ երբեք տառը: Ստեղծագործական այս սկզբունքի անխառն դրսեւորումներն են նրա հանրահայտ երգերը:

Կրկնակ դեմք ունի Գուսան Աշոտի ստեղծագործությունը, այն բանաստեղծական ու երաժշտական արվեստների, տաղի ու երգի մի գեղեցիկ համադրություն է, ներդաշնություն: Այս առումով ավանդական է, ավանդություն, որը նույնքան հին է, որքան հին է հայ գուսանական արվեստը: Թեեւ կարելի է պայմանականորեն առանձնացնել տաղն ու մեղեդին զննելու, ավելի մանրակրկիտ իմանալու նպատակով, բայց դա հազիվ թե արդարացում ունենա: Աշոտի արվեստի հմայքն այս երկուսի անտրոհելի միասնության մեջ է, եւ ճշմարտությունն այն է, որ տաղն ավելի քան բավարար հիմք է մեծարժեք մեղեդիների համար: Մեղեդայնությունն Աշոտի երգարվեստի միջուկի միջուկն է, նրա արվեստի առանցքը: Անկաշկանդ, ինքնաբուխ մեղեդին է արվեստագետի տարերքը, նրա էությունը, Գուսանի բնական վիճակի դրսեւորումն ու ինքնության ապացույցը:

Աշոտի մեղեդիները լայնաշունչ են, հուզաթավ, եւ դրանց վրա կա հայ լեռնաշխարհի ամենագեղեցիկ անկյուններից մեկի՝ Զանգեզուրի խորունկ դրոշմը: Եվ ծննդավայրի բնությունը, միջավայրն ու ժայռերի ծերպերում ապրող մարդիկ շունչ են տվել Գուսանի մեղեդիներին: Զանգեզուրցիներն այսօր էլ պահել են իրենց նախասկիզբ անկեղծությունն ու անմիջականությունը, լեզվի յուրահատուկ հնչերանգները, բարբառը, որը նման է անզարդ, անպաճույճ երգի, որ անտես ճամփեքով թափանցում է ունկնդրի սիրտը: Գուսան Աշոտի երգերն այսպիսին են՝ լայնահուն, երգային, անվերջ ծավալվող ու հեռագնա: Այստեղից էլ նրա

Գրականագիտություն եւ երաժշտագիտություն

Հարգված էր ու սիրված

ՇԱՎԻՂ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հայաստանի գրողների միության անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, հայ աշուղների միության նախագահ

Աշուղ Աշոտը ութ ժողովածու է հրատարակել, հիմնականում սիրային, հայրենասիրական թեմաներով: Սիրայինը գերակշռում է նրա բանաստեղծությունների մեջ, որովհետեւ նաեւ սիրո մեծ երգիչ էր իսկապես: Նրա ստեղծագործություններում սերը ոչ միայն կնոջ՝ սիրած էակի հանդեպ էր, այլ ընդհանրապես բոլորի, այդ պատճառով նա չափազանց սիրված էր մայրաքաղաքում, փողոցով անցնելիս մատով ցույց էին տալիս՝ թե տեսեք, աշուղ Աշոտն է անցնում: Այդ հարգանքին ու սիրուն նա արժանացավ ոչ թե հենց այնպես, այլ իր գրչով, իր մտածելակերպով, իր ստեղծած բարձր արվեստով: Անդրանիկ ժողովածուն կոչվում էր «Գուսանական երգեր»՝ հրատարակված 1946 թվականին, իսկ վերջինը՝ 1988 թվականին «Լեռները կանչում են» վերնագրով: Բավական է փաստել, որ նրա նախավերջին գրքի առաջաբանը գրել է ակադեմիկոս Սեւակ Արզումա-

երգերի ռոմանտիկ, վեհացնող շունչը: Սրտակեղեք ելեւէջներ չկան նրա երգերում: Նրա մեղեդիները հիշեցնում են հայրենի լեռների բարձրերից իջնող զուլալ առվակների խոխոջյունը: Գուսանի արվեստի հենասյուներն են մարդն իր հոգեկան տվայտանքներով, բնությունն իր վսեմ թովչանքով եւ կյանքը՝ վայելքի արբեցումով: Աշոտը բնության պաշտամունք ունի, որը սակայն անիմաստ կլիներ առանց բնության կատարելության՝ մարդու:

Ստեղծագործական ամբողջ բնագդով նա հանգել է բնության եւ մարդու ներդաշնակության մտքին: Աշոտի բնապաշտությունը հանգում է խորունկ հայրենասիրության, մարդու պաշտամունքը՝ մարդասիրության: Գուսանի հայրենասիրությունը սկիզբ է առնում պապենական օջախից, Սյունյաց սարերից եւ գնում է հեռուները, ձգվում դեպի այլ երկրներ, հասնում այլ ժողովուրդների: Գուսանի ստեղծագործությունը հաստատումն է այն ճշմարտության, ըստ որի՝ չկա արվեստ, որ չունենա իր հայրենիքը, եւ ազգային հողում ծլարձակած արվեստն է, որ բարձրանալով ծուլվում է համամարդկայինին: Աշոտի արվեստը հայկական համամարդկայինի գողտրիկ դրսեւորումն է, հետեւաբար մատչելի, ըմբռնելի նաեւ օտարներին: Հիրավի, Գուսան Աշոտի «Ով, դու գուսան», «Օջախում», «Սյունյաց սարեր», «Ծննդավայր», «Իմ օրրան», «Պախրա», «Հազար օրհնանք» եւ այլն, խորապես ազգային լինելով, միաժամանակ համընդհանուր են, եւ նրանցում եղած հույզերն ու ապրումները հարազատ են բոլոր մարդկանց: Եվ այն, որ Աշոտի երգերի մեջ այլազգիները կարողանում են տեսնել հայ բնաշխարհն ու հայ մարդուն, թեկուզ եւ ուրվանկարային, ինքնին արվեստի գործի արժեքավորումն է:

Գուսան Աշոտի քնարի ամենաուժգին, ամենահնչեղ լարը սիրո լարն է, սիրերգությունը, մարդու էությունը կլանող հավերժական կրակը, որը ոչ սկիզբ ունի, ոչ էլ վախճան: Գուսանի համար առանց այդ սուրբ զգացման անհետանում է մարդու գոյության իմաստը: Աշոտի սիրտը լցված է սիրո կրակով, մարդու հոգին սրբագործող այդ զգացմունքով: Եվ արդարացի են հրատարակիչները, որ տարիներ առաջ Գուսանի ժողովածուի համար ընտրել էին «Սիրո կրակներ» խորագիրը: Բազմալար է Աշոտի սիրո քնարը: Ե՛վ քնքշանք, ե՛ւ մրմունջ, ե՛ւ կարոտ ու թախիծ, երանության ու սիրո վայելք, արբեցում, ինչե՞ր, ինչե՞ր չկան Գուսանի սիրո երգերում: Սիրո տվայտանքներից մինչեւ սիրո իդեալականացում, - ահա այն ընդարձակ տարածքը, ուր հնչում են Գուսանի սիրո մեղեդիները, եւ ամեն պարագայի համապատասխան տրամադրությամբ, երաժշտական չկրկնվող պատկերներով ու նրբերանգներով:

Գուսան Աշոտի սիրերգությունը հայ գուսանական դասական արվեստի տրամաբանական շարունակությունն է մեր օրերում եւ արդեն դասական է: Գուսանը մի գեղեցիկ երգ ունի, որն ընկալվում է իբրեւ իր կոչման բարձրագույն խոստովանություն:

Անմահ սիրո խաղ ու դաղով լցվել եմ ես, պիտ երգեմ,
Վարդի ցողեր, գոհար արցունք լացել եմ ես, պիտ երգեմ:

.....

Երգով կապրեմ, սիրով
կապրեմ աշխարհում,
Երգիս ճամփին հազար
ասպղեր են վառվում,
Կյանքս անցավ ջրերի պես
կարկաչուն,
Ահա, ինչ անեմ, սիրուց
սիրուս է մրմնջում:

Գուսան Աշոտն ապրել է երգով ու սիրով, երգ է պարգեւել մարդկանց, աշխարհին ու մարդուն տեսել ու փառաբանել է սիրո լույս շողերի մեջ, ստեղծել է մարդկանց բարիք բերելու վսեմ գիտակցությամբ:

«Հայրենիքի ձայն»
11 օգոստոսի 1982թ., N33 (889)

Գրականագիտություն եւ երաժշտագիտություն

նյանը: Այդպիսի մի այլ աշուղ չենք ունեցել, որի մասին նման գրականագետ որեւէ բան գրեր:

Զարմանալի բան է՝ գորիսեցի աշուղ առանց բարձրագույն կրթության, ընդամենը Բաքվում է սովորել մի քանի տարի, բայց ստեղծագործել է մանուկ տարիներից մինչեւ իր կյանքի վերջը, ստեղծել աշուղական երգեր, մեկը մյուսից կատարյալ: Նա ստեղծագործեց այնքան, որքան չեն ստեղծագործել մեկ տասնյակից ավելի աշուղներ, օրինակ՝ Ծովյանը, Աշխույժը, Բագրատը, Ռազմիկը, մյուսները: Նրանք ամենքը երկու գիրք են հրատարակել՝ 50-60 էջանոց: Դա նշանակում էր, որ մարդը լրջորեն էր զբաղվում իր նախասիրած գործով եւ հասավ այնպիսի մակարդակի, որ դարձավ ոչ միայն կոմպոզիտորների միության անդամ, աշուղների միության անդամ, այլեւ արժանացավ հանրապետության ժողովրդական արտիստի բարձր կոչման:

Չափազանց բազմազբաղ մարդ էր. իր տիկնոջ՝ Արաքսյա Ղալեչյանի հետ խումբ էր ստեղծել եւ համերգներով հանդես էր գալիս հանրապետության քաղաքներում եւ գյուղերում: Նույնիսկ ժամանակ չունեցավ մասնակցելու այն հաղորդաշարին, որ վարում էի հայկական հեռուստատեսությամբ 1969-ից մինչեւ 1976 թվականը եւ որին մասնակցել են բոլոր աշուղները, այդ թվում եւ Հավասին: Եվ դա ոչ թե միտումնավոր էր, այլ, կրկնում եմ, որովհետեւ բազմազբաղ մարդ էր եւ ժամանակը նրան երբեք չէր բավականացնում:

Տաղաչափությունը Աշոտի բանաստեղծական շնորհներից էր դարձյալ, որովհետեւ նա ամեն ինչում էր վարպետ՝ եւ աշուղական, եւ դասական պոեզիայի: Աշուղական պոեզիայինը տասնմեկ վանկ է, դասական պոեզիայինը՝ տասը: Այնպես էլ է գրել, այնպես էլ: Քանի որ իսկական ստեղծագործող էր, եւ տասը վանկով է գրել, եւ տասնմեկ: Դա վկայում է նրա բանաստեղծական բարձր մակարդակի մասին:

«Այունյաց Երկիր» թերթ
01.17.2007թ. N113 (02)

Բնության եւ սիրո երգիչը

Վ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ

Աշուղ Աշոտը հայ ժողովրդի սիրած երգիչն էր ու ստեղծագործողը: Նրա երգերը միշտ էլ հուզել են երաժշտասեր հայ ժողովրդին, որը գիտի գնահատել իր տաղանդավոր զավակներին: Իր երգերում նա գովերգում է հայրենի բնությունը, հայրենիքը, անաղարտ, կուսական սերը: Այդ երգերն ընդունվում էին ջերմորեն, երգվում էին ոչ միայն Հայաստանում, այլեւ աշխարհի շատ երկրներում:

Աշուղ Աշոտը ծնվել է 1907թ. Գորիս քաղաքում: Սկզբնական կրթությունն ստացել է Գորիսի տարրական դպրոցում: Ուսումը կիսատ է թողել, օգնել է խաշնարած հորը՝ նրա հետ շրջելով Զանգեզուրի լեռներով ու դաշտերով: Տարվելով բնության գեղեցկությամբ, սկսել է քառատողեր հորինել հայրենի Զանգեզուրի սար ու քարի մասին, գովերգել է Հայաստան աշխարհի բնությունը: *«Հորովելիդ ձայնն եմ առել, քեզնով աշուղ Աշոտ դառել»* տողերը Աշոտի սրտից բխել են որպես երախտիքի խոսք՝ ուղղված հայրենի բնաշխարհին:

Աշոտի առաջին ստեղծագործությունը 1928-ին գրված «Աշուղ եմ» երգն է: Գրելուց ընդամենը մեկ-երկու շաբաթ անց աշուղ Աշոտը մասնակցում է մի հարսանիքի, որտեղ հանկարծ դհոլչին սկսում է երգել այդ երգը.

«Աշուղ եմ էդ քո սեւ-սեւ աչերիդ,
էդ անուշ լեզվիդ, կեռ-կեռ ունքերիդ»:

Զարմանում է. չէ՞ որ երգը դեռ մի քանի հոգի են լսել, ինչպե՞ս է տարածվել: Հարսանքավորներն իմանալով, որ երգի հեղինակն իրենց մեջ է, խնդրում են կատարել իր երգերից մի քանիսը: Դա դարձավ Աշոտի առաջին ելույթն իր ժողովրդի առաջ: Այդպես ծնվեց իր երգերն իր իսկ կատարմամբ ժողովրդին մատուցելու միտքը:

Աշոտը դեռ մանուկ հասակում զրկվել էր մորից: Մոր նկատմամբ սերն ու կարոտը նա արտահայտեց իր երգերից մեկում, որը նույնպես շատ արագ տարածվեց ժողովրդի մեջ եւ կատարվում էր ամենուրեք՝ հարսանիքներում ու խնջույքներում:

Աշուղ Աշոտն ինքնուս երաժիշտ էր, նվագում էր տարբեր գործիքներ, բայց նրա ամենից սիրած գործիքը մնաց քամանչան: Նա կազմեց իր համերգային խումբը եւ Հայֆիլհարմոնիայի ուղեգրերով տասնյակ տարիներ հանդես էր գալիս ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ հարեւան հանրապետությունների հայաբնակ գյուղերում եւ քաղաքներում՝ ամենուրեք վայելելով ժողովրդի սերն ու համակրանքը: Նրա ղեկավարած խումբը Հայֆիլհարմոնիայի լավագույն խմբերից էր, որը բազմիցս արժանացել է մշակույթի նախարարության եւ Հայֆիլհարմոնիայի ղեկավարության խրախուսանքին:

1967թ. Հայաստանի Գերագույն խորհրդի հրամանագրով մեծ աշուղին շնորհվեց հանրապետության ժողովրդական արտիստի պատվավոր կոչում:

Ով մի անգամ լսում է աշուղ Աշոտի երգերը, ուզում է լսել նորից ու նորից: 1972 թվականին Վաղարշակ Սահակյանի ղեկավարած աշուղական երգի անսամբլը ելույթ էր ունենում Եղեգնաձորի շրջկենտրոնում: Հնչեցին աշուղ Աշոտի «Հով գիշեր, զով գիշեր» եւ «Ով ժողովուրդ» երգերը: Հանդիսատեսի խնդրանքով Վաղարշակ Սահակյանը համերգի վերջում նորից կատարեց այդ երգերը, որոնք ընդունվեցին հոտնկայս եւ թնդացնող ծափողջույններով:

Աշուղ Աշոտի «Զանգեզուրի բարի ծնունդ», «Ով ժողովուրդ», «Հով գիշեր, զով գիշեր»,«Սերս վանքում Տաթեւի», «Այունյաց սարեր», «Աշուղի սերը» եւ այլ երգեր, որոնք ամփոփված են «Գուսանի սերը», «Սիրո կրակներ» եւ այլ ժողովածուներում, հուշարձան են դարձել սիրելի աշուղին, կատարվում են ժողովրդի կողմից եւ դեռ դարեր կհնչեն, քանի կա հայ ժողովուրդը:

(«Եթեր», թիվ 48, 30 նոյեմբերի 2006թ.)

Լուսանկարները՝
Սմբատ
Տոռոզյանի

Հայաստանի գուսանների մասին

Հայաստանի գուսանները

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

Գուսանական արվեստը հայ ժողովրդի ստեղծած բազմադարյան մշակույթի անբաժանելի մասն է: Գուսանը ժողովրդի ընդերքից ծնված, ժողովրդի հետ ապրող ստեղծագործող է: Անցյալի գուսանը, իր անբաժան քամանչան, սանթուրը, սազը կամ ջութակը ձեռքին, երբեմն ընկերներով, երբեմն մեն-մենակ, երեւում էր հայոց լեռնաշխարհների հեռուներում, սիրով հյուրընկալվում հայ գեղջուկի ու արհեստավորի տանը եւ իր հուզիչ երգերով թեթեւացնում աշխատավոր մարդու հոգսն ու վիշտը, երգում նրա համար, նրա հետ, դառնում նրա զգացմունքների ու հույզերի թարգմանը, նրա սիրելին ու մտերիմը:

Հայ գուսաններն իրենց անպաճույճ, բայց սրտաբուխ երգերով փառաբանել են հայ գյուղացու վարուցանը, օրհներգել նրա այգին, գովել արդար ու ազնիվ աշխատանքը, ազնվությունն ու եղբայրությունը, նրանք ծառացել են անիրավությունների դեմ, ժողովրդի ճակատագրական պահերին եղել նրա պայքարի ընկերը, գովերգել նրա քաջությունն ու հայրենասիրությունը, ատելություն բորբոքել հայ աշխարհը խուժած ավարառու թշնամիների նկատմամբ:

Հայրենասիրության, բարոյախոսության, աշխատասիրության եւ այլ թեմաների հետ միասին, գուսանական երգի հիմնական առանցքը եղել է սերը... Այս դեպքում արդեն գուսանները չեն բավարարվել միայն երգեր հորինելով, այլ ստեղծել են ավելի մեծ կտավի գործեր՝ երգախառն հեքիաթներ, որոնց հիմքում ընկած է ժողովրդական այս կամ այն սիրավեպը՝ «Սմբատ եւ Սոնա», «Աշըղ ղարիբ», «Աղվան-Օսան» եւ ուրիշներ:

Բազմաթիվ են հայ գուսանները՝ Նաղաշ Հովնաթան, Սայաթ-Նովա, Շիրին, Ջիվանի, Շերամ, Աշոտ, Հավասի, - ահա այն գուսանների անունները, որոնք իրենց ստեղծագործությամբ կազմում են հայ գուսանական արվեստի անթառամ փունջը:

Դրանցից վերջին երկուսը մեր ժամանակակիցներն են, ապրում ու ստեղծագործում են մեր օրերին, իրենց ժողովրդի ու հայրենիքի հետ: Մյուսներն անցյալ աստղերն են՝ հարատեւ ու պայծառ:

Մեծ է Սայաթ-Նովան, անհունորեն մեծ ու խոր: Նրա հանճարեղ ստեղծագործությունները հայ ժողովրդի հազարամյա պոեզիայի զարդերից են: Անկրկնելի Սայաթ-Նովան այժմ էլ կենսական աղբյուր է հայ գուսանական արվեստի համար: 164 տարի առաջ նա ընկավ պարսիկ անգութ զինվորների թրից, բայց ոչ մի վայրկյան նրա անունը չընկավ հայ ժողովրդի շուրթերից, ու քանի հեռանում է նրա ապրած ժամանակը, այդքան քաղցրանում, վեհանում է նրա անմահ ստեղծագործությունը:

Մեծ են Նաղաշ Հովնաթանի, Ջիվանու, Շերամի եւ մյուս դասական գուսանների ստեղծագործության արժանիքները:

Ես ուզում եմ իմ ընթերցողին մի թեթեւ ծանոթացնել մեր օրերի գուսանների հետ:

Մոտ քառասուն տարի առաջ մեր ժողովուրդը բռնեց նոր կյանքի ուղին: Սկսվեց խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի դարաշրջանը: Սովետական Հայաստանը ծաղկեց, շենացավ հայ մշակույթը եւ դրա հետ միասին՝ հայ գուսանական արվեստը:

Ամեն տեղ ու ամենքին հայտնի է մեր օրերի նշանավոր գուսան Աշոտի անունը (Աշոտ Դադալյան):

Անուրախ ու դառն է եղել նրա մանկությունը: Ծնվել է 1907 թվականին: Հայրը՝ բնիկ զանգեզուրցի, խաշնարածի պարզությամբ, լեռնականի ջինջ հոգով մի մարդ, չի կարողացել շատ թե քիչ պատշաճ կրթություն ու դաստիարակություն տալ իր բազմաթիվ զավակներից թեկուզ մեկին: Վեց-յոթ տարեկան հասակում Աշոտը դարձել է գառնարած: Նրա մանկությունն ու պատանեկությունն անցել են Զանգեզուրի ալպյան արոտավայրերում, խորունկ ձորերում, հովիվների ու խաշնարածների հետ: Սրինգ է նվագել նա, կլանված լսել հայրենի գյուղ եկած թափառական գուսաններին:

Քսանական թվականների վերջերին նա երգեց իր հորինած առաջին երգը՝ «Զանգեզուրի չոր չոլերը ծաղկել են»: Այդ երգն անմիջապես անցավ շուրթից շուրթ եւ շուտով դարձավ բոլորի սիրած երգերից մեկը:

Աշոտը ոգեւորվեց խրախուսանքներից եւ սկսեց նոր երգեր հորինել: Նրա համբավը տարածվեց Հայաստանի գյուղերում եւ քաղաքներում: Աշոտին ճանաչեցին որպես տաղանդավոր գուսանի: Երեսուն տարի է անցել նրա առաջին երգի աշխարհ գալու օրից եւ այդ երեսուն տարում Աշոտը մոտ երկու հարյուր երգ է ստեղծել:

Իրենց նրբությամբ ու եղանակների անմիջականությամբ Աշոտի երգերը թարմություն եւ մի նոր հմայք տվեցին մեր ժամանակի գուսանական արվեստին:

Բանաստեղծ-Գուսան Աշոտը համաժողովրդական ճանաչման ու սիրո արժանացավ ամենից առաջ իր ստեղծագործության թարմությամբ, երգերի լավատեսությամբ, կենսախնդությամբ, այն մեծ ու բուռն սիրով, որ նա ունի դեպի իր օրերի մարդը, նրա աշխատանքը, նրա չքնաղ լեռնաշխարհը:

Մեծ է Գուսան Աշոտի վաստակը: Նա միայն իր ժողովրդինը չէ, որ ըստ արժանվույն գնահատում ու սի-

Հայաստանի գուսանների մասին

րում է նրան: Աշոտին սիրում են նաեւ ադրբեջանցիները, վրացիները, քրդերը, որոնք իրենց մայրենի լեզուներով երգում են Աշոտի շատ երգերը:

Վերջերս Երեւանում լույս տեսավ նրա երգերի ժողովածուն, որի մեջ ամփոփված են գուսանի լավագույն ստեղծագործությունները՝ թե բնագիրը եւ թե երաժշտությունը: Դա մի չքնաղ հրատարակություն է՝ միանգամայն արժանի Աշոտի վաստակին ու փառքին:

Ժամանակակից հայ գուսաններից համաժողովրդական սեր ու հարգանք է վայելում Ախալքալաքի գուսան Հավասին (Արմենակ Մարկոսյան): Բնությունը մի ձեռքով դժբախտացրել է նրան՝ մանուկ հասակում զրկելով տեսողությունից, իսկ մյուս ձեռքով պարգեւել գուսանական հիանալի շնորհք: Բարձր մշակույթի տեր է գուսան Հավասին: Չորս-հինգ տարի առաջ, երբ նշում էինք նրա ծննդյան վաթսունամյակը, նրա դեմքը լուսավորված էր ստեղծագործական նոր եռանդի, նոր մտահղացումների կրակով:

Հավասին մի տեսակ կամուրջ է հայ դասական ու ժամանակակից գուսանական արվեստների միջեւ: Նրա մոտ կան եւ հին գուսանական երգարվեստի մոտիվները, եւ նորը՝ ժամանակակից երգերի երանգներով համեմված:

Նրա «Ի՞նչ, ի՞նչ ասեմ անուշիկ յարիս», «Սարի ճամփով», «Ես էլ չգովեմ» եւ այլ բազմաթիվ երգերը դասվում են գուսանական այն երգերի շարքին, որոնք չեն հնանում, չեն մոռացվում երբեք:

«Արեւ ասեմ, թե՞
Լուսին ասեմ, թե՞
Ի՞նչ, ի՞նչ ասեմ
Գովական յարիս...»:

Այս տողերը, որոնք երգում են հիանալի եղանակով, դուք կլսեք, կլսեք ամեն տեղ թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում, թե՛ Ադրբեջանում: Թվում է, թե Նաղաշ Յովնաթան մեծ բանաստեղծ-գուսանի մի կենսախինդ քառյակն են լսում: Այո, թվում է: Բայց իսկույն եւեթ զգում ես մի նոր, կենդանի ու ջերմ զգացում, որով համեմված է այս երգը, սիրտդ ուրիշ կարոտով ու թրթիռով է լցվում:

Այժմ էլ ապրում եւ ստեղծագործում է գուսանը: Նոր երգեր է հորինում նա. նրան կարելի է տեսնել հանրապետության քաղաքներում ու գյուղերում՝ միշտ շրջապատված երգասեր ժողովրդի սիրով ու հարգանքով:

Աշոտի ու Հավասու մասին գրելով, ես չեմ կարող մոռանալ իմ հին բարեկամ, ասենք ինչո՞ւ միայն իմ, այլ մեր ամբողջ ժողովրդի կողմից ճանաչված, տասնյակ հազարների բարեկամ գուսան Շահենին (Սարգսյան):

Բարձրահասակ, կապույտ աչքերով, գանգուր մազերով մարդ է նա եւ թեկուզ հիսուն տարեկան չկա, բայց արդեն մեծ ընտանիքի, բազմաթիվ թոռների տեր է: Ես նրան հիշում եմ երեսնական թվականների վերջերից, երբ նա առաջին անգամ էր իջել Ղուկասյանի սարերից: Այդ օրերին նա դեռ հայտնի չէր: Բայց նրա սքանչելի ձայնը, ժողովրդական երգին զարմանալի գիտակ լինելը, աշուղագուսանական բազմաթիվ երգախառն հեքիաթներ եւ հարյուրավոր երգեր իմանալը զարմացրեց շատերին: Ժողովրդի խոր ընդերքից եկած, մշեցու թոռ Շահենն ասես իր հետ բերել էր հայ ժողովրդի ամենաերգասեր հատվածներից մեկի ամբողջ երգարանը:

Երկու տասնամյակի ընթացքում Շահենը հայտնի դարձավ թե ժողովրդական երգերի հիանալի կատարմամբ, եւ թե սակավ, բայց արժեքավոր սեփական ստեղծագործություններով: Նա ամենաշատ ման եկած գուսանն է: Եղել է Մոսկվայում, Բաքվում, Թբիլիսիում, Ուրալում եւ Ռուսաստանի այլ վայրերում: Թեեւ նա հայերեն է երգել մեր ժողովրդական աննման երգերն ու իր սեփական «Սասնա ծուռ», «Գյոզալս խռով է» եւ այլ երգեր, բայց ռուս մարդկանց էլ է հուզել հայ երգը՝ Շահենի գերազանց կատարման, ձայնի զարմանալի քաղցրության ու երգած երգերի հուզականության շնորհիվ:

Հայ ժողովուրդն ունի մի ուրիշ հայտնի գուսան էլ՝ Աշխուժը: Արդեն ութսուն տարեկան է նա: Հիմա նրան հազվադեպ ենք հանդիպում գյուղերում ու քաղաքներում՝ իր քամանչի հետ, իր սակավ, բայց հրապուրիչ ձայնով, իր խոհա-խրատական երգերով: Սակայն նա այդ տարիքում էլ ստեղծագործում է: Անցյալ տարի լույս տեսավ նրա երգերի լիակատար ժողովածուն՝ մի քանի հարյուր ստեղծագործություններով: Այդ երգերում ընթերցողը տեսնում է նախասովետական հայ գյուղի պատկերը, հայ գյուղացու խղճուկ վիճակը: Վիշտ ու տագնապ ենք նկատում Աշխուժի նախասովետական շրջանի երգերում: Հռչակավոր է նրա «Սուրմալու» երգը: Թուրք բարբարոսները մորթեցին Արեւմտյան Հայաստանի ողջ հայությանը, այդ թվում նաեւ Սուրմալու գավառի հայերին: Եղեռնի այդ տարում է Աշխուժն ստեղծել իր այս ողբը, որ գիտի ողջ հայությունը: «Օձ է նստել բախտիդ վրա, Սուրմալու»: Բայց նաեւ այն ստեղծագործություններում, որոնք գրված են վերջին քսան-երեսուն տարիներին, արդեն լսում ենք ուրախության, ցնծության ձայնը:

Հայ ժողովուրդը լսում ու սիրում է նաեւ իր մյուս գուսաններին, նրանցից են՝ լենինականցի Իգիթը (Գեղամ Մարտիրոսյան), իջեւանցի Ծովյանը, լոռեցի Սարգիսը, ղարաբաղցի Բագրատը, արարատցի Սմբատը, արտաշատցի Ռազմիկը, եւ էլի ուրիշներ: Սրանք երիտասարդներ են: Սրանցից յուրաքանչյուրն իր մեկ-երկու երգով արդեն ճանաչվել է Հայաստանում: Բայց նրանք դեռ աճելու, դասական եւ ժամանակակից անվանի գուսաններից դասեր վերցնելու ժամանակ ունեն: Հույսով ենք, որ նրանք իրենց նոր երգերով կհարստացնեն սովետահայ գուսանական արվեստը: Եվ այդ նրանք անպայման կանեն, որովհետեւ դրա համար ստեղծված են բոլոր հնարավորությունները:

Սովետահայ գուսանները շրջապատված են ժողովրդի ու կառավարության հոգատարությամբ: Նրանք պարգեւատրվում են շքանշաններով եւ մեդալներով, նրանց ընտրում են դեպուտատ, նրանք համերգներ են տալիս շքեղ ակումբներում եւ մշակույթի պալատներում, նրանց ստեղծագործությունները խնամքով հավաքվում, տպագրվում են տասնյակ հազարավոր օրինակներով:

Անսպառ է ժողովրդի սերը դեպի իր գուսանները: Անսպառ է եւ գուսանի սերը դեպի իր ժողովուրդը, հայրենիքը:

Հայաստանի ազգային արխիվ
Ֆոնդ-798 / Ցուցակ-1
Գործ-940 /

Հայաստանի գուսանների մասին

Հայ գուսանները

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

Անցնում ենք Արարատյան դաշտավայրը կիսող ճանապարհներով: Իրիկնային զովը շընկշընկում է բարդիների բարձր սաղարթների մեջ ու ինչ-որ տեղից լսվում է խաղող քաղող աղջկա մեղմ երգը: Անցնում ենք Արագածի ծաղկանկար հովիտներով ու մեր ականջին է հասնում հովվի երգը:

Դրանք ժողովրդի հյուսած երգերն են:

Գուսանական երգեր...

Որքա՜ն հույզեր ու ապրումներ կան դրանց մեջ, որքա՜ն ջերմություն ու իմաստություն են պարունակում այդ պարզ, անպաճույճ, բայց հոգեպարար երգերը:

Դարերի խորքերից է գալիս հայ գուսանական (աշուղական) արվեստը: Հայ ժողովուրդը միշտ էլ սիրել, փայփայել է իր երգիչներին, ինչպես հանճարեղ Սայաթ-Նովան է ասել՝ «Խալխի նոքարներին»: Հայ մարդը միշտ իր սիրտն ու սուփրան է բաց արել նրանց առաջ:

Գուսանը ժողովրդի երգիչն է: Հորինելով ժողովրդի սրտին մոտ որեւէ տեքստ, նա այդ տեքստը հարմարեցնում է իր հորինած կամ դասական գուսանական որեւէ եղանակի ու որեւէ գործիքի (թառ, քամանչա, սազ, սանթուր, քանոն եւ այլն) եւ երգում է նրանց համար իր սրտի երգերը: Հայ գուսանին կարելի է տեսնել ամեն տեղ՝ յայլաներում ու դաշտերում, արտերում ու այգիներում, գործարաններում ու կոլտնտեսային ակումբներում:

Գուսանը ժողովրդի սրտի ու խոհերի թարգմանն է: Գուսանական ամենահին երգերի մեջ անգամ մենք տեսնում ենք հայ ժողովրդի դարավոր պայքարի արտացոլումը: Այդ երգերի մեջ ժողովրդի ծոցից ելած երգիչ-գուսանը ցույց է տվել ժողովրդի հին տառապանքները ու հաստատ համոզվել, որ «Չախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան»:

Աշուղ Ջիվանու մարգարեական այդ խոսքերը կատարվեցին նրա մահից ոչ շատ ուշ:

Հայ ժողովրդի վերածննդի հետ վերածնվեց նաեւ մեր գուսանական արվեստը: Մեր կառավարությունը լուրջ ուշադրություն դարձրեց գուսանական արվեստի զարգացմանը: Բավական է նշել, որ սովետահայ անվանի գուսաններ Աշխուժի, Աշոտի, Սերոբի, Հավասու եւ շատ ուրիշների երգերը հրատարակվել են առանձին ժողովածուներով, մյուս գուսանների երգերը լույս են տեսել պարբերական մամուլում, Պետհրատի կողմից հրատարակված ժողովածուներում, ալմանախներում ու երգարաններում: Ակադեմիական հրատարակությամբ լույս են ընծայվել հայ մեծ գուսաններ Նաղաշ Հովնաթանի, Սայաթ-Նովայի, Ջիվանու, Շերամի երգերը: Գուսաններից շատերը պարգեւատրված են կառավարա-

Հայաստանի գուսանների մասին

կան շքանշաններով ու մեդալներով, նրանք ստացել են Գերագույն Սովետի պատվոգրեր, արժանացել են Համամիութենական մրցանակների:

Այժմ Հայաստանում ապրում ու ստեղծագործում են հարյուրից ավելի տարեց ու երիտասարդ գուսաններ: Դրանցից Աշոտը, Հավասին, Աշխուժը, Սերոբը, Գրիգորը, Շահենը մեծ ժողովրդականություն են վայելում: Ահա օրինակ՝ Զանգեզուրի լեռների ծնունդ գուսան Աշոտը (Աշոտ Դադալյանը): Երկու տասնյակ տարի առաջ Աշոտը տակավին մի երիտասարդ հովիվ էր: Նա աճեց ու առաջադիմեց: Մոտ երկու հարյուր երգ է հորինել, որոնք երգվում են ոչ միայն Հայաստանում, այլեւ Ռուսաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Միջին Ասիական ռեսպուբլիկաներում: Նրա շատ երգերը թարգմանված են եղբայրական մի քանի ժողովուրդների լեզուներով:

Այսօրվա մեր գուսաններն անցյալի «թափառական աշուղները» չեն, որոնք միայն տեսել ու կրել են վիշտ ու տառապանք, ճնշում ու հալածանք: Այսօրվա մեր գուսանները երկրի իրավահավասար քաղաքացիներ են:

Ժամանակակից հայ գուսաններից լայն ժողովրդականություն է վայելում նաեւ գուսան Հավասին: Կույր գուսանը մանկությունից խոր սեր է ունեցել դեպի երգարվեստը: Երգ ու երաժշտություն սովորելով ժամանակի գուսաններից, նա կարճ ժամանակում կարողացել է հասնել լուրջ նվաճումների: Գուսան Հավասու բազմաթիվ երգերը դարձել են մեր ժողովրդի սիրած երգերը:

Կյանքի խոր ճանաչողությունը, աշխատավորական ամենալայն մասսաների հետ մշտապես կապված լինելը գուսանին դարձրել են ժողովրդի հավատարիմ երգիչը:

Գուսանների ամենասիրած թեմաներից է խաղաղության երգը: Հայ գուսանը գիտե, թե ինչ արհավիրք է բերում պատերազմը եւ ատում է պատերազմի հրձիգներին ու իր երգերով փառաբանում խաղաղությունը:

Մի քանի պատերազմներ տեսած, հայ ժողովրդի անցյալ դառն կյանքին ականատես յոթանասունհինգամյա գուսան Սերոբ Մանուկյանը երգում է.

Միշտ խաղաղ է մեր աշխարհը,
մեր տունը,
Հերոսական աշխատանք է
ամեն տեղ,
Կովով բերին խաղաղության
գարունը,
Խաղաղության խրախճանք է
ամեն տեղ:

Բազմաթիվ լիրիկական երգեր է հորինել մեր գուսաններից յուրաքանչյուրը: Այդ երգերի մեջ փառաբանում են մեր սոցիալիստական Հայաստանը, Զանգվի ջրանցքը, սարերի լանջերին հոտեր արածացնող կոլտնտեսական հովիվների սերը եւ բամբակ ու խաղող աճեցնող աղջիկների աշխատանքը:

Տարբեր են հայ գուսանների ստեղծագործական հնարքներն ու ձեւերը: Շիրակի դաշտավայրում ծնված ու մեծացած գուսան Իգիթն իր երգերի հենքում ունի Շիրակի բազմադարյան ժողովրդական երգերի հմայքը, նրա կենսուրախ լիրիկան: Զանգեզուրցի գուսան Աշոտը մոտ է Սայաթ-Նովայի ու Նաղաշ Հովնաթանի ստեղծագործական մոտիվներին ու հնարքներին: Շահենի երգերի մեջ երեւում են Աղբաբայի ու Խնուսի հին ժողովրդական եւ գուսանական երգերի ազդեցությունները: Սակայն, եթե նրանք իրենց թեմատիկայով ու արտահայտած գաղափարներով հիմնականում կանգնած են ստեղծագործական նույն ճանապարհի վրա, ապա իրենց գեղարվեստական ձեւերով ու հնարքներով տարբեր են ու արտացոլում են մեր գուսանական հին հայտնի դպրոցների ճյուղերի առանձնահատկությունները: Ստացվում է տարբեր բուրմունք ու գունագեղություն ունեցող մի կենդանի ծաղկեփունջ, որին մարդ նայելուց չի հոգնում ու չի կշտանում նրա բուրմունքից:

Եթե մեր հին գուսանական երգերի մեջ հիմնականում տիրապետել են աշուղական քարացած ձեւերը (դոդաղդայմազ, զիլբարփամազ, շեքի, մուխամմազ, ավալախար եւ այլն), ապա մեր օրերի գուսանական երգերի մեջ այլեւս հազվագյուտ են երեւում այդ խրթին ու հաճախ էլ ֆորմալիստական ձեւերը: Դեռեւս մեծ Սայաթ-Նովան իր ժամանակին մերժել է այդ միջնադարյան քարացած ձեւերը, իսկ աշուղ Ջիվանին միանգամայն դուրս է մղել դրանք իր ստեղծագործություններից:

Հաջողությունների են հասել մեր գուսանները նաեւ լեզվի բնագավառում:

Դեռեւս մեծ աշուղ Ջիվանին իր ժամանակին պայքարել է գուսանական երգի լեզվի մաքրության, նրա համաժողովրդականության համար: Հազվագյուտ են նրա մոտ բարբառային բառեր, ոճեր ու ձեւեր: Համաժողովրդական գրական լեզուն այժմ դարձել է մեր գուսանների ստեղծագործությունների հիմնական արտահայտչական միջոցը: Այսօրվա գուսանական երգերում հազվագյուտ են բարբառային խորթ ու օտարամուտ ձեւերի մնացուկները:

Անվանի գուսանների կողքին աճում են նոր, երիտասարդ շնորհալի գուսաններ եւս:

Ալավերդում հայտնի են բանվոր գուսան Առաքելյանը, Շիրակ Մանասարյանը, Կիրովականում վերջերս հանդես է եկել երիտասարդ շնորհալի գուսան Սարգիս Զաքարյանը, որի մի քանի երգերն արդեն հայտնի են եւ որը խոստանում է ստեղծագործական լավ ապագա: Այդպիսի երիտասարդ գուսաններից են իջեւանցի Գուրգեն Ծովյանը, երեւանցի Բագրատ Ավետիսյանը, սիսիանցի տասնվեցամյա Մ.Գալստյանը եւ ուրիշներ:

Ուրախալին այն է, որ նրանցից յուրաքանչյուրը մեր գուսանական արվեստի ընդհանուր սիմֆոնիայի մեջ ունի իր ուրույն ձայնը, տարբերվում են մեկը մյուսից իրենց ստեղծագործական հնարանքներով:

Մոսկվայում կայանալու է Համամիութենական գուսանա-աշուղական ստուգատես, որից Հայաստանից մասնակցելու են գուսաններ Աշոտը, Սերոբը եւ Շահենը: Հայ ժողովրդի դարավոր երգարվեստի գանձերով մեր գուսանները կգնան Մոսկվա, կկատարեն իրենց ու իրենց ընկերների հորինած երգերը, կգովաբանեն խաղաղության մեծ գործը, մեր ծաղկուն հայրենիքը, ժողովուրդների անխախտ եղբայրությունը:

«Սովետական Հայաստան»
1953թ., N8

Հայաստանի գուսանների մասին

Գուսանական երգերի լեզվի մասին

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

Ամեն ժողովուրդը ջերմորեն սիրում է իր ծոցից ելած երգիչ-գուսաններին: Սովետահայ տաղանդավոր գուսաններ Հավասու, Աշոտի, Սերոբի եւ ուրիշների բազմաթիվ երգեր լայն ժողովրդականություն են վայելում գյուղի եւ քաղաքի աշխատավորության մեջ: Գուսանների երգերը տպագրվում են մեր պարբերական մամուլում, ժողվածուներում եւ առանձին գրքերով:

Գուսանները ժողովրդական երգի մելոսի ակունքներից եկող եղանակներով հարստացնում են մեր երաժշտական արվեստը: Գուսան Աշոտի «Մոր սերը», «Հուշարձան», Հավասու «Հայրենիք» եւ բազմաթիվ այլ երգեր իրենց երաժշտական գունագեղությամբ, գաղափարական հագեցվածությամբ ու լեզվական կուլտուրայով հանդիսանում են սովետահայ գուսանական արվեստի նվաճումները: Այդ նվաճումներից են նաեւ գուսաններ Աշխույժի, Սերոբի, Շահենի, Գրիգորի, Իգիթի մի շարք երգերը, որոնք արտահայտում են մեր ժողովրդի անսահման սերն ու նվիրվածությունը դեպի սոցիալիստական հայրենիքը...

Սակայն մինչեւ հիմա ոչ մի խոսք չի ասվել մեր գուսանների երգերի լեզվի մասին: Մինչդեռ անփույթ լեզվով գրված երգը խանգարում է հայոց լեզվի զարգացմանը՝ մեր լեզվի մեջ մտցնելով բարբառային եւ օտար բառեր ու տերմիններ, որոնք վաղուց արդեն մերժվել ու դուրս են ընկել գրական լեզվից:

Ամենից առաջ պետք է նշել, որ մեր գուսաններից շատերը դեռ լիովին չեն ազատագրվել հին, արխայիկ ոճերից ու համեմատություններից, հաճախ կրկնում են միջնադարյան գուսանների հազար անգամ ասված համեմատություններն ու պատկերները: Պարսկա-արաբական բառեր են օգտագործում Հավասին, Շահենը եւ ուրիշ գուսաններ, այն դեպքում, երբ մեզանից տասնյակ տարիներ առաջ ապրած ու ստեղծագործած գուսաններ Ջիվանին, Պայծառեն, Մահուբի Գեւորգը եւ ուրիշներ գրել են աշխարհաբարով, մերժել են միջնադարյան գուսանական երգերի հնացած շատ ձեւեր:

Արխայիկ համեմատություններ, պարսկա-արաբական շատ անհասկանալի բառեր կարելի է գտնել գուսան Շահենի երգերում: Շահենը բավարար կրթություն ունի, արդեն երկու տասնամյակից ավելի է, ինչ ստեղծագործում է, բայց համառորեն մնում է կառչած արխայիկ համեմատություններին ու չի զբաղվում իր լեզվի բարելավման հարցերով: Երբ նա գովում է սովետահայոց լեզվի բառային ֆոնդից: Յալ, մալ, փարվազ, զար, մալի, հազրվել, ինթիզար եւ նման այլ բազմաթիվ բարբառային անհասկանալի բառերով լի են նրա երգերը: Պատկերներ ստեղծելիս գուսան Շահենը երբեմն հասնում է հաջողության, բայց հաճախ նրա մոտ հանդիպում ենք այնպիսի համեմատությունների, որոնք զուրկ են որեւէ իմաստից, վերացական են ու անհեթեթ: Կոլտնտեսուհի աղջկան գովելիս նա ասում է.

Երկու սիրուն աղավնի քո
կրծքի յալի վրա,
Թառել են դրախտ ծոցդ,
բաղ կրծքիդ ջալի վրա:

Յալ բառը երկու իմաստ ունի, մի դեպքում այն նշանակում է ձիու բաշ, մյուս դեպում՝ սարալանջ: Երկու դեպքում էլ ստացվում է աղաղակող անհեթեթություն: Էլ չենք խոսում դրախտ ծոց, բաղ կուրծք հնացած կամ անիմաստ ձեւերի մասին: Գուսան Շահենի երգերը զերծ չեն նաեւ գաղափարական սխալներից: Միայն մի օրինակ, ամբողջ ձայնով Շահենը երգում է «Շատ երանի նրան, ով սիրած յար չունի»: Հանճարեղ Սայաթ-Նովան տանելով յարի տված բոլոր տանջանքները, իրեն երջանիկ է համարել, որ յար ունի, իսկ մեր օրերի գուսանը երանի է տալիս նրան, ով սիրած յար չունի:

Լեզվական սխալներից զերծ չեն նաեւ գուսան Հավասու երգերը: Հավասին գուսանական ստեղծագործության բազմամյա փորձ ունի: Նա լավ գիտի մեր հին ու նոր գուսանական երգերը:Նրա մի շարք ստեղծագործությունները, ըստ արժանվույն, վայելում են ժողովրդականություն: Բայց այս ամենն իրավունք չի տալիս մեզ անցնել նրա երգերի լեզվական թերությունների ու սխալների կողքով: Արխայիկ համեմատություններն ու վաղուց մերժված գուսանական երգաձեւերը եզակի չեն Հավասու մոտ: Բալասան ես, սուսան սմբուլ ես, պատվական ես, եղեմական ես եւ այլն, եւ այլն:

Կուգա, սերիցը եւ այլ բարբառային ձեւեր, որոնք արդեն հեռացել են ժողովրդական լեզվից, օգտագործվում են նաեւ Հավասու երգերում: Հնացած դարձվածքների ու բառա-

Իմ յարը նավակով լողում է
գյոլի մեջ,
Մեկ անթառամ ծաղիկ է բուսել
սիրուն չոլի մեջ,
Քո նմանը չեմ տեսել աշխարհի
զոլի մեջ
Շահենի սրտի՝ գյոզալ, իմ սրտի
խալի վրա:

Գյոլի, չոլի, զոլի, գյոզալ բառերը Շահենը շռայլորեն օգտագործում է իր գրեթե յուրաքանչյուր երգում: Այս քառատողում հեղինակն այդ բառերը բերել է պարզապես հանգ կազմելու նպատակով, առանց իմանալու, որ դրանք վաղուց արդեն դուրս են ընկել

Հայաստանի գուսանների մասին

ձեւերի օգտագործումն անշուշտ բերում է նաեւ հին տրամադրություններ ու ապրումներ:

Հավասու դարդերը ծով է,
Դարձյալ նստել է, յար կգովեմ...

Պարզ է, որ «դարդերը ծով է» արտահայտությունը Հավասին վերցրել է հին գուսաններից եւ օգտագործել նույնությամբ: Ճիշտ չէ «իրիկնադեմ երգ ասելով» «շտապով ընթացող յարս» եւ այլ ձեւերի գործածումը:

Լեզվի մաքրության տեսակետից համեմատաբար հաջող են տարեց գուսան Աշխույժի երգերը, որոնք անշուշտ զգալի ավանդ են գուսանական արվեստի մեջ: Բայց նրա մոտ էլ հաճախ հանդիպում ենք լեզվական ոչ ճիշտ ձեւերի ու դարձվածքների: Միշտ չէ, որ նա գտնում է համապատասխան արտահայտչական միջոցներ իր միտքն արտահայտելու համար: Ըստ Աշխույժի՝ մտքերը «վառման բույրի, անուշ հովի շողով են ման գալիս մեր մեջ»: Նման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել սովետահայ շատ գուսաններից: Գուսան Բագրատը մի երգի մեջ ասում է. «Բուրում է ջինջ բուրմունքով բյուր ծաղիկներ ու վարդ»: Գուսան Ծովյանը գրում է «Գովքդ երգով մի ծով», որից ոչինչ չի կարելի հասկանալ:

Սովետահայ գուսանական երգերի լեզվի մասին թերեւս կարիք չլիներ այսքան խոսել, եթե նկատի չունենայինք այն հանգամանքը, որ նշված բոլոր երգերն էլ գրեթե ամեն օր կատարվում են ռադիոյով, մտել են Սայաթ-Նովայի անվան պետական գուսանական վաստակավոր անսամբլի եւ կատարողական այլ կոլեկտիվների ռեպերտուարը: Այդ երգերը տպագրվել են մամուլում, երգարաններում եւ հրապարակվել են առանձին գրքերով: Սակայն հրատարակչություններն ու համապատասխան հիմնարկները խստապահանջ չեն եղել գուսանների երգերի լեզվի նկատմամբ:

Ժամանակն է վերջ տալ այն սխալ մտայնությանը, թե գուսանին կամ ինքնուս հորինողին ներելի է բարբառով երգ հորինելը, օտարամուտ, խորթ ու անհասկանալի բառերի գործածությունը:

«Գրական թերթ», 24 փետրվարի 1952թ.

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

Գուսան Աշոտ

Ո՞վ չգիտե մեր ժողովրդի կողմից սիրված, տաղանդավոր գուսան Աշոտին: Նրա սրտաբուխ, հուզիչ ստեղծագործությունն ամբողջովին սովետական կարգերի ծնունդ է, ներծծված է պայծառությամբ ու կենսուրախությամբ, մեր կյանքի վեհությամբ: Աշոտը մարդկային հուզաթաթավ զգացմունքների երգիչ է, ամենաջերմ հույզերի արտահայտիչ:

Ես նրան հիշում եմ, երբ նա դեռ գանգրահեր ու վտիտ մի պատանի իջավ Զանգեզուրի բարձր լեռներից, ուր իր մանկությունն ու պատանեկությունն էր անցկացրել հովիվների ու խաշնարածների հետ: Եկավ հովվական հասարակ մախաղն ուսին ու քամանչան ձեռքին:

Սարերից նա իջավ ինչպես լեռնային վճիտ աղբյուրը ու երգեց իր առաջին երգը.

Ոչ մի ծաղիկ քո բուրմունքը չունի,
Ոչ մի յար քեզ պես գյոզալ չի ծնի...
Դա քսանհինգ տարի առաջ էր:

Ինքնատիպ թարմ ու կյանքով լի այդ երգն իսկույն անցավ շուրթից շուրթ, տարածվեց Հայաստանի գյուղերում ու քաղաքներում, Անդրկովկասի ռեսպուբլիկաներում, Միջին Ասիայում ու Միության այլ վայրերում: Այդ երգը թարգմանվեց շատ լեզուներով ու երգվեց...

Հետո հաջորդեցին գուսան Աշոտի «Զանգեզուրի բարի ծնունդ», «Կյանք տուր, կյանք առ», «Իմ Հայաստան» եւ այլ երգեր, որոնք եւս տարածվեցին զարմանալի արագությամբ: Երգերի հետ տարածվեց նաեւ գուսանի անունը:

Գուսանն աճեց զարմանալի արագությամբ, ինչպես աճում է առվի ափին տնկած դալար շիվը՝ խոր արմատներ գցելով հողի մեջ, խշշալով հայրենաշունչ ձայնով:

Գուսան Աշոտի երգերը նորույթներ էին մեր ժամանակակից գուսանական արվեստի մեջ: Նրա հենց առաջին երգում զգացվում էր խոր ժողովրդայնություն, քնքույշ լիրիկա, բանաստեղծական խոսքի ու մեղեդիի ինքնատիպություն ու թարմություն:

Հավատարիմ մնալով գուսանական ու ժողովրդական երգի տրադիցիաներին, Աշոտը միեւնույն ժամանակ ասաց իր սեփական խոսքը, չտարվեց դեռեւս իր գոյությունը տեղ-տեղ պահպանող աշուղական հնացած ու մանվածապատ ձեւերով, որոնք ժամանակին մերժել էին մեր կլասիկ գուսաններ Սայաթ-Նովան ու Ջիվանին:

Որպես իսկական գուսան-բանաստեղծ, Աշոտը ձեւավորվեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Ռազմաճակատի առաջավոր գծում, գետնատների մեջ հնչում էին գուսանի երգերը: Կարծես դրանք կրակագիծ էին բերել հայրենի լեռնաշխարհի բուրմունքը, զեփյուռի համբույրը, մեր սեւաչյա աղջիկների սիրո թրթիռները:

Աշոտը լիրիկ գուսան է, նրա լիրիկան անմիջական է ու տպավորիչ: Սեր դեպի աշխատավոր մարդը, հայրենիքը, բնությունը, ազնիվ աշխատանքը, դեպի ժողովուրդների սրբազան եղբայրությունը, - ահա գուսան Աշոտի արվեստի հիմնական մոտիվները:

Մոտ երկուհարյուր երգի հեղինակ է Աշոտը: Այդ երգերից շատերը

Հայաստանի գուսանների մասին

մեր գուսանական արվեստի սքանչելի ստեղծագործություններից են, այդ երգերով նա հարստացրել է մեր ժողովրդի երգարվեստը, հատկապես մեր գուսանական արվեստը:

Նրա «Էն սարերը», «Հուշարձան», «Աշուղ եմ», «Ձեփյուռը փչեց», «Ոչ մի խորշակ», «Ո՞ւր է», «Ժողովրդին», «Սայաթ-Նովան» եւ այլ գործեր մեր ժողովրդի սիրած երգերից են:

Ո՞վ չգիտե գուսան Աշոտի «Մոր սերը» հուզաթաթավ երգը: Չնայած գուսանը ձեռք է զարկել բազմիցս երգված թեմայի, բայց գտել է արտահայտչական նոր ձեւեր, բանաստեղծական գունեղ պատկերներ, նոր մեղեդիներ մայրական անսահման սերը գովերգելու համար.

Լույսի նըման, հույսի նըման
կենսատու,
Կյանքի նըման թանկագին է
մոր սերը,
Որդու համար միշտ էլ պայծառ
լուսատու,
Հավերժական սրտագին է
մոր սերը:
Ջան, անուշ մայրիկ, ջան,
քնքուշ մայրիկ,
Քո լեզվին մատաղ, քո լեզուն
մեղմիկ:

Ստեղծագործական վերելք է ապրում գուսան Աշոտը: Նա բոլոր թելերով կապված է ժողովրդի հետ, ծառայում է նրան, իր ելույթներով ու համերգներով օգնում է մեր աշխատավորությանը կատարելու այն մեծ խնդիրները, որոնք դրված են ժողովրդի առջեւ, երգում է մեր պայծառ առօրյան:

Լավ գիտակցելով, որ ինքը կոչված է ազնվորեն ծառայելու հայրենիքին ու ժողովրդին, մեր սիրելի գուսանն իր երգի մեջ ասում է.

Ժողովրդիդ սիրո համար
վառիր քեզ,
Խալիսի նոքար անմահ
Սայաթ-Նովի պես...

Հավատարիմ իսկական արվեստագետի այդ սկզբունքին, նա իր սրտի ողջ ավյունը, իր ստեղծագործական ջանքերը չի խնայում ժողովրդի համար:

«Սովետական Հայաստան»,
20 նոյեմբերի 1954թ.

Սրտահույզ երգերի վարպետը

«Գուսանի սերը» գրքի առաջաբան

ՍԵՐՈ ԽԱՆՋԱՂՅԱՆ

Իսկական երգն այն է, որ գարունն ավետող առաջին քնքուշ հովի պես աննկատելի շրջում է ամեն տեղ, մտնում ամեն օջախ, հուզում սարերի հովվի սիրտը, ընկերակցում լեռների ընդերքը պեղող հանքագործին, դառնում սիրահար պատանու ուղեկիցը եւ երկար ու երկար ժամանակ չի ընկնում մարդու շուրթերից, նրա հետ է լինում բուռն ուրախության ու վշտի պահին, նրա տանը, հանդում, դազգահի մոտ, ամեն տեղ...

Լավ երգն ապրում է դարեր, փոխանցվում է սերնդից սերունդ ու երբեք չի մեռնում, չի կորչում: Մարդիկ չեն ձանձրանում նրանից, ինչպես չեն ձանձրանում առավոտյան զեփյուռի փսփսոցից կամ ծարավ հագեցնող աղբյուրի քչքչոցից: Լավ երգը մարդուն ուղեկցում է նրա օրորոցից մինչեւ ծերության օրը, մինչեւ նրա արդար հանգչելու պահը...

Հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդն իր հոգու մաքրության, հյուրի առաջ իր սեղան-սուփրան բաց անելու ավանդական սովորության հետ միասին պահպանել է իր հոգու բազմաձեւ գանձերը, դրանց հետ նաեւ իր երգը՝ երբեմն խրոխտ ու մարտական, երբեմն քնքուշ ու թախծոտ, բայց ոչ երբեք նվացող ու հուսակտուր: Պատահական չէ, որ ամեն մի նոր լավ երգ հացի պես քաղցր ու հանապազօրյա է դառնում մեզ համար, ապրում է մեր կյանքում ու կենցաղում, որպես նրա մի անբաժանելի մասը:

Նոր չէ, որ մեր ժողովուրդն ամենուրեք երգում է մեր նոր ժամանակների գուսանական երգի տաղանդավոր վարպետներից մեկի՝ Գուսան Աշոտի ստեղծած սրտահույզ երգերից շատերը: Երգում է, երբեմն մոռանալով, որ այդ երգի ստեղծողն իր անբաժան քամանչայով ապրում է իր հետ, իր ժամանակակիցն է:

Քսանական թվականների վերջերին էր, որ տակավին պատանի Աշոտը գուսանական երգի ասպարեզն իջավ: Դեռեւս կայուն չէր նրա ձայնը, բայց նրա առաջին երգերում երեւում էր ապագա ստեղծագործողը: Նրա մելոդիաներն ինքնատիպ էին, հուզիչ ու կենսախինդ: Այնուհետեւ զարմանալիորեն ծաղկեց նրա տաղանդը, եւ նա դարձավ մեր ժողովրդի կողմից սիրված տաղանդավոր գուսանը:

Եթե մենք ուշադիր ուսումնասիրենք նրա սրտաբուխ, հուզիչ ստեղծագործությունը, ապա կտեսնենք, որ այդ ամենը սովետական կարգերի ծնունդ է: Ամենից առաջ դա երեւում է այն բանում, որ Աշոտի ստեղծագործություններում կա մեր դարաշրջանի շունչը, նրա երգերը ներծծված են պայծառությամբ ու կենսուրախությամբ, մեր կյանքի վեհությամբ: Աշոտը մարդու հուզաթաթավ զգացմունքների երգիչն է, նոր կյանք կառուցող աշխատավորի հույզերի արտահայտիչը՝ երգարվեստի մեջ:

Գուսան Աշոտը, խաշնարածի որդի լինելով, իր մանկությունն անց է կացրել Զանգեզուրի բարձր լեռներում,

Հայաստանի գուսանների մասին

հովիվների ու խաշնարածների մոտ՝ հովվական հասարակ մախաղն ուսին ու սրինգը ձեռքին: Երբ առաջին անգամ նա իջավ սարերից ու «մարդամեջ» մտավ, լեռնային վճիտ աղբյուրի պես հնչեց նրա առաջին երգը.

Ոչ մի ծաղիկ քո բուրմունքը չունի,
Ոչ մի մայր քեզ պես գյոգալ չի ծնի...

Ինքնատիպ, թարմ ու կյանքով լի այդ երգն իսկույն անցավ շուրթից-շուրթ, տարածվեց Հայաստանի գյուղերում ու քաղաքներում, Անդրկովկասի ռեսպուբլիկաներում, Միջին Ասիայում, Միության այլ վայրերում:

Այդ երգը թարգմանվեց շատ լեզուներով ու երգվեց...

Հետո իրար հաջորդեցին գուսան Աշոտի «Զանգեզուրի բարի ծնունդ», «Կյանք տուր, կյանք առ», «Իմ Հայաստան» եւ այլ բազմաթիվ երգեր, որոնք եւս տարածվեցին զարմանալի արագությամբ: Երգերի հետ ժողովրդի լայն խավերի մեջ հայտնի դարձավ նաեւ գուսանի անունը: Այդ օրվանից էլ կոլտնտեսային դաշտերում ու գործարաններում, ժողովրդական տոների ու ուրախությունների ժամանակ, հայկական հին ու նոր երգերի հետ, հնչում են նաեւ Աշոտի սրտաբուխ երգերը:

Գուսան Աշոտի երգերի հաջողության պատճառն այն է, որ դրանք նորություններ էին մեր ժամանակակից գուսանական արվեստի մեջ իրենց թեմատիկայով ու մեղեդիներով: Նրա հենց առաջին երգում զգացվում էր խոր ժողովրդայնություն, քնքուշ լիրիկա, բանաստեղծական խոսքի ու մեղեդիի ինքնատիպություն ու թարմություն:

Նրա երաժշտական արվեստի սկիզբը գտնվում է հայկական ժողովրդական երգի գունեղ ակունքներում, մեր գուսանական տաղերի բազմադարյան շտեմարանում: Աշոտի ստեղծած երաժշտության մեջ մենք տեսնում ենք մեր հին ու նոր ժողովրդական երգերի երանգները, մեծ Սայաթ-Նովայի, Նաղաշ Հովնաթանի, Ջիվանու, Շերամի երգարվեստի հմայքները: Աղբյուր ունենալով այս ամենը, Աշոտը, սակայն չմնաց նրանց ստվերի տակ կորած, առանց սեփական գույնի ու ստվերի, նա ստեղծեց իրենը, միայն իրեն հատուկ մեղեդին, իրեն բնորոշ երաժշտական ու պոետական հնարքներ:

Թեեւ նա ստեղծագործել սկսել է երեք տասնամյակ առաջ, սակայն որպես իսկական գուսան - բանաստեղծ, Աշոտը ձեւավորվեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Թիկունքում ստեղծած նրա երգերը «զեփյուռի թեւով» հասնում էին ռազմաճակատի առաջավոր գծերը, եւ այնտեղ՝ գետնատների ու խրամատների մեջ հնչում էին նրա երգերը: Կարծես այդ երգերը կրակագիծ էին բերել հայրենի լեռնաշխարհի բուրմունքը, զեփյուռի համբույրը, մեր սեւաչյա աղջիկների սիրո թրթիռը:

Իր երաժշտական ու բանաստեղծական խառնվածքով Աշոտը լիրիկ գուսան է: Նրա լիրիկան անմիջական է ու տպավորիչ: Սեր դեպի աշխատավոր մարդը, հայրենիքը, բնությունը, ազնիվ աշխատանքը, դեպի ժողովուրդների սրբազան եղբայրությունը - ահա գուսան Աշոտի արվեստի հիմնական մոտիվները:

Իր ծնող հայ ժողովրդի իղձերն է արտահայտում գուսանը, երբ ամուր կերպով կանգնում է խաղաղության դիրքերում եւ ցանկանում, որ միշտ

«Անմար արեւը խաղաղության,
Լույս տա, փայլի ողջ աշխարհին...»:

Գուսան Աշոտի «Էն սարերը», «Աշուղ եմ», «Զեփյուռը փչեց», «Ոչ մի խորշակ», «Ու՞ր է» «Ժողովրդին», «Սայաթ-Նովա», «Պախրա» եւ այլ շատ գործեր դարձել են մեր ժողովրդի սիրած երգերից, որովհետեւ այդ երգերի մեջ կա ժողովրդի կյանքը, աշխատանքը, նրա հույզերն ու ձգտումները:

Աշոտը շատ լավ է հասկանում, որ այդ բոլորի համար նա ամենից առաջ պարտական է իր հայրենիքին ու մայր ժողովրդին:

«Երբ գովքն եմ անում մեր
Հայրենիքի
Խոսում է սրտիս ամեն մի լարը...»

երգում է նա: Հայրենիքի գովքն անելիս խոսում է նրա սրտի ամեն մի լարը, երգում է իր ամբողջ էությամբ, սրտահույզ ու երախտապարտ ձայնով: Եվ պատահական չէ, որ նա գուսան լինելու համար իրեն պարտական է համարում իր հայրենիքին, ժողովրդին:

«Հորովելիդ ձայնն եմ առել,
Քեզնով գուսան Աշոտ դառել»:

Աշոտը սիրում է երգել իր շրջապատի մարդկանց, մորը, քրոջը, զավակին, եղբորը, բոլորի մեջ լավն ու ազնիվը տեսնելով: Այդ երգերից մեկն է «Մոր սերը» հուզաթոթով երգը: Չնայած գուսանը ձեռք է զարկել բազմիցս երգված թեմայի, բայց գտել է արտահայտչական նոր ձեւեր, բանաստեղծական գունեղ պատկերներ, նոր մեղեդիներ՝ մայրական անսահման սերը գովերգելու համար:

«Լույսի նման, հույսի նման
կենսատու,
Կյանքի նման թանկագին է
մոր սերը,
Որդու համար միշտ էլ պայծառ,
լուսատու,
Հավերժական, սրտագին է
մոր սերը:
Ջան, անուշ մայրիկ, ջան,
քնքուշ մայրիկ,
Քո լեզվին մատաղ, քո լեզուն
մեղմիկ»:

Կամ ահա ընդհանուր, այսպես ասած, «Գուսանական-փիլիսոփայական» մի երգ՝ «Հե՜յ աշխարհ»-ը: Եթե մեր հին գուսանները, հին իրավակարգերի դեմ տրտնջալով «աշխարհը փուչ» էին համարում, մեր օրերի գուսանը բարձր ձայնով բացականչում է.

«Ո՞վ է ասում, թե փուչ ես դու,
մորս նման թանկ ես, աշխարհ»:

Աշոտն իր ստեղծագործական բոլոր թելերով կապված է ժողովրդի հետ, ծառայում է նրան, իր լիրիկական, խրատական ու հայրենասիրական երգերով օգնում է մեր աշխատավորությանը՝ կատարելու այն մեծ խնդիրները, որոնք դրված են ժողովրդի առջեւ, երգում է մեր պայծառ առօրյան: Նա լավ է գիտակցում, որ ինքը կոչված է ազնվորեն ծառայելու հայրենիքին ու ժողովրդին, ուստի եւ մի երգի մեջ ինքն իրեն դիմելով ասում է.

«Ժողովրդիդ սիրո համար
վառիր քեզ,
Խալիսի նոքար անմահ
Սայաթ-Նովի պես... »:

Իսկական, արվեստի այդ սկզբունքին հավատարիմ մնալով, նա իր սրտի ողջ ավյունը, իր ստեղծագործական ջանքերը չի խնայում ժողովրդի համար: Եվ քանի որ, ինչպես վերը շեշտեցինք, նրա ստեղծագործական

Հայաստանի գուսանների մասին



աղբյուրը ժողովրդից է, նրա լիրիկական հերոսը ժողովուրդն է, ուստի եւ գուսան Աշոտի ստեղծագործությունը մտել է ժողովրդի կենցաղի ու աշխատանքի մեջ: Նրան հավասար սիրով երգում են բանվորն ու գյուղացին, ջահել տրակտորիստն ու տարեց այգեպանը, դեսպանը, հովիվն ու հանքագործը:

Նրա երգերից շատերը դարձել են մեր ռեսպուբլիկայի երգչական անսամբլների ռեպերտուարների անբաժան մասնիկները, կատարվում են նաեւ բազմաթիվ այլ լեզուներով:

Մենք նպատակ չունենք այս կարճ խոսքի մեջ վերլուծելու երաժիշտ Աշոտի եւ բանաստեղծ Աշոտի ամբողջ ստեղծագործությունը, դա դուրս է նաեւ այս ժողվածուի նպատակից, սակայն ուզում ենք նշել, որ գուսան Աշոտի երգերին հատուկ են մեր գուսանական կլասիկայի բնորոշ գծերը՝ երաժշտության ու խոսքի խոր ներդաշնակությունը, խոսքի բանաստեղծական ուժն ու թովիչ մելոդիան: Եթե դրան ավելացնենք նաեւ կատարման վարպետությունը, ապա լիովին հասկանալի կդառնա գուսան Աշոտի երգի հմայքի ու ժողովրդայնության գաղտնիքը:

Ինքնուս կերպով սովորելով բազմաթիվ զորձիքների վրա նվագելը եւ ապա գրագիտություն ձեռք բերելով, Աշոտը համառորեն ուսումնասիրել է հայ կլասիկ գուսանների, հատկապես Սալաթ-Նովայի եւ Ջիվանու խոշոր ժառանգությունը, օգտագործել է խոսքի ու երաժշտության բնագավառում կուտակված նախորդների փորձը, հմտորեն օգտագործել է ժողովրդական երաժշտության պայծառ երանգները՝ պարզությունը, անկեղծությունը եւ մտերիմ ջերմությունը: Նա իր երաժշտական առաջին «կրթությունը» ստացել է հովիվների շրջանում.

«Ես հիշում եմ մեր սարերի
լանջերը,
Աղբյուրների սառ ջրերի կանչերը:
.....
Ես հիշում եմ մորս ձայնը
սարերում,
Ոչխարների մակաղելը քարերում,
Հովիվների սրինգների
ձայնն անուշ՝
Սարին նստած թուխ ամպերի
հովերում...»:

Նրան հրապուրել են Զանգեզուրի գուսանների երգերը: Նրան առանձնապես հմայել է ժամանակի հայտնի աշուղ Աթան (1852-1942), որից առաջին անգամ լսել է հայ եւ ադրբեջանական գուսանական, աշուղական երգեր, ծանոթացել հայկական գուսանական երգի կառուցման առանձնահատկություններին եւ ձեւերին:

Պատերազմական շրջանի երգերը գուսան Աշոտը պսակեց իր հանրահայտ «Աղբյուր - հուշարձան» երգով, որը իրավամբ երգի մի սքանչելի կոթող է: Ահա նրանից մի քառատող,

«Նրանց արդար հոգիներից
Բիսում է պաղ, զուլալ աղբյուր,
Ամեն անգամ ջուր խմելիս,
Շրթունքներով կդպանք համբույր...»:

Եկավ մեր սովետական ժողովուրդների երազած օրը՝ հաղթանակը: Աշոտը սկսեց մասնակցել ժողովրդի վերքերի ապաքինմանը: Նա ստեղծեց սիրո, աշխատանքի նոր երգեր, որտեղ ցույց տվեց ժողովրդի հոգու ուժն ու ամրությունը, հումանիզմն ու հայրենասիրությունը: Պատերազմը վերջացավ, այլեւս ոչ մի նոր ձեռք չի մոտենա մեր երկրին, ոչ մի ծաղիկ չի տրորվի օտար բռնակալի ոտքի տակ: Այս միտքը լավ է արտահայտել նա իր մի երգում.

«Ոչ մի խորշակ բուրաստանս
չի մտնի,
Ոչ մի քամի վարդիս թուփը չի պոկի:
Ոչ մի ծաղիկ չի թառամի, չի թոշնի,
Քանի որ այն իմ մայր հողումն է
բացված,
Իմ հայրենի բարդիներով
պարսպված»:

Գուսան Աշոտի ստեղծագործության էական գիծը պայծառ լավատեսությունն է կյանքի, մարդու ապագայի նկատմամբ: Նրա երգերի մեջ արտահայտված է անսահման սեր դեպի մարդն ու հայրենիքը, դեպի եղբայրական ժողովուրդները, քնքշություն դեպի մերձավորն ու հարազատը, անկեղծ սքանչացում բնության ու աշխարհի գեղեցկությունների նկատմամբ: Երբեմն նրա երգերի մեջ զգացվում են նաեւ թախծի շեշտեր, բայց այդ թախծի թեթեւ երանգները ծնվում են իր հայրենի աշխարհի նկատմամբ տածած բացառիկ սիրուց: Գուսանն ուզում է հավերժ ապրել իր գեղեցիկ երկրի ու «ծնող մեծ ժողովրդի հետ»:

Լավ է ասել գուսան Աշոտն իր
մասին.
«Կյանքի հովտում թե մի ծաղիկ
ցանես դու,
Երգի ծովին թե մի աղբյուր
տանես դու,
Ո՛վ իմ գուսան, անունդ անմահ
կանես դու....»

Լուսանկարները՝ Սմբատ Տոռոզյանի



Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

Գուսան Աշոտի բանարվեստի լեզվաոճական առանձնահատկությունները

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Ժողովուրդն իր խոհն ու մտորումը, խրատն ու հորդորը, կորուստն ու հաղթանակը նաև քնարերգության միջոցով է ավանդել սերունդներին: Հայերենի լեզվական հարստությունը երգահան-տաղերգուների շնորհիվ ի սկզբանե դրսևորվել է չափածո: Հայ աշուղական արվեստում իր ուրույն տեղն ունի Գուսան Աշոտը: Չափածոն հատուկ սկզբունքով կազմակերպված խոսք է, որին հատկանշական են բովանդակության հուզական բնույթը, զգացմունքային երանգը, լարվածությունը և հագեցվածությունը (1), որի ուսումնասիրության ժամանակ կարևորվում է ինչպես մոտիվն ու թեմատիկան, այնպես էլ լեզվարտահայտչական իրողությունները, դրանց դրսևորումները: Գուսան Աշոտի երկերի թեմատիկ-գաղափարական հիմքը խոհն է, կենսափիլիսոփայությունը և սերը՝ կյանքի, բնության, կնոջ, մոր և հայրենի եզերքի նկատմամբ: Բանաստեղծ-երգասացն իր գրվածքները հիմնականում ներկայացրել է արդի գրական լեզվով, որոնք, սակայն, «զերծ չեն հայերենի մյուս վիճակների լեզվական տարրերի օգտագործումից» (2): Բնական է, որ նրա բանարվեստում կան գործեր, որոնք ոչ միայն ներառում են ժողովրդախոսակցական տարրեր, այլև ամբողջությամբ գրված են Գուսանի մայրենի խոսվածքով՝ Գորիսի բարբառով, օրինակ՝ «Չոլ չոլերը ծաղկալ են» (ԳՍ, էջ 134), «Իմ յարը մի դյան ա» (ՍԿ, էջ 100), «Ակներ յայլան Դադալունց» (ԼԿ, էջ 35), «Հռանանք վըեչ մըեր ծորան» (ԼԿ, էջ 49), «Միաջառի քեղուտում» (ԼԿ, էջ 88), «Սանամ բաջի» (ԼԿ, էջ 90), «Տախծյուտի ջեյրան» (ԼԿ, էջ 105), «Կեծակն էլ ա երք պյուրում» (ԼԿ, էջ 113), «Մարյամ աքեր» (ԼԿ, էջ 98), «Նանի, նանի» (ԼԿ, էջ 172), «Ախր ցորտն ինձ հինչ կանի» (Ō, էջ 201), «Թոխպը-թխպին թև տված» (Ō, էջ 231):

Քննելով նրա տաղերգության լեզվական տարողությունը և ոճը՝ կարծում ենք, որ, իսկապես, «Ոճն սկսվում է այնտեղ, որտեղ կա ընտրություն» (3), և այդ ընտրությունը Գուսան Աշոտը կատարել է դեռևս միջնադարի ստեղծագործողներին հայտնի «Ճիշտ բառը ճիշտ տեղում» (4) սկզբունքով՝ ոճական համապատասխան հնարանքների կիրառմամբ: Ընդհանրապես չափածո խոսքի առանձնահատկությունը «նրա ռիթմիկ բնույթն է» (5), ուստի և նրա հնչական կողմին ներկայացվող հիմնական պահանջները՝ բարեհնչությունը, ներդաշնակությունը, հնչերանգային և ռիթմական հատկանիշները, մեղեդայնությունը պայմանավորված են բաղաձայն ու ձայնավոր հնչյունների տարաբնույթ կրկնություններով ու զուգորդումներով, հնչյունական արտահայտչամիջոցների նպատակային կիրառմամբ: Նույն տողում կամ տվյալ խոսքաշարում «միևնույն բաղաձայնի ռիթմային կրկնությունը կոչվում է բաղաձայնով հանգիտություն (alliteration) » (6) կամ ***բաղաձայնույթ*** (аллтерация) (7): Գուսան Աշոտի գործերում նմանատիպ օրինակներից են. «**Բ**առ ու **բ**անից **զ**առ **զ**մրուխտե թև կտաս» (8), «**Շ**ունչն ու **շ**ուքն ես, նազելի» (Ō, էջ 19), «**Ս**իրտ**ս** ժպտաց ու թնդաց, Ա**ս**ի **ս**եր իմ **ս**ուրբ **ս**իրո» (Ō, էջ 43) «**Ō**աղիկ **ծ**նող գետակներ, **Հ**ոգուս **հ**ոգին **հ**եռացավ» (Ō, էջ 49), «**Հ**ոգին **հ**ե**ծ**ա**ծ** **վ**շտերին, **Վ**անա **ծ**ո**վ**ի **ծ**ափերին, **Վ**անա **ծ**ի**ծ**աղն ո՞ւր անցա**վ**» (Ō, էջ 55), «Իր **ս**րտին **ս**ովոր **ս**իրո թև ունի» (Ō, էջ 247), «**Մ**առանը **մ**տնե**մ**, հուր գավաթն առնե**մ**» (Նոր տարին եկավ), «**Խ**անդոտ **խ**աղի **խ**ռովքը տառապանք է» (ԼԿ, էջ 16), «**Ō**ովը **ծ**փում, **ծ**ափում է, **ծ**ով սերն է իմ տարերքը, **Ō**ովի կանչը

Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

ծաղկաբույր իմ մեղեդին, իմ երգը» (ԼԿ, էջ 12), «**Ս**իրող **ս**իրտը **ս**ուրբ է, **ս**ուրբ, **ս**րբության քող առա ե**ս**» (ԼԿ, 121),«էս **դ**իր**դ**էրան **դ**աղվալ էմ» (9) (Ծ, էջ 201), «Իր **ս**րտին **ս**ովոր **ս**իրո թև ունի» (Ծ, էջ 247), «**Թ**օխպը **թը**խպին թէվ տըվածо» (Ծ, էջ 231), «Օg **կը**ծ**ա**ծին քօն **կ**ի**կ**ա, Յար **կ**ուրցրա**ծ**ի քօն չի **կ**ա» (Ծ, էջ 231) և այլն: Իսկ նույն հնչաշղթայում, տողում կամ երկտողում «միևնույն ձայնավորի ռիթմային կրկնությունը կոչվում է ձայնավորով հանգիտություն (assonance) » (10) կամ ***առձայնույթ*** (ассонанс) (11), օր.՝ «**Ե**րգ**ե**րի **ե**րգ ու **ե**րգոg» (Ծ, էջ 43), «**Ա**ստղ **ու** **լ**ուսին շ**ա**ղ**ա**խվ**ա**ծ **ա**սես խ**ա**նդ **ու** խինդ **ա**ռ**ա**ծ» (Ծ, էջ 43), «Ողբաղողանջ **ե**րգ **ե**րկնեց» (Ծ, էջ 55), «Թվում է, **թ**ե **ե**ր**ե**կ **ե**մ **ե**ս աչքս բաց**ե**լ» (Ծ, էջ 59), «**Ե**ղնիկն**ե**րին **ե**ր**ա**զ**ե**լ **ե**մ, կարոտ-կարոտ» (Ծ, էջ 59), «**Ա**չք**ա**լույս **ա**սեմ **ա**ր**ա**լույս դեմքդ տեսնողին, Հ**ա**զ**ա**ր եր**ա**նի ն**ա**զդ տ**ա**նողին» (12) (Լույսը բացվել է) և այլն: Նկատելի է, որ բաղաձայնույթն իմաստային-հուզական լիցք է հաղորդում բանաստեղծությանը, իսկ առձայնույթը՝ բարեհնչություն և երաժշտականություն: Գուսանի պոեզիայում բաղաձայնույթը և առձայնույթը հաճախ ձևավորվել են նույն կամ նման բառերի և արմատների կրկնությամբ, ինչպես՝ «Գարնան երգով կարկաչում են ջրերը, Կանաչել են, կանաչ հագել քարերը» (ՀԵ, էջ 108), «Սերս մի վարդ մի վարդնոg» (Ծ, էջ 43), «Հեռվից հեռու շանթում ես» (Ծ, էջ 53), «Սերս սիրով թող մնա» (Ծ, էջ 73), «Երգիր եղբայր երգս գարնան շունչ ունի» (Ծ, էջ 213), «Հազար կյանք կա կյանքիդ մեջ» (Ծ, էջ 257), «Իմ Վարդանա վարդ աղբյուր» (13), «Ողջ աշխարհը մուշ-մուշ անուշ քնել է» (ՀԵ, էջ 112), «Ծովակների ցոլքերից ցոլքեր առա, ծով դառա» (ԼԿ, էջ 12), «Լեզվից լեզու անցնի գնա» (Գուսանն էն է), «Սիրող սիրտս սրտիդ ընկեր» (Նոր տարի), «Սիրտը սիրուց կտանջվի, բայց նրանից մահ չուզի» (Հուրն արևի), «Սերը սուրբ է, առանց սիրո Գգվող սրտեր չեն լինի» (14) (ՍՍ, էջ 31), «Սարի մարմանդ հովիկներ, Օրոր-շորոր ծովիկներ» (Ջով արեք), «Աշոտն ասաց՝ ծաղիկները շող-շաղոտ են» (Երբ աչքդ ժպտում է), «Իմ խաղ ու տաղին ակունք ես տալիս» (Սարվորի երգը), «Եկ, կյանքիս կյանք բեր, քո սիրով բարի» (Ծառերը ծաղկում են) և այլն: Քնարական երկի բանատողի հնչյունական կողմի կամ արտահայտության պլանի բարեհնչության պարագայում կարևորվում է վանկարարը, որի նպատակադրված գործածումն ինքնին ներդաշնակություն և նվագայնություն է ստեղծում, ուստի «խոսքն ավելի ուժեղ, հաճելի և տևական տպավորություն է թողնում մեր լսողության զգայության վրա» (15):

Իբրև պոետ-երգահան՝ Գուսան Աշոտն առանձնակի ուշադրություն է դարձրել տաղերգությանը և տաղաչափական երևույթներին: Բարեհնչության կամ գեղահնչման միջոցներից է ***հնչահանգությունը***, որը, արտահայտելով հնչյունական կազմի և քնարական պատկերի համապատասխանությունը, կարող է դրսևորվել բնաձայնությամբ (16), որի դեպքում բառում առկա է երկու տարբեր հնչյունների կրկնություն: Բնաձայնության օրինակներից Գուսան Աշոտի գործերում հետաքրքրական են գրական և մասնավորապես բարբառային կառույցները, այսպես՝ «Առվակներին՝ քչքչան» (ԼԿ, էջ 31), «Առուն քչքչաg, հովը շնկշնկաg…բարդին խշխշաg» (ԼԿ, էջ 61), «Հավքերն էլ են սրքսրքում, ասես ցուրտն էլ է մրսում» (ԼԿ, էջ 168), «Հավք ու հովեր սլսլում են» (ԼԿ,138), այլև՝ «Նուր ա թափվում պիրանատ, մըն սլսլա, բլբլա» (Ծ, էջ 201), «լուս ախպյուրա քլքլան» (Ծ, էջ 201), «Ակնին ջուրը քլքլթալի գնում ա» (ԳՍ, էջ 134), «Կլկլացող սասին մատաղ իմ յարի» (ԳՍ, էջ 135) (ընդգծվածները բնաձայնական արմատներից առաջացած կրկնավորներ են, ընդ որում՝ ի լրումն դրան, նշենք, որ **սրքսրքալ, քլ** (**թ**) **քլթալ** բայերում **թ**-ն համարում են աճական (17)) և այլն:

Հայտնի է, որ հայոց լեզվի տաղերգությունն ուսումնասիրում է հայերենի երաժշտական ռիթմը (18): Որպես խոսքի հնչյունական ներդաշնակության և ռիթմական նշանակության միջոց՝ տաղերգուներն առանձնացրել են հանգը, որը հայ պոեզիայում գործածական էր դեռևս X դարի երկրորդ կեսից (19), իսկ առավել ևս՝ XII դարից (20): Հանգը (գերմ. Reim, ֆրանս. rime, ռուս. рифма), ինչպես նշում է Մ. Աբեղյանը, բառերի վերջի մասի համահնչյունություն է, որը կազմվում է երկու և ավելի բառերի վերջի շեշտված ձայնավորների և դրանց հաջորդող հնչյունների նույնությունից (21): Աշուղական խոսքն ինքնին պահանջում է հանգավորում, ուստի Գուսան Աշոտը հիմնականում ստեղծել է տարբեր հանգավոր կառույցներ՝ արտահայտված շեշտված վանկերով և զանազան ձևույթներով, օր.՝ «Եղնիկիդ աչքերը ջրերին, Քո սերն է միշտ պատմում աշխարհին» (ՍՍ, էջ 18) (*տրական հոլովի* ***-ին*** *վերջավորությամբ*), «Հազար կարոտ, հազար մուրազ, Ունեմ սրտիս, ով իմ երազ» (ՍՍ, էջ 30) (***-ազ*** *վանկով*), «Քարափներն էլ կայծ առան, Սիրո կրակներ դառան» (Ծ, էջ 107) (***-ռան*** *վանկով*), «Չես մոռանա գուսան Աշոտ անունս, Միշտ դալար է, ծմեռ չունի գարունս» (ՀԵ, էջ 113) (***-ունը*** *վանկով*), «Երբ երազում տեսնում եմ իմ սուրբ մորը, Տանս շեմին վարդ է բացվում այդ օրը, Տաղ են բերում հուգուս սոխակն ու լորը» (ՀԵ, էջ 111) (***օրը*** *բառի նմանությամբ*), «Պապս սիրերգ շշնջաg, Շիվն էլ ասես մեղմ ժպտաg» (Ծ, էջ 221) (անցյալ կատարյալի ***-աg*** *դիմաթվային ցուցիչով*), «Վերքերը սար չի տանի, Դարդերը քար չի տանի» (***-ի*** *դիմաթվային ցուցիչով*) և այլն: Հանգիտության պահանջով աշուղի գրեթե բոլոր տաղերի բանատողերի վերջում ընտրված են հանգավորվող բառեր ու բառաձևեր, որոնցով միտքն իմաստային պլանում ավելի է ընդգծվում և սաստկանում: Ընդհանրապես հայերենի վերջնավանկ շեշտադրությունը նպաստում է բանատողի վերջում շեշտված վանկերով հանգերի (*արական*) առատ գործածությանը՝ ի տարբերություն անշեշտ հանգերի (*իգական*), երբ «շեշտվում է տողի նախավերջին վանկը» (22) կամ հանգերը «կազմ-

Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

վում են օժանդակ բայի կրկնությամբ» (23), նաև **ը** որոշիչ հոդով: Գուսանի քնարերգության մեջ նմանատիպ հանգեր ունեցող օրինակներից են՝ «Գուսան Աշոտ, Սյունյաց հողը անարա՛տ է, Չարի սերմը բուն չի դնի, անարմա՛տ է» (ՍՍ, էջ 11) (*ընդգծումները և շեշտադրումները մերն է՝ Ս.Մ.*),«Հովի նման քնքուշ ու նուրբ նրա համբույր տալը ո՞ւր է, Սիրուց խփված վիրավոր ես, քո առաջվա հալը ո՞ւր է» (ՀԵ, էջ 106), «Ծաղկուն սարեր, հրաշք տեսա, ախ, մի՞թե նա երա՛զ էր, Երկնային հուր մի դիցուհի, մի սրբուհի, մուրա՛զ էր» (Ծ, էջ 115), «Յա՛ր ջան, մի՞թե ես քեզ մոռացե՛լ եմ, Չէ՞ որ քո սիրով ես զորացե՛լ եմ» (Քո սիրո համար), «Ծարավ առնող հազարակնյա աղբյո՛ւր ես, Սիրող սրտիս կյանք պարգևող համբո՛ւյր ես» (ՍՍ, էջ 26),«Ա՜խ, սև-սև աչերդ սիրո կրա՛կ են, Փունջ-փունջ մազերդ վարդ ու մեխա՛կ են» (Քո սիրո համար) «Օջախդ շեն, այգիդ՝ ընդմիշտ դալա՛ր է, Ով այգեպան, իմաստուն հայրիկ, Մայր Արազի նման սերդ վարա՛ր է» (ՍՍ, էջ 29), «Միշտ ծաղկում են գցած այգուդ ծառե՛րը, Գարնան երգով կարկաչում են ջրե՛րը» (ՍՍ, էջ 29), «Մարդուն քաջի ուժ կտան ձեր օդն ու ջո՛ւրը, Սուրբ մոր նման օրոր կասի զով զեփյո՛ւռը» (ՍՍ, էջ 11) և այլն: Տեղին է նշել, որ նման հանգեր կան նաև բարբառային ծագմամբ կառույցներում, որոնցում պահպանվում է Գորիսի խոսվածքներին բնորոշ վերջընթեր շեշտադրությունը, ինչպես՝ «Յարիս օբան հէն ա կանաչ սա՛րումը, էլ ծ՛ուն չի ԿԷ, Մէծ ըռօնին թախկել ա, Մարդկանց քէփը շատ լա՛վ ա էս տա՛ռումը» (ԳՍ, էջ 314), «Մէր ծ՛որ էրը ա մէր բա՛խտը, Միշտ յէրքիլ տամ Ըշօտիս, Ըռավէտվա լա՛վ վա՛խտը» (Ծ, էջ 231), «Մըն մէռուն ա, նշխարք ա, էս ըշխարքի ա՛դա՛ թը, Ասէմ տ՛ու էս, ա՛ շարմաղ նըրա համ ու լա՛զա՛թը» (Ծ, էջ 201), «Տէս ծաղիկը ծաղկի հէտը խոսում ա, Օբից դուրս յէկ, սիրտըս քէզ թունդ օ՛զում ա» (ԳՍ, էջ 314), «Մէր ծ՛որ մարթը նա՛խշուն ա, Խօսքը ա՛դա՛ թը նա՛խշուն ա» (Ծ, էջ 231), «Ցօրտ ա, փըշաքաղվալ էմ, էս դիրդէրան դա՛ղվալ էմ, Ախըր ցօրտը ինձ հինչ կանի՝ կըրակվալ եմ, շա՛ղվալ էմ» (Ծ, էջ 201), «Շօխկըտ սըրտիս ա՛ռէվ ա, Թա՛զա՛-թա՛զա՛ խա՛ղէր ա» (ԼԿ, էջ 49), «Ա՜յ պէլակին, էսօր յարս պըռնգնած էր, հի՞նչան ա, խուսցըրի, մըհալ չըրավ, մռըզած էր, հի՞նչան ա» (Պելակին) և այլն: Վերոբերյալ օրինակներում շեշտված և անշեշտ հանգերը մեծ մասամբ ***ճշգրիտ*** են, քանի որ տողավերջի հնչյունները կրկնված են նույնությամբ, սակայն Գուսանի երգարվեստում առկա են նաև ***մոտավոր*** հանգերով տողեր, որոնցում հանգը ձևավորվել է նման հնչյուններով (24), օր.՝ «Հուշարձաններ՝ հավերժ կանգուն, Երկինքն էլ է ձեզ շափաղում» (ՀԵ, էջ 112), «Մարդուն քաջի ուժ կտան ձեր օդն ու ջուրը, Սուրբ մոր նման օրոր կասի զով զեփյուռը» (ՍՍ, էջ 11), «Գուսան Աշոտ քո յարի սուրբ մաղթանքը կատարվեց, Այնքան պիտի երգ հյուսես,երգ հյուսելով ցամաքես» (ՍՍ, էջ 21), «Երգի ծովեր ինձ տարար, Կարոտների ձայն դառար» (Ծ, էջ 141), «Անուշ ձայնը երգեհոնի, Սարի սիրտն էլ կփոթորկի» (Ծ, էջ 128), «Դու սլացար շանթերի դեմ մահաբեր, Մեր տան հույսի Դավիթ էիր ու Մեր» (Ծ, էջ 132), «Քո հոգին հրավառ, Անդրանիկ զորավար» (Ծ, էջ 132), «Ա՜խ, ընկել եմ քար ու քարափ, Իմ սրբություն, ե՛տ արի,ե՛տ, Ես ծովակ եմ առանց կարապ» (Ծ, էջ 66) և այլն:

Ընդհանրապես Գուսան Աշոտի երգանին ամբողջանում է հայ քնարերգության և արևելյան պոեզիային բնորոշ բանաստեղծության տեսակներով, որոնց մանրամասն ուսումնասիրումը մեր նյութի շրջանակներից դուրս է: Քննել ենք միայն քառատողի արտաքին հանգավորումը, որը ձևավորվում է բանաստեղծական տողերի տարբեր հաջորդականությամբ. **կից՝** «Հեյրանդ եմ ես, իմ կյանքում քեզնով տարված, Ջահել եմ ես, ինձ մի խփիր սիրո հարված, Դու ծաղկավառ Ջանգեզուրի բարի ծնունդ, Հազար տեսակ վարդերից ես առել սնունդ» (ՀԵ, էջ 107), «Եղնիկիդ աչքերը ջրերին, Քո սերն է միշտ պատմում աշխարհին, Ախ, սիրուն եղնիկս մի գնա, մի գնա, Ախ, դրախտ օրրանդ մի թողնի, մի գնա» (ՍՍ, էջ 19), **խաչաձև՝** «Անմար լույսեր հոգիների՝ Իմ քարակերտ հուշարձաններ, Նոր պատմություն սխրանքների՝ Իմ հարակերտ հուշարձաններ» (ՀԵ, էջ 111), «Օջախդ շեն, այգիդ՝ ընդմիշտ դալար է, Ով այգեպան, իմաստուն իմ հայրիկ, Մայր Արազի նման սերդ վարար է, Իմ աչքի լույս, իմ սրտիս սյուն, իմ հայրիկ» (ՀԵ, էջ 108), **օղակաձև՝** «Սրնգահար Աշոտն եմ քո սեգ սարերի, Այժմ՝ գուսան, տաղեր կասեմ քո ժայռերին, Ես կգնամ, երգս թողած ծաղիկներին, Գալիքը քո հույս հավատով իմ օրրան» (ՍԿ, էջ 165) և այլն: Ինչպես գրում է Ա. Կարապետյանը Աշոտի տաղերի մասին, «արտաքին հանգավորմանը հաճախ միաձուլվում է ներքին հանգավորումը» (25), որով աշուղական խոսքի երաժշտականությունն ավելի զգալի է: Քնարերգուի բանատողերում առկա է նաև բառերի ներքին հանգակցություն, ինչը դրսևորվում է աշուղական երգերին հատուկ *քողարկված* հանգի միջոցով, երբ տողերը վերջավորվում են նույն կամ նման հանգակիր բառերով, օր.՝ «Մեկ մթնում ես, մեկ ծիծաղում՝ ամպի տակի արևի *պես*, Ամեն հովից օրորվում ես ցրտահարված տերևի *պես*, Հույս ես տալիս, կարոտ թողնում հեռվից եկած բարևի *պես*, Կորցրել ես ու չգիտես, քո սիրուն մարալը ո՞ւր է» (ՀԵ, էջ 106), «Դու զգույշ կաց, որ քեզ չառնի անսեր մարդը, Սերից հեռու ի՞նչ իմանա՝ ինչ է *զարդը*, Ես երգում եմ՝ դալար մնա կոկոն *վարդը*» (ՍՍ, էջ 13), «Ա՜խ, սև-սև աչերդ սիրո կրակ *եմ*, Փունջ-փունջ մազերդ վարդ ու մեխակ *եմ*» (Քո սիրո համար),«Ա՜խ, աչքս քո ճամփին խամրում է, ի՞նչ *անեմ*, Ա՜խ, սիրտս կարոտից մարվում է, ի՞նչ *անեմ*» (Օջախում) և այլն: Քողարկված հանգերն առհասարակ բանաստեղծի պոեզիայի լեզուն մոտեցնում են ժողովրդականին: Գուսանական խոսքում հանգավորումը ոչ միայն ներդաշնակություն, մեղեդայնություն, այլև ռիթմական նշանակություն ունի: Ինչպես արձակ, այնպես և չափածո խոսքում զանազան երևույթների, հատկանիշների պարբերաբար հաջորդությունը և կանոնավոր, համաչափ կրկնութ-

Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

յունը ստեղծում են ռիթմ (26): «Բանաստեղծական խոսքի ռիթմն ավելի ցայտուն և որոշակի է, քան արձակինը, որովհետև բանաստեղծության մեջ օգտագործվող տաղաչափական զանազան հնարներն ուժեղացնում են այն» (27): Գուսան Աշոտը ռիթմի միջոցով ստեղծել է ոչ միայն իրադրության ու տրամադրության, այլև խոհի, ապրումի, զգացմունքի գեղարվեստական պատկեր, այսպես՝ «Մի կողմն արև, մի կողմն ամպ, Սեր ու արև, գիրկը տաք, Մեկը զմրուխտ թև ունի, Մեկն էլ՝ անհույս, թևաթափ» (ԼԿ, էջ 111), «Խոր աշուն է, մթնաշունչ, մուժ է կախվել իմ սրտից, ճերմակ վարդի թերթեր են, ասես, իջնում երկնքից» (ԼԿ, էջ 168) և այլն: Իբրև ռիթմական միավորներ՝ քնարերգուի լեզվում առկա են նպատակամիտված բառակրկնությունները: Բնական է, որ բառակրկնության տեսակների տեղին կիրառմամբ «ընդգծվում է կրկնվող բառի բառական նշանակությունը, բանաստեղծությունը դառնում է ռիթմիկ ու երաժշտական, ուժեղանում է քնարական խոսքի հուզականությունն ու հռետորական ներգործությունը» (28): Գուսան Աշոտի տաղերում կրկնության բանադարձման տեսակներից հանդիպում են տարբեր օրինակներ, որոնք, ըստ դիրքի, ձևավորում են գլխահանգեր, միջնահանգեր և վերջնահանգեր, որոնցից կիրառման հաճախականությամբ աչքի են ընկնում վերջնահանգային կրկնությունները, ինչը բնական է աշուղական արվեստում: Հարակրկնության սկզբունքով կազմված գլխահանգեր են առկա երկտողում, քառատողում կամ ամբողջ բանաստեղծության մեջ՝ արտահայտված խոսքամասային տարբեր պատկանելություն ունեցող բառերով, ընդ որում՝ վերջինիս օրինակներից են «Սերն անհուն-անհուն»-ը, որի երեք քառատողերը սկսվում են «Ես գարնանն եմ…» կառույցով, այսպես՝«Ես գարնանն եմ իմ քամանչան ձեռքս առել…Ես գարնանն եմ սիրո կայծը սրտիս առել…Ես գարնանն եմ սիրտս բացել զառ հավքերին» (ԼԿ, էջ 164), կամ եռաշար հարակրկնությամբ է գրված «Էն մեծ սարը» երգը (29), որի ոչ միայն բանաստեղծական տները, այլև բանատողի երեք հատույթի յուրաքանչյուր մասը սկսվում են **էն** (<այն) ցուցական դերանվամբ՝ «**Էն** ծաղկունքը, էն բուրմունքը, էն յայլան, **էն** իմ սիրո, էն թեժ հուրն է էն վառման» (ՍԿ, էջ 181) և այլն: Կից տողերի նույնասկիզբ կրկնության տարաբնույթ լեզվամիավորներով բնագրային օրինակներում շեշտվում է ընդգծվածների բառային նշանակությունը և ոճաբանական գործառույթը՝ «Սիրով եղիր, վառ մնա, Սիրով եղիր, հայ մնա» (Ծ, 31) (*գոյ.*),«Ոչ մի ծաղիկ քո բուրմունքը չունի, Ոչ մի մայր քեզ պես սիրուն չի ծնի» (Աշուղ եմ) (*ժխտ. դեր.*), «Ինչքա՛ն-ինչքա՛ն կարոտներ կան քարայրներում հոգի տանջող, Ինչքա՛ն-ինչքա՛ն հոգիներ կան բարձունքներում հավերժ վառվող» (ԼԿ, էջ 44) (*հարց. դեր.*) և այլն: Նկատելի է, որ հարակրկնությունը զուգահեռել է վերջույթին՝ ստեղծելով հանգույց, երբ բանատողերի առաջին և վերջին բառերը կրկնվում են, օր.՝ «Հազար կանաչ արտեր ինձ տան, Հազար անուշ վարդեր ինձ տան » (ՍՍ, էջ 30), «Ձա՛ն, անուշ մայրիկ, Ձա՛ն, քնքուշ մայրիկ» (ՀԵ, էջ 103), «Մոր ապտակը հեզ համբույր է ինձ եղել, Մոր զայրույթը հույս խրատ է ինձ եղել» (ՀԵ, էջ 111) և այլն: Ինչպես հայ քնարերգության մեջ, այնպես և Աշոտի երգարանում միջնահանգով տաղերը սակավ են, օր.՝ «Հազար աչք ունի, հազար նախշ ունի, Երկնային պատկեր, Մի արեգունի, մի սեր անհունի, Երազ սիրաբեր» (Ծ, էջ 21), «Լույսի նման, հույսի նման սրբազան, Կյանքի նման թանկագին է մոր սերը» (ՀԵ, էջ 103): Ի տարբերություն այս տեսակի՝ տաղերը հարուստ են վերջույթային կրկնությամբ, որի կրկնվող բառաձևերի լեզվաոճական արժեքն ավելի զգալի է, երբ քննում ենք նրանց անվանողական նշանակության տեսանկյունից, այսպես՝ *գոյականով*՝ «Գուսան Աշոտ, հայրը փառքն է օջախի, Հույսը, լույսը բարի կամքն է օջախի» (ՀԵ, էջ 108), «Աշոտն ասաց, սրբի դուռ է իմ մայրը, Ջերմացնող կրակ, հուր է իմ մայրը» (ՀԵ, էջ 111), «Էն աղբյուրն է իմ վկան, Ջով զեփյուռն է իմ վկան» (ԼԿ, էջ 114), «Չեմ մոռանում, երբ գնացինք մանուշակով պատած ձորը, Ա՛խ, կարոտով ինձ կկանչի կանաչ-կարմիր կապած ձորը» (ՍԿ, էջ 22), *ածականով*՝ «Ասի՝ երդվիր քո սերն եմ, սրբի դուռը անարատ, Առնեմ նազուկ ծոցիկդ խնկաբույրը անարատ» (ՍՍ, էջ 20), *դերանունով*՝ «Սարի սիրուն լոր ես դու, մի՞թե խռովել ես դու, Ես քո սիրտը չեմ կոտրել. մի՞թե վիրավոր ես դու» (ԼԿ, էջ 160), «Ով սուրբ մայրեր ձեր վիշտն առնեմ տանեմ ո՞ւր, Մորմոքներն ու հոգսերն առնեմ տանեմ ո՞ւր» (ԼԿ, էջ 110), *բայով*՝«Մի պարզ առավոտ քո սեր աղբյուրից մի կում ջուր առա, Ախ, ինձ թվաց, թե աղբյուրդ խոսեց, մի ծով սեր առա» (ԼԿ, էջ 120), «Թևավորս, իմ աչքերի թևով եկ, Դու Աշոտիս կանչող սրինգ, սիրով եկ» (ԼԿ, էջ 160), «Յայլաներիդ ծուխը սահող երամ դառած, Իմ նազելին երամի մեջ երազ դառած» (ՍՍ, էջ 11), «Վառվող վարդ ու փշեր կան, Սև ու կարմիր նախշեր կան» (Ծ, էջ 43), «Սիրող սրտին ինչ դադար, քուն մտնելու պահ չունի, Սիրտը սիրուց կտանջվի, բայց նրանից մահ չունի» (Հուրն արևի), *մակբայով*՝ «Երանի ձեզ, այ հավքեր, որ ձեր սիրո հետ եք միշտ, Սերս ինձնից հեռացավ, առուն մտքիս մեջ է միշտ» (ԼԿ, էջ 115), *կապով*՝ «Ուր որ եղա՝ Լաստն ինձ հետ, նրա սիրո մասն ինձ հետ, Միշտ օրհնում եմ ու պաշտում՝ հայոց կենաց թասն ինձ հետ» (ԼԿ, էջ 117), «Ամեն հովից օրորվում ես ցրտահարված տերևի պես, Հույս ես տալիս, կարոտ թողնում հեռվից եկած բարևի պես» (ՀԵ, էջ 169), *վերաբերականով՝* «Ճերմակ ծոցիդ նախշերը փունջ վարդեր են, ասես քե, Քո նայվածքը եղնիկի հմայքներ են, ասես քե» (ԼԿ, էջ 169) և այլն: Ստորոգյալի մասնակի վերջույթային կրկնություն է ստեղծել ընդգծված բաղադրյալ անվանական ստորոգյալների հանգույցի կրկնությամբ, ինչպես՝ «Յար, իմ սերը հրաշունչ ջահել կյանքի ճամփա է, Այն անարատ պահողը մի ծով սիրո արքա է» (ԼԿ, էջ 169), «Դու արփի ես, դու լուսին ես, Դու հավերժող սիրով օծված, Արտ ու մարգիս լույս անձրև ես» (ԼԿ, էջ 171), «Իմ Վարդանա վարդ աղբյուր, ինչքան ակդ զուլալ է, Կանաչ ժայռից վայր կիջնես, շրջապատդ զուլալ է» (ՀԵ, էջ 109) և այլն:

Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

Վերջույթային կրկնության մեջ առանձնացրել ենք վերջահար բառամիավորների կրկնությունը, որով ասելիքն ավելի է շեշտվում, օր.՝ «Սրտիդ զարկը տաղ է սիրո, սիրտս **քոնն է**, սիրունս, Աչքս երկնասարեր չափեց, միտքս **քոնն է,** սիրունս» (ԼԿ, էջ 138), «Ծաղիկներդ գույն-գույն նախշել, **Սյունյաց** սարեր, Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, **Սյունյաց** սարեր» (ՍՍ, էջ 11), «Մայրը կուզի՝ կյանքը թողնի **իր** որդուն, Աչքի լույսը, սերը թողնի **իր** որդուն» (ՍՍ, էջ 16), «Լեռների գագաթին հարատև մնում է **գարունդ**,Ղարաբաղ: Հազարան երամդ ոսկեթև երգում է **գարունդ**, Ղարաբաղ» (ՍՍ, էջ 18) «Հոգեթով է քո սերը, արևշող է **քո** սերը, Աշխարհ-աշխարհ լսեցին, ծփան ծով է **քո** սերը» (ԼԿ, էջ 116), «Ծիրանագույն գիշեր էր, խնդաց կանչող **իմ** սիրտը, Շշուկներից քո սիրո բացվեց կարոտ **իմ** սիրտը» (Հուրն արևի), «Ասա, ինչո՞ւ դու լուռ ես, **սիրո՛ւն** ջան , Ղարիբի պես տխուր ես, **սիրո՛ւն** ջան» (ՀԵ, էջ 104) «Հովի նման քնքուշ ու նուրբ նրա համբույր տալը **ո՞ւր** է, Սիրուց խփված վիրավոր ես, քո առաջվա հալը **ո՞ւր** է» (ՀԵ, էջ 106), «Այնքան երկար քեզ փնտրելուց հանդիպեցի **էն** գարնան, Օտար աչքով ինձ նայեցիր ու վանեցիր **էն** գարնան» (ՀԵ, էջ 108), «Անկարող եմ մոր թախիծը **տանել** լուռ, Հուզմունքներն ու խոր կսկիծը **տանել** լուռ» (ԼԿ, էջ 110) և այլն: Այսպիսով՝ նմանահունչ կամ նույնահունչ կրկնող բառերի դերը մեծ է գեղարվեստական պատկերի ամբողջացման, մտքի սաստկացման, խոսքի՝ նորանոր ներբերանգներով հարստացման առումով: Գուսան Աշոտի խոսքը ժողովրդականին մոտեցնում է տողի կրկնության ոճական հնարանքը, որը հանդես է գալիս իբրև բանաստեղծական տների վերջին տող կամ կրկներգի բաղադրիչ. նմանատիպ բանատողերից են «Յար, առանց քեզ ինչի՞ս է պետք է» (ՀԵ, էջ 105-106), «Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր» (ՍՍ, էջ 11-12), «Հուշեր-հուշեր կարոտի, հույզեր-հույզեր կարոտի» (ԼԿ, էջ 176), «Սիրտս խենթացել վայրի հավք դարձել, ա՜խ, իմ յարն ո՞ւր է» (Ախ, իմ յարն ո՞ւր է), կամ՝ «Ձան-ջիգյարավ ղարիբներին տոն կկանչի» (ԼԿ, էջ 90), «Սիրող սիրտն ախ ի՞նչ կանի» (ԼԿ, էջ 176), «Յայլաներիդ ծուխը սահող երամ դառած» (ՍՍ, էջ 11-12), «Սարեր, ձորեր վկա են, Հանդ ու չոլեր վկա են» (ՍՍ, էջ 20), «Գարնան երգ է եղբայրը» (ԼԿ, էջ 91) և այլն:

Քնարական խոսքն ավելի տպավորիչ, արտահայտիչ ու հուզական է դառնում լեզվաոճական համապատասխան միջոցների գործածմամբ: Պատկերավորման միջոցներից՝ դարձույթներից, Գուսանի տաղերում հաճախադեպ են *մակդիրը, համեմատությունը և չափազանցությունը*, որոնք ոչ միայն հարստացնում են ասելիքի բովանդակային կողմը, այլև ներազդելով մարդկային երևակայության վրա՝ ամբողջական են դարձնում գեղարվեստական տվյալ պատկերը:

Մակդիրը բնորոշվում է բառի փոխաբերական նշանակության գործառմամբ՝ միաժամանակ հուզական լիցք հաղորդելով խոսքին (30), օր.՝ «էն աստղավառ աչքից» (ԼԿ, էջ 8), «Ալվան-ալվան սիրահուշ վարդեր» (ԼԿ, էջ 66), «աչքս ծով խինդ առավ» (ԼԿ, էջ 95), «Նվիրական վառ կրակն է օջախի» (ՍՍ, էջ 29), «Հազար դրախտ Աշոտիս տան» (ՍՍ, էջ 30), «…հրդեհել են հուր աչքերդ» (ՀԵ, էջ 110), «Անմար լույսեր հոգիների» (ՀԵ, էջ 111), «Անքուն սիրտս» (ՀԵ, էջ 112), «Ջմրուխտ կապած լանջերդ» (ՀԵ, էջ 109), «…արծաթ ցոլքեր կցայտես» (ՀԵ, էջ 109), «Սիրաշափաղ ծիրանին է» (ԼԿ, էջ 14), «էն սևասիրտ իժերն եկան» (ԼԿ, էջ 118), «Ցոլացող աստղերդ» (ԼԿ, էջ 93), «իր սիրահույզ լարերին» (ԼԿ, էջ 93), «սադափանախշ աշխարհ է» (ԼԿ, էջ 91), «Սիրատոչոր տաղս» (ԼԿ, էջ 164), «…կաքավ յար» (ՍԿ, էջ 26), «…շափաղ-շափաղ ծով» (ՍԿ, էջ 174), «…շափաղազարդ ճաճանչիդ» (ԼԿ, էջ 138), «…հազարավարդ նազերով» (ԼԿ, էջ 138), «…հրեշտակ իմ երկնածին» (ԼԿ, էջ 137), «Մարմար ծոցդ, խումար աչքդ, անմար-անմար կրակներ» (Ծ, էջ 17), «…երգս է թռչում հայրենաշունչ…» (Ծ, էջ 23), «…հավատ ունեմ սիրահեղեղ» (ԼԿ, էջ 5), «Վահագնահուր սերունդն ենք» (Ծ, էջ 31), «Լույս եղբայրն է վարդ գինու» (Ծ, էջ 113), «…ծովակարոտ ծովերից» (ԼԿ, էջ 65), «Յոթնաածավալ սեր» (ԼԿ, էջ 67), «Հող հայրենիդ հացաբույր…» (ԼԿ, էջ 69), «Քո սիրաածոր այգիները մշտադալար» (ԼԿ, էջ 22), «Դու լեզուն ես սիրահեղեղ» (ԼԿ, 38), «Արեգնավառ սիրտ պիտի…» (ԼԿ, էջ 41), «Շափաղազարդ հուր արևոտ» (ԼԿ, էջ 5), «Սիրաշաղ լանջեր, սիրատանջ աչքեր» (ԼԿ, էջ 40), «արև համբույր ոսկեհուր» (Ծ, էջ 11), «չլինի՞ հավքն ես զմրուխտե» (Ծ, էջ 115), «Սրմունջները քո սիրականչ…» (Ծ, էջ 115) և այլն: Ակներև է, որ տաղերը հեղեղված են տարաբնույթ մակդիրներով, որոնց ոճական արժեքն առավելապես ընդգծվում է շրջուն շարադասությամբ կառույցներում, որոնք ընդհանուր առմամբ խոսքը հանգավորում և քնարական են դարձնում:

Հայտնի է, որ համեմատության դիմում են տարբեր հասկացությունների, առարկաների միջև եղած նմանությունը համեմատելու և մատնանշելու համար, օր.՝ «…շունչը մեղմիկ է սարի զովի պես, …աչքերը՝ երկինք մեր Սևանի պես,… շողակաթ է նա, արծաթ լուսնի պես» (Ախ, իմ յարն ո՞ւր է), «Ամեն հովից օրորվում ես ցրտահարված տերևի պես» (ՍՍ,էջ 27), «Մայր Արագի նման սերդ վարար է» (ՍՍ, էջ 29), «Կյանքի նման թանկագին է մոր սերը» (ՀԵ, էջ 103), «Սուրբ մոր նման օրոր կասի զով զեփյուռը» (ՍՍ, 11), «ճերմակում եմ ձյունի պես» (ԼԿ, 94), «Թող գունատվեմ ամպի պես» (ԼԿ, 94), «Հովի թևով էլ կգաս ծաղկաբույրի պես անտես» (ԼԿ, էջ 52), «Դու էլ զանգակ առվի պես, գուսան կանչիր» (Ծ, էջ 39), «Աշխարհ չափող իմ աչքով՝ հանց Արագած մի սար է» (ԼԿ, էջ 91), «Ծովն էլ մոր համբույրի պես քեզ շոյել է» (ԼԿ, էջ 75), «Գուսան երգդ ամեն սրտի հասնում է…Ջուլալ-զուլալ գետի նման հոսում է» (Ծ, էջ 213), «Այգի ունեմ թթենու՝ մանկան պես եմ փայփայում» (Ծ, էջ 113), «Երկնի պես խորախորհուրդ երգի տաճար երգեհոնը» (Ծ, էջ 128) և այլն: Նկատել ենք, որ Գուսանը տաղերում կիրառել է ներքին համե-

Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

մատություն՝ զուգադրություն (զուգահեռականություն), երբ զուգահեռ համեմատությունը կատարվում է առանց համեմատիչ բառերի՝ նմանեցնելով կամ հակադրելով բնության և մարդկային այս կամ այն իրողությունները (31), օր.՝ «Ձայնդ երգերի աղբյուրի ակ է, Խալդ կապուտակ մի մանուշակ է, Ծոցդ դրախտի անմար կրակ է» (Աշուղ եմ), «Կյանքիս այգում դու կենարար անձրև ես» (ՍՍ, էջ 26), «Գուսան Աշոտ, հայրը փառքն է օջախի, Հույսը, լույսը բարի կամքն է օջախի» (ՀԵ, էջ 108), «Ծիծաղն է քո կարկաչը» (ՀԵ, էջ 109), «Հայրենի տուն, զանգ, մատուռ է իմ մայրը» (ՀԵ, էջ 111), «Յայլաներիդ ծուխը սահող երամ դառած» (ՍՍ, էջ 11), «Հոգու քերդ է եղբայրը» (ԼԿ, էջ 91), «Սրտիդ զարկը տաղ է սիրո» (ԼԿ, էջ 138), «Մակույկ արա ժպիտդ» (Ծ, էջ 39), «Երկնին նայող եղնիկների եղնիկն ես դու» (ԼԿ, էջ 38), «Ջահել կյանքը մի ուժ է, Ջառ ու զմրուխտ քռչուն է» (Ծ, էջ 117) և այլն: Տաղերում ոճական յուրահատուկ արժեք ունեն նաև *թեական* համեմատությունները (32), որոնք կազմված են **ասես, կարծես, կարծես թե** և այլ եղանակավորող բառերով, օր.՝ «Լեռներն ասես թե հեքիաթ են պատմում» (ԼԿ, էջ 3), «Հավքերն էլ են սրթսրթում, ասես ցուրտն էլ է մրսում» (ԼԿ, էջ 168), «Արևն ասես քնել է» (ԼԿ, 168), «Հուր աչքերդ բարձունքի կրակներ են, ասես թե» (ԼԿ, 169), «Արծաթ կուժը շափաղեց, ասես ինձ սեր շշնջաց» (Ծ, էջ 39), «Կայծակներն ասես թե քո աչքերից են հյուսվել» (ԼԿ, էջ 67), «տխուր կանչից լեռն էլ ասես փոքրացավ» (ԼԿ, էջ 79), «Աղավնիներ ասես թե, երկնից իջնում աստղաթև» (ԼԿ, էջ 13), «Ձյունն էլ ասես կհարբի, հոգիս զմրուխտ թև կառնի» (ԼԿ, էջ 13), «Ծովակն ասես վեր բարձրացավ, երբ փարվեցինք մենք իրար» (ԼԿ, էջ 31), «Աստղերն ինձ հետ տխրեցին, ասես մի պահ խամրեցին » (ԼԿ, էջ 39), «Սրտովս ասես մի սուր նետ անցավ, Հոգիս խենթացավ» (ԼԿ, էջ 40), «Լեռն ու ժայռն էլ ասես թե այսօր սիրով են հարբել» (Ծ, էջ 211), «Խալը կանաչ՝ սիրո նշան, ասես դրված երկնի ձեռքով» (Մանուշակածոր) և այլն: Առանձնացրել ենք բարբառային օրինակներ՝ «Սէվ խալն ասէս մինիշակ ա, Պատկէրըն ասէս իրիքնակ ա» (ԼԿ, էջ 98), նաև ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ **հանց** մակբայով կառույցներ, օր.՝ «եղբայրը…Աշխարհ չափող իմ աչքով՝ հանց Արագած մի սար է» (ԼԿ, էջ 91), «Ոսկե կուժը իր շափաղ տվեց հանց աստղափունջ» (ԼԿ էջ 8):

Տաղերգուն չափազանցության դիմել է հատկապես իրադրություն, հոգեվիճակ, ապրում կամ զգացմունք նկարագրելիս՝ խոսքի ներգործությունը և տպավորությունն ուժեղացնելու նպատակով, այսպես՝ «Սիրտս խենթացել, վայրի հավք դարձել, ա՜խ, իմ յարն ո՞ւր է» (Ախ, իմ յարն ո՞ւր է), «Հազար լեզու, հազար բերան կերգեն քեզ» (Ծ, էջ 132), «Ոչ մի մայր քեզ պես սիրուն չի ծնի» (Աշուղ եմ), «Կարոտանքս ծով կապեց» (ԼԿ, էջ 176), «Ծով արտերի ճամփով եկար» (ԼԿ, էջ 95), «Որ գարունս հավերժական միշտ մնա… Միշտ դալար է, ձմեռ չունի գարունս» (ՀԵ, էջ 113), «Սիրուցդ սար ու ծով անցա, փոթորկի միջով անցա» (ՀԵ, էջ 109), «Հազար հողմեր ձեզ չեն մաշել, Սյունյաց սարեր» (ՍՍ, էջ 12), «Ախս մինչ երկինք հասավ» (ՍՍ, էջ 20), «Ալմաստակուռ հրե թրով մոխրացան ու փոշի դառան» (ԼԿ, էջ 118), «Հազար սիրո դուռ կբացվի» (ԼԿ, էջ 165), «Սերդ աշխարհ կնորի, սիրուդ ծովում թող վառվեմ» (ԼԿ, էջ 138), «Թե ծով կարոտ չունենաս, Աստվածն ի՞նչ է, տերն ի՞նչ է» (ԼԿ, էջ 136), «Մոխրից մեր սերը ելնի, աշխարհն առնի ու վառի» (ԼԿ, էջ 52), «Տաղը կապրի սիրո շնչով, Շունչդ հազար տաղ է վառման» (Ծ, էջ 17), «Սիրուցդ սար, ծով չափեցի» (Ծ, էջ 17), «Ելնեմ, սիրո սարը չափեմ» (Ծ, էջ 23), «…սիրո ծովում չխեղդվեմ» (Ծ, էջ 39), «…երգիր, սիրտս է քամվում» (Ծ, էջ 39), «Գինու ծովը ինձ ի՞նչ անի» (ԼԿ, էջ 12), «Լճին արցունք թողեցի, ապրումներս ծովացան» (ԼԿ, էջ 16), «Գինին հուր դարձավ» (ԼԿ, էջ 40), «Ճամփան հրե ծով դարձավ» (Ծ, էջ 203), «Փիղ պիտի, որ կարա տանի դավթարս» (Ծ, էջ 213) և այլն: Նկատելի է, որ երբեմն չափազանցությունն «առավելական է, երբ երևույթը մեծացվում, ուժեղացվում է առանց իրականի հետ համեմատվելու» (33): Հեղինակը հաճախ համատեղել է այլաբերական տարբեր միջոցները՝ մակդիրը, համեմատությունը, չափազանցությունը, փոխաբերությունը, միևնույն բանատողում կամ երկտողում, օր.՝ «Հրե կամուրջներս ես անցել հողմի պես, Դու սլացար շանթերի դեմ մահաբեր, Մեր տան հույսի Դավիթն էիր ու Մհեր» (Ծ, էջ 133), «Հազար աստղեր թե որ ինձ տան» (ՍՍ, էջ 30), «Թող գունատվեմ ամպի պես, ամպը գոհար կմաղի» (ԼԿ, էջ 94), «Եղբայր ունեմ սիրտը հուր» (ԼԿ, էջ 91), «Ծով սիրունս, վառ սերդ իմ աշխարհն է, ասես թե» (ԼԿ, 169), «Մորմոքվում եմ, մորմոքվում, Ծովերի չափ իղձ ունեմ» (Ծ, էջ 121), «Արևները կենաց մաղթեն լուսահեղեղ» (ԼԿ, էջ 4), «Թող մեզ չասեն՝ թե ծով չունենք, աչքերը քո խորունկ ծով են» (Ծ, էջ 23), «Արևի չափ թե սիրեմ, սիրտս կասի՝ քիչ է դեռ» (ԼԿ, էջ 67), «Սիրտս քամվեց, եղբայր իմ, անմահական ջուր հասցրու» (Ծ, էջ 213), «Բախտիդ աստղը շողում է, Ծաղկանց ծովում լողում է» (Ծ, էջ 119), «Առանց ձեզ երկնքից մրմունջներ կկաթեն» (Ծ, էջ 123), «Անքուն սիրտս սիրած յարիս ձայն տվավ» (ՀԵ, էջ 112), «Հազար ծաղկով՝ ջահել սրտիս գարուն տաս, Որ գարունս հավերժական միշտ մնա» (ՀԵ, էջ 113) և այլն: Այսպիսով, խնդրո առարկա տաղերի լեզվական յուրաքանչյուր միավոր տարբեր կիրառություններում ունի արտահայտչական երանգավորում և ոճական արժեք: Արտահայտչական երանգավորումը դրսևորվում է լեզվի պատկերավորության և արտահայտչական միջոցներով, երբ բառերը հանդես են գալիս ոչ թե անվանողական, այլ փոխաբերական և գեղագիտական գործառույթներով:

Չափածո խոսքի բարեհնչյունությանն ու երաժշտականացմանը նպաստում են նաև տարբեր բառաշերտերի տարրերի, բառաձևերի ու քերականական իրակությունների համապատասխան գործածությունն ու համադրումը:

Չնայած Գուսան Աշոտը հիմնա-

Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

կանում նախապատվությունը տվել է գրական ձևերին, սակայն նրա տաղերում զգալի կշիռ են կազմում ազգային մտածողությունը կրող ժողովրդախոսակցական ու բարբառային բառերն ու կառույցները, որոնք «հայեցի լեզվամտածողության նշաններ» (34) են, նաև հայերենի տարբեր շրջափուլերից ավանդված իրողությունները, որոնք «լեզվի տվյալ շրջանում չեն գործածվում, այսինքն՝ գործածությունից դուրս են եկել, կոչվում են հնաբանություններ» (35): Հեղինակը հնաբառերը կիրառել է ոչ թե ժամանակաշրջանի գունավորում ստեղծելու, այլ խոսքի հանդիսավորությանը նպաստելու: Ոճական արժեք ունեն գրաբարյան ուղղական և սեռական հոլովաձևերով կառույցները, ինչպես՝ ***հոգնակի ուղղականով***՝ «Վառ աստղունք երգի, վառ ծաղկունք երգի» (Ախ, իմ յարն ո՞ւր է), «Ծաղկունք է ծորում լեռան փեշերից» (ԼԿ, էջ 142) «…առանց սեր ի՞նչ ծաղկունք» (Ծ, էջ 109), «Երկինք ու աստղունք է» (Ծ, էջ 109), «Իմ խաղ ու տաղին ակունք ես տալիս» (Սարվորի երգը), ***եզակի սեռականով***՝ «Վառվող հուրն եմ արեգական» (Ծ, էջ 115), «Ելնեք սարը եղեգան» (ԼԿ, էջ 11), «Եղեգան ծուխ կելնի հազար մի երդիկից» (Երբ աչքդ ժպտում է), «Գողքան երգ է թեր առնում» (Ծ, էջ 11), «Իմ Վարդանա[յ] (**յ**-ի արտահայտումը՝ Ս.Մ.) վարդ աղբյուր» (ՀԵ, էջ 108), ***հոգնակի սեռականով***՝ «Այլոց տանը վառվռուն ջահն էլ ունես» (Ծ, էջ 206), «Երգերի երգ ու երգոց» (Ծ, էջ 43), «Իմ սիրտը լեռանց սրտից է խոսում» (ԼԿ, էջ 3), «էն սարի ծաղկանց բույրը» (ԼԿ, էջ 68), «…կենաց սիրով արբեցար» (ԼԿ, էջ 76), «Հայոց երկինք աստղավառ» (ԼԿ, էջ 76), «Այունյաց հողը անարատ է» (ՍՍ, էջ 11), «Մեր քաջարի նախնյաց բաշխել» (Հայոց ձորեր), կամ՝ նույն բառի արդիհայերենյան և գրաբարյան ձևերի զուգորդումներով, օր.՝ «Լեռ ու լլառ կանգնած քաջի վեհ թիկունքին» (ԼԿ, էջ 118) (վերոբերյալ օրինակներում առկա է **եա** երկբարբառի վերածում **յա** երկհնչյունի): Առանձնացրել ենք նաև գրաբարատիպ **իշխանա** բառաձևը «Իմ իշխանա լիճը ջինջ» (Ծ, էջ 155) բանատողում, որում, ըստ հեղինակի նպատակադրման՝ այն «Իշխանա լիճ» տաղի լեզվին բարձր և հանդիսավոր ոճ է տալիս: Սակայն այդ բառաձևը սխալ է, քանի որ գրաբարում **իշխան** բառը պատկանել է **Ի-Ա** վերջադրական հոլովման և չէր կարող եզակի սեռականում ստանալ **ա** հոլովիչ՝ նմանվելով **Ա** վերջադրական հոլովման (հմմտ. ուղղ. *իշխան*, սեռ. *իշխանի*, հոգ. սեռ. *իշխանաց*): Քերականական հնաբանություններ են միջինհայերենյան թեքմանը բնորոշ տարբեր բառաձևերը, այսպես՝ *սեռականով*՝ «զուլալ երգեր գուսանանց» (ԼԿ, էջ 62), «քաջանց ավյուն կտանի» (Ծ, էջ 203), *բացառականով*՝ «վերին քաղեն վար կգար» (Ծ, էջ 39), «Սիրո աղբյուրեն կգար» (Ծ, էջ 39), «Տեղը նորեն լույս կընկնի» (ԼԿ, էջ 79), «Նորեն տեսա հանդեսում սրբուհուն իմ երազի» (ՍՍ, էջ 21): Իսկ գրաբարից ավանդված և գրական տարրերի համադրմամբ գրաբարատիպ կազմությունները, անցնելով հայերենի շրջափուլերով, ներկայումս ժողովրդախոսակցական բառաշերտին հատուկ իրողություններ են, օր.՝ «Ծաղկունքի հետ կխոսի» (Ծ, էջ 211), «Սիրո ճամփեքի հուր» (ԼԿ, էջ 62), «Նա է տերը աշխարհքի» (Ծ, էջ 117), «Կարոտանքիս աղբյուրն են» (Ծ, էջ 125), «Աստղունքի մեջ վառվեցի» (Ծ, էջ 8), «Ձեր որդիքը իմաստության տաղ ասին» (ԼԿ, էջ 206): Բնական է, որ ստեղծագործ տաղերգուն հանգավորման պահանջով կիրառել է նաև արևմտահայերենին և **Կը** ցյուղի բարբառներին բնորոշ բայաձևեր՝ «երբեք չի պակսի այ ջրեր» (ԼԿ, էջ 46), «Հոգեպարար ձայնիկդ Ծաղիկներին կշոյե» (Ծ, էջ 15), «հազար մի սեր կնորե» (ԼԿ, էջ 23),«Պղծես քեզնից կպակսի» [*անկատար ներկա*] (Ծ, էջ 117), «Ա՛խ, քնանամ [*ղղձական ապառնի*], վիշտս մի պահ մոռանամ» (Ախ, իմ յարն ո՞ւր է), «շորորալեն [*ընթացակցական դերբայ*] վար կգար» (Ծ, էջ 39): Հնաբանությունների գործածությամբ Գուսանի քնարերգությունն ավելի ընդգծված ոճական երանգավորում է ստացել, քանի որ վերոբերյալ քերականական հնաբանությունները զուգահեռել է արդիհայերենյան նորմատիվ, կանոնարկված ձևերին:

Լինելով աշուղական մշակույթի ավանդների շարունակողը՝ Գուսան Աշոտը հաճախ է դիմել ժողովրդական հարուստ բառ ու բանով համեմված ինքնատիպ ու պատկերավոր լեզվական տարբեր կառույցների:

Գեղարվեստական խոսքին ժողովրդական երանգ ու լիցք հաղորդում են կրկնավոր և հարադիր բարդությունները, որոնք, բաղադրված լինելով համահնչության սկզբունքով, երաժշտականություն են տալիս հեղինակի չափածոյին՝ զգալի կշիռ ունենալով դրանում: Ինչպես նշում է ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը, «Կրկնություններն ունեն այն առանձնահատկությունը, որ նրանց արտահայտության պլանը որոշ զուգահեռություն ունի բովանդակության պլանի հետ. հնչակրկնությունը հաճախ արտահայտում է նաև իմաստային կրկնություն... » (36) : Կրկնավոր բարդությունները, կազմավորվելով նույն բառի կրկնությամբ, ավելի են ընդգծում արտահայտած գաղափարը, ընդ որում՝ «կրկնավոր հարադրական բարդությունները հայոց լեզվի զարգացման ողջ ընթացքում շարունակ աճել և այսօր էլ շարունակում են աճել» (37): Բնագրային նմանաբնույթ օրինակներում կրկնավոր հարադրությունները քննել ենք ըստ շարահյուսական դերի, ինչը պայմանավորված է դրանց բաղադրիչների խոսքամասային պատկանելությամբ. **որոշիչ՝** ***գոյականով***՝ «Թել-թել վարսով» (ԼԿ, էջ 176), «Ցոլ-ցոլ աղբյուր» (ԼԿ, էջ 8), «նախշ էր փունջ-փունջ» (ԼԿ, էջ 8), «Ծուփ-ծուփ ծաղկունք» (ԼԿ, էջ 38), «ծալ-ծալ սերս դու ես» (Ծ, էջ 47), «Ղողանջ-ղողանջ դայլայլից Մեղր է ծորում սիրալիր» (Ծ, էջ 61), «Կրակ-կրակ սեր ունի» (ԼԿ, էջ 34), «Հոգիդ սիրո կրակ-կրակ» (ԼԿ, էջ 171), «Գարուն-գարուն սեր ունեմ» (ԼԿ, էջ 39), «Աստղ առած զանգակ-զանգակ ջրերի» (ԼԿ, էջ 60), «Շարան-շարան լույսեր վառած» (ԼԿ, էջ 95), «Արծաթ-արծաթ ցողերով» (ԼԿ, էջ 127), «Ասեմ

Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

հազար մեկ աչք ունես Կոհակներդ զանգակ-զանգակ» (ԼԿ, էջ 141), «Ծնունդ առած դարերի շափաղ-շափաղ մի ծով է» (Հազարան փրկիչ), «Կռունկների սիրաբեր մախմուր-մախմուր վարդի հետ» (ԼԿ, էջ 39) (վերջինս բաղադրված է փոխառյալ գոյականից՝ «թաւիշ (տաճկ. maxmur) » (38)), ***ածականով՝*** «Թուխ-թուխ աչքեր հայուհի» (Ծ, էջ 15), «անմար-անմար կրակներ են» (Ծ, էջ 17), «Հուր աչքերիդ աստղեր ասեմ վառման-վառման» (ԼԿ, էջ 38), «Սերս սիրով ջուր կտա պապակ-պապակ սրտերին» (ԼԿ, էջ 127), «Դալար-դալար գարուն ես դու իմ հուշերի» (ԼԿ, էջ 38), «Ալվան-ալվան սիրահուշ վարդեր» (ԼԿ, էջ 66), «Ջուլալ-զուլալ հուր աղբյուրակ» (Ծ, էջ 59), «Սերն անհուն-անհուն» (ԼԿ, էջ 164), «Մոլոր-մոլոր եղնիկներ» (ԼԿ, էջ 74), ***դերանունով՝*** «Քանի-քանի օջախի լույս ես վառել» (Ծ, էջ 133), «Ինչքան-ինչքան աչքեր կան» (Ծ, էջ 31), ***թվականով՝*** «Հազար-հազար սեր լցվի» (Ծ, էջ 206), **ձևի պարագա՝ *գոյականով՝*** «խինդ արեց մրմունջ-մրմունջ» (ԼԿ, էջ 8), «լացեց տրտունջ-տրտունջ» (ԼԿ, էջ 8), «Տաղեր դառան շարան-շարան» (ԼԿ, էջ 4), «Շափաղ-շափաղ կմնան» (ԼԿ, էջ 13), «Մի ծով վիշտ է բաժանվելը կարոտ-կարոտ» (ԼԿ, էջ 22), «Գարունքներին սպասել եմ, կարոտ-կարոտ» (Ծ, էջ 59), «Ծաղիկներդ գույն-գույն նախշել, Սյունյաց սարեր» (ՍՍ, էջ 11), «Օջախ-օջախ շատանում ենք» (Ծ, էջ 185), «հյուր կգան քեզ երամ-երամ» (Խուստուփասար), «Դե՛ արի մուրազով-մուրազով» (Սիրուն ջան), ***թվականով՝*** «Մեկ-մեկ երգիր, լսեմ անուշ ձայնդ» (ՍՍ, էջ 13), ***ածականով՝*** «Ա՛խ, մոլոր-մոլոր այգում մնացի» (ԼԿ, էջ 142), «Սրտիս սիրուն սերը տարավ անուշ-անուշ» (ԼԿ, էջ 8), «Դալար-դալար միշտ մնաք» (ԼԿ, էջ 28), «պաղ-պաղ ջրեր տաղասան» (ԼԿ, էջ 60), «Ճերմակ-ճերմակ կամարներ» (ԼԿ, էջ 60), «Էն ո՞ւր գնաց շորոր-շորոր» (Ծ, էջ 79), ***մակբայով՝*** «քո խենթ սիրտը հոնգուր-հոնգուր լացեց վայ» (ԼԿ, էջ 79), «մուշ-մուշ անուշ քնել է» (Հե, էջ 112) (վերջին օրինակներում ընդգծվածները բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին, և կարծում ենք, որ հավանաբար **մուշ** արմատը ծագմամբ բնաձայնական է), **ստորոգելի՝ *ածականով՝*** «ճամփաս ոլոր-ոլոր է» (ԼԿ, էջ 12), «սիրտս մոլոր-մոլոր է» (ԼԿ, էջ 12), «Գիշերն անուշ-անուշ էր» (Ծ, էջ 43), ***գոյականով՝*** «Խոր ձորն էլ թնդաց, երա՛գ-երա՛գ էր» (ԼԿ, էջ 40), **կոչական՝ *գոյականով՝*** «Աչքեր-աչքեր սևորակ» (Ծ, էջ 25), «Ամպեր-ամպեր, դուք էլ սիրուց գոհար արցունք կթափեք» (ԼԿ, էջ 166), «Մայրիկ-մայրիկ, ո՞ւր ես դու» (ԼԿ, էջ 26), «Աշխարհ-աշխարհ, հավերժական գարուն ես վառ» (ԼԿ, էջ 22), «Հավքեր-հավքեր սիրասուն» (ԼԿ, էջ 27), «Միտքս թռչի դեպի ձեզ, ծովեր-ծովեր զովասուն» (ԼԿ, էջ 65), «Ջրեր-ջրեր հայրենի» (ԼԿ, էջ 60), «Հուշեր-հուշեր կարոտի, հույզեր-հույզեր կարոտի» (ԼԿ, էջ 176), «Աչքեր-աչքեր սևորակ» (Ծ, էջ 25), «Աղբյուր-աղբյուր, ցոլացայտ» (ԼԿ, էջ 30), «Լեռներ-լեռներ, իմ լեռներ» (ԼԿ, էջ 37), **ուղիղ խնդիր՝ *գոյականով՝*** «Աշխարհ-աշխարհ տեսա» (ԼԿ, էջ 37), **տեղի պարագա՝ *գոյականով՝*** «Աշխարհ-աշխարհ կգնա» (ԼԿ, էջ 129), «Աշխարհ-աշխարհ չափեցիր» (ԼԿ, էջ 158), «Հովիկների թևերով աշխարհ-աշխարհ տարար ինձ» (Ծ, էջ 57), «վարդնոց-վարդնոց թևածեց» (Ծ, էջ 75) և այլն: Հանդիպում են նաև վերաբերականների կրկնությամբ հարադրություններ, օր.՝«Ա՛խ, երնեկ-երնեկ սերդ առնողին» (ԼԿ, էջ 119) և այլն: Տեղին է հավելել, որ ոճականորեն վերոնշյալ անվանական կրկնավորները ևս, չզիջելով հուզարտահայտչական երանգավորում ունեցող բառերին և խտացնելով ասելիքը, ամբողջական են դարձնում բանաստեղծական պատկերը՝ միաժամանակ այն օժտելով քնարականությամբ և հուզականությամբ:

Իբրև անվանական հարադրության տեսակ՝ բաղհյուսական հարադրությունը չափածոն դարձնում է ավելի հարուստ և գունեղ: Նման բարդության բաղադրիչներն իրար միանում են **ու** շաղկապով (39) և չնայած գրական են, սակայն տաղերին հաղորդում են ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ ժողովրդայնություն, պարզություն ու թեթևություն: Հայտնի է, որ հարադրվող բաղհյուսական կառույցում կարևորվում է բաղադրիչների՝ և՛ արտաքին հնչյունաձևաբանական կողմը, և՛ ներքին բովանդակային առնչությունը: Ըստ այդմ էլ՝ դրանք ***նույնանիշ*** և ***հոմանիշ*** են, օր.՝ «հանդ ու արտի թոնի պես» (Ծ, էջ 99), «Լեռ ու ժայռ էլ ասես թե» (ԼԿ, էջ 129), «Լեռ ու լյառ կանգնած քաջի վեհ թիկունքին» (ԼԿ, էջ 118), «Միտքս առած սար ու լեռը» (Ծ, էջ 67), «շաչ ու շառաչն իմ ճամփի» (ԼԿ, 33), «Ծով ու ծովակ ձայն տվին» (ԼԿ, էջ 121), «ալ ու ալվան են հագել» (Ծ, էջ 211), «Բառ ու բանից զառ զմրուխտե թև կտաս» (Ծ, էջ 11), «Բուք ու բորանն էլ ցաք ու փշերն էլ» (Ծ, էջ 238), «Վանքի տափով ու արտով» (Ծ, էջ 73), «Օրս առանց քեզ կանցնի լուռ ու մունջ» (Սիրուն ջան), կամ արտահայտում են ***առնչակից*** իմաստ, օր.՝ «էս գարնան ինչքան ծիլ ու ծաղիկ են բուսել» (Ծ, էջ 119), «քար ու կածան մաշեցի» (Ծ, էջ 49), «Շաղ ու անձրև ջահելության» (Հե, էջ 105), «Շիվ ու ճյուղին կանաչ դալար կյանք կտա» (Ծ, էջ 11), «Ա՛խ, ընկել եմ քար ու քարափ» (Ծ, էջ 67), «Խաղ ու տաղս հազար լեզվով կկանչեն» (ԼԿ, էջ 63), «խինդ ու ծիծաղ չեմ տեսնի» (Լուսնի շողով), «Բերում է, յա՛ր, բույրն ու համբույրը» (Սարի սիրուն), «փարատելով մուժն ու մութը» (Գուսանն էն է), իմաստային ***հարաբերակցություն՝*** «Մունջ ու տրտունջ չեն կարոտի» (Ծ, էջ 239), «Շեն ու շքեղ բնության արարողին» (Ծ, էջ 65), «Աստղ ու լուսին շաղախված ասես խանդ ու խինդ առած» (Ծ, էջ 43),«քար ու կապան սիրտ մաշենք» (ԼԿ, էջ 11), «հողի ու քարի լեզուն առա շուրթերիս» (Ծ, էջ 8, «Ջառ ու զանգակ առու է» (Ծ, էջ 27), «զառ ու զանգակ աղբյուրներ» (Մանկություն), «Հոգուն խինդ ու սեր բերող» (Ծ, էջ 95), «Շաղն ու շողը սիրեցի» (Ծ, էջ 8), «Սար ու դար անցա…» (Ախ, իմ յարն ո՞ւր է), «Աղ ու հացով երեք եղբայր Կովկասի» (Ծ, էջ 205), «Աղն ու հացը գետնով չի տա» (Ծ, էջ 233), «աշխարհին գերում իր սեր ու սազով» (Ծ, էջ 255), «Հանգ ու վանգով ծաղկանց ծովն է

Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

ծուփ-ծփում» (ԼԿ, էջ 63), «Աշոտ, թե կարաս քո երգ ու հանգով» (Սարի սիրուն) նաև՝ ***հակադրություն***, օր.՝ «Ինչքան-ինչքան խինդ ու վիշտ, արցունքներ կան էս ճամփին» (Ծ, էջ 81), «Գիշեր ու զօր տաղ կասեմ» (Ծ, էջ 211), «նեղ ու լայն օրերի պարզ ընկեր է» (Ծ, էջ 257), «Սիրուցդ սար ու ծով անցա» (ԼԿ, էջ 92), «Սև ու կարմիր նախշեր կան» (Ծ, էջ 43), «Վառվող վարդ ու փշեր կան» (Ծ, էջ 43), «Շունչն ու շուքն ես, նազելի» (Ծ, էջ 19), «Ընկնեմ սար ու ձորերը» (ՍՍ, էջ 22), «Սիրտդ յարիդ միշտ կանչում է օր ու գիշեր» (ՍՍ, էջ 27), «Սար ու երկինք սիրեցի» (Ծ, էջ 8), «Մոտ ու հեռու ոլորուն ճամփեքի հետ կխոսի» (Օջախում) և այլն: Ինչպես նկատել է Պ. Պողոսյանը, եթե «առնչակցական հարադրությունները ևս իմաստի սաստկացում են արտահայտում, ապա հակադրական կապակցությամբ կազմվածները՝ երկու ծայրաթևերի միջև եղածի ընդգրկում» (40): Տեղին է հավելել, որ բաղհյուսական հարադրությունը կիրառվում է նաև հոգնակի թվի փոխարեն:

Հարկ է նշել, որ Գուսանի տաղերի լեզվում ուշագրավ են համահնչյունությամբ հարադրված անվանական բարդությունները, որոնց բաղադրիչները, ունենալով գրական կամ ժողովրդական ծագում և հարաբերվելով իմաստային զանազան աղերսներով, ոչ միայն կերտում են ներքին պատկեր, այլև նպաստում են խուսափել կրկնաբանությունից (*տավտոլոգիա (41)*): Նման հարադրությունները ձևավորվում են մեծավ մասամբ կա՛մ նույն բառի հնչյունափոխված տարբերակներով՝ «Արմանք-զարմանքս աշխարհներ լսեն» (ԼԿ, էջ 3), «քամին սարեր շուռ-մուռ կանի» (ԼԿ, էջ 171), «Ծուփ-ծփան խենթ ծովը դադարեց» (ԼԿ, 21) «զանգ-զրնգուն լեռները» (ԼԿ, էջ 35), «Ձառ-վառ շողով դու բացվեցիր» (ԼԿ, էջ 82), «Երբ որ լեռներին շող-շաղ է իջնում» (ԼԿ, էջ 3), կա՛մ իմաստապես հարաբերակից ու հոմանիշ բառերով՝ միասնականության և հավաքականության նշանակությամբ, օր.՝ «սարերդ ձյուն-ձմռանն էլ բույր կտան» (ԼԿ, էջ 39), «Ձյուն-ձմեռը խստացավ» (ԼԿ, էջ 168), «Թև-թիկունք է եղբայրը» (ԼԿ, էջ 91), «Գարնան արև որ ասեմ, ծիլ-ծաղիկս կպահի» (ԼԿ, էջ 108), «Սեղան-սփռոց պիտի բացեմ» (ԼԿ, էջ 5), «Հասնի ամեն սեղան-սուփրի» (Գուսանն էն է), «տաղով բաղ-բախչա մտան» (ԼԿ, էջ 46), «Ծաղկանց ծովում շորորող հուրի-փերի Զանանը» (ԼԿ, էջ 72), «Հուրը թեժ պահող, հույս-հավատ մայրիկ» (ԼԿ, էջ 148), «Մեր ձորերին կանաչ-կարմիր կապեցիր» (ԼԿ, էջ 31) և այլն:

Քննելով Գուսան Աշոտի չափածոյի լեզվական նյութը բառերի հաճախադեպ գործածության տեսանկյունից՝ ուշագրավ են աշուղական արվեստին հատուկ **սեր, յար, ծով, հազար** բառերի տարաբնույթ դրսևորումները: Հիշյալ տաղերը հարուստ են խոսքը քնարականությամբ, ոճական նոր լիցքով և նրբերանգներով օժտող համադրական բարդություններով, որոնք նպաստում են ասելիքի իմաստային խտացմանը: Դրանցից կիրառական հաճախականությամբ բնականաբար աչք են զարնում նախ՝ **սեր** արմատով կազմությունները, ինչպես՝ «Սիրաշաղ լանջեր, սիրատանջ աչքեր» (ԼԿ, էջ 40), «Սիրաշափաղ» (ԼԿ, էջ 14), «սիրամորմոք» (ԼԿ, էջ 28), «սիրատենչ» (ԼԿ, էջ 29), «սիրաթով» (ԼԿ, էջ 36), «սիրաբեր» (ԼԿ, էջ 36), «Սիրամրմունջ» (Ծ, էջ 79), «Սիրաբորբոք» (Ծ, էջ 167), «սիրականչ» (Ծ, էջ 115), «Սիրակարոտ» (Ծ, էջ 79), «սիրավոր» (ՍՍ, էջ 18), այնուհետև՝ զանազան արմատներից բաղադրված բառաբարդումները՝ «լուսնալարերով» (ԼԿ, էջ 3), «ծովաթևիկ» (ԼԿ, էջ 19), «ցողաշաղախ» (ԼԿ, էջ 22), «մեղրածոր» (ԼԿ, էջ 29), «նաղաշքար» (ԼԿ, էջ 29) «լուսնալույսն» (ԼԿ, էջ 29) «Լուսնեղջյուրը » (ԼԿ, էջ 33), «աստղաճառագ» (ԼԿ, էջ 34), «հեզահամբույր» (ԼԿ, էջ 38), «ծովածավալ» (ԼԿ, էջ 38), «հուսաբեր» (ԼԿ, էջ 51), «բարեշունչ» (ԼԿ, էջ 58), «ծաղկատարած» (ԼԿ, էջ 59), «Արևանուշ» (ԼԿ, էջ 59), «Յոթնածավալ» (ԼԿ, էջ 67), «Սուրմաթելիկ» (ԼԿ, էջ 80), «աստղաշար» (ԼԿ, էջ 84) «Նռնաօղերն» (ԼԿ, էջ 86), «սադափանախշ» (ԼԿ, էջ 91), «Հրացոլքից» (ԼԿ, էջ 119), «Կարոտալուր» (ԼԿ, էջ 126), «Երկնահաս» (ԼԿ, էջ 141), «Սրբասարը» (ԼԿ, էջ 144), «Երկնահեղեղ» (ԼԿ, էջ 151), «Արծվաբիբ» (ԼԿ, էջ 151), «յոթնակամար» (ԼԿ, էջ 169), «հրահատ» (ՍՍ, էջ 12), «Հրահուր» (ՍՍ, էջ 14), «երազանուրբ» (Ծ, էջ 15), «Ցոլասփյուռ» (Ծ, էջ 49), «հուզաթով» (Ծ, էջ 43), «Հոգեպարար» (Ծ, էջ 15), «ծովաստղիկս» (Ծ, էջ 67), «Ծաղկածփուն» (Ծ, էջ 77), «լուսնավարար» (Ծ, էջ 221) և այլն: Ստեղծագործ աշուղի երկերի բառային կազմում առկա են մի շարք նորակազմություններ, ինչպես՝ *սիրաշափաղ, նռնաօղ, լուսնավարար, ցոլասփյուռ, սուրմաթելիկ, յոթնակամար, լեռնապարար* (Ծ, էջ 11), *շափաղազարդ* (ԼԿ, էջ 5), *ծոխապատկեր* (Իմ օրորան) և այլն: Դրանք կարող են առաջանալ և՛ հայերենի զարգացմանը զուգահեռ՝ համաձայն բառակազմական եղանակների, և՛ լինել հեղինակային՝ ստեղծվելով «նմանողության (անալոգիայի) սկզբունքով» (42): Հեղինակային նորաբանությունները, ինչպես իրավացիորեն գտնում է Լ. Եզեկյանը, պայմանավորված են յուրաքանչյուր հեղինակի անհատականությամբ և ոճական առանձնահատկություններով՝ բխելով տվյալ խոսքային իրավիճակից, ուստի դրանք պատճառաբանված են, քանի որ հնարավորություն են ընձեռում ավելի տեսանելի, ամբողջական և արտահայտիչ ընկալելու տվյալ գեղարվեստական պատկերը (43): Խնդրո առարկա տաղերգության մեջ **հազար** բառը, ևս նշանակելով **բազմաթիվ, անթիվ, անհաշվելի** և տվյալ համաբնագրերում ունենալով այլաբերական արժեք, ժողովրդայնություն ու անմիջականություն է հաղորդում դրան, ինչպես՝ «Հազար լեզու, հազար բերան կերգեն քեզ» (Ծ, էջ 133), «Հազար Աշոտ երգ կկապեն քո քարին» (ՍՍ, էջ 14), «Երբ հազար աչք քեզ նայեց» (ՍՍ, էջ 24),

Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

«Հազար գարնան արշալույս ես» (ՍՍ, էջ 15), «Հազար տարվա կյանք թե ինձ տան» (ՍՍ, էջ 30), «Հազար կածան եմ չափել, Հազար պսակ եմ կապել» (Ծ, էջ 41) և այլն: Այն հանդիպում են ինչպես առանձին, այնպես էլ տարբեր լեզվական կառույցներում՝ ձևավորված *կրկնությամբ*՝ «Հազար-հազար սեր լցվի» (Ծ, էջ 206), *հարադրությամբ*՝ «Հազար ու մի երգ կապեցիր իմ շենաշեն երազանքին» (ԼԿ, էջ 161), «Հազար ու մի փառք թե ինձ տան» (ՍՍ, էջ 30), «Հազար ու մի երգում գոված սար եմ տեսել» (ՍՍ, էջ 11), «Հազար մի փառք կամարներդ կապողին» (ՍՍ, էջ 14), *բառաբարդմամբ*՝ «… հազարավարդ նազերով» (ԼԿ, 138), «Ծաղկանց ծովում հազարաչք» (ԼԿ, էջ 10), «Էս հազարաչք ծաղկունքում հազար մի սեր կնորե» (ԼԿ, էջ 23), «հազարաքև ա՛յ հավքեր» (ԼԿ, էջ 27) «Հազարաբույր տաղերով հազարան լույս շռայլող» (ԼԿ, էջ 129), *բառածանցմամբ*՝ «Հազարան լույս աղբյուրներ» (Ծ, էջ 49), «Ձեզ հազարան խաղ եմ կանչել» (ՍՍ, էջ 11), «երգեմ հազարան հանգով» (ԼԿ, էջ 91), «Մենք հազարան փրկիչ ունենք» (Հազարան փրկիչ), «Ծարավ առնող հազարակնյա աղբյուր ես» (ՍՍ, էջ 26), «Հազարամյա վանքերի» (ԼԿ, էջ 86) և այլն:

Գուսանի տաղերում հետաքրքրական են գրական-խոսակցական, ժողովրդախոսակցական ոճերի, լեզվի՝ բարբառային ու կանոնարկված տարբերակների փոխհարաբերություններն ու աղերսները: Մանրամասնորեն քննության չենթարկելով ժողովրդախոսակցական և բարբառային իրողությունները՝ անդրադարձել ենք ձևաբանական որոշ իրակությունների, որոնք ոճական տեսանկյունից տաղերգուի բանարվեստում կարևոր դեր են կատարում ժողովրդայնության և պատկերավոր մտածողության արտահայտման համար: Բանաստեղծական խոսքի անմիջականությունը պայմանավորված է նախ՝ գոյականի թեք հոլովածևերի հոդառությամբ, օր.՝ «Քնքուշ ձայնը սրտիս մնաց» (ՍՍ, էջ 28), «Խաբար չունիմ յարիցս» (ՍՍ, էջ 28), «Մի հարցրեք հալիցս» (ՍՍ, էջ 28), «Աչքդ յարիդ մով ճամփին» (ԼԿ, էջ 10), «Անունդ շրթիս, պատկերդ սրտիս, էն տված սիրո խոսքերդ մտքիս» (Քո սիրո համար), «լույս կտա ճամփիս հար» (Պիտ երգեմ), նաև՝ հոդի ավելադրությամբ՝ «իմ սրտիս սյուն, իմ հայրիկ» (ՍՍ, էջ 29), որոնցում հոդի գործածությունը բնականաբար սխալ է, սակայն սաստկացնում ու ընդգծում է միտքը: Հարցի համաժամանակյա կտրվածքում ոճականորեն նշանակիր են **-ք, -անք, -ունք, -եք** հոգնակերտ մասիկներով գոյականները, օր.՝ «Ձեր որդիքը իմաստության տաղ ասին» (ԼԿ, էջ 206), «աշունքներս մոռանամ» (Ծ, էջ 73),«նա է տերը աշխարհքի» (Ծ, էջ 117), «Խոր կարոտով ծաղկունքն է իր գիրկը բացել» (Ծ, էջ 59), «Կարոտանքի ծովից կգա» (Ծ, էջ 59), «Աստղունքի մեջ վառվեցի» (Ծ, էջ 8) և այլն: «Օջախում» տաղում նույն բառի **-ներ**-ով և **-եք**-ով ձևերը զուգահեռել է, այսպես՝ «Մոտ և հեռու, ոլորուն ճամփեքի հետ կխոսի» և «Ինչքան էլ որ ուշ բացվեն ճամփաները գարունքվա»: Ցուցական **այս, այդ, այն** դերանունների փոխարեն հաճախ գործածել է **էս, էդ, էն** տարբերակները, օր.՝ «Արքուն մնամ էս գիշեր» (ԼԿ, էջ 7), «խճճել են էդ քո սիրուն վարսերը» (ՀԵ, էջ 110), «Էն հրաշունչ աստղերը դեն կթողնի» (Ծ, էջ 117) և այլն: Ժողովրդախոսակցական լեզվում գործառվող իրողություն է համադրական բայերի փոխարինումը հարադրականով, որոնցում կարևորվում է հարադրի դերը, ինչպես՝ **թափառել**-ի փոխարեն՝ «Այսպես քափառ մնացի» (Ծ, էջ 57) **խռովել**-ի՝ «Ինձնից խռով չգնա» (ԼԿ, էջ 51), **թացացնել**-ի՝ «Ափդ գինով քաց անեմ» (Ծ, էջ 35), **երգել**-ի՝ «Ձեր որդիքը իմաստության տաղ ասին» (Ծ, էջ 205), **շենացնել**-ի՝«Շինականն է շեն արել աշխարհդ հաց քամելով» (Ծ, էջ 207), **քնել**-ի՝«Սիրող սրտին ինչ դադար, քուն մտնելու պահ չունի» (Հուրն արևի), **մոլորվել**-ի (փխբ. *շվարել*) «Դուռդ փակ տեսել՝ մոլոր մնացել» (Սարի սիրուն) և այլն: Ոճական ինքնատիպ արժեքով է հատկանշական տեղայնացված, մասնավորապես Ղարաբաղի և Գորիսի բարբառերին բնորոշ հարադիր բայի գործածումը գրական կազմությամբ բանատողում՝ «Հոգուն ծով խինդ կբերի հերանց գնալն արտերի» (Ծ, էջ 95): Ի դեպ՝ ընդգծված կառույցի համար Ղարաբաղի բարբառում գործառում են **հԱրԱնց քՍինիլ** հարադրությունը, իսկ Գորիսում՝ **հէրանց քՍինԱլ** հնչյունափոխված տարբերակը՝ «հասունացած արտի՝ հովից ալեծածան շարժվելը» նշանակությամբ (44): Հանգավորման և ոճավորման նպատակով կիրառել է անցյալ կատարյալի անցոյական խոսակցական ձևեր. այսպես՝ ոչ թե **նետեցի**, այլ **նետի**՝ «Հայացք նետի երկնքին» (Ծ, էջ 45), ոչ թե **ասացի,** այլ **ասի**՝ «Ասի, սիրուն, գարուն ես» (Ծ, էջ 211), «Ասի՝ երդվիր քո սերն եմ» (ՍՍ, էջ 20) և այլն: Ժողովրդախոսակցական ու գրական տարրերի ճիշտ և տեղին համադրմանը նպաստել են նաև տաղաչափական միջոցները և միօրինակացումից խուսափելը:

Այսպիսով, Գուսան Աշոտի չափածոյի խոսքարվեստի լեզվական ատաղձի մասնակի ուսումնասիրումից կարելի է եզրակացնել, որ որոշ լեզվաքերականական իրակություններ ներկայացված են ոճական յուրատիպ դրսևորումներով: Այլաբերական տարբեր հնարանքների կիրառմամբ ավելի շոշափելի ու իրական են գեղարվեստական պատկերը և քնարական հերոսը՝ իր հույզերով ու զգացմունքներով: Ոճականորեն ակտիվ և արտահայտչական նրբերանգներ ունեցող գրական, ժողովրդախոսակցական և այլ լեզվավիճակներից ավանդված քերականական ձևերի տարբեր գործառություններով են հատկանշվում տաղերգուի ստեղծագործական հակումները և նախասիրությունները:

Համառոտագրություններ

ՀԵ-Հայ երգանի
ՍՍ-Այունյաց սարեր
Ծ-Ծովաստղիկս
ԳՍ-Գուսանի սերը

Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

ՍԿ- Սիրո կրակներ
ԼԿ-Լեռները կանչում են

Ծանոթագրություններ

1. Ջրբաշյան է., Գրականագիտության ներածություն, Բանարվեստի հիմունքներ, Ե., 2011, էջ 213:
2. Կարապետյան Ա. Ս., Գուսան Աշոտի բանաստեղծական աշխարհը, Գորիս, 1995, էջ 84:
3. Ê.À.Äîëèíèí, Ñòèëèñòèêà ôðàíöóçñêîãî ÿçûêà, Ì îñêâà, 1987, ñòð. 150:
4. Արտահայտությունը ուշ միջնադարի հեղինակ Գրիգոր Վկայասերինն էր. տե՛ս Պողոսյան Պ. Մ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները (խոսքի տեսություն), Ուսումնաօժանդակ ձեռնարկ, Գիրք I, Ե., 1990, էջ 211:
5. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2000, էջ 182:
6. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. Ե, Ե., 1971, էջ 352:
7. Մարության Ա., նշվ. աշխ., էջ189: Խլղաթյան Ֆ.Ա., Հնչյունական ոճաբանություն, Լեզվի և ոճի հարցեր, 6-րդ, Ե., 1982, էջ 88:
8. Գուսան Աշոտ, Ծովաստղիկս, Երգեր առանց նվագակցության, Ե., 1982 (հետայսու՝ Ծ), էջ 13. հեղինակի այս և մյուս գրքերից հղումների դեպքում փակագծերում կնշվի նաև էջը:
9. Նմանաբնույթ օրինակներում բարբառային տառադարձությունը մերն է՝ Ս.Մ.:
10. Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 352:
11. Մարության Ա., նշվ. աշխ., էջ189: Խլղաթյան Ֆ.Ա., նշվ. աշխ., էջ 93:
12. http://gusanashot.com . սույն կայքից հղած օրինակների դեպքում փակագծում նշվում է վերնագիրը:
13. Հայ երգանի, Կազմող՝ Մ. Ջավախք, Ե., 1985 (հետայսու՝ ՀԵ), էջ 108:
14. Գուսան Աշոտ, Այունյաց սարեր, Երգերի ընտրանի, Գորիս, 1997 (հետայսու՝ ՍՍ), էջ 31:
15. Պողոսյան Պ. Մ., նշվ. աշխ., էջ 126:
16. Խլղաթյան Ֆ.Ա., նշվ. աշխ., էջ 85, 87:
17. Տե՛ս Համբարձումյան Վ., Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Ե., 2012, էջ 49:
18. Աբեղյան Մ. Խ., Հայոց լեզվի տաղաչափություն, Երկեր, հ. Ե, Ե., 1971, էջ 9:
19. Նույն տեղում, էջ 350:
20. Ջրբաշյան է., նշվ. աշխ., էջ 266:
21. Աբեղյան Մ. Խ., նշվ. աշխ., էջ 336:
22. Ջրբաշյան է., նշվ. աշխ., էջ 268:
23. Խլղաթյան Ֆ.Ա., նշվ. աշխ., էջ 96:
24. Հանգի տեսակների մասին տե՛ս Աբեղյան Մ. Խ., նշվ. աշխ., էջ 361-382, Ջրբաշյան է., նշվ. աշխ., էջ 268-269:
25. Կարապետյան Ա., նշվ. աշխ., էջ 88:
26. Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 350:
27. Խլղաթյան Ֆ.Ա., նշվ.աշխ., էջ 99:
28. Կարապետյան Ա., նշվ. աշխ., էջ 90:
29. Վերջինիս մասին ավելի մանրամասն տե՛ս Կարապետյան Ա., նշվ. աշխ., էջ 91:
30. Մակդիրի մասին տե՛ս Մարության Ա.,նշվ. աշխ., էջ 139-154, Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2007, էջ 328-334:
31. Այդ մասին տե՛ս Մարության Ա., նշվ. աշխ., էջ 156, Եզեկյան Լ., Ոճագիտության ուղեցույց, Ե., 2007, էջ 71:
32. Տե՛ս Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2007, էջ 336:
33. Նույն տեղում, էջ 350:
34. Ավետիսյան Յու. Ս., Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Ե., 2002, էջ 352:
35. Մարության Ա., նշվ. աշխ., էջ 213:
36. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 216:
37. Մարգարյան Ա.Ս., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 54:
38. Մալխասյանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Ե., 1944, հ. 3, էջ 235:
39. Մարգարյան Ա.Ս., նշվ. աշխ., էջ 75:
40. Պողոսյան Պ., նշվ. աշխ., էջ 214:
41. Նույն տեղում, էջ 210:
42. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Ե., 2007, էջ 167:
43. Նույն տեղում, էջ 166:
44. Տե՛ս Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013, էջ 77,415, Մարգարյան Ա, Գորիսի բարբառը, Ե., 1975, էջ 425:

Օգտագործած գրականության ցանկ

1. Աբեղյան Մ. Խ., Հայոց լեզվի տաղաչափություն, Երկեր, հ. Ե, Ե., 1971:
2. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. Ե, Ե., 1971:
3. Ավետիսյան Յու. Ս., Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Ե., 2002:
4. Գուսան Աշոտ, Ծովաստղիկս, Երգեր առանց նվագակցության, Ե., 1982, 264 էջ:
5. Գուսան Աշոտ, Լեռները կանչում են, Բանաստեղծություններ, Ե.,1988, 184 էջ:
6. Գուսան Աշոտ, Այունյաց սարեր, Երգերի ընտրանի, Գորիս, 1997, 32 էջ:
7. Եզեկյան Լ., Ոճագիտության ուղեցույց, Ե., 2007, էջ 71:
8. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2007:
9. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Ե., 2007:
10. Կարապետյան Ա. Ս., Գուսան Աշոտի բանաստեղծական աշխարհը, Գորիս, 1995:
11. Խլղաթյան Ֆ.Ա., Հնչյունական ոճաբանություն, Լեզվի և ոճի հարցեր, 6-րդ, Ե., 1982:
12. Համբարձումյան Վ., Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Ե., 2012:
13. Հայ երգանի, Կազմող՝ Մ. Ջավախք, Ե., 1985, 286 էջ:
14. Մալխասյանց Ս., Հայերէն

Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

բացատրական բառարան, Ե., 1944, հ. 3, էջ 235:
15. Մարգարյան Ա, Գորիսի բարբառը, Ե., 1975:
16. Մարգարյան Ա.Ս., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 54:
17. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2000:
18. Պողոսյան Պ. Մ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները (խոսքի տեսություն), Ուսումնաօժանդակ ձեռնարկ, Գիրք I, Ե., 1990:
19. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 216:
20. Ջրբաշյան Է., Գրականագիտության ներածություն, Բանարվեստի հիմունքներ, Ե., 2011:
21. Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013:
22. Äîëèíèí Ê.À., Ñòèëèñòèêà ôðàíöóçñêîãî ÿçûêà, Ì îñêâà, 1987:
23. gusanashot.com

Գորիս, ուսուցչի տունը (նախկին), որի մոտ կարելի էր գրեթե ամեն օր տեսնել Գուսան Աշոտին

Աշուղական արվեստի մասին

Աշուղական արվեստի առանձնահատկությունները

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Ինչպե՞ս են այսօր աշուղ ձեռնադրվում

Երաժշտագետ, աշուղագետ Լուսինե Նազարյանը, որն աշխատում է «Սայաթ-Նովա» մշակութային միությունում (նաեւ երգչուհի եւ պարուհի է), պատմում է, որ 2001թ. միության շրջանակներում գործում է աշուղագիտական կենտրոն, որի նպատակը ոչ միայն անցյալի աշուղների ստեղծագործությունները պահպանելը, հրատարակելն ու քարոզելն է, այլեւ ներկայումս ստեղծագործող աշուղներով հետաքրքրվելը. նրանց թիվն արդեն անցնում է չորս տասնյակը: Աշուղները գրած երգերը բերում են իրենց մոտ, նոտագրում են, խմբագրում, պատրաստում հրատարակության: Այդ երգերից շատերն ընդգրկվում են «Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլի եւ այլ անսամբլների երգացանկում: Կազմակերպվում են նաեւ աշուղի ձեռնադրության արարողություններ:

«Գեղեցիկ արարողություն է, ձեռնադրողներն ավելի տարեց աշուղներն են: Դժվար է ասել, թե դարեր առաջ ձեռնադրության կարգն ինչպես է եղել: Ասում են՝ նախկինում երբ վարպետ աշուղը համարել է, որ աշակերտն արդեն վարպետ է, ապտակ է տվել նրան: Մեզ մոտ ապտակի արարողությունը չկա. դրա փոխարեն շնորհում ենք համապատասխան հանդերձանք, վկայական: Ավելի թատերականացված է», – ասում է Լուսինեն: Հանդիսությունը կազմակերպվում է կա՛մ «Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլի, կա՛մ «Հայ աշուղներ» անսամբլի մասնակցությամբ: Վերջինս էլ ստեղծվել է նույն միության շրջանակներում. այն այսօր գործող աշուղներին իրենց երգը մատուցելու հնարավորություն է տալիս: Բացի նրանում ընդգրկված երգիչներից, նվագող-երգող աշուղներն իրենք են կատարում իրենց երգերը: Ամենաերիտասարդ աշուղը 22 տարեկան Հակոբն է:

Որտեղի՞ց է գալիս

«Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլի գեղարվեստական ղեկավար, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Թովմաս Պողոսյանը պարզաբանում է, որ աշուղական արվեստը համաարեւելյան երեւույթ է. տարածված է եղել արեւելքի տարբեր ժողովուրդների մոտ՝ արաբական աշխարհից մինչեւ Առաջավոր եւ Մերձավոր արեւելք ու Միջին Ասիա: Այս տարածքի գրեթե բոլոր ժողովուրդներն իրենց մշակույթի մեջ ներգրավել են աշուղական արվեստը:

«Դժվարանում ենք ասել, թե որ դարաշրջանում այս արվեստը մուտք գործեց Հայաստան: Հնագույն փաստաթուղթը, որը մեզ տեղեկություն է տալիս, Մատենադարանում պահպանված մի ձեռագիր մատյան է, որտեղ հիշատակվում է 15-րդ դարի աշուղ Ղուլ Օղլի Երզնկացին. սա աշուղական մականունն է, ավազանի

Լուսինե Նազարյան

Աշուղական արվեստի մասին

անունը մեզ չի հասել: Նրան է պատկանում «Կռունկ» երգի մեզ հասած հնագույն տարբերակը: «Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառա եմ ձայնիդ...» սիրված երգը երկար տարիներ համարվել է ժողովրդական: Մինչդեռ Ղուլ Օղլի Երզնկացուց (ղուլ՝ ծառա, այսինքն՝ ծառայի որդի Երզնկացի) մեզ հասել է այդ երգի հայատառ թուրքալեզու տարբերակը: Ի՞նքն է հետագայում թարգմանել, թե իրենից հետո է երգը փոխադրվել հայերենի, դժվար է ասել: Բայց միանշանակ այն մեզանում դարձել է երգերի երգ», - ասում է պարոն Թովմասյանը:

Ինչպե՞ս է զարգացել

Երզնկացուց հետո մեր տաղերգուներն են աշուղական տաղաչափական ձեւերը կիրառել իրենց ստեղծագործություններում: Այդ ձեւերի կիրառումը նկատելի է նույնիսկ Ներսես Շնորհալու մոտ: Նրա «Առավոտ լուսոյ» եւ «Աշխարհ ամենայն» տաղերը գրվել են արաբերեն «ալիֆլամա» կոչվող ձեւով: Բոլոր ժողովուրդների աշուղական արվեստի մեջ գործածվող տերմինները հիմնականում արաբերեն են: Թ.Պողոսյանն ասում է, որ այնուհետեւ աշուղական արվեստի ազդեցությունը տեսանելի է տաղերգուներից Պետրոս Ղափանցու, առավելապես՝ Պաղդասար Դպիրի մոտ: Նաղաշ Հովնաթանով արդեն աշուղական արվեստը մեզանում լիահուն ընթացք ստացավ, որի բարձրագույն դրսեւորումը Սայաթ-Նովան է:

«Իսկ Ջիվանին դարձավ այդ արվեստը վերջնականապես ազգայնացնող հեղինակը մեզանում. այդ արվեստը դարձրեց հայալեզու, իր ստեղծած մեղեդիներով ցույց տվեց, որ ունենք հզոր ժողովրդական եւ հոգեւոր երաժշտություն, որի հենքի վրա պիտի բարձրանար նաեւ աշուղական արվեստը: Մեղեդիներն ազատվեցին արեւելյան՝ մեզ ոչ բնորոշ պաճուճանքներից, գեղգեղանքներից: Նա հիմնադիրն է աշուղական արվեստի ազգային դպրոցի»:

Գուսանի եւ աշուղի միջեւ 1000 տարվա անջրպետ կա...

Գուսանական արվեստը մեր հնագույն, նախաքրիստոնեական մշակութային շերտն է, որն ունի հազարամյակների պատմություն: Այդ արվեստի մասին տեղեկություններ են փոխանցել Մովսես Խորենացին եւ Փավստոս Բուզանդը, որոնք նաեւ մեզ պատառիկներ են հասցրել հնագույն գուսանական երգերից. «Երկներ երկիրը», Արտաշեսի եւ Սաթենիկի ամուսնության պատմությունը, Արտավազդի մասին ավանդությունը եւ այլն: Պրոֆեսոր Թովմաս Պողոսյանը պարզաբանում է, որ գուսանական եւ աշուղական արվեստը նման են իրար ընդամենն այնքանով, որ երկուսն էլ երգարվեստի ճյուղեր են: Ե՛վ գուսանը, ե՛ւ աշուղը երգ հորինողներ են, որոնք երգեր են կատարել՝ իրենք իրենց նվագակցելով:

«Սակայն նրանց միջեւ մոտ 1000 տարվա անջրպետ կա: Գուսանական արվեստին ավելի շուտ փոխարինելու եկավ տաղերգությունը: Հետո՝ միջնադարում արդեն, աշուղական արվեստը եղավ տաղերգության աշխարհիկ դրսեւորումը: Եվ «գուսան» եւ «աշուղ» բառերը փոխառություններ են. առաջինը պահլավերենից, երկրորդը՝ արաբերենից: Բայց երկուսն էլ այսօր հայկական բառեր են: Այս ձեւով նրանք չեն գործածվում ո՛չ պահլավերենում, ո՛չ արաբերենում. հայացվել, դարձել են մեր հիմնական բառապաշարի բառերը»:

Եվ պարոն Թովմասյանը վրդովվում է, որ այսօր սխալմամբ եւ անհարկի մեկը գործածվում է մյուսի փոխարեն: Մինչեւ 20-րդ դարի կեսերը մեր բոլոր մեծերն էլ աշուղ էին կոչվում: Հետո, զրուցակցիս պատմելով, թյուրիմացաբար Խորհրդային Հայաստանի ղեկավարներից մեկը, որն ընդամենը գյուղատնտես էր, բանավոր հրահանգ է տալիս, թե աշուղը թուրքերեն է, թող դրա փոխարեն գործածեն գուսան բառը՝ առանց խորամուխ լինելու երեւույթների գիտական ստուգաբանության մեջ:

«Ժամանակներն էլ այնպիսին էին, որ գիտնականներից ոչ մեկը չկարողացավ ընդդիմանալ: Շահենը, Աշոտը, Հավասին, որոնք մինչ այդ շրջանն իրենց բոլոր երգերի մեջ աշուղ էին կոչվում, վերանվանվում, գուսան են կոչվում: Ափսոսում եմ, որ այսօր էլ շատ լուրջ մարդիկ այս տարրական բաները այսքան բացատրելուց հետո չեն հասկանում եւ ինքնաբերաբար շարունակում են բառերի սխալ գործածումը: Նրանք, ովքեր կողմ են պրոֆեսիոնալ արվեստին ու գիտությանը, պիտի հասկանան, որ չպիտի հրաժարվենք մեր ստեղծած աշուղական մեծ մշակույթից: Վստահաբար ասում եմ, որ տարածաշրջանում ամենահարուստ աշուղական արվեստը հայ ժողովուրդն է ստեղծել: Եվ իրավունք չունեն ինքնագործ մոտեցմամբ այդ պատիվը թողնելու մեկ այլ ժողովրդի»:

Կառուցվածքային եւ թեմատիկ տարբերություններ

Գուսանները գովերգում էին աստվածներին, թագավորներին, զորապետերին: Գուսանական արվեստը ստուգաբանվում է իբրեւ գովք անելու արվեստ: Բառն այսպիսի բացատրություն էլ ունի՝ գով ասան (գովք ասող) ՝ գուսան:

«Իսկ աշուղական արվեստը սիրո արվեստ է: Աշուղական երգերի գերակշիռ մասը վերաբերում էր սիրուն. վարդը սիրո առարկան է՝ աղջիկը, իսկ բլբուլը՝ տղան, որը գովերգում է սիրելի վարդը: Սրանք աշուղական արվեստի խորհրդանիշերն են», - նշում է Թ.Պողոսյանը:

Երաժշտագետ Լուսինե Նազարյանը բացատրում է, որ կառուցվածքի իմաստով էլ, ի տարբերություն աշուղականի, գուսանական երգն ավելի ազատ ստեղծագործություն էր: Աշուղական երգն ունի իր կառուցվածքային խիստ կանոնները, յուրահատկությունները, ունի հստակ տաղաչափություն, որով էլ տարբերվում է բանաստեղծության այլ տեսակներից: Եղել են նաեւ «դասական» մեղեդիներ: Դրանք դարերի ընթացքում ձեւավորված մեղեդային կառուցվածքներ են. այսինքն՝ այդ տաղաչափությամբ գրված երաժշտությունը երգվում է պատրաստի մեղեդիով: Առանձնահատկություններից է նաեւ այն, որ աշուղական բանաստեղծու-

Աշուղական արվեստի մասին

թյան վերջին տան մեջ պարտադիր նշվում է աշուղի անունը:

Ինչպե՞ս են փոխանցվել այդ կանոնները

Աշուղը սիրված անձնավորություն է եղել, մուտք է ունեցել բոլորի տները: Բացի այն, որ ամեն գյուղ իր աշուղն է ունեցել, եղել են նաեւ թափառիկ աշուղներ: Աշուղ դառնալ պատրաստվող երեխաները տարիների ընթացքում սովորել են այս հմտությունները: Նրանց տարել, աշուղին աշակերտ են տվել:

«Շատ անգամ այնպիսի երեխաներ էին, որոնք ունակ չեն եղել գյուղական ծանր աշխատանքի: Կամ էլ լավ ձայն, երաժշտական ունակություններ են ունեցել: Աշակերտը որոշ ժամանակ ծառայություն է արել աշուղի մոտ, սպասավոր է եղել, հետն էլ սովորել այդ արվեստը: Վարպետներն ուսյալ մարդիկ էին. շատ էին շրջում, շփվում, այսօրվա տերմիններով «ինքնակրթությամբ» են զբաղվել: Եվ բացի տաղաչափական կանոնները, աշուղական արվեստի հիմքերը սովորեցնելուց, վարպետը աշակերտին նաեւ ընդհանուր գիտելիքներ է հաղորդել», - փոխանցեց Լուսինեն: Նա ավելացրեց, որ ներկայումս ստեղծագործող աշուղները, որոնք չեն աշակերտել վարպետների, իրենց մոտ են սովորում այդ տաղաչափությունը, արվեստի առանձնահատկությունները եւ սկսում են այդ ձեւով գրել:

Նախկինում ամեն մեկն իրեն համարել է այս կամ այն հայտնի աշուղի աշակերտը: Բնականաբար, սանն ազդվել է նրանից, ում մոտ սովորել է: Նրա ոճում զգացվել է վարպետի ազդեցությունը: Այսպես հիմք է դրվել տարբեր աշուղական դպրոցների:

Կոնկրետ աշուղ Աշոտի աշակերտներից Լուսինեն հիշեց արտաշատցի աշուղ Մեխակին:

Գործիքները

Որպես կանոն, բոլոր աշուղներն էլ նվագում էին որեւէ գործիքի վրա: Ամենատարածվածը եղել է սազը, որովհետեւ այն եղել է ամենահեշտ նվագվողը: Սիրված են եղել նաեւ թառը, քամանին, քամանչան, սանթուրը: Ջիվանին նվագել է ջութակ, բայց՝ ծնկան վրա դրած, քամանիի նմանությամբ: Շահենը քանոն է նվագել: Քամանին շատ տարածված է եղել համշենահայերի մեջ: Ո՞րն է զուտ հայկական գործիք. երաժշտագետը պատասխանում է, որ դժվար է ասել.

«Բայց բոլորն էլ այնքան հին ժամանակներից են մեզանում օգտագործվում, որ վստահաբար սրանք բոլորն էլ կարելի է հայկական համարել: Ամեն մի գործիք ժամանակի ընթացքում կատարելագործվում, զարգանում է տվյալ ժողովրդին համապատասխան: Գործիքը ձայն արտադրող միջոց է: Այդ ձայնն էլ պիտի վերարատադրեր համապատասխան երաժշտությունը, ուստի՝ պետք է լիներ մեղեդուն հարմար գործիք: Այսպիսով, ոչ միայն մեղեդին է գործիքի առանձնահատկությունից բխում, այլեւ գործիքը պետք է ենթարկվեր մեղեդուն: Գործիքները նաեւ փոխանցվում էին. մեջլիսների ժամանակ պարտվող աշուղն իր գործիքը տալիս էր հաղթողին: Ու հետո, ասենք, հարուստ չեն եղել՝ հատուկ չեն գնացել գործիք գնելու. ինչ ձեռքներն ընկել է, նվագել են: Ջիվանին ո՞նց է ջութակ նվագել. գործիքը ձեռքն է ընկել, նման է եղել քամանուն, ձայնն ավելի հնչեղ է եղել, հարմարեցրել-նվագել է»:

Այլ հետաքրքիր տեղեկություններ

Լ.Նազարյանը տեղեկացրեց, որ Ջիվանուց հետո սկսեցին ոչ միայն տեքստերը բացառապես հայերեն գրել, ինքնուրույն ու հայեցի մեղեդիներ ստեղծել, վերացան նաեւ օտարալեզու, օտարահունչ անունները: Եթե նախկինում կային, ասենք, Ջամալի, Շիրին եւ այլ ոչ հայերեն անուններ, աշուղները սկսեցին իրենց կոչել արդեն հայերեն անուններով՝ Շերամ, Աշխույժ, Հրկեզ, Կարկուտ եւ այլն: Իհարկե, պարտադիր չէր, որ աշուղն անպայման ուրիշ անուն վերցներ. հաճախ մնացել է ավազանի անունը, օրինակ՝ աշուղ Աշոտը:

Ջիվանու հետ հայ աշուղական արվեստում նաեւ գերակշռող դարձան հայրենասիրական, խրատական թեմաները.

«Աշուղը որպես ուսյալ, շատ բան տեսած մարդ ավելի փորձառու էր, եւ դա ստիպում էր մտածել աշխարհի թարս ու շիտակի մասին: Այդ փորձը նույնպես փոխանցվում էր երգերի միջոցով: Աշուղական արվեստի այսօրվա թեմատիկան գրեթե նույնն է՝ սեր, հայրենասիրություն, խրատ: Ուղղակի այսօրվա մտահորիզոնն ավելի լայն է, եւ ամեն ինչն այսօրվան է հարմարեցված. կենցաղային թեմաներն էլ կան»:

Աշուղին սիրում էին, կանչում խրախճանքների, հարսանիքների, տանում էին տուն, հյուրասիրում, նստեցնում ամենապատվավոր տեղում: Լուսինեի պատմելով, երեք տեսակի աշուղներ են եղել:

«Սովորական՝ երգող-պատմող աշուղները, որոնք հիմնականում հեքիաթներ, արեւելյան սիրավեպեր էին պատմում երգելով: Երեկոյան գալիս էին գյուղ, գյուղացիներից ում օդան որ ամենամեծն էր, հավաքվում էին այդտեղ եւ ողջ գիշեր լսում աշուղին: Ժողովուրդը լսում-սովորում էր այդ պատմությունները, տարածում: Երկրորդը բանաստեղծ աշուղն էր, որն ուղղակի բանաստեղծություն էր հորինում, հարմարեցնում արդեն եղած «դասական» մեղեդիներին ու երգում: Եվ՝ մեզ ծանոթ տաղանդավոր մեծ աշուղները, որոնք նաեւ մեղեդի էին հորինում»:

Ամբողջ արեւելքում ստեղծված աշուղական արվեստն այսօր էլ կա. ամեն տեղ զարգացել է իր ուրույն ձեւով: Խորհրդային տարիներին հիմնականում շփումները, մրցույթները եղել են Կովկասի աշուղների միջեւ: Այսօր աշուղագիտական կենտրոնում հազիվ հասցնում են հավաքել մեր երկրում եղածը: Շփում ունեն հիմնականում Թեհրանի հայ աշուղների հետ, որոնց արվեստը, բնականաբար, տարբերվում է՝ կրում է պարսկական ազդեցությունը, ինչպես հայկական ամեն մի տարածաշրջանի ստեղծագործողների մեջ էլ տարբերություն կա. օրինակ՝ արտաշատցի, ղարաբաղցի, իջեւանցի երգողները տարբերվում են միմյանցից...

«Այունյաց Երկիր» թերթ
01.17.2007թ. N113 (02)



«Ձանգեզուր» թերթի արխիվից
Լուսանկարը՝ Սմբատ Տոռոզյանի

Հայոց մեծ գուսանը

Սկիզբը՝ էջ 9

* * *

Գուսան Աշոտի երգերը, անշուշտ, իր ապրած ժամանակաշրջանի ծնունդ են: Բայց դրանք ճեղքել են ժամանակային պատնեշն ու ծորում են ժամանակների մեջ:

Ծննդյան 110-ամյակի առիթով հայացք ձգելով Գուսանի անցած ճանապարհին, նրա գրական ու երաժշտական ժառանգությանը՝ վերստին պիտի փաստենք, որ Գուսան Աշոտի արվեստն անմահ է: Նրա երգերը վաղուց են իրենց մնայուն տեղը զբաղեցրել հայոց երաժշտական գանձարանում:

Այսօր մեր հանրապետության երաժշտական կյանքը, հայոց երաժշտական առօրյան հնարավոր չէ պատկերացնել առանց Գուսանի երգարվեստի:

Գուսան Աշոտի երգերի արդիականության, պահանջված լինելու պատճառները շատ են, բայց մի քանիսը կուզենայինք հիշել:

Գուսանի ստեղծագործական աշխարհի հենքը ժողովրդական մտածողությունն է: Նա ժողովրդական անեղծ հույզերի ու խոհերի, ժողովրդի հոգեւոր աշխարհի թարգմանն է, ժողովրդական երգի կաթնաղբյուրից ջուր խմած ասացողն ու երգահանը:

Նրա ստեղծագործությունները մարդկային հոգու ազնիվ թրթիռների արձագանք են, անկեղծ ապրումների արձագանք:

Նա կարողացել է արտացոլել հայ մարդու հուզական ներաշխարհը, իղձերն ու երազանքները:

Ստեղծագործական նման իրողությունների առկայությունն է պատճառը, որ նրա երգերն այսօր էլ հոգեհարազատ են, որ այսօր էլ հաճելի զգացմունքներ են արթնացնում յուրաքանչյուրիս մեջ, որ նրա երգերն այսօր էլ մեզ ապրեցնում են:

* * *

Գուսան Աշոտ անձնավորության մեջ գոյակցում էին բացառիկ երգահանն ու զգայուն բանաստեղծը:

Ավետիք Իսահակյանը դեռեւս 1938-ին է նկատել՝ *«...Երբ լսեցի*

Խմբագրական

երիտասարդ աշուղ Աշոտի երգերը… հուզվեցի եւ ասացի՝ փառք Աստծուն… Սյունյաց Գողթանի ոգին կենդանացել է»:

Մեծանուն բանաստեղծ Համո Սահյանն էլ ասում էր՝ *«Աշոտը եւ մեծ բանաստեղծ է, եւ մեծ երգահան»:*

Գուսան Աշոտի ստեղծագործությունների չափը, կշռույթն ու հանգը չեն միայն, որ հիշեցնում են խոսքի բանաստեղծականության մասին: Նրա ստեղծագործություններում պատկերային այնպիսի գունագեղության ենք հանդիպում, տաղաչափական ձեւերի այնպիսի իմացության, առինքնող անկեղծության, պարզության, քնարական քնքշության, դրամատիկ ապրումների, հույզերի եւ խոհերի ներդաշնության, ոգեղենության այնպիսի դրսեւորումների, արտահայտչական այնպիսի հնարքների ու ձեւերի, որոնք հաստատում են, որ գործ ունենք բանաստեղծական վառ երեւույթի հետ:

Ժողովրդական երգի անզուգական կատարող Օֆելյա Համբարձումյանը վերհիշում էր՝ *«Ինձ խոստովանել է, որ սկզբից տեքստն է ստեղծում, եւ նոր միայն բանաստեղծական խոսքից ծնվում են հնչյունները՝ նույնքան զարմանահրաշ պատկերներով եւ գույներով»:*

Անշուշտ, Գուսանի բանաստեղծական խոսքն ավելի է հուզիչ դառնում, երբ այն պարուրվում է իր հյուսած մեղեդիներով:

* * *

Լինելով հայոց գուսանական-աշուղական արվեստի վեհափառներից մեկը՝ Գուսան Աշոտն իր երգերով, ինչպես նկատում է Տիգրան Մանսուրյանը, դարձավ *«հայելին երկնասլաց ու հպարտ Սյունյաց աշխարհի: Իր ստեղծագործությունները ներշնչված ու լեցուն եղան այս անարատ հողի գեղեցկությամբ, հայոց բառ ու բանի հոգեհմա վառվռունությամբ… »:*

Գրեթե նման դիտարկում է արել աշուղական արվեստի մերօրյա երախտավոր Թովմաս Պողոսյանը՝ *«Աշուղ Աշոտն իր հայրենի հողի ու ջրի, զուլալ աղբյուրների ծնունդ է, Սյունյաց երգիչ է, նրա երգերի մեջ ակնհայտորեն մեղեդի հյուսելու ձեւը, բնույթը, ճաշակը Սյունիքինն է, Սյունյաց աշխարհինն է: Նրա անմահական քչքչան աղբյուրների, նրա խոր ձորերի եւ ամպերի մեջ մխրճված սարերի կատարների, քերծերի երգիչն է աշուղ Աշոտը»:*

Իսկ մեծահամբավ Ռուբեն Մաթեւոսյանի բնութագրմամբ՝ «Գուսանը նաեւ Գորիսի այցեքարտն է, գորիսեցին իրավունք ունի հպարտանալ, որովհետեւ այդտեղ են ծնվել Գուսան Աշոտը, ինչպես եւ Ակսել Բակունցը, Սերո Խանզադյանը, այդ հողից է ձայն առել Տաթեւիկ Սազանդարյանը… »:

Թատերագետ, գրականագետ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Գեւորգ Աբաջյանն էլ գրում է. *«….Ծննդավայրի բնությունը, միջավայրն ու ժայռերի ծերպերում ապրող մարդիկ շունչ են տվել Գուսանի մեղեդիներին: Զանգեզուրցիներն այսօր էլ պահել են իրենց նախասկիզբ անկեղծությունն ու անմիջականությունը, լեզվի յուրահատուկ հնչերանգները, բարբառը, որը նման է անզարդ, անպաճույճ երգի, որ անտես ճամփեքով թափանցում է ունկնդրի սիրտը»:*

* * *

Գուսան Աշոտի մահվանից հետո՝ նրա ծննդյան օրը՝ ապրիլի 25-ը, ամեն տարի նշվում էր Գորիսի շրջանային «Զանգեզուր» թերթում, քանի դեռ այդ պարբերականի խմբագիրն էի (մինչեւ 1996թ. մարտի 14-ը): Հետագայում «Սյունիք», «Սյունյաց աշխարհ» մարզային թերթերում նույնպես ժամանակ առ ժամանակ անդրադառնում էինք Գուսանի արվեստին՝ ձգտելով վառ պահել նրա հիշատակն ու հաղորդակից լինել նրա երգարվեստին: «Սյունյաց երկիր» թերթը մի քայլ առաջ գնաց այդ տեսակետից: Երգի մեծ վարպետի 100-ամյակի առթիվ հրատարակեց հատուկ համար (17 հունվարի 2007թ., N113, չորս տպագրական մամուլ):

Գուսանին հատուկ համար նվիրելու գաղափարի մասին տեղեկացրել էինք «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանին, ով էլ սիրով արձագանքեց մեր նախաձեռնությանը եւ հովանավորեց տպագրությունը:

Հոբելյանի օրերին պարզ դարձավ, որ թերթի 1400 տպաքանակը չի բավարարում համարի հանդեպ եղած պահանջարկը: Եվ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի հովանավորությամբ 1000 տպաքանակով վերահրատարակվեց Գուսան Աշոտին նվիրված հոբելյանական համարը:

Այդ համարի հիմքում նախկինում՝ տարբեր առիթներով ասված կարծիքներ էին, բայց ձգտել էինք հնարավորինս արդիական հայացք ձգել Գուսանի արվեստին: Դրանում մեզ օգնել էին Օֆելյա Համբարձումյանը, Ռուբեն Մաթեւոսյանը, Թովմաս Պողոսյանը, Շավիղ Գրիգորյանը, Արզաս Ոսկանյանը, աշուղագետ Լուսինե Նազարյանը եւ ուրիշներ (այդ նյութերի մի մասը տեղ է գտել նաեւ թերթի սույն համարում):

> *Հայոց մեծ գուսանի 110-ամյակի նախօրեին, սակայն, թերթի նոր համար հրատարակելու պահանջ առաջացավ: Կարեւոր էր հանգամանքը, որ տարիների ընթացքում փոխվել էին մեր պատկերացումները հատուկ (բացառիկ) համարների վերաբերյալ, բավականին փորձ էինք կուտակել, ավանդույթներ ստեղծել: Մի խոսքով՝ Գուսանին նորովի ներկայացնելու խնդիր ծագեց:*

Եվ ամիսներ շարունակ թեմայի շուրջ ստեղծագործական որոնումների մեջ էինք ամբողջ խմբագրակազմով, նաեւ մեր գործընկեր լրագրողներով:

* * *

Խոստովանենք, որ Գուսանի երկրային կյանքի օրերում, ինչպես նրա ստեղծագործությունների պատշաճ հրատարակման, նոտագրման, հանրահռչակման, տարածման, այնպես էլ այդ ստեղծագործությունների շուրջ գրականագիտական, երաժշտագիտական քննարկումներ կատարելու, գնահատելու համար առավել բարենպաստ պայմաններ կային: Ասել է թե՝ խորհրդային տարիներին Գուսան Աշոտի ստեղծագործություններին, նրա

Խմբագրական

«Այունյաց երկիր» թերթի արխիվից
Լուսանկարը՝ Սմբատ Տոռոզյանի

երաժշտական ու բանաստեղծական աշխարհին շատերն էին անդրադարձել: Սակայն ծննդյան 110-ամյակի առիթով ձգտեցինք Գուսանի ժառանգությանը նախեւառաջ նայել այսօրվա պատուհանից: Դա էր նաեւ թերթի սույն համարի գլխավոր նպատակներից մեկը:

Եվ եղան երաժշտական աշխարհի, գրականության, արվեստի բազում ճանաչված ներկայացուցիչներ, ովքեր մեծագույն սիրով արձագանքեցին մեր առաջարկությանը եւ բարձրարժեք, գիտականորեն հիմնավորված հոդվածներով ու գնահատանքի խոսքով վերստին ու նորովի արժեւորեցին Գուսան Աշոտի ստեղծագործությունները:

Այդ հոդվածները զետեղված են թերթի սույն համարում, բայց պատշաճ ենք համարում անուն առ անուն հիշել նրանց եւ թերթի խմբագրակազմի, մեր ընթերցողների, սյունեցիների երախտագիտությունը հայտնել նրանց: Այդ անուններն են. աշխարհահռչակ կոմպոզիտոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ Տիգրան Մանսուրյան, ՀՀ ժողովրդական արտիստ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Թովմաս Պողոսյան, կոմպոզիտոր, երգիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայոց ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի վարիչ Արզաս Ոսկանյան, Հանրային ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլի գեղարվեստական ղեկավար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Ռուբեն Մաթեւոսյան, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Արկադի Շեկունց, ՀՀ կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության նախագահ Արամ Սաթյան, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Սամվել Մուրադյան, Հանրային ռադիոյի «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլի քամանահար եւ մեներգիչ Մխիթար Քեթցյան, «Երգ երգոց» հեռուստատեսային հաղորդաշարի խմբագիր եւ սցենարի հեղինակ Լեւոն Գալստյան, Թաթուլ Ալթունյանի անվան երգիպարի պետական վաստակավոր համույթի գեղարվեստական ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ժիրայր Ալթունյան, Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գագիկ Մանասյան, երգչուհի Մանիկ Գրիգորյան, ՀՀ վաստակավոր արտիստուհի Սուսաննա Սաֆարյան, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի խմբավարության եւ ձայնագրման ամբիոնի նախկին դասախոս Վալերիկ Գասպարյան, գրող-հրապարակախոս Մերուժան Տեր-Գուլանյան:

* * *

Ինչպես վերեւում նշեցինք, ժամանակին Գուսան Աշոտի ստեղծագործություններին անդրադարձել են հանրապետության ճանաչված գրականագետներն ու երաժշտագետները:

Խմբագրական

Թեեւ ամեն մի խոսք հետաքրքիր է յուրովի, բայց հնարավոր չէր բոլորը զետեղել համարում: Դրանցից առանձնացրինք եւ համարում պատշաճ տեղ հատկացրինք Վարդգես Պետրոսյանի, Հրանտ Թամրազյանի, Գարեգին Հովսեփյանի, Սեւակ Արզումանյանի, Գեւորգ Աբաջյանի, Շավիղ Գրիգորյանի հոդվածներին:

> *Մեր գրողներից ոչ ոք այնքան հանգամանալից չի քննարկել գուսանական-աշուղական արվեստին առնչվող հարցեր, որքան մեր մեծ հայրենակից Սերո Խանզադյանը: Նրա հոդվածները, նկատառումները, կարելի է ասել, յուրօրինակ ներդրում են բանասիրության այդ ոլորտում: Ուստի եւ նպատակահարմար գտանք ներկայացնել դրանք:*

Աշուղական արվեստի առանձնահատկությունների մասին տարիներ առաջ մեր թերթի էջերում պատմել էր աշուղագետ Լուսինե Նազարյանը: Այդ հոդվածն այսօր էլ պահպանում է հրատապությունը, ինչի համար էլ զետեղեցինք համարում:

Առաջին անգամ ծավալուն անդրադարձ ենք կատարում Գուսանի ստեղծագործությունների լեզվին. դժվարին այդ խնդիրը լուծեցինք մեր հայրենակից, բանասիրական գիտությունների թեկնածու, Գորիսի պետական համալսարանի դասախոս Սվետլանա Մանուչարյանի օգնությամբ:

Համարում որոշակի տեղ է հատկացվում հուշագրությանը եւ առհասարակ այն հրապարակումներին, որոնցում երեւում են Գուսանի Աշոտի կերպարի գորիսյան ընկալումները: Այդ առումով, հիրավի, մեծ քանակությամբ նյութեր են հավաքվել, բայց ընտրություն կատարեցինք՝ մեր ունեցած տեղին համապատասխան: Հուշագրություններում, օրինակ, նախապատվություն տվեցինք նախեւառաջ նոր գրվածքներին:

Երկրային կյանքին հրաժեշտ տալու օրերին հնչած ելույթների, հրապարակված հոդվածների մի մասը նույնպես ներկայացնում ենք ընթերցողին:

Անդրադարձել ենք նրա հիշատակի հավերժացման իրողություններին եւս:

Ներկայացրել ենք Գուսան Աշոտի ներաշխարհը սնուցած անհատականություններին՝ Գրիգոր Նարեկացուն, Նահապետ Քուչակին, Նաղաշ Հովնաթանին, Սայաթ-Նովային, Կոմիտասին նվիրված նրա հրաշալի բանաստեղծությունները:

Գուսանը պատկերացրել է աստվածաբուխ իր առաքելությունը եւ իր կոչման խորհուրդը կարողացել մեկնել: Դա հատկապես արտացոլված է «Գուսանն էն է», «Գուսանի աստղը», «Հայ գուսան» ստեղծագործություններում:

Ներկայացնում ենք Գուսանի ստեղծագործությունների համառոտ մատենագրությունը եւս:

Գուսանի կենսագրությունն առաջինը շարադրել է Սերո Խանզադյանը «Աշուղ Աշոտ» հոդվածում. ընթերցողն այդ հոդվածից, ինչպես եւ Անդրանիկ Կարապետյանի մենագրությունից կարող է պատկերացում կազմել Գուսանի կյանքի ուղու մասին:

> *Գուսանի մասին ժամանակին կարծիք են հայտնել հայոց մեծերից շատերը՝ Ավետիք Իսահակյանը, Համո Սահյանը եւ այլք. գնահատանքի այդ խոսքերին ընթերցողը նույնպես կարող է ծանոթանալ:*

Գուսանի հայրենակիցներից շատերը նրան բանաստեղծություններ են նվիրել՝ Քաջիկ Դորունց (Միքայելյան), Դուխիկ Հայրապետյան, Ապետնակ Գրիգորյան, Կարո Օհանյան, Լորետա Գրիգորյան, Գուրգեն Ադամյան, Վլադիմիր Որոտանցի (Բաղդագյուլյան), Վոլոդյա Նավասարդյան, Գարեգին Բաբայան, Ադամ Ադամյան… Նրանց բանաստեղծություններին համարում ծանոթանալու հնարավորություն ենք ընձեռում:

Մի շարք նյութերից ավելի ամբողջական պատկերացում ենք կազմում Գուսանի օջախի մասին: Ուշագրավ են հատկապես նրա որդու՝ Համլետ Դադալյանի հետ հարցազրույցը եւ Գուսանի ծոռնուհու՝ Լուսինեի մասին Ռեդիկ Հայրապետյանի ակնարկը: Վերստին ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացրել Գուսանի «Սուրբ մայրեր», «Օջախում», «Հայրիկ» կոթողային գործերը: Ներկայացրել ենք նաեւ Գուսանի վաղամեռիկ որդու՝ Ռուբեն Դադալյանի բանաստեղծություններից մի քանիսը:

Կարեւոր նշանակություն ենք տվել համարի լուսանկարներին:

Գուսանի, նրա բնօրրանի, մերձավորների նկարներից բացի ընդգրկել ենք այն մարդկանց լուսանկարները, ովքեր նշանակալից դեր են խաղացել Գուսանի ստեղծագործությունների տարածման, հանրայնացման գործում, որոնց թվում են Գուսանի երգերի մեծահամբավ կատարողները: Ներկայացվում են ճանաչված համույթների լուսանկարները, որոնք նպաստել եւ նպաստում են Գուսանի երգերի ժողովրդականացմանը: Առանձին էջերով ներկայացրել ենք «Այունյաց երկիր» թերթի արխիվում, Գորիսի երկրագիտական թանգարանում, Գորիսի պետական քոլեջում, Գորիսի պիոներ-դպրոցականների նախկին պալատում, «Զանգեզուր» թերթի արխիվում պահպանվող, ինչպես նաեւ Ռոբերտ Ալեքսանյանի, Խասան Հարությունյանի, Ռոբերտ Շահնազարյանի, Քաջիկ Միքայելյանի ընտանեկան ալբոմներից վերցված լուսանկարները:

* * *

Գուսանի Աշոտի 110-ամյակին նվիրված հատուկ համար թողարկելու ցանկությունն իրականություն դարձավ մեր հայրենակիցների՝ մոսկվայաբնակ էդիկ Հարությունյանի, թիվ 12 ընտրատարածքից ՀՀ ԱԺ պատգամավոր Աշոտ Արսենյանի, 2017թ. ապրիլի 2-ի ընտրություններում թիվ 12 ընտրատարածքից ԱԺ պատգամավորի թեկնածու Առուշ Առուշանյանի, Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Ադունցի կամեցողության շնորհիվ:

Ինչն էր ուշագրավ. Գուսան Աշոտին նվիրված մեր այս նախաձեռնությանը նրանք արձագանքեցին ոգեւորությամբ՝ ամեն մեկն իր սիրո դրսեւորմամբ յուրովի արժեւորելով Գուսանի վաստակը հայոց երաժշտական արվեստում:

Խմբագրական

> *Առանձնահատուկ հարգանքի ու գնահատանքի է արժանի «Սյունյաց երկիր» թերթի ողջ խմբագրակազմը. որերորդ անգամ կոլեկտիվի մարդիկ ցույց տվեցին, որ իրենք Սյունյաց աշխարհի նվիրյալներից են, Սյունիքի հոգեւոր-մշակութային կյանքը նորոգ պահողներից:*

Որերորդ անգամ նրանք ցուցանեցին, որ իրենց գործի անզուգական վարպետն են:

Ընթերցողն անպայման պետք է այս առիթով եւս անուն առ անուն ճանաչի նրանց ու հպարտանա նրանցով. *Վահրամ Օրբելյան, Արմինե Հարությունյան, Գրիգորի Սահակյան, Սլավիկ Նավասարդյան, Գայանե Բաղդասարյան, Նուբար Դավթյան, Մերի Ավանեսյան, Վասիլ Սահակյան*:

Ինչպես բոլոր նմանատիպ համարներ հրատարակելիս, այս անգամ էլ մեզ հետ էր մեր թերթի գեղարվեստական խորհրդի նախագահը՝ Սյունյաց աշխարհի մերօրյա մեծատաղանդ բանաստեղծ *Տիգրան Գրիգորյանը.* մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում նրան:

Համարի նյութերի պատրաստման դժվարին գործում անուրանալի է «Սյունյաց երկիր» թերթի վաղեմի բարեկամներ, Գուսան Աշոտի երգարվեստի երկրպագուներ *Ռեդիկ Հայրապետյանի, Ալվարդ Մեսրոպյանի, Սուսաննա Բաբաջանյանի դերը:*

Բոլոր այդ մարդկանց մեր հարգանք ենք ընծայում եւ լավագույն մաղթանքներ հղում:

* * *

2017թ. ապրիլի 25-ին՝ Գուսան Աշոտի 110-ամյակի օրը, «Սյունյաց երկիր» թերթի ստեղծագործական խումբը նույնպես Գորիսի մերձակայքի ամենաբարձր բլուրներից մեկում հավերժորեն ննջող Գուսանի գերեզմանի մոտ էր:

Այդտեղից ինքը հովանի է ոչ միայն հրաշք Գորիսին, այլեւ ամբողջ Սյունիքին ու հայոց տանը:

Գնացել էինք օրհնաբանելու նրա աճյունն ամփոփող մեր հողը, որ հայ ժողովրդին Գուսան Աշոտ է պարգեւել:

Գնացել էինք հաղորդվելու Գուսանի հոգեւոր ներկայությանը՝ համոզված լինելով, որ նրա տաղերը՝ խաչքարեր դարձած, ուղեկցելու են հայ ժողովրդին:

Հոգ չէ, որ նրա 110-ամյակը չնկատվեց Սյունյաց աշխարհին անփութորեն շուլալված, բայց մեր աշխարհի հոգեւոր արժեքներին անհաղորդ հերթական անցավոր իշխանավորների կողմից:

Գուսանը մեզ ու նրանց նման բյուր անցավորների է ճանապարհելու, քանզի նա վաղուց է անվախճանության ճամփան բռնել…

Գորիսի պետական քոլեջի թանգարանի լուսանկարներից



Գորիսի տիոներ-դոտրոցականների նախկին տալատի ալբոմից



Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

Հազար հողմեր ձեզ չեն մաշել

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գուսան Աշոտի հետ բարեկամությունը կյանքիս ամենաուշագրավ էջերից է:

Բազմաթիվ շփումներ եմ ունեցել նրա հետ:

Աշխատանքիս բերումով առնչություններ ունեցա նաեւ նրա հուղարկավորության, ստեղծագործական ժառանգության տարածման, նրա հիշատակը վառ պահելու հետ:

Ծննդյան 110-ամյակի առիթով այդ եղելությունների մի մասի վերհուշը, կարծում եմ, օգտակար կլինի ավելի բազմակողմանի ու ամբողջական ճանաչելու նրա մարդկային կերպարը, ցուցանելու հայրենի եզերքի հանդեպ նրա բացառիկ սերը, ժողովրդական ակունքների, զանգեզուրյան ավանդույթների հետ նրա արյունակցությունը, դրանցով ոգեշնչվելու, աշխարհին այդ պատուհանից նայելու նրա էությունը եւ, ի վերջո, այն մաքրամաքուր ու անկեղծ սերը, որ վայելում էր Գուսանը Սյունիք-Զանգեզուրում եւ հատկապես ծննդավայր Գորիսում:

* * *

Գուսանի հետ ծանոթացա իմ հայրենի Հարժիսում:

1976թ. նոյեմբերի 1-ին նշանակվել էի գյուղի մշակույթի տան տնօրեն:

Այն ժամանակ ընդունված գործելակերպ էր մայրաքաղաքային, շրջանային համույթների, արվեստի գործիչների շրջագայությունն ու հյուրախաղերը գյուղական բնակավայրերում: Բնակչության ժամանցի կազմակերպման, մարդկանց գեղագիտական պահանջմունքների բավարարման գործում նրանց մասնակցությունը մշակութային քաղաքականության անքակտելի բաղադրիչն էր: Գուսան Աշոտն էլ ժամանակ առ ժամանակ այցելում էր գյուղեր եւ ելույթներ ունենում:

1976-ի տարեվերջին (ստույգ օրը չեմ հիշում) Գուսանն այցելեց Հարժիս: Նրա հետ էր իր երգերի լավագույն կատարողներից մեկը՝ կինը՝ Արաքսյա Ղալեչյանը:

Օրվա վերջին ամբողջ գյուղն էր, կարծես, հավաքվել մշակույթի տանը:

Համերգը սկսելուց առաջ խոսք վերցրեց գյուղի գրադարանավար Վոլոդյա Գրիգորյանը, ով հակիրճ ներկայացրեց Գուսանի երաժշտական արվեստը: Նրանից այդտեղ առաջին անգամ լսեցի, որ Գուսան Աշոտը մերօրյա Սայաթ-Նովան է, որ նա, հատկապես սիրերգության մեջ, Սայաթ-Նովայի արժանավոր հետնորդն է:

Գուսանն արժանացավ ջերմ ընդունելության:

Այդ օրն էլ բախտ ունեցա մոտիկից ծանոթանալ Գուսան Աշոտի հետ:

Եվ այդ օրն էլ խորապես ընկալեցի, որ Գուսանին հավերժի այցետոմս է տվել, նրան մեծ երգիչ ու երգահան է կնքել ինքը՝ ժողովուրդը:

* * *

1983թ. հուլիսի 20-ից մինչեւ 1988թ. նոյեմբերի 16-ը Գորիսի շրջանային մշակույթի բաժնի վարիչն էի: Այդ ժամանակ, աշխատանքիս բերումով, սերտ կապեր հաստատվեցին Գուսան Աշոտի հետ: Մի սուբյեկտիվ գործոն էլ կար. մշակույթի բաժինը գտնվում էր քաղաքի նախկին հյուրանոցի երկրորդ հարկում (Մխիթար սպարապետի անունը կրող հրապարակի վրա, որտեղ հիմա քաղաքի N1 մանկապարտեզն է), իսկ շենքի առաջին հարկի անկյունային մասում Ուսուցչի տունն էր, որի մուտքի մոտ սովորաբար կանգնում էր Գուսան Աշոտը. դա իր տնից մոտ հարյուր մետր հեռավորության վրա էր: Եվ գրեթե ամեն օր, կամա-ակամա, հանդիպում էինք, զրուցում, ինքն էր հաճախ բարձրանում մշակույթի բաժնի իմ աշխատասենյակ:

Մշակույթի բաժնում մեր համագործակցության ուղղություններից մեկը ժողգործիքների ժողովրդական անսամբլի գործունեության բարեփոխումն էր: Անսամբլի վրա նրա ուշադրությունն առավելագույնս հրավիրելու համար անսովոր քայլի դիմեցի.

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

իմ թախանձագին խնդրանքներից հետո նա համաձայնեց ժամանակավորապես աշխատանքի նշանակվել շրջանային մշակույթի բաժնում՝ անսամբլին մոտիկից օգնելու համար: Դա 1983թ. սեպտեմբերի 1-ն էր: Մինչ այդ էլ՝ 1983թ. օգոստոսի 16-ին, նրա երաշխավորությամբ անսամբլի գեղարվեստական ղեկավար նշանակեցի Վալերիկ Գասպարյանին: Վերջինիս հետագայում փոխարինեցին Ռոլանդ Առաքելյանը, Անժելա Անտոնյանը, Սաշիկ Սարգսյանը:

Գուսանի ներկայությունը, առանց չափազանցության, աննախադեպ ակտիվություն հաղորդեց ե՛ւ պարապմունքներին, ե՛ւ հյուրախաղերին: Ընդգրկվեցին նոր կատարողներ, նորացվեց երգացանկը, ընդլայնվեց գործիքային կազմը, ակնհայտորեն բարձրացավ անսամբլի կատարողական վարպետությունը:

Ժողգործիքների անսամբլի հանդեպ այդ մոտեցումն աստիճանաբար տվեց իր պտուղները:

1987թ. ապրիլի 13-15-ն անսամբլը Երեւանում մասնակցեց հեռուստատեսային նկարահանումների եւ հաջող ելույթներ ունեցավ:

1988թ. հունվարի 9-17-ն անսամբլը Դոնի-Ռոստովի մարզի Օրլովսկ բանավանում մասնակցեց երգի փառատոնին:

1988թ. հունիսի 22-29-ն անսամբլն այցելեց Էստոնիա. Տալլին մայրաքաղաքում եւ Խարյումայի շրջանում հետաքրքիր ելույթներ ունեցավ (անսամբլում այդ ժամանակ ընդգրկված էր 20 հոգի, գեղարվեստական ղեկավարն էր Ռոլանդ Առաքելյանը):

Նման պատասխանատու շրջագայություններից եւ փառատոներից առաջ Գուսանը պարտադիր կարգով լսում էր անսամբլի ելույթները եւ իր խորհուրդներով, դիտողություններով շտկումներ անում:

Ընդհանրապես այդ տարիներին մեր մշակույթի բաժնի միջազգային կապերն աննախադեպ ակտիվ էին: Նույնիսկ հաջողվել էր քաղաքի գրադարավարների մի խումբ (1988թ. սեպտեմբերի 13-19-ը) գործուղել Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարան՝ փորձի փոխանակման: Լատվիայի «Ուզվարա» երգչախումբն էր 1985-ին մեր հրավերով ժամանել Գորիս: Նման այցելություններից, փոխայցելություններից յուրաքանչյուրն ուներ մշակութային նշանակություն: Սակայն ժողգործիքների անսամբլի՝ հանրապետությունից դուրս ելույթները հայ երգին պատիվ բերող իրադարձություններ էին: Իսկ այդ ամենի ոգեշնչողը Գուսան Աշոտն էր: Եվ արդարացի էին Գորիսի տեղական իշխանությունները, որոնք հետագայում անսամբլին շնորհեցին Գուսան Աշոտի անունը:

* * *

Գուսան Աշոտը փորձում էր փրկել ժողովրդական բանահյուսության նշխարները՝ անթեղված գորիսեցիների հիշողության մեջ: Եվ այդ նպատակով խնդիր դրեց շրջագայել Գորիսի շրջանի գյուղերով՝ հանդիպել տարեց մարդկանց, վեր հանել եղած երգերը, քառյակները եւ գրառել, մշակել, նոտագրել դրանք: Իրեն օգնականներ ընտրեց ճանաչված երաժիշտ Վալերիկ Գասպարյանին եւ տողերիս հեղինակին:

Դա, որքանով հիշում եմ, 1987-ի աշնանն էր եւ 1988-ի սկիզբը:

Մոտ վեց ամիս զբաղվեցինք այդ գործով, որը, սակայն, կիսատ մնաց, երբ Գուսանն այլեւս դժվարությամբ էր շրջագայություններ կատարում՝ առողջական վիճակի պատճառով:

Մեր համատեղ աշխատանքի շնորհիվ հավաքվեցին մի քանի տասնյակ քառյակներ, բանաստեղծություններ, երգեր:

Վալերիկ Գասպարյանը երգերը նոտագրելու առաքելությունն իր վրա էր վերցրել, իսկ ես՝ տեքստերը հավաքելու, գրառելու, ձայնագրելու:

Ցավոք, Վալերիկ Գասպարյանի նոտագրությունները, ինչպես ինքն ասաց վերջերս, չեն պահպանվել: Չեն պահպանվել նաեւ իմ կողմից կատարված ձայնագրությունները: Տեքստերի մի մասն է միայն պահպանվել ինձ մոտ, եւ Գուսանին նվիրված թերթային համարում որոշ գործեր կներկայացնեմ ընթերցողին:

Դժվարանում եմ հիշել բոլոր գյուղերի անունները, որտեղ եղանք, բայց ստույգ հիշում եմ մեր հանդիպումները Վերիշենում, Ակներում, Գորիսում, Քարաշենում:

Գորիսյան բանահյուսական նշխարների մեջ, որ հավաքվեցին Գուսանի նախաձեռնությամբ եւ պահպանվում են, արժեքավոր շատ մասունքներ կան, որոնք սկզբնաղբյուրային նշանակություն կարող են ունենալ (իբրեւ ժողովրդական բանահյուսության ծվեններ): Դրանք շատ լավ ներկայացնում են մեր նախնիների պատկերացումները: Կան նաեւ գործեր, որոնք դարերի խորքից եկող ժողովրդական ավանդույթների մասին պատմող բացառիկ հուշարձաններ են: Դրանցից մեկը, օրինակ, վկայում է այն մասին, թե մեր ապուպապերն ինչպես էին ամռանը պայքարում տեւական ու հորդառատ անձրեւների դեմ:

Ահա.

Էսքան թոռ կյալ կինի,
Էսքան սել ու սուլ կինի,
Եկեք ճոլին ման ածենք,
Ախր արտը լաց կինի:

Ճոլի-Ճոլի մեր ճոլի,
Սըվրքեւրկալ մեր ճոլի,
Թուռաթափա, սեւ լեվա,
Սըվրլեչակ մեր ճոլի:

Ճոլին քիցենք էս ծովը,
Ծովը ծրանի դառնա,
Վեր աչք պանա էս հողը,
Կողկերքը հիլի դառնա:

Կյաղը պերեք նի քաշենք,
Չուվան պերեք դուս քաշենք,
Պերեք վարսին յեղ քիցենք,
Անդին-հանդին լուս քաշենք:

Ճոլի-Ճոլի մեր ճոլի,
Սըվրքեւրկալ մեր ճոլի,
Թուռաթափա, սեւ լեվա,
Սըվրլեչակ մեր ճոլի:

* * *

Գուսան Աշոտի 80-ամյակի նշումը Գորիսում համաժողովրդական տոնակատարության պես մի արարողություն դարձավ:

Հոբելյանի նախապատրաստումը սկսվել էր դեռեւս 1987-ի փետրվար-մարտին: Նախապատրաստական աշխատանքները ղեկավարում էր կուսակցության Գորիսի շրջկոմի 1-ին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանը:

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

Հանձնախմբում շրջկոմի քարտուղար Ժաննա Դադալյանն էր, շրջխորհրդի եւ քաղխորհրդի գործկոմների նախագահներն էին, շրջանային եւ քաղաքային մշակույթի բաժնի վարիչներ Սամվել Ալեքսանյանն ու Գագիկ Ծատրյանը:

Նախ ճշտեցինք, թե հանրապետության գեղարվեստական խմբերից, երգիչ-երգչուհիներից, արվեստի գործիչներից ովքեր կարող են մասնակցել, եւ ում պիտի հրավիրենք հանդիսավոր երեկոյին:

Հոբելյանական երեկոյին մասնակցելու պատրաստակամություն հայտնեց հեռուստատեսության եւ ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական անսամբլը՝ ղեկավարությամբ կոմպոզիտոր Մանվել Բեգլարյանի: Այդ օրը ելույթ ունենալու պատրաստակամություն հայտնեցին հանրապետության ժողովրդական արտիստներ Օֆելյա Համբարձումյանը, Վարդուհի Խաչատրյանը, Ռուբեն Մաթեւոսյանը, արտիստներ Ռաֆֆի Հովհաննիսյանը, Ռիմա Սարիբեկյանը, Սուսաննա Սաֆարյանը...

Հոբելյանական երեկոն ապրիլի 25-ին՝ Գուսանի ծննդյան օրը, տեղի չունեցավ, հետաձգվեց եւ միայն մայիսի վերջին կամ հունիսի սկզբին (ստույգ օրը չեմ հիշում) այն իրականություն դարձավ:

Պատվիրակություն էր եկել Լեռնային Ղարաբաղից (Ասկերանի շրջկոմի 1-ին քարտուղար Վաչագան Գրիգորյան, բանաստեղծ Հրաչյա Բեգլարյան):

Եկել էին Ադրբեջանի հարեւան շրջաններից՝ Լաչինից, Կուբաթլուից:

Երեկոն բացեց Ռոբերտ Ալեքսանյանը:

Հանդիսությանը մասնակցում էր եւ ելույթ ունեցավ Սերո Խանզադյանը:

Սակայն Սերո Խանզադյանն ինչ-ինչ պատճառներով վրդովվել էր (ընթացքում) եւ դահլիճի առաջին շարքից տեղափոխվել վերջին շարք, որը ոչ մեկի աչքից չէր վրիպել: Ռոբերտ Ալեքսանյանը շշուկով հորդորեց ինձ՝ մոտենալ եւ պարզել, թե ինչ է տեղի ունեցել եւ նրան համոզել, որ վերադառնա առաջին շարք: Սերո Նիկոլայիչին համոզել չկարողացա:

- Ինձ համար այստեղ շատ հարմար է, - ասաց Ս.Խանզադյանը:

Երեկոն անցավ ամենաբարձր մակարդակով:

Հաջորդ առավոտյան Ուսուցչի տան մուտքի մոտ հանդիպեցի Գուսանին, ու մտքեր փոխանակեցինք հոբելյանական երեկոյի շուրջ: Գուսանը զգացված էր շրջանի ղեկավարների ցուցաբերած վերաբերմունքից, ինչպես եւ Արամ Մերանգուլյանի անվան անսամբլից, երգիչ-երգչուհիներից, ովքեր անմոռանալի պահեր պարգեւեցին ներկաներին:

Գուսանը նկատել էր Սերոյի ոչ սովորական պահվածքը, բայց չէր ուզում կարեւորել դա: Ընդհակառակը, շատ բարձր գնահատեց Սերո Խանզադյանի ելույթը, որը, իրոք, բացառիկ էր օրվա ելույթների մեջ:

80-ամյակի հետ կապված ամեն ինչ չէ, որ ավարտվեց այդ միջոցառմամբ: Գուսանը հեղինակեց հետաքրքիր մի բանաստեղծություն՝ «80 տարիս», որի մեջ ամփոփեց իր անցած ճանապարհը, իր առաքելությունը՝

Ամեն ծաղկի երգ կապեցի,
Ծովակների հետ ծփացի,
Իմ քնարի անուշ ձայնով
Սարերն իրար հետ խոսեցին:

Եվ, որ ուշագրավ է, 80-ամյա Գուսանն այդ բանաստեղծության մեջ ազդարարում էր՝ «... ուխտ ունեմ դեռ/ Իղձ ու փափագ, հավատ ունեմ սիրահեղեղ»: Ու այդ իղձն այնքա՜ն սրտամոտ էր ամեն մի հայի՝ «Սեղան-սփռոց պիտի բացեմ Վանա ափին»:

Այդ տարիքում էլ Գուսանը չէր հագեցել էր իր հող ու ջրի հանդեպ տա-

Այսնյաց երկիր

№ 1 /113/ 17 հունիսի 2007

2007թ. ապրիլի 25-ին աշուղ Աշոտը կդառնար հայության գարեգան

Ջանգեզուր աշխարհի նահապետը

ԱՄԵՆ ՄԻ ՏԱՐԸ ԽԱՉՔԱՐ ԴԱՐՁԱԾ...

ԳՈՒՍԱՆՆ ԷՆ Է

20-րդ դարի գուսանական արվեստի ազնվական ասպետը

«Այսնյաց երկիր» թերթի 2007թ., N1 (113)

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

ծած սիրուց՝ «Ես կգնամ քեզնից կարոտ...»:

Մշակույթի բաժին իր հերթական այցելություններից մեկի ժամանակ նա մեզ տեղեկացրեց այդ ստեղծագործության մասին...

Այդ բանաստեղծությունն ընդգրկված է նրա վերջին ժողովածուում՝ «Լեռները կանչում են» (1988թ.):

* * *

Իր ստեղծագործություններից յուրաքանչյուրի ծննդյան մասին Գուսանը սովորաբար ավետում էր մերձավորներին, բարեկամներին, ընկերներին: Հորինված երաժշտության, մեղեդայնության մասին՝ Վալերիկ Գասպարյանին, բանաստեղծության մասին՝ Հովսեփ Բաղդասարյանին, Անդրանիկ Կարապետյանին, Ապետնակ Գրիգորյանին, Քաջիկ Միքայելյանին, Էդիկ Զոհրաբյանին...

Կյանքի վերջին երեք-չորս տարում նման վստահության եւ պատվի էր արժանացնում նաեւ ինձ: Ես, իհարկե, երբեք թույլ չեմ տվել ինձ կարծիք կամ նկատառում հայտնել տաղաչափությանը կամ բանաստեղծելուն վերաբերվող հարցերի շուրջ: Դա իմացության այլ՝ նեղ մասնագիտական ոլորտ է: Ինձ հետաքրքրողը խոսքն էր, թեման, լեզուն, ոճը...

1987թ. փետրվարի 18-ին Գորիսի Վանքի տափ թաղամասում ինձ բնակարան էին հատկացրել: Դրանից երեք օր առաջ էլ՝ փետրվարի 15-ին, կրտսեր աղջիկս էր ծնվել՝ Աննան: Մայիսին ընտանիքս բնակության տեղափոխվեց այդ բնակարան:

Գուսան Աշոտը եւ Հովհաննես Խաչատրյանը (Մանուչը), ով նույնպես, չնայած մեր տարիքային շատ մեծ տարբերությանը, բարեկամություն էր անում ինձ հետ, օրերից մի օր այցելեցին մեր տուն՝ շնորհավորելու ե՛ւ աղջկաս ծնունդը, ե՛ւ բնակարանամուտը:

Սեղանի շուրջ մեր զրույցը շուտով տեղափոխվեց այլ հուն եւ, ի վերջո, վեր ածվեց Գուսանի նորաստեղծ երկու բանաստեղծության շնորհանդեսի:

Գուսանը նախ ներկայացրեց իր բանաստեղծությունը՝ նվիրված Մանուչին՝ Հովհաննես Խաչատրյանին՝ «Պարտիզան Մանուչ, Կոմիսար Մանուչ», որից մի հատված հարկ եմ համարում հիշել՝

Քեզ կորյուն ասեմ, թե՝
լեռանց հսկա,
Հայրենի կանչով ցասման
թուր առար,
Լեռնեցու ոգով ամուր բերդ
դարձար.
Զարքը քո թրով, հրով մոխրացավ:
Հովն էր լուր բերում մոր
արցունք ծորում,
Պարտիզան Մանուչ,
Կոմիսար Մանուչ:

Հովհաննես Խաչատրյանը (Մանուչը) Գորիսի արժանավոր զավակներից էր, մեծ ներդրում է ունեցել Բելոռուսիան ֆաշիստներից ազատագրելու գործում՝ լինելով պարտիզանական ջոկատի կոմիսար, ապա՝ հրամանատար:

1980-ականների վերջին ազգային, հայրենասիրական թեման իշխող էր մեր երգարվեստում: Գուսանն էլ անդրադարձներ էր կատարում հայ ազատագրական պայքարի առանձին դրվագներին, ժողովրդական հերոսներին: Եվ հեղինակել էր մի բանաստեղծություն՝ 1918-20թթ. Զանգեզուրի գոյամարտի ժամանակ մեծ համբավ ունեցող Թոփչի Սիմոնի մասին: Ուզում էր, որ երիտասարդներն իմանան հանրահայտ գնդացրորդի մասին ու երգեն նրա սխրանքը: Եվ հեղինակել էր մի բանաստեղծություն՝ «Քաջանց Սիմոն»: Ահա մի հատված այդ բանաստեղծությունից.

Ձեր փառքն ասեմ, քաջանց քաջեր,
Երկնահեղեղ կրակ շանթեր,
Կրծքով ամուր պատնեշ արիք,
Որ չիամրեն հայոց ապրեր:

Մեր հանդիպմանը նաեւ այդ ստեղծագործության շուրջ խորհրդածություններ ծավալեցինք:

... Մինչեւ հիմա մեր ընտանիքում հիշում ենք նշանավոր այդ օրը:

* * *

Գուսանը ցանկություն էր հայտնել այցելել մեր գյուղ՝ Հարժիս՝ իմ հայրական տուն: Ընդ որում՝ ուզում էր, որ այցելենք այնպիսի մի օր, երբ մերոնք հաց թխելիս լինեին...

Սպասված այցը տեղի ունեցավ. 1988-ի աշնանն էր...

Ծնողներս շատ էին ուրախացել: Դա մեր օջախի ամենանշանավոր ու հիշարժան օրերից մեկն էր: Հայրս թանկագին հյուրի ոտքերի առաջ գառ մորթեց, իսկ մայրս մեծ սուփրա բացեց:

Հայրս, ով հռետորական արվեստի անվիճելի վարպետ էր եւ քաջածանոթ էր Գուսանի ստեղծագործություններին, հիացմունքի եւ երախտիքի խոսքով պատվեց մեծ երգահանին:

Սեղանին նաեւ առասպելական Խորեն քեռիս էր՝ փահլեվանի եւ անմրցելի վազորդի համբավ ունեցող, բայց արդեն ծերացած ու մեջքից կռացած:

Գուսանը լսել էր նրա մասին տարածված պատումներից մեկը. գյուղի հեռավոր յայլաղներում չորս հեծյալ ադրբեջանցի կռվի էին բռնվել նրա հետ, բայց քեռիս՝ մեն-մենակ, ձեռնափայտով ջախջախել էր նրանց, իսկ հետո մնացել անորսալի թուրք ձիավորների երկրորդ խմբի համար:

Գուսանը խոստացավ այդ զրույցը երբեւէ ներկայացնել բանաստեղծական խոսքով:

Մինչեւ սեղանի շուրջ հավաքվելը, մոտ մեկ ժամ, Գուսանը կամեցավ նստել հացատանը՝ թոնրի մոտ եւ այդ տեսարանի միջոցով վերհիշել իր մանկությունը:

Հացթուխը մայրս էր. ինքն էր սովորաբար մեր հացը թխում, մինչ այդ էլ ե՛ւ ալյուրն էր մաղում, ե՛ւ տաշտի մեջ խմորը հունցում: Այդ օրը Գուսանի հետ զրուցելով էր տյափը ձեռքին հացը կպցնում թոնրին:

Իսկ հացի տախտակի կողքին մեր պատվական հարեւաններից մեկն էր՝ Նազի զիզիհ՝ կլօխը շինած, արխալուղը հագին, լաչակն ու արծաթե զարդերով թոխկան կապած. նա Զանգեզուրի տարազը կրող վերջին կանանցից մեկն էր մեր գյուղում:

Մայրս Գուսանի պատվին այդ օրը նաեւ թոնրում քյաթա թխեց: Խնամի Գրետան էլ ծհանով քյաթան պոկում էր թորենի պատից, մեկ-մեկ էլ թոռնըխառնիչով կրակը թեժացնում, իսկ թոնրի մեջ ընկած հացը կամ քյաթան քեթը կեռ շամփուրով հանում:

Գուսանին հետաքրքրում էր ամեն ինչ:

Գուսանին դուր էր եկել հատկապես Նազի զիզու տարազն ու պահվածքը, եւ, կարծես, իր մորն էր մտաբերել: Ու

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում

հանկարծ մի հատված արտասանեց իր ստեղծագործությունից.

Երազիս եկար՝ շողը քո այտին,
Թվաց՝ ծաղիկը ձայն տվեց ծաղկին,
Առուն քչքչաց, հովը շնչնկաց,
Քո մախմուր ձայնից
բարդին խշխշաց:
Եկա քեզ գրկեմ, վարսդ համբուրեմ,
Իմ անուշ մայրիկ, հազար
հուշ մայրիկ:

... Գուսանը գյուղից հեռացավ, ինչպես ինքը խոստովանեց, անմոռանալի տպավորություններով: Մի քանի օր անց ծնվեց նրա բանաստեղծությունը՝ ծննդավայրիս մասին՝ ընծայագրով՝ «Այս տողերը նվիրում եմ իմ լավ բարեկամին՝ Սամվել Ալեքսանյանին» («Այունյաց երկիր», 6 փետրվարի 2016թ.):

Բանաստեղծությունը՝ ստորեւ.

Երբ Հարժիս գյուղի անունն եմ
լսում,
Գոռ խաշնարածի հիացքն եմ
տեսնում,
Ով իր հոտաղը փարել սարերին՝
Ծիրանի փողն էր ներշնչված
փչում...

Իշխանասարի զովաշունչ այուքը
Հով էր անում մեր զմրուխտ
դաշտերին,
Իսկ մի մշակ էլ իր հողն էր հերկում՝
Իմ «Այունյաց սարեր» տաղիկը
շուրթին...

* * *

Գորիսի շրջանի գյուղական տնտեսություններից մեկում Գուսանը մեղր էր պատվիրել: Մեղրաքամից հետո երկուսով գնացինք այդ գյուղ՝ գնում կատարելու: Առհասարակ նա, ինչպես եւ մեզանից շատերը, սիրում էր ձմեռվա համար գյուղական որոշ բարիքներ ձեռք բերել կամ պատրաստել՝ սկսած լավաշ հացից, գինուց...

Գյուղում Գուսանին բացառիկ լավ ընդունելություն ցույց տվեցին:

Մեր գործն ավարտելուց հետո հրավիրեցին գյուղի ղեկավարներից մեկի տունը:

Մոտ քսան սեղանակիցների ուշադրության կենտրոնում, բնականաբար, Գուսանն էր:

Աշնանային գեղեցիկ երեկոն եւ մարդկանց ջերմ ու անկեղծ վերաբերմունքը Գուսանին բարձր տրամադրություն էին հաղորդել:

Ոչ միայն օգտվում էինք առատ սեղանից, այլեւ զրուցում, մտքեր փոխանակում, կատակում, սակայն...

Գյուղի այդ ղեկավարը, ում հարկի տակ հյուրընկալվել էինք (նպատակահարմար չեմ գտնում նշել ո՛չ գյուղի, ո՛չ այդ ղեկավարի անունը), գինովանալուց հետո մի զրույց սկսեց՝ իր թվացյալ քաջությունը ներկայացնելու համար:

- Որոտանի մեր այգուց ժամանակ առ ժամանակ գողություն էին անում՝ պոմիդոր, վարունգ, լոբի... Եղբայրներով որոշեցինք բռնել գողին: Եվ մի գիշեր դարան մտանք այգու մերձակայքում: Գիշերը՝ ժամը երեքի սահմաններում, ինչ-որ մեկը դուրս եկավ այգուց՝ մեշոկը շալակին եւ վեդրոն ձեռքին... Հրացանի կոթով որ խփեցի՝ ընկավ, ախպերս էլ բահով հարձակվեց նրա վրա..., - հպարտորեն պատմում էր «ասացողը»:

Այդ ամենը լսելուց հետո Գուսանը թեքվեց դեպի ինձ եւ ականջիս շշնջաց՝

- Ես չեմ կարող այլեւս նստել այս սեղանին, ինչպե՞ս կարելի է մի քանի կիլո պոմիդորի, վարունգի, լոբու համար դաժանաբար ծեծել հայ մարդուն եւ հպարտանալ, մի բան մտածի...

Գուսանի ասածը քննարկել չէր կարելի:

Ես խոսք խնդրեցի տան տիրոջից, շնորհակալություն հայտնեցի հյուրասիրության համար եւ ասացի, որ Գուսանի առողջական վիճակը թույլ չի տալիս երկար նստել, մենք պետք է գնանք...

Եվ հեռացանք այդ սեղանից: Ճանապարհին՝ Գորիս վերադառնալիս, Գուսանին չէր լքում զարմանքն ու հիասթափությունը՝ ինչպես կարող է հայ մարդը հայ մարդուն, իր համագյուղացուն բահով, հրացանով ծեծել:

Ես նրան հասկանում էի: Ինքը հուզական՝ նուրբ եւ քնքուշ հոգի ունեցող մարդ էր, խաղաղ, հանդարտ վարքի տեր: Իր համար անընդունելի էին կռիվը, հայհոյանքը, մարդուն վիրավորելը, առավել եւս՝ ծեծելը:

* * *

1989թ. հունվարի 28-ին, 82 տարեկան հասակում, վախճանվեց Գուսան Աշոտը:

«Զանգեզուր» թերթի խմբագիրն էի: Եվ պաշտոնի բերումով հեռախոսային խոսակցություններ ունեցա հանրապետության գրականության եւ երաժշտական արվեստի մի քանի նշանավոր գործիչների հետ՝ իմանալու նրանց արձագանքը, գրառելու նրանց խոսքը Գուսանի մահվան կապակցությամբ: Մասնավորապես հեռախոսազրույց ունեցա ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Էդվարդ Միրզոյանի, բանաստեղծ ու երգահան Գուրգեն Գաբրիելյանի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Կոնստանդին Օրբելյանի, մեր մեծ հայրենակից Սերո Խանզադյանի հետ: Նրանց խոսքը տեղ գտավ «Զանգեզուր» թերթի 1989թ. փետրվարի 2-ի համարում:

Գերեզմանատանը, մեր լեռնաշխարհի մարդկանց անունից, հրաժեշտի խոսք պետք է ասեր կուսակցության Գորիսի շրջկոմի 1-ին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանը: Նա շատ էր կարեւորում այդ խոսքը, եւ դրա նախապատրաստմանն ընդգրկեց նաեւ ինձ ու կուսակցության շրջկոմի քարտուղար Ժաննա Դադալյանին: Միասին պատրաստեցինք հրաժեշտի խոսքը, որը հնչեց սգո հանդեսի ժամանակ եւ հրապարակվեց «Զանգեզուր» թերթի փետրվարի 4-ի համարում:

* * *

Սերո Խանզադյանի մասին իմ հուշերում («Այունյաց երկիր», 3 դեկտեմբերի 2015թ.) անդրադարձ եմ կատարել նաեւ Գուսան Աշոտի հուղարկավորությանն առնչվող մեկ այլ դրվագի, որը տեղին կլիներ հիշել այս առիթով եւս:

Ահա. «Լեռնային Ղարաբաղի պատվիրակությանը Գուսան Աշոտի հուղարկավորության ժամանակ ես էի ուղեկցում: 1989թ. փետրվարի 1-ն էր: Հուղարկավորությունից հետո՝ օրվա վերջին, Լեռնային Ղարաբաղից ժամանած հյուրերին, Գուրգեն Գաբրիելյանի եւ Լեւոն Մկրտչյանի գլխավորությամբ, հրավիրեցի մեր տուն: Մի փոքր ուշացումով մեզ միացավ Սերո Խանզադյանը, ավելի ուշ միացան Ռոբերտ Ալեքսանյանն ու Գագիկ Հայրումյանը:

Հուղարկավորության պահի՝ Գուրգեն Գաբրիելյանի ելույթից բոլորս

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

«Երկրորդ ամենամեծ զանգեզուրցին է». Համո Սահյանն է ասում

տպավորված էինք: Գուրգեն Գաբրիելյանը Գուսանին գերեզման իջեցնելիս խոսք էր խնդրել եւ հետեւյալն ասել. «1981թ. մայիսի 21-ին՝ Սուրեն Այվազյանի հուղարկավորության ժամանակ, երգեցի «Ղարաբաղի հորովելը»: Գուսանի կողքին էի կանգնած: Երբ ավարտեցի երգը, Գուսանը բռնեց ձեռքս եւ ասաց. «Խնդրում եմ՝ իմ թաղման ժամանակ էլ կերգես «Ղարաբաղի հորովելը»»: Եվ, ուրեմն, թույլ տվեք կատարել Գուսան Աշոտի պատվիրանն ու երգել «Ղարաբաղի հորովելը»»: Ղարաբաղյան շարժման ամենաթեժ օրերն էին, այդ երգի մեղեդիները մեծ հուզմունք էին պատճառել ներկաներին, առանց չափազանցության կարելի է ասել՝ բոլորը հուզվել ու արտասվում էին՝ սգալով եւ Գուսանի կորուստը, եւ կարեկցելով Ղարաբաղին, որն այդ օրերին գտնվում էր ծանրագույն վիճակում:

Գուսանի հուղարկավորության այդ դրվագը ցնցել էր նաեւ Սերո Խանզադյանին: Նա խնդրեց Գուրգեն Գաբրիելյանին մեկ անգամ եւս կատարել «Ղարաբաղի հորովելը»: Թեեւ դժվարությամբ, բայց Գուրգեն Գաբրիելյանը համաձայնեց: Եվ մեր տան կամարների ներքո հնչեց «Ղարաբաղի հորովելը»...

Իրիքնակը դուս ա եկալ,
Տանս յիրա լուս ա եկալ:
Սօր մին կորե վեր վար անիմ,
Գիդա սրտես լուս ա եկալ:

Հո արա, հո,
Ապան մարդաղ,
Ապուն դալուն կուՀիր հուրաղ:
Հո արա, հո, հո, հո...

Ներկա գտնվողներս կրկին վերապրեցինք Գուսան Աշոտին հրաժեշտ տալու վսեմաշուք պահը:

Նստեցինք շատ երկար, նորից խոսեցինք Գուսան Աշոտի մասին. հուշեր էինք պատմում, նրա երգերն ու բանաստեղծությունները վերհիշում, քննարկում:

...Գագիկ Հայրումյանը հյուրերին հաջորդ օրվա առավոտվա համար Վերիշենում՝ իր հայրական տանը, «թան ուտելու» առաջարկ արեց: Հրավերն ընդունվեց»:

* * *

Արդեն քանի տարի է՝ դեկտեմբերի 31-ին, օրվա երկրորդ կեսին, ընկերներիս հետ բարձրանում եմ Գորիսի Թոզ կապի գերեզմանատան բարձունքը՝ Ղազարի բլուրը, որտեղ իր հավիտենական հանգիստն է գտել մեծ երգահանը: Գնում եմ ընկերներիս՝ Յուրի Ջավահիրյանի, Ռեդիկ Հայրապետյանի հետ: Ժամանակին մեզ հետ էր լինում նաեւ Յուրի Ալեքսանյանը՝ այլեւս լուսահոգի: Գնում ենք՝ սրբատուն գնալու պես, խորին հարգանքով: Գնում ենք ոչ միայն տապանաքարին ծաղիկներ դնելու, այլ նորից ու կրկին նրան ասելու շնորհակալություն մեր ժողովրդին պարգեւած անզուգական տաղերի եւ հույզերի համար: Գնում ենք՝ աստվածային ճամփորդության դուրս եկած նրա հոգուց վերստին օրհնանք հայցելու:

Տարիների ընթացքում մշակված եւ ավանդույթ դարձած այդ արարողության հաջորդ կանգառը Գորիսի քաղաքային գերեզմանատունն է: Այդտեղ էլ այցելում ենք Բակունցների գերեզմանոց՝ հարգանքի տուրք մատուցում Ակսել Բակունցի ծնողների՝ Ստեփան դայու եւ Բոխչագյուլ զիզու հիշատակին:

Եվ միայն դրանից հետո տուն ենք դառնում...

Շատ-շատ գորիսեցիներ են ժամանակ առ ժամանակ, առիթ-անառիթ նույնպես այցելում Գուսանի հանգստարան, խոնարհվում նրա տապանաքարին եւ զորացած, հարստացած, մաքրագործված վերադառնում իրենց օջախները...

ՌՈԲԵՐՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ երկար տարիներ ղեկավարել է Գորիսի շրջանը եւ մտերիմ է եղել Գուսան Աշոտի հետ... Այս զրույցը կայացել է Դադալյանների օջախում 2007-ին:

–Գուսանի հետ վաղուց էինք ծանոթ. հայրս՝ Արմենակ Խաչատրյանը եւ նա ընկերներ էին: Չեմ կարող ասել, թե երբ եմ ծանոթացել նրա հետ, որովհետեւ միշտ միմյանց տուն էինք այցելում: Հայրիկիս մահից հետո շարունակվեց այդ բարեկամությունը՝ չնայած տարիքային մեծ տարբերությանը: Շատ էի սիրում իրեն, իր երգն էի սիրում, փիլիսոփայությամբ ներծծված իր բանաստեղծությունն էի սիրում:

Չնայած ինքս մոտ 20 տարի շրջանի ղեկավարն եմ եղել, կարծում եմ՝ ե՛ւ նախկին, ե՛ւ այսօրվա իշխանությունը չկարողացավ ըստ արժանվույն գնահատել Աշոտին: Սա մեր եւ ապագա սերունդների խնդիրն է: Գոնե իր մահից այսքան տարի հետո գուսանը պետք է գնահատվի ըստ արժանվույն:

– Իսկ ինչպե՞ս էր վերաբերվում

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

մեծարանքին, գնահատանքին, ուշադրությանը: Ի՞նչ վերաբերմունք ուներ մարդկանց հանդեպ:

– Արտակարգ համեստ անձնավորություն էր, մարդամոտ, բարի: Ինքը սիրում էր մարդկանց. բնությունն իրեն այդպիսին էր ստեղծել: Ուրախանում էր Գորիսի ամեն ինչով, գորիսեցիների ամենափոքր հաջողություններով: Երբեւէ չեմ տեսել նրա զայրանալը, ջղայնանալը: Չարությունը բացակայում էր նրա մեջ: Ու նաեւ հումորի մեծ զգացում ուներ:

Մի անգամ Սիսիանի ղեկավարները, ընկերները հրավիրել էին գորիսեցիներին՝ օրը միասին անցկացնելու: Ներկա էր նաեւ Համո Սահյանը: Սիսիանի շրջկոմի առաջին քարտուղար Կիմ Հովհաննիսյանն առաջարկեց խմել ամենամեծ զանգեզուրցու՝ Համո Սահյանի, կենացը: Երբ բոլորս մեծարանքի խոսքեր էինք հղում բանաստեղծին, նա ասաց. «Ամենամեծ զանգեզուրցին ես չեմ, Ակսել Բակունցն է: Երկրորդ մեծը՝ գուսան Աշոտը: Մնացածը «ջահելներ» են... Հետո կիմանաք՝ ով էր գուսան Աշոտը»:

Նրա երգը շատ եմ լսել նաեւ արտասահմանում՝ Սիրիայում, Լիբանանում, Հունաստանում, Ֆրանսիայում եւ այլ երկրներում: Ինձ համար մեծ հայտնագործություն էր, երբ Հալեպի շոգ երեկոներին, փողոցով անցնելիս, հայկական գաղթօջախում լսում էի «Սերս վանքում Տաթեւի» կամ «Ծովաստղիկս»... Նրա երգը լսել եմ անգամ Դեր-Զորում, որտեղ ընդամենը 17 հայ ընտանիք կար: Սա ցույց է տալիս, թե ինչպիսի համընդհանուր սեր կար նրա երգարվեստի հանդեպ թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում:

– Որո՞նք էին նրա սիրած վայրերը. Գորիս քաղաքում եւ դրանից դուրս որտե՞ղ էր սիրում լինել:

– Իրեն հատուկ քայլվածքով տնից դուրս էր գալիս, փողոցով իջնում ներքեւ մինչեւ խաչմերուկը՝ ուսուցչի տան մոտ, որտեղ հիմա հուշաքարն է փակցված: Հիմնականում այնտեղ էր կանգնում, այդ վայրում էին գորիսեցիները հանդիպում նրան: Դրսից եկած հյուրերն էլ անցնելիս՝ զարմացած մոտենում էին. խոսում էր բոլորի հետ:

Հին Խնձորեսկն էր շատ սիրում: Սիրում էր Տաթեւի վանքը եւ այդ ձորը, Որոտանի կիրճը:

– Որեւէ սովորույթ, ավանդույթ հիշո՞ւմ եք նրա կենցաղից, որը բնորոշ էր իրեն:

– Ամեն տարի աշնանը Գորիսում իր հարկի տակ հավաքում էր մտերիմներին՝ մի օր միասին անցկացնելու համար: Շատ չէր խմում, բայց գինի սիրում էր, քիչ-միչ օգտագործում էր: Ամբողջ օրը միասին էինք անցկացնում: Զրուցում էինք, երգում, պարում, հուշեր, պատմություններ պատմում: Ինքն ու տիկին Արաքսյան երգում էին: Այդ հանդիպումները դրանց մասնակիցների հիշողությունների մեջ երկար կմնան...

– Ինչպե՞ս ընտրեցիք գուսանի ածյունն ամփոփելու վայրը:

– Մի անգամ մտերմիկ զրույցի ժամանակ գուսանն ինձ ուղիղ ձեւով հասկացրեց, որ կուզեր իրեն այդտեղ, այդ բլրի վրա թաղեն: Իհարկե, այդ ժամանակ ասացի, որ դեռ պատեհ ժամանակը չէ այդ մասին խոսելու...

Մահվանից հետո հուղարկավորման համար ընտրեցինք այդ վայրը: Գորիսի գրեթե ամեն տեղից այն երեւում է. մի տեսակ հույսի, լույսի խորհուրդ կա մեջը, նեղն ընկած մարդը լիցքավորվում է: Այդ բարձունքից էլ Գորիսն է երեւում:

Ծանր, շատ ցուրտ օր էր, երբ ճանապարհում էինք գուսանին: Ողջ քաղաքն էր մասնակցում հուղարկավորությանը: Շատ էին եկել շրջանի գյուղերից, դրսից: Բոլորն էին ուզում վերջին հրաժեշտը տալ նրան:

– Քանի որ հոբելյանը գուսան Աշոտի արվեստի, հիշատակի հանդեպ ուշադրություն հրավիրելու եւս մեկ առիթ է, ի՞նչ կառաջարկեիք անել նրան ըստ արժանվույն գնահատելու համար:

– Կխնդրեի պետական այրերին Գորիսում կամ Երեւանում գուսանի թանգարանի բացման խնդիրը լուծել: Շատ կուզենայի նաեւ նրա ստեղծագործությունների հատընտիրը հրատարակված տեսնել: Կփորձեմ դիմել ում կարող եմ... Նա արժանի ոչ միայն սրան, այլեւ շատ ուրիշ գնահատանքների:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

«Այունյաց Երկիր» թերթ

01.17. 2007թ. N113 (02)

....Եվ ծնվեց «Բարի հայրիկ» երգը

ԽԱՍԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մեծն Գուսան Աշոտը լայն ժողովրդականություն վայելող մարդ էր ու երգահան: Նա ծնվել է ժողովրդի ծոցից, ապրել նրա կողքին, նրա հետ, նրա հոգսերով: Գուսանի ստեղծած յուրաքանչյուր երգը նախ ժողովուրդն է «գրաքննել», հետո...

Նա հաշվի է նստել ժողովրդի կարծիքի հետ: Դրա համար էլ Գուսանի երգերը մնայուն են, բխում են ժողովրդի հոգուց եւ անցնելու են սերնդից սերունդ, լինելու են հավերժական՝ իր ժողովրդի, իր Այունյաց սարերի նման, իսկ Զանգեզուրի չոր չոլերը միշտ ծաղկելու են:

Ես աշխատում էի Գորիսի թիվ 2 շինվարչությունում, նրա ղեկավարն էի: Աշխատանքի գնալիս ճանապարհս անցնում էր Գորիսի ուսուցչի տան մոտով: Տեսնելով ինձ՝ Գուսանն ասում էր.

– Ախպոր տղա, երգ եմ գրել, տես ոնց է:

Երբեմն խորհուրդներ էի տալիս: Եվ դրանք օգնում էին Գուսանին՝ երգն ավելի խորունկ դարձնելու համար: Ուզում եմ ասել, որ Գուսանը մեծամիտ

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

մարդ չէր, նա հաշվի էր առնում բոլորի կարծիքը, որովհետեւ նա երգը ստեղծում էր բոլորիս համար:

Ամեն տարի Շինարարի օրը նշվում էր օգոստոսի 2-րդ կիրակի օրը: Գուսանը մեր պատվավոր հյուրն էր՝ իր քամանչայով: Մեկ էլ տեսար թե՝ ախպոր տղա, գիտես, Սերոն եկել է:

– Գիտեմ, Գուսան, մեքենան արդեն ուղարկել եմ:

Ու գալիս էր Սերո Խանզադյանը՝ բազմում Գուսանի կողքին: Գորիսի 2 մեծերը մեր կողքին: Դա մեծ պատիվ էր շինարարներիս համար, հարգանք՝ մեր նկատմամբ:

– Ախպոր տղա, ամեն տարի տարբեր տեղեր կազմակերպիր այս միջոցառումը, – ասում էր Գուսանը, որ հմայված-արբեցած բնության անկրկնելի գեղեցկությամբ, արդեն նոր երգի առաջին տողերն էր դնդնում: Եվ բնությունը դառնում էր Գուսանի ոգեշնչման ակունքը: Եվ բնությունն ասես թրթռում էր նրա երգերում՝ դառնալով սեր ու կարոտ:

Մի օր դարձյալ միջոցառում էինք կազմակերպել: Գնացինք Գուսանի հետեւից: Կինը թե՝ Աշոտը հիվանդ է, անկողնում պառկած: Մնացինք շվարած: Ինչ ուրախություն՝ առանց Գուսանի: Դա անհնարին է, հարկավոր է ելք գտնել: Չլսեցինք կնոջը: Խմբով ներխուժեցինք տուն եւ այն «օկուպացրինք»: Թանգուն Սերժոն Գուսանի քամանչան վերցրեց, մեկն էլ շորերը գտավ ու հագցրեց, 3-րդն էլ կոշիկները բերեց: Մի խոսքով, Գուսանին «կոլոլեցինք» շորերի մեջ ու տարանք: Երբ միջոցառումը հասել էր գագաթնակետին, Գուսանը թե՝

– Էս ինչ լավ բան արեցիք՝ ինձ թռցնելով-փախցնելով, հիմա կառավաթումս բոլթա էի տալիս:

Գուսանի երգերը շատ են, մոտիվները՝ բազմազան: Մի օր ասացի.

– Գուսան, սիրո մասին գրել ես, մոր մասին գրել ես, հայրենիքի մասին գրել ես, սար ու ձորի, հանդ ու չոլի մասին գրել ես, հոր մասին ինչո՞ւ մի երգ չես գրում, առհասարակ, ոչ մեկը հոր մասին չի գրում:

Մտածեց, մտածեց ու թե՝ ախպոր տղա, նկատողությունդ տեղին է:

Գուսանն այդ օրվանից քուն ու դադար չուներ: Գրում էր, ջնջում էր, քամանչան էր գործի դնում... Ու մի օր՝ ախպոր տղա, երգի խեմքն արդեն կա:

3-4 ամիս տքնեց-ստեղծագործեց Գուսանը: Լսում էի երգը եւ ասում՝ չէ, Գուսան, երգը կենդանի չի, 3-րդ քառատողը՝ ոնց որ սառած ճաշ: Տքնեց-տքնեց ու ծնվեց «Բարի հայրիկ» հիասքանչ երգը, որ անմիջապես ժողովրդի մեջ մտավ, այն երգում էին ամենուր, այն մեծ սիրով ընդունեցին ռամիկն ու իշխանը, երգը դարձավ բոլոր որդիների աղոթքն առ հայր-աստվածը:

Գուսանի ամեն երգն իր պատմությունն ունի: Մի օր էլ թե՝ Ռաֆոյի համար երգ պիտի գրեմ: Ռաֆոն էլ Ռաֆֆի Հովհաննիսյանն է: Ու գրեց «Հուշարձաններ, հուշարձաններ» երգը:

Ռաֆֆի Հովհաննիսյանը համերգների էր եկել Գորիս ու երգում է «Հուշարձաններ, հուշարձաններ» երգը: Դահլիճը ալեկոծվել է թե երգի, թե կատարման համար եւ հոտնկայս, ինքնամոռաց ծափահարում է, ծափահարում: Գուսան Աշոտը բեմ բարձրացավ ու լավ կատարման համար համբուրեց Ռաֆֆի Հովհաննիսյանի ձեռքերը: Եվ Ռաֆֆի Հովհաննիսյանը ոգեւորված Գուսանի գնահատանքից, գիշերը, ժամը 4-ին, Գորիսի կենտրոնական հրապարակում սկսում է երգել Գուսանի երգերը: Հրապարակում գտնվող հյուրանոցի հյուրերը, շատերը՝ ներքնազգեստով, դուրս են գալիս հյուրանոցի պատշգամները եւ զմայլվում թե՛ երգերով, թե՛ Ռաֆֆի Հովհաննիսյանի կատարումներով: Լուրն արագ տնից-տուն, փողոցից-փողոց, թաղամասից-թաղամաս է հասնում, եւ ահել ու ջահել լցվում են հրապարակը...

Որտեղ Գուսանը, այնտեղ սեր, համերաշխություն, համաձայնություն: Հորեղբորս տղան աղջիկ էր փախցրել: Դե, գիտեք դրա հետեւանքները՝ ոստիկանություն, դատ... Աղջկա ծնողները բարկացած-փրփրած են: Մեր կողմից ով ընկնի նրանց ձեռքը՝ «կհոշոտեն»: Ինչ անենք, ոնց բարիշենք: Դիմեցինք Գուսան Աշոտին: Գալիս է Գուսանն ինչպես կուռք, ինչպես մի քուրմ: Ով կարող է դիմանալ նրան, Գուսանը պատիվ անի ու մտնի քո օջախը, դու էլ.... Նրա նկատմամբ տածած սերն ու հարգանքն այնքան մեծ է, որ աղջկա ծնողներին մնում էր իրենց օրհնությունը տալ երիտասարդներին:

Այսպիսին է Գուսան Աշոտը՝ բոլորին կարեկից, օգնող: Նա մեծ էր թե՛ որպես մարդ, թե՛ գուսան: Նա գորիսեցու տան ամենասպասված հյուրն էր, ավելի ճիշտ՝ պատվավոր անդամը: Նա գորիսեցիների տան խաղաղության աղավնին էր, բարի հրեշտակը:

Ամեն նոր տարի Գորիսի ղեկավարները գնում էին Գուսանի Ամանորը շնորհավորելու: Դա բոլորի համար չգրված օրենք էր, ավանդույթ: Ես գնում էի հունվարի 2-ին: 1989 թվականն էր: Այնպես ստացվեց, որ հունվարի 13-ին գնացի Գուսանին շնորհավորելու: Երբ մտա տուն, տեսա Գուսանն ու կինը ճաշում են: Սեղանին բրնձով քաշովի էր դրված: Իրար ձեռք սեղմելուց հետո Գուսանը թե՝ Քսի, տկճոռը պաց ըրա: Կնոջը՝ Արաքսյային կրճատ Քսի էր անվանում Գուսանը: Արաքսյան բերեց կավե ամանը՝ ղավուրման մեջը լիքը: Կինը ղավուրմայից հանեց-լցրեց քաշովու մեջ, կարտոֆիլն էլ խորովեց, հետո բերեց գինու եւ օղու շշերը, որոնց վրա գրված էր, ասենք, Կոռնիձոր, Քարահունջ, Գորիս... Այսինքն, այն բնակավայրերը, որոնց ղեկավարները բերել էին Գուսանի համար: Կերանք-խմեցինք, լավ քեֆ արեցինք: Գիշերը ժամը 4-ն էր արդեն, երբ հրաժեշտ տվեցինք Գուսանին: Իսկ դրսում արդեն 30 սմ հաստությամբ ձյուն էր նստել:

Գուսանն իր ամեն գրքից ինձ նվիրում էր՝ հետաքրքիր մակագրությամբ: Վերջին գիրքն ինձ նվիրեց մահվանից մի քանի օր առաջ:

«Նվիրում եմ երգարանս
սրտի սիրով մեր Խաչանին,
երգ-արվեստի սիրահարին,
Տաղանդավոր շինարարին:
Ուր էլ գնա, ուր էլ մնա,
Իր հետ լինի աստծո բարին:
Գուսան Աշոտ
15.1.89 թ.:»

Հավերժություն գնաց Գուսան Աշոտը: Գնաց ու մեզ թողեց իր երգերը՝ որպես օրհնանք: Երանի մեզ, որ ծնվել ենք Գորիսում, որ բախտ ենք ունեցել շփվելու Գուսանի հետ, լինելու նոր ծնված նրա երգի առաջին քննադատն ու լսողը:

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

Գինին ու գինեկռիվը Գորիսում

ՀԱՏՎԱԾ ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՆՈՒՆ ՀՈԴՎԱԾԻՑ

Իր կյանքի վերջին 20 տարին տաղանդաշատ գուսան Աշոտը (Դադալյան) մշտապես բնակվել եւ ստեղծագործել է հայրենի Գորիսում:

Բոլորին հայտնի է, որ գուսանը լայն շփումների մեջ էր մեր քաղաքի ողջ բնակչության հետ, այդ թվում նաեւ շրջանի ղեկավար աշխատողների:

Հաճախակի նա գալիս էր կուսշրջկոմ ոչ թե անձնական որեւէ հարցով, այլ ուղղակի զրուցելու, հարցնելու, իր նոր ստեղծած գործը ներկայացնելու կամ էլ դրա յուրօրինակ քննարկումն անելու եւ այլն: Քանի որ առիթը ներկայացավ, ասեմ, որ հղանալով որեւէ ստեղծագործություն՝ լիներ դա երգի մեղեդին, թե խոսքը, դուրս էր գալիս քաղաք եւ սկսում ներկայացնել ժողովրդին: Հատկապես, արմունկը հենած ուսուցչի հին տան պատուհանի գոգին, ձեռքի ափն այտին՝ փողոցի մայթով անցնող-դարձողներին՝ լինեին նրանք մտավորական թե շինական, բանվոր թե գյուղացի, երիտասարդ թե ծեր, ով պատահեր, նույնիսկ անծանոթների կարդում էր բանաստեղծությունը, երգում մեղեդին եւ կարծիք հարցնում:

Բնականաբար, լինում էին մարդիկ, ովքեր իրենց կարծիքը հայտնելու հետ անում էին նաեւ արժեքավոր առաջարկություններ: Դրանք մեծ գուսանն ուշադրությամբ լսում էր եւ օգտագործում: Ահա այսպես՝ ժողովրդի հոգու եւ սրտի միջով նա հղկում էր յուրաքանչյուր գործ, որի համար էլ երգերը միշտ ջերմորեն են ընդունվել եւ ընդունվում: Սա գուսանի ստեղծագործելու ձեւի առանձնահատկությունն էր, որը պետք է բոլորն իմանան, հատկապես մեր նորօրյա երգահանները:

Հայտնի բան է, որ գուսանները կին, սեր, հայրենիք, աշխատանք երգելու հետ նաեւ գինու գովքն են արել: Բացառություն չէր Գուսան Աշոտը:

Սակայն բացառություն էր այն, որ նա նաեւ լավ գինի պատրաստող էր ու կռվեցնող: Ամեն աշնան մեր միջնորդությամբ Կորնիձորի կոլտնտեսության երջանկահիշատակ նախագահ Անդրանիկ Սրապյանը 350-400 կգ խաղող էր ուղարկում գուսանին: Նա դրանից պատրաստում էր անմահական գինի: Երանի նրանց, ովքեր բախտ են ունեցել վայելել: Սա ասում եմ ամենայն լրջությամբ: Գինի պատրաստելուց հետո գուսանը գալիս էր շրջկոմ, շնորհակալություն հայտնում ուշադրության համար եւ միաժամանակ ասում, որ մի տոճ գինի է առանձնացրել՝ պահում է մեզ հյուրասիրելու համար: Բնականաբար, հանգստացնելով նրան, ասում էինք, որ դրա կարիքը չկա: Բայց նա մնում էր իր կարծիքին եւ բազմիցս հիշեցնում այդ մասին:

1989թ. ձմռանը՝ իր մահկանացուն կնքելուց 5-6 օր առաջ, վերջապես նրան հաջողվել է կուսշրջկոմի ղեկավար աշխատողների մի փոքր խմբի իր տուն հրավիրել: Գինին իսկապես անմահական էր, հանդիպումը՝ անմոռանալի: Այդ օրը վերջին անգամ ձեռքն առավ անդավաճան քամանչան, իսկ նրա շնորհաշատ, սիրունատես տիկին Արաքսյան կատարեց գուսանի հոգեզմայլ երգերը: Լիովին տեղին է հիշել մեծ Թումանյանի «Գինին հոսում էր գետի նման» պատկերավոր տողը:

Գինի էր վայելում նաեւ գուսանը՝ շառագունել, գինեգույնի էին փոխվել նրա այտերը: Քանի որ երկար տարիներ նա սիրտ-թոքային անբավարարություն ուներ, մենք նրան նախազգուշացրինք, որ գինին կարող է խնդիրներ առաջացնել: Գուսանն այսպես արձագանքեց. «Չէ, չեմ խմում, ուղղակի դնում եմ պռշիս»: Որոշ ժամանակ անց ակնհայտ էր, որ գուսանն ախորժակով գինի է խմում: Երբ նորից հիշեցրինք նրան, այսպես պատասխանեց. «Ախր շտահս տալիս ա, հո՞ւնց չխմեմ»:

Ի՜նչ լավ էր, որ գուսանն այդ օրն իր սրտի քեֆին չդիպավ, մեզ էլ պատվեց այդ անմոռանալի, բայց ցավալիորեն վերջին հանդիպումով:

«Այունյաց Երկիր»
9 դեկտեմբերի 2016թ., N40

Գուսան Աշոտ գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

Հավերժում է լեռների երգը

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Գուսանը նոր երգ էր գրել շրջանի գյուղերի մասին: Բերեց խմբագրություն: Ընթերցեցինք: Դողդոջուն, ծերունական ձայնով սկսեց երգել:

- Ուզում եմ երգի մեջ անմահանան մեր հրաշք գյուղերը, - ասաց նա: – Ցանկանում եմ երգը տպագրել թերթում, չհամաձայնվեցին՝ «Շատ է, - ասացին, - մեկ-երկու քառյակ՝ կարող ենք»: Գուսանը կոտրվեց:

Հնարավոր չէր անտարբեր նայել ծերունական հանդարտ, բայց հաստատուն քայլերով հեռացող գուսանին:

- Չվշտանաս, գուսան, - հաջորդ օրը տեսնելուց՝ ասացի ես, - դու մնացական ես, իսկ նրանք՝ գնացական:

* * *

Գուսանի 78-ամյակի առթիվ հոդված էի գրել՝ «Հավերժում է լեռների երգը»:

Հաջորդ օրը փողոցում հանդիպելով հորեղբորս՝ համբուրել է ճակատը, կարծելով, թե ինքն է գրել հոդվածը: Երբ հորեղբայրս հրաժարվել է, ասելով, որ ես եմ գրել, գուսանը ցանկացել է ինձ տեսնել: Եկավ, ձեռքս ջերմ սեղմեց: Ասացի.

- Գուսան, նստի աթոռիս, թող աթոռս օծվի:

Նստեց եւ անմիջապես վեր կացավ.

- Իմ երգի մասին գրողը օծվելու կարիք չունի:

* * *

Մահից մեկ-երկու ամիս առաջ էր, փողոցում տեսա, ասացի՝ «Գուսան, մի երգ նվիրիր ինձ, անմահանամ»:

Ժպտալով նայեց աչքերիս՝ «Բոլոր երգերս էլ քեզ են նվիրված»:

81 տարեկանում էլ գուսանը մնում էր հաճոյասեր ասպետ, կյանքին ու գեղեցիկին սիրահար:

* * *

Ձմեռային երեկո էր: Տուն էի դառնում: Գուսանը միայնակ կանգնած էր հրապարակի անկյունում, աչքերը կկոցած նայում էր հանդարտ թափվող փաթիլներին: Կանգնել-զրուցում ենք: Տխուր մի նախազգացումով՝ զրույցը շրջվեց մահվան մասին: Ասացի՝ «Գուսան, կարդացել եմ, որ մարդ մեռնելուց հետո 38 օր դեռ շարունակում է զգալ: Գուսանը ներողամիտ ժպտաց.

- Չհավատաս: Մեռնելուց հետո ի՞նչ զգալ: Գիտե՞ս, Խաքանին է ասել՝

Հոգուդ հավքը հանկարծ թռավ՝
ի՞նչ ես դու,
Ճամփիդ կեսում ձիդ որ կորավ՝
ի՞նչ ես դու,
Եթե մարդ ես-կյանքը փոխ է
տված քեզ,
Փոխ տվողը որ եկ տարավ՝
ի՞նչ ես դու:

Ասացի.

- Գուսան, իսկ գիտե՞ս Թումանյանն ինչ է ասել.

Տիեզերքում ասպվածային մի
ճամփորդ է իմ հոգին.
Երկրից անցվոր, երկրի փառքին
անհաղորդ է իմ հոգին,
Հեռացել է ու վերացել մինչ
ասպղերը հեռավոր,
Վար մնացած մարդու համար
արդեն խորթ է իմ հոգին:

Գուսանը փառավորվեց, ասես մի բաժակ լեռնային քաղցրահամ ջուր խմեց.

- Անուշ տողեր են: Մի անգամ էլ ասա:

Զարմանալիորեն գուսանը կլանում էր ամեն մի բառը՝ մանկան մաքուր անմիջականությամբ:

Հեռանալիս ասաց.

- Բայց դու էդպիսի բաների մասին մի մտածիր, անշունչ նյութը ոչինչ զգալ չի կարող:

* * *

1983 թվականն էր: Գուսանը նոր երգ էր գրել, բերել խմբագրություն՝ տպագրելու: Երգեց՝ դուրեկան, վետվետուն ձայնով: Նրան սկսեց ձայնակցել աշխատակից Ալինա Գալստյանը:

Քիչ հետո խմբագրության կաբինետը վեր էր ածվել մի փոքրիկ, ինքնատիպ ֆիլհարմոնիայի դահլիճի: Երգում էինք խմբով, ոգեւորված՝ «Հրռանա՛նք վեչ մեր նախշարար էս ծյորան...»:

Գուսանի ուրախությանը չափ ու սահման չկար, նա համբերությամբ սովորեցնում էր, ուրախանում մեր լսողությամբ:

Դա երգի առաջին կատարումն էր եւ թերեւս՝ ամենացանկալի եւ անսպասելի խմբով:

Իսկ երբ երգը տպագրվում էր, Գուսանը բանասերի, լեզվագետի զարմանալի զգացողությամբ տասնյակ անգամ վերընթերցում, զանգահարում, տեղեկանում էր տառի ու բառի, ստորակետի ու բազմակետի մասին՝ հանկարծ սխա՛լ չլիներ...

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում

ՅՈՒՐԻ ՁԱՎԱՀԻՐՅԱՆ. «Գուսանի մեջ անչափ բարություն ու համեստություն կար»

Գուսան Աշոտի կերպարն ամբողջանում է նրա ժամանակակիցների ներկայացրած հետաքրքրական դրվագներով, հուշերի պատառիկներով: Ճիշտ է՝ նրա տարեկիցներն իր նման հրաժեշտ են տվել երկրային կյանքին, բայց նրա ապրած ժամանակաշրջանի ավելի երիտասարդ սերունդն ապրում է եւ հիշողություններ պատմում, նրանցից մեկը Յուրի Ձավահիրյանն է: Վարպետի հետ հաճախակի էր շփվում, նաեւ մասնագիտության բերումով (երաժշտությամբ էր զբաղվում Յուրին):

Իսկ երբ Գորիսի շրջանային կուլտուրայի տան տնօրենն էր, իր նախաձեռնությամբ ժողգործիքների անսամբլ ստեղծվեց: Մայրաքաղաքում կայացած հանրապետական փառատոնում անսամբլը 1976 թվականին հաղթող դարձավ, ինչի համար շնորհեցին ժողովրդականի կոչում: Դա նշանակում է՝ երկու հաստիք ունենալ՝ ժողգործիքների անսամբլի ղեկավար եւ խմբավար: Տասը տարուց ավելի գուսանը Երեւանում էր բնակվում, ամառները զով Գորիսում էր անցկացնում: Յուրի Ձավահիրյանը պատմում է, որ զգացել էր, որ Գուսանը մտադրություն ունի հաստատվել Գորիսում: Ուստի առաջարկեց ժողգործիքների անսամբլին հատկացրած այդ երկու հաստիքը. մեկը՝ իրեն, մյուսը՝ կնոջը՝ Արաքսյային, ով Աշոտի երգերի առաջին կատարողներից եւ տարածողներից էր: Գուսանը համաձայնեց, մանավանդ միշտ ցանկություն ուներ հայրենի քաղաքին օգտակար լինել:

Անսամբլն այն ժամանակ շրջագայում էր շրջանի գյուղերով, համերգներ տալիս: Բավական էր, որ համերգի

ազդագրում լիներ՝ խմբի ղեկավար՝ Գուսան Աշոտ, եւ լեփ-լեցուն դահլիճն ապահովված էր. *«Մի անգամ շրջանի մեծ գյուղերից մեկում էինք, եթե չեմ սխալվում՝ Խնձորեսկում, առաջին կատարումը գործիքային երաժշտություն էր, հետո երբ Գուսանը բեմ մտավ, դահլիճը մեկեն կերպարանափոխվեց, ոտքի կանգնեց, բուռն ծափերով ողջունեց Գուսանին, որի ակնախոռոչներում հուզմունքից արցունքներ երեւացին, գլխի շարժումով հայտնեց իր երախտագիտությունը: Նման ձեւով որտեղ էլ գնացել ենք, պատկառանքով էին ընդունում Գուսան Աշոտին, ժողովուրդը սիրում եւ գնահատում էր նրան: Ինքն էլ բոլորին ճանաչում էր մանուկ, թե տարեց, բոյ-բուսաթից, տեսակից (սոյից) էր ճանաչում: Բարեւելուց հետո մեկ էլ՝ էսինչի թոռն ես կամ էլ էսինչի տղան ես, հորդ լավ եմ ճանաչում»:*

Մյուս ուշագրավ դեպքը, որ ներկայացրեց մեր զրուցակիցը, Գուսան Աշոտի ստեղծագործելուն էր առնչվում: Նրա փոխանցմամբ՝ Աշոտը միշտ պրպտումների մեջ էր, մտքի հետ կռիվ էր տալիս. *«Քեզ հետ խոսում էր, բայց մտքերն այլ տեղ էին, անընդհատ հորինում էր: Խոսքը երգի տեքստի մասին էր: Ինքը կարող է՝ երգելով էր գրում: Դա չգիտեմ: Բայց երեւույթը կար: Հանկարծ մտքին մի բան էր գալիս, ասում էր՝ մի որոպե սպասեք, վազում էր տուն: Սկզբից գլխի չէի ընկնում, մտածում էի՝ տարօրինակություն ունի: Հարցնում էի՝ Գուսան ջան, խեր լինի: Պատասխանում էր՝ այ բալա, մուսաս կյամ ա, պիտի վազեմ տուն, թղթին տամ, կյամ»:*

Ինչ վերաբերում է նրա մարդկային հատկանիշներին, Յու.Ձավահիրյանի բնորոշմամբ՝ Գուսանը զուսպ մարդ էր, շատ չափավոր՝ ամաչկոտության հասնող: Նրա մեջ անչափ համեստություն ու բարություն կար: Մի բան էլ՝ Գուսանը սովորություն ուներ իր նոր ստեղծած երգերը ցույց տալ իր մերձավորներին, իմանալ նրանց կարծիքը, նաեւ դիտողություններն էր հաշվի առնում: *«Հիշում եմ,* – պատմում է Յուրի Ձավահիրյանը, – *գրել էր «Հուշարձաններ, հուշարձաններ» երգը: Մոտեցավ, թե՝ մի նոր երգ եմ գրել, արի լսիր: Երգեց, ասացի, Գուսան, այս երգը գրածդ երգերից ամենալավն է, հակադարձեց, թե իր երգերից որը լավը չէ, հետո ավելացրեց, բայց սա գլուխգործոց է»:*

«Մի անգամ՝ «Երեւան» հեռուստաֆիլմերի ստուդիան ուզում էր ֆիլմ նկարահանել՝ մոտ 30 որոպե տեւողությամբ՝ «Գուսանի սերը» խորագրով: Առավոտյան զանգեց, թե «պիտի այսօր գաս իմ միջոցառմանը, ֆիլմը ստեղծողները հարցրել են՝ ո՞վ պիտի նվագի, պատասխանել եմ՝ Յուրան՝ իր խմբով»: Ֆիլմը նկարահանվեց, 1970 թե 1971 թվականին էր: Առաջներում հեռուստատեսությամբ ցուցադրվում էր, այժմ՝ ոչ, երեւի պահոցներում պահպանված կլինի»:

Մեր զրուցակիցը չառանձնացրեց Գուսանի երգերից որեւէ մեկը՝ ասելով, որ բոլոր երգերն էլ սիրում է, քանզի (իր գնահատականն է) Գուսանի երգերի ոճը լրիվ ուրիշ է, ավելի մոտ է կոմպոզիտորների գրած երգերին՝ ե՛ւ դասական ոճ կա մեջը, ե՛ւ ժողովրդական, ե՛ւ գուսանական:

Այնուամենայնիվ, մեր թերթի բարեկամ Յու.Ձավահիրյանին խնդրեցինք ներկայացնել Գուսանի՝ իրեն սրտամոտ երգերի տեքստերից մեկ-երկու քառատող, որ սիրով ներկայացրեց.

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

*«Այ իմ նախշուն, քեզ խոովքը
սազում չի,
Միր էսօր խումար աշկր կանչում չի,
Քու շիկավը շողն ըրեվի պար կկյա,
Վըեր թիպում ես, էս դրախտն էլ
նախշուն չի:*

*Աշկ ենք պացալ, շափաղ առալ
էս ծյորան,
Սեր ենք առալ, շափաղ առալ
էս ծյորան,
Սաս սասի փանք, սրտեր
պանանք կուրոնքվա
փրես,*

*Հազար սրտի խաղ եմ կապալ
էս ծյորան:*

*Հռանանք վրեչ մրեր նախշարար
էս ծյորան,
Նուր ա թափվում էն բուլբուլան,
էն լորան»:*

Գուսան Աշոտը Գորիսում մտավորականության ամենալավ բարեկամն էր, չափազանց մարդամոտ էր: Զավահիրյանը հիշում է, որ տղաներ կային, որոնց իր նոր ստեղծած երգերը ցույց էր տալիս, մանավանդ սիրում էր հայոց լեզվի մասնագետների հետ խորհրդակցել: Ամենաթույլ երաժշտին անգամ ինքն ընդունում էր, ուզում էր որեւէ ձեւով օգտակար լինել: Նաեւ հետամուտ էր, որ շնորհալի ստեղծագործողները գուսանի կոչում ստանան: Ինքն անձամբ երկու հոգու երաշխավորել էր, որ գուսանի կոչում շնորհեն:

Զրույցի ավարտին մեր զրուցակիցը մտահոգություն հայտնեց, որ այժմ Գորիսում մատների վրա կարելի է հաշվել ժողովրդական գործիքներ նվագողները. մանավանդ քամանչա, թառ եւ ուդ: *«Վաղը, մյուս օրը, եթե ժողգործիքների մի նոր անսամբլ ստեղծելու ցանկություն լինի, ժողովրդական գործիքներ նվագող չի ճարվելու: Նախկինում յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկություն ուներ ինքնագործ խումբ, իսկ մեր օրերում գեղարվեստական ինքնագործունեության ավանդույթները գնալով մարում են»,* – մտահոգություն է հայտնում Յուրի Զավահիրյանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մտորումներ, հուշեր...

*Գարնանային մի օր, կույսի սիրով արբած, երգի աշխարհ մտար,
Ունենալով սիրող մեծ սիրտ, փոքրիկ մախաղ հովվական,
Սեգ ժայռերի ամպածրար կատարները խոնարհվեցին քո առաջ,
Առուները, արծաթ-զանգակ, քեզ մոտեցան, անց կացան,
Նայեցիր լուռ, արտասվեցիր, ձեռքով արիր հեռացար:
Ասիր, գնում եմ ես սիրո կրակն անշեջ պահեմ,
Շաղոտ, շողոտ իմ երգերով մարդկանց պարերը վառեմ,
Որպեսզի մեր ջնաղ դարում չարի սերմը ծիլ չտա,
Տատրակի պես որ կլկլա սերն ու գինին աշխարհում:
Ինչ ունեիր նվիրեցիր սիրող սրտի տերերին,
Նավակը քո երգի ծովում ափ դուրս եկավ, մեծ Վարպետ:*



ՌՈԲԵՐՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Դակված չեմ կարծելու, որ եղել եմ Գուսան Աշոտի ընկերը, քանզի դա վերամբարձ է հնչում, բայց, որ երկար տարիների ընթացքում, հասարակ մահկանացուս եղել է նրա մտերիմ բարեկամներից, եղել նրա երկրպագուն, ոգեւորել նրան, պարծեցել նրանով, վայելել նրա սերն ու հարգանքը, դա, թերեւս ինձ համար անժխտելի է:

Քանի որ մեծերը, ի դեմ Գուսանի, մեծ ընկերներ պիտի ունենան, եւ նա ուներ, հանձին իր համերկրացիների՝ Ս.Խանզադյանի, Գ.Սեւունցի, Ս.Այվազյանի, Համո Սահյանի, Աշոտ Սաթյանի, Տաթեւիկ Սազանդարյանի, նրանց համարելով մեր լեռնաշխարհը պանծացնողներ, որոնք արար մարդկությանը մատուցեցին մեր պատմությունն ու երգը:

Սերս ժողովրդական բանահյուսության, աշուղական, գուսանական արվեստի նկատմամբ գալիս է տակավին պատանեկան տարիներից:

Հոգեհմա, հոգեզմայլ, հարաբաբախ, գողտրիկ շինականի երգերը, խաղիկները, հանելուկները, հորովելները, առակները, ասացվածքները, հեքիաթները, պարերը, նվագները, աշուղական մրցումները դարեր շարունակ կրթել, դաստիարակել են հայ մարդուն, ոգեշնչման աղբյուր հանդի-

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

սացել, կոչել բազում սխրանքների:

Եվ հազար անգամ ճշմարիտ էր Մեծն Կոմիտասը, երբ հայ երգի արմատները, սաղմը, հենքը, հիմնաքարը որոնում եւ գտնում էր ժողովրդա-գուսանական արվեստի մեջ:

Հետագայում ժողովրդա-գուսանական արվեստը շարունակեցին եւ նոր բովանդակություն, փայլ ու հմայք տվին նրան, բանաստեղծականի հետ կապեցին անմահ Սայաթ-Նովան, Ջիվանին, Շերամը, իսկ մեր օրերում այդ արվեստի շարունակողը հանդիսացավ Գուսան Աշոտը, որի երգերում հնչած մեղեդիները եւ բանաստեղծական խոսքը մեկը մյուսին գերազանցեցին եւ որի համար էլ դժվարանում ես իրարից զատել Աշոտ լիրիկ բանաստեղծին Աշոտ երգահանից, քանզի նա կարողացավ հմտորեն, հավասարապես իրար զոդել, կապակցել, դարձնել նույն շղթայի տարբեր օղակներ եւ հպարտորեն, բաց ճակատով, ժողովրդի կողմից կոչվել մերօրյա Սայաթ-Նովա, եւ ինչպես մեր բոլոր մեծ արվեստագործները, Գուսանը Աշոտը եւս զգում էր իր քանքարի ուժը, իր մեծությունը, իր հավերժությունը:

Գուսանի մասին դեռեւս 1938 թվականին իր հեղինակավոր կարծիքն է հայտնել հայ պոեզիայի վարպետ Ավ.Իսահակյանը:

- Երբ լսեցի երիտասարդ աշուղ Աշոտի երգը, լսեցի, հուզվեցի եւ ասացի. փառք Աստծուն, Սյունյաց Գողթանի ոգին կենդանացել է:

Մեկ անգամ, երեւի հիշելով վարպետի գնահատականն իր մասին, հանկարծակիի գալով դիմեց ինձ:

- Գիտես, Ռոբերտ, Արամ Խաչատրյանը նույնպես մերոնցից է, նրա ապուպապերը հռչակավոր Գողթան գավառից են:

Ասում է, մանկան պես ցնծում, նայում աչքերիս, ոգեւորվում, որ փարատեց կասկածս, ապա նորից ավելացնում:

- Բա՛, ի՞նչ էիր կարծում, որտեղից պետք է սկիզբ առներ նրա երաժշտական ժառանգությունը, եթե ոչ Գողթանի գուսաններից:

Մեղքս ինչ թաքցնեմ, առաջին անգամ էի լսում այդ մասին:

Գուսանն առանձին հպարտությամբ էր նշում, որ հռչակավոր երգահան Աշոտ Սաթյանն իրեն անվանել է «Լեռնային արծիվ, Զանգեզուրի բարի ծնունդ», իսկ աշխարհահռչակ հայուհի Թամարա Պետրոսյանը՝ Սովետական միության ժողովրդական արտիստուհին, ապրելով եւ ստեղծագործելով Տաշքենդում եւ որին ուզբեկները նրան որպես ուզբեկ են ճանաչում եւ պատվելով՝ Թամարա խանում են կոչում, աշխարհի տարբեր բեմահարթակներում իր երգ-պարով կատարում էր Գուսան Աշոտի «Սարի սիրուն յար» եւ «Զանգեզուրի չոր չոլերը ծաղկել են» երգերը, նամակագրությամբ խնդրում էր նոր երգեր ուղարկել:

Հայաստանի գրողների միության նախագահ, արձակագիր Վարդգես Պետրոսյանն իր հիացմունքն է արտահայտել Գուսանի երգարվեստի նկատմամբ՝ հիշելով «Ծովաստղիկս» երգի մեջ գործածված «Ծովը մեկ-մեկ կալեկոծվի, փոթորիկն իմ սրտով անցավ» նախադասությունը:

- Ախր շատ զարմանահրաշ է, ինքնատիպ...

Պատմում է Գուսանը հպարտությամբ, որ շրջել է Հայաստան աշխարհը ծայրեծայր, գյուղ ու քաղաք չի թողել, գուսանական իր խմբով երգել է, նվագել սադափապատ իր քամանչով, ուրախացրել ժողովրդին, արժանացել նրա ծափողջույններին, գովեստներին, շնորհակալություններին:

Պատմում է Գուսանը հպարտությամբ, որ Արեւ Բաղդասարյանը հայ երգն ու պարը տարել է հեռու աշխարհներ, իր անսպառ տաղանդի ուժգնությամբ մատուցել այն օտար ափերի բազմալեզու մարդկանց, ծանոթացրել նրանց հայ արվեստին, որի երգացանկում միշտ էլ եղել է նաեւ իր երգերից: Իր երախտագիտությունն արտահայտել է իրեն հատուկ ինքնատիպությամբ. ոսկյա փայլաթերթ է զետեղել տվել Գուսանի քամանչայի վրա, փորագրել տվել հետեւյալ նախադասությունը. «Ժողովրդական արտիստ Գուսան Աշոտին, ժողովրդական արտիստուհի Արեւ Բաղդասարյանից»: Անձամբ ես շատ եմ վերցրել Գուսանի քամանչան, կարդացել նվիրական խոսքերը:

Պատմում է Գուսանը սրտի թրթիռով, տխրում սրտանց, որ այլեւս չկա անզուգական Թաթուլ Ալթունյանը, ով առաջինն է օգնել իրեն, մշակել երգերը եւ իր ղեկավարած համույթով կատարել տվել այն, հանձնել հանրությանը:

- Մեծ արվեստագետ էր, փառք ու պատիվ նրան, շատ բանով եմ պարտական նրան, «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչմանն արժանիորեն արժանացած այդ ազնվագույն մարդուն:

Վաղարշակ Սահակյանը նույնպես առաջին կատարողներից էր, ինձ հետ եղբայրացած... Ապա թվարկում է անվանի երգիչ-երգչուհիներին, ովքեր նույնպես երկար տարիներ կատարել են ռադիոյով, հեռուստատեսությամբ, տարբեր բեմահարթակներում իր երգերը. Շողիկ Մկրտչյան, Լուսիկ Քոշյան, Օֆելյա Համբարձումյան, Հովհաննես Բաղալյան (ով նաեւ նոտագրել է իր մի շարք երգերը), Նորայր Մնացականյան, Ռուբեն Մաթեւոսյան, Ռաֆֆի Հովհաննիսյան, Պապին Պողոսյան, Վալյա Սամվելյան, Ֆլորա Մարտիրոսյան եւ ուրիշներ:

Բարձր գնահատելով նրա վաստակը հայ երգարվեստի ոլորտում, նրա երգերի ժողովրդականությունը, կառավարությունը նրան արժանացրեց «Հայաստանի ժողովրդական արտիստի» բարձր կոչման: Կոչումը ստանալուց հուզվեց, սիրտն ուժգնորեն տրոփեց, ուրախացավ, որ գնահատվեց, ուրեմն իր գրչով կարողացել է ծառայել իր կողմից անհունորեն սիրված հարազատ ժողովրդին: Կոչումը պարտավորեցնող է, չպետք է հուսախաբ անել, ի փառս հայ երգի պետք է ավելի շատ աշխատել:

Շատ նամակներ էին հղում նրան իր գործընկերները, գուսաններ Հավասին, Շահենը, Բագրատը, Աշխույժը, ուղարկում նրան իրենց նոր լույս տեսած գրքերը՝ մակագրությամբ, նրան համարելով գուսանական արվեստի բարձրակետ:

Գուսանը, իր առաջարկությամբ, ինձ տանում է ցույց տալու իր հայրական տունը, երեւի կարոտել է, որտեղ ծնվել եւ մեծացել է: Մոտենում ենք փոքրիկ քարաշեն տնակին, նա համբուրում է պատի քարերը, ա՜խ քաշում, ցավով պատմում ընտա-

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

նիքի պատմությունը, բազմանդամ, ավանդապաշտ հայ ընտանիք, աղքատի կարգավիճակ, հոր՝ Հայրապետի գլխավորությամբ, որոշ ժամանակ մնալուց հետո, խոհերը ցրելու նպատակով, թեւանցուկ եմ անում նրան եւ վերադառնում ենք: 1933 թվականին, քաղաքի կենտրոնում, գնում է երկհարկանի տուն՝ հողամասով, մարդավարի ապրելու հույսով:

Ի՞նչ իմանար իմաստուն գուսանը, որ հայրական տան փողոցը, որը կրում էր Ստալինի անունը, հետագայում դառնում է «Սովետների», իսկ իր մահից հետո պետք է կոչվեր «Գուսան Աշոտի» փողոց, նախկին «ուսուցչի տան» լուսամուտի գոգին հենվելով (որը նույն փողոցում է), զրուցում էր մարդկանց հետ, հարց ու փորձ անում նրանց, խորհուրդներ տալիս, խմում կողքի ցայտաղբյուրից «Ակների» սառնորակ ջրից, պատին պետք է փակցվեր գրանիտյա ցուցանակ հետեւյալ գրությամբ՝ «Այստեղ էր Գուսան Աշոտը դնդնում նորաստեղծ իր երգը սիրահար ունկնդիրներին»:

Ի՞նչ իմանար իմաստունը, որ քաղաքի կուլտուրայի պալատը, այնտեղ գործող ժողովրդական համույթը կոչվելու էին իր անվամբ:

Ի՞նչ իմանար իմաստունը, որ կուլտուրայի տան առջեւ դրվելու էր իր մարմարյա կիսանդրին, որի վեր խոյացող գրանիտյա սեւ պատվանդանին գրվելու էր նրա երգերից փոխառնված խոսքերը՝ «Հազար հողմեր քեզ չեն մաշել»:

Գարնանային տաք եղանակ է, մայր բնությունը կանաչ շորեր է պարգեւել ծառերին, ծաղկել, նորահարս են դարձել նրանք՝ սպիտակ երանգով: Միջօրե է, հանդիպում եմ Գուսանին, առաջարկում գնալ կենտրոնական գերեզմանատուն (նա այդ մասին վաղուց էր ինձ հիշեցրել), համաձայնում է սիրով: Գնում ենք մանրիկ քայլերով, գիտեմ, չի կարելի նրան ծանրաբեռնել, ուժերը տեղի կտան, հիվանդ է վաղուց, տառապում է բրոնխիալ ասթմայով, շնչարգելություն ունի: Ճանապարհին խոսում ենք արվեստի մասին, դիմում է ինձ, հարցնելով.

- Ռուբենս, Սայաթ-Նովայի երգերից այժմ քանիսն է կատարվում քո կարծիքով:

- Մոտ 50 երգ, տալիս եմ պատասխանը:

- Իմ երգերից հետագայում կկատարե՞ն 20 երգ:

- Կկատարեն, վարպետ, անշուշտ կկատարեն, դեռ մի բան էլ ավելի, գոհարներ են քո երգերը եւ բանաստեղծական խոսքով, եւ մեղեդայնությամբ:

- Հապա էլ ինչ ես ուզում ինձնից, ուրեմն կամ եւ կլինեմ, կե՞ցցե երգի արքա Սայաթ-Նովան, - ասում է, ծիծաղում, նայում դիմացի սարալանջին:

Իսկ ես հիշեցնում եմ նրան իր երգի տողերը՝ ձեւափոխված.

- «Թեկուզ գլխիդ ծյունն էլ նստի Մասիսի, Չվշտանաս, լանջին գարուն կբացվի» ...

Մտնում ենք գերեզմանատուն, եռակի անգամ, սովորության համաձայն, աջ ձեռքի մատներով հպվում շիրմաքարերին, համբուրում, նստում կողքի քարերի վրա, վարպետը խոր հոգոց է հանում, ա՜խ քաշում: Շիրմաքարերից մեկը գրանիտյա է, ավագ որդունը, ով ընտանիքով ապրում էր Վոլգոգրադում եւ թաղվեց այնտեղ: Գորիսեցի ընկերները, գործարար եւ բարերար Ռուդիկ Բալասանյանի ղեկավարությամբ, հավերժացրին այս հուշակոթողը՝ լուսանկարով: Որդու մահը խոր սպի թողեց Գուսանի սրտում, պարփակվեց հոգու մեջ, դարձավ մարդ-խեցի՝ մինչեւ ժամանակը թեթեւակի սփոփեց նրան: Լացախառն ձայնով խնդրում է կարդալ շիրմաքարի գրերը, կարդում եմ.

- Այս է դամբանը Գուսան Աշոտի որդի Ռուբեն Դաղալյանի
1936-1981
Ընկերներից

Շիրմաքարի աջ կողքին Գուսանի քառյակը.

- Լեռներ, լեռներ, իմ լեռներ,
Վիշտս ծանր մի բեռ է,
Որդիս հոգին ձեզ բաշխեց,
Ինքն էլ ասես մի լեռ էր...
Գուսան Աշոտ

Անցնում եմ բազալտե շիրմաքարի գրությանը՝

Հայրապետ Մարգսի Դաղալյան
1854-1941
Հայկից, Աշոտից

հակառակ կողմին՝

Բալահանում Արզումանի
Դաղալյան
1860-1918

- Վաղ զրկվեցի մորից, - ասում է ու հեկեկում: Որոշ դադար առնելուց հետո.

- Ապրես Ռուբենս, - ինձ է դիմում, - քեզնից Ռուբենիս կարոտն եմ առնում, լացեցի եւ թեթեւացա, լացը թեթեւություն է բերում:

- Չորրորդ դասարանում միասին ենք սովորել, քաղցր ձայն ուներ, երգի ժամերին քո հորինած նոր երգերն էր երգում, ափսոս, շատ ափսոս: 2002 թվականին Գուսանի կրտսեր որդի Համլետը, եղբոր հիշատակը հավերժացնելու նպատակով, իր հովանավորությամբ, տպագրել է տալիս Ռուբենի անտիպ ստեղծագործությունները՝ «Անավարտ քնար» ժողովածուն: Ի՞նչ իմանար իմաստուն Գուսանը, որ հայրական գերեզմանոցում մի շիրմաքար էլ է ավելանալու՝ թոռան, Համլետի վաղամեռիկ որդի Հարութի:

- Գնանք, բավական է, քեզ չի կարելի շատ հուզվել, հիվանդ ես:

- Հիմա էլ գնանք ձեր գերեզմանատունը:

- Կտրականապես մերժում եմ՝ «Ես կպատմեմ մերոնց մասին, դուք պապիս, տատիս, մորս ճանաչում էիք, իսկ հայրս պատերազմում է զոհվել, էստոնական հողում է թաղված, դպրոցի բակում, ախր նա ուսուցիչ էր, ճակատագրի ինչպիսի խաղ»:

- Դե որ ասում ես, գնանք:

Դուրս ենք գալիս գերեզմանատնից, բռնում քաղաք տանող ճանապարհը, ուղեկցում եմ մինչեւ տուն, առողջություն ցանկանալով բաժանվում:

Մի քանի օր հետո, նստած քաղաքային այգու նստարանին, հիշեցնում է ինձ՝ պատմելու հորս մասին (ստիպված պատմում եմ):

1937 թվականի սեւ օրերին, որը նաեւ իմ ծնված տարին է, նեղեցին հորս, գրել էին՝ - «Արամ Հովսեփի Շահնազարյանը կոմունիստների հետ անցկացրած քաղխմբակում տվել է Տրոցկու անունը»: Մոսկվայից ժամանած հանձնաժողովը քննել եւ արդարացրել էր հորս, վերականգնել աշխատանքի:

- Վատ ժամանակներ էին, շատ տուժեց մեր ժողովուրդը, գնդակահա-

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում

րություն, աքսոր...

- Գուսան, - ասում եմ, - դուք ձեր գուսաններով եւ բանաստեղծներով գովերգում էիք «Ժողովուրդների հայր Ստալինին», այդ բռնակալին, հայատյացին...

- Ժամանակներն էին այդպիսին, ինչ կարող էիր անել, մինչեւ անգամ ստիպում էին, ափսոսում եմ, որ գրել եմ, հետագայում մեղա եմ եկել, շատ մի վշտանա, ամենազոր ժամանակն ամեն ինչ տեղը դրեց, ջրերը պարզեց...

- Գուսան, - նորից եմ դիմում նրան, - Նաիրի Զարյանն էլ մեղա եկավ, բայց ես նրան երբեք չեմ ների այն բանի համար, որ մեր ժողովրդի ազգային հերոս զորավարի թուրն անվանել էր արնախում:

- Լսել եմ՝ հորդ մասին հիշատակի խոսքեր ունես, կարդա, լսենք:

Ես շիկնում եմ, ամաչում, իսկ նա խրախուսում է, ու ես կարդում եմ.

- Այրում էին քեզ, այրվում էր հոգիդ, ավելի շուտ ծխեցնում էին այն, լուռ, խորհրդավոր, երկինք մխրճված այն կաղնու նման, որին ծխեցնում էին մոտիկ անցյալում քուրայի համար ածուխ ստանալու, այդպես էլ եւ քեզ...

Դադար եմ առնում, խորը շունչ քաշում, իսկ նա ոգեւորվում է, ստիպում շարունակել:

- Երազելով դու եկար երազային այս աշխարհ, բայց երազներդ, ավաղ, սին երազ դարձան...

Դու հոգնեցիր քեզ հոգնեցնողներից, բայց հոգնեցնողներդ քեզնից չհոգնեցին...

- Լավ, շատ լավ է՝ 37 թվականին տիպական, իսկ քո մասին ի՞նչ կասես:

Դե սա էլ իմ մասին.

- Մեծ նախրի մեջ ես մի գառնուկ անանուն, ծնված տանելու ցավն ու հոգսն աշխարհի, հովվապետի կողմից վաղուց բզկտված է սիրտն իմ...

- Լավ է, բայց ոչ լավատեսական, այլախոհին սազական, բայց ոչ քեզ, երիտասարդ ես, կենսուրախ, հոգիդ մի պղտորի:

- Գուսան, սրանք պարապ ժամանակների գրություններ են, գրիչ ճոճելն իմ բանը չէ, ես գործարանային արհեստավարժ եմ, սիրում եմ մեր պոեզիան, Նարեկացուց մինչեւ Շիրազ, Սահյան, Սեւակ... Գուսան-բանաստեղծներից Սայաթ-Նովային, ում գերեզմանին երկու անգամ այցելության եմ գնացել, սուրբ Գեւորգ եկեղեցու դռան աջ մասում, պատին կպած շիրմաքարի առջեւ չոքել, կարդացել քանդակված տողերը՝ «Ամեն մարդ չի կանա կարդա, Իմ գիրն ուրիշ գրեն է»...Մոմ եմ վառել եկեղեցու խորանի առջեւ, դուրս գալիս համբուրել գերեզմանաքարը:

Ներկա գուսան-բանաստեղծներից, ինչպես գիտես, քո երկրպագուն եմ: Կոմպոզիտորներից սիրում եմ Արամ Խաչատրյանի բալետները, Աշոտ Սաթյանի սիմֆոնիկ-երաժշտական երգերը Տաթեւիկ Սազանդարյանի կատարմամբ, հատկապես՝ «Արարատյան հովտի երգերը» եւ «Լեռների երգը» շարքերը, որոնք ինձ համար երգարվեստի գլուխ-գործոցներ են:

Լրջանում է գուսանը, ձեռքով թփթփացնում ուսիս:

- Բա՛, այդպես էլ է լինում, ապրես, հիմա ճիշտ ճանապարհի վրա ես, լավատեսորեն տրամադրված ժամանակակից կյանքի նկատմամբ:

Գուսանը, տիկին Արաքսյայի հետ, հաճախ էր լինում Գորիս ժամանած արտիստների համերգին, մի քանի անգամ ես էլ եմ եղել նրանց հետ, հիշում եմ գուսան Շահենի գորիսյան համերգը, գուսանն ինձ ծանոթացրեց նրա հետ, մինչ համերգը նա գործընկերոջը տուն էր հրավիրել, ճաշկերույթ տվել, պատվել:

Հաջորդ համերգն արվեստի երախտավորների համերգն էր, նորից երեքով ենք, եկել են Վաղարշակ Սահակյանը, Լուսիկ Քոչյանը, Թբիլիսիից ժամանել է Սայաթ-Նովայի երգերի լավագույն կատարող Գլախո Զաքարյանը, դահլիճը լեփ-լեցուն է, կատարում են նաեւ գուսանի երգերից, նայում եմ գաղտագողի գուսանի դեմքին, ուրախանում է, հրճվում: Համերգի վերջում տիկին Արաքսյան բեմ է բարձրանում, ծաղկեփնջեր նվիրում ծերացած արտիստներին, շնորհակալություն հայտնում: Գուսանը սպասում է ճեմասրահում արվեստակից ընկերների հայտնվելուն, վերջապես հայտնվում են հոգեհարազատ արտիստները, մոտենում է, բռնում նրանց ձեռքը, ողջագուրվում, հարց ու փորձ անում, առողջություն ցանկանում:

Գուսանի հետ շատ էին ցանկանում շփվել Հայաստանի տարբեր քաղաքներից եւ գյուղերից ժամանած զբոսաշրջիկները, գալիս էին խմբերով՝ ծանոթանալու Սյունյաց աշխարհի անձեռակերտ հուշարձաններին, ու պատահում էր, առանց քաշվելու, մոտենում էին, բարեւում, ուրախանում, որ վերջապես իրենց բախտ է վիճակվել տեսնելու գուսանին, խնդրում էին լուսանկարվել խմբի հետ, գուսանն իսկույն համաձայնում էր:

- Հարազատ զավակներս եք, բարով եք եկել մեր լեռնաշխարհը:

Ասում էր ու կանգնում խմբի մեջտեղում:

Գուսանի հետ համատեղ լուսանկար չունեի ու, ճիշտն ասած, չէի էլ մտածում այդ մասին, երեւի քաշվում էի, ինքս ինձ ասում՝ թող ով ուզում է նկարվի, մենակ՝ ո՛չ ես: Պնդաճակատությունս տեղի տվեց, երբ Վաղարշակ Խաչատրյանը՝ գուսանի երգերի մոլի երկրպագուն, խնդրեց ինձ բազմիցս, որ ես էլ իմ հերթին խնդրեմ նրան՝ երեքով լուսանկարվելու: Ախր այդ համեստ մարդը՝ Հայրենական մեծ պատերազմի մասնակիցը, պահակային ծառայության գլխավոր հաշվապահը, ամաչում էր արտահայտվել, հաճախակի գուսանի հետ հանդիպելիս բարեւում էր, կանգնում նրա մոտ, երբ գուսանը զրուցում էր տարբեր մարդկանց հետ, լսում նրա համով-հոտով զրույցները, բավականություն ստանում, հրաժեշտ տալիս, թողնում հեռանում: Վերջապես նրա բախտը բերեց, պահը հասունացավ, երկուսով զրուցում էինք, մոտեցավ մեզ, ինձ թաքուն աչքով արեց, հիշեցի նրա մտադրությունը, խնդրեցի գուսանին համատեղ լուսանկարվել, սիրով համաձայնեց: Վաղարշակի ուրախությանը չափ ու սահման չկար, երբ մի քանի օրից նրան հանձնեցի լուսանկարները՝ ինձ համար եւս վերցնելով: Այժմ այդ միակ լուսանկարը պահում եմ սրբությամբ, որպես մասունք, որպես վերհուշ անցած-գնացած օրերի:

Ընկերներով հաճախակի էինք գնում գուսանի տունը, ուրախանում էր սրտանց, որ իրեն մենակ չենք թողնում:

Չէ, - ասում էր, - չեմ սիրում հասա-

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

կակիցներիս հետ նստել կենտրոնական զբոսայգում, թզբեխ քաշել, խոսել դես ու դենից, եւ եթե չեք ցանկանում՝ շուտ մահանամ, ինձ ձեզնով շրջապատեք, լավ եմ զգում երիտասարդներիդ հետ, կարծես ջահելանում եմ, կայտառանում:

Ու իր պատվերով տիկին Արաքսյա Ղալեչյանը, ով ժամանակին Ալթունյանի համույթի երգչուհիներից է եղել, սեղան էր բացում, քամանչան տալիս գուսանի ձեռքը, ու սկսում էր երգի երեկոն՝ մինչեւ ուշ գիշեր: Նվագում էր գուսանը, արտասանում իր ստեղծագործություններից, իսկ տիկին Արաքսյան երգում էր ու երգում գուսանի հոգեմայլ երգերից: Ընդմիջումներին սկսվում էր բանավեճը տարբեր թեմաների շուրջ, իսկ ընդհանրապես հիմնական թեման արվեստն էր, նրա աշխարհը, այս կամ այն գրողի, բանաստեղծի մասին, վերջում, երբ վիճողները մի քիչ խաղաղվում էին, նահապետի իրավունքով հանդես էր գալիս գուսանը՝ իր հեղինակավոր խոսքն ասում, հաշտեցնում «կռվարարներին»:

Գուսանի տնից հեռանում էինք հոգեպես հարստացած, արվեստով լիցքավորված, նորից հանդիպելու տրամադրությամբ:

Պատահում էր՝ գուսանը անակնկալ էր պատրաստում մեզ համար, նոր տպագրված տաղարանները մեզ նվիրելու մտադրությամբ նախօրոք գրում էր բանաստեղծական քառատող, խնամքով, սեփական ձեռագրով գրում գրքի լուսանկարի տակ, յուրաքանչյուրին առանձին-առանձին մակագրում, հետո իմաց տալիս՝ խմբովին հավաքվելու:

Պայմանավորված օրը, պայմանավորված ժամին նրա տանն ենք, սեղմում ենք ձեռքը, հարցնում առողջությունից, նստում:

Բացում է մեզ համար գուսանն իր գաղտնիքը, այս անգամ մեզ կանչել է իր «Ծովաստղիկս» գիրքը մեզ նվիրելու, հրճվում, ուրախանում ենք, աշխարհով մեկ լինում: Բացում է տաղարաններից մեկը, մտքում կարդում մակագրությունը, նվիրում: Սկսվում է գրքի շնորհանդեսը, քննարկում, վիճաբանություններ, կարծիքներ, գովեստներ:

Ակնածանքով արդեն բացում եմ իմը դարձած «Ծովաստղիկս», կարդում նվիրական գրությունը.

Միրելի Ռոբերտին
Ձեռքդ երկաթին, աչքդ դազգահին,
Թվում է նրանց լեզվով կիսոսես,
Միրտդ հայ երգին, մաշտոց գրերին,
Աչքդ սարերին, սիրով կիսորհես:
Գուսան Աշոտ
18.8.84թ.

Մինչ այդ նա ինձ նվիրել էր «Սիրո կրակներ» ժողովածուն: Գուսանը խնդրում է վերջացնել քննարկումը եւ զանգահարել հյուրանոց՝ Երվանդին հյուր կանչել, ասելով.

- Ախր մենակ է հյուրանոցի իր սենյակում, թող գա, մի քիչ էլ ինքն ուրախանա:

Սպասվելիք հյուրը Երվանդ Մանարյանն է՝ Գորիսի դրամատիկական թատրոնի ռեժիսորը, ժողովրդի կողմից սիրված կինոդերասանը, «Հարսնացուն հյուսիսից» կինոնկարի Ալամեզոնը, «Տժվժիկի» սցենարիստը, արվեստի վաստակավոր գործիչը: Շուտով ներկայանում է լուսանկարչական սարքով, ողջագուրվում են արվեստագետները, հարց ու փորձ անում իրար:

Ինչպես միշտ, տիկին Արաքսյայի սուփրան գցված է, սեղանին՝ իր ձեռքով պատրաստած համադամ կերակուրները, գինին, թթի օղին: Սկսվում է ճաշկերույթը, ձեռքն է առնում քամանչան գուսանը, լցվում են բաժակները, գովեստի խոսքեր են ասվում գուսանին, բանաստեղծները կարդում են իրենց ստեղծագործություններից, կենաց խոսքեր են ասում ընկերները, բացի Մանարյանը, ով լռելյան լսողի դերում է՝ նստած իմ հարեւանությամբ, դիմում եմ նրան.

- Մի բան էլ դուք ասեք կամ կարդացեք, ընկեր Մանարյան:

Վեր է կենում տեղից, բաժակը վեր բարձրացրած:

- Դե ինչ ասեմ, վաղուց եմ ծանոթ գուսանին, հիասքանչ մարդ է, մեծ արվեստագետ:

Ու նորից Արաքսյա Ղալեչյանի վարպետ կատարումներն են թեւածում, հոգիներ գերում:

Գուսանն այն երջանիկներից էր, որ թե կենդանության օրոք, թե մահից հետո վայելում էր ոչ միայն ժողովրդի սերն ու համակրանքը, այլեւ այդ ժողովրդի ղեկավարների. այսօր արժանին մատուցենք նրանց:

Կենդանության օրոք նա ստացավ «Հայաստանի ժողովրդական արտիստ» պատվավոր կոչում, հրատարակեց 6-ից ավելի ժողովածու, ընտրվեց Հայաստանի գրողների միության անդամ, հավասարապես քայլեց ու կանգնեց մեր մեծերի շարքում: Գուսանի կենդանության ժամանակ շրջկոմի 1-ին քարտուղար Արամ Հարությունյանի նախաձեռնությամբ, Հայրենական մեծ պատերազմի հերոսների պատվին կառուցված աղբյուր-հուշարձանի հետեւի պատին դրվեց գրանիտե սալիկ, այդ հուշարձան-աղբյուրի մասին գուսանը երգ էր հորինել, որից մեջ բերված Գուսանի երկտողը. *«Ամեն անգամ ջուր խմելիս, շրթունքներով կտանք համբույր...»:* Գուսան Աշոտ գրառումը:

Հետագայում շրջկոմի 1-ին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանի նախաձեռնությամբ գրանիտե հուշաքար տեղադրվեց ուսուցչի տան պատին՝ *«Այստեղ էր գուսան Աշոտը դնդնում իր նորաստեղծ երգը սիրահար ունկնդիրներին»* գրառումով:

Գուսանի մահից հետո Ռ.Ալեքսանյանն անձամբ կազմակերպեց հուղարկավորությունը, գրանիտե շիրմաքար դրեց նրա աճյունին, իսկ շիրմաքարի ընդգրկմամբ կառուցել տվեց եկեղեցական ճարտարապետության ոգով վեր խոյացող հուշակոթող՝ Սեւադայի նախագծով, դրանով իր երախտագիտությունն արտահայտելով իր կողմից մեծ համարում ունեցող սիրելի գուսանին:

Արժանին պետք է հատուցել Սուրեն Խաչատրյանին, ով նախկին «Սովետների» փողոցը վերանվանեց «Գուսան Աշոտի» փողոց: Կուլտուրայի պալատն անվանեց գուսանի Աշոտի անվամբ եւ նրա առջեւ տեղադրել տվեց նրա մարմարյա կիսանդրին՝ գրանիտե պատվանդանով, որի քանդակագործն է շնորհաշատ Գետիկը:

Գուսան Աշոտի ջերմ երկրպագուներից էր նաեւ կուսակցության Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռաֆիկ Մինասյանը, ով գուսանի համերգային շրջագայության ժամանակ շրջանում ամեն ինչով օգնում, քաջա-

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

լերում, խրախուսում էր, որ գուսանի համերգներն անցնեն բարձր մակարդակով: Անձամբ ժամանում էր Գորիս եւ ելույթներ ունենում Գորիսում կազմակերպվող՝ գուսանի ստեղծագործական երեկոներին:

Հ.Գ.

Օրը պարզկա էր, օդը՝ սառնեղեն, հողմը շաչում էր ու շառաչում, թավալվում ու գլորվում, քամին սուլում էր ներդաշնակորեն, կարծես մայր բնությունն էլ լուսախառն իր խոսքն էր հնչեցնում.

- Այդ ո՞ւր եք տանում դուք նրան, մարդիկ, նա մեր երգիչն է, այդ մենք ենք՝ սարերը, ձորերը, կիրճերը, քարափները, կածանները, հանդերը, առու-առվակները, գետ-գետակները, աղբյուրները, ծառերն ու ծաղիկները, պախրաները, եղնիկները, այծյամները, սոխակները, բլբուլները, կռունկները, կարապները, մով երկինքները, երկնի աստղերը:

Հանդիպում էինք նշանավոր պատշգամբի տակ



ԱՊԵՏՆԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սովորաբար մենք միմյանց չէինք նախազգուշացնում, ասենք դրա հարկն էլ չկար: Իջնում էի եւ նշանավոր պատշգամբի տակ, ուր հիմա փակցված է հուշատախտակը, հանդիպում էինք:

Ասես սպասում էր, ուր որ է կհայտնվեմ ու հայտնվում էի: Խոսում էինք դեսից-դենից՝ դե, մեր խոսելիքը գրականությունն էր, կյանքը, պոեզիան: Սիրում էր անպայման իմանալ, թե ինչ նոր բան եմ գրել ու հարցնում էր.

- Նոր բան-ման չունե՞ս, - եւ իր ասածից փոշման՝ ծոր տալով ավելացնում, - ասենք բոլորն էլ նոր ա, էլի՜: Հը, հորա՞ դավթարդ, - քաղցրքաղցր ժպտում էր մեծ երեխայի պես:

Մի քիչ չեմ ու չեմ էի անում եւ, ի վերջո, համաձայնության գալիս:

Իրո՛ք, «Ի՞նչ անեմ...» խորագրով մի ոտանավոր կար մոտս, շատ հավանեց եւ գոհացած, թեւանցուկ անելով, ասաց.

- Գնում ենք «Նագասակի», - այդպես էինք անվանում քաղաքի միակ ու անհրապույր սրճարանը:

Գնալու ժամանակ ոտքը կախ արեց, երեւի հարմար չէր գտնում եւ խոսքին նոր երանգ տալով, ասաց.

- Սիրտդ հի՞նչա օգում, ախպոր տղա՛, - եւ սկսեց թվարկել հանդարտ ու հանդիսավոր, - լավաշ հա՛ց, մութալի պանի՛ր, հը՞, հի՞նչ կասես, - ավելացնելով, - ղավուրմա, տքցրած թան, տնական գինի...

Ու դադար առնելով՝ սպասում էր պատասխանի:

- Քեփավդ չի՞, - եւ ետեւից բերում էր, - բա հինչա՞...

- Հորա՜..., - միամիտ-միամիտ ձգեցի.

Ասես չէր լսել կամ չլսելու էր տվել, թախանձեց...

- Հի՞նչ, հի՞նչ ըսեցիր...

- Հորա՜..., - կրկնեցի, երեւի ավելի պաղատագին, քան՝ նախորդը:

Ասես հենց դրան էր սպասում, վրա բերեց.

- Գնալու ենք տուն:

Չառարկեցի: Տան շեմին տիկին Արաքսյան

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

մեզ ընդունեց ժպտալով: Երեւի նախօրոք պայմանավորվածություն կար, ի՞նչ իմանաս...

- Քիրաս, - դիմեց տիկնոջը՝ Արաքսյային, - տանը հարգի էր բարբառով շրջած «էսպերանտոն»:

- Լավաշ հաց, մութալի պանիր, ղավուրմա, տքցրած թան եւ տնական գինի... Մեռուն ա՜, մեռո՜ւն, ախպերը ախպորը տալ չի...

Սեղանին հայտնվեցին համեստ ճաշատեսակները, իսկ կուլայով մեղրահամ գինին սեղանի թագուհին էր:

Լավ երեկո անցկացրինք՝ «գրաերաժշտական» երեկո: Ու գուսանի հարկի տակ քամանչայի լարերն ասես ծործորացին թախանձագին.

- Հորա՜, հորա՜, հորա՜...

Մեկ այլ պատմություն...

Միջօրե էր, արեւը երկնքից կրակ էր թափում: Շնչասպառ էի լինում շոգից: Տեսա, որ մտերիմներս չեն երեւում, թեքվեցի դեպի զբոսայգի, մտածելով, որ այնտեղ հով կլինի: Իրոք որ, սպասվածից լավ էր: Թափուր տեղ չկար: Զբոսայգու կենտրոնը մարդաշատ էր, մոտեցա:

Գուսանը նստել էր իր տարեկիցների միջեւ եւ տաք-տաք զրույց էր անում: Բարեւեցի, ընդունեց բարեւս եւ նշան արեց, որ տեղ չգնամ: Չնայած ոտքերս չէին դիմանում, մնացի: Զգացի, որ զրույցը շատ է ջուր տանում, տեղ զբաղեցրի կից նստարանի ծայրին՝ ունկս դեպի ետ, դեպի Գուսանը, դեպի խորհուրդն ու խորհրդավորը:

Մի անծանոթ մոտեցավ, ամաչ-ամաչ բարեւեց ու տեղավորվեց կողքիս: Ուշադրությունս հետեւում էր. Գուսանը մի նորաթուխ երգի նախանվագ էր գնում, էությունս սարսռում էր... Գոհացման խոսքեր լսվեցին, ունկնդիրների դեմքերը պայծառացան ու սկսեցին շափաղ-շափաղ անել:

- Հը, դուրդ եկա՞վ, - դիմեցի հարեւանիս:

- Հիասքա՜նչ էր, - գլուխը օրորելով ասաց նա:

- Ինչ խոսք, որ մեծ է Գուսանը, մեծ, մեր ամենահայոցն է, հավիտենության շողերից է հյուսում իր երգերը ու երիցս կգնա, - ասացի:

- Ես էլ եմ հորինում, գուսան եմ, - վախվորած ասաց զրուցակիցս՝ շիկնելով:

Ականջներիս չհավատացի.

- Այդ երբվանի՞ց, ինչպե՞ս, որտեղի՞ց, - հարցրի:

- Դե հորինում եմ էլի, հարթաշենցի եմ, - հաստատեց նա:

- Է՜հ, քամի մի արա՜, Հարթաշենն ո՜ւր, գուսանն ո՜ւր, գիտեմ, բանաստեղծ ունեք, իսկ քո մասին բոլորովին չեմ լսել: Ձայն էլ ե՞ս տալիս:

- Հա, բա ո՞նց, եւ ձայն եմ տալիս, եւ տեքստն եմ գրում, դեռ երգում էլ եմ...

- Դե, ասա կարգին մարդու հետ եմ էլի հարեւանացել...

Խնդրեցի, որ մի բան կատարի, փորձը փորձանք չէ: Չմերժեց: Տպավորությունը մեծ էր, ներքուստ ուրախացա, որ ի վերջո նոր գուսան է հայտնվել Սյունյաց աշխարհում, առանց սազի ու քամանչայի եւ մտքումս հանկարծակի հղացավ առիթն օգտագործել ու ներկայացնել Գուսանին: Նստարանը ասես բեռնաթափվել էր, մոտեցանք: Ներկայացրի եւ ասացի, թե ինչը ինչոց է:

- Չէ՜, մեր տղա՛, դժվար բան ես վիզ առել, գուսան դառնալը հո հանաք-մասխարա չի, դա կոչում է, ինքնություն է, դա կյանք է, տարիների փորձ ու իմաստություն: Հետո, պիտի տրված լինի, պիտի ծնվել...

Երիտասարդն ավելի համառ էր, քան ես կարծում էի, պնդեց, որ հորինում է, ինքը գտնում է, որ իր կոչումն էլ դա է:

- Միգուցե, ո՞վ գիտե, - միջամտեցի, - թող մի բան կատարի, եթե չհավանես էլ, ոչինչ չի տուժի:

Շընդդիմացավ: Նա քաշվելով մի երգ կատարեց, ես գյուտ արածի պես ցնծում էի... Չհավանեց... Ասես գլխիս սառը ջուր լցրեցին: Սկսեց հարցեր տալ երգերի տեսակների, չափերի, ոտքերի եւ գուսանական տերմինների մասին, հազար ու մի բան...

Ձահելը համարյա թե բոբիկ էր, որտեղի՜ց գիտենար նման բաներ, ո՛չ երաժիշտ էր, ո՛չ կրթություն ուներ, ո՛չ տեսել էր եւ ո՛չ էլ լսել: Մեկը իմաստության տաճար էր, վաստակած հավերժություն, աշխարհի հազար ու մի կեռմաններով անցած, աշխարհը՝ աշխարհի մեջ, մյուսը՝ անփորձ ու օգնության կարոտ, կանաչ արահետ:

- Չէ՛, չէ՛, թույլ է, պիտի մաքրել, հստակեցնել, երգը տառապանքի գինն է...

- Եթե ուժեղ լիներ, իմաստ չէր ունենա մոտենալը, - ասացի, - պիտի օգնել, ուղղություն տալ, թույլը ուժեղացնել, տեղը-տեղին բերել, դա է շահեկանը, իսկ վարպետը մնում է վարպետ, սանը՝ սան...

- Եթե ամուր ես բռնել, տա՛ր, ժամանակն իրենը կասի, դժվար է, դժվար, - ասաց ու վեր կացավ:

Գուսանը հետո ինձ ասաց.

- Յանի դու հավան կցա՞ր, ախր դու ամեն բանի հավան կենող չես, էդ ո՞նց էր...

- Գուսա՛ն, խոսքը մեր մեջ, լավ էր, մի քիչ ձայնի մեջ թույլ երանգ կար, այն կարելի է ուղղել, իզուր ես վատաբանում, երկիրս հո մի օրում չեն կառուցել:

- Դեռ մի երկուսն էլ քո քաղաքում կա: Անբա՛ն են, անբա՛ն, մի երգ են գրել, թե մենք ենք, որ կանք, բա դա մեզ պատի՞վ է բերում, պիտի հետեւողական լինել, գիշեր ու զօր մտմտալ՝ մեր լուսահոգի գուսանների նման, յանի հիմա քանի՞ գուսան կա է՜...

- Քեզ նմանը չկա ու չի էլ լինելու, դու մի աշխարհ ես, բայց քո անտարբեր ձեւանալը հիմքեր չունի ու իրեն էլ չի արդարացնում, պիտի սատար լինել, թեւ տալ, թխսամոր պես աճեցնել, հետո թե թույլ էլ լինի, դեռ չլինելուց լավ ա...

Վերջին բառերիս նշանակություն տալով, լրջացած ասաց.

- Յանի քեֆա՞վդ էր, - ուզում էր հաստատեմ պնդումս:

- Դա իմ համոզումն է, պիտի օգնել տղային, գուսանական երգը քանի գնում, մարում է, իսկ մեր ինքնությունը՝ կորում, մենք ենք կորչում աշխարհի երեսից ու մեր երգը:

- Երգը պիտի իր մեջ լինի, իր մեջ, գլուխս ինչերի է՜ տրաքել, ինչերի՜, - գիտեի գուսանի կյանքի ոդիսականը ու տոն չտվեցի: Հետո թե՝ դե լսիր, թե բեկը, Շախմալ բեկը ինչ խորհուրդ է տվել ինձ:

- Մի օր ռադիոհանգույցից էինք գալիս, - սկսեց Գուսանը, - ես էի ու թառչի Ղազարը, օղորմի հորա՜նց, էն ինչ թառչի՜ էր, ինչ թառչի՝ վիրտուոզ, երկնքից հավք էր իջեցնում, յանի՜ նրա նմանը էլ կծնվի՞, պա՛հ, պա՛հ, պա՛հ...

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում

Հրաժեշտի երեկո

ԱՊԵՏՆԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հրաշք էր, հրաշք...

Զգացի, որ զրույցը երկարելու է, հիշեցրի:

- Բեկն է՞, բեկը, բեկը մնաց... իսկ էն ջահելն էլ...

- Հա՛, ճիշտ որ զրույցը գնաց, իսկ բեկը՝ մնաց: Անմոռաց օր էր, Ղազարի հետ հասել էինք մեր տան մոտ, բեկը պատշգամբից կանչում էր, որ բարձրանանք: Ղազարը հրաժարվեց, քամանչաս թեւիս տակ կալա, ինքս ինձ մտածելով, թե բեկը որ խաչ էր գնացել, ու գլուխ չէի հանում: Բեկը հարգանքով վեր կացավ, երանի էն օրերի՞ն, ձեռք սեղմելով ասաց, որ լսել է «Զանգեզուրի չոր-չոլերը» երգը ու հավանել.

- Այստեղ շրթունքս կծեցի, բեկը լցրեց բաժակները, վերցրեց մի բաժակ ու հանդիսավոր թե՝

- Աշո՛տ, էն կերած կաթդ հալալ լինի, ուրախությունս անչափ է, որ Զանգեզուր աշխարհը քեզ ծնել է, շատերն են եկալ, քինացալ եւ կերել են, եւ տարել, աշխարհը մնացել է, իսկ իրենք չկան... Դու աշխարհով մնաս ու աշխարհինը, թող երգդ թեւածի ծագե-ծագ, ու Գուսան Աշոտ անունդ մնա հավերժին, հավիտենությանը, - մի քիչ շունչ առավ եւ շարունակեց, - պիտի անմար պահես անունդ, թե չես կարողանալու պահես, էս օրվանից հրաժարվի գուսան օծվելուց՝ օրհնությունս քեզ հետ...

- Ահա թե բեկն ինչ ասպետ էր, մեր Շամխալ բեկը, իմաստուն բեկը... էն բոլ-բոլ մուլքի շուքը գնացել է, պատերն են մնացել, բեկից էլ հուշն է մնացել, այս փոքրիկ հուշը...

Գուսանը խոր թառանչ քաշեց, երեւի ջահել օրերի հուշերի տուտը բռնել, թարմացել էին հիշողությունները, ճախր էին առնում եւ մտքերը հավքերի նման ու տանում էին ետ, դեպի անցյալը, մով սարերի մշուշը, Ղալու քարը, Ցուրտ աղբյուրի կարկաչը, ոչխարների ու գառնուկների քաղցր մայունը: Հանկարծ սթափվեց, - էն ջահելին էլ ասա, որ երկար-բարակ չմտածի, հորինի՞, հորինի՞, հորինի՞, տեղը տեղին դնի, որ երգը ժողովրդին հասնի, ես եմ նրան գուսան օծելու, ե՛ս, եւ դա իմ հոգու պարտքն է... Այդպես էլ եղավ...

Զյուն էր, ձմեռ, եղանակն էլ ասես տաքանալու միտք չուներ: Աշխատանքից գալիս էի, աշխատավայրս էլ հո մոտ է՝ քթիս տակ, մի քիչ դեսից-դենից, ու նստում, մտորումների գիրկն ընկնում, իբրեւ տարեգիր: Ասենք ում ինչ, թե ինչ էի անում, ինձ դուր էին գալիս դեղնակտուցներս, դրանով էլ սփոփվում էի:

Տիկինս դժգոհում էր, թոնթորում, իսկ ես էլ չիմանալու էի տալիս ու խզբզում:

- Ա՜յ մարդ, հերիք է, իզուր աչք ես քոռացնում, քանի տարի է, հա գրում ես, հա՝ ջնջում, ոչ սկիզբն եմ տեսնում, ոչ՝ վերջը, իզուր թղթեր ես մրոտում, չեմ հասկանում՝ արածդ ինչ է, կերածդ՝ ի՞նչ, գրածդ ի՞նչ է, բերածդ՝ ի՞նչ...

- Էհ, գլուխս մի տար, - ասում եմ, - ի՞նչ քո խելքի բանն է, դու քո գործերին կաց, ես իմը՝ գիտեմ...

- Գիշերն էլ տապակ-տապակ գալիս, անբուն կկուի պես դես ու դեն ընկնում, մի ասող լինի, թե ի՞նչ ես կորցրել ու չես կարողանում գտնել:

- Դեհ, լավ, շատ եղավ, համն արդեն դուրս եկավ, - դժգոհում եմ:

- Ինչի՞ համը դուրս եկավ, հրեն ընկերոջդ գիրքն է լույս տեսել: Գուսանի նոր երգարանն էլ շարում են, դու էլ ուղտի ականջում քուն մտած, իսկ քոնը ե՞րբ է լույս աշխարհ դուրս գալու, աչքս ջուր է կտրել, էնքան սպասել եմ...

- Հետմահո՜ւ, այ կնիկ, հետմահո՜ւ... Գուսանը գուսան է, ընկերս՝ հանճար, ես էլ անճար, - ակնարկում եմ Իսահակյանի թեւավոր խոսքը տպագրվելու մասին:

- Բա որ անճար ես, խի՞ չես գրիչդ վար դնում, զանգ կախի, է՛, զա՜նգ, - ծոր է տալիս կինս:

- Կկախեմ, կկախեմ, մենակ ինձ հանգիստ թող, ներվերս քեզ համար թառի լար չի, քիչ ճնգճնգացրու, - ու ելնում եմ, որ գլուխս պրծացնեմ: Հագնվում եմ ու դժգոհ դուրս գալիս:

Իջնում եմ ու ինքս ինձ մտածում, թե ինչ անեմ եւ ուր գնամ:

Փողոցում մարդ-մուրդ չկար, մենակ սարերից փչող սառը քամին էր մրսկան շան լակոտի պես ծույլ-ծույլ վնգստում: Մի «Ժիգուլի» մեխվում է կողքիս, դուռը բացում եմ, վարորդին բարեւում ու նստում: Մտերմիկ զրուցելով՝ իջնում ենք: Շուկայի մոտ արգելակում է, շնորհակալ եմ լինում ու իջնում:

Մտնում եմ շուկա, շուկան տկլոր էր ու մերկ, ասես ցախավելը դրել էին ու սրբել:

Մի քոսոտ թազի, փորը գետնին քսելով, պտտվում էր. ինքն անտեր, անտիրական, տերություն էր անտերությանը:

Բերք ու բարիքը հատել էր, խերն ու բարաքյաթն էլ՝ հետը: Խորհելով դուրս եմ գալիս, թե ինչ օրերի ենք գնում եւ այս օրերի համար ով պիտի պատասխան տա... Դեռ հլա կինս էլ դժգոհում է՝ գրածդ ի՞նչ է, բերածդ ի՞նչ...

- Բարեւ, քեռի Հաբեթնակ, - սթափվում եմ:

Հայկասարն էր՝ Գուսանի կրտսեր թոռը:

- Բարեւն աստծունն է, հազար բարին էլ հետը, վա՜հ, Հարություն, - գիրկս եմ առնում, իբրեւ Հայկասարը չէ ու չեմ թողնում բացի իրողությունը: Չնայած լավ եմ ճանաչում, թե՛ իրեն եւ թե՛ Հարությունին:

- Էս ե՞րբ ես հասցրել, Հարությո՛ւն, որտեղ ես ծառայել... - վրա եմ տալիս:

Ընկերը թե՝

- Քեռի Հաբեթնակ, ինքը Հարությունը չի, Հայկասարն է, սխալմամբ Հարությունի տեղ եք դրել, ոնց որ մի քիչ... հը՞:

- Իսկ ու իսկ Հարությունն է, ես հո երեխա չեմ, իրեն ու Հայկասարին միմյանցից չե՞մ ջոկում, - պատասխանում եմ եւ նեղացած ձեւանալով բաժանվում:

Մի երկու քայլից լսում եմ.

- Ես Հարությունի նմա՞ն եմ, որ քեռի Հաբեթնակը շփոթում է:

- Իհարկե, դա հարցնելու բա՞ն է, ոնց որ մի խնձոր միջից կտրած, - պատասխանում է: Չեմ շրջվում, ինքնագոհ հեռանում եմ, որ Գուսանի ասած «կռպատի» զրույցիս էս համարն էլ անցավ: Մտնում եմ հրապարակ, որի միայն ստվերն է մնացել ու Մխիթար

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

սպարապետի անունն է կրում: Ինչպիսի՜ դառը ծաղր, ինչպիսի կծու հեգնանք...

Տաճարի նման կառույցը մեր աչքերի առաջ քար ու քանդ արեցին, թե վերաշինում ենք... Հո չշինեցին...

Ինչ կար, չկար, պլոկեցին՝ թողնելով լոկ ցից-ցից պատերը, իսկ գետնահարկ ղաբերն էլ վերածեցին աղբահորի: Դեհ եկ, ծպուտ մի հանիր, դեհ եկ...

- Վա՜յ, ձեր խիղճը ձեզանից խռով մնա, հա՜, որ խռով է մնացել...Դեռ չեն էլ ամաչում, այս ավերականոցն էլ Մխիթար սպարապետի անունով են կոչում:

- Հը՞, ի՞նչ կա, մե՛ր տղա, դժգոհ ես երեւում...

- Էլ գոհություն չի մնացել, քաղաքն էլ անտեր ա, էս որ քանդել են ու քանդում են ու քարը քարի վրա չեն թողնում, քաղաքի տերն ու տիրականը ինչպե՞ս է գլուխը դնում բարձին ու գիշերը քնում:

- Բա սուրբ բան է մնացե՞լ, ամեն ինչ գլխիվայր շուռ է եկել, էն դրախտի այգին էլ ամայացրին, որին մենակ զմրուխտ հավքն էր պակասում, թե մշակույթի պալատ ենք կառուցում, մի բանտ ունեինք, մինն էլ ավելացավ, ա՜յ քեզ պալատ...

- Էլ ո՞ւմից հարցրեցին... Քնած հատակագիծ էր, տարիների փոշին վրայից քերեցին, դզեցին, փչեցին ու կապեցին մեր քաղաքի վզին, հիմա ե՛ւ քաղաքին է խեղդում, ե՛ւ մեզ: Դե ե՛կ, հիմա աղոթիր ու խաչահանիր, Հաբեթնա՜կ, ե՛կ...

- Ա՜, հազար ու մի բաց կա, որն ասես եւ որը թողնես, որ հոգիդ թեթեւանա, իսկի տանելու բան չի մնացել:

Ծանոթս թթված թողեց ու գնաց: Ես ինձ հետ կռիվ տալով՝ մոտեցա Գուսանի պատին, որը մի քիչ բարձրադիր քարե գոգով լայն ու կամարակապ պատուհան էր: Երբ հավաքվում էինք պատի մոտ, գուսանը գրավում էր իր տեղը ու կռթնում պատուհանի գոգին եւ բացում իր իմաստուն խոհերի կծիկը: Ի պատիվ նրա՝ մտերիմները Գուսանի պատ էին անվանում: Մայթեզրյա սոսին, որի անվան հուշը փոխարինվել էր պատով, քաղաքի «անվանի» փայտահատներն էին կտրել: Նրանք հիմա էլ են անարգել կտրտում... Ցերեկը քնթում են, իբրեւ թե՝ էտում, իսկ գիշերը՝ կտրում: Բոլորն էլ անտարբեր դիտորդներ են, ոչ դատ կա, ոչ դատաստան: Մեկը չկա, որ կտրողի ձեռքից բռնի ու ասի.

- Տո՛, շուն շան որդի, դու ծա՞ռ ես տնկել, որ կտրում ես, բայց ո՞վ ասի, դա էլ ասելու բա՞ն է...

Չէ՜, լավ բանի հոտ չի գալիս, հոնի մահակը պակասում է, հոնի մահակը... Վրդովված մտնում եմ ուսուցչի տուն, նկուղային մի հարկ, որից մգլահոտ էր փչում՝ հեղձուցիչ ու ծանր: Երկար չեմ կարողանում դիմանալ, քիչ է մնում շնչահեղձ լինեմ, դուրս եմ գալիս: Եվ ի՞նչ, շեմին կանգնած է ինքը՝ Հարությունը:

- Էս որտեղից բուսավ, - ասում եմ՝ ինքս իմ աչքերին չհավատալով: Խոսքիս լրջություն տալով՝ հարցնում եմ, թե երբ են բանակ տանելու, լսել եմ, որ ծանուցագիր են տվել ու հավաքը հետաձգել են մինչեւ գարուն:

- Ես Հարությունն եմ, ծառայությունս մնացել է հեռավոր Սիբիրում, ինձ Հայկասարի տեղ եք դրել:

- Չի կարող պատահի, - արդարանում եմ, - ես հո կո՞ւյր չեմ, սատանայի թաղում լարախաղաց եք պար ածո՞ւմ: Մեկն ասում է՝ ես Հարությունը չեմ, մյուսը, թե՝ Հայկասարը: Գլուխ չեմ հանում. կա՛մ իրոք հիշողությունս տեղում չի, կա՛մ էլ ինձ յոթիկի տեղ եք դնում:

- Չէ՛, քեռի Հաբեթնակ, անկեղծ եմ ասում, ես Հարությունն եմ, - արդարանում է:

- Լավ, լավ, իսկությունը հետո, հո չե՞մ փախչում...

Ու նկատում եմ, որ Գուսանի տան լույսը վառվում է:

- Ո՞վ կա տանը, - հարցնում եմ:

- Գուսանն է եւ տիկին Արաքսյան:

- Ի՞նչ է, չե՞ն գնացել:

- Չեն հասցրել, երեւի ցրտերի համար, իսկ վաղն ուզում են գնալ:

- Վա՜յ քո անաստված, ինձ էլ թվացել է, թե լեչկոմիսիայումն է, ես էլ ուղիղ մի ամիս է տնից դուրս չեմ գալիս:

Աչք ածեցի, մեր տղաներից չկային եւ ճարահատ ուղղվեցի դեպի Գուսանի տուն:

...Նորակառույց է գուսանի տունը, երկհարկանի, դեպի փողոց նայող հարմարավետ պատշգամբով: Քթանի Վոլոդյան է պատերը շարել՝ անվանի վարպետների զարմից, քաղցր բառ ու բանով, երգ ու երաժշտության սիրահար, իսկ սեւ գործերը հարգի համար մենք էինք արել՝ ես, դափչի Սուրիկը, ուստա Վահանը՝ Գորիսի դափչիների վիրտուոզը, Գուսանի հյուրախաղերի տրուբադուրը, մասամբ էլ Գուսանի որդիները՝ Համլետն ու Ռոբերտը:

Օգնողները շատ էին լինում... Մեր նպատակը սոսկ պատերը ցից դնելը չէր, այլ հավաքի տեղ ունենալ, որ մենք մեզանով լցվեինք: Դե մեր օգնելն էլ օրվա վերջում դառնում էր ծափ ու ծիծաղ, երգ ու տաղ, մինչեւ ուշ գիշեր, մինչեւ լուսաբաց...

Հասա մուտքի դռանը, սեղմեցի զանգի կոճակը եւ գլուխս վեր բարձրացրի: Պատշգամբի պատուհանի մոտ ժպտերես հայտնվեց տիկին Արաքսյան:

Նա թավշածայն ավետեց գալուստս.

- Հաբեթնա՜կն է եկել, Գուսան, Հաբեթնա՜կը...

Գուսանի պահապան հրեշտակն էր տիկին Արաքսյան, երգերի մուսան էր եւ ամենալավ կատարողը: Նրա տկարության օրերին սիրտը դողում էր տերեւի նման: Ինքը խանում-խաթուն, վերաբերմունք էլ՝ իսկ ու իսկ մեղրի ծոր: Գուսանի երգերի հոգեթով ելեւէջումն էր ու երգեցիկ սոխակը: Չէ, ուրիշ էր տիկին Արաքսյան, ուրի՜շ... բացեց դուռը, ներս մտա, հարգանոք համբուրեցի աջը, կուլ տալով նախատինքը, ներողություն հայցելով՝ բարձրացա...

Ճաշասենյակում գահույքի վրա բազմել էր ամենահայոց գուսանը, վաստակած ու իմաստուն, աշխարհի հոգսերը ուսին, սադափանախշ քամանչան կողքին:

- Ախպոր տղա, շտե՞ղ ես, չես երեւում:

Արդարանալու հնար չունեի:

- Գուսան, բեր թափալդ համբուրեմ, կարոտս առնեմ, հետո ինչ կասես, կասես...

- Ա՜ ջիլատակռի, բա դու մեր Հաբեթնակը չե՞ս...

- Հաբեթնակն եմ, բայց էս ամսին տնից դուրս չեմ եկել, հետո ինչ իմանայի, թե դուք չեք գնացել: Էս էլ Հարությունը տեղեկացրեց:

- Դու էն ասի, է՜, մի բան արե՞լ ես, թե...

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում

- Անհոգ մնա, Գուսան, պարապ չեմ մնացել, մի քիչ մեր հարսն էր մզմզում, դա էլ կլինի երեւի:

- Հա՞, ախար ասում եմ, որ մի մահանա կունենաս: Քիրաս, դե բանդ տես՝ լավաշ հաց, մոթալի պանիր, տիալ եւ տնական գինի, Հաբեթնակը ձեռքովոտքով եկել ա, հո էժան չի՞ պրծնելու, Հաբեթնակ, աղատ-պաղատով մի ասի, - հորա՜, - ես չդժկամեցի...

Ծիծաղը բռնեց սենյակը, գուսանը մի կողմից, տիկին Արաքսյան՝ մյուս, եւ դադար չկար...

Հետո մի երգ կարդաց Արցախի մասին ու հավաքեց սեղանի թղթերը:

- Նոր եմ նոտագրել, Վալերիկն այստեղ էր, ուզում եմ տանի մյուսների հետ նոր երգարանիս կցելու:

Քիրաս, շատ ուշացա՜վ...

- Հեսա՛, հեսա՛, Գուսա՛ն ջան, մի քիչ տաքանա, դրել եմ օջախին:

Բոլոր ուտեստները գրավեցին իրենց տեղերը, նրանց հետ ե՛ւ արքայական «Քարահունջը», ե՛ւ անապական քահրբահր գինին:

- Դե, Հաբեթնակ, պատմիր, ի՞նչ կա, ի՞նչ չկա:

Մանր-մանր սկսեցի պատմել եւ սեղանից օգտվել, պատմեցի նաեւ թոռների հետ մեր հանդիպման մասին: Այնպիսի վարակիչ ծիծաղ ու ցնծություն ես ոչ կյանքում տեսել եմ եւ ոչ էլ՝ լսել... Գուսանն ասես քարուքանդ էր լինում, իսկ Արաքսյան ոտքի վրա մոմի պես հալվում էր ու մարմրում: Հազիվ ծիծաղը զսպելով՝ Գուսանը, թե՝

- Հաբեթնակ, դու ինչ Հաբեթնակ ես, էս ի՞նչ բերեցիր մեր գլխին, Խաչվանքյանը մեզ «Տաքսի-տաքսիում» էսքան չի ծիծաղեցրել... Ախր, ասում եմ, է՜, որ դու ուրիշ Հաբեթնակ ես, է՜, ուրի՜շ...

Սեղանը բոլորել էր, կատարս կարմրել, քանի որ հասցրել էի մի երկու կենաց թաս զարկել... Գուսանը ձեռքն էր վերցրել քամանչան, շիրա էր տալիս, ու մղկտում էր քամանչան իմ օխտը պորտի հանգով ու մղկտացնում:

Էս օրերը գնում էին դեպի «էն օրեր», եւ ալեհեր Գուսանը հնչեցնում էր «էն օրերի...» երգը,

Կշրջեր էն օրեր, գուսան մի ալեհեր
Որոտան մեր գեղի ափերեն
ժայռեղեն,
Վշտերից քարացած ասես
մի ժայռ լիներ...

Երեւի ինձ համար վերջին կատարվող երգը: Երանությունը բռնել էր ամբողջ սենյակը եւ տեղ էր որոնում դուրս գալու լեռ ու անդաստան: Տիկին Արաքսյան ընկել էր իր տարերքի մեջ, եւ տնական երգի ելեւէջները էնպես էին գնում, ասես ծյունեղեն հարսը շարմաղ շորերով Սյունյաց սարերից իջել, հարսանեկան ափսեն ջարդել եւ մտնում էր ամուսնական հարկի շեմից ե՛ւ էրում էր ու փոթոթում, ե՛ւ էրում էր, ե՛ւ էրվում...

Ես «էն օրերի...» թեւերի վրա հասել էի Որոտանի եզերքը, այնտեղից էլ մինչեւ Գեչուն անցը... Ջրերը ցալքուն էին տալիս, շատրվանում ու զանգակ-զանգակ զրնգում:

Գիշերահավը ծկլթում էր, սարերն իրար էին գալիս՝ Սյունյաց սարերը ու ետ-ետ գնում:

Ես ձեռքս տանում էի ծոցագրպանս, Գուսանը աչքի պոչով հետեւում էր ու թախանձում, որ սկսեմ...

Կարդում եմ «Էս գիշեր...» եւ «Լոռերս թռան» երգերը, եւ մեր երգերը շուլալվում են իրար, պռոշտի անում ու թեւին տալիս...

Սա արդեն երաժշտական երեկո էր, սրտաբուխ երեկո, որի առաջն առնել հնարավոր չէր: Գուսանը ափսոսում էր, որ տղերքը չկային, մեր տղերքը՝ Ալեքսանդրը, Կարլոսը, Քաջիկը, Ռոբերտը եւ Արարատը:

Չնայած Գուսանին թախանձով զանգահարել էին, երեւի տարաժամ էին համարել: Դե ո՞ւմ մտքով էր անցել, հանպատրաստի երեկո էր՝ էքսպրոմտ:

Խնդրեցի, պաղատեցի, որ չգնա մայրաքաղաք, մի քիչ ուշացնի՝ տաքերն ընկնեն, բանջարը դուրս գա՝ սինդրիքն ու սիրիժը, լոշտակն ու ծնեբեկը:

Բնությունը կանաչի, կաքավը կանչի, գնանք Հումբաթի ձորը, որին Գուսանը Հուրպատի ձոր էր ասում, հետո կգնա... չկարողացա համոզել, պնդեց, որ գնում է, կարեւոր գործեր ունի առջեւում, շուտ է վերադառնալու, դուշի թեւով...

Հրաժեշտ տվի ու դուրս ելա: Էն գնալն էր, որ գնաց...

Դա մեր վերջին համատեղ հավաքույթն էր, վերջին ուրախությունը, բաժանման եւ հրաժեշտի վերջին երեկոն...

Հանդիսավոր համերգներին նվագում էր իմ պատրաստած քամանչայով



ԺՈՐԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ
Գուսան Սարդար

Գուսանի երգերով հմայված՝ ծնվեցին իմ երգերը: Մտածում էի՝ քննություն կբռնե՞ն կյանքում, թե՞... Վախվորած ցույց տվեցի Գուսան Աշոտին, ում հետ հասցրել էի մտերմանալ... Իսկ Գուսանն այն ժամանակ կուլտուրայի նախարարության գուսանական խորհրդի նախագահն էր (որի կազմում 15 գուսան էր ընդգրկված): Նրա համար կատարեցի տասնյակից ավելի երգեր: Նա ինձ ստիպեց Երեւան գնալ եւ ելույթ ունենալ գուսանական խորհրդի առջեւ:

– Էսքան գուսաններից ո՞վ է այսպես քաղցր նվագում, – իմ ելույթից հետո այսպես արձագանքեց Գուսանը:

Խորհրդի որոշմամբ ես դարձա Գուսան, իսկ գուսան Աշոտն ինձ կոչեց Գուսան Սարդար (ազգանվանս՝ Սարդարյանի հիման վրա):

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

Շարունակողն էր իր մեծ նախորդների՝ Սայաթ-Նովայի, Ջիվանու, Շերամի

ՇՉՈՐՍ ԴԱՎԹՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

Գուսան Աշոտը (Աշոտ Հայրապետի Դադալյան) հայ գուսանական արվեստի ականավոր ներկայացուցիչն է, շարունակողն իր մեծ նախորդի՝ Սայաթ-Նովայի, նաեւ Ջիվանու, Շերամի՝ մեր ժողովրդի հոգում խոր արմատներ ունեցող երգարվեստի ու, թերեւս, վերջին մեծը, ում բնությունն օժտել էր խոսքի ու երաժշտության հորինման ներդաշնակության աներեւակայելի կարողությամբ, գեղարվեստական պատկերի կառուցման, մարդկային զգացողությունների վերարտադրության բացառիկ շնորհքով:

Թեեւ ծնվել եւ մշտապես ապրել է հայրենի Գորիսում, սակայն իր երգի թեւերը սփռել է ողջ Հայաստանի ու Սփյուռքի վրա՝ դառնալով յուրաքանչյուր հայ օջախի պահապան հրեշտակը, որովհետեւ կարողանում էր սյունյաց սարերի ու ձորերի բնապատկերով շաղախված իր հոգեւոր աշխարհում բնակեցնել համամարդկային զգացմունքներ՝ սիրտ թարմացնող ու սիրտ քրքրող մեղեդիներ:

Գուսան Աշոտը բացառիկ երեւույթ է: Անգամ նրա առանձին ստեղծագործությամբ կարելի է խոշոր ընդհանրացում կատարել:

Հիշենք թեկուզ «Յար, առանց քեզ ինչի՞ս է պետք» երգը: Այն մարդու, մարդկայինի, բնության ու բնականի՝ միմյանցով պայմանավորվածության, փոխադարձ հարստացման հավերժական թեմատիկայի՝ Աշոտի գուսանական մեկնաբանությունն է: Աշխարհի բոլոր բարիքները, հաճույքներն ու բնության գեղեցկություններն անբովանդակ են, եթե դրանք չեն իմաստավորվում տիեզերական սիրո ընկալմամբ: Միայն սիրո փայլատակումների շնորհիվ է շրջապատող աշխարհը շնչավորվում, անձնավորվում: Այդպես էլ հայրենի գյուղը, օջախը, անգամ աղոթատեղին՝ Տաթեւի վանքը, անձնավորվում ու աստվածային կերպարանք են ստանում հավերժական սիրո վառվող կրակով:

Գուսան Աշոտը Զանգեզուրի հանճարեղ զավակն էր, Գորիսի հարստությունը եւ այդ անկրկնելի քաղաքի պատմությունը: Եվ որքան ճիշտ էին երախտապարտ գորիսցիները, որ մեծ Գուսանի աճյունն ամփոփեցին քաղաքը հսկող բլուր-գերեզմանատանը: Նրա դամբարանի վրա վեր է հառնում մի գեղեցիկ զանգակատուն, որը հավերժության ճանապարհին մշտապես ղողանջելու է սիրո կրակներում բոցավառվող Գուսան Աշոտի երգի հուզաթաթավ մեղեդիով:

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում

Գուսանի հոգու հեպքերով



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Գուսանը երեւաց պատերազմի խավարից հետո: Դա մի ժամանակ էր, երբ մարդը, հայ մարդը չորսամյա սգից հետո ուզում էր երգել: Ուզում էր, սակայն կողպեքի տակ էին հայոց երգերը: Մարդը հոգնել էր այլազգու երգերը լսելուց: Դեռ մինչեւ քառասունյոթ թիվը մարդիկ նստում էին քաղաքի զբոսայգու կլոր, փոքրիկ հրապարակի նստարաններին եւ ռադիոյով լսում թուրքական, մեզ համար անհասկանալի բայաթիներ: Դիտավորությո՞ւն էր այդ ամենօրյա հաղորդումը, չէ՞ որ մենք մերն ունեինք: Ունեինք, եւ մերը որակվում էր նացիոնալիստական, սակայն, եւ ամեն լեզու այդ բառի մեջ պապանձվում էր: Ահա այս ժամանակ էր, որ ծնվեց գուսանի երգը: Ծնվեց ու եկավ մեր սարերով, հանդերով, մեր այգիներով, մեր աղբյուրներով: Եկավ մեր հայ աղջիկներին թեւանցուկ ու բոլորին սիրահարված, բոլորի սիրուն կարոտ ու գերի, բոլորին սիրել տվող: Եկավ մի մայրական սիրով՝ բոլոր մայրերի սերը գրկած, եկավ «Սարի սիրուն յարով», «Երեւանով», «Իմ օրրանով», «Սյունյաց սարերով», հայոց «Օջախով», եկավ «Ծովաստղիկով»: Եկավ ու բոլորը թափեց հայ ժողովրդի ծոցը, թափեց հարսանիքներին ու խնջույքներին, թափեց այգիներում, պուրակներում, անգամ փողոցներում, ու մարդիկ սիրով երգեցին իրենցը, որ գտել ու բերել էր գուսանը: Լռեց օտար երգը, այդ երգերը մարդիկ դրեցին իրենց տեղում:

Սա Գուսան Աշոտի չափն էր, տաղանդը, որ մեր օրերում կորած էր որպես քաղաքականություն: Այսքանը գուսանը բերեց. Սիրո ուժը, որ կար մեր լեռներում, ժայռերի խորքերում, աղբյուրներին, ոլոր-մոլոր կածաններում: Իրենց այդ սերը, որովհետեւ գուսանն ինքը համակ սեր էր: Եվ երբ մի անգամ հարցրի.

- Ո՞րն է քեզ համար կյանքում ամենից արժեքավորը, - պատասխանեց.

- Սերը: Ամեն բարու հիմքը սերն է: Սեր չեղավ, կյանք չի լինի:

Սիրում էր իր անցյալի սխալով ուղղել ուրիշի սխալը:

- Մի օր, - պատմում էր, - ուստա Ղազարը, ողորմի հոգուն, իմաստուն մարդ էր, ասաց՝ Աշոտ, գնանք տուն, Շուշանը տոլմա է եփել: Գնացինք: Առաջին պատառը կուլ տալուց հետո ասացի՝ Շուշան, տոլման անալի է, Շուշանը, որ մինչ այդ ուրախ տրամադրությամբ էր, լռեց, տխրեց եւ էլ չխոսեց: Ես էլ տխրեցի, տխուր գնացի տուն: Հայրս տխրությանս պատճառը հարցրեց, ասացի.

- Այ որդի, - ասաց հայրս, - հի՞նչ գործ օնես, շախկան կռնատակի՞տ իր քինացալ: - Պատմում էր ու ծիծաղում: Իսկ գուսանի ծիծաղը վարակիչ էր, աչքերից ջուր քամող:

Գիտեր գնահատել մեծն ու մեծությունը:

Պառկած եմ հիվանդանոցում, լուր տվին, որ գուսանին բերել են հիվանդանոց: Գնացի տեսության: Տրտնջաց, գլուխը հուսահատ օրորեց: Զգացի՝ դեռ ասելիք ունի, չի ուզում կիսատ մնա: Բուժվեց, աշխուժացավ: Հաջորդ օրը նորից մոտն եմ:

- Այ իմ Ալեքսանդր, - ասաց, - էս ի՞նչ է արել էս Արմեն Տիգրանյանը: Վա՜յ, Աստված, էսպես էլ երաժշտությու՞ն կլինի: Մարդիկ էլ կասեն գուսան Աշոտն էլ է երաժիշտ:

Խոսքը «Անուշ» օպերայի նախերգանքի մասին էր:

- Գուսան, - ասացի, - երբ երկու տաղանդները միանում են, կշեռքը ծանրանում է: Թումանյանն ու Տիգրանյանը միացել են մի տեղ: Դու երկու ծանրություն ես կրում, քո ուժը քիչ չի: Շոյվեց, ժպտաց:

Գիտեր մարդկանց դնել իր տեղում:

Կանգնած ենք ուսուցիչների տան մոտ, պատշգամբի տակ, որ կնքել ենք «գուսանի պատ» անվամբ: Մտմտում էր իր նոր երգը: Նման դեպքում խանգարողներ լինում էին, որոնք գալիս-կանգնում, թեմայից դուրս երկար-բարակ խոսում էին, վարպետի միտքը շեղում: Նման մի օր հեռվից դեպի մեզ էր գալիս շատախոսի մեկը:

- Գնանք, գուսան, - ասացի, - գալիս է էն... զահլա է տանելու:

Ձեռքը դրեց ուսիս, պահեց:

- Չի կարալու, - ասաց: Իսկ երբ եկավ, ձեռքով բարեւեց գուսանին եւ ցանկացավ խոսել, գուսանը թե՝

- Ստեփան, քեֆս քեզնից գալիս է, որ մոտենում ես ու բարեւում, իսկույն թողնում ես ու գնում:

Մարդը զգաց գուսանի միտքը, երկար նայեց գուսանին եւ իսկույն հեռացավ: Նայեցի գուսանին, ժպտաց:

Սիրում էր բնությունը եւ հաճախ մեզ՝ տղաներիս, առաջարկում էր գնալ Հուրպատի ձորը՝ իմ այգին, որի անունն ինքն էր կնքել: Գնումներն ինքն էր կատարում, աղից մինչեւ բիբար: Հարցնում էինք իր տաղանդի մասին: Նայում էր ժայռերին, ասում.

- Սրանցից է: Էս ժայռերի խորքերում, մեր աղբյուրներում երաժշտության շատ գանձեր կան... Ծնվողներ էլի են լինելու:

Որքան արագ էին ծնվում երգերը գուսանի հոգում: Մի օր «Կռունկն անցավ խուռներամ, պանդուխտն եկավ աչքիս դեմ», հաջորդ օրը՝ «Այ պիլակին», երրորդ օրը՝ «Երազումս թեւեր առած անցա էն կողմը», հաջորդում՝ «Կշրջեր էն օրեր գուսան մի ալեհեր», «Ծովաստղիկս»...

Սիրում էր նուրբ ու քնքուշ խոսքը եւ նուրբ ու քնքուշ բառը: Մեր կողմից մի բառ ուղղելու ժամանակ քնքուշ էլ պատասխանում էր.

- Երգիչները չեն ընդունի:

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

Ախպոր աղջիկ

Առեւտրի մեջ զգայուն ճաշակ ուներ: Շուկայում ընտրում էր մրգերի ընտիրը՝ առանց նախօրոք գին հարցնելու: Մի անգամ պատահեց, որ վաճառողն արգելեց միրգն ընտրել: Ոչինչ չասաց, միրգը թողեց կշեռքի նժարին, հեռացավ: Քիչ հետո, ինչ-որ մեկն ասել էր, որ գնորդը գուսան Աշոտն էր, վաճառողը մեծ սկուտեղի մեջ մրգերից ընտիրները բերեց ու ներողություն խնդրելով՝ դրեց գուսանի առջեւ:

Շտապել չգիտեր գուսանը: Վերջին գիրքն էր լույս տեսել՝ «Սիրո կրակները»: Որոնեցինք, չկար, չգտանք: Հինգ ընկերներով դիմեցինք գուսանին, ասաց՝ լինելու է: Օրեր անցան, շաբաթներ, ամիսներ, գիրքը չկա:

- Գուսան, ի՞նչ եղավ:

- Լինելու է:

Եվ աշնան մի օր հինգիս կանչեց տուն: Սեղան, սփռոց, գինու կուլան սփռոցի կենտրոնում, տիկին Արաքսյան՝ տնտեսուհու դերում:

- Գուսան, գիրքը, - կրկնում ենք մեկ-մեկ:

Ծիծաղում է քահ-քահ, ապա.

- Առանց գինու ի՞նչ սեր, ի՞նչ «Սիրո կրակներ»:

Դիտմամբ էր ուշացրել մեզ համար վաղուց գնած գրքերի նվիրումը: Ուշացրել էր, որ նոր գինի քամի: Նվերը ստացանք, գինու կուլան կլկլաց, տիկին Արաքսյան երգեց գուսանի քամանչայի հետ, գուսանի հոգու հանգով...

Էլի՞ գնամ գուսանի հոգու հետքերով: Չէ՜, բավական է, շա՜տ են այդ հետքերը, խորն են նրա բնավորության պես...

Ես հաճախ նայում եմ բարձրակա այն չորքոտանի հոյակապ գմբեթին, որ եկեղեցի է հիշեցնում: Եվ ինձ թվում է՝ ուր որ է այնտեղից զանգերի ղողանջ կլսեմ: Եվ լսում եմ: Դրանք գուսանի հոգու զանգերի ղողանջներն են, որոնք կան ամեն հոգում, բոլորի շուրթերին, բոլորի սրտերում... Անմար ղողանջներ...

ԷԼԻՆԱՐ ՇԱՀԵՆ
Կոմպոզիտոր, աշուղագետ,
երաժշտագետ-տեսաբան

1930-ական թթ. ՍՍՀՄ բոլոր հանրապետություններում, այդ թվում Հայաստանում եւ Երեւանում տեղի ունեցան ժողովրդական, լայն զանգվածներ ընդգրկող՝ երգարվեստ ու պարարվեստ ներկայացնող օլիմպիադաներ: Օլիմպիադաների իրականացման նպատակն էր հայտնաբերել տաղանդներ, կատարողներ, երգահաններ, հնագույն երգեր ու պարեր: Իրավամբ այս մեծ շարժումն իրոք հայ արվեստ բերեց ու հարստացրեց նորանոր անուններով, ստեղծագործություններով, վերականգնեց հին երգերն ու պարերը, որոնք մասնագիտական ուսումնասիրությունների ու գրառման արդյունքում մուտք գործեցին պրոֆեսիոնալ անսամբլների ու կատարողների երգացանկեր:

Ահա այս օլիմպիադաներից մեկի ժամանակ էր, որ սկիզբ դրվեց հայ դասական խորհրդային աշուղական արվեստի տիտաններից երկուսի բարեկամությանն ու ընկերությանը:

1938-41թթ. Շահենը Թաթուլ Ալթունյանի ղեկավարած հայկական երգիպարի պետական անսամբլի մենեղգիչ էր, եւ երբ Աշոտը նորաստեղծ երգեր էր բերում եւ ներկայացնում Ալթունյանին, փորձից հետո միասին զբոսնում էին Աբովյան՝ նախկին Աստաֆյան փողոցով, շատ ու շատ հայ երախտավորների էին հանդիպում եւ ժամերով զրուցում նրանց հետ, սովորելու շատ բան կար:

Եթե մինչ այդ Աշոտին երգում էին Սյունյաց աշխարհում, իսկ Շահենին՝ Շիրակում, ապա երկուսի երգերը, շնորհիվ Ալթունյանի, շուտով լայն տարածում գտան եւ Հայաստանում, եւ ողջ ՍՍՀՄ-ում, աստիճանաբար տարածվելով դեպի սփյուռք:

Շահենի արխիվում պահպանվել են թերթեր ու ամսագրեր, որտեղ հանդիպում ենք նրանց երկուսի երգերը, կամ մասնակցությունը տարբեր պլենումներին, նիստերին:

Հայաստանում երգում էին հիմնականում նորանուն այս երկու աշուղների երգերը, 40-ականների կեսերից Երեւան տեղափոխվեց նրանցից տարիքով ավագ, հայտնի ջավախեցին՝ Հավասին: Շահենի ու Աշոտի տարիքային տարբերությունը մեծ չէր, Շահենը ընդամենը երկու տարով էր փոքր Աշոտից, սակայն նրանք ընդունելով Հավասուն ու նրա հետ հաստատելով բարեկամական կապեր, միեւնույն ընկերական կապը պահեցին միմիայն իրարու համար:

Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր աշուղական անսամբլը, բայց շատ է պատահել, որ միասին ելույթների են գնացել, իսկ Շահենն ու Աշոտը՝ առանձին, ավելի հաճախ: Նաեւ եր-

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

գեր են գրվել միմյանց ներկայությամբ:

Երբ Աշոտը գալիս էր Երեւան՝ հյուրընկալվում էր Շահենին, իսկ երբ Շահենն էր մեկնում Գորիս՝ Աշոտին:

Տարիներ անց ճակատագիրն այնպես արեց, որ այս երկու ընկերների բարեկամությունն է՛լ ավելի ամրապնդվի, քանզի Շահենը պետք է հադիպեր ու հանդիպեց Գորիսի Քոչարյանների տոհմից բանասեր, բանաստեղծուհի Ռոզա Հակոբյանին ու ամուսնացավ, գրելով՝ «Սյունյաց չքնաղ դալար բաղից ես քեզի նուբար եմ արել, անմահական սիրով հարբած ոսկե թաս եմ, գիտե՞ս արդյոք» երգը:

Ռոզան ոչ միայն գրում էր, այլեւ՝ երգում, ուներ անչափ գեղեցիկ ու քաղցրածոր ձայն: Նրա ձեռագիր երգարանում, ինչպես բոլոր գորիսեցիների մոտ, գերիշխում էին Աշոտի երգերը (30-40-ականներին գրված այդ երգարանն այժմ պահպանված է Շահենի արխիվում):

Այս անգամ գորիսեցիները սկսեցին իրենց հատուկ հպարտությամբ ասել, որ հիմա Զանգեզուրը երկու տաղանդավոր աշուղ ունի, մեկն իրենց տղան է, մյուսը՝ փեսան: Շահենը հաճախ Աշոտին «աներձագ» էր անվանում ու հոգու հետ խաղում, Աշոտը քիչ կողմնապահ էր, ասում էր, հիմա մեր աղջիկն իր ձեռքում է, պիտի Շահենին լավ նայենք: Ես հիշում եմ՝ տանը մայրս, գորիսեցիներին հատուկ «մեծամտությամբ», երբ հպարտանում էր ու թվարկում զանգեզուրցի հայտնի դեմքերի անունները, հայրս, ծագումով տարոնցի, անմիջապես հայտարարում էր, որ եթե իրենց Մեսրոպ Մաշտոցը չլիներ, ի՞նչ էին անելու քո հայտնիները:

Մի նկար ունեմ, արված Գորիսում, 1956 թվականին, վարպետի այգում, ես 5-6 ամսական աղջնակ՝ գտնվում եմ աշուղ Աշոտի դուստր՝ 12-ամյա Արշալույսի գրկում: Այս նկարը լավագույն վկայություններից է մեր հայրերի ու նրանց ընտանիքների բարեկամության:

Մի անգամ Աշոտը Գորիսից զանգահարեց, լսափողը ես վերցրի, ասաց՝ ախպո՛ր աղջիկ, շուտ-շուտ հայրիկիդ կանչիր , տալով մի մարդու անուն՝ ավելացրեց, որ իր երգը գողացել է, զգացի, որ վրդովված է: Երբ հայրս վերցրեց լսափողը, բավականին ժամանակ ոչինչ չէր խոսում, հետո պատասխանեց, որ ամեն ինչ կանի այդ ստահակին գտնելու ու պատժելու: Այնուհետեւ ամեն ինչ պարզվեց: Ժամանակին մի ինքնակոչ, ինքնուս երգահան կար, ով հետագայում դարձած էլի ինքնակոչ, բայց այս անգամ՝ գուսան, երգ գրելու ժամանակ գրագողության մանիայով էր տառապում: Երբ ես դարձա աշուղագետ, մի անգամ հրապարակայնորեն մոտեցավ ինձ ու բողոքեց, որ ես իրեն, այդպես էլ, որպես գուսան չընդունեցի ու իրենից ակադեմիայում ֆոնդային ձայնագրություններ չարեցի: Ահա այս անձը վերցրել էր Աշոտի հայտնի երգերից մեկի կրկներգն ամբողջությամբ եւ «նստեցնելով» իր անարժեք խոսքերի վրա, տեղավորել էր իր մի երգի մեջ: Իհարկե, հայրս նրան գտել ու յուրովի պատժել էր, որի արդյունքում, սկզբում անհետացավ Հայաստանից, իսկ հետո էլ երկար տարիներ անցավ ընդհատակ: Ի դեպ, մի հայտնի երգ կա՝ գրված 40-ականներին, հեղինակը պատերազմից չէր վերադարձել, այս նույն անձը յուրացրեց երգը, եւ այժմ էլ այդ երգը հնչում է, բայց այդ ստահակի հեղինակությամբ:

Անցան տարիներ, Հավասին արդեն չկար, այս ինքնակոչը որոշեց գուսանի կոչում ստանալ, եկավ Շահենի մոտ, բնականաբար Շահենը առաջարկեց նախ սովորել իր հիմնադրած աշուղական դպրոցում (Գյումրի, մասնաճյուղը՝ Երեւանում), սա թե՝ սովորելու ժամանակ չունեմ, միանգամից խնդրում եմ գուսան օծի, բնականաբար հայրս մերժեց, մի քանի օր անց մեկնում է Գորիս, մոտենում Աշոտին ու նույն խնդրանքով դիմում նրան, Աշոտը հարցնում է՝ Շահենի մոտ եղե՞լ ես, Շահենը դպրոց ունի, գնա աշուղություն սովորի, սա պատասխանում է, որ նույնն էլ Շահենն է ասել: Աշոտը ասում է՝ Շահենը ճիշտ է ասել, բա ի՞նչ ես ուզում ինձնից: Սա պատասխանում է՝ խնդրում եմ, ինձ գուսանի կոչում տուր: Ասում է՝ դե լավ, ծնկի արի: Երբ վերջինս ուրախ-ուրախ ծնկում է, Աշոտը մատները սրելով մի լավ կտտացնում է ճակատին ու ուշադիր իբր լսելով ասում՝ «լա՜վ էլ զնգում է, էս տարտակ կլխավդ ի՜նչ աշուղ, վեր կաց քինա»:

Այդ ստահակին ոչինչ չէր կանգնեցնելու: Շուտով Աշոտը մահացավ, մեկ տարի անց, նաեւ՝ Շահենը: Նա գնելով մի վկայական, դարձավ «գուսան»:

Երբ Հավասին, Աշոտը եւ Շահենը ստացան ՀՍՍՀ ժողովրդական արտիստի կոչում, եղան բազմաթիվ գրախոսականներ, դրանցից կարեւորվեց հատկապես Հովհաննես Շիրազի կարծիքը, ով այս երեք մեծությանը անվանեց հայ երկնակամարի Եռաստղ համաստեղություն:

Աշոտն ու Շահենը լինելով լավ ընկերներ, միաժամանակ իրենց իրավունք էին վերապահում նաեւ որեւէ հարցի քննարկման ընթացքում միմյանց քննադատել, վիճել կամ զավեշտալի հումորներ անել, կատակել: Օրինակ, մեկը-մյուսին ասելով՝ թե մյուս աշուղները, կամ մենք բոլորս քեզնից շատ բան ունենք սովորելու: Բայց եթե որեւէ մեկը ցանկանար կամ գոնե փորձեր այդ ամենին խառնվել, շատ կզղջար, քանզի այդ ամենը միայն իրենցն էր, իրենց հումորը, վեճը, ընկերոջ իրավունքը:

Ես լավ եմ հիշում այս երկուսի մտերմությունը, կան շատ հուշեր, նաեւ այնպիսիք, որոնք միայն իրենցն էին, խիստ անձնական կամ ընտանեկան, եւ ես ինձ իրավունք չեմ վերապահում հրապարակայնացնել, սակայն մի առանձնակի հոգեհարազատությամբ եմ վերաբերել աշուղ Աշոտին, այդ մեծ սյունեցուն, մեծ վարպետին, իմ մոր հայրենակցին եւ, բնականաբար, սիրում ու հարգում եմ յուրաքանչյուր սյունեցու, ինչպես հայրս կասեր, Սյունիքի անգամ ամեն մի քարը, ժայռաբեկորը, թուփն ու ծառը:

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

Հավերժի ճամփորդը

ԱՐԹՈՒՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հայաստանի գրողների միության անդամ, «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ տնօրեն

Գուսան Աշոտը Նազի Դադալյանի եղբոր թոռն է: Արթին ապուպապս եւ Նազի Դադալյանը պապիս պապ Ղազար Խուրշուդյանի եւ Բոխչագյուլ Խուրշուդյանի ծնողներն են եւ Ակսել Բակունցի պապն ու փապը: Խոստացել էի թղթին հանձնել իմ հուշերը, երբ ներկա էի Գուսան Աշոտի հուղարկավորման կարգին՝ 1989թ. ցրտաշունչ փետրվարին: Ինչը կատարում եմ՝ հեռանալով Ստեփան Բակունցի՝ Ակսելի ներկայությամբ տնկած ընկուզենուց, որի տարիքը Գուսան Աշոտի տարիքին հավասար է եւ նրա պես խորն արմատներ ունի մեր հողում:

Ուրեւի ճառագայթները բարեպաստ էին մինչ արարողակարգի հանդիսավոր մասի ավարտը: Ելույթն ավարտեց Արցախից բանաստեղծ ու երգահան Գուրգեն Գաբրիելյանը: Հանկարծ ասես պայթեց երկինքը, երբ Գուսանի դագաղը տեղադրվեց շիրմափոսի մեջ: Փայտաշեն բեմահարթակին կանգնած թաղման հանձնաժողովի անդամների մի մասը եւ հինգ հազար հոգի հուղարկավորության մասնակիցներ, մի քանի րոպեում թողնում են սարալանջն ու հեռանում: Իսկ հանձնաժողովի մի քանի անդամներ պատսպարվում են մշակույթի բաժնի «Կուբան» ավտոբուսում: Բարձրացած սառը հողմն ու փոթորիկը փոշու ահռելի ամպ էին ստեղծել տարածքում՝ կարծես հաստատելով «Թոզկապի» բնույթը: Մի քանի հարյուր ավտոմեքենաների ու մայրաքաղաքից ժամանած մեծաթիվ հյուրերի «Իկարուս» մակնիշի ավտոբուսների շարասյունը, որ խցկվել էին, խցանումների ցայտնոտում, այլեւս չկային: Մշակույթի բաժնի «Կուբան» մակնիշի ավտոբուսին ամրացված ձայնասփյուռն ասես խեղդվել էր ավազախառն մրրիկում:

Բեռնատարի թափքից ընդունել եմ Գորիսի տեղարդ կոմբինատի արհեստական տոնածառի արտադրամասում մետաղե հիմքի վրա պատրաստված տասնյակ ծաղկեպսակները: Գուսանի երկու ազգականների եւ քամու օգնությամբ դրանք մոտեցրել ենք շիրմափոսին: Հող էին լցնում անվանի շինարար, աշխղեկ Դրաստամատ Պետրոսյանը եւ Գորիսի շուկայի մսավաճառ Լյովա Հովհաննիսյանը (ներկայումս հանգուցյալ): Շուրջը դժվար տեսանելի էր, քանզի հողմախառն ավազը խցանել էր աչք ու ականջ: Սերո Խանզադյանը մինչեւ վերջին պահը հետեւել է ավտոբուսից, մոտեցել է հողաթմբին, փոքր-ինչ սայթաքեց եւ ասաց՝ «Գուսանն էլ գնաց... » բառերը, որի առթիվ Լյովան անհաջող կատակեց: Իսկ կլարնետը խցանվել էր ավազով, ինչի պատճառով ներկաներս Գուսանի վերջին երգն անկատար իջանք բլրից: Ճանապարհին խնդրել եմ Դրաստամատին եւ Լյովային գոնե մասնակցել Գորիսի տուրիստական հանգրվանի շենքում բացված հոգեհացի սեղանին: Սակայն նրանք ավտոմեքենայից իջան շուկայի դիմաց: Քաղաքում եղանակը խաղաղ էր:

Փա՜ռք Ձեզ, Աշո՜ւղ Աշոտ՝ հավերժի՛ ճամփորդ:

30 տարի է մեզ բաժանում Գուսան Աշոտի 80-ամյակի հոբելյանը նրա իսկ ներկայությամբ տոնած վերջին առիթից, երբ տոնահանդեսը պատվեց Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների անսամբլը՝ հայ երգի աստղաբույլի կատարմամբ: Գորիսում էին Օֆելյա Համբարձումյանը, Ռուբեն Մաթեւոսյանը, Ռաֆֆի Հովհաննիսյանը, Վարդուհի Խաչատրյանը, Ռիմա Սարիբեկյանը... Ներկա էին սոցիալիստական աշխատանքի հերոս, գրող Սերո Խանզադյանը, ԼՂԻՄ-ից՝ բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանը եւ ուրիշներ:

Իր շքեղությամբ չէր զիջում 100-ամյակի հանդիսությունների շարքը: Սյունիքի մարզպետարանի նախաձեռնություններից էր: Նախ ընթացավ Գուսանի առանձնատան պատին ամրացված ցուցատախտակի բացումը: Նրա ծննդյան հոբելյանի օրը հյուրընկալվեցինք երգահանի առանձնատանը: Գուսանի բնակարանում արձակագիր էդուարդ Ջոհրաբյանի հետ վայելեցինք Արցախից ժամանած եւ Գուսանին աշակերտած ճանաչված քամանչահարի կատարողական արվեստի սքանչելի ելեւէջները, որ հնչեցին նախ «Ղազարի դալուկներ» բարձունքում՝ գերեզմանաթմբին կառուցված վեհակերտ «ռոտոնդա» մահարձանի՝ (հեղ.՝ ճարտ. Ս.Զաքարյան) խոնարհ ու ցողապատ թարմ ծաղիկներով ծածկված Գուսանի տապանաքարի մոտ: Շքեղ ծաղիկների հեզ խոնարհումը կազմակերպված էր Արմեն Իշխանյանի միջոցով՝ քաղաքի կենտրոնում՝ նշանավոր շինարար եւ արտադրու-

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում

Գորիսի տիրոներ-դպրոցականների նախկին դպլատի ալբոմից

թյան կազմակերպիչ, գորիսեցի Գառնիկ Արտավազդի Մինասյանի թեմատիկ ձեւավորած «Ջամ» աղբյուրի հարեւանությամբ Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի բակում տեղադրված երգահանի կիսանդրու պատվանդանին (հեղ.՝ քանդ. Գետիկ Բաղդասարյան):

Միջոցառմանը ներկա հանդիսատեսն իր ձեռքին ուներ հայրենակից կոմպոզիտոր Աշոտ Սաթյանի բնորոշմամբ՝ «Լեռնային արծիվ՝ Ջանգեզուրի բարի ծնունդ» Գուսան Աշոտ 100-ամյակի հիշատակի կապակցությամբ Մարտին Ջիլֆուղարյանի եւ արձակագիր էդուարդ Ջոհրաբյանի պատրաստած գիրքը: Միջոցառման մասնակիցների մոտ էր «Սյունյաց երկիր» թերթի՝ Գուսան Աշոտին նվիրված շքեղ համարը՝ որպես լավագույն արձագանք Սյունյաց աշխարհի երակազարկին: Համարը հովանավորել էր «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, բարերար Մաքսիմ Հակոբյանը: Լույս էր ընծայվել Գուսանին նվիրված Գորիսի «Ջանգեզուր» թերթը: 100-ամյակի հանդիսությունը նախորդին չէր զիջում ներկա գտնվող արվեստագետների ներկայացուցչական կազմով, որ մեծ Գուսանի երկրպագուներն էին, բարեկամներն ու կրտսեր ընկերները: Միջոցառումը ելույթով պատվեցին Երեւանից հայրենիք ժամանած բանասիրական գիտությունների դոկտոր Մարտին Գիլավյանը, Արցախի գրողների միության վարչության նախագահ Վարդան Հակոբյանը: Անզուգական էին Գուսանի ազգական, նշանավոր երգիչ Արթուր Դադալյանի եւ Գուսանի երգի մյուս նվիրյալների սքանչելի կատարումները: Դահլիճում նստել էի ավագագույն ընկերոջս՝ Նապոլեոն Մկրտչյանի կողքին՝ լիովին մշակութային գոտում, նրա հեղինակած գրքույկը ձեռքիս, օրինակելի մի գործչի մոտ, ով տուրիզմ ու թատրոն է կազմակերպել մեր դժվար քաղաքում, որդու՝ շնորհալի դերասան Սեյրան Մկրտչյանի հետ հող էր մշակում, գինի եւ օղի թորում: Ինձ ոգեշնչեց բանաստեղծ Վարդան Հակոբյանի բոցաշունչ խոսքը, ինչն իր բազմաշերտության մեջ որքա՜ն հակիրճ էր ու որքա՜ն խրոխտ: Վ.Հակոբյանը մարդկանց հոգում Արցախի հաղթական ջահը վառեց եւ Արցախ, Մռավ սարին տարավ Սյունյաց սարերի «յայլաների ծուխը»: Նա ոգեշնչել էր ինձ: Այդ մասին ասացի Նապոլեոն Մկրտչյանին: Իմ երախտագիտությունը հայտնեցի ե՛ւ բանաստեղծին, ե՛ւ անզուգական թառահար-քամանչահարին: Նրա անունը հուշեց էդուարդ Ջոհրաբյանը, երբ «Վոլգայով» շտապում էին դեպի «Թարթառ» գետի հովիտը, որտեղ նախապատրաստվում էին տոնելու Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձը: Այդ առթիվ գրեցի «Շուշին կհուշի» բանաստեղծությունը, ինչը 2008-ին տպագրվեց Արցախի «Ակունք» թերթում:

Այնքա՜ն մեծ ներկայություն էր պակասել դահլիճում՝ Գուսանի ծննդյան 80-րդ տարեդարձի եւ 100-րդ տարելիցի միջեւ ընկած քսան տարիների

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

ընթացքում:

Ահա բանաստեղծ Լեւոն Սահակյանի տողերը, ուր առկայծում է ճշմարտության պերճախոս ա՛յս հաստատումը.

«Որ ծանր կշռող գավազաններով
Թագավորները ամենազորեղ
Չեն հասել իրենց ժողովուրդների
անկաշառ սիրուն,
Մինչ դու այդ արիր սազ-գայիսոնով
Եվ երկրավորի
Վայելուչ ու վեհ առաքինությամբ...»:

Ի դեմ Գուսան Աշոտի, այնքա՜ն մեծ ներկայություն է պակասել նույն դահլիճից՝ ծննդյան 80-րդ տարեդարձի եւ 100-րդ տարելիցի միջեւ: Սերո Խանզադյանը ելույթով պատվեց Գուսանին՝ իր եւ Համո Սահյանի անունից շնորհավորեց բեմում նստած հոբելյարին:

Գուսան Աշոտի երգերը մարդու հոգեւոր աշխարհի անապատացման դեմ են ուղղված, ըստ էության՝ հանուն մարդու էկոլոգիայի ներդաշնակման եւ հոգեւորի երաժշտական փիլիսոփայության: Հոգեւորի երաշտը Գուսանը հաղթահարել է իր արվեստով, իր աշխարհի օրենքներով:

Սահմանափակ մեկը կարող է անհամբեր բացականչել, թե Գուսանն ապրել է իր դարը, մինչդեռ սիմֆոնիաների են ծարավ մեր ականջները: Թե՝ Գուսանի հովվական սրինգն ո՞ւր, որ ուռճացվել է: Այստեղ են ասում՝ «իմ մեղուն կորած, քո աչքը ուռած»: Գուսանը սիրված է մեր ժողովրդից, իսկ ժողովուրդը չի սխալվում: Գուսանը փորձարկել է իր երգարվեստի շեշտերը մեր ժողովրդի կենդանի շերտերում: Գուսան Աշոտը հաղթահարել է ինքն իրեն՝ ճշտել ժողովրդականացման փորձաշրջանը: Գուսանի արվեստը դրվատող մասնագիտական պաշարին չեմ տիրապետում, բայց կարող եմ գնահատել նրա բանաստեղծական աշխարհը, որը վեր է երգ ու սիրտ կոչվածից, եւ հասել է հոգու լարերին: Աշուղն այրվել է ցավերով ու հոգսերով, կրակներով ու տագնապներով: Նա ապրել է սիրո դողը, ինչը մշտապես եղյամոտ ու վաղորդյան ցողապատ է, ուրեմն թարմ է ու մշտահմա, ինչպես բնությունը, մշտապես ինքնանորոգման մեջ: Ահա Գուսան Աշոտի գաղտնիքը, քանզի նա չի տիրել, այլ ընդամենը շոշափել է յուրաքանչյուրիս զգացողության ուղեծիրը: Պատահական չէ, որ սյունեցի մեծաթիվ ստեղծագործողներ բանաստեղծություններ են ձոնել Գուսան Աշոտին:

Գուսան Աշոտը սակավաթիվ մեծություններից է, որին բանաստեղծություն է նվիրել Գուրգեն Զանգեզուրցին: Գուրգեն Եգորի Ադամյանի (1910-1995) հետմահու հրատարակված «...Ակսել Բակունցից դեպի 21-րդ դար» (2010) գրքում տողերիս հեղինակը զետեղել է այդ բանաստեղծությունը: Գրքի 48 էջ կազմող առաջաբանում նույնպես ներկայացված է Գուսան Աշոտի հետ նրա եւ Ակսել Բակունցի ազգակցական առնչությունը:

«Սիրով երգեցիր սերը մեր կյանքի
Անուն թողեցիր մարդկության
հոգում...
Մտքար գերեզման մայր
հողի ծոցում,
Սիրով երգեցիր սերը մեր կյանքի:
Դու մեծ զավակն ես մեր
Զանգեզուրի,
Քո սերն է զնգում աշխարհի
սրտում...
Սիրով երգեցիր սերը մեր կյանքի,
Անուն թողեցիր մարդկության հոգում»:

Գուսան Աշոտի նաեւ շնորհալի բանաստեղծ լինելու բացահայտողներից է եղել բանասիրական գիտությունների դոկտոր, Գորիսի Կորնիձոր գյուղից Անդրանիկ Սարգսի Կարապետյանը (1948-2006): Հեղինակել է «Գուսան Աշոտի բանաստեղծական աշխարհը» աշխատությունը:

Ուշագրավ է բանաստեղծ Ապետնակ Գրիգորյանի «Վասն համբերության եւ հրաժեշտի» Գուսան Աշոտի հիշատակին եղերգը:

«Համբերություն եւ քեզ, երգիչ սիրո
Երգիչ արարումի ու տքնության,
Իմ ալեհեր գուսան, իմ վիրավոր,
Օ՜, իմ անխոնջ դպիր
համբերության»:

Գուսան Աշոտին բանաստեղծական տողեր է նվիրել իրավաբան Գարեգին Բաբայանը՝ լինելով նրա երգերի ինքնատիպ կատարողներից մեկը.

Երգերդ մեղուշ, երգերդ անուշ,
Հասնում են մինչեւ խորքը մեր
հոգու,
Խոսքդ մեր սրտին դալիս է նոր ուժ,
Եվ մեր ցավերը բուժում, ամոքում:
Ո՛վ դու մեծ գուսան, կապրես
դարեդար
Քո լույս հանճարով ու քո մեծ
սիրով,
Քանզի անսահման քո սերը, Աշոտ,
Այս չար աշխարհին շատ է
հարկավոր:

Ներկայացվում է Հարժիս գյուղից երջանկահիշատակ մանկավարժ, բանաստեղծ Ադամ Ադամյանի քառատողը՝ Գուսան Աշոտի 100-ամյակի կապակցությամբ:

Դու փայլուն աստղ եւ աշուղական
Շողշողուն ես Ջիվանու, Շերամի եւ
Շիրինի պես,
Երգիդ տողերն են վկայում
հավասարը հավասարին,
Դու նոր դարի Սայաթ-Նովա
Սյունյաց երկրի:

Բանաստեղծ Դուխիկ Հայրապետյանի «Ձոն Գուսան Աշոտին» բանաստեղծությունը վկայում է անսահման սերը, որին ավելին, քան Աշոտը, ուրիշ մեկը չի արժանացել:

«Չափ ու ձեւի մեջ սահման
կա անշուշտ,
Սակայն իմ սերը սահմաններ
չունի»:

Արձակագիր, բանահավաք եւ լրագրող Էդուարդ Զոհրաբյանը «Գորիսի հանրագիտարան» (2008) գրքում ներկայացրել է հայ դասական Գուսան Աշոտ Հայրապետի Դաղալյանի (1907-1989) կենսագրությունը: ՀՀ ժողովրդական արտիստ (1967), Հայաստանի գրողների միության անդամ (1958) գուսանը հրատարակել է երգերի յոթ ժողովածու՝ «Գուսանական երգեր», «Գուսանի սերը» (երկու գիրք), «Սիրո կրակներ», «Սրտի նվագներ», «Ծովաստղիկ», «Լեռներն են կանչում», որոնցում ընդգրկվել են նրա քնարական, հայրենասիրական, խոհափիլիսոփայական, խրատական, երգիծական երգերն ու ասքերը: Ընդգրկվել է «Հայկական համառոտ հանրագիտարան» (1990-768 էջ, 1-ին հատոր) գրքում:

Վաղ հասակում զրկվելով մորից, Գուսանը Քարաշենում եղել է Շուշանանց Առաքել Արզումանի Օհանյանի գառնարածը եւ մոտիկից է շփվել հայտնի աշուղ Աթայի հետ: 14 տա-

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում

րեկանում տեղափոխվել եւ 1928-ին՝ Բաքվից վերադարձել է ծննդավայր՝ Գորիս, զբաղվել գուսանությամբ՝ հովվական սրինգը փոխարինել քամանչայով:

Իհարկե չգիտեի, որ Գորիսում Գուսան Աշոտի 100-ամյակի հանդիսության հաջորդ օրն իսկ կհրավիրվեմ Բակունցի տուն-թանգարանի այգի՝ Արա Քրիստափորի Պետրոսյանի եւ բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆ. Մարտին Գիլավյանի հետ վայելելու այգու խաղողի գինին: Քաջիկ Միքայելյանի խնդրանքով, հաջորդ լուսաբացին, նաեւ «փիթին» պիտի վայելեինք փայտյա գդալներով: Արվեստի ու գրականագիտության գիտակ Միքայելյանի նոր մեկնաբանություններով պիտի վերապրեի հին ու նոր ժամանակների թռիչքը՝ Սիմեոն Վրացեանից մինչեւ Հակոբ Օշական եւ Կոստան Զարյան, Աբրահամ Ալիքյան, Եղիշե Չարենց, Ակսել Բակունց, Վահան Թոթովենց, Համաստեղ, Մնձուրի, գրաբար ու Խաչատուր Աբովյան: Տնօրենը՝ Քաջիկ Միքայելյանը, սեղանապետն էր մի միջավայրում, ուր մշակութային ոգեշնչումներ էին պարգեւում սեղանի մասնակիցներն ու «խանգարում» սեղանապետության ռեժիմը, սեղանապետը սրտնեղում էր՝ «Թողեք աշխատե՜մ»:

Երեւանում՝ Գուսան Աշոտի ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառմանը մասնակցելու նպատակով, 2007թ. հոկտեմբերի 16-ին էդուարդ Զոհրաբյանի եւ Մարտին Ջիլֆուղարյանի հետ, Գորիսից մեկնեցինք օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի շենք:

Էդուարդ Զոհրաբյանից վերցրեցի «Գուսան Աշոտ 100», «Զանգեզուրի բարի ծնունդ» գրքերը եւ հանձնեցի ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանին եւ փոխնախարար Գագիկ Գյուրջյանին, երբ նրանք միջոցառման ավարտից հետո պատրաստվում էին հեռանալ ճեմասրահից:

Գրքի տպագրությունը նախաձեռնել էին ՀՀ Սյունիքի մարզպետարանը, Գորիսի պետհամալսարանը եւ ՀՀ գրողների միության Սյունիքի միավորումը: Գրքի նյութերը հավաքել, կազմել, նախաբանը գրել, խմբագրել, տպագրության էին պատրաստել Մարտին Ջիլֆուղարյանը եւ արձակագիր էդուարդ Զոհրաբյանը:

Համերգը կայացավ «Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլի կատարմամբ (գեղ.ղեկ. վաստ. արտիստ, պրոֆ. Թովմաս Պողոսյան, գործիքային մասի ղեկ. կոմպոզիտոր Արտեմ Խաչատրյան):

Համերգի 1-ին՝ «Սյունյաց սարեր» երգի կատարումն ազդարարեց հաղորդավար Վերա Հակոբյանը:

Այնուհետեւ երգերի կատարումներով հանդես եկան Ռաֆֆի Հակոբյանը («Հով սարեր, մով սարեր»), Սարգիս Խաչատրյանը («Սարի մեխակ»), Սիրանույշ Գալստյանը («Եկ ինձնից մի փախչիր սարերի եղնիկ»): Վերջինիս ծաղկեփունջ մատուցեց Գուսանի դուստր Արշալույսը: Բոլոր երգիչներն էլ ծաղկեփնջեր ստացան:

Համերգին կատարումներով հանդես են եկել նաեւ Ռոմանոս Աղաջանյանը («Աշուն է իջել», «Ոչ մի մայր քեզ պես գոզալ չի ծնի»), Անանիա Հովսեփյանը («Սերս վանքում Տաթեւի»), Մխիթար Քեթցյանը:

«Հավասի» երիտասարդական անսամբլի երգիչ-երգչուհիների կատարմամբ հանդես եկավ երգչախումբը, իսկ երգերը կատարեցին Լուսինե Գասպարյանը («Լուսնի շողով»), Թեհմինե Գրիգորյան եւ Անանիա Հովսեփյան զույգը («Քո սիրուն ձեռքով աշուղ եմ դարձել»), Հովհաննես Մանուչարյանը, Սամվել Վարդումյանը, Իրինա Հարությունյանը: Գուսանի երգերը կատարեցին նաեւ Թեհմինե Գրիգորյանը, Արթուր Մնացականյանը («Եկար անցար մեր թաղով»), Մկրտիչ Աֆրիկյանը («Երգում է գարունդ Ղարաբաղ»), Գրիգոր Սաֆարյանը («Օջախում»): Համերգի վերջում Թովմաս Պողոսյանը կատարեց «Լուսնի շողը պատուհանից ներս ընկավ» երգը:

Գրիգոր Սաֆարյանը Երեւան քաղաքում հանրակրթական դպրոցի տնօրեն է: Մարտին Ջիլֆուղարյանի հյուրընկալ բնակարանում համերգից անմիջապես հետո նա կատարեց եւս երեք երգ երաժշտագետ-պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանի, արձակագիր էդուարդ Զոհրաբյանի եւ տողերիս հեղինակի առջեւ՝ սեղանաշուրջ: Բոցավառ մեր հոգիների լույսը խառնվեց մեծ գուսանի ջահակիր երգին: Երգեց էդուարդ Զոհրաբյանը: Հիշարժան էր Գուսան Աշոտին նվիրված այդ հոկտեմբերյան երեկոն:

Ծավալվեց աշո՞ւղ, թե՞ գուսան անվանումների շուրջ մտքերի փոխանակությունը:

Այս ուշագրավ խնդրին հետագայում գրող, գեղանկարիչ, ՀՀ վաստակավոր լրագրող Վանիկ Սանթրյանն արձագանքել է «Հայաստանի Հանրապետություն» թերթում՝ ներկայացնելով արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր, «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլի գեղարվեստական ղեկավար Թովմաս Պողոսյանի պարզաբանումը: Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի աշուղական արվեստի դասախոս Թովմաս Պողոսյանը նշել է՝ «Բազմիցս ասել եմ, որ եւ աշուղական արվեստը, եւ գուսանական արվեստը մեր մշակութային հարուստ շերտերն են:

Գուսանական արվեստը նախաքրիստոնեական մշակութային մեր շերտն է, որից մեզ պատառիկներ են հասցրել պատմահայր Խորենացին եւ Բուզանդը:

Իսկ աշուղական արվեստը համաարեւելյան երեւույթ է, ավելի ուշ շրջանի արվեստ, որը մուտք է գործել 14-15 դարերում եւ 19-րդ դարի 2-րդ կեսին այն հատկապես Ջիվանու, ինչպես նաեւ մյուսների շնորհիվ ազգայնացվել մեկընդմիշտ: Գուսանական արվեստն ավելի ազատ ոճի ստեղծագործություն է, քան աշուղականը: Աշուղականն ավելի կանոնիկ արվեստ է, կատարյալ ձեւավորված կանոնների, տաղաչափական ձեւերի, օրենքների մեջ գրվող տեքստեր ունի:

Բովանդակային առումով նույնպես գուսանական եւ աշուղական երգերը տարբերվում են իրարից: Գուսանները հիմնականում գովերգել են մեր թագավորներին, իշխաններին, զորավարներին, թագուհիներին, նրանց քաջագործությունները, հաղթանակներն ու հաղթարշավները: Իսկ աշուղական արվեստը սիրո արվեստ է: Բոլոր աշուղներն անվերապահորեն սեր են երգել: Սակայն Ջիվանիով տեղի է ունեցել ոչ միայն այդ

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

արվեստի ազգայնացումը, այլեւ բովանդակային առումով այս արվեստը մտավ նաեւ նոր թեման՝ հատկապես ազգային-հայրենասիրական երգի թեման եւ գաղափարը: Երկուսն էլ փոխառություններ են՝ «Գուսանը» պահլավերենից, «Աշուղը»՝ արաբերենից: Ռուսերենը փոխառել է հայերենից «աշուղ» տերմինը: Աշուղական արվեստը եւ գուսանական արվեստը երկուսն էլ բարձր են, երկուսն էլ մեր ազգայինն են»:

Կոմիտասն աշուղական արվեստի իսկական կոչումը պատկերացնում էր հայ երգի հարազատ ակունքներից բխող երաժշտությունը: 1949 թվականին՝ ըստ երաժշտագետ Շարա Տալյանի, «Երգային արվեստն ունեցել է իր տարբեր ճյուղերը՝ ժողովրդական, որի տեսակներն են՝ գեղջուկ երգերը-անաղարտ երգերը կամ կոմիտասյանը եւ քաղաքի ժողովրդական երգերը, որոնք հորինել են անհատները: Երկրորդ՝ պրոֆեսիոնալ աշուղական: Աշուղական արվեստը մեր վիպասանների ու գուսանների արվեստի նույնացումը չէ եւ օտար ազդեցություններից մաքրվելով դարձել են ինքնատիպ հայկական: Արեւմտահայության աշուղական երգերը գերազանցապես էպիկական բնույթ ունեն, արեւելահայերենը՝ լիրիկական: Առաջինները գործ են ածել՝ սազը /զանազան ձեւի եւ մեծության/, քամանին, որ հետագայում փոխարինվել է ջութակով /ծնկի վրա դրած/ եւ սանթուրը, երկրորդները գործ են ածել սազը, քամանչան եւ հետագայում թառը, որով եւ հեռացել են բուն աշուղականից եւ մոտեցել սազանդարա-աշուղականին: Սազանդարա-աշուղական ուղղության ներկայացուցիչները պահում են աշուղականի արտաքին հատկանիշները՝ հիշատակում երգի վերջին տան մեջ իրենց կեղծանունը: Այս ուղղության խոշորագույն ներկայացուցիչն է Գրիգոր Տալյանը՝ Շերամը, իր բանաստեղծական մեծ տաղանդով, հիանալի եղանակներ հորինելու խոշոր ընդունակությամբ: Նրա մելոդիաների ակունքները պետք է փնտրել մուղամների եւ նրանց գյաֆերի մեջ, իսկ այդտեղ վճռական դեր է խաղացել նրա գործիք-թառը: Շերամն իր տաղանդի մեծությամբ եզակի տեղ է գրավում եւ ճիշտ կլիներ անվանել նրան ժողովրդական բանաստեղծ-կոմպոզիտոր:

Սազանդարա-աշուղական ուղղության են պատկանում ներկայումս մեծ մասամբ նրանք, ովքեր իրենց աշուղ կամ գուսան անունն են տալիս: Աչքի ընկնողը զանգեզուրցի շնորհալի Աշոտն է:

Արեւմտյան աշուղության այժմյան տաղանդավոր ներկայացուցիչն է ախալքալաքցի Հավասին: Սա իսկական աշուղ է, ինչպես նշանավոր աշուղ Շիրինը:

Վերջին հիսնամյակում դուդուկ նվագողների հորինած արեւելյան եղանակների վարպետներից էին թիֆլիսեցի Բագրատը եւ ուրիշներ:

Ինքնուրույն տեսակի ներքո են մեր պրոֆեսիոնալ կոմպոզիտորների ինքնուրույն ստեղծագործությունները՝ երգ, ռոմանս, խմբերգ, օպերա եւ այլն»:

«Ի՞նչ գործիքների նվագակցությամբ երգել» վերնագրի ներքո, ըստ հոդվածագրի՝ Շարա Տալյանի, «Կոմիտասն ասում է, որ մեր ժողովուրդը գեղջուկ երգը կատարում է առանց նվագի, որ ամեն մի ժողովուրդ կարող է ունենալ մեկ գործիք: Նա հայկական է համարում փողը: Շատ վատ կարծիք է հայտնում զուռնայի մասին՝ «զուռնայի բռնի ձայները» եւ այլն: Կոմիտասը գեղջուկ երգերը մշակելիս դիմել է դաշնամուրի նվագակցությանը:

Մեզ մոտ ընդունված երաժշտական գործիքներն են՝ սազ, քամանի, սանթուր, ուդ, քանոն, դուդուկ, քամանչա եւ թառ: Թառը համեմատաբար նոր գործիք է հայ ժողովրդի համար, եկել է Իրանից, սազանդարական արվեստի հետ: Նա ընդունված է արեւելահայության որոշ մասի մեջ, գլխավորապես Սյունիքում, որտեղից տարածվել է: Հայ գյուղացու կենցաղի մեջ ընդունված չէ: Ամենանշանավոր հայ թառանվագները ղարաբաղցիներն են, ինչպես՝ Մեծ Գրիգորը, Ավագ Թարխանյանը, Փոքր Գրիգորը /Թաթի տղա մականունով/, Բալա Մելիքյանը, Ղորղանյանը, բժիշկ Վերդյանը եւ ներկայումս Սեյրանյանը եւ ուրիշներ: Որ թառը համեմատաբար նոր գործիք է մեզ մոտ, դրա լավագույն ապացույցն այն է, որ Սայաթ-Նովան իր թված ութ նվագարանների ցանկում՝ սազ, քամանչա, սանթուր, չոնգուր, ամբուրե, դափ, դավուլ եւ ղավալ, չի հիշատակում թառը:

Մենք ժողովուրդների ստեղծագործած մուղամները շատ բարձր ենք գնահատում իբրեւ մարդկային կուլտուրայի լավագույն նմուշ: Դրանք մեզ համար հարազատ եւ ընդունելի են այնպես, ինչպես Բեթհովենի, Չայկովսկու ստեղծագործությունները»:

Էդուարդ Զոհրաբյանի խմբագրմամբ, դեռեւս 2002 թվականին, հրատարակվել են Ռուբեն Աշոտի Դադալյանի /Դադալ/՝ «Հայ մեծ գուսան Աշոտի որդու տարբեր տարիների գրված բազմաբնույթ թեմաներով անտիպ բանաստեղծությունները, քառյակները, աֆորիզմները, թարգմանությունները, նամակները, իմաստասիրական խոհերն ու գրական հարցերին նվիրված հոդվածները որպես նրա պայծառ հիշատակի հետմահու հուշարձան»: «Անավարտ քնար» 2002.-108 էջ: Գիրքը ստացել եմ Գուսանի որդու՝ Համլետի ընծայագրով:

Նամակ ուղացա հայրենի երկրից,
Մայրենի իմ սուրբ լեզվով
էր գրված,
Եվ սիրտս ճչաց խինդ ու
բերկրանքից,
Թողթին այդ աչքիս կաթիլը մնաց:
Նամակն այդ որպես մի սուրբ
թալիսման
Պահեցի ծոցում՝ սրտի ջերմությամբ,
Միրո կարոտից անապ, անսահման
Թեւ առա, թռա՛ մանկան
խենթությամբ:

Գրքի տպագրությունը հովանավորել է հեղինակի կրտսեր եղբայրը՝ Համլետ Աշոտի Դադալյանը: Վերջինիս անդրանիկ բանաստեղծությունների գիրքը նախապատրաստվել է տպագրության համար: Անտիպ գիրքը տոգորված է Գուսան Աշոտի, մայրական քնարի անսփոփ հույզերով եւ հայրենի Գորիսի ջերմ սիրով: Անտիպ գրքին ծանոթացել եմ Համլետ Դադալյանի առաջարկով՝ վերապրելով մեծ Գուսանի հետ վաղեմի հուշերը: Նա առանձնահատուկ էր ինձ ընդունում, հաճախ հիշատակում էր իր ազգական պապիս՝ Գուրգեն Ադամյանին:

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

Գուսանի վիշտը

Ստալինի կյանքին մատաղ,
Չոր դաշտերը դարձել են բաղ.
Նրա ճարտար խելքին մատաղ,
Որ ուժ տվեց իմ քնարին:

ԷԴՈՒԱՐԴ ՋՈՒՐԱԲՅԱՆ

Գուսան Աշոտի ծննդյան 100-ամյակի առթիվ, մեր հայրենակից Մարտին Զիլֆուղարյանի հետ, պատրաստելով այս ոչ ընդարձակ գիրքը, մենք հիմնականում օգտվեցինք մեր համերկրացիների հուշերից ու պատմություններից, մեր տարածաշրջանի լրատվամիջոցներից, նշանավոր արվեստագետների ասույթներից: Բայց Աշոտն այնքան Մեծ է ու Դասական, այնքան հարատեւ ու Արդիական, որ նրա ապրած կյանքն ու ստեղծագործական գործունեությունը չես կարող տեղավորել նույնիսկ մի քանի հատորում: Ես կփորձեմ 20-րդ դարի հայ մեծատաղանդ Աշուղի կյանքից պատմել մի քանի դեպքեր, որոնք առնչվել են նաեւ մեզ հետ, եւ կարծում եմ, ուշագրավ են:

Գուսանի եւ իմ հայրական տները գտնվում էին Գորիսի միեւնույն փողոցում, որը տարբեր ժամանակներում տարբեր անուններ է ունեցել՝ Ցարսկայա, Մելիք-Յուսեինյանց, Մանուչար Բեկի, հետագայում՝ Կարմիր Վարդան, Լենինի, իսկ այժմ՝ Մաշտոցի, իրարից մի քանի մետր հեռավորության վրա: Առաջին անգամ ես նրա տանը եղա 1943թ. պատերազմական ծանր օրերին՝ Աշոտի ավագ որդի Ռուբենի հետ: Մենք միասին հաճախում էինք Գորիսի միակ մանկապարտեզը, որը հայտնի էր ընկեր Լուսիկի մանկապարտեզ անունով: Բացի Ռոբերտից (այդպես էինք կոչում Ռուբենին) մեր ընկերներն էին Սաշիկը (Շչորս Դավթյանը՝ հետագայում կուսակցական, պետական աշխատող, լրագրող, բանաստեղծ, բանասիրական գիտությունների թեկնածու), Արմո Գյուլամբարյանը (հետագայում՝ նշանավոր իրավաբան), Կոմունար Հարությունյանը (հետագայում՝ բժիշկ), եւ ես՝ Էդուարդ Զոհրաբյանս:

Երբ մտանք Գուսանի տունը, ես նրան տեսա այգում: Գարուն էր, բահով փորում էր վարդի՞, թե՞ հասմիկի մի թփի արմատների շուրջը: Ես ակամա ուրախ բացականչեցի՝ բռնելով Ռոբերտի ուսը.

- Աշոտ դյադյան քո հա՞յրն է...

- Հա, բա էլ ո՞ւմ:

Աշոտը թողեց բահը, եկավ, խառնեց իմ ու Ռուբենի մազերը, ապա հարցրեց.

- Ինձ որտեղի՞ց գիտես, բալաս:

- Մանկապարտեզից... Ամեն օր մեր խմբում էսպես նվագում է Աշոտ դյադյան, - ես ձեռքերով ցույց եմ տալիս, թե ինչպես է նվագում Գուսանը:

- Իսկ որեւէ երգ գիտե՞ս...

Մանկապարտեզի հանպատրաստից երգչախմբի մեներգերը կատարում էինք ես եւ Ռոբերտը: Ռոբերտը լավ էր երգում եւ թավշյա ձայնով տարբերվում էր մյուսներից: Մեր դաստիարակչուհին մեզ մի քանի երգ էր սովորեցրել, այդ թվում Աշոտի երգերից: Ես նայեցի Ռոբերտին եւ մենք, ասես մի ձայն դարձած, սկսեցինք երգել Աշոտի «Իմ Հայաստան» երգը.

Մայր գթառատ, իմ Հայաստան,
Երգեմ կյանքիդ քսան դարին:
Դեմ աշուղներ, կապեք դաստան՝
Մեկտեղ գովենք մեր այս դարին:

Դալար մնան միշտ, հավիտյան
Ծաղկած դաշտերն Արարատյան,
Տրակտորիստ յարս՝ Կարսյան,
Որին ոսկե մեդալ տվին:

Զքնաղ ես դու մայր Երեւան,
Հայելու պես լիճդ Սեւան,
Երջանիկ կյանք, լավ օթեւան,
Աղթիկ դուքից, բազալտ քարից:

Գուսանն ուրախացավ: Մի կին մեզ լվացած գետնախնձոր տվեց, իսկ Աշոտը, հայրաբար գրկելով ուսերս, հարցրեց.

- Ո՞ւմ տղան ես, բալաս:

Ես տվեցի ծնողներիս անունը: Նա զարմացավ եւ ճանաչելով նրանց, քիչ տխրեց ու ասաց.

- Հայրդ երեւելի մարդ է...

Շուտով կռիվը կվերջանա, նա ճակատից կգա, բալաս... Հենց մի երկու երգ էլ երգեք, մի երկու անգամ քնեք վեր կենաք, կռիվը կվերջանա...

Հետագայում մենք մանկապարտեզում սովորեցինք ու երգեցինք Գուսանի «Մայիսյան երգ», «Օդաչուհին» եւ այլ երգեր, որոնք մեզ հետ տարանք դպրոց:

(Նրանցում կային ստալինյան ժամանակաշրջանի գովերգման թեթեւակի երանգներ, ինչպես ասենք՝ «ստալինյան անմար սերը մեր սրտում», «հանճարները մեզ սեւ օրից փրկել են» («Մայիսյան երգ», 1940թ.), «սովետական հայրենիքիս սրտով սիրենք, ստալինյան մեր այս դարն էլ ուրիշ դար է» («Օդաչուհին», 1941թ.), «խաղաղության նավը հավետ վարում է մեծ նավավարը» («Խաղաղության երգ») եւ այլն, որոնք հետագայում իսպառ վերացան նրա ստեղծագործություններում):

Ես հաճախ էի այցելում նրանց տուն, բայց երբեմն Գուսանին տեսնել չէր հաջողվում:

Նա կամ զբաղված էր՝ նոր երգեր էր հորինում, կամ համերգի էր իր խմբի հետ, կամ լինում էր հարեւանի՝ Զանգեզուրում եւ նրա սահմաններից դուրս հայտնի կույր թառահար Թառչի Ղազարի հետ:

Այո, դժվար էր հանդիպել նրան, բայց այդ օրերից էր, որ ես ճանաչեցի աշուղ Աշոտին ու երբեք չէի կռահում, որ նա հետագայում դառնալու է իմ ամենամեծ բարեկամներից մեկը եւ նրա հետ իմ շփումները լինելու են ավելի մտերմական, հաճախակի թե՛ Գորիսում, թե՛ Երեւանում: Նա ինձ

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

համար ե՛ւ հայր էր, ե՛ւ հորեղբայր, ե՛ւ ավագ ընկեր ու խորհրդատու (ընդունեք՝ ինչպես կուզեք) եւ միայն ինձ էր դիմում «բալաս» հայրական-փաղաքշական, իսկ հետագայում նաեւ՝ «Զոհրապ» քիչ ասես պաշտոնական ձեւերով:

- Ինչո՞ւ՝ «Զոհրապ», - հարցրի մի օր:

- Դու արդեն լուրջ մտավորական ես, լրագրող եւ գրող... Սերոն հավանում է քո գրածները, - բացատրեց նա, - բայց դու, անհոգ կաց, մնում ես իմ բալաս, իմ Ռոբերտս...

Գուսանը ծանր, անձնական բազում հարվածներ է կրել սկսած մանուկ հասակից: Հինգ տարեկան էր, երբ մահացավ մայրը՝ Դիցուհին, որը հիանալի կատարում էր օրորոցային երգեր, քնեցնում իր կրտսեր որդի Աշոտին: Բազմաշունչ էր նրանց ընտանիքը. Աշոտն ուներ իրենից ավագ երեք եղբայր եւ չորս քույր: Եվ նրանցից միայն նորածին Աշոտին էին կնքել Տաթեւի վանքում:

Լավ երգում էին նաեւ մայրական կողմի պապ, առակասաց եւ հեքիաթասաց Արզումանը, խաշնարած, նաեւ վարուցանք անող ու որմնադիր հայրը՝ Հայրապետը: Այս մթնոլորտում էլ ձեւավորվեցին Աշոտի երաժշտական ունակությունները:

Մորից վաղուց որբացած Աշոտը հորից զրկվեց ավելի ուշ, արդեն հասուն ընտանիք կազմած տարիքում, պատերազմի տարիներին: Ապա հետեւեց նոր հարված. մահացավ կինը՝ Հասմիկը, որի կորուստը շատ ծանր տարավ Գուսանը: Ամուսնացավ երկրորդ անգամ: Սակայն այս անգամ էլ դժբախտությունը չշրջանցեց նրա օջախը, կինը՝ Աշխենը, ավտովթարի զոհ դարձավ:

Գուսանի վիշտն անսահման խորացավ, երբ ինչ-որ մեկի ճամպրուկը կորչելու համար բանտարկեցին նրա ավագ որդուն՝ մեր ընկեր Ռոբերտին: Ես հիշում եմ նրա միշտ ժպտացող շեղ աչքերի զուլալ արցունքները, երբ նրան տանում էին: Այդ զուլալության ու հայացքի մեջ հանցանքի նույնիսկ նշույլ չկար, եւ խորհրդային իրավապահներն իզուր կործանեցին տաղանդավոր պատանուն, որը բանաստեղծություններ, երգեր էր գրում, ինքը նվագում եւ երգում: Եվ հայտնի չէ՝ ինչպիսին կլիներ Ռոբերտի հետագա ճակատագիրը, եթե նրա ազատությունը չշղթայեին սիբիրյան կալանավայրերում:

Ես Ռոբերտին հանդիպեցի շատ տարիներ հետո: Փոքր եղբայրը՝ Համլետը, զանգահարեց ու ասաց, որ Ռոբերտը եկել է, ընկերներին է ուզում տեսնել: Գնացինք, փարվեցինք հին օրերի ջերմությամբ ու կարոտով, մի քանի օր անցկացրինք միասին: Արդեն ամուսնացել էր, ուներ ընտանիք, հայրական օջախ էր վերադարձել կնոջ՝ ազգությամբ ղազախուհի Նագիմայի հետ՝ վերջինիս գրկին դեռ հազիվ բլբլացող Աշոտ որդին:

Այնուհետեւ Ռոբերտը մեկնեց Վոլգոգրադ, որտեղ ապրում եւ աշխատում էր, այնտեղ էլ մահացավ 1981 թ-ին՝ 45 տարեկան հասակում:

Այս հարվածը, հավանաբար, ամենածանրն էր Գուսանի համար:

2002 թվականին, Գուսանի կրտսեր որդի Համլետի նախաձեռնությամբ եւ միջոցներով, լույս տեսավ Ռոբերտի բանաստեղծությունների, գրականագիտական հոդվածների, աֆորիզմների եւ արձակ ու չափածո այլ ստեղծագործությունների ժողովածուն՝ «Անավարտ քնար» խորագրով: Ես հպարտ եմ, որ հնարավորություն ունեցա կազմելու, մշակելու, խմբագրելու եւ վերնագրելու ինձանից ուղիղ մեկ տարի տասը օրով ավագ մանկությանս ընկեր, վաղամեռիկ Ռոբերտի գիրքը: Ափսոս, Գուսանը չտեսավ այդ ժողովածուն, որը, կարծում եմ, ուրախության մի բուռն խարույկ կբռնկեր նրա ներքնաշխարհում՝ փարատելով անցյալի բոլոր վշտերը:

...1972թ. ապրիլին ինձ առաջարկեցին ղեկավարել Գորիսի քաղխորհրդի գործկոմի մշակույթի նորաբաց բաժինը: Այդ ժամանակ ես աշխատում էի ռադիոպետհեռուստատեսությունում եւ դժվարությամբ համաձայնեցի: Բաժինը չուներ նույնիսկ գրասենյակի շենք, բայց ուներ մեկ բիլիարդանոց, զբոսայգի, երաժշտական դպրոց, հանրային եւ մանկական գրադարաններ: Երեք օրվա վարիչ էի, երբ ինձ մոտ եկավ Գուսանը, շնորհավորեց, ապա զննելով տնտեսությունս, ասաց.

- Բալաս, էս բուլվարով եւ բիլիարդով մշակույթ չի լինի: Աշխատասենյակիդ կեսն էլ փայտանոց է, բա եղա՞վ...

- Կարուսել էլ ունենք, առաջին անգամ քաղաքում տեղադրված, երեխաներն զբաղվում են, - բացատրեցի ես, ասես արդարանալով, - կամաց-կամաց բաժինը տեսքի կգա:

- Մինչեւ այստեղից երգ ու նվագի ձայն չհորդի, բաժին չի դառնա, մշակույթ չի լինի:

Գուսանն առաջարկեց մշակույթի բաժնին կից հիմնադրել ժողգործիքների համույթ՝ իր գլխավորությամբ, համերգներով հանդես գալ հանրապետության շրջաններում: Ես ընդունեցի նրա առաջարկը եւ Գուսանի հետ գնացինք քաղխորհրդի գործկոմի այն ժամանակվա նախագահ Գերասիմ Հարությունյանի մոտ:

Լսելով մեզ, նա ուրախացավ եւ ասաց.

- Գուսան ջան, էդիկին ես եմ նշանակել, ես էլ նրան կօգնեմ... Որոշեցեք համույթի թվակազմը, իսկ ես կօգնեմ նվագարանների, հագուստի ձեռք բերման եւ անհրաժեշտ այլ հարցերում...

Մոտ 15 շնորհալի մարդիկ ընդգրկվեցին անսամբլում՝ նվագողներ, երգիչ-երգչուհիներ եւ, իհարկե Գուսան Աշոտն իր տիկնոջ՝ Արաքսյա Ղալեչյանի եւ հին երգչուհի, Գուսանի երգերի լավագույն կատարող, նրա նախկին անսամբլի մենեղգչուհի Ռոզա Բարաթյանի հետ: Մինչեւ մեկ ամիսը համույթն արդեն պատրաստ էր հյուրախաղերի: Քաղգործկոմի նախագահ Գերասիմ Ասատուրիչը բավականին գումար էր հատկացրել, նաեւ թույլատրել էր համույթի համար օգտագործել զբոսայգուն հատկացված մի քանի հաստիքներ: Նվագողների, երգողների համար տեղի կենցաղսպասարկման կոմբինատում կարել էին բեմական հիանալի արտահագուստ, որում առանձնանում էր Գուսանի մուգ մոխրագույն կոստյումը, որի կտորն ընտրել էր կոմբինատի այն ժամանակվա տնօրեն, Աշոտի ազգակից եւ բարեկամ Գուրգեն Դադալյանը:

Հյուրախաղերն սկսվեցին՝ Գորիս, Զանգեզուրի մյուս շրջաններ, դրանց գյուղերը: Ամենուր՝ անշլաղ: Համույթի կազմում ընդգրկված էին քաղաքի բոլոր կարող ուժերը, նաեւ երաժշտական

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում

Հուզաթաթավ զգացմունքների մեծ երգիչը

Գուսան Աշոտի 80-ամյակին նվիրված հանդիսության երեք նկարը՝ էջ 16-ում

Գորիսի պետական դրամատիկական թատրոնի դահլիճն այդ օրը լեփ-լեցուն էր: Այնտեղ տեղեր էին զբաղեցրել Գորիս քաղաքի ու շրջանի աշխատավորական կոլեկտիվների ներկայացուցիչները, Ադրբեջանական ՍՍՀ Լաչինի ու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի շրջանների պատվիրակությունները, Երեւանից եւ հանրապետության այլ քաղաքներից ժամանած հյուրեր, արվեստի գործիչներ, մեր հայրենակից, անվանի արձակագիր Սերո Խանզադյանը՝ մասնակցելու տաղանդավոր երգահան, մեծանուն գուսան Աշոտի ծննդյան 80-ամյակին նվիրված մեծարման երեկոյին:

Հանդիսավոր ժողովը ներածական խոսքով բացում է շրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանը, այնուհետեւ համառոտակիորեն ներկայացնում գուսան Աշոտի գրական ու երաժշտական ստեղծագործական գործունեության անցած ուղին: Նա մասնավորապես ասաց.

- Այսօրվա այս տոնը նվիրված է հայ ժողովրդի ականավոր զավակներից մեկի՝ գուսան Աշոտի ծննդյան 80-ամյակին: Գուսան Աշոտը Զանգեզուր լեռնաշխարհի բարի ծնունդներից մեկն է, որ եկավ համալրելու հայոց մեծերի աստղաբույլը: Նա մեր երկրում ու սփյուռքում հանրածանոթ անուն է հայ գուսանական պոեզիայի եւ կատարողական արվեստի ասպարեզում: Իր տաղանդի ուժով եւ ստեղծագործական անհատականությամբ նա դարձել է մեծահանճար Սայաթ-Նովայի, Ջիվանու, Շերամի արժանավոր հետնորդը:

Շուրջ 6 տասնամյակ է, որ ստեղծագործում է նա, հայրենի երգարվեստը հարստացնում բազմաթիվ մնայուն գործերով, որոնք էլ համալրում են մեր երկրի պրոֆեսիոնալ անսամբլնե-

դպրոցի տնօրենը, մեկ ուսուցիչ, նույնիսկ ես՝ բաժնի վարիչս, որ երգում էի եւ կատարում սիրելի աշուղի «Հով գիշեր, մով գիշեր», «Մուրղուզա եղնիկ», «Երազումս Արազն անցա», «Կարոտի երգ» եւ այլ երգեր, որոնք իմ ձայնին հարմար էր գտնում Գուսանը: Ի դեպ, «Կարոտի երգ»-ի մեղեդին նա հորինել է հենց իմ ձայնի վրա, մի քանի անգամ ինձ կրկնել տվել քամանչայի նվագակցությամբ, այնուհետեւ այն նոտագրել ու կատարել է միայն Հովհաննես Բաղալյանը: Մի անգամ ինձ բախտ վիճակվեց այդ մեծագույն երգչի հետ կատարել «Կարոտի երգ»-ը, երբ նա կնոջ հետ եկել էր աներոջ գյուղը՝ Քարահունջ եւ այցելել էր Գուսանին:

- Դու լավ ձայն ունես, շարունակիր երգել, - ձեռքն ուսիս դրեց երգիչը, ասելով, - ոչ բոլորին է հաջողվում ճիշտ մեկնաբանել մեծ Վարպետի երգը... Ապրես...

Եկավ Ղարաբաղ հյուրախաղերի մեկնելու պահը: Սակայն դժվարությունը կայանում էր նրանում, որ համերգային տոմսերը սպառվել էին եւ նախարարությունից սպասում էինք դրանց ստացմանը: Բայց, իզուր... Հյուրախաղերը չխափանելու համար դիմեցինք այլ միջոցի՝ օգտագործելով կարուսելի հինգ կոպեկանոց տոմսերը, որոնք վերափոխեցինք համերգային արժեքի գնով՝ տեղյակ պահելով նախագահին:

- Չի կարելի, - ասաց Գերասիմ Ասատուրիչը, - խորհրդակցեք ֆինբաժնի վարիչի հետ:

Քաղֆինբաժնի վարիչը լսելով ինձ, միանգամից ասաց.

- Ի՞նչ ակնկալիք ունեմ դրանից, եթե տոմսերի այդ կապուկի վրա դնեմ իմ կնիքը... Դա հանցանք է...

- Ոչ մի ակնկալիք... Կնքիր հանուն Գուսանի:

- Չեմ կարող, ազատ ես...

Հարցերն, իհարկե, լուծվեցին, մեզ օգնեց շրջֆինբաժվար Կարլ Գրիգորյանը, բայց զգուշացրեց, որ իրացված տոմսերի ամբողջ գումարի մինչեւ վերջին կոպեկը պիտի փոխանցվի բանկ: Այդպես էլ արվեց: Համերգներն անցան մարդաշատ դահլիճներում, բերեցին ահագին եկամուտ: Բայց տոմսերի մի կապուկից, ընդամենը վեց տոմս, կնքված կազմի մեջ, ադմինիստրատորը դրեց իմ սեղանին, որը հաջորդ օրը չգտնվեց:

Բայց երկու օր անց կանչեցին դատախազությունից, ինձ հանձնեցին այդ տոմսերը եւ խորհուրդ տվեցին.

- Լավ է, որ ոչ մի կոպեկ չեք յուրացրել, ամեն ինչ ստուգեցինք, - ասաց իմ հին ընկեր դատախազը եւ խորհուրդ տվեց, - ազատվիր հաշվապահիցդ, նա ձեզ շատ փորձանք կբերի:

Նա ինձ հանձնեց մնացորդ տոմսերը:

Գուսանը, լսելով այս մասին, շատ հուզվեց ու զարմացավ.

- Բո, բո, բո՜, մարդկանց համերգ տաս, ուրախացնես, հետո՝ մեղադրե՞ն... Բալաս, ուզո՞ւմ ես համույթը ցրենք:

- Ո՛չ մի դեպքում:

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

րի երգացանկերը:

Մեծ է իր կյանքի 80-ամյակը թեւակոխած գուսանի երգարվեստի հմայքը, արվեստ, որի հիմքը կազմում են երաժշտության ու խոսքարվեստի ներդաշնակությունը եւ կատարման վարպետությունը: Աշոտին, որպես մեծ գուսանի, բնորոշ է հավասարապես բանաստեղծ եւ երգահան լինելու երջանիկ պատեհությունը: Նրա արվեստի մեջ տեքստն ու մեղեդին այնպես են միաձուլված, որ դժվար է որոշել դրանց սահմանները: Գուսանը՝ նշանավոր երաժիշտն ու բանաստեղծը, մեր բազմադարյա գուսանական արվեստի պատմության մեջ նշանավորում է մի նոր շրջան, որն իրավամբ կարելի է կոչել իր անվամբ:

Լայն են գուսան Աշոտի ստեղծագործության ընդգրկման սահմանները: Նա երգել է սերը, հայրենիքը, մորը, ստեղծարար աշխատանքը, գրել է նաեւ բարոյախրատական, խոհափիլիսոփայական երգեր, նրա արվեստի բոլոր կողմերը կարելի է ամփոփել մեկ բառ-հասկացության մեջ՝ սեր: Այո, ասես, նա ծնվել է սիրելու եւ երազելու համար, միշտ էլ հավատարիմ մնալով իր երազանքներին:

Հայրենասիրությունը գուսանի քնարի ամենահուզաթաթավ լարերից մեկն է, որը հորդաբուխ է եւ առողջ: Դրա ակունքը հայոց աշխարհն է, մեր ժողովուրդը եւ նրա պատմությունը:

Ով ժողովուրդ, իմ ծնողը
դո՛ւ ես, դո՛ւ,
Ինձ կյանք տվող, ինձ սնողը
դո՛ւ, ես դո՛ւ,
Քո շեն այգում ես մի տերեւ
անցողիկ,
Ինձ փայփայողը, ինձ պահողը
դո՛ւ ես, դո՛ւ:

Հանրահայտ է, որ հայրենիքի ըմբռնումը սկսվում է ծննդավայրից: Գուսան Աշոտի համար հայրենիքի էպիկենտրոն վայրը մեր մեծ հայրենիքի այս գողտրիկ անկյունն է: Զանգեզուրն իր չքնաղ բնությամբ, վեհանիստ սարերով, երկնքի հետ հավերժ զրուցող լեռներով եղել է գուսանի ստեղծագործական ներշնչանքի աղբյուրը: Սյունյաց երկրի գովերգմանը նվիրված հանրահայտ երգը ստացել է համընդհանուր ճանաչում: Ահա նրանից մի քառատող.

Ծաղկիդ բույրը հազար
դաշտ ու ձոր կլցնի,
Հազար ցամաք, հողի,
քարի շուրթ կբացի,
Տուն կբերեք ձեր պանդուխտին,
չեք կորցնի,
Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք,
Սյունյաց սարեր:

Սյունյաց սարերի հմայքը պայմանավորված է նրանց ոգու անընկճելությամբ. անարատ է Սյունյաց հողը, այնտեղ չարի սերմը երբեք չի կարողացել բույն դնել, քանի որ այս աշխարհի «մարդը արծիվ է, լեռնածին է, հրահատ է»:

Սյունիքի սիրտը Գորիսն է, որը գուսանը համարում է «սիգապանծ սարերի վարդ»: Նա փառաբանում է մեր քաղաքի այն քաջերի փառքը, ովքեր հանուն այսօրվա խաղաղ ու անամպ երկնքի զոհաբերեցին իրենց կյանքը Մեծ հայրենականում: Գորիսի աղբյուր-հուշարձանը նրանց անմահությունն է խորհրդանշում:

Նրանց արդար հոգիներից
Բիւում է սառ, զուլալ աղբյուր,
Ամեն անգամ ջուր խմելիս
Շրթունքներով կրանք համբույր:

Գուսան Աշոտի պոեզիայի ամենահիմնական թեման սերն է, սիրո մեծ երգիչը սերը համարում է կյանքի ակունքը: Նա գրում է.

Սերը ավյունն է աշխարհի,
սերը սիրտն է աշխարհի,
Այս, թե սերը խափանվի,
ինչ կմնա աշխարհին:

Գուսանի «Աշուղ եմ», «Լուսնի շողով», «Օջախում», «Սերս վանքում Տաթեւի», «Ծովաստղիկս» եւ ուրիշ այլ երգեր սիրո զգացումների սքանչելի ներբողներ են:

Գուսանի մի շարք ստեղծագործությունների թեման մայրական սերն է, նա կարողացել է յուրովի թափանցել մոր սրտի գաղտնարանները եւ վեր հանել նրա ամենանրբին զգացումները, հույզերն ու ապրումները: Նա դրվատում է մորը որպես հավերժական սիրո աղբյուր:

Լույսի նման, հույսի նման
սրբազան,
Կյանքի նման թանկագին է
մոր սերը,
Աշխարհի մեջ ոչինչ չկա իր նման,
Հավերժական, սրտագին է
մոր սերը:

Ժամանակի առումով, այսօր, իհարկե հնարավոր չէ մեկ առ մեկ թվարկել գուսան Աշոտի ստեղծագործությունների բոլոր արժանիքները, բայց պետք է ասել, որ այսօր մենք կրկնակի ուրախություն ենք ապրում այն բանի համար, որ գուսանը ամենից առաջ եւ ամենից շատ մերն է, քանի որ նա մեր քաղաքի արժանավոր զավակն է, միաժամանակ Գորիս քաղաքի պատվավոր քաղաքացին: Նա ամենանուրբ թելերով է կապված իր հայրենի քաղաքի հետ, իր կյանքի ամենաերանելի պահերը նա ապրում է մեզ հետ, իր հայրական հարկի տակ: Գուսան Աշոտը մեր նահապետն է, որ միշտ երգը շուրթերին քայլում է մեր սքանչելի քաղաքի փողոցներով, որով էլ մեր հայրենի քաղաքն ավելի է շենանում ու գեղեցկանում:

Մենք ամբողջ սրտով մեր սիրելի հոբելյարին՝ գուսան Աշոտին, բարեմաղթում ենք քաջառողջություն եւ բազում տարիների կյանք՝ ի փառս մեր մեծ հայրենիքի, հայ ժողովրդի ու նրա ծաղկող արվեստի, ի փառս Զանգեզուր աշխարհի ծաղկեպսակ Գորիս քաղաքի:

Այնուհետեւ ջերմ ելույթներով հանդես եկան նշանավոր արձակագիր, սոցիալիստական աշխատանքի հերոս, մեր հայրենակից Սերո Խանզադյանը, բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանը (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ), Գորիսի մանկավարժական ուսումնարանի ուսանողուհի Տաթեւիկ Հակոբյանը, Ա.Բակունցի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Լարիսա Միրզոյանը, ԼՂԻՄ-ի կուսակցության Ասկերանի շրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը, աշխատանքի ու Մեծ հայրենականի վետերաններ Սուրեն Բակունցը, Ռաֆիկ Պետրոսյանը: Ընդգծելով այն միտքը, որ հոբելյարը՝ հանրահայտ գուսան Աշոտը, գեղեցիկ շառավիղն է հայ բազմադարյա գուսանական արվեստի, եւ որ նա արդի հայ գուսանական արվեստի երգի մեծանուն վարպետներից մեկն է, ելույթ ունեցողները միաժամանակ գուսանական արվեստի վարպետաց վարպետին՝ սիրելի Աշոտին, ցանկացան ամուր առողջություն եւ ստեղծագործական

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում

բեղմնավոր աշխատանք:

Այնուհետեւ Գուսանին հանձնվեցին անվանական նվերներ:

Շնորհակալական ջերմ ելույթով հանդես եկավ Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ, ստեղծագործական կյանքի երկար ճանապարհ անցած գուսան Աշոտը: Նա խորին շնորհակալություն հայտնեց ՀԿԿ Գորիսի շրջկոմին, շրջանային ու քաղաքային սովետների գործկոմներին, հանդիսությանը եկած բոլոր մարդկանց ու հյուրերին եւ Գորիս քաղաքի ու շրջանի բնակիչներին՝ իր գրական-երաժշտական գործունեությունը արժանվույն գնահատելու համար:

Մեծարման երեկոյի վերջում ճոխ համերգով հանդես եկավ Հայաստանի հեռուստատեսության եւ ռադիոյի Ա.Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլը՝ կոմպոզիտոր Մանվել Բեգլարյանի գլխավորությամբ: Չգերազանցված կատարումներով հանդես եկան ՀՍՍՀ ժողովրդական արտիստներ Օֆելյա Համբարձումյանը, Վարդուհի Խաչատրյանը, Ռուբեն Մաթեւոսյանը, վաստակավոր արտիստ Ռաֆֆի Հովհաննիսյանը, «Հայհամերգի» մեներգչուհի Սուսաննա Սաֆարյանը եւ ուրիշներ:

«Զանգեզուր», 7 հունիսի 1987թ.

Էսքիզ

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ժամանակի շունչը դարձած արվեստագետ է Գուսան Աշոտը: «Ժամանակի շունչ» ասվածը միակողմանիորեն չպետք է ընդունել, այլ պետք է դիտարկել ժամանակ ընդհանուր հասկացության շրջանակի մեջ, քանզի Գուսանը մեծ էր ոչ միայն իր ապրած ժամանակաշրջանում: Նրա ստեղծած գործերն այն վավերագրերն են, որոնց շնորհիվ նա պիտի հավերժի եւ յուրաքանչյուր ժամանակում կլինի նոր, կլինի տվյալ պահի բուն հոգին, էությունը եւ յուրաքանչյուր սերունդ նրան իր մեծ Գուսանը կանվանի:

Մեր հայրենակից Գուսանի արվեստում վավերացված են հայ ժողովրդի գուսանական-աշուղական մշակույթի լավագույն ավանդույթները: Դրանք երգարվեստի մեծերի կողմից ստեղծված ավանդույթների պատճենահանումը չեն, այլ հին, առողջ արմատի վրա աճած նոր տիպի ավանդներ են, որ զուտ Գուսան Աշոտին են պատկանում, որովհետեւ այնքան ինքնատիպ են, որ նրա ու մյուսների ստեղծածների միջեւ եղած սահմանը խիստ որոշակի է՝ մեղեդիական ու բանաստեղծական առումով: Գուսանի յուրաքանչյուր ժողովածուն նրա ստեղծագործական որոնումների խոր հետքն է կրում: Երգից երգ, ժողովածուից ժողովածու ավելի խորն է ընդգծվում նրա անհատականությունը, մենաշնորհ, որ նրան իրավունք է վերապահել լինել Մեծ Գուսան եւ ոչ թե հավասարը հավասարների մեջ: Սա ժողովրդի գնահատականն է: Աշոտը եւ բանաստեղծ է, եւ երգահան: Այս երկուսի համատեղ գոյության շնորհիվ է, որ նրա երգերի եւ տեքստերը, եւ մեղեդիները ներդաշնակ են միմյանց: Նրա երգերի կրկներգերը երբեք յուրաքանչյուր տնից հետո նույնությամբ չեն կրկնվում, դրանք ունեն իրենց «հավելյալ» տողերը, որոնք բովանդակային նոր հնչերանգներ են տալիս երգին եւ ներքին տրամաբանությամբ ավելի զորեղ են դարձնում յուրաքանչյուր տան արտահայտած գաղափարը: Ահա «Մեր առուն» երգը.

Էս առուն մեր գոհմազգի
Խոտիարք սարից կբիսի,
Տաղ կանչելով վար կիջնի,
հանդ ու այգին կնախշի,
Իր ձայնից եմ ձայն առել,
ջրահարսիս հետ խոսել,
Սերն ինձ գվեց, հեռացավ, ծով
կարոտն ինձ կգանջի:
Թե երազ էր Նազելիս,
Հեզանազ էր Նազելիս,
Ամպվածային պատկերով՝
Ջրահարս էր Նազելիս:

Հաջորդ տոներից հետո կրկներգերը լրիվ նոր են: Նրա երգերում կա նաեւ այնպիսի նորույթ՝ կապված կրկներգի հետ: Կրկներգը յուրաքանչյուր տոնից հետո մասնակիորեն է կրկնվում. նախավերջին երկու տողն արդեն լրիվ նոր է. «Սերն անհուն-անհուն» երգի առաջին տոնից հետո հնչում է այս կրկներգը.

Գարնան օրի լուսաբացին,
Հազար սիրո դուռ կբացվի,
Սերն անհուն-անհուն,
Հայ Գուսանի իղձը բարի,
Սուրբ օջախի մոմ կվառի,
Սերն անհուն-անհուն:

Կրկներգի նախավերջին եւ դրան նախորդող տողերը յուրաքանչյուր

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

տոնից հետո փոխվում են.

Հայ Գուսանի երազ ճամփին
Փուշն էլ անգամ կբացի...

Սիրո մեծ երգիչ է Գուսան Աշոտը: Նա մեկ «հմայվում է սիրո ծովում», քանզի «Սերը ծով է, ծուփ-ծփացող»: Նա իր սիրուն անվանում է «թեւավոր», «Աշոտին կանչող սրինգ»: Նա վախենում է, դողում իր սիրո համար, հանկարծ «չարի շնչին չմնա»: Նրա սիրո էակի «ճերմակ ծոցի նախշերը փունջ վարդեր են, նայվածքը եղնիկի հմայքներ են, հուր աչքերը բարձունքի կրակներ են»: Եվ Գուսանը, դեռ չխմած, արբում է նրա սիրով: Սիրո գինն իմացող Գուսանն ասում է՝ Անարատ սեր պղծողի ճամփան քար ու կապան է:

Գուսանը երգում է մորը, նրան «Արեւի մայր է մայրը» անվանելով: Հեշտ չէ նայել մոր արցունքներին, մրմունջ են տալիս Գուսանի հոգուն, «մրմունջներից Գուսանի սիրտը տաղեր կքամի»: Եվ քնարը լալագին երգում է.

Սիրտս ու հոգիս կթափեն,
կտխրեն ու կլացեն,
Ու մայր կանչեցի եղեգով, հեքիաթ
դարձար հոգսերով,
Սրտիս հազար սեր տվիր,
ու մնացիր մորմոքով:

Մայրն արշալույսի բույրն է, եւ Աշոտը աղոթքի մոմեր է վառում իր աստվածամոր համար: Նա հոգու տուն է, հոգու աշխարհ եւ Աշոտը՝

Երկնի կաթով շաղախված
կենաց երգեր եմ կապել,
Մայրիկ-մայրիկ, սուրբ հոգի,
սիրո սափոր, նուրբ հոգի,
Ծանր վշտերը սրտի միայն
մայրը կամոքի:

Նա ասես մայրն ու հայրենիքը դնում է նույն կշեռքի նժարների վրա, եւ հայրենիքը նրա համար «սուրբ մոր գիրկ» է: Որտեղի՞ց է սկսվում հայրենիքը նրա համար. Լաստ սարի՞ց, որովհետեւ «Լաստը աշխարհ պահող մի սար է, լեռնահոգին հզոր է»: Նա «սեւ քամիներ է ճամփել»: Եվ որպես երդում հնչում են Գուսանի խոսքերը՝

Գնամ հանդ ու արտով լցվեմ,
կակաչներով, վարդով լցվեմ,
Կարոտանքից աչքը բացեմ,
մի կաթիլ էլ արցունք լացեմ,
Էս լույս ճամփան բռնեմ գնամ,
լուսնի շողը գրկեմ գնամ,
Սարի ձայնը սիրուս տանեմ,
ապրող դառնամ սարին մնամ:

Եվ անմար աստղ դարձավ Գուսան Աշոտը: Նրա քնարը երբեք կաղապարված չի եղել: Նա երգ է ծոնել ամենքին, ամեն ինչին, երկիր մոլորակի մի նախշն անգամ աննկատ չի մնացել նրանից: Երգել է հոգով, սրտաբուխ, ժողովրդական ակունքներից առնելով իր երգի հեւքը, երգել է եւ չի նկատել, թե տարիներն ինչպես անցան, երգել է ժողովրդի վշտերն իր տաք սրտին առած, կյանքի հեւքը, խոր իմաստը լավ իմացած:

Գուսանը ուխտ ուներ, իղձ ու փափագ՝ սեղան, սփռոց պիտի բացեր Վանա ափին:

Չտեսավ այդ: Սակայն Գուսանը հավատով ապրեց «եղեգան փողի լուսո ձայներում, լեռների ծնունդ նրա հոգին վառվում է անհաս բարձունքում»:

Ուր հայոց բախտի ասպղն է լողում,
Հավերժի գրկում լույսով
օրհներգում,
Հույսով օրհներգում:

* * *

Ասում են, ինքս անձամբ չեմ լսել, Գուսանն ու Սերո Խանզադյանը «վիճել են» այդ բարձունքն իրենց վերջին հանգրվանը դարձնելու համար: Գուսանն ասել է. «Ես պետք է ապրեմ Սյունյաց սարերի մով բարձունքներում, որովհետեւ՝

Ապ ու պապիս յայլա սարն է
աչքիս դեմ,
Կապին քոլը ղոնձա քարն է
աչքիս դեմ,
Խաչաղբյուրը, լեռնապարն է
աչքիս դեմ:
Պապիս կերտված էն քարայրն է
աչքիս դեմ,
Կյանքի քամին ուր էլ քշի, տանի ինձ,
Լաստի կալը, Լաստի լանջն է
աչքիս դեմ:
Հուշեր-հուշեր կարոտի,
հույզեր-հույզեր կարոտի:

Վիճել են, ինչպես կվիճեն մեծերը: Նեղացել են միմյանցից՝ մեծավարի: Հետո հաշտվել են մեծավարի ու որոշել, ով առաջինը... Գուսանը գնաց: Բարձունքին Գուսանը հասավ: Նրա ոգին ամեն գիշեր բարձունքից հսկում է եղեմական այս քաղաքը: Երբ քնած ենք, նրա ոգին թափառում է մեր քաղաքում՝ մեզ բարի-բարի երազներ բերում: Եվ շշնջում է ոգին: Աստված իմ, այս ինչ հրաշք աշխարհ է.

Սոխակը վարդի թերթին է ննջում,
Փերին է իջնում լուսալարերով,
Ջորերը լցնում հրաշք խաղերով:

Քնած է քաղաքը: Քնած չեն ֆիդայիները՝ Անդրանիկը, Քաջանց Սիմոնը...

«Թիկունք-թիկունք, քաջանց տղերք, ու կրծքով ամուր պատնեշ արիք, որ ժանգ չառնեն արտ ու հանդեր» - մեծավարի ասում է նա՝ ձեռքը հայրաբար դնելով նրանց ուսին: Բարձունքից ներքեւ բանուկ ավտոճանապարհն է: «Անցորդին սրտի ձայնիկն է տալիս խոհերով լեցուն» մեծ Գուսանը ու ծով-ծով մաղթանք՝

Բարին ձեզ հետ գուն եկեք,
կարոտով լի ճամփաներ,
Քարերից երգ հյուսելով անցեք
քարե կածաններ,
Ես էլ յարիս կանչով գամ,
ամպերը ծով չկապեն,
Գալու ճամփան չշեղեք,
չընկնեք քար ու քարափներ:
Գարնան շնչին շող ասեմ,
թուխ ամպիկին գրաղ ասեմ,
Սերս որտեղ ոտ ածի,
էն ճամփեքին գրաղ ասեմ:

Բարձունքից ներքեւ բանուկ ավտոճանապարհն է: Մարդիկ իջնում են մեքենայից, երկյուղածությամբ բարձրանում վերեւ...համբուրում գերեզմանաքարը եւ մաքրված հոգով շարունակում ճանապարհը:

* * *

Ուսուցչի տան մոտ գտնվող փոքրիկ անկյունը սուրբ-սրբոցն է գորիսեցու: Այստեղ է մեծանուն Գուսանն ամեն անգամ դնդնել իր նոր երգը: Այս քարերը Գուսանի շունչն են պահում: Գուսանի ձայնն են պահում: Եվ խոսքերը: Եվ ժպիտը: Եվ հոգու խորությունն ու իմաստալից զրույցները: Խոհը: Սոսկ քարեր չեն նրանք: Գորիսեցու ապրելու թալիսմանն են: Երբ հուսահատվում է նա, երբ գալիքի երազները պատառ-պատառ են դառնում անարդարության վիրուսից, երբ անհուն ցավից կուչուռվում է նրա մեջքը, գալիս է այստեղ, մեջքը հենում պատին: Պատը տաք է: Քարե պատը տաք է: Քարն ուժեղ է, դյուցազնական ուժ ունի ամբարած իր մեջ:

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

Բարություն կա նրա մեջ: Եվ համբերություն: Եվ սրբացած, եւ առնականացած նա շտկում է մեջքը եւ ինչպես մի հզոր կաղնի՝ գալիքվելու ընձյուղները եռագույն դրոշ դարձած՝ քայլում է հավերժի ճամփով:

Այս անկյունը գորիսեցու խոստովանատեղին է: Երբ անթափ բերկրանքից ցնծում է նրա հոգին, երբ սիրուց արբեցած «ծով աստղիկին» է ուզում հանդիպել, գալիս է այստեղ՝ խոստովանանքի, սուզվում տիեզերականի, անհունի, հավերժի մեջ: Եվ խոսում է Գուսանի ոգին:

«Զանգեզուրի չոր չոլերը ծաղկել են»: Սա Գուսանի Զանգեզուրն է: Նաեւ իմը, քոնը, նաեւ նրանը, որ պիտի ծնվի մեկ միլիոն, մեկ միլիարդ տարի հետո:

«Աշկ ենք պացալ, շափաղ առալ
էս ծորան,
Մեր ենք առալ, շափաղ առալ
էս ծորան,
Սաս սասի գանք , սրտեր
պանանք կուրունքվա գրես,
Հազար սրտի խաղ եմ կապալ
էս ծորան:
Ղռանանք վրեչ մրեր նախշարար
էս ծորան:

...Հեռվից գալիս են որդիքը Զանգեզուրի: Այստեղ է նրանց մանկությունը: Գալիս են իրենց սիրո տան դուռը:

Լսում շշնջոցդ, Գուսան:

«Դուռն եմ բացել զարթոնքի,
որ հոգս ու վիշտ ամոքեմ,
Որ իմ սիրո ճրագով հազար
խարույկ բորբոքեմ»:

Եվ բորբոքված խարույկից անկախության կայծեր են հիմա ճառագում, Գուսան:

www.gusanashot.com

Գուսանի երգը չի մեռնում

ԱՐԿԱԴԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Գուսան Աշոտը վաղուց է հաստատվել հայոց տան մեծերի շարքում:

Եվ եթե յուրաքանչյուր մահկանացու աշխարհում ունենում է իր տուն ու տեղը, ընտանիքը, ապա Գուսան Աշոտի տունը ողջ Զանգեզուրն է, ողջ Հայաստանը, իսկ ընտանիքը եւ հարազատները Գյումրիից մինչեւ Ղարաբաղ ձգվող հայությունն է ողջ:

Գուսան Աշոտը համահայկական, համաժողովրդական երեւույթ է, եւ հայ ժողովուրդը ընդմիշտ կմնա նրա պայծառ երգերի երախտապարտ երկրպագուն:

Գուսանը անմեռ է, քանզի անմեռ են նրա երգերը:

Կհոլովվեն տարիները, կգան նոր սերունդները, կլսեն ու կերգեն նրա երգերը, կհիանան ու կգերվեն մեծ գուսանի մեծ արվեստով, ու բանաստեղծ-գուսանը հավերժ կմնա երիտասարդ, հավերժ կրակված հոգով ու սիրով:

Մի զարմանալի առինքնող ներգործություն ունեն գուսանի երգերը, քանզի այդ երգերը գարնան ծաղկունքի բույր ունեն, լուսեղեն երազանքի գեղեցկություն, քաղցրություն հայրենի հողի ու հայրենի լեռների վեհություն:

Նրա երգերն աչքի են ընկնում խորունկ վերապրումներով, սիրո ներհուն գեղգեղանքով, չքնաղ ու անմոռանալի պատկերներով:

Գուսանը մեր ազգային հոգեւոր հարստություններից է, մեր ազգային հպարտություններից մեկը: Նրա երգը եզակի է, անզուգական, կախարդիչ: Նա շատ է սրտալի ու անկեղծ: Շատ են անուշ ու հմայիչ նրա սիրավառ հոգուց բխած մեղեդիները: Վաղուց նա մտել է մեր սրտերի ու հոգիների մեջ այնպես, ինչպես նա կա իր երգերի մեջ: Գուսանի ստեղծագործական սխրանքի ամենահնչեղ լարը սիրո լարն է, որով նա մերվում է իրեն ծնող ժողովրդի հոգսերի ու ապրումների հետ, բնության հավերժության հետ:

Գուսան Աշոտն անմահ Սայաթ-Նովայի արժանավոր ժառանգորդն է ու նրա նման հավերժ ապրող բանաստեղծ-գուսաններից:

Նրա երգերը ծայրեծայր ժողովրդական են ու ճշմարիտ, ինչպես ճշմարիտ է ինքը՝ ժողովուրդը: Մեծ է գուսան Աշոտը: Իսկ մեծերը միշտ հաստատում են, որ մեր անցավոր կյանքում գոյություն ունեն անմահություն, հավերժություն:

Գուսանն իր երգերում եղել եւ մնում է հայրենի եզերքին, ծառ ու ծաղկին սիրահար.

Հազար ու մի երգում գոված
սար եմ դեսել,
Բայց միշտ ձեր կարոտը քաշել,
Այունյաց սարեր,
Ահա մեծ վարպետ Նաղաշի
ձեռքն է հասել,
Ծաղիկներդ գույն-գույն նախշել,
Այունյաց սարեր,
Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք,
Այունյաց սարեր...

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ բնկալումներում

Մեծ գուսանը բոլորինս է

ՍԵՎԱԴԱ ԽՈՋԱԲԱՂՅԱՆ

Հիշում եմ այն հեռավոր դպրոցական տարիներս: Գուսան Աշոտը թիկն տված նախկին ուսուցչի տան պատին, անցող-դարձողների բարեւին էր պատասխանում եւ շարունակում դնդնալ իր հերթական երգի մեղեդին: Միշտ, երբ ես անցնում էի այդ մայթով, նա ինձ կանչում էր իր մոտ եւ հարցնում. - «Դայօղլի, ո՞նց ես, էլի նվագում ես չէ՞, նվագի, նվագի, դա քեզ շատ պետք կգա»: Այն ժամանակ ես քամանչա էի նվագում, եւ Գուսան Աշոտը մի քանի անգամ ներկա էր եղել համերգների, երբ մենք՝ Գորիսի պիոներ տան ժողգործիքների համույթով հանդես էինք գալիս թատրոնի դահլիճում, եւ ինձ լավ հիշում էր: Մորս կողմից մենք նաեւ հեռավոր բարեկամներ էինք: 96 տարեկան մայրս այսօր էլ լավ հիշում է Գուսան Աշոտի երկրորդ կնոջը՝ գեղեցկուհի Աշխենին: Մայրս ներկա է եղել Գուսանի եւ Աշխենի հարսանիքին, գիտեր թե Գուսանը ինչպես էր սիրահարված Աշխենին: Նրանց սերը փոխադարձ էր, եւ Աշխենը, հակառակ ծնողների ցանկության, համաձայնել էր դառնալ Գուսան Աշոտի կինը եւ հանուն իրենց սիրո սովորել նվագել երաժշտական գործիքը եւ Գուսանին նվագակցում էր համերգների ժամանակ: Գուսանը իր շատ երգերը նվիրել էր հենց Աշխենին, ասում է մայրս, բայց ցավոք Գուսանի եւ Աշխենի համատեղ երջանիկ կյանքը ընդհատվել էր, երբ Գորիսի Ազատաշեն գյուղ համերգի գնալիս մեքենան վթարվել էր, եւ Աշխենը՝ մահացել:

Գուսան Աշոտը բոլորինս է: Մենք պետք է մշտապես հիշենք եւ հարգանքի տուրք մատուցենք: Բայց արդյո՞ք միշտ է այդպես: Ցավոք, ես հաճախ եմ նկատել Գուսան Աշոտի արձանի շրջակայքի անխնամությունը:

Արդյոք ճիշտ չէ՞ր լինի Գուսանի ծննդյան օրը ամեն տարի Գորիսում հրավիրել երիտասարդ գուսանների, ինքնուս ստեղծագործողների, կոմպոզիտորների, կատարողների հավաքմրցույթ եւ սահմանել Գուսանի անվան մրցանակներ, տարբեր անվանակարգերով: Այս կարգի ավանդական միջոցառում կարելի է անցկացնել Ակ.Բակունցի ծննդյան օրը՝ նրա տուն թանգարանում հավաքելով գրականության բնագավառում երիտասարդ ստեղծագործողների, ասմունքողների: Եվ մի՞թե հետաքրքիր չի լինի, եթե այդ օրը պատանի նկարիչները մեր հրաշք բնակավայրից տարբեր տեսարաններ նկարեին եւ նվիրեին թանգարանին, իսկ բանաստեղծները ներկայացնեին իրենց ստեղծագործությունները՝ նվիրված Ակ.Բակունցի ծննդավայրին: Ընդ որում՝ բացվեր ցուցահանդես՝ տարեցտարի համալրվելով նորանոր նկարներով, նաեւ քանդակներով:

Միաժամանակ գտնում եմ, որ պետք է արժանին հատուցել այն մարդկանց, ովքեր ինչ-որ հարցերում օգնել են Մեծ գուսանին: Շատ լավ գիտեմ, թե ինչ մեծ դեր է կատարել Վալերիկ Գասպարյանը Գուսանի երգերը նոտագրելու եւ տեսքի բերելու գործում: Վալերիկ Գասպարյանը՝ մեր տաղանդավոր քաղաքացին, երկար տարիներ եղել է Գորիսի երաժշտական կյանքի տոն տվողը, եւս պետք է գնահատվի, որովհետեւ, գուցե առանց նրա մեր մեծ Գուսանը մի քիչ պակաս լիներ: Տեղին է նշել, որ «Երգ երգոց» երաժշտական հաղորդաշարի՝ Գուսան Աշոտին նվիրված հաղորդման ժամանակ ամեն ոք կար, բացի Վ.Գասպարյանից: Առաջարկում եմ, որ եթե լինի Գուսան Աշոտի 110-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ, ապա անպայման հրավիրել Վ.Գասպարյանին: Նա հաստատ ասելիք կունենա:

Եվ ոչ միայն Վ.Գասպարյանին: Այսօր մեզ հետ, մեր քաղաքում են ապրում Ապետնակ Գրիգորյանը եւ այլք, հարգենք նրանց՝ դրանով էլ ավելի մեծարելով մեծ Գուսանին: Թող այդ մասին կազմակերպիչները մտածեն:

Հիշում եմ, թե Գուսանի թաղման օրն ինչ բուք ու բորան էր: Հիշում եմ այդ օրը ՀԿԿ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանի տիտանական աշխատանքը՝ թաղումը պատշաճ կերպով կազմակերպելու գործում:

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում

Գուսանի երգերի ակունքները մաքուր են, զուլալ, սիրով շաղախված

ԱՐԿԱԴԻԱ ՄԱՐԴՅԱՆ
Գորիսի Գ.Աշոտի անվան
մշակույթի կենտրոնի տնօրեն

Գուսան Աշոտը գորիսեցիներիս համար մեծերից մեծն է: Նրա երգերը մյուս գուսանների երգերից շատ են տարբերվում, որովհետեւ նրա ստեղծագործություններում լիրիկան շատ է: Նրա երգերը չես կարող հենց այնպես կատարել՝ իբրեւ կատարում, ելույթ, համերգ: Գուսանի երգերը երգելիս հոգի պիտի դնես, սիրտ պիտի դնես, առանց հույզերի չես կարող երգել: Նրա երգերը կատարելիս զգում ես, որ քոնն է, քո սեփականը, քո հող ու ջրի համն ու հոտն ես զգում: Գուսաններ կան, որոնց մասին ասում են՝ նրա այսինչ երգը լավն է: Գուսան Աշոտի մասին նման կերպ չես կարող արտահայտվել: Նրա բոլոր ստեղծագործությունները հիասքանչ են:

Երգելիս, սովորաբար, երգիչը նայում է հանդիսատեսին՝ իր կատարման գնահատականն իմանալու: Գուսան Աշոտի երգերը հանգրվանում են հանդիսատեսի սրտում, իսկ սրտից բխող երգը սրտից սիրտ է գնում: Դա այդպես է, որովհետեւ նա այդ երգերը գրելիս ապրել է այդ պահերը, նրա երգերն իր իսկ ապրած կյանքն են:

Երբ երգում ես Գուսանի «Էն գարնանը» երգը, զգում ես, որ հանդիսատեսը հուզվում է, եւ դու այդ երգով դիպչում ես սիրահարի սրտի նուրբ լարերին եւ նայելով դահլիճին՝ անմիջապես նկատում ես սիրահարներին:

«Սյունյաց սարեր», «Ամպը որոտաց», «Եկար անցար մեր թաղով» եւ այլ երգեր, իմ կարծիքով, հայոց երգարվեստի գոհարներից են: Նրա «Լուսնի շողով» երգն ամեն ինչից վեր է, միայն Գուսան Աշոտը կարող է ասել՝ լուսնի շողը պատուհանից ներս ընկավ, խենթ տողեր են՝ խենթ մեղեդայնությամբ:

Հիշում եմ, Գուսան Աշոտի ծննդյան 100-ամյակի առթիվ համերգ էր կազմակերպվել Երեւանում, որի նախաձեռնողը Սուրեն Խաչատրյանն էր: Գորիսեցիներս էլ երկու համար կատարեցինք համերգի ժամանակ: Երբ ավարտվեց, գյումրեցի մի երգիչ, անունը մոռացել եմ, մոտեցավ ինձ ու ասաց՝ ես չեմ իմացել, որ բոլոր լավ երգերը Գուսան Աշոտինն են:

Գուսան Աշոտի երգերի ակունքները զուլալ են, մաքուր եւ խորը: Բոլոր ակունքները սիրով են շաղախված, եւ սեր է ծորում այդ ակունքներից, սեր՝ մաքրամաքուր ու հավերժահոս: Էդվարդ Ջոհրաբյանն է այս պատմությունը պատմել. Գուսան Աշոտն աշուղ Աքայի հետ հրավիրված էր Տաթեւ՝ մի հարսանիքում նվագելու եւ երգելու համար: Հարսանիքի ժամանակ Աքան զգում է, որ Գուսանը երգի տողերը խառնեց իրար: Աքան գլխի է ընկնում, թե բանն ինչ է եւ հարցնում է՝ Աշոտ, յանի էդքան լավն ա:

- Սերտս տարավ, աշուղ, խաբար չկա յրաս:

«Սերտ տանող» այդ աղջիկը հարսանքավորներից էր: 11 տարի Գուսանը սիրահարված էր նրան, եւ այդ սիրուց ծնվեցին «Ծովաստղիկս», «Սերս վանքում Տաթեւի» երգերը:

Ինձնից ավագ երաժիշտները պատմում են. մի օր հավաքվել են Գուսանի մոտ եւ զրուցում են:

- Գուսան, գուսաններից ո՞վ է առաջինը:

- Սայաթ-Նովան, դա անվիճելի է:

- Բա 2-րդն ո՞վ է:

- Ջիվանին:

- 3-րդի համար ո՞ւմ անունը կտայիր:

- էդ էլ դուք որոշեք:

Եվ իր մասին ոչ մի խոսք: Այնքան համեստ մարդ էր, ինքնագնահատական երբեք չէր տա: Եվ հիշում ես՝ բերքատու ծառը երբեք ճյուղերը չի պարզում, ինչքան բերք է տալիս, այնքանով ճյուղերն ավելի են կռանում: Մեր Գուսան Աշոտն այդ բերքատու ծառն է:

Գուսանն էն է, որ սառը ջրի պես մարդու սիրտը հովացնի. գրել է Գուսան Աշոտը: Եվ Գուսան Աշոտն իր երգերով սառը ջրի պես հովացրել է մոր սիրտը, սիրահարի սիրտը, ընկերոջ սիրտը, մարդ էակի սիրտը:

Բանաստեղծություններ՝ Գուսան Աշոտին

Վերուշ

ՔԱՋԻԿ ԴՈՐՈՒՆՑ

Երազ դարձար, Գուսան Աշոտ,
Երազում էլ քեզ չեմ տեսնում...
Բայց արթմնի, այս առավոտ
Երգը շրթիդ՝ եկար ինձ մոտ,
Ասիր՝ «Տաղն այս չեմ ասելու,
Չեմ երգելու եւ ոչ մեկիդ,
Լուսնի շողը բռնեք եկեք,
Թե կարողեք իմ նոր երգին»:
Գուսան, իրավ, հասկանում եմ.
Նեղսրտել ես ու նեղացել,
Բայց երկրային հրաժեշտիդ
Մրմուռը մեր չենք ուրացել,
Օրերը մառ ու միգապատ,
Օրերը հիմա գեշ են այնքան,
Ընկել ենք գորշ մի անապատ,
Ուր մեռնում են հուշերն անգամ:
Բայց որ եկար, Գուսան Աշոտ,
Թող որ հիշեմ երանելին,
Երբ փանդ մեջ հյուրակարոտ
Մեղրանում էր երգդ ու գինիդ,
Երբ ժպտերես տեր ու տիկին՝
Կիրասասեր, երգամեծար,
Բացում էին սիրո սինին,
Կապում հույզի մի ծիածան,
Որ սիրո յոթ գույներն ուներ,
Յոթնախոտիուրդ, յոթնապարգամ.
Դառնում էինք մերձերգուներ,
Մերձամեծար ու բարեկամ:
Վառարանից փաքն էր ծորում,
Բլբլում էր յուղը թանի,
Չոր լավաշն էր դաշնավորվում,
Մերվում սաղատի պզկաթանին:
Օղու բաժակն էր ծեքծեքում,
Խուրուր տալիս լուռ տիալին,
Սափորի մեջ գինին փքվում՝
Քրքում-փրփուր շրթնածալին...
Խմում էինք տիրավայել,
Բացվում պարզկա երկնքի պես,
Արեւկայի բույրն ենք առնում
Դիբուն Սաշիկն, Ապերը, ես...
Հերթ խոսքի տոնահանդես,
Բարձրավորիկ բաժակաձառ,
Ամեն պարպվող բաժակի հետ
Մտնում մտքի մի նոր կաձառ...
Հերթ... հերթ լռություն էր
Մի պահ մտնում խնջույքի մեջ,
Երբ Գուսանիդ ձեռքն էր դիպչում
Քամանչային ոսկեառէջք:
Հերթ երգն էր թեւավորվում,
Թեւավորում Կիրասին, քեզ,
Ինչպես էինք փառավորվում,
Ո՛ւմ չար աչքը մեզ նախանձեց...
Հիմա լուռ է քո քամանչան,
Էլ հուր չկա վառարանում,
Քամին է լոկ զգվում անքուն
Մահարձանիդ քառոտանուն:
Երազ դարձար, Գուսան Աշոտ,
Երազի հետ քեֆ չեն անում,
Երազային երգ ու գինուց
Ցավի ցուրտ ծուխ է բարձրանում,
Հասնում անմիտ այդ բարձունքին,
Ուր հանգչում են սեր ու կարոտ,
Լռության հե՞դ ընկերացավ
«Կենաց թասը», Գուսան Աշոտ:

Զոն Գուսան Աշոտին

ԴՈՒԽԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Չափ ու ձեւի մեջ
Սահման կա անշուշտ,
Սակայն իմ սերը
Սահմաններ չունի:

Բառ ու բանով չէ,
Որ պիտի գովեմ՝
Հիշեմ կերպարդ
Ու ոգեւորվեմ:

Դու մեր բոլորի
Պարծանքն ես եղել,
Քո լույս երգերն են
Մեզ մեծացրել:

Հպարտ ենք քեզնով,
Ո՛վ դու մեր Գուսան,
Այսնյաց սարերն են
Տաղանդիդ վկան:

Ոսկե շնորհքդ՝
Կապրի՛ դարեդար,
Հայ հող ու ջրից
Սերած մեծ գուսան...

Դաշտում՝ կարոտ ես,
Արտում՝ ցորեն հաց,
Տանը՝ գորով ես,
Այգում՝ սիրո կանչ...

Մեր թիւպի մալանչ
Լույս-քուլաներով
Հավերժ լողում է
Տաք շունչդ, Գուսա՜ն...

Դու հայի սրտի
Սերն ես՝ միշտ առկա՝
Քո ժողովրդի
Դիացքը վկա՜...

Խոսք հաղորդման

ԱՊԵՏՆԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իմ մեծավոր Գուսան, իմ մեծավոր,

Բանաստեղծություններ՝ Գուսան Աշոտին

Զրույցների խորհուրդ, ավանդ ու կանչ,
Հոգոցների խորունկ ծիրանի փող,
Տաղերգների երգոց ու շարական:

Քեզ եմ նորից եկել ես ծնրադիր,
Քեզ եմ եկել՝ մեծիդ, ես ցավապանք,
Շուրջս՝ ավեր, նախճիր՝ վիշտս անծիր...
Անամոթ է ցավս ու հրախանձ:

Կարկամել է լեզուս վտարանդի,
Իմ ծնունդոց Հայքում ես անտերունչ,
Ցաք ու ցիր են եղել վին ու փանդիռ,
Փշրվել են երազ, սեր ու անուրջ:

Տաճարներս ավեր՝ սրբամասունք,
Խաչքարերս՝ հուշի բողոքի ճիչ,
Վար են իջել գլխիս ինչպես ասուպ,
Խոստումները պատիր՝ բերածը ճիչ...

Խոտիս դեմ է առել ժեռ խութերի,
Ձայնս խլացել է ապրանքներում,
Հավատ չկա վաղվա վառ հույսերին,
Այն ծպտվել է վերին ապրանքներում...

Ի՞նչ է նյութվում մեր դեմ, ես չգիտեմ...
Շնորհները շա՞տ էր, տալի՞ք՝ քիչ,
Տիվանդորդս արել արյան գիշեր,
Մղձավանջ է իջել պատարագիս...

Ի՞նչ են ուզում խեղված հերձվածողից,
Մեղսագործն իրենք, ես մեղապարտ,
Դահիճներն իրենք, ես՝ ասողիկ,
Օազիսս իրենց, ինձ քար ու կապ:

Չեմ հասկանում ի՞նչ է արվում վերում,
Էն վերինը վերում՝ վայր ի վերո,
Էն վերինը վերի բիլ եթերում,
Խրախճան է բացել սին ծեսերով:

Ու ավեր է բերում՝ ավար, արյուն,
Ու շանթեր է բերում՝ հուր-հրեղեն,
Տարփողում է իբրեւ խինդ ու ավյուն,
Ինքնությունն է մորթվում մեր լուսեղեն:

Գիմա քեզ եմ եկել պաղատագին,
Քեզ եմ եկել ամքած ու ածիւացած,
Ու վերապարզել վիշտս բազեն բազին,
Ընդդեմ երկնավորի ու առ ասպված:

Քեզ եմ եկել հայցի ու խորհրդի,
Քեզ եմ եկել կարոտն իմ առնելու
Ու տանելու քո ջեռ, ըմբոստ ոգին՝
Ազգիդ ոգիները բուրվառելու:

ՆԵՐԲՈՂԱԿԱՆ

Տարին տարով եկել, անցել դարից,
Լրացել է հարյուր տասը տարիդ,
Ասել է, թե եկել դար է անցել,
Թե ի՞նչ օրհասներ են գլխովդ անցել,
Բայց դու համառել ես ու դիմացել:
Ու Պեգասդ թամբել՝ նրան հեծել,
Անցել կապարներով լեռնապարիդ,
Լաստի սարի գմբուիտ փեշով անցել
Եվ Իշխանիկի սեգ կապարից
Քո հոգեքամ երգն է թեւածել՝
Որպես գոյապիրկչի ու սապարի:
Ձիրքը թափ է առել քո քանքարի,
Երգդ վեր է հառնել անցել դարից,
Դարը դարեղենն է իր ծվատել,
Իսկ դու մտքով հեռուն ես թեւածել՝
Ամեն սարի հետ գրույց բացել,
Ամենեցու հետ նստել հացի,
Ներհուն երգդ է լսվել տաղասացի:
Երբ սարերը քո սեգ գմբուիտ հագել,
Շամանդաղից շողակ լույսն է ծաթել,
Արեգական շողը բռնակ արել՝
Զար ես սարքել շողքով քո քամանչի,
Որ երգերդ մեղուշ քնքուշ ծորեն,
Համայն աշխարհը մեզ ճանաչի:
Ու հնչել է երգդ զանգակ-զանգակ,
Կտրել՝ անանց վիհեր, ձոր ու խանդակ,
Կտրել՝ պողոտաներ գեղաքանդակ,
Կտրել՝ կապույտները լաջվարդ ու բիլ,
Կտրել՝ կապարները մեր ձյունածիր,
Մտել հար-հավերժի մեծ ուղեծիր:
Սիրո կրակներիդ բոցը հանել,
Երգիդ մեջ ես դրել ու արկանել
Ու սիրակեզ երգով սիրտ դարմանել,

Բանաստեղծություններ՝ Գուսան Աշոտին

Որ ջերմանա ազգիդ մրսած հոգին:
Սյունյաց սարերը հեր գնացել,
Արմանք-զարմանք կորած իրար անցել,
Հույսի ու հավատի ճամփա բացել՝
Ի սեր մեծ Գուսանիդ մեծապատիվ:
Երբ երգդ ես կապել Սյունյաց սարի,
Նարգիզներ են ծաղկել խիճ ու քարիդ,
Ու շլացել են ծառ ու ծաղիկ՝
Ականջելու քաղցրիկ երգ ու դաղիդ:
Ու հորդել է երգդ գետերիդ պես,
Լույս լուսեղեն երգը քո սիրակեզ,
Մերթ թափծել է փխուր ու հառաչել,
Ծառս է եղել փեղից ու ծառացել,
Շաքվա ջրվեժի պես մերթ շառաչել...
Ու Որոտնա կիրճով մեր ժայռեղեն
Մեծ Գուսանն է անցել մեր ապավեն:
Այսօր օրն է բեղուն փարեղարձիդ՝
Մեր վեհափառ Գուսան՝ մեր ալեհեր,
Երգիչ սիրո, խինդի, կյանքի, հույսի,
Քո ժայռերի ուսին պղնձաեռ
Պանթեոն ես կանգուն հավերժաերթ,
Որ գնում ես ձգված դեպի դարեր,
Վեհ ուղեկալն ես արշալույսիս:

Վասն համբերության եւ հրաժեշտի

(եղերերգ)

Նվիրում եմ գուսան Աշոտի հիշատակին

Համբերություն քեզ, ի՛մ հայ ժողովուրդ,
Կորուստներիդ համար քո մեծերի,
Աճյուններիդ համար բազմախորհուրդ,
Քո խորախոց հին ու նոր վերքերի:

Համբերություն քեզ, ի՛մ հայ ժողովուրդ,
Իմ վշտակեզ, գրկյալ, իմ տարագիր,
Եվ վերքերիդ համար արնածորուն,
Եվ ցավերիդ համար անպարագիծ:

Համբերություն քեզ, ի՛մ հայ ժողովուրդ,
Եվ զոհերիդ համար մեծ աղերսի,
Ջավակներիդ համար քո մահապուրծ,
Եվ մաքառման տենչիդ ու հավատիդ:

Համբերություն քեզ, ի՛մ հայ ժողովուրդ,
Եվ ցնցումիդ համար այս ջղաձիգ,
Դարիդ համար պատիր ու չարագույժ,
Սպասումիդ համար եւ կարոտիդ:

Համբերություն քեզ, ի՛մ հայ ժողովուրդ,
Որբուկներիդ համար քո հոգեդարձ,
Բարուրներիդ համար՝ օջախի հույս,
Եվ այրերիդ համար քո ցավագար:

Համբերություն քեզ, ի՛մ հայ ժողովուրդ,
Գողթան երգչիդ համար երախտավոր,
Որը քամեց հոգուց երգեր ծորուն,
Հավեր հավերժելու խորհուրդ ու խոհ:

Համբերություն եւ քեզ, երգիչ սիրո,
Երգի՛չ արարումի ու դքնության,
Ի՛մ ալեհեր գուսան, իմ վիրավոր,
Օ՜, իմ անխոնջ դպիր համբերության:

Գնաս բարյավ, վարպե՛դ, գնաս բարյավ,
Պանթեոն ես հրաշք արարումի,
Ասպվածատուր ցանքդ՝ հունդդ բարյաց,
Ասք էր հավիտենից արբացումի:
Գնաս բարյավ, վարպե՛դ,
Գնաս բարյավ...

1989թ.

Բանաստեղծություններ՝ Գուսան Աշոտին

Տաղդ հավերժ կզրնգա

ԿԱՐՈ ՕՀԱՆՅԱՆ

Դաշտ եմ գնում երգդ շուրթիս,
Ամեն անգամ՝ թե վաղ , թե ուշ,
Ալիք-ալիք ինձ է գալիս,
Երգիդ բույրը անուշ-անուշ:

Հորովելիդ ձայնն է գալիս,
Ամեն սեւ-սաթ բաց ակոսից,
Հոտաղն անուշ ձայն է տալիս,
Ոգեւորում գորովալից:

Ջրի գնում՝ երգդ լսում,
Ճամփեզրերի ծառ ու ծաղկից,
Անմահ երգդ ինձ հետ խոսում,
Դառնում՝ ճամփիս գրուցակից:

Սար եմ գնում, սարվոր յարիդ
Երգն եմ լսում ես կախարդված,
«Զոր-չոլերը» սար սարերիդ,
Անմահական զմրուխտ հագած:

Դու հեռացար Գուսան Աշոտ,
Անթիվ երգեր քո սրտի մեջ,
Սակայն տաղդ շող ու շաղոտ
Կզրնգա հավե՛րժ, հավերժ...

Նվիրում եմ մեծ գուսանի՝ Աշոտի ծննդյան 95-ամյակին

ԼՈՐԵՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Դու եկար վաղ գարնան
Ամպերից իջած հորդառատ անձրեւի նման,
Շաղ տվիր քո սրտաճմլիկ եւ հոգեթով երգերը
Քո լեռնաշխարհի բոլոր լեռների կատարներին,
ծառերին ու ծաղիկներին:
Հեկեկացին քո քամանչի լարերի նման սիրող բոլոր սրտերը,
Դու ասպվածացրիր բոլոր մայրերին
Քո հուզաթաթավ երգերով եւ ինքդ
Ասպվածացար ու լեգենդ դարձար:

Քո երգը հոգի է թափանցում,
Վառող հուր ունի քո երգը,
Քո երգը կարոտից է ծնվում
Եվ սերն է սնում քո երգը:
Քո երգը հաճախ սնում է
Եվ հաճախ էլ շանթահար ավերում,
Քո երգը կանչում է մոլորված թռչունին,
Նոր բույն է հյուսում քո երգը:

Գուսան Աշոտին

ԳՈՒՐԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

Սիրով երգեցիր սերը մեր կյանքի
Անուն թողեցիր մարդկության հոգում...
Մտար գերեզման մայր հողի ծոցում,
Սիրով երգեցիր սերը մեր կյանքի:
Դու մեծ զավակն ես մեր Զանգեզուրի,
Քո սերն է զնգում աշխարհի սրտում...
Սիրով երգեցիր սերը մեր կյանքի,
Անուն թողեցիր մարդկության հոգում:

Բանաստեղծություններ՝ Գուսան Աշոտին

Հավերժության ուղեւորը

¶áõë³Ý ²ßáïÇ
ÑÇß³ï³ÏÇÝ



ՎԼԱԴԻՄԻՐ ՈՐՈՏԱՆՅԻ
(Բաղդագյուլյան), Խնձորեսկ

Իմ Սյունիքի բլբուլն ես դու -
Հայրենաշունչ երգ ու դաղով,
Ամեն տեղ է երգդ թնդում
Սիրահարի սրտի դողով...
Սիրուց մերժված մարդուն անգամ
Խինդ ես բերում ամոքումով,
Դրժման ցավից հեք ու անկյալ
Տառապողին՝ դաղեր համով -
Հուշելով սեր նրան դարձյալ -
Սիրամրմունք, սիրագորով...
Նվիրեցիր սիրտդ մարդկանց
Հարստությամբ թանկ խոհերի...
Ամեն խոհդ՝ խորհուրդ ու գանձ
Նման լույսի անմարելի,
Ամեն երգդ՝ սիրո մրմունք -
Սիրողներին իրար կանչող,
Հառաչներիդ ամեն մի հունչ -
Կարոտներիդ ցավն էր դանջող...
Միայեր. եկար, սիրով եկար,
Սիրտդ վառման հրով բորբոք,
Սայաթ-Նովի ճամփով եկար -
Հավերժության կանչով իրոք...
Կանչեց՝ ծոցում հավերժ պահի -
Ուղեկցությամբ քո երգերի,
Քանզի մարդկանց ու աշխարհին
Դու համակ սեր, երգեր տվիր...
Դու երգ դարձած դողանջեցիր -
Որպես սիրո սրբության ձայն,
Միայեր, եկար հուզավառված -
Սայաթի՛ եւ Ջիվանու պես,
Կարոտներից կարոտ առած,
Արոտներից՝ ծաղկունք պես-պես,
Մեր սարերի աղբյուրների
Վայելումը հեզամրմունք...
Միայեր, զուլալ սրտով եկար,
Մաս-մաս տվիր սերդ երգով,
Եվ հուզեցիր ամեն անգամ
Հազար ու մի նոր հնարով,
Ամեն օջախ ու սիրտ մտար
Եվ մնացիր հար հիմնավոր,
Օջախդ թող շենշող մնա,
Կրակներիդ բոցը անմար:

Լույսի աղբյուր

ՎՈԼՈԴՅԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Սիսիան, գյուղ Դարբաս

... Երգդ՝ կյանքի սերմ է գարնան
Լեռնաշխարհիդ սեգ սարերին,
Սիրո արցունք՝ արբած սրտում
Թեժ կրակ է սիրահարին...
Գիրդ՝ Սայաթ-Նովի գրի,

Բանաստեղծություններ՝ Գուսան Աշոտին

Շաքարախոս ակունքն առած,
Քո հայրենի հող ու ջրին
Անմնացորդ սիրահարված:
Կապրես հավերժ եւ քո երգով
Մարդկանց սրտեր դու կգերես, -
Երգով սնված, երգով անմահ,
Հավերժախոս Գուսան Աշոտ:
Ամեն անցորդ, թե քեզ նման,
Լույսի մի նոր աղբյուր թողներ,
Աշխարհին այսօր ծիածանի
Յոթ գույներով պիտի ցոլեր...

Գուսան Աշոտին

ԳԱՐԵԳԻՆ ԲԱԲԱՅԱՆ

Հնչում են քաղցր երգերդ, գուսան,
Արարիչ Աստծո օրհնանքները քեզ,
Օ՛, երգերը քո ինչքան են հուզել
Հայաստան երկրին, Գորիսին եւ մեզ:

Ծնվեցիր ուղիղ Գորիսի սրտում,
Գորիսը տվեց քեզ երգ ու քնար,
Եվ դու փայլեցիր համայն աշխարհում
Որպես մեծ գուսան ու երգի հանճար:

Երգերդ մեղուշ, երգերդ անուշ,
Հասնում են մինչեւ խորքը մեր հոգու,
Խոսքդ մեր սրտին դալիս է նոր ուժ,
Եվ մեր ցավերը բուժում, ամոքում:

Ո՛վ դու մեծ գուսան, կապրես դարեդար
Քո լույս հանճարով ու քո մեծ սիրով,
Քանզի անսահման քո սերը, Աշոտ,
Այս չար աշխարհին շատ է հարկավոր:

Գուսան Աշոտին

Ì ÝÝ¹Û³Ý Ñ³ñÛáõñ³ÙÛ³ ÏÇÝ

ԱԴԱՄ ԱԴԱՄՅԱՆ
Հարժիս

Դու մայր բնություն Այունյաց աշխարհի,
Շնորհ ես տվել այս մարդուն բարի,
Որ երգեր գրի, տաղեր հորինի,
Իր երգերով ուրախություն բերի:

Երգերդ այսօր եթեր են ելնում շատ երկրներում,
Որ հայի որդին հայերեն երգի բոլոր վայրերում,
Որ հայի համբավը միշտ բարձր հնչի երգի թեւերում,
Սերունդները քեզ վեհացնեն համայն աշխարհում:

Քո հուշարձանն են արդեն Գորիսում բացել,
Որ ճանաչ լինեն տաղանդիդ հարցում,
Մահարձանդ են կերտել սարի բարձունքում,
Քո երգի ձայնն է ամենքին հուզում ու կանչում:

Քանի հարսներ ենք մենք տուն բերել քո երգերով,
Քանի որդի բանակ ճամփել քո երգերով,
Քանի-քանի համերգներում հպարտացել քո երգերով,
Քո փառքն ենք մենք գովերգում Գուսան Աշոտ:

Դու փայլուն ասպետ ես աշուղական,
Շողշողուն ես Ջիվանու, Շերամի ու Շիրինի պես,
Երգիդ տողերն են վկայում հավասարը հավասարին,
Դու նոր դարի Սայաթ-Նովա....

Հրաժեշտ երկրային կյանքին

Գուսան Աշոտ

Մահազդ

Սովետահայ մշակույթը ծանր կորուստ կրեց: 82 տարեկան հասակում կյանքից հեռացավ սովետահայ երգարվեստի մեծ երախտավոր, 1946 թվականից ՍՄԿԿ անդամ, Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ Գուսան Աշոտը:

Գուսան Աշոտը (Աշոտ Հայրապետի Դադալյան) ծնվել է 1907թ. ապրիլի 25-ին, Գորիսում: Պատանի տարիներին ի հայտ է գալիս նրա երաժշտական ձիրքը:

1921թ. մեկնում է Բաքու, առաջին քայլերն անում երգ-երաժշտության ասպարեզում: 1928թ. վերադառնում է Զանգեզուր եւ զբաղվում գուսանությամբ: Ավելի ուշ, տեղափոխվելով Երեւան, լիովին նվիրվում է երգարվեստին եւ իր գլխավորած երաժշտական խմբով հանդես գալիս հանրապետության քաղաքներում ու գյուղերում: 1946թ. լույս է տեսնում Գուսան Աշոտի երգերի անդրանիկ ժողովածուն՝ «Գուսանական երգեր» խորագրով: 1955-58թթ. հասարակայնությանն է ներկայացվում «Գուսանի սերը», իսկ 1971 եւ 1974թթ.՝ «Սիրո կրակներ» նոտագրված ժողովածուները: Դրանցում Գուսանը գովերգում է իր հայրենի բնությունն ու մարդկանց, պատկերում նրանց հայրենանվեր աշխատանքն ու կորովը, սերմանում մարդասիրություն ու ժողովուրդների բարեկամություն:

Ծննդյան 80-ամյակի առիթով, 1988 թվականին լույս է տեսնում անվանի գուսանի «Լեռները կանչում են» ժողովածուն, ուր ամփոփված են հայրենիքին ու ժողովրդին հասցեագրած նրա վերջին շրջանի քնարական ստեղծագործությունները:

Շուրջ կես դար տեւած ստեղծագործական եւ համազգային գործունեության ընթացքում Գուսան Աշոտը գրել ու կատարել է հարյուրավոր գուսանական գողտրիկ հոգեպարար երգեր, որոնք ընդգրկվելով պետական ու ժողովրդական կոլեկտիվների խաղացանկերում, մեծապես հարստացրել են հայ ժողովրդական, գուսանական երգարվեստը:

Ամենուրեք մեծ ժողովրդականություն են վայելում «Հուշարձաններ», «Զանգեզուրի բարի ծնունդ», «Սյունյաց սարեր», «Սարի սիրուն յար», «Հով սարեր, մով սարեր», «Օջախում» եւ բազմաթիվ այլ երգեր, առանց որի դժվար է պատկերացնել մարդու առօրյա ուրախությունն ու տխրությունը:

Կուսակցությունն ու կառավարությունը բարձր են գնահատել Գուսան Աշոտի վաստակը: Նրան շնորհվել է Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում: Նա արժանացել է կառավարական մի շարք պարգեւների:

Սիրված գուսանի, հայրենասեր քաղաքացու, ազնիվ ու բարի մարդու անունը ընդմիշտ կմնա ժողովրդի հիշողության մեջ:

Ս.Գ.Հարությունյան, Ն.Մ. Ոսկանյան, Վ.Ս.Մարգարյանց, Օ.Ի.Լոբով, Գ.Ա.Գալոյան, Թ.Ա.Դիլանյան, Մ.Ա.Սերոբյան, Ս.Ս.Ավետիսյան, Յու.Ե.Խոջամիրյան, Գ.Ե.Ասծատրյան, Յու.Ա.Մելիք-Օհանջանյան, Ռ.Ա.Ալեքսանյան, Ս.Ն.Խանզադյան, Հ.Կ.Հովհաննիսյան, Է.Մ.Միրզոյան, Տ.Տ.Սազանդարյան, Հ.Հ.Բադալյան, Օ.Կ.Համբարձումյան, Ռ.Մ.Մաթեւոսյան

«Զանգեզուր» թերթ

2 փետրվարի 1989թ.

Հայաստանի կոմկուսի Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանի խոսքը Գուսան Աշոտի հուղարկավորության ժամանակ

Թանկագին ընկերներ, մեծարգո հյուրեր:

Հայ ժողովուրդը, մեր մշակույթը ծանր, անդառնալի կորուստ կրեցին:

Հանրապետության ժողորդական արտիստ Գուսան Աշոտի մահը վշտի հուժկու ալիք առաջ բերեց նրա սրտահույզ երգերի բյուրավոր երկրպագուների շրջանում:

Չկա այլեւս մեր սիրելի, մեր թանկագին, մեր պաշտելի Գուսանն ու քաղաքացին, ով ապրում էր իր ժողովրդի մեծագործությունների ուրախությամբ, նրա այսօրվա նորոգ կյանքով ու լուսավոր գալիքով, նրա վշտերով ու տագնապներով, նրա հույսերով ու երազանքներով:

Գուսան Աշոտին՝ Զանգեզուր աշխարհի նահապետին, հրաժեշտ է տալիս ամբողջ հայ ժողովուրդը:

Ծանր կորուստ կրեցին նաեւ Հայկական ՍՍՀ գրողների եւ կոմպոզիտորների միությունները, որոնց երկարամյա պատվավոր անդամն էր Գուսանը:

Այսօր նրա հարկի տակ են հավաքվել զավակները, թոռները, հարազատ-

Շարժեշտ երկրային կյանքին

ները, Գուսանի հավերժող արվեստի երկրպագուները: Եկել են, որ դեպի հավերժություն ճանապարհեն սիրելի, թանկագին մարդուն, հմայիչ քաղաքացուն, տաղանդավոր երգահանին ու բանաստեղծին:

Եկել են մայր հողի գրկում ամփոփելու մի մեծ սիրտ, մի մեծ սեր:

Գորիսում 1907թ. ապրիլի 25-ին, Հայրապետ Դադալյանի օջախում է աշխարհ եկել մեծ Գուսանը: Նա այս կուսական լեռնաշխարհի ծնունդն է, որի հանդեպ որդիական անարատ, հուզաթաթախ զգացմունքն ու սերն արտահայտել է իր յուրաքանչյուր տողում:

Պապիս կերտված էն քարայրն է
աչքիս դեմ,
Խաչաղբյուրը, լեռնապարն է
աչքիս դեմ,
Կյանքի քամին ուր էլ քշի, տանի ինձ,
Լապտի կալը, Լապտի լանջն է
աչքիս դեմ:

Սիրելի Գուսան

Դու ծնվել ես մեր ժողովրդի կյանքի ծանր օրերին, ճաշակել զրկանքների ու որբության ողջ դառնությունը, մեր ժողովրդի հետ բարձրացել մոխիրներից, առնականացել ու պտղավորվել, տեսել հարազատ ժողովրդի վերածնունդը, նրա հզոր վերելքը եւ քո տաղանդին հատուկ ուժով երգել նրա թռիչքը, նրա պայծառ գալիքը: Ավաղ, ականատեսը եղար նաեւ մեծ արհավիրքի, ողբացիր կորուստն անմեղ զոհերի, Լոռվա ու Շիրակի կորած քաղաքների ու շենքերի: Դու խղճի ծով, բայց այսօր անխիղճ գտնվեցիր եւ այս դժվարին պահին թողիր ու հեռացար, երբ քո կարիքն անչափ շատ ուներ վիրավոր ժողովուրդը:

Այո, Սյունյաց սարերը որբության ամենադառն օրերին, «սուրբ մոր նման օրոր» են ասել Գուսան Աշոտին, «մեծ վարպետ Նաղաշի ձեռքով գույն-գույն ծաղիկներ նախշել» նրա ճանապարհին ու ապա «մոր սիրով իրենց գիրկն առել» որբուկ գառնարածին: Ապրուստը դժվար էր, ինքն էլ յոթ տարեկանում զրկվեց մորից: Գառնարած մանուկն իր հացը վաստակում էր հայրենի լեռներում, իր ձեռքով պատրաստած շվին նվագում ու Արզուման պապի առակներով երաժշտություն դնդնում: Ծնվեցին առաջին երգերը՝ ներծծված հայրենի Սյունյաց աշխարհի ու նրա կուսական բնության գեղատես պատկերներով, լեռների բանաստեղծականությամբ ու երաժշտականությամբ:

60 տարուց ավելի է, ինչ հայ ժողովրդի արվեստի ճանապարհով քայլում եւ շողում է Գուսան Աշոտը, իր կախարդիչ երգերով ուղեկցում մեզ: Գուսանի երգերը դարձել են մեր ժողովրդի համար պահանջմունք, մեր կյանքի կենդանի մասը, որը թելադրված է նրա երաժշտության նկատմամբ ունկնդրի անշեջ սիրով եւ այդ երաժշտության հետ հաղորդակցվելու բերկրանքով:

Գուսանի զգացմունքների թանգարանը հայրենիքն է, ծննդավայրի պաշտամունքը, կարոտը, օջախի սերը, այն վեհ մաքրությունները, որոնք ստեղծել է մարդը, որին իր ամբողջ գոյատեւման ընթացքում ձգտել է նա: Եվ դրանց շնորհիվ է այն համընդհանուր սերն ու ճանաչումը, որով Գուսան Աշոտն արժանացել է կուսակցության ու կառավարության բարձր գնահատականին, իրեն ծնած ժողովրդի սիրուն, գնահատվել նաեւ ուրիշ ազգերի ու ժողովուրդների կողմից, նրանց եւս տվել իր սրտի հուրը:

Գուսանն էն է, որի երգը հազար
փորձանքի դիմանա,
Լեզվից լեզու անցնի գնա,
ամեն ազգի մարդ իմանա,
Հասնի ամեն սեղան-սուփրի,
կարոտ սրտի թարգման դառնա,
Ամպից եկած արեւի պես
ուրախացնի սիրտը մարդու:

Գուսանը բակունցյան բնակերտման տաղանդով մեր առջեւ է փռել հայրենի բնության հրաշքները եւ իր հավերժությունը տեսել նրանց գրկում:

Պալատներդ մեծ՝ հոգուս չեն ձգում,
Չէ որ ծնվել եմ երգի հնոցում,
Ես պիտի խորհեմ Լալազար
լանջում առանց ննջելու,
Ուր իմ իդեաներն են սիրո թեւ
առած գով ու հովերում,
Հավատով ապրեմ եղեգյան
փողի լուսո ձայներում,
Լեռների ծնունդ իմ հոգին
ձուլեմ անհաս ժայռերին:

Սիրելի Գուսան

Մենք երազում էինք քո այս կտակն իրականացնել փառահեղ 100-ամյակիդ, ավաղ, շտապեցիր «Լեռների ծնունդ հոգին ձուլել անհաս ժայռերին»: Սրտի կսկիծով այսօր կատարում ենք քո փափագը՝ պահը դարձնում պատմական ու հավերժական:

Գուսան Աշոտի տաղանդն իր ինքնատիպ փայլատակումով շողաց Հայրենական մեծ պատերազմից հետո, երբ մեկը մյուսի հետեւից ժողովրդին էր նվիրում հայրենասիրական, խոհափիլիսոփայական, խրատական եւ, անկասկած, առավել նշանակալից մաս կազմող իր սիրո երգերը:

Սիրո քնարը մշտավառ կանթեղի նման լուսավորել է Գուսանի 500-ից ավելի երգերի ճամփան, նրանց օծել մեկ քնքուշ ու մեղմ, մեկ արբեցուցիչ ու խելահեղ սիրո անպարփակ զգացմունքներով, քնարաշունչ ապրումներով: Գուսան Աշոտի արվեստի ակունքները եւ առավել շատ բանաստեղծական խոսքի աղբյուրը սկիզբ է առնում մեծ Սայաթ-Նովայից, Նաղաշ Հովնաթանից:

Անմահ Գուսանը կերպարների, խոսքի ու մեղեդու նոր արտահայտչամիջոցների հարուստ մի պատկերասրահ, ընտրանի է ստեղծել իր բեղուն ու մշտակարկաչ ստեղծագործական գործունեության ընթացքում: Արտասովոր ապրումների տեր մարդը, երգահանն ու բանաստեղծն ընկալել է հասարակական հզոր բռնկումները, քաղաքական-սոցիալական տրամադրությունները:

Սիրելի Գուսան

Քո երգերի յուրաքանչյուր տողում փիլիսոփայել ես կյանքի, հավիտենության, սիրո, աշխարհի չար ու բարու մասին:

Ով է ասում, թե փուչ ես դու, մորս
նման թանկ ես, աշխարհ,
Մարդն էն է, որ բարի լինի,
շամբը դարձնի դրախտավայր,
Մեկը կերթա, մյուսը կգա, արեւը
երբեք չի մարի,
Մեկ-մեկ կայծակ ծառին կտա՝
տեղը նորից կդալարի:

Մեծ Գուսան, դու սերունդներին թողնում ես մի հավերժական գարուն, անթառամ երգեր:

Այս ծանր պահին մխիթարվում ենք այն ճշմարտությամբ, որ մեզանից հեռացող Գուսանն անմահ է, ժողովուրդը

Հրաժեշտ երկրային կյանքին

պահելու է նրա անունը: Այո,

Միտքդ ծով է, երբեք լճակ
չի դառնա,
Հազար աղբյուր, հազար
ակունք ունի նա,
Մահ չես տեսնի, թեկուզ մի
երգդ մնա,
Քո հայրենի աղբյուրների ափերին,
Քո աշխարհի աղջիկների
շուրթերին:
Ժողովրդի սիրո համար
վառեցիր քեզ
Խալիսի նոքյար դառար դու
աշուղ Սայաթ-Նովու պես:

Մենք դժվարությամբ ենք համոզվում, որ դու այլեւս չկաս: Երբ տոնում էինք 80-ամյակդ, չէինք հավատում տարիքիդ, ուր մնաց հավատանք, թե չկաս այլեւս: Հետդ զրուցելիս այգում, Սպարապետի հրապարակում, քո սիրելի ուսուցչի տան մուտքի մոտ «Կարծում էինք, թե հեքիաթի մեջ կտրիճ, ջահել տղա ես դու»: Այնպես էիր սեր երգում երեկվա ստեղծած՝ Ղարաբաղին ձոնած տողերիդ մեջ, այնպիսի գունեղ թրթիռներ կային՝ սիրո, կարոտի, վշտի, սպասման եւ այսօր... ինչպե՞ս հավատանք:

Անցորդ ախպեր, դարիներս
թռան-անցան,
Ակնթարթ էր, չիմացա, թե էն
ոնց անցավ,
Ժողովրդիս վշտերն առած իմ
դաք սրտին,
Մորմոքելով դառապանքի
ճամփա անցա:
Երգեմ, երգեմ, սիրո հեւք եմ,
իմ հայրենի հողին փարվեմ:

Մենք վերջին հրաժեշտ ենք տալիս մեծ երգահանին, անափ ժողովրդականություն վայելող քաղաքացուն, կյանքին ու աշխարհին նվիրված սիրահարին:

Մենք գլուխ ենք խոնարհում քո սուրբ աճյունի առաջ այն գիտակցությամբ, որ դու եղել ես, կաս մեզ հետ, կլինես սերունդներինն ու հաստատակամ կքայլես դեպի անմահություն:

Դողդոջ ձեռքերով այսօր, 1989թ. փետրվարի 1-ին փակում ենք քո կենսագրության վերջին էջը, եւ կանցնի մի փոքր ժամանակ, կողք-կողքի կդրվեն քո երգարանները, առավել կճշտվեն երգահան-բանաստեղծիդ տեղն ու կշիռը, քո երգարվեստի անսահմանությունը: Դու դեռ նոր պիտի գաս աշխարհ:

Հայաստանի կոմունիստական կուսակցության Գորիսի շրջանային կոմիտեի, ժողովրդական դեպուտատների շրջանային ու քաղաքային սովետների գործկոմների անունից խորին ցավակցություն ենք հայտնում հանգուցյալի հարազատներին, մերձավորներին, մտերիմներին, Գորիսի շրջանի ողջ բնակչությանը:

Շնորհակալություն քե՛զ, հիանալի արվեստագետ, հմայիչ, համեստ, սքանչելի մարդ: Շնորհակալություն քո բոլոր տաղերի համար, քո բոլոր հույզերի համար:

Հայտնի բան է. էլի գարուն կգա, վարդեր կբացվեն, սոխակներ կերգեն:

Կանաչով կծածկվի հայոց լեռնաշխարհը: Երկնահաս ժայռերի ծերպերին կծաղկի մասրենին:

Գյազբելի լանջերն էլի կծածկվեն ծաղկով:

Սյունյաց գետերն էլի կգահավիժեն երկնաքեր ժայռերի բարձունքներից եւ կյանք կտան պապակ դաշտերին: Հայոց հինավուրց հողում ամեն բան կընթանա իր բնական հունով: Միայն չի լինի Մեծն Գորիսեցին՝ Գուսան Աշոտը:

Ամեն առավոտ իր համեստ բնակարանից մի քիչ վախվորած, հուշիկ քայլերով այլեւս Սպարապետի հրապարակ չի իջնի Գորիսեցի աշուղ Աշոտը, իր խորունկ, կյանքով եւ սիրով լեցուն աչքերով էլ չի ժպտա Գորիսեցիներին եւ մեր քաղաք այցելող հազարավոր հյուրերին, էլ չի կանգնի Սպարապետի հրապարակի սիրած տեղում եւ երախտապարտ ունկնդիրներին էլ չի մրմնջա իր հորինած երգերը:

Այլեւս Գորիսեցի մեծերն ու փոքրերը, ուսանողներն ու դպրոցականները չեն հանդիպի իրենց սիրելի Գուսանին, սուրբ երկյուղածությամբ եւ խորին հարգանքով չեն ողջունի նրան:

Սակայն մի սուրբ ճշմարտություն կա. Դու կապրես այնքան, քանի դեռ կլինի Արարատ լեռն ու Իշխանասարը, Մշո դաշտն ու Սիփանը:

Ասել է թե՝ Դու հավերժ կապրես:

«Զանգեզուր» թերթ
4 փետրվարի 1989թ.

Ապրողներից՝ հար օրինանք

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Դու էիր ասել՝ հրռանա՛նք վեչ մեր նախշարար էս ծյորան: Եվ երեւի կյանքում առաջին անգամ դրժեցիր լեռնաշխարհիդ տված խոսքը: Հեռացար, որպեսզի այս անգամ վերադառնաս... ընդմիշտ եւ մի ամբողջ հավերժություն զրուցես ծով աստղիկների, քերծից ծլթացող ծով աստղիկների, քերծից ծլթացող արծաթե ջրերի, կուսական անտառով փախած պախրաների, դեղին արտերով թռած լորերի հետ:

...Գիտեինք եւ վերաարժեւորում էինք մեզ, նայում մեր շուրջը եւ մեզ հավերժական համարում՝ Սեւակի ու Շիրազի, Մինասի եւ Սարոյանի, Արշիլ Գորկու եւ Ազնավուրի, Շահնուրի եւ Գուսան Աշոտի ու էլի մեծերի ժամանակակից լինելու համար:

Մենք համախմբվել էինք մեր շուրջը եւ ուզում էինք մեր մտքի ու բազկի արեւը, ի ցույց մոլորակի, պարզել եւ ասել՝ հանճարներով օծված, գոյատեւող ազգ ենք: Չվարանեինք ու ասեինք: Ոչնչից ահ չունենայինք ու ասեինք: Նախանձի ավերիչ ալիքը չխփեր, ու ասեինք: Միջակության բնազդական համախումբը չլիներ, ու ասեինք:

Հրաժեշտ երկրային կյանքին

Շա՛տ համարեց Աստված:
Խփեց:

Ասում են՝ սիրելիներին է խփում Աստված: Ասում են՝ կատարելությանն է խփում Աստված եւ ասում՝ մի նմանվիր զիս, որովհետեւ ես Միակն եմ:

Շատ համարեց Աստված:
Ճղակտրոր արեց:

Մենք քեզ չտեսանք, գուսան, հայոց արհավիրքից հետո, որովհետեւ դու արդեն հիվանդ էիր: Չտեսանք, բայց լեռնաշխարհիդ մարդիկ մոլոր հավաքվում էին քո շատ սիրելի պատի տակ եւ սպասում... Հավատում էինք՝ ուր որ է՝ կերեւաս՝ մեծ-մեծ, բարի-բարի, երգոտ: Հավատում էինք, որովհետեւ շատ էինք տխուր եւ ուզում էինք պատսպարվել հայոց մեծիդ շվաքի տակ, քո տաքուկ հոգում, երգիդ մեջ եւ գեթ սփոփվելով մտածել, որ մեր արմատները զորեղ են ու հուռթի, որ մեր լինելիությունը գալիս է հեթանոս աշխարհից եւ գնում ավելի հեռուներ:

Մենք քեզ չտեսանք՝ պատմելու մեր հոգս ու ցավից, կործանված քաղաքների պես ավեր մեր հոգիներից, պատմելու մեր ծե՞ր-ծերացած լռությունից, որպեսզի հավասարակշռես մեզ, եւ մենք չխենթանանք...

Չտեսանք, բայց ինչպե՞ս էինք զգում, որ մեզ հետ ես, եւ շուրթերիդ՝ արցունքների շաղով թրթռուն մորեմերկ-մաքուր երգը: Ցավի երգը: Ապրելու, հողին ու ծաղկին փառաբանելու երգը: Երգ, որ միայն դու կարող էիր ստեղծել, ավաղ, որ ծուլվեց հոգուդ հետ եւ սլացավ:

Երգի տեղ՝ գուժը հասավ մեզ:
Մի ժամվա մեջ քաղաքը
սուգ հագավ,
Զոր ու խութ, քար ու քարտաշ
մթնդեցին:

Լեռնաշխարհիդ մարդիկ քայլում էին ստվերների պես, կանգնում քո սիրած տեղը եւ շշուկով՝ լռում: Քեզ էինք հիշում: Սպասում էինք քո դարձին:

Եվ դու եկար՝ տխուր մայրաքաղաքին հրաժեշտ տված:

Եկար՝ հրաժեշտ տալու նաեւ մեզ:

* * *

Լեռնաշխարհի մարդիկ իրենց սիրտն ու հոգին էին բերել մեծն գուսանին, իսկ նա անխռով, անհաղորդ այլեւս, պառկել էր ծաղիկների մեջ: Երկու ժամ չէր դադարում մարդկային հոսքը դեպի դրամատիկական թատրոնի դահլիճի ճեմասրահը: Այն, ինչ տվել էր մարդկանց մեծ երգահանը՝ նրան էին վերադարձնում՝ մաքրամաքուր, չաղարտված: Անմնացորդ: Դա գուսանից մեզ փոխանցված սերն էր, որ բումերանգի պես նորից վերադառնում էր նրան՝ հավերժորեն մոտը լինելու համար: Գուսան Աշոտին հրաժեշտ տալու էին եկել քաղաքի եւ շրջանի բնակիչները, Արցախից, ողջ Հայաստանից:

Սգո թափորը շարժվում է դեպի «Ղազարի դալուկներ» բարձունքը՝ Գուսանի սիրելի վայրը: Բարձրադիր բլուրը, որտեղ պետք է ամփոփվեր նրա աճյունը, բարձրանում էինք սրբատուն գնալու պես՝ գլխիկոր, ներշնչված-անվերջանալի շարքով:

Սգո հանդեսը բացում է ՀԿԿ Գորիսի շրջանային կոմիտեի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանը: Նա իր լեռնաշխարհի մարդկանց անունից հրաժեշտի ջերմաջերմ խոսք է հղում Գուսանին.

«Շնորհակալություն քեզ, գուսան, - ասաց նա, - հիանալի արվեստագետ, հմայիչ, համեստ մարդ: Շնորհակալություն քո բոլոր տաղերի, տողերի համար, քո բոլոր հույզերի համար»:

Հրաժեշտի խոսքեր են ասում նաեւ ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության վարչության պետ Հայկ Ահարոնյանը, պոլիտեխնիկական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի ուսանողուհի Տաթեւիկ Տատինցյանը, արցախցի բանաստեղծ, երգահան Գուրգեն Գաբրիելյանը:

«Գուսանը, որ Սյունիքի մեր մեծերի՝ Գրիգոր Տաթեւացու, Նաղաշ Հովնաթանի, Ակսել Բակունցի երախտավոր շառավիղն է, ծնվել է երկնքից, որովհետեւ մեծերը ծնվում են աստվածների կաճառներից եւ կրկին վերադառնում այնտեղ, - ասաց արձակագիր Սերո Խանզադյանը: - Այսօր երբ հայ ժողովուրդն օրհաս է ապրում, մեծն Գուսանի մահով մենք չենք թողնում նաեւ մեր հույսը, մենք այն ուղարկում ենք երկինք՝ արմատները թողնելով սրբերի այս ծորում»:

* * *

Սիրելի գուսան, դեռ տանելի է, երբ լացում են կանայք ու աղջիկներ, բայց տեսանք, թե ինչպես են որբացած երեխաների պես հեծկլտալով լաց լինում սյունեցի տարեց այրերդ, երբ լսում էին Գուրգեն Գաբրիելյանի սուգը՝ Ղարաբաղի աստվածային հորովելը: Նրանք քեզ էին հիշում, քեզ հետ էին: Դու նրանց մեջ էիր:

...Հիշեցինք տարեց այրերիդ արցունքները, հավատացինք, որ քո հոգին դուրս է եկել աստվածային ճամփորդության՝ աստղերից հար օրհնելու, հսկելու վար մնացած ազգիդ, հնչեցնելու նրա գոյատեւման ակորդները:

«Զանգեզուր» թերթ
4 փետրվարի 1989թ.

Հրաժեշտ երկրային կյանքին

Հավերժի ճամփորդը

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Համազգային վշտի այս ծանր օրերին հայոց աշխարհը կրեց մի նոր մեծ կորուստ... Մեռավ մեր օրերի մեծ երգահանը՝ Գուսան Աշոտը: Կայծակնահար եղած տապալվեց գուսանական արվեստի հզոր կաղնին՝ իր սաղարթների տակ առնելով մեր ավերակված բնակավայրերն ու բազում-բազում անմեղ զոհերի թարմ շիրիմները... Հիրավի, մեր Գուսանին էլ բաժին ընկավ Թումանյանի ճակատագիրը, նրա հոգին էլ հայոց վշտի անհուն ծովում լող տվեց, բայց ափ չհասավ, քանզի տիեզերածավալ վշտի ծանրությանը չկարողացավ դիմանալ նրա գերզգայուն ու հայրենապաշտ սիրտը եւ դադարեց բաբախելուց...

Գուսան Աշոտը եղավ մեր մեծերի աստղաբույլը համալրող զանգեզուրյան լեռնաշխարհի ամենաբարձր արարումներից մեկը: Նա մեր երկրում եւ Սփյուռքում հանրածանոթ անուն է հայ գուսանական պոեզիայի ու կատարողական արվեստի բնագավառում: Ականավոր երաժիշտն ու բանաստեղծը մեր բազմադարյան գուսանական արվեստի պատմության մեջ նշանավորում է մի նոր շրջան, որն իրավամբ պետք է կոչել հենց իր՝ Աշոտի անվամբ:

Լայն են գուսան Աշոտի ստեղծագործության ընդգրկման սահմանները. սեր, հայրենիք, մայր, գարուն ու բնություն, ստեղծարար աշխատանք, ժողովուրդների արդար բարեկամություն, կյանքի մասին մարդկային խոհ... Նրա արվեստի բոլոր կողմերը կարելի է ամփոփել մեկ-բառ հասկացության մեջ՝ Սեր: Այո՛, դա համակ սեր է՝ առ մարդն ու աշխարհը:

Գուսան Աշոտի երգարվեստի հիմնական թեման սերն է:

Սերը ավյունն է աշխարհի,
սերը սիրտն է աշխարհի,
Մի, թե սերը խափանվի,
ինչ կմնա աշխարհին:

Աշոտի սիրո երգերն աչքի են ընկնում նրբերանգների հարստությամբ, սիրո զգացմունքի տարբեր կողմերի անդրադարձումով:

Գուսանի քնարի հուզաթաթավ լարերից մեկն էլ հայրենասիրությունն է: Նրա հայրենասիրությունը շատ առողջ է ու հորդաբուխ: Դրա ակունքը հայոց աշխարհն է, մեր ժողովուրդն ու նրա պատմությունը:

Ով ժողովուրդ, իմ ծնողը
դո՛ւ ես, դո՛ւ,
Ինձ կյանք տվողը, ինձ սնողը
դո՛ւ ես, դո՛ւ,
Քո շեն այգում ես մի տերեւ
անցողիկ,
Ինձ փայփայողը, ինձ պահողը
դո՛ւ ես, դո՛ւ:

Աշոտն առանձին ջերմությամբ է երգում հայրենի Զանգեզուրը, որն իր չքնաղ բնությամբ՝ վեհանիստ սարերով, փարթամ անտառներով, երկնքի հետ հավերժ զրուցող լեռներով, նրա ստեղծագործական ներշնչման աղբյուրն է:

Գուսան Աշոտը նաեւ խանդավառ երգիչն է մայրական սիրո: Յուրովի թափանցելով մոր սրտի գաղտնարանները՝ գուսանը մայրապաշտության հավերժական թեման հարստացնում է նորանոր երանգներով ու գույներով, դրվատում մորը որպես հավերժական սիրո աղբյուր:

«Սուրբ մայրերը» գուսանի մայրերգության զարդապսակն է, որտեղ ամբողջացվում են մոր կերպարը բնութագրող որակական բոլոր հատկանիշները:

Ով սուրբ մայրեր, ձեր վիշտն
առնեմ տանեմ ո՞ւր,
Մորմոքներն ու հոգսերն
առնեմ տանեմ ո՞ւր,
Կարոտներն ու խոհերն առնեմ
տանեմ ո՞ւր:
Տանեմ լուռ,
Վառվեմ լուռ,
Հալվեմ լուռ:

Աշոտի ստեղծագործության մեջ էական տեղ են գրավում նաեւ գարնան ու բնության, խոհական կամ խոհափիլիսոփայական երգերը: Լայն առումով՝ նրա արվեստն ամբողջությամբ խոհ է կյանքի ու մահվան, մարդու գործի անմահության, մարդու եւ բնության փոխհարաբերության, սիրո ու հավերժության եւ այլ հարցերի շուրջը: Գուսանը, ինչի մասին էլ խորհրդածում է, միշտ լավատես է ու իրատես:

Գուսան Աշոտը խոսքի վարպետ է: Նրա երգերն աչքի են ընկնում լեզվաոճական բազում որակներով՝ բառակերտման արվեստով, ժողովրդական դարձվածքների, արտահայտչականության ու պատկերավորության միջոցների առատությամբ եւ այլն, որոնցից առանձնապես պետք է կարեւորել պատկերավորությունը: Գուսանը մտածում է պատկերներով, որի շնորհիվ առարկայանում է ոչ միայն նկարագրությունը, այլեւ մարդկային հույզը, ապրումը:

Գուսանն իր հոգու ամենանուրբ թելերով կապված էր հայոց աշխարհի, իր ծննդավայրի հետ, որտեղ ապրած աստեղային պահերին են ծնվել նրա բոլոր գլուխգործոցները: Գյոթեն ուսուցանում է, որ բանաստեղծին լավ հասկանալու համար պետք է լինել նրա հայրենիքում: Մեր գուսանի արվեստն իր ամբողջ խորքով ըմբռնելու համար պետք է լավ ճանաչել նրա հայրենի Զանգեզուրը, բովանդակ Հայաստանը: Նրա երգերը աշխարհի տարբեր միջօրեականներ են տանում մեր լեռնաշխարհի աղբյուրների

Հրաժեշտ երկրային կյանքին

կարկաչը, ալպիական մանուշակների բուրմունքը, մարդկանց ուրախությունն ու տխրությունը:

Ընդամենը երկու ամիս առաջ լույս տեսած «Լեռները կանչում են» ժողովածուն եղավ գուսանի կարապի երգը: Միայն այսօր մեզ համար պարզ դարձավ, որ գուսանի հետ միշտ զրուցող հայոց լեռներն անբեկանելի ուժով կանչել են նրան՝ իրենց գրկում հավերժորեն փայփայելու համար: Եվ լսելով լեռների կանչն ու տեսնելով նրանց մայրական գորովալից գիրկը՝ մեր Գուսանն էլ մոռացել է երկրային բոլոր վայելքները եւ ընդմիշտ լքել աշխարհն ու մեզ եւ «երախտամոռ չլինելու համար» միացել է իրեն ծնած ու իր քնարը սնած, իր քնարին թեւ ու թռիչք հաղորդած հայրենի լեռներին...

Գուսան Աշոտն այլեւս մեզ հետ չէ: Նա բռնել է երկնային կյանքի ճանապարհը... Գուսանի մահով որբացանք մենք, որբացավ Գորիսը՝ զրկվելով Մեծ գորիսեցուց: Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ մեր սիրելի գուսանը, մեր «բարի հսկան» այլեւս մեզ հետ չէ, որ մենք արդեն չենք հանդիպելու նրան փողոցում կամ ուսուցչի տան պատուհանի գոգին հենված, չենք վայելելու նրա բարի ու արդար ժպիտը, չենք լսելու գիշերվա խորհրդավոր լռության մեջ ծնված նրա նոր երգը... Այս վշտի պահին մեզ մխիթարում է այն, որ գուսան Աշոտն աշխարհին հրաժեշտ տվեց՝ աշխարհը հարստացրած իր հոգեզմայլ երգերով, իր անմահ արվեստով: Մեզ մխիթարում է այն բանի գիտակցումը, որ Գուսանն այլեւս միայն մերը չէ, միայն մեր օրերին չի պատկանում. նա արդեն հավերժությանն է ու հավերժի ճամփորդն է...

«Ջանգեզուր» թերթ
4 փետրվարի 1989թ.

Դու դեռ պիտի երգես

ԷԴՈՒԱՐԴ ՋՈՒՐԱԲՅԱՆ

Ամռան պարզ ու պաղ ծեգերին, երբ արեւը դեռ նոր էր հոգնած գլուխը կտրում Լաստասարի պինդ բարձից, Դու արդեն դանդաղ քայլում էիր քո տան հարազատ փողոցով, հայացքդ հառած ծիրանագույն քողը դեմքին հագած կուսական սարերիդ: Զրուցում էիր նրանց հետ, ամեն գագաթի, ժայռի, քարի, թփի, բողբոջի, կարկաչի լեզուն հասկացած բառեր հորինում, հայրենի եզերքի հրաշքներից քաղած մեղեդին մտմտում քեզուքեզ՝ անցորդներին շռայլելով այնքան բարի ու պայծառ ժպիտդ՝ որպես նրանց «բարի լույսի» պատասխան:

Սիրահարված էիր լեռնաշխարհիդ առավոտներին...

Այդ փողոցում եմ ես ամեն օր տեսել Քեզ՝ իմ ժողովրդի մեծ Գուսանիդ...

Սիրահարված էիր փողոցիդ ու քաղաքիդ:

Ձեր փողոցում Քեզ տեսել եմ դեռ այն օրերին, երբ երկրում մոլեգնում էր պատերազմը, եւ բոբիկ ու կիսաքաղց երեխաներիս դառնության հուշերից շեղում էր Քո զառ քամանչի քաղցրալուր մեղեդին: Այդ օրերից քանի՜ գարուններ անցան, քանի՜ հանդիպում ու հեռացում ունեցանք՝ թիվ չկա: Մնացին հուշերը՝ անջնջելի՜, անմոռանալի՜...

Երկու թե երեք տարի առաջ մենք միասին երկար ճանապարհ կտրեցինք մեր հայրենի Գորիսից դեպի մայրաքաղաք, դեպի մեր հույսի ու լույսի տուն Երեւանը: Մի քիչ տկար էիր, հուզված: Լուռ դիտում էիր գարնան ծաղկունքով զուգված սարերը: Երբ անցանք շրջանի սահմանը, պատվիրեցիր կանգնեցնել մեքենան: Դուրս եկար, շրջեցիր, քեզ հատուկ կարոտով դիտեցիր ձյունակնճիռ սարերը, ապա նստելով մեքենան, ասացիր.

- Տեսնես նորից կտեսնե՞մ այս սարերը:

Հիմա ինձ ցնցել է կորստյանդ լուրը, որին չեմ ուզում հավատալ, չեմ ուզում իմանալ, որ Դու ոչ թե վերադառնալու ես, այլ քեզ բերելու են... Ախր ինչո՞ւ գնացիր: Չէ՞ որ հենց ինքդ ասում էիր, որ մարդն ուժեղ է, երբ նրա արմատն ամուր ամփոփված է ծննդավայրի հողում... Բայց գիտեմ, զգում էիր, գնացել էիր կարոտդ առնելու Մասիսներիցդ պանդուխտ, կրկին առնելու Երեւանիդ բույրը...

Դու վաղուց էիր զգում, դեռ մի երկու տարի առաջ գրել էիր «Խոսք հավերժությանդ»:

Պանթեոններդը լուռ հոգուս
չեն ձգում,
Ամ, ես ծնվել եմ ձորերի ծոցում,
Ես պիտի ապրեմ Այունյաց
սարերի մով բարձունքներում...

- Դու մահ չունես, - ասացի:

Ժպտացիր:

Որդիական հնազանդությամբ, պարտք ու զգացումով խոնարհվում եմ Քո աճյունի, ոչ՝ Մեծությանդ, Տաղանդիդ, Հանճարիդ առջեւ եւ սպասում, որ դու դեռ պիտի երգես, ինչպես դարեդար երգում եւ իր ժողովրդի սրտում հավերժում են Մեծն Սայաթ-Նովան ու Ջիվանին:

«Ջանգեզուր» թերթ
2 փետրվարի 1989թ.

Հրաժեշտ երկրային կյանքին

Գուսանի հիշատակի քարե հավերժացումները

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Գուսան Աշոտի շիրմին կանգնեցված մահարձանի հեղինակը ՍԵՎԱԴԱ ՋԱՔԱՐՅԱՆՆ է: 1989թ., երբ մահացավ գուսանը, նա Գորիս քաղաքի գլխավոր ճարտարապետն էր:



Նրա կարծիքով արվեստներից երաժշտությունն ամենամոտն է ժողովրդին: Եվ գուսանին թաղեցին այնպիսի մի բարձունքում, որը ե՛ւ դիտվում է քաղաքից, ե՛ւ շրջապատում իշխող է, ուստի այնտեղ պիտի յուրօրինակ մահարձան լիներ:

«Նախ շատ էի սիրում իր արվեստը, - պատմում է Սեւադա Զաքարյանը, - *հետո էլ նա՝ որպես գորիսեցի, եթե մեր մեծերի մեջ առաջինը չէ, ապա նրանց շարքում է, դրա համար էլ մտածում էի, որ նրան վայել շիրմաքար պիտի կանգնեցվի: Բայց միայն տեղային մտածելակերպով չվերաբերվեցինք նրան, այլ որպես համազգային երեւույթի: Ուզում էի, որ այնպիսի մահարձան ունենար, որ հենց գերեզմանով էլ որպես մեծություն հիշվեր դարեդար»:*

Ճարտարապետն ասում է, թե լավ է, որ այդ ժամանակ խորհրդային կարգեր էին, եւ քաղաքային խորհրդի գործկոմը դեռ կարող էր միջոցներ տրամադրել նման ձեռնարկների համար: Եվ մահարձանը կառուցվեց այդ ձեւով եւ ոչ հանգանակությունների հաշվին, ինչպես հիմա է ընդունված: «Քաղխորհրդի գործկոմի նախագահն այն ժամանակ Թունյան Մայիսն էր: Ինքն էլ՝ որպես գուսանի սիրահար, աջակցեց... Կարծում եմ՝ ոչ բոլոր քաղաքապետերն են այդքանը հասկանում-գնահատում: Հարցը բարձրացվեց քաղաքային խորհրդի գործկոմի նիստում, առաջարկեցի մեր միջոցներով մահարձան կառուցել, որոշում կայացվեց: Կառուցող վարպետներն էին Համո Սարգսյանը, Սերոբ Աթայանը»:

Մահարձանը տեղադրված է փոքրիկ հրապարակ հիշեցնող վայրում, որտեղ հատվում են այդ գերեզմանատան ճանապարհները, մի յուրահատուկ խաչմերուկ է: *«Այսինքն՝ ինքն արդեն թելադրող շեշտադրում է,* - բացատրում է մեր զրուցակիցը: - *Բլուրն իր հերթին, մահարձանն էլ իր հերթին իշխող դիրք ունեն: Հայացքդ ուղղում ես դեպի այդ բարձունքը եւ միշտ իրեն ես տեսնում: Դրա համար մասշտաբով, լուծումով էլ այն սովորական մահարձաններից պիտի տարբերվեր»:*

Մահարձանը կառուցվել է Գորիսի բազալտ քարից: Այն չորս սյուներով բաց սրահ է՝ գմբեթով, որը ճարտարապետության մեջ «ռոտոնդա» է կոչվում: Վեղարի վրա խաչ է դրված: Սրահում թաղված է Աշոտ Դադալյանը: Տապանաքարն արդեն դրել են գուսանի հարազատները: *«Ես ուրիշ տապանաքար էի ուզում այն ժամանակ դնել, բայց դա միջոցների հետ կապված էր, հետո երկիրը փլվեց, չկարողացանք անել այն, ինչ մտադիր էինք»,* - ցավում է Ս. Զաքարյանը:

Գորիսում գուսան Աշոտի կիսանդրու տեղադրման վայրն էլ Սեւադա Զաքարյանն է ընտրել: Պատմում է, որ չնայած ինքն արդեն քաղաքի գլխավոր ճարտարապետ չի աշխատում, բայց պնդել է, որ հատկապես այդտեղ դրվի. *«Որովհետեւ նախապես որոշվել էր դնել մշակույթի տան ներքին բակում: Դա քննարկումների տեղիք տվեց, ասացի, որ սխալ տեղ են ընտրել: Գետիկ Բաղդասարյանն արձանն անում էր այդտեղ դնելու համար, որովհետեւ արդեն հուշաքար էր տեղադրվել, որը ծանուցում էր, թե այդ ներքին բակում պիտի դրվի արձանը»:* Հետո գնացել, քանդակագործի արվեստանոցում տեսել է արդեն պատրաստ կիսանդրին, հասկացել, որ նախատեսված տեղում տեղադրելը նշանակում է տանել-թաքցնել մարդուն. ո՞վ պիտի գնար այն տեսներ... *«Առաջարկեցի Ջամ աղբյուրի մոտ դնել: Նախ, քանի որ այն վատ վիճակում էր, կվերականգնվեր: Եվ հետո՝ կիսանդրին ինքը փոքր ճարտարապետական տարր է: Այսինքն՝ քաղաքում չես կարող կիսանդրիով որեւէ միջավայր ստանալ, որտեղ ասես՝ այս միջավայրում ինքն իշխում է,* - պարզաբանում է ճարտարապետը: - *Դրա համար մտածեցի, որ իրեն լրացուցիչ բան է պետք: Ներքին բակում ընդհանրապես ոչ մի կապ չպիտի ունենար քաղաքի հետ: Իսկ այսպես աղբյուրն ու քանդակը մեկը մյուսին կլրացնեին: Նախ գալիս-իջնում ես, ջուր ես խմում, դեռ ջուր խմելիս էլ՝ խոնարհվում ես, դա վերաբերում է նաեւ գուսանին... Ուրեմն՝ ինչո՞ւ թաքցնեինք»:* Ասում է, որ քաղաքի այսօրվա իշխանությունները, գլխավոր ճարտարապետը դեմ էին իր առաջարկին: Ինքն էսքիզները ներկայացրել է տարածքային իշխանությանը, ասել, որ իր կարծիքն է. մեծությունը քաղաքում պիտի երեւա, թող վարվեն այնպես, ինչպես ճիշտ են գտնում... *«Ինձ թվում է՝ հաջողվել է, ճիշտ վայր է, տարածքն էլ բարեկարգվեց, այդ միջավայրում ինքն ավելի լավ է դիտվում»:*

Գորիսում ուսուցչի տան պատի (սա աշուղի սիրած վայրն էր, այնտեղ էր կանգնում ու գորիսեցիներին ներկայացնում իր նոր երգերը) հուշաքարն էլ փակցվել է Ս.Զաքարյանի ճարատարապետ եղած ժամանակ:

«Այունյաց Երկիր» թերթ
01.17.2007թ. N113 (02)
Հ.Գ. Մահարձանի նկարը՝ էջ 179-ում:

Խասան Հարությունյանի ընտանեկան ալբոմից

Օջախում

«Անհուն երկնի շողն առած, կենաց սիրտ կա օջախում»

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԶՐՈՒՅՑԸ ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏԻ ՈՐԴՈՒ՝ ՀԱՄԼԵՏ ԴԱԴԱԼՅԱՆԻ ՀԵՏ

Գուսանի որդու՝ Համլետ Դադալյանի հետ վերջին անգամ «Այունյաց երկիր»-ը զրուցել էր 2007-ին՝ Գուսանի 100-ամյակի կապակցությամբ («Այունյաց երկիր», N113, 2007թ.): Տասը տարի անց նրա հետ կրկին զրուցելը կարեւորեցինք մի քանի առումով:
Հետաքրքիր էր, նախեւառաջ, ճշտել Գուսանի ստեղծագործական ժառանգությանն ու կենսագրությանն առնչվող մի քանի հարց, իմանալ, թե ինչպես է պահպանվում Գուսանի օջախը, ինչպես է ապրում գերդաստանը:
Հետաքրքիր էր իմանալ, թե որդու տեսակետից որքանով է նոր սերունդը հաղորդվում Գուսանի երաժշտական արվեստին, արդյո՞ք Գուսանի երաժշտական ու բանաստեղծական ժառանգությունը դիմանում է ժամանակի քննությանը, արդյո՞ք նրա հիշատակը հարգվում է ըստ պատշաճի:
Ոչ պակաս հետաքրքիր էր ճշտել, պարզել՝ արդյո՞ք Գուսանի բոլոր ստեղծագործություններն են հրատարակվել, արդյո՞ք անտիպ նյութեր կան եւ ի՞նչ ճակատագիր է սպասվում դրանց:

Համլետ Աշոտի Դադալյան, ծնվել է 1944թ. ապրիլի 19-ին Գորիս քաղաքում: Երեք ամսականում կորցրել է մորը: Միջնակարգն ավարտել է Երեւանի Նար-Դոսի անվան դպրոցում: Աշխատել է Երեւանի կահույքի ֆաբրիկայում, այնուհետեւ՝ էլեկտրատեխնիկական գործարանում: 1965թ. տեղափոխվել է Գորիս, հետո կրկին բնակվել Երեւանում, որից հետո վերջնականապես բնակություն հաստատել ծննդավայրում: Գորիսում աշխատել է գյուղտեխնիկումում՝ արհեստանոցի վարիչ: 2007 թվականից կենսաթոշակառու է: 1965թ. ամուսնացել է Վիկտորյա Դադալյանի հետ, ունեցել են հինգ զավակ՝ Հարություն (մահացել է 1993-ին), Հայրապետ, Հայկ, Հասմիկ (մահացել է մոտ երկու տարեկանում) եւ նորից Հասմիկ, ունեն ութ թոռ եւ մեկ ծոռ:

Օջախում

– Հարգելի Համլետ, նախ շնորհակալություն հանդիպման, զրույցի հնարավորության համար:

Որքան գիտեմ, տունը, որտեղ զրուցում ենք, Գուսանի տունն է, նրա կառուցածը: Ո՞վքեր են հիմա բնակվում այստեղ, որքանո՞վ է պահպանվել հայրիկի պատկերացրած-երազած օջախը՝ «Անհուն երկնի շողն առած, կենաց սիրտ կա օջախում...»:

– Իմ ընտանիքն է այստեղ բնակվում: Իսկապես, տան մեծ մասը հայրս է կառուցել:

Մեր օջախը Գուսանի պատկերացրած, երազած օջախի տեսակն է: Հայ ժողովրդի կենսունակության գրավականներից մեկը հայ օջախն է եղել դարեր շարունակ: Այսօր էլ, կարծում եմ, այդպես է: Այնպես որ՝ օջախի մասին հորս պատկերացումներն իշխող են ոչ միայն մեր հարկի տակ, այլեւ հայոց ընտանիքների, գերդաստանների մեծ մասում: Հայ ժողովրդի՝ առանց պետականության դարավոր գոյությունն էր, նաեւ զանգեզուրյան ավանդույթը, որ ստիպել էին Գուսանին՝ օջախը համարել սրբություն սրբոց: Նա իր օջախի հավերժության առհավատչյան համարում էր թոռնիկներին, որոնց հետ կապված էր անհուն սիրով:

...«Սուրբ մայրեր», «Հայրիկ», «Օջախում» երգերը բավարար են, որպեսզի հասկանանք, թե ինչ էր Գուսանի պատկերացմամբ օջախը հայ մարդու համար, որպեսզի հասկանանք, թե ինչ էր պատգամում Գուսանը: Այսպես էր նա բնութագրում հորը՝ «... հայրը փառքն է օջախի, / Հույսը, լույսը, բարի կամքն է օջախի, / Նվիրական վառ կրակն է օջախի»: Իսկ մայրը սուրբ է Գուսանի համար՝ «Ով սուրբ մայրեր, ձեր վիշտն առնեմ տանեմ ո՞ւր, / Մորմոքներն ու հոգսերն առնեմ տանեմ ո՞ւր, / Կարոտներն ու խոհերն առնեմ տանեմ ո՞ւր»:

– Եվ ի՞նչ է պահպանվել Գուսանից՝ սկսած անձնական իրերից, կարելի՞ է ասել, որ այս տունը մասամբ նաեւ Գուսանի տուն-թանգարանն է, թեեւ պաշտոնապես նման կարգավիճակ չունի:

– Գուսանի ոգին է այս տանը թեւածում... Իսկ անձնական իրերից պահպանվում են աթոռը, գրասեղանը, քամանչան, սազը, դափը, իր օգտագործած կենցաղային իրերը, ակնոցը: Մի խոսքով՝ ինչ որ ունեցել է...

Համաձայն չեմ տուն-թանգարան ձեւակերպման հետ: Սա Գուսանի տունն է, որտեղ բնակվում են, ինչպես ասացի, իր ժառանգները: Ես երեխաներ, թոռներ, ծոռներ ունեմ... Նրանք էլ պիտի բնակվեն այստեղ: Առաջին հերթին այս օջախի շենությամբ է պայմանավորված Գուսանի հիշատակի կենսունակությունը: Բայց դա չի նշանակում, որ չեմ կարեւորում Գորիսում տուն-թանգարան կամ թանգարան ունենալու գաղափարը: Գուսանը գրեթե ամեն օր լինում էր Մխիթար Սպարապետի անվան հրապարակում՝ հենված «Գուսանի պատին»: Գուցե այդ մասում առանձնացվեր մեկ-երկու սենյակ եւ ստեղծվեր Գուսանի թանգարան...

– Զբոսաշրջիկները, գորիսեցիները, երաժշտական արվեստի ներկայացուցիչները հետաքրքրվո՞ւմ են Գուսանի բնակարանով. այցելեն, ծանոթանան, հաղորդակցվեն, զրուցեն հարազատների հետ...

– Այցելուներ շատ են լինում, գալիս են, ընդունում ենք, ուզում են ծանոթանալ, ուզում են մեր հուշերը լսել: Գալիս են արտերկրից, մայրաքաղաքից, Լեռնային Ղարաբաղից... Գալիս են խմբով՝ մարզի դպրոցներից, նախադպրոցական հաստատություններից... Հյուրընկալ օջախ է մեր օջախը, բոլորի համար դռները բաց են:

– Ձեր ընտանիքում էլ, հավանաբար, տարիների ընթացքում ավանդույթներ են ձեւավորվել Գուսանի հետ կապված՝ ծննդյան օր, մահվան օր կամ ...

– Գուսանի ծննդյան, մահվան օրերին, ավանդական համարվող մեռելոց օրերին անպայման այցելում ենք գերեզման, հարգանքի տուրք մատուցում նրա հիշատակին:

– Գուսանի ծննդյան թվականի հետ կապված հարց ունենք. ընդունված է 1907թ. ապրիլի 25-ը: Բայց մի քանի տեղ, իբրեւ ծննդյան թվական, նշված է 1908-ը: Ո՞ր մեկն է դրանցից հավաստի:

– Ծնվել է 1907թ. ապրիլի 25-ին, իսկ եթե ինչ-որ տեղ որպես ծննդյան թվական գրված է 1908, ապա դա սխալ է կամ վրիպակ:

– Մի քանի տարի առաջ Հանրային հեռուստատեսության «Երգ երգոց» շատ սիրելի հաղորդաշարում՝ Գուսան Աշոտին նվիրված հաղորդման ժամանակ, Աշոտի ծննդավայր ներկայացվեց Խնձորեսկը, բայց դա վրիպակ էր եւ հերքվեց: Իսկ կայքերից մեկում էլ մինչեւ հիմա Գուսան Աշոտի ծննդավայր է նշվում Վերիշեն (Հին Գորիս) գյուղը, նույնիսկ ցուցադրված է մի տան աղոտ լուսանկար, որտեղ իբր ծնվել է Գուսանը: Կարո՞ղ եք հստակություն մտցնել այդ հարցում:

– Գուսանը ծնվել է Գորիս քաղաքում. դա անվիճելի փաստ է, ինչպես որ անքննելի է նրա ծննդյան թվականը: Ծնվել է ներկայիս Գուսան Աշոտի եւ Մակիչի փողոցների խաչմերուկի (վերեւից՝ աջ թեւի վրա կառուցված) շենքի տարածքում նախկինում եղած բնակարանում, որտեղ պապիս՝ Հայրապետի տունն էր: Այնտեղից, եթե չեմ սխալվում, 1928-ին է պապս տեղափոխվել ներկայիս տան տեղում գտնվող փոքրիկ բնակարան: Պապիս տան տեղում խորհրդային շրջանի վերջին տարիներին Ակլունց Ալբերտի արտադրամասն էր: Հայրս երբեմն-երբեմն գնում էր այնտեղ՝ հայրական տան ավերակներից կարոտն առնում: Իսկ Վերիշենում տուն չենք ունեցել, բայց ազգակիցներ ունեցել ենք, գուցե դա է ոմանց շփոթության մեջ գցել:

– Որքանով տեղյակ եմ՝ Գուսանի կենսագրությունն առաջին անգամ գրի է առել Սերո Խանզադյանը, որն էլ ընդունվել ու պաշտոնապես շրջանառվել է, զետեղվել տարբեր տեղեկագրերում, հանրագիտարաններում: Բայց մեր հանդիպումներից մեկի ժամանակ Դուք դիտողություն արեցիք, թե իբր շրջանառվող կենսագրականում վրիպակներ կան: Ի՞նչ նկատի ունեիք:

– Ավագ եղբոր անունը Տիգրան էր, մինչդեռ որոշ տեղեր, մանավանդ Սերո Խանզադյանի «Աշուղ Աշոտ» հոդվածում ավագ եղբայրը հիշատակվում է Բագրատ անունով: Իմիջիայլոց, Տիգրանը մեծ դեր է ունեցել Գուսանի կյանքում: Հայրս Բաքվում բնակվող եղբոր՝ Տիգրանի մոտ է տեղափոխվել

Օջախում

ՀԱՅՐԻԿ

Օջախդ շեն, այգիդ՝ ընդմիշտ դալար է,
Ո՛վ այգեպան, իմաստուն իմ հայրիկ,
Մայր Արագի նման սերդ վարար է,
Իմ աչքի լույս, իմ սրտիս սյուն, իմ հայրիկ:
Բարի հայրիկ, խրատներդ լսել եմ,
Սրտիս բոլոր մուրազներին հասել եմ:

Միշտ ծաղկում են գցած այգուդ ծառերը,
Գարնան երգով կարկաչում են ջրերը,
Կանաչել են, կանաչ հագել քարերը,
Հոգիս մատաղ քո սուրբ հոգուն, իմ հայրիկ:
Բարի հայրիկ, խրատներդ լսել եմ,
Սրտիս բոլոր մուրազներին հասել եմ:

Գուսան Աշոտ, հայրը փառքն է օջախի,
Հույսը, լույսը բարի կամքն է օջախի,
Նվիրական վառ կրակն է օջախի,
Լույս ես տալիս սրտիս անքուն, իմ հայրիկ:
Բարի հայրիկ, խրատներդ լսել եմ,
Սրտիս բոլոր մուրազներին հասել եմ:

Գուսանի հայրը՝
Հայրապետ Դաղալյանը

1921-ին: Նրա հոգածությամբ էլ ավարտել է Բաքվի բաներիտ դպրոցներից մեկը: Այդտեղ է, որ Գուսանը հովվական պարզ սրինգը փոխարինել է սազով ու քամանչայով (առաջին քամանաչան ձեռք է բերել Տիգրանը, որը մինչեւ հիմա պահպանվում է մեր տանը): Այդտեղ է, որ Գուսանը, հետեւելով իր հոգու ներքին ձայնին, ներսում ամբարած ունենալով Զանգեզուրի աշուղների եւ գուսանների երգերը, բռնում է գուսանական-աշուղական արվեստի ճանապարհը: Բաքվից ծննդավայր է վերադառնում 1928-ին, երբ արդեն ստեղծագործելը դարձել էր նրա ապրելու կերպը, իսկ երգն ու քամանչան՝ նրա ամենօրյա ուղեկիցները:

– Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով «Այունյաց երկիր» թերթի հատուկ համարի նախապատրաստության ընթացքում փորձեցինք պարզել՝ որտե՞ղ է պահվում Գուսանի անձնական արխիվը, եւ արդյո՞ք նման արխիվ գոյություն ունի: Մեր լրագրողները եղան ե՛ւ ՀՀ ազգային արխիվում, ե՛ւ Եղիշե Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում, բայց ոչինչ չգտան: Մի՞թե ժամանակին կամ հետո Գուսանի անձնական արխիվ չի ստեղծվել, իսկ եթե ստեղծվել է, ապա որտե՞ղ է պահվում:

– Գուսանի արխիվը, եթե կարելի է այդպես ասել, կա եւ պահվում է մեր տանը: Նպատակահարմար չենք գտել հանձնել ո՛չ ազգային արխիվին, ո՛չ էլ գրականության եւ արվեստի թանգարանին: Նամակներ են, հուշեր, լուսանկարներ, պատվոգրեր, համերգային հյուրախաղերի ազդաթերթեր... Նաեւ անտիպ նյութեր կան՝ ինքնակենսագրականը՝ «Կյանքիս հեքիաթը» վերնագրով, «Արարատ եւ Ոսկեհատ» հեքիաթը եւ այլն:

Ոչ մեկին մինչեւ հիմա արխիվը չենք տրամադրել, բացառությամբ Անդրանիկ Կարապետյանի, ով ծանոթացավ «Կյանքիս հեքիաթը» ինքնակենսագրականին եւ դրա հիման վրա հոդված պատրաստեց:

– Կարելի է ենթադրել, որ արխիվային այդ նյութերը մեզ նույնպե՞ս չեք տրամադրի՝ «Այունյաց երկիր» թերթի՝ Գուսանի 110-ամյակին նվիրված թողարկման մեջ հրապարակելու համար:

– Առայժմ հակված չենք այդ նյութերը տրամադրել որեւէ մեկին:

– Հիմա փորձենք անդրադառնալ Գուսանի ընտանիքի պատմության որոշ դրվագների:

Գուսանը, որքանով գիտեմ, վաղ տարիքում է զրկվել մորից: Որոշ մասնագետներ հենց այդ հանգամանքով են բացատրում իրողությունը, որ մայրական սիրո թեման շատ մեծ տեղ է զբաղեցնում նրա ստեղծագործություններում:

– Գուսանը 11 տարեկան էր, երբ կորցրեց մորը. դա 1918 թվականին էր: Մոր անունը Բալախանում էր (ծնված 1860թ.), իսկ հայերեն արտահայտությամբ՝ Դիցուհի: Հարուստ տոհմի դուստր էր, առակասաց ու հեքիաթասաց Արզումանի աղջիկը, ով նաեւ ժողովրդական երգերի լավ կատարող էր:

Բալախանում տատի մահվանից հետո Հայրապետ պապն այլեւս չի ամուսնացել եւ բազմաշունչ ընտանիքի հոգսը (երեք տղա եւ չորս աղջիկ) մենակ է կրել...

Հայրապետը հողագործ լինելուց բացի ճանաչված որմնադիր էր: Այսօր էլ Գորիսում շատ տներ որմնադիր Հայրապետի (Հաբուդի) ձեռքի մատնահետքն ունեն իրենց վրա:

Ասում են՝ Հայրապետ պապս իր Աշոտ որդուն մկրտել է Տաթեւի վանքում: Հայրապետը մահացավ 1941 թվականին՝ 87 տարեկանում. տարիքի եւ առողջության պատճառով բանակ չէր զորակոչվել: Գուսանն էր զորակոչվել բանակ, բայց թիկունքային զորամասում էր ծառայում:

– Գուսանի կյանքը ողբերգական շատ դրվագներ ունեցավ: Դրանցից մեկն այն է, որ 1944թ. կորցրեց առաջին կնոջը՝ Հասմիկին՝ Ձեր մորը, երբ Դուք երեք-չորս ամսական էիք:

– Մայրս՝ Հասմիկը, մահացավ

Օջախում

1944-ին՝ անբուժելի հիվանդ էր: Վաղատուրի Քալանթարյան գերդաստանից էր, Գորիսում հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի էր: Եղբոր անունն էլ Քալանթար էր. 1920-30-ականներին մի խումբ գորիսեցիներ ձերբակալվեցին՝ Ռաֆֆու եւ Չարենցի գրքերն ընթերցելու համար, Քալանթարն էլ նրանց թվում էր: Դատավարության ընթացքում պարզվել է, որ Քալանթարը նաեւ Բակունց է ընթերցել:

Ես, բնականաբար, չեմ հիշում մորս, բայց լուսանկարը պահպանվել է, ասում են՝ գեղեցկուհի էր, երկար ծամերով... Հեռացավ կյանքից՝ թողնելով երեք զավակ՝ Ռոբերտին, Արշալույսին եւ ինձ:

Գուսանն իր լավագույն ստեղծագործություններից մեկը՝ «Ո՞ւր է» նվիրել է վաղամեռիկ մորս՝ Հասմիկին: Ամբողջ երգը շաղախված է կարոտով: Ահա մի քառատող.

Ով դու գուսան, չես իմանում էն
քո սիրած յարը ո՞ւր է,
Չէ՞ որ քեզ հետ խնդում էր միշտ,
հիմա էլ խնդալու օր է,
Ինչի նման քնքուշ ու նուրբ նրա
համբույր տալը ո՞ւր է,
Սիրուց խփված, վիրավոր ես,
քո առաջվա հալը ո՞ւր է:

– Հետագայում եւս Գուսանն անձնական ողբերգություն ունեցավ: Նրա ավագ որդին (Ձեր եղբայրը)՝ Ռոբերտը (Ռուբենը), մահացավ 45 տարեկանում...

– Ռոբերտը մահացավ 1981-ին Վոլգոգրադում, այնտեղ էլ հողին հանձնվեց: Ծնվել էր Գորիսում 1936թ. նոյեմբերի 19-ին: Միջնակարգն ավարտել էր 1957-ին Երեւանի գիշերային դպրոցներից մեկում: Շատ փորձությունների միջով է անցել... Թեեւ հողին հանձնվեց Վոլգոգրադում, բայց մեր ընտանեկան գերեզմանոցում (Գորիս քաղաքում) հայրս հուշաքար կանգնեցրեց Ռոբերտի ընկերների աջակցությամբ՝ նրա հիշատակը ծննդավայրում եւս հավերժացնելու համար:

Որդու մահվամբ Գուսանը մեծ վիշտ ապրեց, եւ այդ կսկիծը, բնականաբար, անդրադարձ ունեցավ նրա մի շարք ստեղծագործությունների վրա:

– Ռուբեն Դադալյանը նաեւ ստեղծագործում էր: Նրա բանաստեղծությունները, քառյակները, աֆորիզմներն ու գրական հարցերին նվիրված հոդվածները տեղ գտան մահվանից հետո լույս տեսած «Անավարտ քնար» գրքույկում:

Մի փոքր ավելի հանգամանալից, եթե կարող եք, Ռուբենի ստեղծագործությունների եւ այդ գրքույկի մասին:

– Ռուբեն Դադալյանի (գրական մականունը՝ Դադալ) «Անավարտ քնար»-ը լույս տեսավ 2002-ին: Գիրքը կազմեց եւ խմբագրեց Էդուարդ Զոհրաբյանը, ինքս էլ հովանավորել եմ գրքի տպագրությունը: Գրքույկում զետեղված են Ռուբենի տարբեր տա-



Հարությունը՝ Գուսանի հետ
(Համլետի ավագ որդին՝ մահացած 1993-ին, 25 տարեկանում)

Աշոտ (Ռուբենի որդին)

Հասմիկ (Համլետի դուստրը)

Հայկ (Համլետի որդին)

Հայրապետ (Համլետի որդին)

Օջախում

րիների ստեղծագործությունները:

Ժողովածուն մի յուրօրինակ հուշարձան է Ռուբենի հիշատակին:

– Հիմա ովքե՞ր կան Ռուբենի ընտանիքում, ի՞նչ ճակատագիր ունեցան կինը, երեխաները:

– Ամուսնացել էր ղազախուհու՝ Նագիմայի հետ: Մենք նրան Նադեժդա ենք անվանում: Երեք զավակ ունեցան՝ Անուշը, Ազամատը եւ Աշոտը: Բոլորը կան, կապ ունենք: Աշոտը գիտության ոլորտում է, Ազամատը՝ հոգեւոր բնագավառում, Անուշը լաբորանտ է:

– 1951-ին էլ Գուսանը, Կյորու գյուղի ճանապարհին, երբ համերգային ելույթի էր մեկնում, վթարի ենթարկվեց, երկրորդ կինը՝ Աշխենը, մահացավ: Այդ մասին կուզենայինք ավելի մանրամասն իմանալ:

– Երեք տարեկան էի, որ հայրս ամուսնացավ Աշխենի հետ՝ Շինուհայր գյուղից էր՝ Խաչատրյան ազգանունով: Ծնվել եւ ապրել էր Բաքվում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, որից հետո ծնողների հետ վերադարձել Գորիս, շրջանային գյուղբաժնում գյուղատնտես էր աշխատում, հետագայում սովորեց քամանչա նվագել:

Աղոտ եմ հիշում նրան, բայց իսկական մայրություն է արել մեզ: Վեց-յոթ տարեկան էի, որ մահացավ ավտովթարից:

Կյորու գնացող մեքենան քարաղ էր բարձած: Համերգի մեկնող խումբը մեքենայի թափքում էր՝ քարաղի վրա նստած: Աշխեն մայրիկն անսամբլի քանոնահարն էր (հետագայում էր սովորել այդ մասնագիտությունը), բայց ավելի շատ խանդից դրդված էր երեւի միանում անսամբլին եւ հորս հետ հյուրախաղերի մեկնում:

Մեքենան շրջվեց, Աշխենը մահացավ, հայրս թեթեւ վնասվածք ստացավ: Որքանով գիտեմ՝ ուրիշ մահացողներ եւ վիրավորներ էլ եղան:

– Չենք ուզում հարցնել, թե ինչպես էր Գուսանը տանում անձնական այդ ողբերգությունները: Բայց զարմացնում է նրա ուժը, էներգիան, անկոտրում կամքը եւ տոկունությունը, որ կարողանում էր այդ ամենից հետո ստեղծագործել, ապրել ու ապրեցնել, ոգեշնչման աղբյուր լինել հազարավորների համար:

– Քանիցս լսել եմ նրանից՝ «Երգերս ծնվում են իմ վշտից ու տառապանքներից»... Ինքն իսկապես ուժեղ կամքի տեր էր, կարողանում էր բոլորի վիշտն իր մեջ կրել:

– Մենք միայն վերջին կնոջը՝

Գուսանի առաջին կինը՝ Հասմիկը

Արաքսյա Ղալեչյանին ենք հիշում, ով նաեւ Գուսանի երգերի առաջին կատարողներից էր: Ի դեպ, ի՞նչ ճակատագիր ունեցավ տիկին Արաքսյան Գուսանի մահվանից հետո: Մեզ չմեղադրեք ավելորդ հարցասիրության մեջ, բայց կուզենայինք լույս սփռել հանրության մեջ ժամանակին շրջանառվող մի

Գուսանի բնակարանում քամանչայի սրտակեղեք մեղեդու եւ հոգեզմայլ երգի շունչը զգացվում է նաեւ այսօր

Օջախում

խոսակցության վրա՝ իբր տիկին Արաքսյան հավակնություններ է ունեցել Գուսանի ժառանգության հանդեպ, թե՞ դրանք ասեկոսեներ են ընդամենը:

– Չէի ցանկանա այս հարցազրույցում անդրադառնալ Արաքսյա Ղալեչյանի կերպարին եւ հորս կյանքում ունեցած նրա դերակատարությանը, դա խոսակցության առանձին նյութ է:

– Վերջերս մենք եղանք Գորիսի քաղաքային գերեզմանոցի Ձեր ընտանեկան հանգստարանում: Մեզ համար նորություն էր, որ այնտեղ չեն թաղված Գուսանի առաջին եւ երկրորդ կինը:

– Ճիշտ եք, ե՛ւ մայրս, ե՛ւ Աշխեն մայրիկը թաղված են ոչ թե մեր, այլ նույն գերեզմանատան՝ իրենց հայրական գերդաստանների հանգստարանում:

– Գուսանի հիշատակի հավերժացման մասին... Գորիսի կենտրոնական փողոցներից մեկը կոչվել է Գուսանի անունով. դա այն փողոցն է, որտեղ սիրում էր կանգնել, կանգնելու տեղն էլ՝ պատին, հուշատախտակ է փակցված: Գուսանի անունով են կոչվել Գորիսի մշակույթի տունը, մշակույթի տան ժողգործիքների անսամբլը: Այդ մշակույթի տան բակում էլ կանգնեցվել է Գուսանի կիսանդրին (2005թ., քանդակագործ՝ Գետիկ Բաղդասարյան, ճարտարապետ՝ Սեւադա Ձաքարյան): Մահարձանի մասին չեմ խոսում, որ կանգնեցվել է 1991թ. ապրիլի 25-ին. Գուսանին արժանի գործ է՝ չորս սյունով բաց սրահ՝ գմբեթով (ռոտոնդա), գմբեթի վրա՝ խաչ:

Թվում է՝ հիշատակի հավերժացման հետ խնդիր չունենք: Մի փոքր տարակարծություն կա (հատկապես գորիսյան հասարակության մեջ) կիսանդրու հետ կապված: Ձեր կարծիքը կուզենայինք իմանալ:

– Իրոք որ, Գուսանի հիշատակը հավերժացվել է ըստ պատշաճի:

Կիսանդրու հետ կապված որեւէ վերապահում ինքս չունեմ, Գետիկ Բաղդասարյանը ճիշտ լուծում է գտել, ինձ գոհացնում է: Գերեզմանի լուծումներն էլ բացառիկ են՝ Գուսանին վայել: Չի գոհացնում մեր տան պատին փակցված հուշատախտակ-վահանակը, որ ամրացվեց Գուսանի 100-ամյակի առթիվ: Ամենակարեւորը՝ ընթեռնելի չէ կամ դժվար ընթեռնելի է գրվածքը: Հուշատախտակը պետք է փոխել. կամ մենք պիտի դա անենք, կամ քաղաքային իշխանությունը:

Գերեզմանի շրջակայքն էլ հիմնավոր բարեկարգման կարիք ունի:

Մի բան էլ կա. քաղաքում Գուսանին նվիրված միջոցառումներ են անում, բայց մեզ չեն հրավիրում, ուրիշներից ենք իմանում այդ մասին:

– Ո՞ւմ է փոխանցվել Գուսան Աշոտի ստեղծագործական գենը: Ռուբենի մասին գիտենք, Դուք էլ, որքանով տեղյակ ենք, ստեղծագործում եք, երգում: Առավել շատ, սակայն, Գուսանի գենը փոխանցվել է Ձեր թոռանը՝ Հասմիկի դուստր Լուսինեին, ով հիմա սովորում է Ջիվանու անվան աշուղական դպրոցում: Ավելացնելու բան ունե՞ք այդ առումով:

– Լուսինեն մարտի 26-ին դարձավ 16 տարեկան: Վեց տարեկանից ելույթներ է ունենում: Ավարտել է Գորիսի Աշոտ Սաթյանի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժինը: Ընդգրկվել է մի քանի երգչախմբերի կազմում: Ներկայումս սովորում է Ջիվանու անվան աշուղական դպրոցում (հիմնադիր տնօրեն՝ Թովմաս Պողոսյան): Նպատակ ունի ուսումը շարունակել կոնսերվատորիայում:

– Հետաքրքիր է, ի՞նչ գործիքներ էր նվագում հայրդ, մենք միայն քամանչան ենք հիշում: Ասում են՝ նաեւ շատ լավ սրինգ էր նվագում...

– Շվի, քամանչա, թառ, սազ, դափ, ջութակ, ուդ, սրինգ... Բոլոր այդ գործիքներն էլ պահպանվում են: Այդ բոլորով հանդերձ՝ իր սիրած գործիքը քամանչան էր, որին նաեւ բանաստեղծություններ է նվիրել: Ահա մի հատված. «Հազար օրհնանք քո ստեղծողին, ծաղկանց բաղ ես քամանչա, / Փարատիչն ես իմ վշտերի, խաղ ու տաղ ես, քամանչա»: Մեկ այլ դեպքում՝ «Լեզու ունի քամանչա, լեզու տվողն Աստված է...»:

– Ինչպիսի՞ն էր Գուսանը կենցաղում: Որքանով հիշում եմ՝ շատ զուսպ էր, շռայլություններ չսիրող, համեստ, մարդկանց հանդեպ հարգալից...

– Շատ մեծահոգի էր, եղածով բավարարվող: Նրանից լավատեսություն, հույս եւ լույս էր ծորում: Սիրում էր մեր ավանդական ճաշատեսակները՝ սկսած ղավուրմայից... Փառասիրությունը խորթ էր նրա տեսակին: Բացառիկ հիշողություն ուներ, ճանաչում էր գրեթե բոլոր գորիսեցիներին: Հիշում էր իր բոլոր գործերը, նաեւ՝ դրանց մեղեդին: Իսկապես, անգիր հիշում էր դրանք...

– Ասում են՝ իր հորինած երաժշտությունն ինքը չէր նոտագրում, թեեւ բավականին լավ էր տիրապետում նոտաներին:

– Անշուշտ, ինքը տիրապետում էր նոտաներին, բայց չուներ երաժշտական կրթություն եւ գերադասում էր հորինած մեղեդին նոտագրել մասնագետ մտերիմների միջոցով: Լեւոն Աստվածատրյանին եմ հիշում, Շարա Տալյանին, Վալերիկ Գասպարյանին, Հովհաննես Բադալյանին... «Սիրո կրակներ» երգերի ժողովածուն, օրինակ, ամբողջովին ձայնագրել է Հովհաննես Բադալյանը: «Ծովաստղիկս» ժողովածուն ձայնագրել են Հովհաննես Բադալյանը, Լեւոն Աստվածատրյանը, Վալերիկ Գասպարյանը:

«Գուսանի սերը» ժողովածուն ձայնագրել են Նորայր Հովհաննիսյանը, Հովհաննես Բադալյանը, Թաթուլ Ալթունյանը, Արամ Մերանգուլյանը, Վ.Արարատյանը, Վ.Ձաքմիշյանը, Արտ.Խաչատրյանը, Վ.Պետրոսյանը, Ալ.Հովհաննիսյանը, Ա.Մանուկյանը:

– 1951թ. ավտովթարից հետո, երբ մահացավ երկրորդ կինը՝ Աշխենը, Գուսանն ընտանիքով տեղափոխվեց Երեւան: Եվ մինչեւ 1965թ. բնակվեց մայրաքաղաքում: Մենք շատ քիչ տեղեկություններ ունենք նրա երեւանյան գործունեության մասին: Որտե՞ղ էիք բնակվում, որտե՞ղ էր աշխատում Գուսանը: Ովքե՞ր էին ավելի շատ լինում երեւանյան Ձեր բնակարանում, ո՞ւմ հետ էր Գուսանն առնչվում, ընկերություն, բարեկամություն անում:

– Ստեղծագործական ակտիվ կյանքով էր ապրում, համերգային շրջագայություններ էր կատարում, ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության խմբեր էր ղեկավարում:

Օջախում

Երեւանյան մեր բնակարանում շատերն էին լինում, բայց առավել շատ՝ Սերո Խանզադյանը, Համո Սահյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Սուրեն Այվազյանը...

Գուսանի հետ անկեղծ բարեկամներ ու ընկերներ էին նրանք:

Մեր տունն էլ գտնվում էր ներկայումս Վազգեն Սարգսյանի անունը կրող մարզադաշտի մերձակայքում:

– Եվ ինչո՞ւ 1965-ին Գուսանը որոշեց վերադառնալ Գորիս: Ու, կարծեմ, Գորիսում գործունեությունը սկսեց հին բնակարանը վերակառուցելով. տունը, որտեղ հիմա զրուցում ենք:

Իսկ Գուսանի ստեղծագործական պրոցեսից ի՞նչ հիշողություն ունեք:

– Ճիշտ է, 1965-ին մշտական բնակության վերադարձանք Գորիս, բայց Գուսանը հաճախ էր մեկնում Երեւան: Այնպես որ՝ ստեղծագործում, ելույթներ էր ունենում ե՛ւ Գորիսում, ե՛ւ մայրաքաղաքում: Ամենակարեւորը՝ ստեղծագործում էր անընդհատ:

– Կանոնավոր կրթություն չէր ստացել, բայց խորությամբ գիտեր միջնադարյան աշուղական արվեստը, գիտեր հայ գրականություն, հայ երաժշտական արվեստի պատմություն, առավել խորությամբ ծանոթ էր Գրիգոր Նարեկացու, Նաղաշ Հովնաթանի, Սայաթ-Նովայի, Ջիվանու ստեղծագործություններին: Ինչպե՞ս էր դա նրան հաջողվում:

– Կարող եմ առանց չափազանցության ասել՝ ամբողջ կյանքում զբաղվեց ինքնակրթությամբ: Խորությամբ գիտեր Արեւելքի մեծերին, ծանոթ էր նրանց ստեղծագործություններին՝ պարսիկ եւ տաջիկ ժողովուրդների բանաստեղծ, փիլիսոփա Օմար Խայամ, պարսկալեզու պոեզիայի հիմնադիր Ռուդաքի, պարսիկ բանաստեղծ Հաֆեզ, ադրբեջանցի բանաստեղծ Նիզամի...

Սակայն նրա ստեղծագործությունների ակունքը, ներշնչման աղբյուրը մեր լեռնաշխարհն էր, մեր ժողովուրդը, հայոց միջնադարյան երգ ու տաղը: Ստեղծագործություններից մեկում՝ «Սայաթ-Նովային», խոստովանում է՝ «Ձեռքիս թասը ավանդական քո հին թասն է, Սայաթ-Նովա», կամ «Սիրո երգի արքան ես դու, մեր մուսան ես, Սայաթ-Նովա»: Իսկ Կոմիտասին անվանում է «Թոնրի կրակ, օջախի լույս, հոգի անմար...»: Խոնարհվում է Նարեկացի մեծության առջեւ՝ «Հազար մտքից թել առավ, արեւներից ուժ առավ, / Խոսքի բռնվեց Աստծո հետ...»:

– Գուսանի առաջին ուսուցիչը, որքանով տեղյակ ենք, աշուղ Աթան էր, ում շատ սիրում էր եւ հիշում: Հո չե՞նք սխալվում:

– Չեմ կարող ասել, որ Գուսանի առաջին ուսուցիչն աշուղ Աթան էր, բայց գիտեմ, որ մի ժամանակ հայրս իր համերգների ժամանակ կատարում էր աշուղ Աթայի «Ընծա հավը» երգը: Ուսուցիչ լինելու առումով ավելի ճիշտ կլիներ հիշատակել Յոլուցց Ղազար քեռուն, ով մանկուց կույր էր, բայց 1920-ականների վերջին Գորիսում համբավ ունեցող թառ նվագող էր: 1928-ին Բաքվից Գորիս վերադարձած Գուսանին նա ընդգրկեց իր սազանդարական խմբում՝ քամանչա նվագող: Մեկ տարի անց, ինչպես վկայում է Սերո Խանզադյանը, երկուսով Գորիսի յոթնամյա

Օջախում

դպրոցում ստեղծեցին երաժշտական խումբ, իսկ Գորիսի մանկավարժական տեխնիկումում կազմակերպեցին երաժշտական-սազանդարական դասընթացներ:

– Գուսան Աշոտը նաեւ ակտիվ համերգային հյուրախաղերի է գնացել իր գլխավորած համույթով, ընդ որում՝ Հայաստանի սահմաններից դուրս նույնպես: Ի՞նչ կասեք այդ մասին:

– Հայաստանում դժվար թե գտնվի մի բնակավայր, որտեղ նա ելույթ ունեցած չլինի: Հյուրախաղերի էր մեկնում նաեւ Ռուսաստանի, Միջին Ասիայի հանրապետությունների, Ադրբեջանի հայաբնակ վայրեր ու առավել շատ Լեռնային Ղարաբաղ:

– Գուսանը բացառիկ ջերմ կապերով էր կապված ժողովրդի հետ: Ասում են՝ նաեւ նրան հրավիրում էին ժողովրդական տոնախմբությունների, հարսանիքների, ուրախությունների՝ նվագելու: Որքանո՞վ են հավաստի այդ խոսակցությունները:

– Այդ խոսակցությունները հավաստի են: Գորիսն իր համար սրբազան վայր էր, եւ նա չէր կարող չապրել իր համաքաղաքացիների կյանքով, ուրախություններով ու հոգսերով:

Համաժողովրդական տոնակատարությունների, իրադարձությունների առիթով նույնիսկ բանաստեղծություններ, երգեր էր հորինում՝ «Բերքի տոն էր, յար», «Զորավոր Զոր-զոր»...

– Մի անգամ ասել եք՝ հայրս անտիպներ է թողել, որ պահում են ժառանգները: Հիմա կարո՞ղ եք այդ հարցում հստակություն մտցնել եւ ներկայացնել, թե ինչ ծրագրեր ունեք անտիպների հավաքման ու հրատարակման առումով:

– «Հավերժություն» ժողովածուի մեջ (2010 թվական), որ կազմեց քույրս՝ իմ աջակցությամբ, որ հրատարակվեց Թովմաս Պողոսյանի, Էլինար Շահենի, Սերյանուհի Գեղամյանի խմբագրությամբ՝ պետական պատվերով, ներառված է Գուսանի անտիպների մեծ մասը: Իր արխիվում էլ, ինչպես նշեցի, որոշ գործեր կան: Միգուցե ուրիշների մոտ էլ լինեն, չգիտեմ:

– Մեր նախորդ հարցազրույցում մտահոգություն էիք հայտնել երաժշտական ոլորտում նկատվող գրագողության առիթով: Արդյո՞ք այդ երեւույթը հիմա էլ կա, արդյո՞ք այն առնչվում է նաեւ Գուսանի ստեղծագործություններին, ինչպե՞ս եք պատկերացնում գրագողության դեմ պայքարը ե՛ւ մեղեդիների, ե՛ւ տեքստերի առումով:

– Ցավոք միշտ եղել է, կա ու կլինի... Երբ որ լսում եմ՝ հիշում եմ, թե Գուսանի որ ստեղծագործություններից է: Երբեմն մի քանի երգից են պատառիկներ կպցնում իրար եւ իբր նոր ստեղծագործություն ներկայացնում՝ ե՛ւ տեքստը, ե՛ւ մեղեդին: Իհարկե դա վիրավորական է: Եվ ոչ միայն Գուսանի կամ նրա ժառանգների համար է վիրավորական, այլեւ բոլորի համար: Առավել ամոթալի է իբրեւ ստեղծագործող ներկայացող գրագողի համար: Մյուս կողմից՝ այլեւս սրտիս մոտ չեմ ընդունում, մտածում եմ՝ մեծերից միշտ էլ կգողանան...

– Կարո՞ղ եք, գոնե մոտավոր, պատասխան գտնել մի այսպիսի հարցի՝ քանի՞ ստեղծագործություն է հեղինակել Գուսան Աշոտը, որից քանիսի՞ համար է երաժշտություն հորինել:

Օջախում

– Ստույգ չեմ կարող ասել, բայց մոտավոր հաշվումներով Գուսանը հորինել է 700-ին հասնող ստեղծագործություն, իսկ թե քանիսի համար է երաժշտություն հորինել՝ դարձյալ չեմ կարող ասել:

– Հրատարակչության ոլորտում ի՞նչ ունեցանք Գուսանի կյանքի վերջին շրջանում եւ մահվանից հետո՝ «Լեռները կանչում են» (1988թ.), «Հավերժություն» (2010թ.): Ուրի՞շ:

– Վերջինը «Հավերժություն» ժողովածուն էր, որին արդեն անդրադարձանք: Այն հիմնականում ընդգրկում է աշուղի անտիպ ստեղծագործությունները: Ընդգրկվել են նաեւ ստեղծագործություններ, որոնք ժամանակին տեղ են գտել «Լեռները կանչում են» բանաստեղծությունների ժողովածուում:

– Գիտեմ, որ Գուսանը «Հավերժություն» անունով երգարան հրատարակելու նպատակ ուներ, արդյո՞ք հենց դա եք նկատի ունեցել, որ վերջին ժողովածուին «Հավերժություն» անունն եք տվել:

– Այո, կարելի է ասել, որ ժողովածուի անունը ժամանակին Գուսանն է ընտրել, բայց չի հասցրել կյանքի կոչել:

– Գիտե՞ք, հիմա գրադարաններում շատ մեծ դժվարությամբ կարելի է գտնել Գուսանի ժողովածուները: Այդ հանգամանքը վերստին հուշում է, որ Գուսանի ժողովածուները վերահրատարակելու պահանջ ունեն:

– Գուսանի ժողովածուները, առանց չափազանցության, վերահրատարակելու պահանջ ունեն վաղուց: Այդ իրողությունը, կարծում եմ, պիտի հաշվի առնեն պետական այն կառույցները, ովքեր մեր երկրում տնօրինում են մշակույթն ու հրատարակչական գործը:

– Գրեթե ոչինչ չգիտենք Գուսանի կյանքի վերջին օրերի մասին: Կարո՞ղ եք ինչ-որ տեղեկություններ հաղորդել նրա երկրային կյանքի վերջին օրերի մասին:

– Կյանքի վերջին շրջանում Գուսանը շատ էր տկարացել. գանգատվում էր սրտից, շնչարգելությունից: 1989թ. Ամանորի եւ Սուրբ ծննդյան տոներից հետո նրան փոխադրեցինք Երեւան՝ բուժումն այնտեղ շարունակելու, սակայն... Հունվարի 28-ին մահացավ, եւ աճյունը տեղափոխեցինք Գորիս:

– Ինչպե՞ս ընտրվեց Գուսանի գերեզմանի վայրը. տարբեր խոսակցություններ են շրջանառվում:

– Երազում էր հավերժական հանգիստը գտնել իրեն ծնած լեռնաշխարհում եւ այդ միտքն արտահայտել է տարբեր ստեղծագործություններում ու տարբեր առիթներով: Հիշեցնեմ միայն «Խոսք հավերժության» բանաստեղծությունից մի քանի տող. «Պանթեոնները լուռ՝ հոգուս չեն ձգում»: Կամ՝ «Ես պիտի ապրեմ Սյունյաց սարերի մով բարձունքներում...»: Իսկ գերեզմանի կոնկրետ վայրն ընտրել է շրջանի այդ օրերի ղեկավարը՝ Ռոբերտ Ալեքսանյանը, ով նաեւ Գուսանի արվեստի երկրպագուներից էր:

Սերո Խանզադյանը հետագայում գրել է՝ «Մեռնելուց առաջ ինձ ասել է. «Ինձ գերեզման է տանում Ղարաբաղի ցավը: Երբ Ղարաբաղն ազատագրվի Ադրբեջանի ճանկերից, կգաք իմ գերեզմանին կասեք, որ հոգիս հանգիստ լինի»»: Սերո Խանզադյանը հիշում է նաեւ՝ «Մի անգամ առանձին ինձ ասաց. «Ես որ մեռնեմ... Հանկարծ եթե Երեւանում մեռնեմ, ինձ կտանես Գորիսում թաղելու, հա՜... Սա իմ խնդրանքն է»»:

– Գուսան Աշոտը՝ ծնող: Կուզենայինք լսել Ձեր բնութագրումները: Եվ ի՞նչ պատվիրան-պատգամներ տվեց իր զավակներին, թոռներին...

– Բացառիկ ծնող էր ու պապիկ: Կյանքիս ինչ-որ փուլում ինձ համար, նաեւ եղբորս ու քրոջս համար ե՛ւ հայր էր, ե՛ւ մայր: Ինքը հայկական ազգային ավանդական արժեքների, քրիստոնեական բարոյականության կրող էր: Այդ արժեքների ոգով էլ մեզ դաստիարակում էր:

– Գուսանի մահվանից հետո ի՞նչ նոր երգեր են կատարվել (կատարվում) նրա ստեղծագործություններից, թե՞ կատարվում են միայն իր կյանքի օրերում կատարված եւ շրջանառության մեջ դրված երգերը:

– Կատարվում են այն երգերը, որ կատարվել են նրա երկրային կյանքի օրերում: Նոր երգեր, որքանով տեղյակ եմ, չեն կատարվում: Բայց դա ինձ չի մտահոգում: Նրա յուրաքանչյուր երգ այնքան տարողունակ է, այնքան սրտաբուխ եւ այնքան սիրով է ընդունվել-ընդունվում մարդկանց կողմից, որ կարող եմ ստույգ ասել՝ Գուսանը համաժողովրդական սեր է վայելում մահվանից մոտ երեսուն տարի հետո անգամ:

– Ո՞ւմ եք հատկապես հիշում Գուսանի երգերի կատարողներից:

– Գուսանի երգերը շատ լավ կատարողներ է ունեցել, ո՞ր մեկին հիշեմ...

Շարա Տալյան, Վաղարշակ Սահակյան, Տաթեւիկ Սազանդարյան, Հովհաննես Բադալյան, Օֆելյա Համբարձումյան, Նորայր Մնացականյան, Վարդուհի Խաչատրյան, Վաղարշակ Մամիկոնյան, Լուսիկ Քոշյան, Աստղիկ Քամալյան, Վալյա Սամվելյան, Ռուբեն Մաթեւոսյան, Վաչե Հովսեփյան, Ռաֆֆի Հովհաննիսյան, Ֆլորա Մարտիրոսյան, Բելա Դարբինյան, Թովմաս Պողոսյան...

Գուսանի երգերի կատարման գործում անուրանալի է Հայկական ժողովրդական երգի-պարի պետական վաստակավոր անսամբլի (գեղարվեստական ղեկավար՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Թաթուլ Ալթունյան), Հայաստանի ռադիոյի եւ հեռուստատեսության Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլի (այդ օրերի գեղարվեստական ղեկավար՝ Մանվել Բեգլարյան) դերը:

Երգերի նոտագրման, շտկման, հղկման, գործիքավորման, նվագախմբային համակարգման գործում, վերը նշված արվեստագետների հետ մեկտեղ, անփոխարինելի դեր են խաղացել նաեւ հայ կոմպոզիտորական մտքի ժամանակի ճանաչված անունները՝ Գրիգոր Հախինյան, Ստեփան Ջրբաշյան, Խաչատուր Ավետիսյան, Արմեն Մանդակունյան, Էդուարդ Միրզոյան...

– Իսկ ո՞ւմ գիտեք մերօրյա կատարողներից:

– Սեւակ Ամրոյան, Վարդան Բադալյան, Թեհմինե Գրիգորյան...

– Շնորհակալություն հետաքրքիր եւ հանգամանալից զրույցի համար:

Օջախում

Գուսան Աշոտի ծոռնուհին՝ **Լուսինեն**

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Պետք է հանդիպեի գուսան Աշոտի ծոռնուհուն: Լուսինեն (այդպես է նրա անունը) ավարտել է Գորիսի Ա.Սաթյանի անվան երաժշտական դպրոցը: Երաժշտական լավ ընդունակություններ ունի: Այստեղ գուցե դերակատարում ունի նաեւ նրա գենետիկ կապը մեծ գուսանի հետ: Ուսուցիչները խորհուրդ են տվել ուսումը շարունակել Ջիվանու անվան աշուղական դպրոցում: Ծնողներն էլ որոշել են ականջալուր լինել բարի խորհրդին եւ ընտանիքով տեղափոխվել Երեւան, մանավանդ որ ընտանիքի ավագ զավակն էլ՝ Հարութը, դարձել էր Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանող: Հիմա ընտանիքով Երեւանում են. Հասմիկ մայրիկը, Հարութ եւ Հրայր եղբայրները: Հրայր եղբայրը, որ դեռ հինգ տարեկան է, շատ է կապված քույրիկի հետ: Հետո մայրը պատմելու էր, որ տասնամյա Լուսինեն օրորոցային է երգել մանուկ եղբորը: Միայն հայր Տիգրանն է առայժմ Գորիս-Երեւան ճանապարհին. Գորիսում փոքրիկ բիզնես ունի:

Պայմանավորվել էինք հանդիպել քաղաքի կենտրոնի սրճարաններից մեկում: Լուսինեն եկել էր մայրիկի ու հնգամյա եղբոր հետ: Տեղավորվեցինք սրճարանի՝ փողոցին հարող պատի տակ դրված սեղաններից մեկի շուրջ: Պատ ասվածը մինչեւ առաստաղ բարձրացող ապակի էր: Փաստորեն սրճարանը մայթից բաժանված էր սովորականից մի քիչ հաստ ապակիով: Ուշ աշուն է: Ժամանակ առ ժամանակ անձրեւ է գալիս: Օդում զգացվում է ձմռան հոտը: Դուստրս էլ մեզ հետ է: Մտածել եմ՝ հնարավոր է, որ դժվարությունների հանդիպեմ տասնհինգամյա երեխայի հետ զրուցելիս, այն ժամանակ էլ կդիմեմ աղջկաս օգնությանը: Բայց սխալվել էի: Լուսինեն այսօրվա դեռահասների նման համարձակ է, բայց, ի տարբերություն նրանցից շատերի, նաեւ նպատակասլաց: Որոշել է ժողովրդական երգչուհի դառնալ ու այդ նպատակին հասնելու ճանապարհին հանդիպող դժվարությունները հաղթահարում է՝ ցուցաբերելով տարիքին ոչ հատուկ կամային հատկություններ: Միայն թե շատ է կարոտում Գորիսը, ընկերուհիներին, Գորիսի կենտրոնի փոքրիկ այգին: Ասում է՝ կարոտում եմ նույնիսկ Գորիսի օդին: Փորձում եմ նրա հոգու հետ խաղալ, դե օդ է էլի, բոլոր տեղերում էլ օդը նույնն է: Ըստ Լուսինեի՝ այդպես չէ, Գորիսում օդն ուրիշ է: Գուցե նա է ճիշտ:

Թեման փոխում եմ. ինչ գիտի իր մեծ պապի՝ Գուսան Աշոտի մասին, որ ուրիշները չգիտեն: Զարմանալիորեն շատ արագ է ընկալում հարցս, կողմնորոշվում: Վիկտորյա տատիկը (գուսանի հարսը) պատմել է, որ գուսանը թութ շատ էր սիրում եւ ինքն ամեն օր վաղ առավոտյան անմիջապես ծառից թութ էր հավաքում նրա համար:Հետո տատիկը պատմել է նաեւ, որ Աշոտ պապը գինի համարյա չէր խմում, բայց ամեն տարի Վայոց ձորից կամ Արցախից խաղող էր գնում, իր ձեռքով գինի պատրաստում ու հետո հյուրասիրում բազմաթիվ ընկերներին, բարեկամներին: Իսկ Համլետ պապն էլ դրան ավելացրել է՝ նոր երգ ստեղծելուց հետո այն կատարում էր, հարցնում մեր կարծիքը:

Դասերի մասին եմ հարցնում: Իմացել է, որ Ջիվանու անվան աշուղական դպրոցն ամեն տարի ընդունելություն է կազմակերպում: Իրեն լսել են, ընդունել: Ուսուցումը վճարովի է, բայց ինքը սովորում է անվճար: Հասկանալի է, ուսուցումն անվճար է գերազանց սովորողների համար: Այստեղ ուսուցանում են սոլֆեջիո, վոկալ, բեմական արվեստ: Ինքը հաճախում է միայն վոկալի դասերին, մնացած առարկաների դասընթացները նա ավարտել է երաժշտական դպրոցում:

Աշուղական դպրոց հաճախելու փաստն ինձ հիշեցրեց մի զավեշտալի պատմություն, որի մեջ ակամա դերակատարում ունի նաեւ գուսանը: Իրենց տնից քաղաքամեջ դուրս գալիս սովորաբար կանգնում էր հին հյուրանոցի հրապարակին նայող պատշգամբի տակ եւ իսկույն էլ շրջապատվում երկրպագուներով: Երբեմն էլ քայլերն ուղղում էր մոտիկ զբոսայգին, որտեղ հավաքվում էին իր հասակակիցները: Մի այդպիսի օր այգում հավաքվածներից հումորի սիրահար Ռ.Գիչունցը, հաշվի առնելով Գուսան Աշոտի ներկայությունը, բարձր ձայնով դիմում է 80-ամյա ընկերոջը (անունը հասկանալի պատճառով չենք նշում) հարցնում է՝ ինչո՞ւ գուսան չես սովորում: Վերջինս միանգամայն լուրջ ընդունելով ընկերոջ ասածը, իր հերթին դառնում է դեպի գուսանն արդեն իր հարցով՝ գուսան, յանի կկարա՞մ, ուշ չի՞: Գուսանը ոչինչ չի պատասխանում,հայացքը նրանից չկտրելով բարձրանում է տեղից եւ լուռ հեռանում:

Այժմ այդ հարցը ես եմ ուղղում Լուսինեին՝ ցանկանո՞ւմ է իր մեծ պապի նման գուսան դառնալ: Չէ, ի՞նչ գուսան, ուղղակի ձայնն է մշակում, պատրաստվում է մասնակցել ժողովրդական երգի մրցույթին:

Սիրում է Սայաթ-Նովայի «Ձենդ քաղցր ունիս», Շերամի «Վարդ ցանեցի», Գուսան Աշոտի համարյա բոլոր հայտնի երգերը: Ժողովրդական երգեր կատարողներից շատ է սիրում իր ուսուցիչներ Թովմաս Պողոսյանին, Թեհմինա Գրիգորյանին, Մխիթար Քեթցյանին: Նա իր կուռքն է համարում Նաիրա Ալավերդյանին, Ֆլորա Մարտիրոսյանին, Օֆելյա Համբարձումյանին, Ռուբեն Մաթեւոսյանին, Ռաֆֆի Հովհաննիսյանին: Գիտի, որ ժամանակին Օֆելյա Համբարձումյանին եւ Ֆլորա Մարտիրոսյանին սիրել է նաեւ Գուսան Աշոտը, եւ որ «Օջախում» երգը գուսանը գրել է հատուկ Օֆելյայի համար: Ով գիտի, գուցե տարիներ անց հայտնի գուսաններից կամ կոմպոզիտորներից մեկն էլ երգ է գրելու արդեն ժողովրդական երգչուհու կոչում նվաճած Լուսինեի համար: Տա Աստված: Իսկ առայժմ սովորում է: Սովորում է աշուղական դպրոցում եւ ավագ դպրոցի 10-րդ դասարանում: Երազում է ավարտել նաեւ Կոմիտասի անվան կոնսերվատորիան:

Խնդրում եմ որեւէ երգ կատարել: Չի թողնում, որ երկրորդ անգամ խնդրանքս կրկնեմ: Երգում է գուսանի «Սարի սիրուն յարը»: Մինչեւ նրա երգը սրճարանի սրահում առաստաղից օտար լեզվով ռեպ երաժշտություն էր հնչում: Ինչպես երեւանյան շատ սրճարաններում, այստեղ էլ սեղանները իրար շատ մոտ են դրված, այնպես որ, չնայած սրահի առաստաղից հնչող ռեպի ռիթմին, Լուսինեի երգը մեզ հետ վայելում են նաեւ հարեւան սեղանների շուրջ նստած՝ հավանաբար օտարերկրացի հյուրերը: Նրանցից մի երկուսը նույնիսկ ձեռքի ակնհայտ շարժումներով սպասարկողներին խնդրում են իջեցնել ռեպի ձայնը: Լուսինեի երգից հետո մեր զուսպ ծափերին միանում են նաեւ նրանք:

Մի պահ սրահում հնչող երաժշտությունը լռեց: Ապակուց այն կողմ անձրեւ սկսեց, աշնանը ոչ հատուկ խոշոր կաթիլներով անձրեւ: Այն ասֆալտի ծանոթ գորշ պատկերը մեկ-երկու րոպե հետո համատարած մգությամբ ներկեց, ասֆալտի գույնը փոխվեց, ստացավ բնական սեւությունը: Տարօրինակ ձեւով տանիքը թմբկահարող անձրեւի ձայնն այնպես էր լսվում, կարծես վրանի տակ լինեինք: Միայն իմ սեղանակիցները չէ, որ զարմացած էին: Սպասարկող անձնակազմը ստիպված էր բացատրել, որ տանիքը ձգված բրեզենտից է: Այնպես որ վրանի տակ լինելու զգացողությունը հեռու չէր ճշմարտությունից:



ՕՋԱԽՈՒՄ

Սրտանց արի, քո սերն եմ էս հյուրընկալ օջախում,
Զգնիվ սրտի հուր սիրո, հիշատակ կա օջախում:
Մի՞թե սիրտը մութ է քո, չէ՞ որ դու իմ ասպին ես,
Անհուն երկնի շողն առած, կենաց սիրտ կա օջախում:

Դե՛, արի շորորա,
Տաղ ասեմ նազերիդ,
Օջախս տխուր է առանց քեզ, նազելի,
Ամ, աչքս քո ճամփին խամրում է, ի՞նչ անեմ,
Ամ, սիրտս կարոտից մարվում է, ի՞նչ անեմ:

Լեռնական է իմ հոգին, ասպղերի հետ կիսոսի,
Մոտ եւ հեռու ոլորուն ճամփեքի հետ կիսոսի,
Հոգուս հավքը միշտ քեզ հետ՝ երազի մեջ կիսոսի,
Քո հուր սիրուց չմարող վառ կրակ կա օջախում:

Ինչքան էլ որ խիստ լինի ձյուն-ձմեղը էս տարվա,
Ինչքան էլ որ ուշ բացվեն ճամփաները գարունքվա,
Կրակները սրտերի չեն մարի, չեն մոխրանա,
Ինչպես կրակ մի անմար, վառ կմնա օջախում:

Արագիլը գարունքին գալիս, գտնում է բույնը,
Հազար շյուղեր նա բերում, նորոգում է իր բույնը,
Աշո՛ղ, դու էլ էս գիշեր կառնես քո աչքի քունը,
Թե սիրածդ սրտաբաց գա ու մնա օջախում:

Դե՛, արի շորորա,
Տաղ ասեմ նազերիդ,
Օջախս տխուր է առանց քեզ, նազելի,
Ամ, աչքս քո ճամփին խամրում է, ի՞նչ անեմ,
Ամ, սիրտս կարոտից մարվում է, ի՞նչ անեմ:

Օջախում

Աշուղ Աշոտի կյանքն ու ստեղծագործական քնարը

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԴԱԴԱԼՅԱՆ
Աշուղ Աշոտի դուստրը

20-րդ դարի նշանավոր աշուղներից է Հայաստանի ժողովրդական արտիստ, Հայաստանի եւ ԽՍՀՄ գրողների ու կոմպոզիտորների միությունների անդամ աշուղ Աշոտը (Աշոտ Հայրապետի Դադալյան): Ծնվել է 1907թ. ապրիլի 12-ին (25) ծաղկածիծաղ Զանգեզուրի զարդ Գորիս քաղաքում: Ծնողները նրան կնքում են Տաթեւի վանքում եւ անվանակոչում Աշոտ:

Հայրը՝ Հայրապետը, ռանչպար էր, ճանաչված որմնադիր: Հայրապետը նաեւ լավ երգում էր: Աշոտի մայրը՝ Դիցուհին, հարուստ տոհմի դուստր էր: Նա նույնպես լավ ձայն ուներ: Մայրը փոքրիկ Աշոտի համար օրորոցային էր երգում, իսկ փոքրիկը դնդնում էր մոր հետ: Գուսանի մանկական հիշողությունների մեջ մնացել են մոր օրորոցայինները:

Շատ վաղ՝ յոթ տարեկան հասակում, տղան կորցնում է մորը: Հետագայում այդ կորուստը մի տեսակ տխուր երանգ է տալիս նրա քնարին:

Մայր իմ բարի, խաչ հանեցիր
օրհնանքով,
Ու փակեցիր քո աչքերը մունջ քնով,
Այն օրվանից սիրտս ավեր բույն
մնաց,
Բարի հոգիդ ինչո՞ւ թռավ ու գնաց:

Մոր կորստից հետո հայրը փոքրիկ Աշոտին վերցնում է հովվություն անելու Զանգեզուրի հիասքանչ սարերում: Բնության գրկում էլ նա ստանում է առաջին երաժշտական կրթությունը: Հովիվներից սովորում է սրինգ նվագել:

1920 թվականին իր ավագ եղբայր Տիգրանն Աշոտին տանում է Բաքու: Այստեղ նա ստանում է միջնակարգ կրթություն: Մի անգամ պատանի Աշոտի երազին երեւում է անմահ Սայաթ-Նովան եւ նրան նվիրում իր քնարը՝ քամանչան: Այս երազն էլ դառնում է նրա ճակատագիրը: Նա տիրապետում է քամանչա նվագելու վարպետությանը եւ բռնում աշուղ լինելու իր ուղին:

Երազիս մեջ Սայաթ-Նովան եկավ

Գուսան Աշոտի որդին՝ Համլետը և դուստրը՝ Արշալույսը

ՍՈՒՐԲ ՄԱՅՐԵՐ

Անկարող եմ մոր թախիծը պատել լուռ,
Հուզմունքներն ու խորը կսկիծը պատել լուռ,
Նրա սրտի հեւքն ու կանչը պատել լուռ:

Ով սուրբ մայրեր, ձեր վիշտն առնեմ պատեմ ո՞ւր,
Մորմոքներն ու հոգսերն առնեմ պատեմ ո՞ւր,
Կարոտներն ու խոհերն առնեմ պատեմ ո՞ւր,

Տանեմ լուռ,
Վառվեմ լուռ,
Հալվեմ լուռ:

Մոր ապրակը հեզ համբույր է ինձ եղել,
Մոր գայրույթը հույս խրատ է ինձ եղել,
Նզովքն անգամ սուրբ օրհնանք է ինձ եղել:

Երբ երազում տեսնում եմ իմ սուրբ մորը,
Տանս շեմին վարդ է բացվում այդ օրը,
Տաղ են բերում հոգուս սոխակն ու լորը:

Աշոտն ասաց, սրբի դուռ է իմ մայրը,
Ջերմացնող կրակ, հուր է իմ մայրը,
Հայրենի տուն, զանգ, մատուռ է իմ մայրը:

Ով սուրբ մայրեր, ձեր վիշտն առնեմ պատեմ ո՞ւր,
Մորմոքներն ու հոգսերն առնեմ պատեմ ո՞ւր,
Կարոտներն ու խոհերն առնեմ պատեմ ո՞ւր,

Տանեմ լուռ,
Վառվեմ լուռ,
Հալվեմ լուռ:

ոսկե սազ նվիրեց,
Անմահական գինով լիքը՝ եկավ ոսկե թաս նվիրեց,
Ասաց՝ գնա երգի ճամփով, սիրո ճամփով,
Այն օրվանից ասես նա՝ ինձ իր սրտից մի մաս նվիրեց:

Նրա ներշնչանքի ակունքներն են հայ մեծանուն հանճարները՝ Քուչակ, Նարեկացի, Նաղաշ Հովնաթան, Սայաթ-Նովա, Ջիվանի, Շերամ եւ շատ շատերը:

Աշոտն իր ստեղծագործական առաջին քայլերից մինչեւ կյանքի վերջը երգել է սերը, բնությունը, մարդէակին, մարդկային բոլոր կարեւոր զգացումները, դառնալով հայ գուսանական եւ աշուղական արվեստի երեւելի դեմքերից մեկը:

Հետաքրքիր են Զանգեզուրի բարբառով գրված երգերը, որոնք շատ հարազատ են հայրենակիցներին:

Հարա՛յ են գամ, ինձ կանչում Ակներ յայլան Դաղալունց,
Ցայլաների աչքն ա Ակներ յայլան Դաղալունց,
Տյու ժառանգն ես Դաղալունց, գյու օրհնանքն ես Դաղալունց,
Սերդ քամի, երգ ըրա, գյու Աշոտն ես Դաղալունց:

Մահից երկու ամիս առաջ լույս տեսավ նրա «Լեռները կանչում են» ժողովածուն՝ առանց նոտաների, որը հիմքն է «Հավերժություն» խորագրով ժողովածուի:

Աշուղ Աշոտն իր մահկանացուն կնքեց 1989թ. հունվարի 28-ին Երեւանում: Նրա մարմինն ամփոփված է Գորիս քաղաքի Լաստ սարի դիմացի բարձունքում: Դա նրա ցանկությունն է եղել: Հայրենակիցները հոյակապ հուշակոթող են կառուցել, որը տեսանելի է քաղաքի բոլոր պատշգամբներից: Քաղաքի կենտրոնում 2005 թվականին կանգնեցվեց նրա մարմարյա կիսանդրին (գործ՝ Գետիկ Բաղդասարյանի): Աշուղն իր անբաժան քամանչան գրկած՝ հավերժ հայրենակիցների հետ է:

2008թ.



Օջախի հոյակապ հայր

Ես հպարտ եմ, որ նրա դուստրն եմ: Նա ոչ միայն մեծ ժողովրդականություն վայելող ստեղծագործող էր, այլ նաեւ օջախի հոյակապ հայր:

Մեծ Գուսանը սիրելի եւ սպասված հյուր էր դպրոցականների համար: Իր ղեկավարած խմբով բազմաթիվ ելույթներ է ունեցել ոչ միայն համերգային դահլիճներում, այլ նաեւ դպրոցներում:

Տարիներ առաջ նրան հրավիրել էին մասնակցելու դպրոցականների համար կազմակերպված ամանորի հանդիսություններին, որոնք տեղի էին ունենում Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում:

Հրավերի նպատակն էր, որպեսզի մատաղ սերունդը մոտիկից ծանոթանար եւ լսեր մեծ Գուսանի հիասքանչ նվագն ու երգը:

Ամեն երեկո տուն էր գալիս հոգնած, բայց այնպես գոհ եւ ուրախ, որ կարողացել էր գրավել փոքրիկ հանդիսատեսի սերն ու համակրանքը:

Այս տողերը կարդալիս շատերը կհիշեն ամանորի այդ հանդիսություններն անվանի Գուսանի մասնակցությամբ:

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՇՈՏԻ ԴԱԴԱԼՅԱՆ

Օջախում

Որդու՝ Ռուբեն Դադալյանի

«Անավարտ քնարը»

Ռուբենը Գուսան Աշոտի որդին է: Տարբեր տարիների գրած բանաստեղծությունները, քառյակները, աֆորիզմներն ու գրական հարցերին նվիրված հոդվածները տեղ են գտել նրա մահից հետո լույս տեսած «Անավարտ քնարը» գրքույկում: Ներկայացնում ենք Ռուբեն Դադալյանի բանաստեղծություններից երեքը:

ø³ÝÇ »ñ»Ïá, ù³ÝÇ¯ ³é³íáï...

Քանի երեկո, քանի՛ առավոտ,
Եղա աշխարհում զրկված ու կարոտ
Հայրենի հողից, հայրենի ջրից
Ու հեռվից եկող ջերմագին գրից:

Քանի երեկո, քանի՛ առավոտ
Եղա աշնան պես դժգույն ու թախծոտ,
Անխինդ, անծիծաղ. լալահար երգով
Ու հին երգերիս ավելցող երգով:

Քանի երեկո, քանի՛ առավոտ
Երազներն իմ հեռավոր ու մոտ
Եղան անկապտար, եղան խորտակված,
Բայց հույսով հզոր մնացին ապրած:

ØÇ íÇñ³íáñ ÏéáõÝÏ ï»ë³

Մի վիրավոր կռունկ տեսա՝ ընկած ճամփի քարերում,
Նեղտահարված ու արյունոտ, ուժը հատված թեւերում,
Վիրավոր էր, ափս նա կրծքից, թեւը ջարդված, արնաներկ,
Ընկած անզոր, անօգնական, սակայն կրակն աչքերում:

Ասի՝ կռունկ, ո՞ր երամից, ո՞ր երկրից ես հեռավոր,
Արդյոք գիտի՞ երամը քո, որ ընկած ես վիրավոր,
Օտար երկրում, խորթ երկնի տակ, դարձած տերեւ ցրտահար,
Դարձած զոհը այս քարերի, դու վիրավոր, մենավոր:

Թռել էր նա ճամփա, անցել հազար ջուր-կրակ,
Չէր վնասել նրան անգամ ոչ փոթորիկ, ոչ կայծակ.
Սակայն կրծքին դեմ էր առել թունոտ մի նետ չարանենգ...
Թողել նրան հեռու՛-հեռվում, մենակ օտար երկնի տակ...

Ìáí»Íáí ³ñÑ³íÇñù

(դեկտեմբեր 1988թ.)

Աշխարհներին լուր հասավ՝ լցված վշտի արցունքով,
Աշխարհը եկավ աշխարհով, ազգ, բարեկամ հուզաթով,
Քաղաքներ խորտակվեցին, լեռ ու սարեր շարժվեցին,
Ակնթարթում ձորերը դարձան արյան ծովեծով:
Մեկն իր սիրո բույրն առած, մեկն էլ ճամփին աչքը հառած,
Մայրն աղոթքի տաճարում սուրբ հավատքի մոմ վառած,
Ամի, անմուրազ գնացին, մրմունջները մնացին,
Վեհ Աստված գթառատ, ինչո՞ւ մեզ չգթացիր, սիրտս վշտով լցրեցիր:
Վշտաբեկված հոգիներ աղերսներդ տեսնելով,
Ծով հույզերով լցրեցին մրմունջներդ լսելով,
Ազգերը եկան հեղեղված օգնության սուրբ ձեռք մեկնած,
Խղճի քրտինք էր ծորում վշտաբեկված տեսիլքով:
Արհավիրքի ողբաձայն մրմունջները ծովացան,
Փլատակի մոր-մանկան խուլ ձայները ծովացան,
Աշխարհ-աշխարհ ողբացին, Աստծո հետ էլ խոսեցին
Աղոտ, այնքան ողբացին, ողբանքները հորդացան:
Մեկն իր սիրո բույրն առած, մեկն էլ ճամփին աչք հառած,
Մայրն աղոթքի տաճարում սուրբ հավատքի մոմ վառած,
Ամի, անմուրազ գնացին, մրմունջները մնացին,
Վեհ Աստված գթառատ, ինչո՞ւ մեզ չգթացիր, սիրտս վշտով լցրեցիր:

Բովանդակություն

Նրա ներաշխարհի ակունքները

Ծննդավայր (Գուսան Աշոտ) 2
Իմ ժողովուրդ (Գուսան Աշոտ) 3
Նարեկացի (Գուսան Աշոտ) 4
Կոմիտաս (Գուսան Աշոտ) 4
Սայաթ-Նովային (Գուսան Աշոտ) 5
Հայ գուսան (Գուսան Աշոտ) 6

Իր կոչման խորհրդին ունկնդիր

Գուսանն էն է (Գուսան Աշոտ) 7
Գուսանի աստղը (Գուսան Աշոտ) 7

Մատենագրություն

Կենդանության օրոք լույս են տեսել հետեւյալ գրքերը 8
Հետագայում լույս տեսած գրքեր, թերթեր 8
Էլեկտրոնային աղբյուրներ 9

Խմբագրական

Հայոց մեծ գուսանը (Սամվել Ալեքսանյան) 9
Համարի հովանավորներբ 10

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

Վաչագան Ադունց (Գորիս համայնքի ղեկավար) 10
Սուրեն Խաչատրյան (Սյունիքի մարզպետ 2004-16թթ.)11

Կյանքի ուղին

Աշուղ Աշոտ (Սերո Խանզադյան) 11
Մահ չես տեսնի, թեկուզ մի երգդ մնա (Անդրանիկ Կարապետյան) 13

Կարծիք ու գնահատանք

Աշոտ Սաթյան, Ավետիք Իսահակյան, Համո Սահյան, Լեւոն Գաթրճյան, Գուրգեն Գաբրիելյան, Կոնստանտին Օրբելյան, Գուսան Շահեն, Արամ Քոչարյան, Էդվարդ Միրզոյան, Տաթեւիկ Սազանդարյան 17, 18

Խոսք՝ հնչած փասը փարի առաջ

Ժողովրդական, գուսանական երգը հոգու երգ է (Վահրամ Օրբելյանի հարցազրույցը Օֆելյա Համբարձումյանի հետ) 19
Ամենայն հայոց գուսանը (Հովհաննես Բաղալյան) 21

Խոսք Գուսան Աշոտի 110-ամյակի առիթով

Տիգրան Մանսուրյան. «Իր երգերից շատերը հաճախ են դասվում ժողովրդական գանձերի շարքին» 22
Թովմաս Պողոսյան. «Աշուղ Աշոտի երգերի մեջ մեղեդի հյուսելու ձեւը, բնույթը, ճաշակը Սյունիքինն է, Սյունյաց աշխարհինն է» 22
Արզաս Ոսկանյան. «Նա արեւելահայ «կաղնե» մի աշուղ է» 25
Ռուբեն Մաթեւոսյան. «Գուսանի երգը թող հովանի լինի բոլորիս, եւ այդ երգով շնչի յուրաքանչյուրը» 28
Արկադի Շեկունց. «Ավելի շատ դասական երաժշտությունն է գուսանական երաժշտությունից որոշ տարրեր վերցրել» 31
Հարցազրույց կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության նախագահ Արամ Սաթյանի հետ 34
Սյունյաց աշխարհի նորօրյա տրուբադուրը (Սելիտա Դոլուխանյան) 35
Սամվել Մուրադյան. «Գուսան կամ աշուղ Աշոտն էլ հայ իրականության այն արվեստագետներից մեկն է, ով իր երգերով անմահացրել է մեր ժողովրդին եւ ինքն էլ անմահացել մեր ժողովրդի հետ» 39
Մխիթար Քեթցյան. «Աշուղ Աշոտի երգերի մեղեդիներն անսահման սրտամոտ են, տեքստերը՝ բացառիկ գեղեցիկ» 43
Լեւոն Գալստյան. «Աշուղ Աշոտի ստեղծագործությունները լսելով՝ նորից ինձ համար վերագտա այդ լեռնաշխարհը» 45
Աշուղ Աշոտին եւ Թաթուլ Ալթունյանին մեծ բարեկամությունն էր կապում (հարցազրույց Ժիրայր Ալթունյանի հետ) 48
Գագիկ Մանասյան. «Թուրքերը Հայաստանի, հայ ժողովրդի հոգեւոր, մտավոր աշխարհը 400-500 տարում այնպես չեն փչացրել, ինչպես մեր հեռուստատեսություններն այս 25 տարում» 50
Մանիկ Գրիգորյան. «Գուսան Աշոտը Սյունյաց աշխարհի գանձերից է» 52
Սուսաննա Սաֆարյան. «Գուսանի սերն ինձ շատ հոգեհարազատ է» 54
Վալերիկ Գասպարյան. «Գուսան Աշոտի երգերն ընդմիշտ կմնան որպես հոգեւոր հավերժական զուլալ աղբյուր» 56
Մերուժան Տեր-Գուլանյանի գնահատանքի խոսքը 59

Գրականագիտություն եւ երաժշտագիտություն

Մարդը երգի է փոխում իր սրտի թրթիռները (Վարդգես Պետրոսյան) 60
Գուսան Աշոտ (Հրանտ Թամրազյան) 62
«Սիրո կրակներ» գրքի առաջաբան (Գարեգին Հովսեփյան) 63
«Ծովաստղիկս» գրքի առաջաբանը (Սեւակ Արզումանյան) 65
Գուսան Աշոտի քնարը (Գեւորգ Աբաջյան) 66
Հարգված էր ու սիրված (Շավիղ Գրիգորյան) 67
Բնության եւ սիրո երգիչը (Վ.Նավասարդյան) 68

Բովանդակություն

Սերո Խանզադյանը Հայաստանի գուսանների մասին

Հայաստանի գուսանները ... 70
Հայ գուսանները ... 72
Գուսանական երգերի լեզվի մասին ... 74
Գուսան Աշոտ ... 75
«Գուսանի սերը» գրքի առաջաբանը ... 76

Գուսան Աշոտի բանաստեղծական լեզուն

Գուսան Աշոտի բանարվեստի լեզվաոճական առանձնահատկությունները (Սվետլանա Մանուչարյան) ... 80

Աշուղական արվեստի մասին

Հարցազրույց Լուսինե Նազարյանի հետ ... 92

Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում

Հազար հողմեր ձեզ չեն մաշել (Սամվել Ալեքսանյան) ... 102
«Երկրորդ ամենամեծ զանգեզուրցին է». Համո Սահյանն է ասում (Ռոբերտ Ալեքսանյան) ... 107
....Եվ ծնվեց «Բարի հայրիկ» երգը (Խասան Հարությունյան) ... 108
Գինին ու գինեկռիվը Գորիսում (հատված Սուրեն Վարդանյանի համանուն հոդվածից) ... 110
Հավերժում է լեռների երգը (Սուսաննա Բաբաջանյան) ... 111
Յուրի Ջավահիրյան. «Գուսանի մեջ անչափ բարություն ու համեստություն կար» ... 112
Մտորումներ, հուշեր.... (Ռոբերտ Շահնազարյան) ... 113
Հանդիպում էինք նշանավոր պատշգամբի տակ (Ապետնակ Գրիգորյան) ... 118
Հրաժեշտի երեկո (Ապետնակ Գրիգորյան) ... 120
Հանդիսավոր համերգներին նվագում էր իմ պատրաստած քամանչայով (Ժորա Սարդարյան) ... 122
Շարունակությունն էր իր մեծ նախորդների՝ Սայաթ-Նովայի, Ջիվանու, Շերամի (Շչորս Դավթյան) 123
Գուսանի հոգու հետքերով (Ալեքսանդր Հայրապետյան) ... 124
Ախպոր աղջիկ (Էլինար Շահեն) ... 125
Հավերժի ճամփորդը (Արթուր Առաքելյան) ... 127
Գուսանի վիշտը (Էդուարդ Զոհրաբյան) ... 132
Հուզաթաթավ զգացմունքների մեծ երգիչը («Զանգեզուր», 7 հունիսի 1987թ.) ... 134
Էսքիզ (Ալվարդ Մեսրոպյան) ... 136
Գուսանի երգը չի մեռնում (Արկադի Ծատուրյան) ... 138
Մեծ գուսանը բոլորինս է (Սեւադա Խոջաբաղյան) ... 139
Գուսանի երգերի ակունքները մաքուր են, զուլալ, սիրով շաղախված (Արկադիա Մարդյան) ... 140

Բանաստեղծություններ՝ Գուսան Աշոտին

Վերհուշ (Քաջիկ Դորունց) ... 141
Ջոն Գուսան Աշոտին (Դուխիկ Հայրապետյան) ... 141
Խոսք հաղորդման (Ապետնակ Գրիգորյան) ... 141
Ներբողական (Ապետնակ Գրիգորյան) ... 142
Վասն համբերության եւ հրաժեշտի (Ապետնակ Գրիգորյան) ... 143
Տաղդ հավերժ կգրնգա (Կարո Օհանյան) ... 144
Գուսանի ծննդյան 95-ամյակի առթիվ (Լորետա Գրիգորյան) ... 144
Գուսան Աշոտին (Գուրգեն Ադամյան) ... 144
Հավերժության ուղեւորը (Վլադիմիր Որոտանցի) ... 145
Լույսի աղբյուր (Վոլոդյա Նավասարդյան) ... 145
Գուսան Աշոտին (Գարեգին Բաբայան) ... 146
Գուսան Աշոտին (Ադամ Ադամյան) ... 146

Հրաժեշտ երկրային կյանքին

Գուսան Աշոտ (մահագդ) ... 147
Ռոբերտ Ալեքսանյանի խոսքը Գուսան Աշոտի հուղարկավորության ժամանակ ... 147
Աստղերից՝ հար օրհնանք (Սուսաննա Բաբաջանյան) 149
Հավերժի ճամփորդը (Անդրանիկ Կարապետյան) ... 151
Դու դեռ պիտի երգես (Էդուարդ Զոհրաբյան) ... 152
Գուսանի հիշատակի քարե հավերժացումները (Արմինե Ավագյան) ... 153

Օջախում

Սամվել Ալեքսանյանի զրույցը Գուսան Աշոտի որդու՝ Համլետ Դադալյանի հետ ... 155
Հայրիկ (Գուսան Աշոտ) ... 157
Գուսան Աշոտի ծոռնուհին՝ Լուսինեն (Ռեդիկ Հայրապետյան) ... 164
Օջախում (Գուսան Աշոտ) ... 165
Աշուղ Աշոտի կյանքն ու ստեղծագործական քնարը (Արշալույս Դադալյան) ... 166
Սուրբ մայրեր (Գուսան Աշոտ) ... 167
Օջախի հոյակապ հայրը (Արշալույս Դադալյան) ... 167
Որդու՝ Ռուբեն Դադալյանի «Անավարտ քնարը» ... 168

Գուսանի ստեղծագործությունների տարածման, հանրահռչակման երախտավորներից

Հայ կոմպոզիտորական մտքի ճանաչված անուններ 171
Գուսանի երգերի կատարողներից ... 172
Համույթներ, որ նպաստել եւ նպաստում են Գուսանի երգերի ժողովրդականացմանը ... 174
Արաքսյա Ղալեչյանը Գուսանի երգերի լավագույն կատարողներից էր ... 175
Նոր սերնդի կատարողներից ... 175

Գուսանի ստեղծագործությունների տարածման, հանրահռչակման երախտավորներից

Հայ կոմպոզիտորական մտքի ճանաչված անուններ,

ովքեր մեծ դեր խաղացին Գուսանի ստեղծագործական կյանքում


Գրիգոր Հախինյան

Արմեն Մանդակունյան

Ստեփան Ջրբաշյան

Էդուարդ Միրզոյան


Խաչատուր Ավետիսյան

Ալեքսանդր Ալեքսանդրյան

Մանվել Բեգլարյան


Թաթուլ Ալթունյան

Գուսանի ստեղծագործությունների տարածման, հանրահռչակման երախտավորներից

Գուսանի երգերի կատարողներից

ՆՐԱՆՑ ՄԻ ՄԱՍԸ ՆԱԵՒ ՄԵԾ ԴԵՐ Է ԽԱՂԱՑԵԼ ԳՈՒՍԱՆԻ ԵՐԳԵՐԻ ՆՈՏԱԳՐՄԱՆ, ԳՈՐԾԻՔԱՎՈՐՄԱՆ, ՆՎԱԳԱԽՄԲԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Շարա Տալյան


Հովհաննես Բադալյան

Արաքսյա Գյուլզադյան

Վաղարշակ Սահակյան

Օֆելյա Համբարձումյան

Տաթեւիկ Սազանդարյան

Նորայր Մնացականյան

Գուսանի ստեղծագործությունների տարածման, հանրահռչակման երախտավորներից

Վաչե Հովսեփյան

Ռաֆֆի Հովհաննիսյան

Վարդուհի Խաչատրյան

Աստղիկ Քամալյան

Ֆլորա Մարտիրոսյան

Բելա Դարբինյան

Վաղարշակ Մամիկոնյան

Վալյա Սամվելյան

Սամվել Գալստյան

Թովմաս Պողոսյան

Լուսիկ Քոշյան

Ռուբեն Մաթևոսյան

Սուսաննա Սաֆարյան

Մանիկ Գրիգորյան

Գուսանի ստեղծագործությունների տարածման, հանրահռչակման երախտավորներից

«Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլը (գեղ. ղեկավար՝ ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյան)

Համույթներ, որոնք նպաստել եւ նպաստում են Գուսանի երգերի ժողովրդականացմանը

Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլը (1970-ական թվականներ)

Դամագործակցության եւ փոխլրացման ճանապարհ. այդպես կարելի է բնութագրել Գուսան Աշոտի մեկտեղված ճանապարհը Հայաստանի երգի-պարի պետական վաստակավոր անսամբլի (գեղարվեստական ղեկավար՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Թաթուլ Ալթունյան) եւ Հայաստանի ռադիոյի եւ հեռուստատեսության Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլի (գեղարվեստական ղեկավար՝ Մանվել Բեգլարյան) հետ, մեր օրերում՝ «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլը (գեղ. ղեկավար՝ ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյան):

Հայկական ժողովրդական երգի-պարի պետական վաստակավոր անսամբլ (1970-ական թվականներ)

Գուսանի ստեղծագործությունների տարածման, հանրահռչակման երախտավորներից

Նոր սերնդի կատարողներից

Նունե Եսայան

Սեւակ Ամրոյան

Վարդան Բաղալյան

Թեհմինե Գրիգորյան

Գուրգեն Դաբաղյան

Եվա Թաշչյան

Նարեկ Պողոսյան

Լիլիթ Հովհաննիսյան

Արաքսյա Ղալեչյանը Գուսանի երգերի լավագույն կատարողներից էր

Նա եղել է Գուսան Աշոտի երգերի մի մասի առաջին կատարողը, իսկ 1950-60-ական թվականներին՝ նաեւ նրա երգերի առաջին տարածողներից (այդ ժամանակ աշխատել է տարբեր համույթներում):

Գուսան Աշոտը՝ ներշնչանքի աղբյուր

Գորիսի մշակույթի կենտրոնի ժողգործիքների համույթը, որ 2007 թվականից կրում է Գուսան Աշոտի անունը (մշակույթի կենտրոնի տնօրեն՝ Արկադի Մարդյան, անսամբլի գեղարվեստական ղեկավար՝ Սաշիկ Սարգսյան)

Գորիսի շրջանային մշակույթի տան ժողգործիքների ժողովրդական անսամբլը 1980-ականներին (ստեղծվել է Գուսան Աշոտի նախաձեռնությամբ)

Գուսան Աշոտի հիշատակը՝ հավերժացված

Մխիթար Սպարապետի հրապարակի ծախ թեւում Գորիսի մշակույթի կենտրոնն է, որ կրում է Գուսան Աշոտի անունը

Գուսան Աշոտը՝ ներշնչանքի աղբյուր

Համաժողովրդական տոնահանդես Գորիս գյուղում, ելույթ է ունենում շրջանային մշակույթի տան ժողգործիքների անսամբլը (1980-ականներ)

Գուսան Աշոտի հիշատակը՝ հավերժացված

Գուսան Աշոտի կիսանդրին Գորիսի մշակույթի կենտրոնի բակում

(2005թ., քանդակագործ՝ Գետիկ Բաղդասարյան, ճարտարապետ՝ Սեւադա Զաքարյան, հովանավոր՝ Սուրեն Խաչատրյան)

Այունյաց Երկիր

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ. ՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail. ru
էլ.կայք՝ www. syuniacyerkir. am

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Լրագրողներ՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ձեւավորող՝
ԳՐԻԳՈՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ
Օպերատորներ՝
ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆ
ՄԵՐԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ
Սրբագրիչ՝
ՍԼԱՎԻԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500,000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 22.5 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1500:

Ստորագրված է տպագրության 31.05.2017թ.:



Գուսան Աշոտի հիշատակը՝ հավերժացված

Գուսան Աշոտի շիրիմը
Գորիսի քաղաքային
գերեզմանոցում
(25 ապրիլի 1991թ.)

ՍՅՈՒՆՅԱՑ ՍԱՐԵՐ

Գուսանի բնօրերգը

Հազար ու մի երգում գովված սար եմ դեռևս,
Բայց միշտ ձեր կարոտը քաշել, Սյունաց սարեր,
Ասես մեծ վարպետ Նաղաշի ձեռքն է հասել,
Ծաղիկներդ գույն-գույն նախշել, Սյունաց սարեր,
Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, Սյունաց սարեր:
Յայլաների ծուխը սահող երամ դառած,
Իմ նազելին երամի մեջ երազ դառած:

Ծաղկիդ բույրը հազար դաշտ ու ձոր կլցնի,
Հազար ցամաք հողի, քարի շուրթ կբացի,
Տուն կբերեք ձեր պանդուխտին, չեք կորցնի,
Հովերդ ինձ ձեռքով կանեն, Սյունաց սարեր,
Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, Սյունաց սարեր:

Մարդուն քաջի ուժ կդա ձեր օդն ու ջուրը,
Սուրբ մոր նման օրոր կասի գով գեղյուրը,
Աշխարհով մեկ դարձվել է ձեր անունը,
Ձեզ հազարան խաղ եմ կանչել, Սյունաց սարեր,
Ինձ մոր նման ձեր գիրկն առեք, Սյունաց սարեր:

Գուսան Աշոտ, Սյունաց հողը անարատ է,
Չարի սերմը բուն չի դնի, անարմատ է,
Մարդն արծիվ է, լեռնածին է, հրահատ է,
Հազար հողմեր ձեզ չեն մաշել, Սյունաց սարեր:
Ինձ մոր նման ձեր գիրկն առեք, Սյունաց սարեր:
Յայլաների ծուխը սահող երամ դառած,
Իմ նազելին երամի մեջ երազ դառած: